Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

2967

Եզոպոս

Առակք Եզովբոսի

533

88
Ա-22

[illegible]

1849

2011

№ 2003



2082
88
Ե-22

ԱՌԱԿՔ

# ԵԶՈՎԲՈՍԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

Ի ԳԱՂՂԻԱԿԱՆ ԼԵԶՈՒԷ

ՅԱՒԵԼՄԱՄԲ ՈՏԱՆԱՒՈՐ ԻՄԱՍՏԻՑ

ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏՈՒՑ

Ի Հ. ՄԻՆԱՍ Վ. ԲԺՇԿԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1860

8108-57
9
98301-612

# ՎԱՐՔ

# ԵԶՈՎԲՈՍԻ

## ՇԱՐԱԳՐԵԱԼ ՀԵԼԼԵՆԵՐԷՆ

## Ի ՄԱՔՍԻՄՈՍ ԲԼԱՆՈՒՏԷ (1)։

---

### ԳԼ. Ա.

Մանկանց խաղալիք էկայք 'ի հնումն,
Եզովբ 'ի սուրբ իւր դպրոց նուէր դնէ.
Որ անբանք յաւէտ ճառեն գիտնապէս,
Հրահանգել ըզմարդ յիմաստըս պէսպէս։

*Շատ գիտուն մարդիկ գեղեցիկ քննե-լով մարդկային գործողութիւնները և ա-պըստամբութեանց պատճառները՝ ջանա-ցին աշխատեցան, որ ետքի եկողները պէս-պէս խրատներով կրթեն և բարեկարգեն։ Բայց Եզովբոս քան զամէնը գերազանցեց․ որուն գործքին մէջ ամէնէն աւելի կը փայլի*

(1) Բլանուտ Մաքսիմոս էր յոյն կրօնաւոր, որ հին բաներու փնտռել ըլլալով հինաւորաններուն անտանօթները ժողվեց և գիրք ըրաւ․ յետոյ Եզով-

իմաստասիրութիւնն ու բարոյական հանճարը․ որ գրեթէ վերին զօրութեն շարժելով զարմանալի աւանդեց մարդկանց բարոյականութեան այսչափ գեղեցիկ և օգտակար կանոններ, որ շատ վեր են երևելի փիլիսոփաներուն տուած կանոններէն, որոնք որ մինչև ան ատենն աշխարհք էին եկեր: Իբր զի՝ Եզովբոս չկամեցաւ առաջ բերել բարակ սահմաններով պատճառներ, և երևելի պատմութիւներէ օրինակներ, որպէս զի կարենայ մարդուս միտքը համոզելով բանադատել՝ որ առաքինութիւնը սիրէ ու մոլութենէ փախչի: Ուրիշ բանով չուզեց մարդկանց վարդապետել․ բայց միայն առակով, որ կըսուի Առասպել (1)․ որով իբր վախ մը կուտայ թէ թռչունները և այլ կենդանիներն որ խելք ու միտք չունին, միայն բնական հասկացողութ͞բ շարժելով շատ բաներէ հեռու կեցան․ իսկ մարդիկ որ ունին բանականութիւն, պէտք է ամըչնան երբոր չեն զգուշանար անանկ բաներէն, որ ա-

Բոլին վարքն ալ հին գրեանց մէջէն և հիներուն բերնէն լսելով շարադրեց, որ Փռանսըզներէն ընտիր թարգմանած ըլլալով՝ մէնք ալ աշխարհաբառ դարձուցինք: Կերևնայ թէ մեր մէջ ալ հին ատենը թարգմանած պիտի ըլլայ․ վասն զի հին գրեանց մէջ Եղովբոսին բաներէն կը գտնուին:

(1) Առասպել կըսուին անանկ առակներն որ իրօք չեն եղած, այլ յօրինուած են․ որպէս թէ կենդանին և անշունչ բանը կը խօսի: Անանկ առակները հին ժամանակը շատ կը գործածուէին ամէն ազգի մէջ, Հայոց՝ Յունաց՝ արաբացւոց՝ մանաւանդ Հրէից

զուէտները և ուրիշ կենդանիները զզուշա-
նալով ազատեցան մեծամեծ վտանգներէ ի-
րենց ճարտարամիտ խորագիտութեամբը, և եր-
բեմն շատ մեծ օգուտներ ալ շահեցան երբոր
տախթը պատահեցաւ: Ուստի Եզովբոս իր
վարքը իբր քաղաքավարութեան և իմաստասի-
րութեան պատկեր մը ձևացընելով գրաւ ա-
մենուն աչքին․ և աստով փիլիսոփաներէն ե-
րևելի եղաւ, որ աւաւել գործքով քան թէ
խօսքով վարդապետեց:

Ծնաւ Եզովբոս Ամորիոն քաղաքը մեծին
Փռիւգիոյ (1), եւ մնաւ ծառայական վիճա-
կի մէջ: Ասոր շատ յարմար կուգայ Պղա-
տոն փիլիսոփային գեղեցիկ խօսքն որ Կոր-
կիոս ըսուած արամախօսութեան մէջը ճշմար-
տութեան կը խօսի, թէ || Բնութիւն ու օրէնքը
շատ անգամ իրարու հակառակ են ||: Վասն

մէջ, ինչպէս յայտնի է Աստուածաշունչէն։ Բայց գիտուն-
ներն իրենց պէտք կը բաժնեն աստուածութեանց․ Ա Բա-
նական, որ մարդոց բարքը կը յայտնէ․ Ն ընդրած
բանն ըրածի պէս կը յանձնէ․ ինչպէս է ՀԷ ա-
ռակը Եզովբոսին, եւ ասոր նմաններն։ Ը Բարոյ-
ական, որ անբաններուն բարքը բացատրելով մարդ
կը հանէ․ ինչպէս է ԺԸ առակը Եզովբո-
սին։ Գ Խառն․ որ կը յանձնէ, թէ մարդ կը
խօսի անբանին հետ․ ինչպէս է Ը առակը, եւն։

(1) Փռիւգիա է գաւառ Ասիոյ՝ Գաղատի-
ային ու հին Սարմաւօլին մէջ տեղը․ որ շատ քա-
ղաքներ ունի ապա կը․ մէկն ալ է Ամորիոն քաղաքը,
ուր ծնաւ Եզովբոս յամի աշխարհի 5400, իսկ
600 տարի առաջ քան զՔրիստոսին․ որ հին ատենն
'ի վեր շատ երեւելի եղաւ իրեն աստուածներովը․ Թէ-

զի բնութիւնը տուաւ Եզովբոսին մեծութե ազատ հոգի մը, բայց մարդկային օրէնքը գրաւ զայն ծառայական վիճակի մէջ. սակայն այս օրէնքը չկրցաւ այլայլել անոր հոգւոյն ազատութիւնը, երբոր իր գերի վիճակը զինքը մէկ դիէն մէկալ դին նետելով կը չարչարէր. և զանազան վիշտ նեղութիները՝ ոչ երբէք կրցան զայն իր բնական կարգէն փոփոխել:

Բաւական չեղաւ Եզովբոսին գերի վիճակը, այլ և դէմքը խիստ գարշատեսիլ էր. անանկ որ աշխարհք չէ եկած այնպիսի տգեղ մարդ. վա՜ զի գլուխն էր սրածայր երկայն, քիթը տափակ, վիզը հաստ ու կարճ, պըռկունքը թանձր, գոյնը սև, կապուտ. և սա պատճառաւ կըսուի Եզովբոս, այսինքն Եթիօփս, որ կընշանակէ եթովպացի (1): Անկէ 'ի զատ փորը չափազանց դուրս էր, կռնակը

դէտ գերի ծնաւ, բայց ճար ըրաւ Աթէնք գնաց բարոյական փիլիսոփայութիւն սորվեցաւ, որ շատ յարգելի ուսում էր. բայց տեսաւ որ ան ժամանակին մէջ այլոց բան չի կրնար սորվեցնել, սկսաւ կենդանիներուն բերնէն խօսելով ու առակներ շինել, որ գէթ ասով կարենայ բարի խրատ սորվեցնել. որ շատ մեծ յարգութիւն ունեցաւ նաև Յունաց մէջ, որ Սոկրատ փիլիսոփան ան ատենն ոտանաւոր դարձուց բոլոր առակները, և յետոյ ամէն ազգ թարգմանեց ախորժելի ըլլալուն համար:

(1) Եզովբոսին ծնունդը Եթովպիայէն, կամ Հադեստ կողմերէն էկած ծախուած էին Փռիւգիոյ մէջ. ասոր իրենք որուն որ գերին էին, Եզովբոս ալ նախ անուն էր. յետոյ ծախուեցաւ ուրիշներուն:

ծուռ սապատովն (խամպուռ) . այնչափ որ ա-
սոր տգեղութիւնը աւելի էր քան զԹերսիտէ-
սին (1), որ ծիծաղելով կը նկարագրէ Հո-
մերոս ։ Ամէն բանէն աւելի մեծ պակասու-
թիւնն էր դժուարախօսութիւնը . որուն
խօսքն էր աննշան և ձայնն անորոշ (2) ։

Ահա այս ամէն պակասութիւններս յարմա-
րեցան Եզովբոսի ծառայական վիճակին, որ
այնպիսի արտառոց բաներու մէջ գտնուե-
լով աս տգեղ և անյարմար մարմնովը ինչ-
պէս կրցաւ իր ծառայական կեանքը վարել ։
Թէպէտ սաստիկ անշնորհք էր դրսի տեսքը և
մարմինն այլանդակ, բայց հոգին Եզովբոսի
ազնիւ էր, սրամիտ եւ քաղաքավար . որ զա-
նազան գիւտերով և խելքով լեցուած՝ շու-
տով կը գտնէր ամէն բանին հնարքը, որչափ
խրթին և նուրբ բան ըլլար (3) ։

(1) Թերսիտէս յոյնը անանկ գարշատեսիլ էր՝ կաղ ու, անշնորհք, որ պատմիչներն ատանկ էին ըրեր . ինչպէս Հոմերոս բանաստեղծն ալ ծաղր ընելու համար անոր կերպարանքը կը նկարագրէ ։ Ան տգեղ և անապարծ մարդն որ մը գնաց Հերքիւլէս տաճին տօն, ան ալ մէյ մը յետոյ դարձածին պէս՝ ընկա-մեռաւ, իբր 1200 տարի Ք՟ի թուականէն առաջ ։

(2) Պլանուտ այսպէս տգեղ կը նկարագրէ . բայց կան որ կըսեն թէ Եզովբոսին ինչպէս որ խելքը գեղեցիկ էր, անանկ ալ մարմինը, և խիստ յարմար քաղցրաձայն երաժիշտ էր ամենէն վեր ։

(3) Շատ առակներ խառնուեցան Եզովբոսին առակներուն հետ, անանկ որ Եզովբոսէն առաջ և յետոյ շինուած առակներուն շատը Եզովբոսին գործքին մէջ խառնեցին ։ Աս պատճառաւ որուն

## ԳԼ. Բ.

### Զրպարտութիւն Եզովբայ :

Եզովբոսին առջի տէրն որ զինքը գներ էր, ասանկ կոշտ և անշնորհք տեսնելով զայն՝ միտքը դրաւ թէ ասոր ծառայութիւնը չպիտի կրնայ ընել, ուստի արտը խրկեց որ հոն եր-կիր փորելով աշխատի. բայց Եզովբոս հոն գացածին պէս սկսաւ անանկ լաւ աշխատիլ սրտանց որ չի կրնար ըլլալ: Օր մը տէրը գե-ղին տունը գնաց ան տեղի գործքերը նայելու համար. մէկ պարտիզպան մը տեսնելով ա-նոր գալը՝ ընծայ բերաւ իրեն աման մը խիստ ազնիւ և պատուական թուզ, որ սիրով ա-ռաւ հաճեցաւ, ու տուաւ պահելու իր մէկ ընտանի ծառային, որ կըսուէր Ագաթօպոս (1), որպէս զի երթոր բաղնիքէն ելլէ՝ առջին բերէ: Աս միջոցիս մէջ պէտք եղաւ որ բա-նի մը համար Եզովբոս տունը մտնէ: Ագա-թօպոս աս բանն իրեն առիթ ընելով, գնաց

ընկերի մէջ որ Թարգմանած կայ, միայներով ըէ. ո-րուն մէջ ատելի է, որուն մէջ պակաս:

(1) Ագաթօպոս կը Թարգմանի բարեբար պա-տանեայ. որ կ'երևնայ թէ արգասաւոր աշխոյժ մարդ ըլլալով ատ անուամբ կըկոչուէր. և անով աներևի եղած էր ներքին որ համարձակեցաւ ա-զրպարտութիւն ընել Եզովբոսին վրայ:

իր ընկերներուն մէկին ըսաց թէ եկո՛ սա թզերը մենք ուտենք. երբոր մեր տէրն ուզէ, Եզովբոսին վրայ կը ձգենք թէ տունը մաքրելու առենը կերաւ ծածուկ: Ասոր բանիս վրայ մենք կրնանք շատ ստեր չինելու՝ որ Ճշմարիտ երենայ, անանկ որ Եզովբոս չկարենայ սա զրպարտութենէս զինքն արդարացընել. որովհետեւ անոր վկայութիւնը չի կրնար դէմ կենալ մեր մէկ խօսքին երբոր լաւ հաստատենք, հապա ինչպէս պիտի կարենայ մեզի սուտ յաղթել. մանաւանդ մեզի պատասխան տալու մէկ պատճառ մը ցուցմունք մը չունի:

Անանկ խորհուրդ ընելէն ետեւ՝ սա ըրած միաբանութեն չար խորհուրդը կատարեցին, եւ ամէն մէկ թուզն ուտելու առենը բարձր ձայնով կը ծիծաղէին ըսելով. ‖ Վայ քեզ ողորմելի Եզովբոս ‖:

Եղաւ տէրը բաղնիքէն եւ ուզեց որ թուզը բերեն. երբոր լսեց թէ Եզովբոսը կերաւ, անանկ բարկացաւ, որ մէկէն հրամեց զիմացը հանեն. որ տեսածին պէս կանչեց. ա՜յ թշուառական, ինչո՞ւ յանդգնեցար մտար սեղանատունն ու կերար թզերն որ ինծի համար պահուած էր:

Եզովբոս լսելով սա յանդիմանութիւնը՝ լաւ հասկըցաւ բանը. բայց դժուարութիւն հոն էր որ չէր կրնար խօսք արտաբերել ու պատասխան տալ: Ասոր պատճառաւ շուտով յաղթուեցաւ սուտ վկաներուն խօսքովը. եւ տեսաւ թէ չարաչար ծեծ պիտի ուտէ, ընկաւ տիրոջն ոտքը, մեծ աղաչանքով խնդրեց որ քիչ մը առեն տայ իրեն: Ուստի վազեց

կերակուր եփելու տեղն ու քիչ մը տաք ջուր բերաւ հոն խմեց . յետոյ մատը խօթեց բերնին մէջ սիրտը ետ բերաւ ։ Նոյնս բերնէն պարզ ջուր եկաւ , վ՟ զի բոլոր օրը բան չէր կերած ։ Նոյնը աղաչեց տիրոջն որ հրամայէ ամբաստանող թշնամիներուն , որ անոնք ալ անանկ ընեն . որպէս զի յայտնի ըլլայ թէ ով է կերեր զանոնք , և ուրիշի խօսքով չխաբուի ։

Իսկ տէրը զարմանալով անոր սրամիտ ուշիմութեը վրայ , պատուիրեց որ սուտ վկաներն ալ խմեն տաք ջրէն իրեն առջին ։ Անոնք ալ խմեցին , բայց փոխանակ որկորը (պօղազը) մաքրելու մատը , դէպ 'ի ընտերքը տարին , որ չփսխեն ։ Սակայն հազիւ թէ խմելը լըմնցուցին , ներսերնին այրուելով ցաւիլ մը եկաւ իրենց , և ահա բոլոր կերած թզերը դուրս եկան . որոնց յանցանքն և անօրէն զըրպարտութիը յայտնի եղաւ ամենուն ։ Իսկ տէրը հրամայեց մէկալ ծառաներուն , որ զանոնք մերկացընեն , և լաւ մը ծեծեն ։ Որոնք ան տանելը իրենց վրայ փորձելով լաւ հասկըցան սա առակին ճշմարտութիւնն որ կըսէ . || Ով որ նենգութբ չարութի կը պատրաստէ ընկերին , բոլոր իր գլխուն կը բերէ ուրիշին համար ուզած չարիքը || (1) ։

(1) Եզովբոսին [illegible]

## ԳԼ. Գ.

### Վերաբերութիւն Եղովբոսի ։

Միւս օրը տէրը քաղաք դարձաւ. և Եղովբոս երկիր փորելով կաշխատէր ինչպէս որ պատուիրած էր իրեն ։ Եղաւ որ Արամեիսին (1) քուրմերն ուրիշ մարդկանց հետ գլխաւորածով Ճամբայէն մոլորեցան և ժուռ գալով եկան Եղովբոսին հանդիպեցան, երգումով աղաչեցին թէ վանատուր Դիոսին (2) համար ըլլայ՝ քաղաքին Ճամբան իրենց ցցընէ ։ Ան ալ շուտ մը զանոնք նստեցուց ծառին տակը շուք տեղ մը, և իրենց քիչ մը ուտելու բան հանեց լաւ մը մեծարեց. յեալ պատուելով զանոնք առաջնորդու-

(1) Արտեմիս քրմուհին մեր մէջ Անահիտ կըսուէր, որ Հայոց ազգին գլխաւոր կուռքն էր. Ոսկեհատ կաղապարն դրեր էին անոնք ։ Կռապաշտները կըսէին որ աս քրմուհին Դիոսին աղջիկն էր և Ապողոնին քոյրը. որ բոլոր Աթենային պաշտպանը դրեր էին. անոր համար ասոր քուրմերն ալ (*շէյխերը*) անանկ պատուեցան Եղովբոսէն ։ Տես մեր Ճեմարանին 634 համարը ։

(2) Դիոս կամ Արամազդ՝ կուռքոս ծեր քմծինորդին ըլլալուն. բոլոր քմծիներուն հայրը կը կոչուէր և ամենուն գլուխը. որ հին կռապաշտները անանկ մեծ կը դնէին, որ անոր անունը ինչխըն-

թէ ըրաւ մինչև շիտակ ճամբան հանեց: Իսկ ճամբորդները ուրախանալով Եղովբոսին մեծարանացը վրայ, և անոր երախտիքը ճանչնալով՝ ջերմեռանդ սրտով թևերնին վերցուցին երկինքն ու աղօթք ըրին պաշտպանքով իրենց բարերար Եղովբոսին համար: Եղովբոս դարձաւ իր տեղը, բայց ճամբուն աշխատանքէն և տաքէն յոգնած ըլլալով պառկեցաւ քնացաւ: Բայց քունին մէջ երազ մը տեսաւ թէ Բաղդը (1) մօտեցաւ իրեն, ու լեզուն բացաւ և իրեն տուաւ զօրութիւն խօսելու, և առակներ շինելու: Ո՛հ ըսաւ արթըննալով, ինչ անոյշ քնացեր եմ, և ինչ բարի երազ տեսայ. ահա ինչպէս զարմանալի դիւրութե՛ք կը խօսիմ. ահա առանց դժուարութեան կրնամ ամէն բանին անունները տալ են. են. Իրիւ: Գիտէ Երկնաւորն որ սա բարիքն ինծի եղաւ երախտեացս փո-

ներ որ ըսեր՝ հարկաւ խոստովանելու էր: Ուստի շատ անգամ օգնել գիտցած հայր կը կոչէին, և երկէտն վանականը, այսինքն խնամող: Տե՛ս Ճէմ. 649:

(1) Որոշմէկան Բաղդատ ատ պատմութիւներու տապաշտներուն գրեանց մէջէն հանէր է. որոնց ջօպարանին (միւսաֆիրին) պատիւ օգնութիները՝ շատ մեծ բան էր. ինչպէս որ ամէն ազգի րէնքն է: Ուստի Եղովբոսին ըրած բարերարութեծուէր հանդըպծնելու համար, կըսեին թէ Բաղդն րէն հատուցում ըրաւ. որուն թէպէտ կայր կը գրեն Բաղդը մէկ ուրիշ Դրայ կեցած, որ շատ անգամ դեպատահ կոտպայ բարին անարժաններուն, ու փոխաէր որ արժանաւորին պայ. Բայց աստուծին մարդին ան ու ի գրէր, բարին ուրը կը խրկէ կըսէին:

խարէն, որ մոլորած օտարականներուն ըրի։ Ուրեմն երբոր մէկը բարերարութիւն կընէ, պէտք յուսայ թէ հարկաւ իրեն ալ բարի կըլլայ։ Եղովբոս տեսնելով թէ աս մեծ բարիքն իրեն հանդիպեցաւ՝ ուրախութեամբ լե-ցուած սկսաւ ալ աւելի հոգ՝ տանելով աշ-խատիլ անանկ սրտանց որ չէ եղած։

## ԳԼ. Դ.

### Վաճառական Եղովբոս։

Չենաս անունով մէկը վերակացու էր գեղին տանը, ուր կաշխատէր Եղովբոս։ Աս մարդն ելաւ օրը գնաց որ տեսնէ թէ ծառաները հաւատարիմ կաշխատի՞ն ինչ որ իրենց հրամայած է։ Տեսաւ որ աշխատող-ներուն մէկը անհոգութեամբ իր գործքը թո-ղուցեր չէր աշխատեր, մէկէն վրան վազեց սկսաւ սաստիկ ծեծել խեղճը։ Աս ան-գթութեանը չիդիմացաւ Եղովբոս. սիրտը ցա-ւելով մօտեցաւ ըսաւ, ինչո՞ւ համար ասանկ չարաչար կը զարնես խեղճ մարդուն, որ քեզի գէշութիւն մը չէ ըրած. դուն ալ մար-դը չե՞ս որ ամէն օր բոլոր տանը մարդկանց նեղութիւն և չարչարանք կուտաս առանց պատճառի. իրաւ որ ըրածներդ կըսեմ մեր տիրոջը։ Չենաս լսելով Եղովբոսին զուր-ցած խօսքերը շատ զարմացաւ անոր համար-ձակութեանը վրայ. ուստի մէկէնիմէկ ինքնիրեն

մոռնալով կըսէր թէ ահա Եզովբոս խօսիլ սկսաւ, ասկէ ետև իմ բանս խիստ դէշ է․ մանաւանդ երբոր տէրս հասկընայ իմ ըրածներս։ Ուրեմն պէտք է որ ես Եզովբոսէն առաջ խօսիմ, և ամբաստանութիւն ընեմ անոր վրայ․ վ̃ զի տէրս իմ գործքերս իմացածին պէս զիս կը վռնտէ պաշտօնէս։

Ասանկ մտածելէն ետև Ճամբայ ելաւ քաղաք գնաց տէրը գտաւ․ և մօտենալով քովը խռոված երեսով մը բարևեց։ Տէրն երեսը նայելով հարցուց՝ թէ ի՞նչ պատճառէ եկած է քեզի աս խռովութիւն որ կերպարանքէդ կերևնայ։ Պատասխանեց Զենաս թէ դեզի տունդ մէկ արտաքոյ կարգի հրէշ մը ելաւ։ Ի՞նչ է ըսաւ տէրը, ծառերուս մէկը առենէ պտո՞ւղ տուաւ, թէ ձիերս ցուցանք ծնան։ Չէ ըսաց Զենաս, հապա Եզովբոս որ միշտ համր էր չէր կրնար խօսիլ, հիմա խիստ լաւ կը խօսի։ Զայնդ փոր քաշէ ըսաւ տէրը․ հրէշին տե՞ղ ես դրեր աս դիպուածը։

Կրկնեց Զենաս․ տէր իմ Ճշմարիտ կըսեմ, որ ես լռութենով անցայ, և չեմ պատմեր Եզովբոսին ինծի տուած նախատինքները․ բայց տէրութեդ և ա̃ծներուն դէմ ըրած հայհոյանքներուն և յանդգնական խօսքերուն չեմ դիմանար․ ահա կը պատմեմ։ Աս խօսքերս որ լսեց տէրը անանկ բարկացաւ Եզովբոսին վրայ, որ մէկէն ըսաւ թէ ահա ան թշուառականը քեզի յանձնեցի, ինչ որ կուզես ըրէ անոր․ կուզես ծախէ, կուզես մէկին տուր, ինչպէս սիրտդ կուզէ անանկ ըրէ․ վ̃ զի ես քու կամացդ կը յանձնեմ զայն։

Զենաս երբոր բացարձակ տէր եղաւ Եզովբոսին հասկըցուց անոր, թէ իր ազատութիւը բոլորովին անկէ կը կախուի։ Եզովբոս ալ պատասխան տուաւ, թէ ինչ որ ձեռքէդ կուգայ ըրէ ինծի. և ո՛ր բանն որ հաճոյ է քեզի, իմ անձիս հրամէ։ Աս խօսակցութես վրայ յանկարծ վաճառական մը եկաւ հոն անասուն գնելու համար. հարցուց Զենասին թէ ունի՞ս ծախու անասուն։ Ան ալ չէ ըսաւ. բայց մէկ գերի մը ունիմ ծախու, որ հոս մօտ է, ուզես կրնաս գնել։ Զայս ըսելով կանչեց Եզովբոսը առջին։ Իսկ վաճառականը երբոր տեսաւ անոր կերպարանքն՝ սկսաւ ծիծաղիլ. Ուստի՞ գըտեր ես ըսաւ աս ցուցանքը, որ պտուկի նման է։ Մա՛րդ է, թէ ծառի կոճ. թէ որ ձայն ալ չունենար՝ պիտի կարծէի թէ տիկ է հողով լեցուն. ինչո՞ւ ճամբայէս արգելեցիք, սանկ մէկ այլանդակ մը ինծի ցցնելո՞ւ համար։ Այսպէս խօսելով սկսաւ երթալ. իսկ Եզովբոս ետևէն վազեց, կաղաչէր որ քիչ մը կենայ. վաճառականը բարկանալով կըսէր, գնա կորիր գարշելի։ Պատասխանեց Եզովբոս թէ հապա ինչո՞ւ համար աս գեղս եկար։ Եկայ որ ըսաց վաճառականը՝ լաւ բան մը գնեմ. բայց ինծի հարկաւոր չէ սանկ տգեղ, անպիտան մարդը, ինչպէս որ դուն ես։ Զիս գնէ ըսաց Եզովբոս. եթէ ինծի կաւտաս, քեզի նեղուե մը չեմ բերեր, և անանկ լաւ ծառայութիւն մը կընեմ, որ մոքէդ ալ չէ անցած։ Հարցուց վաճառականը թէ ինչ օգուտ կրնամ յուսալ քեզմէ, որովհետև սանկ կերպարանքի մէջ ես,

ամենուն ատելի և գարշելի կըլլաս ։ Պատասխանեց Եզովբոս թէ չունիս տանդ մէջ անհանգարտ կանչուըռտող լակոտ տղաք , զիս անոնց վրայ դիր , որոնք զիս տեսնելով իբր մէկ զարհուրելի բանէ մը կը վախնան ։ Խնտաց աս խօսքիս վրայ վաճառականը․ ետ դարձաւ Զենոսին հարցուց թէ ինչ տամ որ ինծի տաս աս ողորմելին ։ Ան ալ ըսաց իրեք դրամ (1) ։ Վաճառականը հանեց սատակը տուաւ ըսելով թէ ոչինչ տուի , ոչինչ գնեցի ։ Ուստի երկուքը միատեղ սկսան գնալ , և երբոր հասան վաճառականին տունը , երկու տղաք կային հոն , որ դեռ կաթ կուտէին , տեսածնուն պէս սկսան պոռալ ։ Տես ըսաւ տէրոջը ինչպէս խոստմունքս կատարուեցաւ , հիմակուց վախցան տղաքը ։ Վաճառականը խնդալով պատուիրեց որ մէկալ ծառաները բարևէ․ որոնք տեսնելով զայն կը զարմանային իրարու ըսելով , իրաւ որ աս մէկ մեծ դժբաղդութիւն մը կընշանակէ մեր տէրոջն որ ասանկ անշնորհք մարդ գնեց․ երևութը կը ցըցնէ թէ տանը մէկ դէշ ձախորդութիւն մը պիտի բերէ (2) ։

(1) Գաղղիացին կըսնէ (օպօլ) . իսկ յոյնը (օպօլօս) . որ կընշանակէ՝ դրամ, դանկ, նաքարակէտ . որ հին յոյները կը գործածէին աս տպակը . Բայց յայտնի չէ թէ քանի դահեկան կարծէր մէկ օպօլը, թէպէտ կերևնայ թէ շատ էր գինը ։

(2) Որովհետև հեթանոսներն ամէն բան խաբարդութեամբ կը մեկնէին , մինչև բնական բաներն ալ ան մարդոց կտանէին . զոր օրինակ աչքին խաղալը, առաւօտանց դիմացնին ելած մարդը, ևլն . որ մինչև

## ԳԼ. Ե.

### Ճարտարապետութիւն Եգիպտոսի :

Քանի մը օրէն ետև վաճառականը կամեցաւ Ասիա երթալ. ուստի ծառաներուն պատուիրեց որ բեռները կապեն պատրաստ ըլլան որ մեկնալ օրը ճամբայ ելլեն : Անոնք ալ ամէն բան կարգաւորեցին ինչպէս որ տէրը պատուիրեր էր, և բաժնեցին իրենց մէջ բեռները ինչ որ ամէն մարդ պիտի տանէր : Եզովբոս կաղաչէր որ իրեն թեթև բեռ տան. որովհետև ամէնէն ետքը նոր եկած ըլլալով սանկ բաներու սորված չէր : Անոնք ալ զինքը պարտաւորեցին որ բան մը չառնէ, և աշխատանք չքաշէ : Պատասխանեց անոնց թէ արդարութիւն չէ առանց աշխատանքի մնալ, ամէն մարդ պէտք է իրեն բեռը տանել : Ընկերներն ալ իրեն կամքը ձգեցին, ինչ բեռ որ ուզէ, զայն թող տանի իրեն յարմար : Եզովբոս աստին անդին նայելով կը դիտէր բեռները, ամանները և տոպրակները. աղաչեց որ հացին ամանն իրեն կրոնակը տան, որ երկու հոգւոյ բեռ էր. ուստի սկսան ամէնքը խնդալ վրան ըսելով,

Հիմա ժամանները կըդահէն : Ահա Եզովբոսին կերպարանքին նայելով ալէկ չինուպէյին, խորհելովը թանը ծախուրդութեն պիտի բերէ :

թէ սա խեղճ գերիին պէս անխելք մարդ կա՞յ արդեօք աշխարհքիս մէջ․ որ իր յիմարութիւնը այս ամենուն յայտնի ըրաւ․ վասն զի խնդրեց թեթեւ բեռն ու ընտրեց առաւ խիստ ծանր բեռը։ Սակայն պէտք եղաւ անոր կամքը կատարել․ ուստի բեռցուցին վրան բեռը, որ ան ծանրութեան տակն աշխատելով ասդին անդին կը գլորէր։ Իսկ վաճառականն այնչափ բեռն անոր կռնակը տեսնելով կը զարմանար թէ աս ինչ ջանքով կաշխատի Եզովբոս․ իրաւ որ, կըսէր, ահա իր գինը հանեց, զի ձիու մը բեռ մինակ կը տանի։

Երբոր հասան պանդոկ (խանը) մը, պէտք եղաւ բան ուտել․ Եզովբոսին հրաման եղաւ որ ամէն ծառաներուն հաց բաժնէ․ ան ալ որ բաժնեց՝ ամանին կէսը հատաւ կերակրէն ետքը, և բեռին կէսը թեթեւցաւ, անանկ որ շատ դիւրութեամբ կերթար ճամբան։ Իրիկուան ալ նորէն բաժնեց ծառաներուն հաց․ ուստի միւս օրը Եզովբոսին ամանը պարպեցաւ, որ կռնակը զարկած առանց աշխատանքի կերթար ամենէն առաջ․ որոնք չգիտէին ինչ ըսեն, մինչեւ կը տարակուսէին, թէ իրենցմէ առաջ գացողը Եզովբո՞սն էր թէ ուրիշ մարդ․ բայց երբ գիտցան թէ ան է՝ շատ կը զարմանային իրեն ճարտարմտութեանը վրայ, որ անանկ տգեղ՝ անշնորհք մարդ ըլլալով ծաղր էր եղեր իրենց, ու այնպիսի խելք բանեցուց հացին ամանն առնելով․ զի լաւ գիտէր թէ ան բեռը շատ չպիտի մնայ իրեն վրան։ Իսկ ընկերներն ուրիշ բեռ տանելով չկրցան յոյս մը ունենալ, որ բեռէն

թեւթեւնան ճամբորդութեան մէջ, որովհե-
տեւ ծախուելու բաներ էին՝ չէին կրնար
պահուիլ ուտելու բանի պէս :

## ԳԼ. Զ.

### Երկրորդ Վաճառումն Եզովբոսի :

Վաճառականն Ասիա հասաւ, և հոն իր գերիներուն շատը ծախեց աղէկ գնով. միայն իրեք հոգի մնացին քովը. մէկը նօտար (Էտուըճը), մէկը երգիչ (հաննէնտէ), մէկալն ալ Եզովբոս : Վաճառականին մէկ բարեկամն իրեն խորհուրդ կուտայ թէ աս իրեք գերին ծանր գնով ծախելու համար Սամոս կղզին (1) երթայ հոն ծախէ : Երբոր հասաւ հոն, աղէկ լաթեր հագցուց նօտարին ու երգիչին, վաճառանոցը (բազարը) հանեց որ ծախէ : Բայց Եզովբոսին յարմար բան մը չեգտաւ հագցնելու, որ քիչ մը զարդարուի. որովհետեւ անանկ անճոռնի էր մարմինն որ միայն մէկ քուրձ մաշէ հագուստ մը կրցաւ

(1) Սամոս կղզին ըստ թծ. (սուսամ ատասը) է Եփեսոսին դիմացը Միջերկրեան ծովին, որ հին ատենը շէն ըլլալով վաճառականութեան տեղ էր և բնակիչն անուանի էին. որ կսէ ամսն շինեցն առանձ Գրան կըսէ Պլինիոս. աս կղզին էր Պիթագորաս փիլիսոփան :

հագցընել, և անանկ պլակերով դրաւ ըն-կերներուն մէջ․ որոնք որ կը տեսնէին՝ զարմանալով կըսէին թէ աս հրէշս ուրիշ բանի չի գար, հապա մեկալոնք ալ կաւրէ ։ Եզովբոս թէպէտ միշտ սաստիկ ծաղր կըլլար անարգուելով ամէն տեսնողներէն, սակայն ամենևին չէր պլպըլէր, և ամենուն ուշ դնելով միակերպ կընայէր ։ Քսանթոս (1) փիլիսոփան ան ատենը Սամոս կղզին կը բնակէր․ օր մը ելաւ վաճառանոցը գնաց, երբոր տեսաւ թէ ան երկու ծառաները լաւ հագուած էին, և Եզովբոս անոնց մէջ անանկ անշնորհք հագուստով՝ շատ զարմացաւ վաճառականին հնարքին վրայ թէ ան պլակերով մարդը դրեր է մեկալոնց մէջն որ անոր անշնորհք երևնալովը մեկալոնք աւելի գեղեցիկ երևնան ։

Ուստի աս փիլիսոփան մօտենալով անոնց՝ հարցուց երգիչին թէ ի՞նչ տեղէ ես ։ Ան ալ պատասխան տուաւ թէ կապադովկացի (2) եմ ։ Հարցուց թէ ի՞նչ գիտես ընել ։ Ան ալ

(1) Աս փիլիսոփան թէպէտ շատ երևելի չէր, բայց ան կղզին մէջ մեծ անուն ունէր․ վասն զի քաղաքին դպրատանը գլուխն էր, ու շատ աշակերտներ ունէր և շատ մեծատուն․ մինչև ամենուն առջին յարգելի էր ։

(2) Կապադովկիա կըսուի (գայսէրի)․ որուն բնակիչները Գամիրք կը կոչուէին ։ Կերևնայ թէ աս գերին արևելեան կողմերէն եկած Կապադովկիա երկար ժամով բան սորվեր է, կամ ծնողքը հոն եկած ծախուած են, և իրենց պատանին ալ գերի ըլլալով վաճառականը գներ է ։

ըսաւ, ամէն բան գիտեմ: Աս պատասխանին վրայ խնտաց Եզովբոս ակռաները բանալով: Քսանթոսին աշակերտներն իրեն հետ ըլլալով Եզովբոսին երեսն որ տեսան անանկ ակռաները բաց, կարծեցին թէ մէկ ցուցանք մըն է. ոմանցմէ մէկը կըսէր թէ անտարակոյս աս մէկ կատղած կենդանի մը պիտի ըլլայ, որ ակռաները բացաւ: Մէկալն ալ կըսէր թէ արդեօք ի՞նչ բանի համար ծիծաղեցաւ: Մէկ ուրիշն ալ կըսէր թէ սոսկալով խոժոռեցաւ ու դէմքը ծըռեց, չէ թէ ծիծաղեցաւ: Ուստի ամէնքն ալ ուզեցին հասկընալ անոր ծիծաղին պատճառը, մինչև մէկը մօտեցաւ Եզովբոսին հարցուց, թէ ինչո՞ւ համար անանկ խնտացիր: Ան ալ ըսաց. գնա քոլէս ծովու ոչխար: Աս պատասխանն անանկ ամըչցուց զայն, որ տաքնալով մէկէն փախաւ:

Իսկ Քսանթոս հարցուց վաճառականին, թէ երգիչին գինը ո՞րչափ է: Ան ալ ըսաց հազար դահեկան: Քսանթոս տեսաւ որ չափազանց է գինը, գնաց մէկալ գերիին հարցուց. ո՞ր քաղաքէն ես: Պատասխանեց թէ լիւդացի (1) եմ: Ի՞նչ բան գիտես հարցուց: Ան ալ ըսաւ, ամէն բան գիտեմ: Եզովբոս լսելով՝ նորէն սկսաւ խնտալ: Աս փիլիսոփային մէկ աշակերտը չիյտէր թէ ինչ պատճառաւ կը խնտայ, ուզեց հարցընել. բայց իր ընկերներէն մէկը զինքն արգիլեց ըսելով, թէ որ դուն ալ կուզես ծովու նո-

(1) Լիւդացիք հին ատենը ազգ էին Ափրիկէի գաւառին մէջ, որոնցմէ գերի էկած է Եզոպոսը:

խաղ կոչուիլ նէ հարցուր: Ան ատենը Քսանթոս մոռցաւ փաճառականին հարցուց թէ քանի՞ է նօտարին գինը: Պատասխան տըւաւ թէ երէք հազար դահեկան:

Այս չափազանց գինը Քսանթոսին սիրտը նեղացուց, ուստի սկսաւ ետ դառնալ: Բայց աշակերտները հարցուցին թէ չի՞հաճեցա՞ր գերիներուն. հաճեցայ ըսաւ, իմ ուզածս էն. սակայն օրէնք դրած է, որ մէկ գերի համար այնչափ սակ չիտրուի: Եթէ այդպէս է ըսին, օրէնքի դէմ չըլլար՝ թէ որ տըգեղ գերին գնես, որ անոնց չափ քեզի ծառայութիւն կրնայ ընել. և մենք կը վճարենք անոր գինը ինչ որ կարժէ: Պատասխանեց Քսանթոս, թէ խելքի դէմ բան է, որ դուք գնէք՝ ես ծառայի տէր ըլլամ: Ո՞ւր թողունք որ իմ ընկերս աւելի զարդարանք և մաքրութիւն կը սիրէ, նայինք կուզէ՞ աստնկ աղտոտ և այլանդակ ծառայ: Անոնք ալ ըսին թէ աս պատճառը չի կրնար խափանել որ չի գնես ան գերին, որովհետև առակ մը կայ կըսէ որ՝ այրերը չէ հնազանդիլ կնկան խօսքին, և անոնց շատ մտիկ ընել:

Քսանթոս ըսաւ թէ, քանի որ չենք գնած՝ երթանք նայինք բան մը գիտէ, չըլլայ թէ ծովը նետենք առած ստակնիս: Ուստի մօտեցաւ Եզովբոսին ըսաց. ուրախ կեցիր: Ինչո՞ւ համար՝ հարցուց Եզովբոս. միթէ ես տրտմա՞ծ եմ: Քեզի կը բարևեմ ըսաւ Քսանթոս. ան ալ ըսաց և ես քեզ կը բարևեմ: Ամենքը զարմացան աս շնորհքով պատասխանին վրայ: Հարցուց Քսանթոս, թէ դուն ուստի՞ ես: Ես ըսաց՝ սև եմ: Ան չէ հար-

յուցածս ըսաց • ես կուզեմ իմանալ թէ ո՞ր քաղաքէն ես, և ո՞ւր տեղէն ։ Ես մօրմէս ե֊ղեր եմ, ըսաց Եզովբոս ։

Ան չեմ ուզեր գիտնալ ըսաց, հապա ո՞ւր տեղ ծնած ես։ Պատասխանեց Եզով֊բոս, թէ իմ մայրս չէ պատմած ինծի, թէ ուր ծնած եմ, տանը վե՞րը, թէ բակը (1)։

Ի՞նչ բան գիտես՝ հարցուց Քսանթոս։ Ան ալ ըսաց՝ բան մը չիյտեմ։ Ի՞նչ ըսել կու֊զես՝ հարցուց։ Պատասխան տուաւ Եզով֊բոս • որովհետեւ աս գերիներն ըսին թէ ամէն բան գիտենք, ինծի բան մը չիմնաց գիտ֊նալու ։ Աս խօսքերուս վրայ խիստ շատ զար֊մացան փիլիսոփային աշակերտները ։ Ինչու որ, կըսէին զարմանալով, աս մարդը յայտ֊նի ըրաւ իրեն խելքն ու միտքը աս խօսքե֊րովս • ո՞վ կրնայ պարծենալ թէ ամէն բան գիտեմ • ահա աս է եղեր պատճառն որ կը խնտար և ծաղր կընէր ասոնց տուած պա֊տասխանը ։

Նորէն հարցուց Քսանթոս, կուզե՞ս որ քեզ գնեմ • ան ալ ըսաց թէ աս խօսքդ ա֊մենեւին ինծի հարցնելու բան չէ • կուզես գնէ, կուզես մի գներ • քու միտքդ ինչ որ կը վկայէ, ան ըրէ • պէտքը չէ որ մարդս բռնի ակամայ բան ընէ • աս գործքս բոլո֊րովին քուկին կամքէդ կը կախուի ։ Թէ որ կուզես զիս գնել, բաց քսակդ ու սակ

(1) Հին ատենի իմաստասէրներուն մէջ սովորութիւն էր այսպիսի հարցմանց պատասխան ընել։ Եզով֊բոս ալ անոնց սովորութիւնը նայելով աս ձեւը բռնեց • մինչեւ զարմացուց իմաստասէրները ։

համրէ. և եթէ չես ուզեր գնել, հանգիստ կեցիր, ալ մի խնտար վրաս։ Աշկերտներին իրարու կըսէին թէ Ճշմարիտ որ մեր վարպետին յաղթեց։ Թէ քեզ գնեմ, ըսաւ Քսանթոս, ոխոր ջանա՞ս փախչելու։ Եզովբոս ծիծաղելով ըսաւ. եթէ ուզենամ փախչել, քեզի չեմ հարցըներ, ինչպէս որ քեզ ալ պէտք չէ ինծի հարցընել։ Լաւ կը խօսիս ըսաւ Քսանթոս. բայց խիստ այլանդակ ես։ Պատասխանեց Եզովբոս թէ փիլիսոփային կը վայլէ որ մարդուս խելքին ու հոգւոյն նայի, չէ թէ դէմքին։

Ան ատենը Քսանթոս գնաց վաճառականին հարցուց, թէ աս գերիին գինն ինչ է։ Ան ալ ըսաւ թէ եկեր ես որ իմ գերիներս վա՞ր զարնես. լաւ և գեղեցիկ գերիներս չուզեցիր գնելու, հիմա եկեր ադեղ մարդուն տէր կ'ըլլաս. կուզես մէկալ երկուքին մէկը գնէ, աս ալ անոնց վրայ առ ատանց ընկի։ Չէ, ըսաւ Քսանթոս, ես ալիտի աս գնեմ։ Ուրեմն տուր, ըսաւ, վաթսուն դահեկան։ Քսանթոսին աշկերտները շուտով համբեցին ստակը, և գնեցին Եզովբոս։ Մաքսաւորները (գիւմրիւքճիները) եկան քննելու, թէ ո՞վ է ծախողը, և ո՞վ է գնողը. բայց երբոր հասկըցան թէ ոչինչ գնուած է ծախուածը, ամըչցան։ Իսկ Եզովբոս ոտքի վրայ ելաւ կանչեց թէ ահա ես եմ ծախուողը, ահա ըլլս ծախողը և գնողը. թէ որ ասոնք ձայն չեն հանեն, ես ազատ կը մնամ։ Մաքսաւորները ծիծաղելով մաքս չառած ելան գացին։

## ԳԼ. Ե.

### Եզովբոս Էրթայ 'ի տուն:

Երբոր Քամիթոս տուն դարձաւ, պատուիրեց Եզովբոսին որ դուռը քով սպասէ, որովհետև գիտէր որ կնիկը բանի մը չէր հաւնէր, ան այլանդակն որ տեսնէ՝ չըլլայ թէ բարկանայ. ուզեց նախ անուշ քաղցրավար խօսքերով սիրտը շահել, ու յետոյ ներս բերել կուզէր Եզովբոսը: Քամիթոս ներս մտաւ, մօտեցաւ կնկանն ըսաց, թէ Տիրուհի, ասկէց ետև ալ երբեմս չես զարներ աղախիններուդ աշխատանքը. ահա քեզի ծառայ մը գնեցի, որ իմ առջիս անանկ աղուոր շնորհքով է, որ այնպիսի սիրուն մարդ չես տեսած. ահա դուռը քով կեցեր է: Երբոր ասանկ կը խօսէր՝ աղախինները վազեցին որ տեսնեն, և կը մռմռային, թէ որերնուն հետ պիտի բարեկամ ըլլայ: Իսկ Տիրուհին հրամեց որ ներս գայ նոր գերին: Աղախիններուն մէկը վազեց կանչելու համար, երբոր տեսաւ, դո՛ւն ես ըսաւ Եզովբոս ծառան. թէ որ դուն ես՝ ներս մի մտներ, վո՛ զի քեզ տեսածնուն պէս՝ ամէնքը պիտի փախչին: Մէկ ուրիշն ալ դուրս ելաւ ծաղր ընելով կըսէր թէ դէմքդ փոխէ անանկ ներս մտիր:

Եզովբոս ներս մտաւ գնաց Տիրուհիին

առջին, որ տեսածին պէս՝ աչքը դարձուց էրկանը ըսաց, մեր տեղէն փնտըռեցիր գտար աս ցուցանքս. մերցուր առջեւէս մերցուր: Կաղաչէր Քսանթոս թէ մի խռովիր, մի անարգեր նոր գերիս: Ես ինչպէս կրնամ համբերել կըսէր կինը. ահա ասով հասկը-ցայ որ դուն զիս քամահրել կուզես, ու կա-տես. կերևնայ թէ ուրիշ մը կուզես բե-րել, անոր համար աս գերին բերիր, որ ես խղճէ երթամ տնէն. ուրեմն տուր իմ բա-ներս, ես կերթամ:

Քսանթոս տեսաւ որ չըլլար, սկսաւ ա-նարգելով ըսել Եզովբոսին՝ թէ ամէն բանի պատասխան կուտայիր, հիմա ինչո՞ւ կնկանս բան մը չես զուրցեր: Պատասխանեց Եզով-բոս թէ մէկ փոսի մը մէջ ձգէ կնիկդ: Կտրէ ձայնդ ըսաց, շատ մի խօսիր սիրելի ընկերոջս դէմ: Եզովբոս ոտքը գետինը զար-նելով կըսէր թէ ահա տէրս գերի բռնուած է կնոջմէն. Ո՛վ մեծդ Եւրիպիդէս (1), չու-նիմ քու ճարտասանութիւնդ որ քեզի պէս խօ-սիմ. խիստ լաւ կըսէիր թէ || ծովուն կա-

(1) Եւրիպիդէս էր յոյն բանաստեղծ երևելի, Սաղամինա կղզիէն, որ ծնաւ շատ տարի առաջ Քրիստոսի Թուականէն. որ մէկ փորած ծայռի (*խայայի*) մը մէջ քաշուած կը գրէր իր բանաստեղծութիւնները, որոնք շատ մեծ յարգութիւն ունեցան Յունաց մէջ. աս գրուածքներէն մինչև հիմա կը գտնուին: Եւ-րիպիդէս շատ անգամ կանանց գործքերը դնելով անոնց դէմ շատ աղուոր խօսքեր և ձաղկաներ կըսէր, այնչափ որ անունը դրին *կանանց թշնամի*. ահա աս բաներէն բերած է Եզովբոս աս խօսքս:

տաղութիը սոսկալի է, գեհերուն առատա-
նալը սարսափելի է, կրակին բռնութին ա-
ղետալի է, և աղքատութիւնն անտանելի
խեղճութի է. հազար կերպ պատահմունք-
ներ կան, որ տրտմութի և վիշտ կը բերեն.
սակայն անզգամ կնիկը ամէն չարութեննե-
րէն աւելի է ||: Աս գիտնական բանիս վրայ
մտածելով, ով Տիրուհի, քեզի շատ մեծ բան
է որ սանիկ փիլիսոփայի կնիկ ես եղեր.
խելքդ գլուխդ ժողվէ, չըլլայ թէ աղուոր
մանուկ ծառայ առնես քեզի, որ անպա-
տուութիւն մը չիբերես ընկերոջդ:

Աս խօսքս կնկանը խելքը տարաւ, ա-
նանկ որ չէր գիտեր ինչ պատասխան տայ.
մինչև դարձաւ էրկանն ըսաց թէ ուստի՞ գը-
տար աս շնորհքով գերին. իրաւ կըսեմ, որ-
չափ տգեղ և այլանդակ է, այնչափ սիրելի և
անուշ է. ուրեմն ես հետը կը վարուիմ կու-
զեմ: Քսանթոս դարձաւ Եզովբոսին ըսաց,
թէ ահա Տիրուհիդ քեզի հետ հաշտուեցաւ:
Պատասխանեց Եզովբոս թէ ուրեմն այնչափ
խեղճ մարդ չեմ եղեր ես. որովհետև մէկ
կին մը հաշտեցընելը պզտիկ բան չէ: Զայնդ
վար քաշէ ըսաց տէրը. ես քեզ գնեցի, որ
ինծի ծառայութի ընես, չէ թէ դիմադար-
ձութիւն:

## ԳԼ. Ը.

### Պատասխանատուութիւն Եզովբայ։

Քսանթոս մէկալ օրը հետն առաւ Եզով-
բոսն ու գնաց պարտէզ մը բանջարեղէն գը-
նելու համար։ Եզովբոս առաւ ձեռքը պար-
տիզպանին ժողված կանանչեղէնները։ Քը-
սանթոս տակը տալու ատենը, պարտիզպա-
նը աս խօսքս ըսաւ։ Կաղաչեմ, մէկ բան
մը պիտի հարցընեմ, ինծի պատասխան տուր։
Ի՞նչ է տարակոյսդ հարցուր ըսաւ։ Չեմ
հասկընար՝ կըսէր, ինչո՞ւ համար բանջարե-
ղէն բոյսերն որ այնչափ հոգ տանելով կը
տնկեմ, կը ջրեմ, ու սանկ ուշ և դժուա-
րաւ առաջ կուգան. և ընդհակառակն՝ ինք-
իրմէ բուսած խոտերն առանց փորելու և
ջրելու շուտ առաջ կուգան. ի՞նչ է պատ-
ճառը։

Աս խօսքս թէպէտ փիլիսոփայական խըն-
դիր է, բայց Քսանթոս չկրցաւ լուծե-
լու. այլ մէկ ընդհանուր պատասխան մը
տուաւ թէ այս նախախնամութեան գործն
է, որ ամէն բան կը կարգաւորէ (1)։

(1) Նախախնամութիւնը կըսուի փէալուէ, փո-
սուէ. Հին փիլիսոփաները ասոր կիմանային Աստ-
կառավարութիւնն որ ամէն բան իր կամօքը անան-
կարգադրէ՝ որ իրենց վախճանին կը հասնին։ Կռա-
պաշտ փիլիսոփաները չկրցան ուրանալ Աստ-

Եզովբոս լսելով սկսաւ աս պատասխանիս վրայ խնդալ: Զի՞ս ծա՞ղր կընես, ըսաց փիլիսոփան, թէ կը ծիծաղիս: Պատասխան տըւաւ Եզովբոս թէ իրաւ ծաղր կընեմ, չէ թէ հրամանքդ, հապա քեզի սորվեցընողը. վ̃ն զի անանկ մէկ հասարակ պատասխան մը տուիր որ գիտուններն ամէն հարցմունքի կրնան տալ. որոնք բաւական կը կարծեն ըսել թէ ամէն բան ա̃յ նախախնամութիւնը կը կառավարէ: Ինծի հրաման տուր ես պատասխանեմ պարտիզպանին. տեսնես թէ ինչպէս կը հանգչի սիրտը: Ան ատենը Քըսանթոս դարձաւ պարտիզպանին ըսաց թէ վայելուչ բան չէ որ ես երևելի դպրատուններու մէջ փիլիսոփայութիւն ըրած եմ, հիմա կենամ պարտէզին մէջ բան վարդապետեմ. աշա իմ ծառաս աս կրնայ քու հարցմունքդ քակել թէ որ իրեն զուրցես, վ̃ն զի հմուտ է ասանկ բաներու պատասխան տալու:

Կրկնեց պարտիզպանը թէ բէհ կրնա՞յ ըլլալ որ ասանկ անշնորհք, կոշտ մարդը կարդալ բան գիտնայ, որչափ խեղճ բան է ասանկ տգեղ ըլլալը: Տեսնենք կրնա՞ս իմ տարակուսանքս լուծել, և սիրտս հանգչեցընել աս ըսած բանիս վրայ: Եզովբոս սկսաւ ասանկ պատասխան տալ. Երբոր մէկ կին մը երկու անգամ կը կարգուի, ու առջի էրկը-

Նախախնամութիւնը. ըն ստեղծողը պէտք է ստեղծածները կառավարելով խնամք տանելն: Ահա աս մտքով պատասխան կուտայ Քսանթոս. որ բան փիլիսոփայական պատասխան չէ, ինչպէս Եզովբոսինը:

նէն զաւակներ ունի, և առած մարդն ալ առջի կնոջմէն զաւակներ ունի, յայտնի է որ աս կնկանը հարազատ զաւակները հետը բերածներն են, և էրկանը զաւակները իրեն խորթ են. աս պատճառաւ տարբեր կերպով զանոնք կը նայի, մեծ հոգ կընէ որ լաւ պահէ, աղէկ կերցընէ, և մեծ սիրով խնամէ իր ծնածները: Իսկ էրկանը զաւակները չէ թէ միայն այնպէս չի նայիր, հապա շատ անգամ կատէ, և ոտքի տակ կառնէ. անանկ որ զանոնք կը զրկէ, անոնցմէ կը քաշէ, և իր զաւկըներուն կուտայ, և այնպիսի ընական գութ մը կը ցընէ իրեններուն որ կարծես թէ իր մարմնին կտորուանքն են. ասոր հակառակ, մէկալոնք օտարի աչքով նայելով միշտ կը չեխէ: Անանկ ալ հողը մայր կը սեպուի ամէն բուսած բաներուն. բայց քու տնկածներդ անոր խորթ զաւակներն են, և իր բուսուցածները բուն հարազատ զաւակ ըլլալով աւելի հոգ կը տանի ու կը մեծցընէ. ուստի քու տնկածներդ խորթ ըլլալով՝ քիչ սնունդ կուտայ որ շատ չեն կրնար աճիլ, վ՞ զի օտար են:

Աս պատասխանն անանկ հանդչեցուց պարտիզպանին սիրտն որ մէկէն կանչեց Եզովբոսին, թէ ես քեզի մեծապէս շնորհակալ եմ, որ մեծ տարակուսանքէս զիս ազատեցիր, և սիրտս հանգիստ ըրիր: Ուստի երթաս բարով, որչափ բանջար ([illegible]) կուզես՝ առ գնա առանց ստակի, և որ ժամանակ պէտք ըլլայ՝ եկուր առ. ասկէ ետև քու պարտէզիդ պէս պիտի գաս հոս բան առնես:

ԴԼ. Թ.

## Խորամանկութիւն Եզովբոսի :

Քանի մը օր անցնելէն ետև Քսանթոս բաղնիք գնաց, հոն մէկ քանի բարեկամներ գտաւ. պատուիրեց Եզովբոսին որ վազելով երթայ տունն՝ իրեն ապուր մը եփէ: Եզովբոս մէկէն տունը գնաց, ու սատանութիւն բանեցնելով մէկ հատ ոսպ մը առաւ պտուկին մէջ դրաւ եփեց: Իսկ Քսանթոս բաղնիքէն ետև աղաչեց բարեկամներուն որ կերակուրը տունն ուտեն. և հասկըցուց թէ ես մէկ հարկիք մը չունիմ, միայն թեթև ապուր մը պիտի ուտենք: Աս ալ ըսաց թէ չի վայլեր շատ տեսակ կերակուրներով բարեկամ փորձել, հապա աւելի պէտք է սիրտը նայիլ:

Անոնք ալ Քսանթոսի հարկիքն ընդունեցան, տունն եկան: Տէրը կանչեց Եզովբոսին թէ մեղի մէկ բաղնիքի ջուր մը բեր, որ զովանանք քիչ մը: Վազեց Եզովբոս գնաց բաղնիքին լուացուած ջուրը բերաւ տիրոջը տըւաւ. երբոր բերանն առաւ, գարշահոտին չիդիմանալով ըսաց, ուստի՞ բերիր աս ջուրը: Բաղնիքէն բերի, ըսաց, ինչպէս որ ինծի պատուիրեցիր: Քսանթոս բարեկամներուն առջին բանեց բարկութիւն, ու հրամեց Եզովբոսին որ իրեն մէկ կոնք (լէյէն) մը բերէ:

Ան ալ բերաւ, ոտքի վրայ կեցաւ ։ Չի լուա՞ս, ըսաց տէրը. չէ, ըսաց, վասն զի ինծի ինչ որ ըսիր, ան ըրի. Թող ըսէիր, թէ ջուր լից կոնքը, ոտքս լուա, բեր հողաթափներս ու բոլոր բաներս ։ Քսանթոս դարձաւ բարեկամներուն ըսաց, թէ աս գնած մարդս գերի չէ, հապա վարդապետ է ։ Երբոր սեղան նստան Քսանթոս հարցուց Եզովբոսին թէ եղա՞ւ տապը ։ Եզովբոսն ալ բերաւ դդալով մէկ տապն որ եփեր էր ։ Տէրը բանեց մատովը սխմեց, ըսաց թէ լաւ եփած է բեր ։ Եզովբոս լեցուց ջուրն ու բերաւ ամանով սեղանը ։ Հարցուց Քսանթոս թէ ո՞ւր է տապը ։ Քեղի տուի, ըսաց ։ Ի՞նչ, մէկ հա՞տ մը եփեցիր ։ Հրամերես ըսաց. վա՛ զի դուն որոշ ըսիր թէ ինծի տապ մը եփէ, տապեր եփէ չըսիր ։ Աս խօսքովս խիստ տաքցաւ Քսանթոս. մինչև ըսաց բարեկամներուն թէ թողուցէք ըրէք ծառայիս յիմարութեանը, որ մարդը խենթ կը դարձընէ ։

Հոս եկուր ըսաց Եզովբոսին, անըզգամ ծառայ. գնա խողի չորս ոտք գնէ, և շուտ մը եփէ որ ուտենք ։ Եզովբոս գնաց շուտով բերաւ. երբոր ոտքերը կեփէին՝ Քսանթոս գնաց ծածուկ ոտքին մէկը գողցաւ Եզովբոսին հան չեղած ատենը. որպէս զի պատճառ ընելով լաւ մը ծեծէ զայն ։

Քիչ մը կանցնի Եզովբոս ալ կուգայ, կը նայի որ պտուկին մէջ իրեք ոտք կան. կը հասկընայ խաբէութիւնը, ուստի վազէ կերթայ տանը պահած խողին մէկ ոտքը կը կտրէ՝ քերթէ, կը գնէ մէկալոնց հետ կեփէ ։ Քսանթոս կը վախնայ որ Եզովբոս տեսնելով

*ոտքին մէկը պակաս՝ չըլլայ թէ փախչի, պահած ոտքը կը բերէ մէջը կը ձգէ: Եփած ոտքերն որ առաջ բերաւ, Քսանթոս տեսաւ թէ հինգ են: Ի՞նչ է աս ըսաց Եզովբոսին, ես քեզի չըսի՞ որ չորս ոտք գնես: Հրամեր-ես ըսաւ, բայց երկու խոզին ոտքերը քանի՞ կըլլան, ութը. ահա դուն հինգ հատ տեսար հոս, երեք ալ վարի խոզն ունի, որ կը պահես:*

*Քսանթոս աս խօսքիս վրայ սաստիկ բարկանալով կըսէր բարեկամներուն թէ ես իրաւունք չունի՞մ որ կըսեմ, թէ աս ծառան իմ խելքս գլխէս պիտի տանի: Եզովբոս ուզեց պատճառով խօսիլ տիրոջը հետ. Տէր իմ ըսաց, չիյտե՞ս որ թուաբանութեան մէջ որչափ հանուըմ ըլլայ քանակութենէ, այնչափ ալ յաւելում որ ըլլայ, գումարը սխալ չըլլար: Ուստի Քսանթոս չիկըցաւ պատճառ մը գտնել, որ Եզովբոսին ծեծ մը տայ, սկսաւ սիրտն իջնիլ (1):*

(1) Եզովբոս երկու պատճառաւ աս խաբէութիւնները բանեցուց. նախ ուզեց փորձը աչքը Հայցընել, և իր իմաստութեան մարդ ըլլալն անոր հասկըցընել, որ ընտրելով երթայ հետը. երկրորդ՝ ուզեց կրեմիտներ ըլլալ անոր ըրած անարգանացը. և անով հասկընայ որ եթէ ասանկ իրեն նեղութիւն տալ ուզէ, մարդու մէջ ծաղր ընելով պէտը կըհանէ:

## ԳԼ. Ժ.

## ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆ ԵԶՈՎԲՈՍԻ :

Եղաւ որ Քսանթոսի մէկ աշակերտը մեծ հարկիք մ'ըրաւ իր վարպետին և բոլոր ընկերներուն : Քսանթոս սեղանին վրայ որչափ լաւ և համով կերակուրներ կար , մէյմէկ քիչ կը վերցընէր Եզովբոսին կուտար որ ետին կայնած էր : Ասոնք տուն տար կըսէր իմ բարեսրտիս տուր : Եզովբոս առաւ գնաց. բայց Ճամբան ինքիրեն մտմտալով կըսէր թէ ահա խիստ աղէկ տեղն եկաւ , որ վրէժխնդիր ըլլամ մեր Տիրուհիին , որ հասկընայ անանկ իմ վրաս անողորմ խնտալն ու սիրտ ծակելը՝ երբոր զիս առջի անգամ տեսաւ. ես ալ հիմա փորձեմ, նայինք կը սիրէ՞ սըրտանց մեր տէրը : Երբ տուն հասաւ Եզովբոս կանչեց Տիրուհին , և Քսանթոսի տուած կերակուրները առջին դրաւ՝ ըսաց , ահա ասոնք իմ տէրս խրկեց. բայց քեզի չխրկեց, իրեն բարեսիրտ սիրականին խրկեց : Շուտ մը կանչեց տիրոջը պզտի շունն որ հոն կը կենար. առ աղուորիկ կըսէր , կեր , տէրս հրամեց որ քեզի տամ. և այսպէս բոլորը կերցուց շանը : Յետոյ դարձաւ գնաց տիրոջն ըսաց , որ տուի և բոլորն իմ առջիս կերաւ : Ուտելու ատենը բան մը զուրցեց , ըսաց

Քամնթոս: Չէ, ըսաց, բայց մօքովը շնոր-հակալ կըլլար տէրութենդ:

Իսկ Քամնթոսի կնիկը սաստիկ նեղացաւ, որ ընկերն իրեն բան մը չխրկեց հարկի-քէն. միաքը դրեր էր թէ աս եղած բանը՝ նշան է թէ զինքն աչքէ ձգեր է, և իր սէրը պաղած է. որովհետև հոգ տարաւ աւելի շանը, քան թէ իրեն. ուստի սոսկալի տրտունջներ կընէր, և վշտանալով բարկանար ու կըսէր թէ ալ չիպլտի նայի երկանն երեսը. և այսպէս իր խցին մէջ փակուած անանկ կուլար ու աշխարհք կը փլցընէր, և ամենևին չէր ուզեր մխիթարուիլ աս ըրած բանին համար:

Բայց հարկէքը լաւ մը շէնցաւ գինին խմե-լով. երբոր զուարճութեան մէջ էին, սկսան ամէնմէկը իրարու հետ հակաճառութիւն ընել զանազան բաներու վրայ: Անոնցմէ մէ-կը աւելի բարակամիտ և հետաքրքիր ըլլա-լով հարցուց՝ թէ ո՞ր ատեն կըլլայ աւելի հակառակութի և անկարգութի մարդկանց մէջ: Եղովբոս աս հարցընողին ետին ըլլալով պատասխանեց թէ ան ատենը կըլլայ երբոր մեռելները յարութի կառնեն. վա՛ զի ամէն-քը ինչ որ ունէին (1) աշխարհքիս մէջ մէկ-

(1) Կատակաչ ծիծաղաշարժներուն չափը գիտէ-ին որ մէկ օր մը մեռելները յարութի պիտի առնեն. որովհետև կընայէին որ աղէկ մարդիկ հաւանեցու-ն կը ծախէին մարմնով, և գէշ մարդիկ ալ կ[illegible]ին. հարկաւ ատոնց հատուցում պիտի ըլլայ կըսէին. Մանաւանդ Պղատոնի աշկերտները, որոնք Աստ-ուածը կարդալով շատ բանի կասկածին:

զմեկէ կը պահանջէն : Քսանթոսի աշակերտները խնդալով այս խօսքիս վրայ, միաբան խոստովանեցան թէ Եզովբոս խիստ իմաստուն մարդ է :

Մէկ ուրիշն ալ հարցուց թէ ինչո՞ւ համար երբ մանգործը կը քաշէ ոչխարը՝ չի պոռար, ու խոզը սասկալի կը պոռայ : Պատասխան տուաւ Եզովբոս թէ ոչխարը սովրած է որ կաթը քաշեն, և վրայի բուրդը խուզեն. ուստի ձայն չի հաներ, թող կուտայ որ զինքը բռնեն քաշեն ոտքէն, ինքն ալ ընտելութեամբ կերթայ ետևնուն, անտարակոյս գիտէ թէ իրեն նեղութիւն պիտի տան : Բայց խոզը ոչ կաթ կուտայ, ոչ բուրդ. ոչ կը կապեն, և ոչ ոտքէն կը քաշեն. գիտէ որ մարմինէն 'ի զատ ուրիշ բան մը չունի. ուստի այս պատճառաւ կը պոռայ, կը կանչէ երբոր իրեն կը դպչի մանգործը : Սկսան այս պատասխանիս վրան ալ խնդալ Քսանթոսի աշակերտները, և մեծ գովեստներ տուին Եզովբոսին :

Կերակուրը լմնցածին պէս Քսանթոս տուն դարձաւ. հարցուց թէ ո՞ւր է կնիկն որ հետը խօսի, ինչպէս սովորութիւն ունէր : Բայց կնիկը ծուռ ծուռ նայելով անոր ըսաւ, հեռու գնա, տուր ինծի իմ բաներս, որ երթամ քու տնէդ. ասկէ ետքը ես չեմ կրնար քու տանդ մէջ քեզի հետ մնալ, դուն գնա քու շունդ սիրէ, որուն որ հարկիքին բաները խրկեցիր : Քսանթոս խիստ զարմանալով սաստիկ անմիտ անարգանացը վրայ, չէր գիտեր ինչ ընէ և ինչ պատասխան տայ. կըսէր թէ տանից կարծեաց Եզովբոսը

բան մ՚ըրեր է ։ Դարձաւ կնկանն ըսաց, թէ Տիրուհի, ես խմեցի՝ դո՞ւն գինովցար ․ ես ան պատուական բաները որո՞ւն խրկեցի, քեզի՞ չխրկեցի՞ ։ Երդում կընեմ ըսաց կնիկը թէ ինծի բան մը չեկաւ, հապա շանը եկաւ ։ Հոս եկոր ըսաց Եզովբոսին, որո՞ւն տուիր ան կերակուրները ։ Որո՞ւն պիտի տամ ըսաւ, քու սիրականիդ տուի ։

Դարձաւ Քսանթոս կնկանն ըսաց, թէ դուն բան մը չե՞ս առած ։ Ամենևին բան առած չեմ ըսաց ։ Տէր իմ, ըսաց Եզովբոս, դուն սիրականիդ չխրկեցի՞ր ։ Կանչեց շունն ըսաց ․ ահա բարեսիրտ սիրականդ, որ ամենէն աւելի քեզ կը սիրէ, և քեզի բարի կուզէ ։ Վասն զի թէպէտ կինդ կը վկայէ թէ քեզ շատ կը սիրէ, բայց պզտի բանէ մը նեղացածին պէս, քեզի դէմ կելլէ կը խռովի, կը պարսաւէ անարգելով, կը չարանայ որ քեզ ձգէ ։ Իսկ շունը թէպէտ ծեծ ուտէ, անօթի մնայ, վռնտուի, ամենևին չի փախչիր ․ բոլորը կը մոռնայ, քեզ կը սիրէ շողոքորթելով, և ամէն երախտագիտութեան նշանները կուտայ ։

Ուստի պէտք էր որ ըսէիր տէր իմ, թէ կնկանս տուր, չէ թէ բարեսրտիս ։ Քսանթոս դարձաւ ըսաց կնկանը, կը տեսնե՞ս Տիրուհի, աս պակասութիւնն իմս չէ, հապա Եզովբոսինն է ․ ուրեմն համբերէ, հանդարտ կեցիր, ես ծեծով անոր վրէժխնդիր կըլլամ ։ Աս պատասխանը բաւական չեղաւ անոր սիրտը հանդչեցընելու ․ Նոյնս ծածուկ մը տնէն ելաւ գնաց հօրը տունը ։ Ան ատենը դարձաւ Եզովբոս ըսաց տիրոջը թէ ես քե-

դն չըսե՞ր թէ քու շունդ կնոջմէդ աւելի քեզ կը սիրէ ։

## ԳԼ. ԺԱ.

### Եզովբոս դարձուցանէ զկինն 'ի տունն ։

Քանի մը օր անցաւ Քսանթոս չկրցաւ կնկանը սիրտն առնել ոչ աղաչանքով և ոչ շողոքորթելով. ուստի դրաւ իրեն աղջկանները խրկեց որ հաշտեցընեն, և մոռնայ սըրտին նեղութիւնը. բայց ամենևին մտիկ չըրաւ, ա՛լ աւելի կատղեցաւ ։ Աս ըրած անզգամութիւնը խիստ ցաւցուց Քսանթոսին սիրտը ։

Եզովբոս եկաւ քովն ըսաց. մի՛ վշտանար տէր իմ, մի՛ տրտմիր սպարապ տեղը. ես քեզի խօսք կուտամ որ կնիկդ վաղը ինքիրեն կուգայ հոս ։ Քանի մը դրամ առաւ անկէ գընաց գնելու հաւեր՝ թռչուններ՝ որսեր և այլ հարկաւոր բաներ մեծ հարկիքի մը համար ։ Ջատնիք բերելու ատենը տնէ տուն պըտըտելով կուգար, յետոյ եկաւ Տիրուհիին հօրը տանն առջեւէն անցաւ, աս մտքով որ տեսնեն առած բաներն առանց իմացընելու, թէ ինքը գիտէ որուն տանն ըլլալը, և Տիրուհիին հոն ըլլալը ։

Յանկարծ հանդիպեցաւ անոնց ծառային, հարցուց թէ արդեօք ունի՞ն ծախու բաներ հարսնեց հարկիքի համար ։ Որո՞ւն հա-

մար կուզես ըսայ ծառան: Պատասխանեց, թէ Քսանթոս փիլիսոփային համար, որ վազը պիտի կարգուի: Ծառան շուտ մը ներս վազեց պատմեց կնկանը, որ առանց ուշանալու մէկէն ելաւ գնաց երկանը տունը: Եւ այնպէս խռոված անհանգիստ էր որ տրտնջելով կըսէր Քսանթոսին թէ քեզի կը վայլէ կարգուիլ ուրիշին հետ քանի որ ես կամ: Ահա այսպէս մնաց երկանը քով Եզովբոսին հնարքովը. ինչպէս որ անոր պատճառովը գացեր էր, անանկ ալ եկաւ:

## ԳԼ. ԺԲ.

## Սպաս Եզովբոսի:

Քսանթոս ուզեց օր մը իր աշակերտներուն կերակուր ընել. Եզովբոսին պատուիրեց որ երթայ որչափ լաւ պատուական բան կայ զանոնք գնէ: Եզովբոս երթալու ատենը կըսէր թէ պիտի հասկըցընեմ տիրոջս, որ ուրիշ անգամ ինծի ասանկ անխելք բան չհրամէ: Ուստի գնաց մէկ քանի խոզի լեզու առաւ պատրաստեց հարկիքին համար, և ամենուն առջին դրաւ մէյմէկ լեզու խորված համեմով (պահարով)։ Աշակերտները հաճեցան, որ փիլիսոփայի գործք է առջի կերակուրը լեզու բերել. ինչպէս լեզուն ամէն լաւ խորհուրդները կը յայտնէ: Իսկ Եզովբոս երկրորդ կերակուրն ալ խաշած լեզու

բերան : Երբոր երրորդ կերակուրն ուզեցին , նոյնս լեզու բերան : Աս բանիս վրայ սրտերնին նեղացաւ . վասն զի լեզու ուտելով ձանձրացեր էին , մինչեւ բարկանալով ըսին Եզովբոսին թէ մենք մինչեւ իրիկուն լեզո՞ւ պիտի ուտենք : Բայց Եզովբոս առանց նայելու անոնց տրտունջին նորէն լեզու դըրաւ անոնց առջին : Ուստի Քսանթոս բարկանալով կանչեց թէ ուրիշ բան մը չի՞կայ որ բերես : Պատասխանեց Եզովբոս հանգիստ սրտով մը թէ չիկայ : Ի՞նչ կը խօսիս թըշուառական կըսէր , ես քեզի չպատուիրեցի՞ որ պատուական համով բաներ գնես . սկսաւ անարգել զի՞նքը փիլիսոփաներուն առջին :

Շնորհակալ եմ ըսաւ Եզովբոս՝ ըրած նախատանքիդ վրայ . բայց խնդրեմ՝ լեզուէն անուշ եւ պատուական ի՞նչ բան կայ աշխարհքիս մէջ . ահա ամէն ուսում եւ իմաստութիւն լեզուով կըլլայ , ամէն բան անով կառնենք կուտանք , աղօթք , ատենաբանութիւն , մարդավարութիւն , հարսնախօսութիւն , եւ ամէն ճոռոմութիւն լեզուով կըլլայ , քաղաքներ անով կը շինուին եւ ամէն մարդ լեզուով կը վճարէ իրեն գործքը : Ուրեմն ես կը հաւատամ եւ լաւ գիտեմ թէ լեզուէն գերազանց բան չիկայ աշխարհքիս մէջ : Բոլոր նստողները հաւնելով աս պատճառներուն միաբան վըճռեցին թէ Եզովբոս իրաւունք ունի , եւ Քսանթոսի բարկութիւնն անիրաւ է : Եւ այսպէս ամէն մարդ տուն դարձաւ :

## ԳԼ. ԺԳ.

## Երկրորդ դաս Եզովբոսի:

Քսանթոսի աշակերտները քանի մը օրէն ետև երեսը զարկին ըրած հարկիքը: Ան ալ անպարտ զինքը ցցուց ըսելով թէ ատ բանը մինչև ալ չէր անցած. իմ ծառայիս չարութենէն անանկ եղաւ, բայց փորձը այսօր ամէն բան կը յայտնէ. ահա ձեր առջին իրեն կը պատուիրեմ: Աս խօսքիս վրայ Եզովբոս ալ հոն եկաւ: Տէրն ըսաց որ գնա որչափ գէշ բան գտնես, գնէ որ հարկիք ընեմ աս պարոններուն:

Եզովբոս գնաց նոյնպէս լեզու գնեց, պատրաստեց սեղան բերաւ: Ամէնքը տրտընջալով սկսան իրարու զրուցել թէ աս ի՞նչպէս բան է. միշտ լեզու պիտի ուտենք: Քիչ մը անցաւ, նորէն լեզու բերաւ: Երրորդ անգամ ալ լեզու բերաւ սեղանը: Ա՛լ չիդիմացաւ Քսանթոս բարկութեամբ կը պոռար. դուն ի՞նչպէս խօսք կը հասկընաս Եզովբ. երբոր քեզի ըսի պատուական կերակուր գնէ, դուն գացիր լեզու գնեցիր. և երբոր պատուիրեցի անշահ կերակուր գնէ, նոյնպէս գացիր լեզու գնեցիր:

Ճշմարիտ է խօսքդ ըսաց Եզովբոս. բայց լեզուէն գէշ բան ի՞նչ կրնայ գտնուիլ. լեզուն չէ՞ որ աշխարհք կը կործանէ, և սու-

կալի մարդիկ կը կորսընցնէ · ինչո՜վ կըլլան այնչափ սուտերը, հայհոյութիւնները, անիրաւութիւնները, և խաբէութիւնները · լեզուով կըլլան : Ասով պսակեալները կը քակուին, տէրութիւններ, թագաւորութիւններ կը կործանին, և այլ անհամար չարիք միշտ լեզուն կը պատճառէ, տրտմութիւն, խեղճութիւն, երդում, բամբասանք, որով մարդուս կեանքը լեցուած է :

Ան տանը նստողաց մէջէն մէկը կանչեց Քսանթոսին թէ զգոյշ կեցիր՝ աս ծառայդ քու խելքիդ բան մը կը բերէ · զի կը նայիմ որ հոգին ալ մարմինին նման այլանդակ է : Եզովբոս մէկէն պատասխան տուաւ թէ այլանդակ անմիտ դուն ես, որ հետաքրքրութեամբ ուրիշի բանին կը խառնուիս, և չար խօսքերով կը ջանաս անմիաբանութիւն ձգել տիրոջն ու ծառային մէջ :

## ԳԼ · ԺԴ ·

## ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵԶՈՎԲՈՍԻ :

Քսանթոս Եզովբոսին աս խօսքերը լսելով անանկ տաքցաւ, որ պատճառ կը փնտռռէր լաւ մը ծեծելու : Գարշելի լակոտ, որովհետև դուն իմ բարեկամս պարսաւեցիր թէ հետաքրքիր ըլլալով ուրիշի բանին կը խառնուիս, գտիր ինծի մէկն որ հետաքըրքիր չըլլայ : Եզովբոս հասկցաւ բանը, մէ-

կալ օրն ելաւ գնաց վաճառանոց, բաղմութեան մէջ ուշադրութիւն ամենուն կը նայէր. տեսաւ որ մէկ մարդ մը երկար ժամանակ կեցեր է մէկ տեղ մը: Հասկըցաւ որ խիստ պարզամիտ խեղճ մարդ մ'է. մօտեցաւ իրեն ըսաւ, թէ տէրս կը հրամցընէ որ իր տունը կերակուր ուտես: Աս կոշտ մարդը առանց հարցընելու, թէ ով ես, և որու տնէն եկեր ես, ելաւ գնաց հետը, և աղտոտ կօշիկներն ոտքը գնաց անանկ սեղանը նըստեցաւ:

Քսանթոս հարցուց թէ ո՞վ է աս մարդը: Պատասխանեց Եզովբոս, թէ առանց հետաքրքրութեան մարդ է, որ ուրիշի գործքին չի խառնուիր: Ան ատենը Քսանթոս ծածուկ կնկանն ըսաց որ ես քեզի ինչ բան ըսեմ նէ՝ հնազանդելով պիտի ընես. որպէս զի պատճառ մը գտնեմ, ու լաւ ծեծ մը տամ Եզովբոսին: Ուստի ամենուն առջին ըսաց կնկանն որ գնա ջուր բեր՝ օտարականին ոտքը լուա. վասն զի կարծէր թէ ան խեղճ մարդը չիպիտի թող տայ որ Տիրուհին ոտքը լուայ, պէտք է որ մեծ շնորհակալութի ընելով հրաժարի: Նա սանկ ընելովը յայտնի կըլլար որ հետաքրքիր մարդ է, ոչ թէ անհոգ. ինչպէս հասկըցեր էր Եզովբոս. աս բանն օրինաւոր պատճառ կըլլար Եզովբոսը պատժելու: Իսկ կնիկը բերաւ ջուրն ու պատրաստուեցաւ որ օտարականին ոտքը լուայ: Բայց ան թանձրամիտը տեսաւ թէ Տիրուհին իրեն ծառայութիւն կընէ, ինքիրեն կըսէր, թէ ահա զիս կուզէ պատուել, ուրիշին ընել չի տար, ինքը կընէ. և

այսպէս երկինցուց ոտքերն ու կ'ըսէր՝ Լը-
լա Տիրուհի. որ լուացուելէն ետև սեղան
նստաւ։ Քամիթոս հրամեց որ իրեն խմած
գինիէն օտարականին տայ։ Դարձեալ կը
մտմտար գեղջուկը թէ պէտք էր որ առաջ
իրենք խմեն. բայց որովհետև այսպէս հրա-
մեց բարեսիրտը՝ ինծի չիյնիր քննել աս քա-
ղաքավարութիւնը. ուստի առաւ խմեց։

Բերին առջին կերակուր մը, որ շատ կը
սիրէր, ու ախորժանքով կուտէր։ Տէրը կան-
չեց խոհարարը (աշճին) երեսը զարկաւ թէ
ինչո՞ւ համար գէշ եփեցիր. և պատուիրեց
որ պատժեն ու ծեծեն։ Գեղջուկն անհոգ
կուտէր և կ'ըսէր թէ աս կերակուրս խիստ
պատուական եփած է, մէկ պակասութիւն
մը չունի. բայց թէ որ տէրը իր սիրտը հանգ-
չեցընելու համար կուզէ առանց պատճառի
ծեծել խոհարարը, ինք գիտէ. իմ ինչ վը-
րաս պէտք է, ինչ կուզէ թող ընէ։

Քամիթոս աս անհոգ մարդուն վրայ
խիստ կը նեղանար որ ամենևին հետաքըր-
քրութիւն մը, հոգ մը չէր ըներ, և բանի մը
ետևէն չէր ըլլար. բայց կը համբերէր նեղու-
թիւնը չէր ցցըներ։ Բերին սեղանը կարկան-
դակ (պօղաչա). օտարականն ուտելը չէր գի-
տէր, սկսաւ հացի պէս ուտել։ Քամիթոսին
սիրտը սխմուելով կանչեց բաւ հացեփողին.
յիմար, ինչո՞ւ համար կարկանդակին տակը
մեղր ու համեմ չլեցուցիր, որ քիչ մը հա-
մով ըլլար։ Ան ալ պատասխան տուաւ թէ
տէր իմ, թէ որ գէշ եփեցի, զիս պատժէ.
բայց թէ համեմ չէ դրած՝ մեր Տիրուհին
պիտի գիտնայ, իմ բանս չէ, անորն է։ Ե-

Թէ իմ կինս է պատճառը՝ հիմայ ողջ ողջ կերևմ՝ կըսէր Քսանթոս ։ Աչք ըրաւ կընկանն որ իրեն հնազանդի · որպէս զի պատճառ ունենայ Եզովբոսը պատժելու ։

Ուստի բերել տուաւ փայտի կտորուանք · որ երբ վառեցան՝ Քսանթոսի Տիրուհին բերին կրակին մօտ, և ձևացուցին որ մէջը պիտի ձգեն, նայելով թէ ինչ կընէ օտարականն աս բանիս մէջ · գէթ հոգ տանելով բան մը կը հարցընէ՞, կամ կարգիլէ՞ որ չերի կինը ։ Բայց ան աւանց այլայլելու հոգ մը չունէր աս սգաւոր բանին վրայ · և իր սովորական անհոգութեամբ կեցեր կըսէր մըտքովը · Թէ որ պատճառ մը չունի բարկանալ ընկերոջը դէմ, ինչո՞ւ սաստիկ տաքցեր է ։ Ելաւ գնաց Քսանթոսին քով ըսաց · Թէ որ պարապ է սաստիկ ընել կանանց, քիչ մը համբերէ երթամ իմին ընկերս ալ բերեմ, որ երկուսը միատեղ երես ։

Փիլիսոփան լսելով աս մարդուս խօսքը, զարմացաւ թէ սաստիկ աւանց հետաքըրքրութե՛ անհոգ և պարզամիտ մարդ կընայ ըլլալ · այնչափ որ ալ չիդիմացաւ կանչեց Եզովբոսին թէ իրաւ որ դուն պարապ տեղը մարդ չես ճանչնար · ահա ճշմարիտ անհոգ անհետաքրքիր մարդ, որ ամենեւին բան մը հոգը չէ · յաղթեցիր Եզովբ, և վառըկեցար յաղթութիւնը ։ Ահա ասկէց ետև գոհ եմ քու վրաս, կը մոռնամ ըրած բաներդ, կըներեմ, և ազատ կընեմ քեզ ծառայութենէդ ։

## ԳԼ. ԺԵ.

### ԽՕՍՔ ԵՂՈՎԲՈՍԻ ԸՆԴ ԴԱՏԱՒՈՐԻՆ :

Քանթոս պատուիրեց Եղովբոսին, որ երթայ բաղնիքը նայի թէ բազմութիւն շատ կա՞յ. վասն զի կուզէր բաղնիք մտնել: Եղովբոս երթալու ատենը Ճամբան հանդիպեցաւ դատաւորին, որ գիտէր թէ Քանթոսին մարդն է. հարցուց թէ ո՞ւր կերթաս: Չիմանամ ըսաց Եղովբոս, ուր կերթամ: Դատաւորը կարծեց թէ զինքը ծաղր կընէ, բարկացաւ տուած պատասխանին վրայ. հրամեց որ բանտը դնեն: Երբոր դարձուցին Եղովբոսը, սկսաւ բարձր ձայնով պօռալ. Տէս կըսէի տէր իմ, ահա իմ պատասխանս նայէ ինչպէս Ճշմարիտ ելաւ. ուրեմն իրաւունք ունէի որ ըսի թէ չիմանամ ուր կերթամ. ես գիտէի՞ թէ բանտը պիտի երթամ. գիտցուածով քեզ տեսայ, որ իմ բանտն երթալուս պատճառ եղաւ:

Դատաւորը զարմանալով անոր խելացի պատասխանին վրայ, թող տուաւ: Եղովբոս բաղնիք գնաց տեսաւ որ շատ բազմութիւն կայ. ամէն մէկին ուշադրութե̃ կը նայէր. բաղնիքին դուռը քով մեծ քար մը տեսաւ որ ամէն մտնող ելլողին ոտքին դպչելով նեղութի կուտար, ու մէկը չէր վերցըներ անկէ. մէկ մարդ մը ներս մտնելու ատենը

վերցուց անկէ ուրիշ տեղ դրաւ ։ Եզովբոս դարձաւ տուն ըսաց տիրոջն որ խիստ հանգիստ կրնաս լուացուիր · վասն զի ես մինակ մէկ մարդ մը տեսայ հոն ։

Քսանթոս գնաց բաղնիք · երբոր տեսաւ այնչափ բազմութիւն որ կըլուացուէին, ինչ է աս կանչեց Եզովբոսին, դուն ինծի չըսի՞ր որ մէկ հոգի մը կայ · Ճշմարիտ է ըսաց · բայց տէր իմ՛ տեսայ ան քարը բաղնիքին դրանը մէջ դրած, ամէն մտնող ելլող անոր զարնելով կանցնէր, այնչափ բազմութեան մէջէն մէկ մարդ մը գտնուեցաւ որ ան քարը վերցընէ անկէ անդին դնէ ։ Ահա աս պատճառաւ ըսի որ մէկ մարդ մը տեսայ այսչափ բազմութեան մէջ, ամէնէն վեր դնելով զայն ։ Քսանթոս ծիծաղելով ըսաց թէ Եզովբոսին պատասխանը խելքով լեցուն՝ միշտ պատրաստ է ։

## ԳԼ. ԺԶ.

### Հանճար Եզովբոսի ։ –

Երբեմն Քսանթոս իր աշակերտներուն երևելի հարկիք մը գնաց · երբոր գինին խմեցին հարբեցան, սկսան իրարու հարցմունքներ ընել կերպ կերպ բաներու վրայ ։ Քսանթոս տաքնալով կը խօսէր գինիին ուժովը · Եզովբոս քովն ըլլալով ըսաց · Ամիրայ քեզի

կուզեմ՝ հասկըցընել թէ Բաքոս (1) իրեք յատկութիւն կամ՝ իրեք զանազան աստիճան ունի․ առաջինն է զուարճութիւն․ երկրորդն է արբեցութիւն․ երրորդը կռիւ, թշնամանք․ դուն ուզածիդ չափ խմեցիր լաւ մը զուարճացար, ուրեմն գոհ կեցիր աս աստիճանին մէջ, ալ առաջ մ՚երթար։ Քսանթոս որ սկսեր էր գինովնալ, աս խրատս ծուռ մըտքով հասկըցաւ, ու բարկանալով ըսաւ․ կարէ ձայնդ՝ գնա դժոխքին մէջ եղողներուն խրատ տուր։ Պատասխանեց Եզովբոս թէ կարծեմ՝ դուն ալ հոն երթաս անոնց քով։

Հոն նստողներուն մէկը տեսաւ որ Քսանթոսի գլուխը տաքցեր է․ Պարոն, ըսաւ, կըրնա՞յ գտուիլ անանկ մարդ, որ բոլոր ծովուն ջուրը խմէ։ Պատասխանեց Քսանթոս՝ թէ ես մինակ կրնամ խմել։ Ան ալ ըսաւ․ թէ որ չիկրնաս նէ ի՞նչ կուտաս։ Բոլոր տունս կուտամ ըսաւ։ Աս գաշինքս հաստատելու համար երկուքն ալ հանեցին իրենց մատնին գըլին գրաւ (ռէհին)․ ետքը ամէն մարդ տեղը դարձաւ։

Առաւօտուն Քսանթոս ելաւ լուացուեցաւ տեսաւ որ մատնին մատը չէ՝ զարմանա-

(1) Բաքոս Դիոսին որդին էր․ որ հռոմայեցիները խաղողի և գինիի ա̅ծ դրեր էին ու Դիոնիսոս կըսէին, իսկ Հայերն Սպանդարամետ կանուանէին, որովհետև ատոր տօնին օրը շատ կենդանիներ զոհ կընէին․ որուն արձանն էր մանուկ տղայ։ Բայց շատ անգամ գրոց մէջ գինիին տեղը Բաքոս կըդնեն․ ինչպէս Եզովբոս ալ գինին ըսելու տեղը, կըսէ Բաքոս իրեք յատկութի̅ ունի։

րով հարցուց Եզովբոսին թէ ինչ եղաւ : Պատասխան տուաւ թէ չիյտեմ· բայց այսչափ գիտեմ որ դուն տունդ կորսնցուցիր : Ինչո՞ւ համար՝ ըսաւ: Երէկ գինովութեան մէջ պարտաւորեցար որ ծովը խմես · ասոր համար մասնիդ գրաւ դրիր (1) : Պատասխանեց Քսանթոս թէ ինչ ընելու է որ աս բանէս ազատիմ· Իրաւ որ մարդու կարողութե̃ն վեր բան է, կաղաչեմ, մէկ խելք մը բանեցուր ու բոլոր իմաստութե̃դ և փորձովդ ետ առ իմ խօսքս , աս փորձանքէն զիս ազատէ , որպէս զի իմ տուած գրաւս ետ առնեմ առանց անարգանաց : Իրաւ որ անկարելի է ըսաց Եզովբոս , որ կարենամ քու խօսքդ ետ առնել, բայց կրնամ դաշինքդ աւրել :

Երբոր ասօր ամէնքդ մէկտեղ կուգաք՝ դուն խօսքիդ վրայ կեցիր համարձակ, ամենևին մի վախնար : Արբեցութե̃ն մէջ ինչ որ ըսիր , հոն ալ ըսէ բաղմութե̃ն մէջ · հրամայէ որ ծովուն քով սեղան դնեն · պատուիրէ ծառաներուդ որ աման մը ծովու ջուր բերեն քեզի խմելու համար : Կը տեսնես որ բոլոր ժողովուրդը հոն ժողուած են , հրամայէ քովի եղողներուդ որ դաւաթը ծովու ջուր լեցընեն՝ տան · ձեռքդ առ , բարձր ձայնով հարցուր դաշինք ընողին թէ ինչ էր մեր պայմանը · ան ալ պիտի ըսէ թէ բոլոր

(1) Որովհետև հին փիլիսոփաները ժողովրդեան մէջ շատ մեծ յարգութ̃ի և գերազանցութ̃ի ունէին, անոր համար գինովութ̃ մէջ եղած խօսքն ալ ընդունելի էր , ու ետ առնելն անկարելի :

ծովը խմել։ Ան ատենը դարձեր նստողներուն ըսէ. Սամոսացիք, դուք գիտէք թէ որչափ գետեր կը լեցուին աս ծովուն մէջ. իրաւ ես պարտաւոր եմ միայն ծովուն ջուրը խմե-լու, չէ թէ գետերուն. ուրեմն պէտք է որ աս մարդս նախ գետերը կարէ, որ ծովը չլեցին, հապա թէ ես ալ խմեմ ծովը։

Քսանթոս տեսաւ թէ աս հնարքս ան-տարակոյս կրնայ դաշինքն աւրել, և մատանին ետ տալ, մեծ յուսով սկսաւ ուրախանալ։ Ուստի երբոր ժողովուրդը ծովուն մօտ դի-զուեցաւ, բոլոր քաղաքը հոն լեցուեցաւ որ աս չլսուած բանը տեսնեն, թէ ինչպէս Քսանթոս զինքը պիտի աս բանէն փրցընէ։ Բայց Քսանթոս ինչ խրատ որ առաւ Եզով-բոսէն՝ կատարեց ըրաւ ժողովրդեան առջին։ Սամոսացիք զարմացան Եզովբոսին խելքին հնարքին վրայ, և մեծապէս գովեցին։ Իսկ դաշինք ընողը Քսանթոսին ոտքն ինկաւ, խոստովանեցաւ թէ յաղթուեցայ, և աղա-չեց որ դաշինքն աւրէ։ Քսանթոս ժողովր-դեան աղաչանքովը յօժարեցաւ աւրել դա-շինքն, ու հաշտուեցաւ անոր հետ։

## ԳԼ. ԺԷ.

## Ապերախտութիւն Քսանթոսի ընդդէմ Եզովբոսի ։

Երբոր տուն դարձան, Եզովբոս ըսաց Քսանթոսին. տէր իմ, քեզի ըրած աս աղէկութենս դէմ արժան չէ՞ որ ես ինչպէս քեզ ազատեցի, դուն ալ զիս ազատես գերութենէս ։ Տէրը խստութեամբ վռնտեց ըսելով կարծես թէ ես չեմ ուզեր քեզ ազատելու. ելիր դուռը նայէ, թէ որ երկու ագռաւ միատեղ կեցած են, բարի նշան է. հապա թէ մէկ ագռաւ մը կայ, գէշ նշան է (1) ։ Եզովբոս երկուսը միատեղ տեսաւ կեցած ծառին վրայ, եկաւ պատմեց Քսանթոսին. բայց երբոր Քսանթոս ելաւ նայեցաւ, մէկը կար, մէկալը թռեր էր ։ Թշուառական, ըսաց Ե-

(1) Հին ատենը հաւերուն ու թռչուններուն կերակուրը և ձայնը դիտելով կախարդութիւն կընէին, ընդհանուր բաներու կը գուշակէին կերպ կերպ խաբէութեամբ որ կըսուի Հաւահմայութիւն. որ հաւերուն ձայնէն ու շարժմունքէն կը գուշակէին լաւ պիտի ըլլայ թէ գէշ ։ Եւ երբեմն փորը բանալով աղիքներուն շարժմունքէն ու սրտին գոյնէն գուշակութիւն կընէին ։ Ահա Քսանթոս ալ ագռաւը նշան դնելով գէշ սեպեց ազատ ընել Եզովբոսը. որ է խաբէութիւն ։

զովքոսին, դուն ինծի երկուք էն ըսիր, ո՞ւր է․ պատասխանեց թէ ես Ճշմարիտն ըսի, բայց մէկը թռաւ: Անանկ չէ, հապա գար-շելի, դուն զիս ծաղր ըրիր: Բարկութե՛ պա-տուիրեց ծառաներուն որ հանուեցընեն Ե-զովքոսն ու ծեծեն: Երբոր կը զարնէին խեղճին, տեղէ մը կանչեցին Քանիթոսն որ կերակրի երթայ: Սկսաւ Եզովքոս կանչել․ վայ անբաղդ ողորմելուս, ես որ երկու ագ-ռաւ տեսայ, ծեծի արժանի եղայ․ դուն որ մէկ ագռաւ մը տեսար՝ հարկիք ուտելու կերթաս, ահա իմ փորձս յայտնի ըրաւ որ ըրած կախարդութիւնդ սուտ է: Քանիթոս զարմանալով անոր բարակ մտացը վրայ դադ-րեցուց ծեծը:

## ԳԼ․ ԺԸ․

### ՓՈՐՁԷ ԵԶՈՎՔՈՍԻ ՉԳԻՏՆԱԼՈՒՆ:

Եղաւ որ Քանիթոս կերակրի հրամցուց շատ փիլիսոփաներ և Ճարտասաններ․ Եզով-քոսին պատուիրեց որ դուռը կենայ, և պա-տիւ ըլլալու համար միայն իմաստուն մար-դիկ ներս առնէ․ իսկ Եզովքոս դուռը գո-ցեց ու ներսը կեցաւ․ նայիս հրամցուցած մարդուն մէկն եկաւ դուռը զարկաւ: Եզով-քոս առանց դուռը բանալու ներսէն հար-ցուց թէ շունն ի՞նչ կըշարժէ: Ան ալ դըր-սէն կարծեց թէ իրեն շուն կըսէ, բարկա-

նալով ձգեց գնաց ։ Որչափ մարդիկ որ եկան, ասանկ բարկանալով ետ դարձան, կարծելին թէ զիրենք կը նախատէ. վ՟ն զի Եզովբոս ամենուն ալ աս հարցմունքը կընէր ։ Յետոյ մէկն ալ եկաւ դուռը զարկաւ. անոր ալ հարցուց Եզովբոս թէ չունին ի՞նչ կը շարժէ ։ Ան ալ դրսէն պատասխան տուաւ թէ պոչն ու անկաճները ։ Եզովբոս տեսաւ որ յարմար պատասխան տուաւ, բացաւ դուռն ու տարաւ ներս տիրոջը քով, ըսաց թէ մէկ փիլիսոփայ մը չեկաւ քու հարկիքդ ասկէ՚ի զատ ։

Քսանթոս սաստիկ բարկացաւ՝ կարծելով թէ մէկալոնք զինքը ծաղր ընելու համար չեն եկած ։ Մէկալ օրը բարեկամները եկան դպրոցը, և երեսը զարկին Քսանթոսին որ զիրենք անանկ անարգելով դռնէն ետ ճամբեց. ինչո՞ւ համար, կըսէին, ան աստիճանը մեզ անարգեցիր. դրիր դռանը քով այլանդակ գերիդ որ մեզ թշնամանելով ետ դարձուց ։ Հարցուց Քսանթոս թէ քո՞ւն էք ինչ էք. իրա՞ւ է ըսածնիդ ։ Պատասխանեցին ամէնքը մէկ ձայնով. ճշմարիտ է քեզի ըսածնիս ։ Շուտ մը կանչեց Եզովբոսն հարցուց բարկանալով թէ ինչո՞ւ համար ասանկ անարգելով ետ դարձուցիր բարեկամներս ։ Պատասխանեց Եզովբոս թէ դուն չիպարտաւորեցի՞ր որ յիմար մարդիկ թող չիտամ ներս մտնելու, որ միայն գիտուն իմաստուն մարդիկ նստին հարկիքդ ։ Իրաւ այդպէս է ըսաց Քսանթոս. բայց ասոնք ամէնքը գիտուն չե՞ն ։ Պատասխանեց Եզովբոս թէ ես աս գիտեմ որ դուռը զարկած

ատենը, եւ իրենց կը հարցընէի թէ շունն ինչ կը շարժէ. մէկը չիկրցաւ հասկընալ. և հարցմունքիս պատասխան տալ. ուստի կը նայէի որ տգէտ մարդիկ էն, դուռը չէի բանար. միայն անոր բացի դուռն որ լաւ պատասխան տուաւ:

Եզովբոս խօսքը լմնցուց, բայց մէկը չիկրցաւ դէմ խօսիլ. և ամէնքը խոստովան եղան թէ ճշմարիտ է բանը:

## ԳԼ. ԺԹ.

## ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵԶՈՎԲՈՍԻ:

Քսանթոս օր մը Եզովբոսին հետ գերեզմանոցը գնաց, որ գերեզմաններուն վրայի գովեստները կարդալով կը զուարճանար: Եզովբոս տեսաւ որ մէկ գերեզմանի մը վրայ գրած էին Յունաց այս գրերս. α Ա՛լֆա. β Վ՛իտա. δ Տէ՛լտա. ο Օմիգրօն, ε Է՛փսիլոն. θ Թիտա. χ Խի: Եզովբոս այս գրերը ցցուց Քսանթոսին, հարցուց թէ ատոնք ինչ կը նշանակեն: Քսանթոս ուշադրութ. նայեցաւ, քննեց մտմըտաց, չեմ հասկընար բայց ինչ ըսել կուզէ: Ան ատենը դարձաւ Եզովբոս ըսաց. Ամիրայ, եթէ այս գրերուն ուժովը հոս գանձ գանեմ, ինչ կուտաս ինծի: Ան ալ սիրտ տալով ըսաց թէ կէսը կուտամ և քեզ ալ կազատեմ: Եզովբոս այս խոստմունքըս ըսելով չորս քայլ (ոտք) հեռացաւ ան-

կէ՝ փորեց գանձ գտաւ․ տարաւ Քանթո-
սին ըսաց թէ կատարէ խոստմունքդ, զիս
ալ ազատ ըրէ։ Պատասխան տուաւ թէ քեզ
չեմ ազատեր, մինչև որ սն գրերուն զօրու-
թիւը չիմեկնես ինծի․ վն զի առելի կուզեմ
անոնց իմաստը հասկընալ, քան թէ ոսկին
ժառանգել։

Եզովբոս ալ ըսաց թէ ով որ աս գանձը
հոս թաղեր է, իմաստուն մարդ ըլլալով աս
գրերը փորել տուեր է․ որ կը՛նշանակեն՝
α Աբօջա գնացեալ․ β Վիմադա քայլս․ δ Դէսէ-
րա չորս․ ο Օրիքսաս փորելով․ ε Եվրիսի-
սցես․ ϑ Թիսավրօն գանձ․ χ Խրիսիօն ոս-
կւոյ։ Քանթոս ալ ըսաց, որովհետև այս-
պէս հնարագէտ քան գիտցող ես զուն, յի-
մար կըլլամ ես թէ որ քեզ ազատեմ․
Կրկնեց Եզովբոս․ թէ որ չըներ՝ աս գան-
ձը չես կրնար ժառանգել․ վն զի կերթամ
բիւզանդացւոց (1) թագաւորին կիմացը-
նեմ, որ անոր համար պահած էր։ Ուստի
զատես ըսաց Քանթոս։ Այս գրերը յայտ-
նի կըցընեն ըսաց․ α Աբօթօս տուր․ β Վա-
սիլէ թագաւորին․ δ Տիօնիսիօ Դիոնեսիո-
սի․ ο Օն զոր․ ε Եվրէս գտեր․ ϑ Թիսավրօն
գանձ․ χ Խրիսիօն ոսկւոյ։ Քանթոս աս
բանը լսելով հասկըցաւ որ ձեռքէն պիտի

(1) Բիւզանդիոն կըսուի Սթամպօլ Կ. Պօլիս քա-
ղաքին առաջինը․ որ նախ էլլինք պզտի քաղաք մը
[illegible] շինեցին․ յետոյ Կոստանդիանոս
[illegible]։ Հիմա [illegible]
[illegible]
[illegible] ալ կը յայտնէ։

երթայ, ու ըսաց կէսն ու ձայն մի հաներ: Դուն չես ինծի տուողն ըսաց Եզովբոս, հապա ոսկին թաղողը տուեր է: Մտիկ դիր նայէ ինչ կը նշանակեն գրերը· α Անէլմէ-նի զառեալն· β Վադփէօանդէս գնացեալ· δ Տէէլէռթէ բաժանեցէք· ο Օն զոր· ε Է՛ռրէտէ գտիք· θ Թէսաւրօ՛ն գանձ· χ Խռւրէսէօ ոս-կւոյ:

Եկող տուն երթանք ըսաց Քսանթոս որ բաժնենք ոսկիները, և քեզ ալ ազատ ընեմ: Բայց երբոր եկան՝ վախցաւ Քսանթոս, չըլ-լայ թէ բանը դուրս հանէ Եզովբոս, ուստի բանտը դնել հրամեց խեղճը: Երբոր բանտը կը տանէին Եզովբոս կըսէր թէ փիլիսոփա-ներն ասանկ կը պահեն իրենց ըրած խոստ-մունքը: Չէ թէ միայն չազատեցիր զիս, որ խոստացեր էիր, հապա բանտն ալ դնել կու-տաս: Աս խօսքովս սիրտը շարժեցաւ Քսան-թոսին, շուտ մը պատուիրեց որ թող տան, ըսելով՝ անտարակոյս երբոր դուն ազատիս՝ զիս չարաչար պիտի բամբասես և ամբաս-տանես:

Պատասխանեց Եզովբոս· հիմա որչափ գէշութիւն կուզես ինծի ըրէ· բայց գիտնաս որ օր մը զիս ակամայ պիտի ազատես:

## ԳԼ. Ժ.

### Աղօթքին Ողջունը :

Այս ժամանակս Սամոս կղզին զարմանալի դիպուած մը պատահեցաւ. երբոր մէկ ընդհանուր երեւելի տօն մը կընէին, յանկարծ արծիւ մը իջաւ բարձրէն խլեց տէրութեն մատանին, տարաւ ծառայի մը ծոցը ձգեց : Բոլոր ժողովուրդը զարմանալով աս սքանչելեացս վրայ, եկան միաբան աղաչեցին Քսանթոսին, որ իրենց մէջ խիստ երեւելի իշխան և մեծ փիլիսոփայ էր, մեկնէ անոնց, թէ ինչ կը նշանակէ աս հրաշալի դիպուածս :

Քսանթոս չէր գիտեր ինչ պատասխան տայ, ժամանակ ուզեց որ մտածէ : Երբոր տուն դարձաւ միշտ անհանգիստ տրտմութեն մէջ ճնալով սկսաւ մաղձոտիլ : Եզովբոս տեսաւ թէ իր տէրը տրտմութե՞ կը մաշի՝ հարցուց թէ ինչո՞ւ համար ասանկ տրտում ես. աս բանս ինծի ձգէ, և տրտմութիւնդ մէկ դի դիր որ քեզ կը տանջէ : Գնա վաղը զուրցէ սամոսացիներուն թէ իմ բանս չէ հրաշք մեկնել և գուշակութիւն ընել. սակայն ես մէկ ծառայ մը ունիմ տունս որ ասանկ բաներու լաւ տեղեակ է, ան կրնայ սաղ ձեզի դիպուածին մեկնութիւնը, և ձեր տարակուսանքը քակել : Տէր իմ, թէ որ ես ա-

նոնց տարակոյսը վերցընեմ, բոլոր պատիւը քեզի կըլլայ որ սանկ բան գիտցող ծառայ ունիս. թէ որ չիկրնամ, միայն ինծի կըլլայ պարսաւանքը:

Քսանթոս մեծապէս ուրախանալով գնաց միւս օրը քաղաքացւոց ժողովքը, և անոնց պատմեց Եզովբոսին խօսքերը: Անոնք ալ աղաչեցին որ շուտով բերել տայ: Երբոր Եզովբոս եկաւ մտաւ սամոսացւոց ժողովքին մէջ, կերպարանքին նայելով սկսան ամէնքը ծիծաղիլ, մինչև ծաղր ընելով ըսին թէ կընա՞յ ըլլալ որ սանկ այլակերպ կոշտ մարդը սա հրաշքին մեկնութիւնը տայ. սանկ ցուցանքաւոր բերնէն ինչպէս պիտի բարի բան լսենք: Ուստի նորէն սկսան կատակելով խնդալ Եզովբոսին վրայ:

Իսկ Եզովբոս ձեռքը շարժելով կաղաչէր ժողովքին որ լուռ կենան. Ով սամոսացիք կըսէր, ինչո՞ւ զիս կանարգէք կերպարանքիս տգեղ ըլլալուն համար. հոգին պէտք է նայիլ, չէ թէ կերպարանքը. բնութիւնը շատ անգամ գեղեցիկ հոգին տգեղ մարմնոյ մէջ կը դնէ. դուք ամանին ձևին կը նայիք թէ մէջի եղած պատուական գինիին: Բոլոր ժողովքին մարդիկն աս խօսքերս լսելով՝ ըսին որ եթէ դուն ունիս մեզի օգտակար բան մը խօսելու որ կարենայ ամէնուս սիրտը հանգչեցընել՝ խօսէ: Ան ատենը մեծ համարձակութի մը այսպէս խօսեցաւ Եզովբոս. Ով սամոսացիք, որովհետև երբոր Բաղդը կը սիրէ երկպառակութի և խռովութի ցանել, կը դնէ մէկ առիթ մը փառասիրութե տիրոջն ու ծառային մէջ. եթէ պատահի որ ծառան

Երբ իշխանութիւն առնէ, վիշտ կը քաշէ. և թէ ահրոջմէն վեր ըլլայ, նոյնպէս վիշտ կը քաշէ ծեծ կուտէ, անանկ որ բանը որ դին-դամնայ, ծառան նեղութիւն պիտի քաշէ: Նոյնպէս մինչև որ զիս ազատ չընէք, իմ ահրոջս իշխանութենը տակէն չհանէք, ես համար-ձակ ձեզի չեմ կրնար յայտնել աստից փախու-ստս՝ որուն կը փափաքիք: Ան կետին բո-լոր ժողովուրդը մէկ ձայնով կանչեց Քսան-թոսին թէ ազատ ըրէ Եզովբոսը, կատարէ Սամոսացւոց կամքը, ասով բոլոր քաղաքը ազատ կընես:

Քսանթոս պատասխան չտուաւ: Դա-տաստը մէկէն կանչեց Քսանթոսին. թէ որ դուն ժողովրդեան մտիկ չընելով ազատ չը-նես քու կամքովդ, հիմա ես ազատ կընեմ իմ իշխանութեամս, որ քեզի հաւասար կըլ-լայ:

Ալ չկրցաւ դէմ կենալ Քսանթոս՝ ա-կամայ կամքով ազատ ըրաւ. որ փողերով (գոռոններով) քաղքին մէջ կը կանչէին թէ Քսանթոս փիլիսոփան ազատ ըրաւ Եզով-բոսը Սամոսացւոց աղաչանքին համար: Նո-յնպէս կատարեցաւ Եզովբոսին մարգա-րէութիւն որ Քսանթոսին ըսեր էր՝ թէ ա-կամայ զիս պիտի ազատ ընես: Եզովբոս ազատ ըլլալէն ետև սկսաւ սանկ խօսիլ ժողովրդեան:

Ով Սամոսացիք՝ ինչպէս գիտէք, արծիւն (1) է թռչուններուն թագաւորը, որ իշ-

(1) Արծիւ (խորդալ) Թռչունը կոչուի Թռչուններու Թագաւոր, որոնցմէն ամենէն զօրա-

խանական մասնին վերցուց տարաւ ծառայլին ծոցը ձգեց. աս բանս կը նշանակէ՝ որ հիմակուան թագաւորներէն մէկը կը մտածէ որ ձեր ձեռքովը ձեր իշխանութիւնը կործանէ, և ձեզ գերի ընէ՝ եղծանելով ձեր օրէնքը: Աս խօսքս ահի դողի մէջ ձգեց բոլոր սամոսացիքը:

Քանի մը օրէն ետև սամոսացիք թուղթ առին Կրեսոս (1) Լիւդիայի թագաւորէն՝ որով իրենց կը պատուիրէր որ ամէն տարի իրեն տուրք տան, եթէ չտան՝ պատերազմով վրանին պիտի ելլէ, պատրաստ կենան: Աս բանիս վրայ ժողովք ըրին որ մտածեն ճամբայ մը գտնեն. վ̃ զի եթէ հնազանդէին, ազատութիւնը կը կորսուէր. և կը վախ-

տոր և սոսկալի է, և ամենուն կը յաղթէ. Նաև Դիոգինէն ընծայ եղած է, ինչպէս պիտի բացատրենք:

(1) Կրեսոս Լիւդիայի թագաւորն էր 550 տարի առաջ Քրի թուականէն. որ Ասիայի մէջ շատ տեղերու տիրելով բոլոր Յոյները հարկատու ըրաւ. այնչափ գանձ մեծութի դիզեց, որ շատ մեծ եղաւ հարստութք: Իմաստուններու հետ խօսիլ շատ կը սիրէր. օր մը մեծութիւնը իրայ զուարճանալով ըսաւ Սողոն փիլիսոփային թէ ինծի պէս բախտաւոր մարդ տեսած ես: Ան ալ ըսաւ թէ մինչև ՚ի մահ պէտք չէ որ մարդ իրեն երանի տայ: Յետոյ Կիւրոս թագաւորէն յաղթուելով քաղաքն առին. երբոր մէկ զինուոր մը սպաննանալով ուզէր մեռցնել պիտի զարնէր Կրեսոսին, իր տղան տեղը գտնըւեցաւ, որ լեզուն կապուած էր չէր խօսեր, որպէս յանկարծ լեզուն բացուեցաւ. մի զարներ, ըսաւ զի-

նայլին Կրեսոսին իշխանութիւնը տակն էյնիլ. մինչև հարկ եղաւ խորհուրդ հարցընել Եղվփոսին, և անոր տուած խորհրդին հետևիլ ամէն բանի մէջ: Ան ալ պատասխան տուաւ թէ Պարսիկներ, ձեր իշխանները խորհուրդ կուտան թէ տուրք տանք Կրեսոսին. և օգտակար է հնազանդիլ անոր, ու պատերազմին թշուառութենէն ազատիլ. ուստի իմ ձեզի տալու խորհուրդս պարապ է. սակայն բաւական է ձեզի մէկ բան մը պատմել, որ հասկընաք թէ ինչ պէտք է ընել աս բանիս մէջ: Աս աշխըրքիս մէջ բաղդը երկու ճամբայ յայտներ է մէկզմէկու հակառակ. մէկն է ազատութեան ճամբան, որուն սկիզբն է դժուար և խիստ, և վերջը դիւրին ու զուարճալի: Մէկալն է ծառայութեան, որուն սկիզբն է դիւրին և հանգիստ, բայց ետքը դժուար և խիստ: Աս բանս որ լսեցին, ամէնքը մէկ ձայնով պոռացին թէ մենք ազատ ենք, ծառայութեան տակ չենք էյնիր: Ու այսպէս Թագաւորին խրկած դեսպանը եա ճամբեցին առանց տուրք տալու: Կրեսոս երբոր բանը հասկըցաւ՝ ուզեց սամոսացւոց վրայ պատերազմ բանալ. բայց դեսպանն իրեն ըսաց թէ տէր իմ, չեմ կարծեր թէ կարենաս անոնց յաղթելով վրայ ել-

Նաւորէն, իմ հայրս Կրէտոսն է: Զինուորը Իտանէց փարտա Կիպրոս Թագաւորին առջին, որ հրամեց հրաւէ վառէն ողջ ողջ էրէն. հրաւէն ծոճ որ Բէ-րէն՝ մըտէն ընկաւ Սողոնէն խօսքն ու սկսաւ պօռալ. Սողոն Սողոն: Թագաւորը պարծանքը հարցուց. էր-Էոր իմացաւ Սողոնէն խօսքը, ազատ ըրաւ:

ընս որչափ որ Եզովբոս իրենց քովն է. մն ղի անոր խորհրդին կը հետևին, որ ամմէն բանի տակէն կելլէ. ուստի իմ խորհուրդս աս է որ ամէն բանէն լաւ կըլլայ, դեսպան խրկէ՝ սամոսացւոցմէ Եզովբոսն ուզէ, և խօսք տուր իրենց հետ հաշտութեն ընելու. պարգևներ ալ խոստացիր անանց յիշելու տուրքը, ձգէ հիմա պատերազմը. երբոր Եզովբոսը ձեռք ձգես, ան ատենն անանց աշխատանաց կը յաղթես անոնց: Կրեսոս հաւնեցաւ աս հնարքիս, և դեսպան խրկեց ուզեց Եզովբոսը: Անոնք ալ հաւանեցան խրկելու:

Եզովբոս հասկընալով անոնց միտքը եկաւ ժողովքին մէջ այսպէս խօսեցաւ. Ով սամոսացիք, ինծի մեծ պատիւ է որ թագաւորին երթամ ոտքն իյնիմ, պատուեմ. սակայն երթալէս առաջ կուզեմ ձեզի առակ մը զրուցել: Հին ատենը երբոր կենդանիները համաձայն էին, գայլերը պատերազմ բացին ոչխարներուն դէմ որ շներուն հետ միաբան ըլլալով անոնց ետևէն կերթային. իսկ շներն առաջնորդ ըլլալով կը ծեծկուէին, անանկ որ գայլերը չէին կրնար մօտենալ ոչխարներուն: Ուստի գայլերը դեսպան խրկեցին ոչխարներուն որ հաշտուին. բայց իրարու հետ սիրով վարուելու համար ուզեցին որ շները պատանդ (–էհէն) խրկեն: Ոչխարները յիմարութեբ հաւանեցան, և խրկեցին անոնց իրենց շները. գայլերը մէկէն պատռեցին շները՝ եկան ոչխարներն ալ կերան:

Սամոսացիքը լաւ հասկըցան առակին միտքն ու չուզեցին որ Եզովբոս երթայ իրենց քո-

վէն. բայց Եզովբոս չուզեց կենալ, ելաւ դեսպանին հետ գնաց Թագաւորին ։

## ԳԼ. ԽԱ.

### Եզովբոս հաշտեցուցանէ զԹագաւորն ։

Երբոր Նիւզիա քաղաքը հասաւ Եզովբոս, ելաւ Թագաւորին առջին. բայց Թագաւորն ան որ տեսաւ, աւելի բարկացաւ ։ Մեծ ամօթ է ինծի՝ կըսէր, որ սանկ այլանդակ մարդը զիս արգիլէ, և անանկ մեծ կղզին ձեռքէս հանէ ։ Պատասխանեց Եզովբոս. Ով մեծ Թագաւոր, ես ոչ բռնութեամբ եկայ հոս, և ոչ վախնալուս. այլ իմ կամքովս եմ եկեր. ներէ ինծի որ քիչ մը խօսիմ. սակայն մեր բանին վրայ չխօսած՝ մէկ առակ մը պատմեմ, թողութիւն ըրէ ։ Մէկ մարդ մը մարախ (չէքիրկէ) ժողվէր կը մեռցընէր. գիպուածով բռնեց ճպուռ (ճըռ ճըռ պէօճէկի) մը. կենդանին տեսաւ թէ զինքն ալ պիտի մեռցընէ, սկսաւ աղաչել թէ զիս մի մեռցըներ պարապ տեղը. վն զի ես ոչ ցորենի վընաս ունիմ, և ոչ մէկ ուրիշ զէն մը կրնամ տալ, այլ միայն շարժելով (1) իմ մանալըրակ

(1) Աս տեսակ կենդանիներուն ձայնը օդէն կը յառաջանայ. վասն որ իրենց ծակէն օդը կը զարնեն

մաշկերս որ ունիմ վրաս՝ քաղցր ձայն կը հանեմ, որ անցնողներն ու բանտարկեալները զուարճանան. ուստի ձայնէս 'ի զատ բան մը չունիմ, և ուրիշ բան չես կրնար վրաս գտնել: Աս բանս որ լսեց, թողուց որ երթայ:

Ով մեծ Թագաւոր, ահա ես ալ ոտքդ ընկած կաղաչեմ, զիս փուճ տեղը մի մեռցըներ. ես մարդու գէշութիւն ըրած չեմ. մէկ յանցանք մը ունիմ որ համարձակ կը խօսիմ, և մարդու երեսպաշտութիւն չեմ ըներ. Թէպէտ մարմինս է անշնորհք, որ դրսէն անարգ կերևնամ, բայց խօսքն անարգ չէ: Թագաւորն աս խօսքիս վրայ անանկ զարմացաւ որ մեռցընելու մեղքըցաւ. ուստի կանչեց. Եզովբոս, ես չէ, հապա Ճակատագիրը (1) կեանքդ քեզի բաշխեց. խնդրէ ինծմէ ինչ կուզես, քեզի կը շնորհեմ: Ով մեծ Թագաւոր, ըսաւ Եզովբոս, կը խնդրեմ որ սամոսացւոց հետ հաշտութիւն ընես: Շատ բարի, ըսաւ Կրեսոս, կը հաշտուիմ: Ան ատենն Եզովբոս ընկաւ Թագաւորին ոտքն

մաշկեղէն ընծերուն. և ան մաշկերուն ըրթալուն՝ օդը կը շարժի և սաստիկ ձայն կը հանէ. շատ մանր կենդանիներ ասանկ շատ ձայն կը հանեն:

(1) Ճակատագիր ըսելով հեթանոս փիլիսոփաները կիմանային ճակտի վրայ գրած ամեն մարդուն գալիքը. և գրուածը հարկաւ պիտի ըլլար, ինչ որ ընես՝ շահ չիկայ կըսէին: Աս գիրը միայն աստուածները կրնային կարդալ, բայց չէին կրնար աւրել. անոր համար կըսէին, թէ Դիոս Աքիլլեսին մահուանը վրայ կուլար, որ ճակատագրած էր: Բայց սուրբ

ու խոնարհութեամբ շնորհակալ եղաւ ըրած բարերարութեանը համար :

## ԳԼ. ԺԲ.

### Եզովբոս գրէ զառակս իւր :

Եզովբոս իր առակներն ան ատենը գրեց երբոր Կրեսոս թագաւորին քովն էր , որ մինչեւ մեր օրը մնացին : Աս առակներն ընծայ ըրաւ թագաւորին . ան ալ մեծ շնորհակալութիւն ընդունեց , եւ Եզովբոսին մեծութիւն տալով դեսպան ըրաւ , ու թագաւորական թղթերով խրկեց որ երթայ սամոսացւոց հետ հաշտութիւն խօսի թագաւորին կողմանէ , եւ հասկըցընէ որ իրեն պաշտպանքով Կրեսոս անոնց հետ բարեկամ պիտի մնայ : Ասկէ 'ի զատ թագաւորը շատ պարգեւներ ընծայ ըրաւ Եզովբոսին , եւ Ճամբուն ամէն բանը հոգաց : Երբոր Սամոս հասաւ , քաղաքացիք անպատմելի ուրախութիւն ընդունած , թագ պսակ տուրին իրեն , եւ քաղաքական հանդէսներ ըրին՝ որ մեծ պատիւ ըլլայ Եզովբոսին :

Իսկ Եզովբոս թագաւորին թղթերը կարդաց բոլոր ժողովրդեան առջեւ . հասկըցընելով թէ անոնք ինչպէս որ իրեն պաշտպանու-

Կարդացողները կիմանան Աստուածային նախախնամութիւնն որ կը կառավարէ աշխարհս :

*թե շնորհեցին, ինքն ալ անոր դէմ սա բա- նով հատուցում ըրաւ. ուսաւ Թագաւորին միտքը յայտնեց անոնց և հաշտութիւն ըրաւ: Յետոյ եղաւ սա կղզիէն գնաց զանազան քա- ղաքներ իմաստուն մարդիկ փնտռելով, որ հետերնին հակաճառութիւն ընէ: Մինչև ե- լաւ Բաբիլոն (1) գնաց. հոն ալ իր իմաս- տութիւնը յայտնեց, և Նիգերոս Թագաւորին պալատը մտաւ:*

*Ան ժամանակի Թագաւորներն իմաստու- թեամբ վարուելով կախ չունէին, միշտ խա- ղաղութեան մէջ էին. և շատ անգամ ի- րարու առակներ և խրթին բաներ կը գրէին, հարցմունք կընէին սա պայմանով որ երբոր մէկը չէր կրնար պատասխան տալ, կը պար- տաւորէր տուրք տալու մէկալին, ինչ կերպ որ դաշինք կընէին (2):*

*Եզովբոս ամէն հարցմունքին և առակնե- րուն դիւրին պատասխան կուտար, որ Նի- գերոս Թագաւորին կը գրէին, և շատ մեծ համբաւ ունեցաւ Թագաւորը: Բայց որով- հետև մէկալ Թագաւորները չէին կրնար Նի- գերոսին խնդիրներուն պատասխան տալ, կը պարտաւորէին դաշնագրութեան համար տուրքեր տալ Թագաւորին:*

(1) Բաբելոն (Պաղտատ) ան ժամանակը ծաղ- կած ըլլալով՝ գիտուններու յարգութեան էր, մա- նաւանդ Նիգերոս Թագաւորին օրը. անոր համար Եղովբոս հոն գնաց:

(2) Աս կերպ հարցմունքը մինչև հիմա կայ արա- բացւոց մէջ. որ դրան փաշաները շատ անգամ (Շէյխերը) և (Տէրվիշները) կերթան մեծամե-

## ԳԼ. ԺԳ.

### Եզովբոս որդեգրէ ինքեան զԵննոս:

Եզովբոս տեսաւ որ զաւակ չունի, մէկ ազնուականի մը զաւակ Ենոս անունով իրեն որդի ըրաւ, տարաւ Թագաւորին յանձնեց իբր իր հարազատ զաւակը · բայց աս ապերախտը շատ չանցաւ մեծ անկարգութիւներ ըրաւ Եզովբոսին տանը մէջ: Եզովբոս հասկըցածին պէս՝ անէն դուրս ըրաւ: Իսկ Ենոս ոխ պահեց, ու Եզովբոսին վրէժխնդիր ըլլալով Թուղթ մը շինեց անոր բերնէն, որ կը գրէ իշխաններուն, որոնք խրթին առակներ կը խրկէին Նիգերոսին · և անոնց կը հասկըցնէ թէ ասկէ ետև ձեզի հետ մէկ պիտի ըլլամ Թագաւորին դէմ: Աս Թուղթը Եզովբոսին մատնիչը կնքեց տարաւ Թագաւորին ցցուց:

Թագաւորն որ տեսաւ Եզովբոսին կնիքը (Մէօհիւրը), կարծեց թէ անտարակոյս Եզովբոսն է գրեր ան Թուղթը իրեն դէմ · ուստի բարկութենը հետևելով անանկ տաքցաւ որ մէկէն հրամեց Հերմիբբոսին (1), որ ա-

ներսէն բան կը հարցնէին · եթէ չէգիպտան, կը պարտաւորէին անոնց բան տալու:

(1) Հերմիբբոս էր Թագաւորին մէկ հաւատարիմ

ռանց քննելու մեռցընէ Եզովբոսն իբր մատնիչ։ Հերմիբբոս Ճշմարիտ բարեկամ ըլլալով Եզովբոսին՝ իրեն բարեկամութիւնը յայտնի ըրաւ աս կերպով։ Առաւ Եզովբոսը տարաւ մէկ գերեզմանի մը մէջ պահեց ամենևին ծածուկ. և ինքն զգուշութեամբ բան կը տանէր անոր մարդ չիմանալով։ Իսկ Եննոս՝ թագաւորին հրամանովը Եզովբոսին ամէն բանը յափշտակեց։

Ժամանակ անցնելէն ետև Նեքդենաբոս եգիպտացւոց թագաւորը լսեց որ սպաններ են Եզովբոսը, թուղթ մը գրեց Լիկերոս թագաւորին՝ կաղաչէր որ իրեն մէկ քանի որամիտ Ճարտարապետ (գալֆա) խրկէ. որպէս զի շինեն անանկ մէկ աշտարակ (գուլէ) մը, որ ոչ երկինքին դպչի և ոչ գետնին։ Նաև խրկէ իրեն անանկ մէկ խելացի բարակ մարդ մը որ կարենայ պատասխան տալ խրթին առակներուն։ Թէ որ ըսաց աս բանս կարենաս ընել, ես տուրք կուտամ քեզի. թէ չիկրնաս, դուն ինծի պիտի տաս։ Աս թուղթն որ կարդաց թագաւորը, տրտմութ̃ը պաշարուեցաւ. վ̃ն զի մէկը չունէր քովը որ կարենայ աշտարակին առակը մեկնել. ուստի սատոնկ ցաւելով Եզովբոսին մահուանը վրայ՝ կըսէր թէ անոր մեռնելով իմ տէրութեանս գլխաւոր սիւնը կործանեցաւ։

Հերմիբբոս տեսաւ թէ թագաւորին կսկիծը սրտանց է, եկաւ աւետիս տուաւ թէ Եզովբոս կենդանի է. վասն զի թագաւորիս

պաշտօնատէրն իէր (հասասա պաշը). անոր համար իրեն պատուիրեց որ մեռցնէ Եզովբոսը։

օգտին համար չխմեցուցի․ լաւ գիտէի որ շատ պիտի զղջաս տուած վճռիդ վրայ։ Աս բարի լուրը լսածին պէս Թագաւորը՝ մեծապէս ուրախացաւ։ Ուստի շուտով Եզովբոսը գերեզմանէն դուրս հանեցին, խեղճին վրան գլուխը աղտոտ հողոտ՝ մէկէն Թագաւորին դէմը հանեցին․ որ զինքն անանկ խեղճ տեսնելով այնպէս սիրտը ցաւեցաւ որ սկսաւ լալ։ Հրամեց որ շուտով լուան հագցընեն և ամմէն պակասութիւնը հոգան։ Եզովբոս Ենոսին ըրած անօրէնութիւնը սուտ հանեց, և իր մեծասրտութիւնը յայտնի ընելու համար՝ ներում խնդրեց Թագաւորէն, որ չխմեցընէ Ենոսը։

Նիգերոս Թագաւորը հանեց եգիպտացւոց Թագաւորին Թուղթը ցցուց Եզովբոսին որ հասկընալով առակին միտքը, սկսաւ ծիծաղիլ․ ետքը Թագաւորին ըսաց, որ անանկ պատասխան տայ։ Երբոր ձմեռն անցնի՝ քեզի բանուորներ կը խրկեմ որ շինեն ըսած աշտարակդ։ Նաև կը խրկեմ մէկ գիտուն մարդ մը որ ամմէն բանի պատասխան տայ ինչ որ իրեն առարկեն։ Ան ատենը Նիգերոս ճամբայ դրաւ Եգիպտոսի Թագաւորին դեսպանները, և նորէն տուաւ Եզովբոսին ամմէն մեծութիւնը, իրեն ծառայ տուաւ Ենոսն ամմէն ունեցած բարիքովը։

## ԳԼ. ԽԴ.

## Անյիշաչարութիւն և խրատք Եզովբոսի :

Եզովբոս նորէն տունն առաւ Ենոսը. ամենևին անցած բաները չյիշելով իր զաւկին պէս կը նայէր, և շատ գեղեցիկ խրատներ կուտար որ բարի ըլլայ: Որդեակ, կըսէր, ամէն բանէն աւելի զա̃ծ պաշտէ, Թագաւորին հնազանդ եղիր, թշնամիներուդ առջին երևելի եղիր որ քեզ չնախատեն. իսկ բարեկամներուդ՝ հեզ և խոնարհ, որ միշտ զքեզ աւելի սիրեն: Աղօթք ըրէ թշնամիներուդ երբոր խեղճ կըլլան աղքատութե̃ և հիւանդութե̃, որ ետքը քեզի տրտմութիւն չբերեն: Շատ անգամ ալ բարեկամներուդ առողջութեանը համար աղօթք ըրէ: Միշտ նայէ որ ընկերոջդ հետ աղէկ սիրով երթաս, որ չըլլայ թէ ցանկութե̃ ուրիշ մարդու կնկէն ըլլայ, որովհետև կանայք բնաւէս փոփոխական և թեթևամիտ են. երբոր կը շողոքորթեն, չար բան չեն մտածեր: Անխոհեմութեամբ ամէն բանի մէկէն մի հաւատար, քիչ խօսէ, և միշտ քու լեզուիդ տէր եղիր. մի նախանձիր ուրիշներուն բաղդին. առաւել ուրախացիր ուրիշին յաջողութեը վրայ, մէ̃ զի նախանձը աւելի վնաս կը բերէ

քու անձիդ, քան թէ ուրիշին (1)։ Հոգաբարձութիւն ըրէ տանդ. արթուն կեցիր ծառաներուդ վրայ, որ քեզմէ վախնան իբրև իրենց մեծէն, և քեզ սիրեն իբրև իրենց բարերար։ Մի՛ ամբշնար միշտ աղէկ բաներ սորվելու. մի՛ յայտներ կնոջդ քու ծածուկ բաներդ, վասն զի անդադար կը ջանայ պատճառ գտնել, որ վրատ ըլլէ, և քեզի հրամմէ։ Ամէն օր բան ժողվէ քեզի վաղուան համար. զի շատ աղէկ է ունեցած բարիդ թշնամուդ ձգել մեռնելէդ ետև, քան թէ ողջութեան ատենդ բարեկամի կարօտ ըլլալ։

Որուն որ հանդիպիս բարևէ պատուով և քաղաքավարութ̄բ. շունը պոչը շարժելով երբ կը շողոքորթէ տէրը, պարտական կընէ որ իրեն հաց տայ։ Մի՛ զզջար բարեպաշտ ըլլալու. բամբասող մարդը տունդ մի՛ հանդիպցըներ, վասն զի դուրս կը հանէ տանդ բանը և ամէն զուրցածներդ։ Անանկ բան ըներ որ քեզ անարգանք և տրտմութ̄ի բերէ։ Մի՛ խռովիր աշխըրքիս պատահմունքներուն վրայ։ Ուրիշին չար խորհուրդ չիտաս, և անօրէն մարդկանց չար վարքին չիհետևիս։

Աս խրատներս անանկ դրան Ենոսին, որ նետի (օգի) պէս սիրտը խոցեցին. մինչև խղճմտանքին խայթելովը, և Եղովբոսին

(1) Եղովբոսին աս խրատն ասէլը յարմար կուգայ մեր ընդունած աստուածաբանութեանը. իբր զի նառանց բառն ասանկ կըսպասաւորանի նախ անձին ճանչէ. վասն զի սիրոյ ճաշելով նախ իրեն ճառապայ։

սուր խրատները մտմըտալով՝ շատ չանցաւ մեռաւ :

## ԳԼ. ԻԵ.

### Եզովբոս կրթէ ձագս արծուոյ :

Եզովբոս կանչեց բոլոր հաւորսներն ու պատուիրեց որ չորս հատ արծւի ձագ բըռնեն իրեն բերեն : Ասաւ զանոնք զարմանալի կերպով անանկ կրթեց , որ մարդու հաւատալիք չի գար (1) : Վասն զի կը պատմեն թէ թռչուններուն սորվեցուց որ երբ պիտի թռչէին՝ վիզերէն կախեց չուանով մէյմէկ զամբիւղ (զէմպիլ) , մէջը դրաւ պզտի տղաք · անանկ սորվեցուցեր էր ձագերուն որ տղաքը ուր ուզեն , հոն երթան · վեր վար կը թռչէին տղոցը ուզածին պէս : Երբոր ձմեռն անցաւ , գարնան առենը Եզովբոս ամէն հարկաւոր պատրաստութիւնը տեսաւ ճամբայ ելաւ · արծիւներն ալ տղաքներով հետն առաւ Եգիպտոս գնաց : Անանկ զարմանալի բաներ ըրաւ եգիպտացւոց առջին , որ տեսնողին խելքը կերթար :

(1) Բնական կը փարախոսի առ պատմութեանս հրոյ , վասն զի դժուար բան է · Բայց հիմայ Եւրոպա կենդանիներուն անանկ կրթութիւն կուտան որ մարդ կը զարմանայ , մինչև հաւատալու չի գար , թէպէտ առ պատմութիւնս ալ շատ դժուար բան է :

Բայց Նեքտենաբոս թագաւորն երբոր լսեց Եզովբոսին գալը մէկ բարեկամեն, ըսաւ թէ զիս կը խաբես. ես լսեր եմ թէ շատոնց մեռած է: Միւս օրը պատուիրեց իր պալատի մեծամեծներուն որ ամէնքն ալ ճերմակ հագնին. ինքը կարմիրներ հագաւ, գլուխն ալ դրաւ թագ մը անգին քարերով զարդարած, և այսպէս մեծութեամբ փառքով նստած իր աթոռը՝ հրամեց որ Եզովբոսը բերեն. որ ներս մտածին պէս՝ յանկարծ հարցուց թագաւորը թէ զիս ինչ բանի կրնաս նմանցընել, և քովինները ինչ բանի: Պատասխանեց Եզովբոս. քեզ կը նմանցընեմ գարնան արևու, և քովի իշխաններդ հասած ցորենի: Թագաւորը զարմանալով աս պատասխանին վրայ մեծամեծ պարգևներ տուաւ Եզովբոսին:

Մէկալ օրը թագաւորը հագաւ ճերմակ լաթեր, և իշխաններուն ալ պատուիրեց որ կարմիր հագնին. բերել տուաւ Եզովբոսն ու մէկէն հարցուց: Ան ալ պատասխան տուաւ թէ դուն կը նմանիս արեգական, և իշխաններդ՝ ճառագայթին: Յետոյ ըսաւ Նեքտենաբոս թէ իմ տէրութեանս առջև Լիկերոս թագաւորը բան մը չեմ սեպեր: Եզովբոս խնդալով պատասխանեց. ով մեծ թագաւոր, ասանկ դիւրին դատաստան մի կտրեր Լիկերոսին վրայ. եթէ դուն քեզ քու ժողովրդեանդ հետ բաղդատես՝ կրնաս արև ըսուիլ. բայց թէ որ Լիկերոս թագաւորին հետ բաղդատես՝ քու լոյսդ անոր առջին խաւար կըլլայ:

Նեքտենաբոս զարմանալով ասոր համար-

ձակ պատասխանին վրայ, հարցուց թէ բերի՞ր մեզի ճարտարապետներն որ ուզէցի աշտարակ շինելու համար: Պատրաստ են ըսաւ Եզովբոս. միայն պէտք է տեղը ցոյց տաս որ սկսինք շինել: Ան ատենը Թագաւորը քաղքէն դուրս ելաւ տարաւ մէկ մեծ դաշտի մը մէջ՝ ցցուց տեղն որ պատրաստեր էր աշտարակին համար:

Եզովբոս հոն տարաւ արծիւները, և չորս տղաքը դրաւ զամբիւղներուն մէջ գործիքներն ալ միասին, թռուց թռչունները. երբոր աս տղաքը վեր բարձրացան, սկսան միաբերան պոռալ թէ բերէք մեզի քար ու կիր և փայտ որ շինենք աշտարակը:

Նէքթէնաբոս երբ տեսաւ որ տղաքներն օդին մէջ կը պոռան, արծիւներն անոնց հնազանդ՝ ուր ուզեն տղաքը հոն կերթան, հարցուց Եզովբոսին թէ ո՞ր աշխարհքէն աս թեւաւոր տղաքը բերիր: Պատասխանեց Եզովբոս. Լիկերոս շատ ունի ասանկ տղաք. հապա դուն զքեզ ի՞նչպէս բաղդատեցիր անոր որ ծծներուն հաւասար մարդ է:

Յաղթուեցայ ըսաւ Նէքթէնաբոս, ու ա՛լ բան չունիմ ընելու, բայց եթէ մէկ քանի առակ զուրցեմ, նայինք կրնա՞ս շուտով քակել: Ես մէկ զարմանալի էգ ձի մը ունիմ, որ երբ կը լսէ Բաբելոնին արու ձիերուն ձայնը, հոս կըսկսի շուտով յղանալ. թէ որ աս կարգէ դուրս գիպուածին պատճառը կարենաս տալ, իմաստութիւնդ մեզի կը յայտնես: Ով մեծ Թագաւոր, ըսաւ Եզովբոս, մինչև վաղն ինծի ժամանակ տուր, պատասխան կուտամ հարցմունքիդ: Երբոր տեղը

դարձաւ Եզովբոս, բանեց մէկ կատու մը տուաւ ծառաներուն որ բոլոր քաղքին մէջ ծեծելով կը պտըտցընէին։ Բայց Եգիպտացիք որովհետեւ ասանկ կենդանիները կը պաշտէին (1), տեսան որ կատուն կը ծեծեն՝ վրանին Թափեցան բազմութեամբ քաշեցին առին կատուն ձեռքերնուն որ չծեծեն, և գացին Թագաւորին յայտնեցին աս սոսկալի մեղքը։ Թագաւորը կանչեց Եզովբոսն ըսաց Թէ չիյտէի՞ր որ մենք աստուծոյ պէս կը պատուենք կատուն. ինչո՞ւ համար աս բանս ըրիր։ Պատասխանեց Եզովբոս Թէ ես անոր համար ըրի, վասն զի անիրաւութիւն ըրաւ Լիկերոս Թագաւորին ու աս գիշեր խղդեց անոր աքաղաղը, որուն ձայնովը գիշերուան ժամանակը յայտնի կըլլար. և խիստ արթուն կորիճ աքաղաղ էր։ Կրկնեց Թագաւորը. ինչ կը խօսիս Եզովբոս. չե՞ս ամըչնար չինած ստերէդ, ինչպէս կրնայ ըլլալ որ կատուն մէկ գիշերուան մէջ Եգիպտոսէն Բաբելոն երԹայ։

Եզովբոս ծիծաղելով ըսաց. եԹէ քու ձիերդ Բաբելոնին ձիերուն ձայնը առնելով կը յղանան, աս բանս ինչո՞ւ ըլլայ անհնարին։ Թագաւորը բանը հասկընալով շատ զարմացաւ Եզովբոսին գիւտին և խելքին վրայ։

(1) Ամէն չորքոտանի կենդանիները հասարակօրէն մեծ պատիւ ունէին Եգիպտոսի մէջ, մանաւանդ կովը, ոչխարը, կատուն, և այլն. անոր համար Եգիպտացիք ծծմռուք կոտէին, և ասոնց միսը չէին կրնար ուտել։

## ԳԼ. ԻԶ.

### Իմաստութիւն Եզովբոսի :

*Քիչ մը ժամանակէն ետև Թագաւորը բե-րել տուաւ Արեգ (1) քաղաքէն շատ իմաստուններ, և վիճաբանող գիտուններ, որ Եզովբոսին հետ հակաճառութ̃ ընեն․ ուստի ամենքը միատեղ Եզովբոսն ալ հետերնին կերակրի հրամցուց : Երբոր սեղան նստան, ան գիտուններուն մէկը դարձաւ Եզովբոսին ըսաց․ ով օտարական՝ ած̃ն որ ես կը պաշտեմ, զիս խրկեց որ մէկ խնդիր մը զուրցեմ որ քակես : Պատասխանեց Եզովբոս թէ դուն գէշ կը խօսիս․ վասն զի ած̃ ամէն բան գիտէ և իրմէ ծածուկ բան չիկայ․ ուստի մարդէ բան սորվելու կարօտ չէ, զքեզ ինչու պիտի խրկէ․ աս խօսքով չէ թէ միայն դուն քեզ կանարգես, այլև ած̃դ ալ յիմար կընես :*

*Մէկ ուրիշն ալ ըսաց թէ մէկ մեծ տաճար մը կայ, մէջը մէկ սիւն մը տասուերկու քա-*

(1) Արեգ քաղաք՝ այսինքն արեգական քաղաքը յունարէն կըսուի Հելիուպօլիս․ հին ատենն արեգական պաշտօնը հոն կըլլար, անոր համար ասանկ կոչուեցաւ : Այս քաղաքը Նեղոս գետին ու Արաբիային մէջն է, որուն բնակիչները բոլոր քուրմերն ու գիտուններն էին․ որ Իսրայելացիք շինեցին Փարաւոնին հրամանովը :

ղաքով. ամէն մէկն երսուն գերան (տիրէկ) ունէր, և երկու կնիկ կը պտըտէին չորս դին: Պատասխանեց Եզովբոս թէ աս ինչ գեղեցիկ խնդիր է, որ մեր տղաքն ալ գիտեն մեկնել: Աս տաճարն աշխարհքս է, սիւնը տարին է, քաղաքներն ամիսներն են, գերաններն ամսուն օրերն են, երկու կնիկներն ալ որ սիւնին չորս դին կը պտըտէին, գիշեր ցորեկն է որ փոփոխ կը դառնան:

Միւս օրը Նեքտենաբոս պատուիրեց որ իրեն իշխանները հոն գան. ես շատ կը վախնամ կըսէր, չըլլայ թէ պարտաւորինք տուրք տալու Լիկերոսին Եզովբոսին պատճառաւը: Խորհուրդ ըրին, մէկը իշխաններէն ըսաց թէ պէտք է մենք ալ պարտաւորենք Եզովբոսն որ մեզի անանկ խնդիր մը առաջարկէ որ ոչ պատճառ ունենայ և ոչ ցուցմունք, մինչև մտքերնիս անցած չըլլայ ու լսած ալ չըլլանք (1): Եզովբոս խօսք տուաւ որ վաղը հարցմունք կընեմ: Ելաւ տուն գնաց մէկ թուղթ մը շինեց, որուն մէջ գրած էր որ Նեքտենաբոս խօսք կուտայ թէ հազար տաղանդ Լիկերոսի տալիք եմ (2): Հետև-

(1) Որովհետև կարգն էկաւ որ Եզովբոս ալ անոնց խնդիր հարցնէ, և գիտէին որ անոր խնդիրը չիկրնան պիտի հասկընալ, անանկ խնդիր մը ուզեցին որ չիկրնայ հասկցուիլ, և լսած բաներնին ըլլայ: Այսով ինչ խնդիր որ ըլլար, պիտի ըսէին թէ մենք աս բանը լսած էնք և գիտէնք, անպատճառ բան չէ. ահա աս ճամբով պիտի յաղթէին Եզովբոսին:

(2) Եզովբոս ալ անոնց միտքը հասկցալով անանկ

Լաւ օրը բերաւ Թուղթը Թագաւորին · Իշխանները և խորհրդականներն ուրիշ բան կարծելով՝ Թուղթը չիբացած միաբերան կանչեցին Թէ մենք գիտենք, և շատոնց հասկըցած ենք, աս բանը մեզի նոր չէ : Որովհետև գիտենք կըսէք, ըսաւ Եզովբոս, ես ալ ձեզի մեծապէս շնորհակալ կըլլամ և խոնարհութեամբ զիս պարտական կը համարիմ ձեզի :

Բայց Նեքտենաբոս երբոր կարդաց Թուղթը, շատ նեղացաւ սիրտը պարտքին համար որ գրած էր · մինչև չիհամբերելով կանչեց Թէ ես Եգիպտոսին պարտք մը չունիմ · վըկայեցէք ամէնքնիդ ես անոր պարտական եմ: Ան ատենը փոխեցին իրենց միտքն ու ըսին Թէ մենք ասանկ բան ոչ լսած ենք և ոչ գիտենք: Կրկնեց Եզովբոս Թէ ահա աս էր իմ խնդիրս, որ մեկնեցիք :

[illegible]

*Նէքգենաբոս անանկ զարմացաւ Եզովբո-սին աս ըրած բանին վրայ որ չիգիմացաւ, կանչեց թէ պէտք է խոստովանինք որ երջա-նիկ է Լիկերոս որ այսպիսի իմաստուն մարդ ունի իր տէրութենը մէջ, որ է իբր անհատա-նում աղբիւր մը գիտութեան: Աս խօսքէս ետև հանեց տուաւ հազար տաղանդը Եզով-բոսին որ գաշինք ըրեր էին, և մեծ բարե-կամական սիրով Բաբելոն խրկեց: Եզովբոս Բաբելոն հասաւ պատմեց Լիկերոս թագա-ւորին ամէն բանն որ ըրաւ Եգիպտոս, և տուաւ ոսկիներն որ Նէքգենաբոսէն առեր էր: Լիկերոս աս ըրած երախտեացը հա-մար մէկ ոսկիէ արձան մը կանգնել տուաւ 'ի պատիւ Եզովբոսին* (1):

(1) Հին ատենը շատ մեծ պատիւ էր եթէ մէկին անուանը արձան մը կանգնէին. իսկ ոսկիէ արձան կանգնելը շատ գերազանց պատիւ էր: Միլտիատէս զօրապէտն աթենացւոց պէրսացիներն աղաթեց, բայց ոսկիէ արձան ընդրին տալ. հիմացուցին Եզովբոսին մեծ համարձակն որ ըսեր Բաբէլոն:

## ԳԼ. ԻԵ.

### Եղովկըոս գնաց 'ի Յոյնս և 'ի Դելոս :

Եղովկըոս Բաբելոն դառնալէն ետև շատ չանցաւ միտքը դրաւ որ յունաստան երթայ ժուռ գայ Թագաւորին հրամանովը. բայց մինչև որ երդում չըրաւ նորէն ետ դառնալու՝ Թագաւորը հրաման չտուաւ. ուստի խօսք տուաւ Եղովկըոս թէ կը դառնամ, մինչև 'ի մահ Բաբելոն կը մնամ: Գնաց շատ երևելի քաղաքներ յունաստանին մէջ քալեց, և ամէն տեղ իրեն իմաստուն փորձերն ըրաւ. յետոյ ուզեց երթալ Դելոս կըղզին (1): Աս քաղաքացիք երբ անոր խօսակցութիւնը կը լսէին, ուրախ կըլլային. սակայն իրենց անշնորհք ըլլալովը մէկ յարգութիւն մը չըրին Եղովկըոսին :

Իսկ Եղովկըոս նայելով անոնց տմարդութենը զրուցեց. ով Դելոսացիք, ես ձեր փայտի կտորի մը կը նմանցընեմ որ ծովուն վրայ կերթայ կուգայ. որոնք որ հեռուէն կը տեսնեն, կարծեն թէ երևելի մեծ բան է. բայց

(1) Դելոս կամ Դէլոս կղզին հին ժամանակը շատ երևելի տեղ էր. որ Ապողոն աստուածին ծնած տեղն ըլլալով՝ կռապաշտները հոն շինած էր շատ տաճարներ, ամէն աշխարհք հոն կերթար :

երբոր յամաքին կուգայ կը մօտենայ , կը հասկըցուի ինչ ըլլալը ։ Նա երբոր ձեր քաղաքէն հեռու էի , շատ կը զարմանայի ձեր վրան , մինչև իմ համարմանս արժանի դրեր էի զձեզ ։ բայց երբոր հոս եկայ , շուտով հասկըցայ թէ սխալ է եղեր իմ կարծիքս ։ ուստի ես ալ միտքս փոխեցի , և հիմա ձեզ կը սեպեմ ամենէն անպիտան մարդիկ ։

Դեղոսացիք աս խօսքերս լսելով վախցան որ չըլլայ թէ ամէն գացած քաղաքները պատմէ , ուզեցին զսպարտելով մեռցընել ։ Աս բանն ապահով գլուխ տանելու համար Ապողոնին (1) երևելի տաճարէն գողցան մէկ ոսկիէ աման մը և բերին գաղտուկ պահեցին Եզովբոսին բաներուն մէջ ։ իսկ Եզովբոս ամենևին բան մը չիգիտնալով միամիտ ելաւ Դեղոս կղզիէն Փօքիդա երթալու ։ Մէկէն դեղոսացիք վրան թափեցան արգիլեցին , ամբաստանութիւն ընելով թէ դուն սրբապղծութիւն ըրիր ։ Եզովբոս զինքն արդարացընելով համարձակ , կըսէր թէ այդպիսի բան չեմ ըրած ։ Անոնք ալ բռնութեամբ փըն- տռեցին բաներուն մէջ գտան ոսկիէ ամանը , որ իրենք դրեր էին հոն ։ Ասին ամանը ձեռքերնին , մեծ աղաղակով տարին բոլոր ժողովրդեան ցցուցին ։ Եզովբոս հասկըցաւ

(1) Ապողոն Դիոսին որդին էր , աստուած Երաժշտութեան և բանաստեղծութեան ։ որ այնչափ յարգելի էր հեթանոսաց , մինչև ամենքն անոր տաճարը երթային , որ [illegible] շինած էր Դեղոս կղզին ։ քաղաքացիք ալ տաճարով կը պարծէին , և իրենք անպիտան մարդիկ էին ։

անոնց անօրէնութիւնը և յայտնելով իրեն անմեղութիւնն աղաչեց որ թող տան իրեն երթալ: Իսկ անօրէն ժողովուրդը բանտը դընել տուաւ զինքը, և դատաւորները վճռեցին որ դատապարտութեամբ մեռնի Եղովբոս իբր օրինազանց: Եղովբոս տեսաւ որ տեղէ մը ճար չիկայ, անանկ վտանգի մէջ ընկեր էր որ ազատում չունէր ան թշուառութենէն, սկսաւ իր անբաղդութիւնը լալ բանտին մէջ:

Դամոս անունով մէկ բարեկամը բանտը գնաց. տեսնելով Եղովբոսին խեղճութիւնը սիրտը ցաւեցաւ, և հարցուց թէ ինչո՞ւ համար կը վշտանաս կուլաս: Պատասխան տուաւ Եղովբոս թէ մէկ կին մը նոր թաղեր էր երիկը, գնաց գերեզմանին վրայ բոլոր օրը լաց կընէր. հոն մօտ տեղը երկրագործ մը կաշխատէր, որ տեսնելով սոր լացը՝ թողուց եզներն ու եկաւ ինքն ալ գերեզմանին քով կուլար: Կինը հարցուց թէ ինչո՞ւ համար կուլաս. ան ալ ըսաւ թէ ես ալ իմ կինս թաղեցի, եկայ որ լալով սիրտս պաղի: Ինծի ալ, ըսաւ կնիկը, աս խեղճութիւնը պատահեցաւ: Կրկնեց երկրագործը. ուրեմն երբոր երկուքիս պատահածն ալ նոյն է՝ ինչո՞ւ համար մէկզմէկ չենք առներ, որ երկուքիս կսկիծն ալ անցնի. ես ինչ սէր ունէի ընկերոջս վրայ՝ քեզի կը դարձընեմ, դուն ալ անանկ ըրէ՝ կը լմննայ կերթայ: Երբոր մէկմէկու համաձայնութիւն տալով ասանկ կը խօսէին, գող մը եկաւ եզները գողցաւ. երկրագործը արտն որ դարձաւ, տեսաւ թէ եզները չիկան. սկսաւ անանկ դառն լալ

որ չի կրնար ըլլալ։ Իսկ կնիկը գերեզմանոցէն դարձաւ տունը՝ նայեցաւ որ մարդը կուլայ. ո՛չ ըսաց՝ հիմա՞ ալ կուլաս։ Պատասխանեց մարդը թէ ահա հիմա ճշմարիտ պատճառ ունիմ լալու։

Ասոր նման է, կըսէր Եզովբոս, իմ խեղճութիւս և վիճակս. վասն զի շատ վտանգներէ ազատելէս ետև եկայ հոս ընկայ. հիմա ճար մը չեմ կրնար գտնել որ մեռնելէս ազատիմ, որով դատապարտեցին զիս. ահա աս է պատճառն որ կուլամ։

## ԳԼ. ԻԸ.

## ՄԱՀ ԵԶՈՎԲՈՍԻ։

Դեղոսացիք բազմութեամբ եկան բռնալ մըտան բռնութեամբ քաշեցին տարին հանեցին Եզովբոսն որ տանին մէկ բարձր ապառաժ լեռան մը վրայ հանեն, և անկէ վար նետեն։ Եզովբոս սկսաւ առակներ զրուցել այսպէս։ Երբոր կենդանիներն իրարու հետ կը խօսէին, մուկը գորտին հետ բարեկամ եղաւ. աղաչեց որ երթայ հետը կերակուր ուտէ. ուստի առաւ տարաւ մեծատան մը տուն, ուր լեցուն բարիք ըլլալով համբարանոցը (ՔԻԼԷՐԸ), կըսէր թէ ով բարեկամ գորտ՝ հրամմէ։ Գորտը լաւ մը կշտանալէն ետև հրամցուց մուկին որ անոր հարկիքն երթայ. բայց ճամբան չհոգնելու համար ուզեց որ ոտքը թելով մը անոր ոտքին կա-

պէ․ որպէս զի գորտին հետ լողալով անցնի ջրէն երթայ հօն։ Ասանկ կապելէն ետև, գորտը ցատկեց ջրին մէջ սկսաւ լողալ․ իսկ մուկը ջրին մէջ խեղդուեցաւ․ որ մեռնելու ատենը կըսէր գորտին թէ դուն եղար իմ մահուանս պատճառը, բայց դուն ալ օր մը պիտի գտնես քեզմէ մեծէն։ Աս խօսքս շատ չանցաւ կատարուեցաւ․ վա՜ զի մէկ արծիւ մը տեսաւ որ ջրին երեսը սատկած մուկ մը կայ, վրան ինջաւ խլեց․ բայց գորտն ալ անոր հետ կապած ըլլալով միատեղ յափշտակեց երկուքն ալ կերաւ։

Այսպէս դուք որ զիս անիրաւութե՛ կը մեռցընէք՝ ասանկ ոտքի տակ առնելով, օր կուգայ որ կը գտնէք, և ձեզմէ իմ վրէժս առնող մը կըլլայ․ Բաբելոն և բոլոր յունաստան իմ արիւնիս վրէժը ձեզմէ պիտի հանեն։ Այսչափ խօսքերն ամենևին անոնց սիրտը չիշարժեց որ ողորմին իրեն։

Տեսաւ որ ալ ճար չիկայ, փախաւ Ապողոնին (1) տաճարը․ բայց բռնութե՛ անկէ ալ հանեցին, և կատաղութեամբ կը տանէին

(1) Ամէն ազգի և կրօնքի մէջ տաճարին պատիւ ըլլալու համար, հոն փախչողը կազատէր հին ատենէն 'ի վեր․ Ինչպէս սպարտացիք հայրենեաց մատնիչը տաճարէն չկրցան հանել, դուռը լեցուցին։ Ապաղայ ազգն որ ծառ կը պաշտէ, ան ծառին տակը փախչող գերին ազատ կը սեպէ։ Բայց դեղսացիք որոշմեան Եղուլբոսը սրբապիղծ համարեցան որ տաճարին անիրաւութիւն ըրած կըսէին, անոր համար բռնութեամբ կրցան դուրս հանել։

բարձր լեռան ծայրը։ Երթալու ատենը կը-սէր Եղովբոս․ մտիկ ըրէք ինծի, ով ժողովուրդ Դեղոսի։ Մէկ նապաստակ մը արծիւէն փախչելով չգիտէր թէ ուր պահուի որ թշնամւոյն ձեռքը չիյնի․ գնաց ըղէզին ծակը մտաւ, աղաչեց որ իրեն տեղ տայ․ ըղէզն ալ աղաչեց արծիւին որ խնայէ խեղճ նապաստակին՝ չմեռցընէ․ երդում ըրաւ Դիոսին անուանը վրայ որ իր փոքր մարմինին չնայի, աղաչանքն ընդունի։ Իսկ արծիւն անոր խօսքը բանի մը տեղ չսեպելով, թեւովը զարկաւ ըղէզին ու յափշտակեց նապաստակը կերաւ։

Ըղէզը բարկանալով անոր անարգանացը վրայ՝ թռաւ եռաւ, գնաց գտաւ արծիւին բոյնը, մտաւ մէջն ու ծակ մը բացաւ, յետոյ արծիւին հաւկիթները վար թափեց կոտրտեց։ Արծիւը տաքնալով աս յանդըգնութեր վրայ՝ ուզեց աւելի բարձր տեղ մը շինել իր բունը։ Ըղէզը հոն ալ ելաւ, և առջինին պէս վնաս տուաւ։ Արծիւը չգիտէր թէ ինչ ընէ որ աս անծանօթ թշնամւոյն ձեռքէն ազատի, գնաց Դիոսին (1), որովհետեւ աս թռչունն անոր նուիրած ըլլալով իրեն պաշտպանութեանը տակն է․ ուստի դրաւ Դիոսին գոգը իր հաւկիթները, և անոր յանձնելով աղաչեց որ հոգ տանի։

(1) Որովհետեւ Դիոս էր աստուածներու թագաւորը, և արծիւն է թռչուններուն թագաւորը, ասոր համար հեթանոսները կըսէին թէ արծիւը Դիոսին նուիրուած է․ անոր համար Դիոսին արձանին քովը արծիւ մը կը դնէին։

Բայց բզէզն աղբ առաւ կլորակներ շինեց, ու թռաւ երկինքը տարաւ Դիոսին գոգը ձգեց: Դիոս երբոր հոտն առաւ նեղանալով վեր ելաւ որ վար ձգէ. բայց թոթուելովը հաւկիթներն ալ վար թափեցան կոտր կոտր եղան:

Իսկ Դիոս հասկըցաւ բզէզէն թէ աս բանս արծիւէն վրէժ առնելու համար կըներ. որ ոչ միայն բզէզին ըրած անիրաւութին, այլ և Դիոսին, որ երդումը չընդունեցաւ երբոր բզէզն ըրաւ Դիոսին անուանը վրայ:

Արծիւն որ դարձաւ եկաւ, Դիոս անարգելով զայն երեսը զարկաւ թէ ահա բզէզը վրէժխնդիր ըլլալով քեզ կը տրտմեցընէ. և իրաւունք ունի քեզի այսպէս վրէժխնդիր ըլլալու: Սակայն Դիոս չհկամեցաւ որ արծիւին ցեղը կորսուի. համոզեց խօսք հասկըցուց բզէզին որ հետը հաշտուի: Բզէզը չուզեց ամենևին հաշտուիլ: Ուստի Դիոս խելք բանեցընելով փոխեց ժամանակը. որ երբ բզէզը չէ ելած դուրս, ան ատենը հաւկիթ կածէ արծիւը:

Ով ժողովուրդ Դեղոսի, մի անարգէք տաճարը, ուր ես ապաւինեցայ. թէպէտ և անոր մեծութենը նայելով ես ոչինչ եմ, բայց գիտնաք ճշմարտութ̃ որ հարկաւ կը պատժէ չարագործներուն անօրէնութիը: Դեղոսցիք իրենց կատաղութ̃էն ամենևին ետ չկեցան, այլ միշտ առաջ կը տանէին Եզովբոսը մեռցընելու ահին որ պատրաստեր էին:

Եզովբոս տեսաւ թէ ինչ բան որ խօսեցաւ

ամենևին անոնց անկածը չմնաւ , և կարող չեղաւ մտքերնին փոխելու , սկսաւ այսպէս խօսիլ ։ Մտիկ ըրէք ով անօրէն խաւարամիտ ժողովուրդ․ մէկ երկրագործ գեղացի մը գեղը ծերացեր էր , և ամենևին քաղաքն ոտք չէր կոխած․ աղաչեց մարդիկներուն որ զինքը քաղաք տանին տեսնելու համար ։ Անոնք ալ էշերը սայլին կապեցին , և ծերը վրան դրին , թող տուին որ քաղաք երթայ մինակ ։ Քիչ մը անցաւ՝ մէկ սաստիկ փոթորիկ մը ելաւ , որ անանկ օդը մթընցուց հովով անձրևով , մինչև էշերը ճամբան կորսընցուցին մոլորեցան չիյտէին թէ ուր կերթան․ խեղճ ծերը տարին լեռան ծայրը հանեցին , որ վար պիտի ձգէին․ ողորմելին զինքն ան մեծ վտանգին մէջ տեսնելով , վայ ափսոս ինծի , կը կանչէր Դիոսին․ արդեօք քու մեծութե՞դ դէմ ի՞նչ ըրած ունէի որ զիս սանանկ ողորմելի մահուամբ կը մեռցընես․ զօրաւոր ձիերէ և կորիճ ջորիներէ չեմ մեռնիր , հապա անարգ էշերէն ահա կը կորսըւիմ , որ ամէն կենդանիներէն ցած են ։

Ահա իմ վիճակս ալ աս խեղճ ծերուն նման է․ որ շատ կը ցաւիմ իմ անբաղդութե՞ս վրայ․ վա՜ զի չէ թէ իմաստուն և երևելի մարդկանցմէ դատապարտուեցայ մեռնելու , այլ անպիտան անարժան չարագործներէն ։ Երբոր վար պիտի նետէին զինքը լեռանը վրայէն , աս եզոպի առակս ըսաց ։ Մէկ մարդ մը ուզեց անխրատութիւն ընել իր զաւկին․ իսկ զաւակը ըլլով կը կանչէր թէ շատ աւելի կուզէի աս անխրատութիւնը քաշել ուրիշ մարդիկներէն քան թէ քեզմէ , որ իմ

*ծնողս ես ։ Ահա ես ալ նոյն բանը կըսեմ ձեզի , ով անօրէններ . շատ աւելի կուզէի ինծի խորխորատը Սկիլլայի (1) կամ Գա_րիպտեսի , և կամ Ափրիկէին ապառաժը , քան թէ ձեր անօրէն ձեռքովը մեռնիլ ։ Անիծած ըլլայ ձեր հայրենիքը . վկայ կը կան_չեմ աստուածները որ իմ մահուանս համար վրէժխնդիր ըլլան ձեզի և պատուհասեն , որ զիս աստնիկ անպարտ կը մեռցնէք ։*

*Իսկ դեղոսացիք առանց ուշադրութեան ա_պառաժին ծայրէն վար նետեցին . խեղճ Ե_զովբոսը մեռաւ ։ Քիչ ատենէն ետև բոլոր քաղաքն անապատ դարձաւ ժանտամահէն . մինչև գացին հարցուցին պատճառը պատ_գամախօսին (2), որ պատասխան տուաւ թէ աս պատիժս իրենց անօրէնութեանը համար եղաւ , որ ըրին Եզովբոսին . և պէտք է աս յանցանքը ջնջել , պատիժէն ալ ազատիլ ,*

(1) Բանաստեղծները կ'ըսէին թէ Սկիւլլա էր մեծ գազան մը Սիկիլիոյ ծովուն մէջ, որ առաջ յաւերժահարս էր . երբոր մէկ առտուան մը լո_ղալու՝ ջուրը դեղած ըլլալով, փոխուեցաւ գազան եղաւ , որ իր այլանդակ կերպարանքէն սարսափելով՝ բարձր լեռանը սարէն զինքը ծովը նետեց . ահա աս է Սկիւլլայի խորխորատը ։ Այսպէս է Գարիպդե_ւին խորխորատը, կամ Ափրիկէին ապառաժը ։

(2) Աս պատգամախօսն էր Ապողոնին տաճա_րը կամ քրմուհին . երբոր գային կուռքին հար_ցուցին ժամանակին պատճառը, քուրմը կուռքին ետևէն պատասխան տուած , ինչպէս սովորութիւն էր կռապաշտներուն ։

որ անոր մահուանը համար կը քաշէին ։ Իրենց խղճմտանքն ալ ստիպեց զիրենք որ մէկ արձան մը կանգնեցին Եզովբոսին համար ։

Երբոր յունաստանի երեւելի մարդիկ և մեծամեծ փիլիսոփաները լսեցին աս անօրէնութիւնն որ եղաւ Եզովբոսին՝ շուտ մը Դելոս կղզին եկան, քննեցին գտան Եզովբոս մեռցընողները, և բոլորը չարաչար պատուհասեցին ։



ա̃. Աքաղաղ և Մարգարիտ: բ̃. Գայլ և Գառն:



գ̃. Գորտ և Մուկն: դ̃. Շուն և Ստուեր:



ե̃. Գայլ և Կռունկն: զ̃. Երկրագործ և Օձ:

# ԱՌԱԿՔ

# ԵԶՈՎԲՈՍԻ

## ԱՔԱՂԱՂ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ

*Զանարգ վաստակ այր անխմաստ*
*Յարգոյ գընէ քան զակերձ իմաստ ։*

Ով որ բանին արժէք չգիտէ ,
Գէշն ու լաւը մէկ կը տեսնէ ։

*ա․ Աքաղաղ մը աղբանոցը փորելով՝ յանկարծ կը գտնէ մարգրիտ մը, մէկդի կը նետէ ըսելով․ Թէ որ մարգարտավաճառն աս քաղցիս հանդիպէր՝ փառք կուտար իմ․ բայց իմ առջեւս անանկ ոչինչ է որ աւելի երջանիկ կըլլայի եթէ հատ մը գարի գտնէի քան թէ աս մարգրիտը ։*

Աքաղաղ կըսաւ (խօրօզը), որ աղբանոցին մէջ ծառայ գտաւ մէյ ուտելու բան կը փնտռէ․ և երբ գարի մը գտնէ՝ ամէն բանէն աւելի անով կը

զուարճանայ. որ օրէնով է ամէն մարդկանց, որոնց առջև գիտութեանը յարգ չունի, և գիտուն մարդն ու անխելք մարդը մէկ է. եթէ անխելքէն շատ մը տէսնէն, հազար խմաստունի հէտ չէն փոխեր:

Ահա անխոհեմ բերմունք անբանի,
Զյակինթ 'ի գարւոյ որոշել չունի.
Դու մարդ բանական, ընտրեա ըզբարի,
Զառաքինութիւն նըման մարգարտի:
Բարին յանարգէ այնչափ տարբերի,
Որչափ բանականն յոգւոյ անբանի.
Մարդոյ է ընտրել զխմաստ գանձ բանին,
Իսկ աքաղաղին զնուր անարգ գարին:

## ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆ

Յանգուլթ գաժան սիրտ գազանին
Ոչինչ ազդէ ձայն անմեղին:

Անէրաւ մարդն էրբ չար կընէ,
Սուտ մուտ պատճառ շուտ կըգտնէ:

Ը. Գայլն ու գառը վազած ջրէ մը ջուր կը խմէին. բայց գայլը շատ վերն էր քան զգառը, և պատճառ կը փնտռէր որ կերպով մը յափշտակէ զգառը. ուստի սկսածին պէս մէկէն .բռնը վազեց, ու սկսաւ մեղադրել թէ ինչու համար իմ ջուրս պղտորեցիր: Պատասխան տուաւ գառը դողա-

լով. Եւ ինչպէս քու ջուրդ կրնամ պղտո-
րել՝ որ խմած տեղէդ շատ վարէն կը խմեմ.
հաւատացիր, մինչեւ ալ չէ անցած որ քեզի
ամենեւին վնաս մը տամ: Կրկնեց գայլը թէ
երէկ քու հայրդ տեսայ որ իր ձայնովը կը
յորդորէր շներն որ զիս հալածեն:
Գառն ալ ըսաց թէ ամիսէն աւելի է որ
զիմ հայրս մորթեց մսածախը: Ուրեմն ան
քու մայրդ էր, ըսաւ գայլը: Պատասխա-
նեց թէ իմ մայրս զիս ծնած ատենը մե-
ռաւ: Գայլն ակռաները կրճտելով ըսաց.
Մեռաւ չմեռաւ ես գիտեմ դուն և քու
ազգդ ինչպէս կատէք զիս, պէտք է որ ես
ալ վրէժխնդիր ըլլամ: Աս ըսելով ցատ-
կեց գառին վրայ, ու պատռեց կերաւ:

Գայլը վայրենի գազան ըլլալով չարագործ մար-
դոց պէս միշտ նեղութեան և հալածանաց մէջ է,
և անիրաւութեամբ կը ջանայ յափշտակել անմեղ
գառները. Առակս օրինակ է չարերու մեծատանց, ո-
րոնք սուտ պատճառներով կուզեն ուտել անմեղ-
ները:

Բարք է այս անգութ պատառող գայլի,
Պատառել զանմեղն՝ չըլսել ձայնի:
Հզօր չարագործք զարդարն և խոնարհ,
Խոշտանգեալ ճնշեն նման գազանի:
Սակայն հատուցումն 'ի դատաստանի,
Արդարոց չարաց կշռի և պահի.
Մարդ քաղաքական, մի՛ զերթ ամեհին
Խածատեր զընկերն ատեր զբարին:

# ԳՈՐՏ ԵՒ ՄՈՒԿՆ

*Ըղձալեծ քինու կռուասիրաց*
*Լուծյէն արագ ձեռք թշնամեաց :*

Կռիւ սիրող կռուով կերթայ ,
Ինչ որ ընէ զայն կը գտնայ :

գ․ Գորտն ու մուկը հակառակութ̃ն կը-նէին․ գորտը կըսէր՝ թէ իրաւունք է որ ջրոտ տեղերը ես ժառանգեմ, և ընդ հակա-ռակն՝ մուկն ալ ոտք կը կոխէր թէ ինծի կը վայլէ ժառանգել․ այնչափ որ գորտը պիտի ելլէր ժառանգութ̃է, և բան չուզեց անոր ընել : Բայց վիճաբանութ̃իը շատ մը տաքցաւ, անանկ որ պիտի սկսէին կռուիլ : Սակայն շատ լաւ կըլլար թէ որ իրենց մէջ միաբանէին․ մ̃ զի երբոր տաքցած կը ծեծ-կուէին ու ամենևին թշնամին չէին մտածեր, ահա ուրուրը (չայլախը) հեռուէն դիտելով՝ յանկարծ վրայ հասաւ, բռնեց կռուողներն երկուսն ալ յափշտակեց :

Օրինակ է կռուարար մարդկանց․ որ հակառա-կութիւն ընելով իրենք զիրենք կը փճացընեն, և անով ուրիշը կը շահի․ Ինչպէս որ մէկ դատաւորի մը դռան վրայ գրած էր թէ մարդ մարդու հետ միաբանութիւն ընելուն համար՝ քարն ու կիրը հոս միաբանեցան :

Այսպէս և փոքրիկ իշխանաց դիպի,
Երբ կռուին վիճէն 'ի վերայ գետնի.
Բայց հզօրագոյնն որ մերձ գտանի,
Յափշտակէ զայն, կռիւն եղերի:
Այս արդար օրէնք է դատաստանի,
Երկուքին կռուին երրորդըն շահի.
Որչափ դատախազք 'ի պայքար մտցին,
Այնչափ դատաւորք փաստաբանք հրճուին:

## ԵՂՋԵՐՈՒ ԵՒ ՈՉԽԱՐ

Որ ոք ընկեր լինի չարին,
Փոյթ ուսանի զգործըս նորին:

Ով որ չարին ընկեր կըլլայ,
Շուտով անոր աշկերտ կըլլայ:

Դ. Եղնիկն ընկեր ըլլալով գայլին՝ կը պահանջէ ոչխարէն թէ ինծի չափ մը գարի տալիք ես, որ փոխ տուի քեզի՝ տուր. իսկ ոչխարը գայլին աչքին վախնալուն չուրացաւ, պարտքս է ըսաց կուտամ, թէպէտ անիկէ բան մը չէր առած. և ժամանակ ուզեց հատուցանելու: Ժամանակն որ եկաւ՝ եղնիկը կերթար անպակաս ոչխարէն կուզէր գարին, որ ինչպէս խօսք տուաւ՝ վճարէ պարտքը: Բայց ոչխարը երբոր տեսաւ զայն մինակ, սկսաւ ծաղր ընելով ըսել. ես չեմ պարտական խոստմունքս պահելու. որովհետև նեղը մնալուս, և գայլին վախուն քեզի

խօսք տուր , որ քեզ ընկեր եր եղեր · գնա բանդ , քեզի պարտք չունիմ ։

Եղջերուն է (կէյիկ) , և օրինակ՝ չար օրինակ առ-նողին · առ խրատով պէտք է անզգամներէն հեռու փախչելու · վասն զի ասելի դիւրին է բարի մարդ չար օրինակով գէշ ըլլալ , քան թէ գէշ մարդ բա-րի օրինակով լաւ ըլլալ ։

Ահա անխրատ պատանեկութիւնք եղեն ,
Որ զրկէ զոչխարն ահեղ գազանէն ·
Այսպէս անխրատք ցասմամբ իշխանաց
Կորուսանեն զարգասն զրկեն անմանկին ·
Արդ մի նմանիր մի անխրատին ,
Մի ընկերանար ակնառու չարին ·
Բարիք 'ի չարաց 'ի չար փոխարկեն ,
Եւ բարք անմեղաց փոյթ ապականեն ։

## ՇՈՒՆ ԵՒ ՍՏՈՒԵՐ

Արդար պատիժ է ագահին
Անյագ փորին զհետ ունչին ։

Ագահն որչափ շատին ջանայ ,
Այնչափ աղքատ խեղճ կը մնայ ։

Է · Շուն մը լողալով գետէն կանցնէր՝ կտոր մը միս բերանը · ջրին մէջ կը տեսնէ միսին շուքը՝ կարծէ թէ ուրիշ միս է · շուտ

մը կը ձգէ բերնէն միսն ու կը վազէ ջրին ե-
զերքէն, որ իրեն մէկ պատառական կերակուր
մը կերենար. բայց ինչպէս յուսահատեցաւ
երբոր տեսաւ թէ իր ագահութիւնը փուճ ե-
ղաւ։ Այս ինծի կը կանչէր ցաւելով իր ձգած
միսին վրայ. ես չիգիտցայ պահել զայն որ
ունէի, աչքս ունեցածս ալ կորսնցուցի։

[illegible]

Քանի չահասէրք նման են ասին,
Թողուն զբաւականն յանչափս ձկանին.
Կալ զոր ինչ ունիս, շատ է քու մ՚անձին,
Մի՛ խրրև զանրան ցանկար սուտերին։
Ախտ է մոլեկան այս ախտ ագահին,
Ցոյնիչ շատանալ, ոչ հանգչել սրտին.
Ցանկայ համապազ նորանոր որսին,
Զգէ զոր ունի, մաչի առ վկային։

## ԱՌԻՒԾ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՔ

*Մի՛ յաճախեր առ պետ իշխան ,*
*Յաչս նորա լինիս խոտան :*

Թէ ճարտարին տուն շատ երթաս ,
Անարգ ու ցած առջին կըլլաս :

*դ. Առիւծն ու ոչխարը և այլ կենդանի- ները միաբան կերթան որս ընելու . առիւծն երդում կընէ թէ դառնալու առեննին ամ- մէնուդ հաւասար կը բաժնեմ ով որ ինչ բանէ : Նայիս որ ոչխարին որոգայթին մէջ ընկաւ եղնիկ մը , վազեց ոչխարը շուտով իմացուց առիւծին որ մէկէն հասաւ բռնեց եղնիկը չորս բաժին ըրաւ ընկերներուն առ- ջին : Առջի բաժինն ըսաց ինծի կիյնի , վասն զի ես առիւծ կը կոչուիմ . երկրորդ բա- ժինն ալ ինծի կը վայլէ , վասն զի ամմէնէն քաջասիրտ ես եմ . երրորդ բաժինն ալ պէտք է որ ես առնեմ , որովհետև ամմէնէն զօրաւոր եմ . իսկ չորրորդ բաժինին համար ով որ ձեզմէ ինծի հետ հակառակութիւն կընէ մէկէն կը խղդեմ : Ասանկով առիւծը բոլոր եղնիկը յափշտակեց , ու մէկն ընկեր- ներէն չհամարձակեցաւ տրտունջ մը ընե- լու :*

Շատ մարդիկ երեւակայութեամբ ընելով մեծամեծներուն ետեւէն կերթան, որ օգուտ մը քաղեն. բայց անոնց մինչեւ որ բաներնին ըլլայ՝ անկէ ետեւ երեսնին ալ չեն նայիր։ Դիոգինէս փիլիսոփան կըսեր թէ իշխանները կրակի նման են, ու շատ պէտք է մօտենալ ու հեռանալ։

*Իշխանք մեծատունք նման առիւծին ,*
*Ինքեանց գրաւեն զշահ օտարին ·*
*Իսկ ռամիկք նոցուն ընկերել կամին ,*
*Կարծեն թէ ինքեանց ելանէ բաժին ։*
*Մի՛ լինիր ընկեր հզօրագունին ,*
*Մի՛ շողոքորթեր զարարս նորին ·*
*Զի իբրեւ գործի լինիս 'ի ձեռին ,*
*Եւ յաւարտ գործոյն մնաս անբաժին ։*

## ԳԱՅԼ ԵՒ ԿՌՈՒՆԿՆ

*Մի՛ նպաստեր գործոց չարին ,*
*Զի մի՛ չարիք 'ի քեզ հասցին ։*

Ինչ որ ընես ապերախտին ,
Բան չերեւնար իր ծակ աչքին ։

*Է. Գայլը երբեմն ոչխար մը կուտէ անանկ որկրամոլութեամբ որ մէկ ոսկոր մը որկորին (պօղազին) մէջ կը մնայ · շատ ջանք ըրաւ որ օգնութիւն մը գտնէ հանէ , չկրցաւ · ուստի որչափ որ աղաչեց ուրիշ կենդանիներուն , փուճ ելաւ · վասն զի ամէնքը կը թո-*

ղուխն անանկ՝ որ կանչէ, և մէկը ցաւակից չեղաւ իրեն ցաւին. ծ՛ս եղաւ կըսէին, թող տանջուի իր անյագութեանը։ Միայն կռունկը անոր անուշ խօսքերէն խաբուելով՝ ուզեց օգնութին ընել և իր երկան կտուցը խօթեց գայլին բերանին ու որկորին մէջէն քաշեց հանեց ոսկորը որ կը խեղդէր զգայլը։ Յետոյ կռունկը հատուցում ուզեց աս մեծ բարերարութեանս որ գայլն իրեն խոստացեր էր հատուցանելու։ Աս բանիս պատասխան տուաւ գայլը խնտալով. բարեկամ, դուն չե՞ս մտածեր ինծի հատուցում ընելու, որովհետև կեանքդ ինծի պարտական ես. երբոր կտուցդ իմ բերանս էր՝ կրնայի վիզդ փրցընել։ Գնա ապերախտ, շատ երանելի ես որ իմ բըկէս դուրս հանեցիր կտուցդ։

Առակս կը խրատէ անզգամ մարդէն հեռու կենալ, և չարութենէ օգնութիւն ընել. վասն զի ինչոր ընես այսին չերևնար՝ ու վերջը շնորհակալ ըլլալու տեղը՝ քեզի շնորհակալութիւն կուզէ։

Տեսե՞ր նողոտկալի գործ զապերախտին,
Որ չարիս խորհի իւր բարերարին.
Զի փոխան բարեաց՝ որ պարտ է նմին,
Անոր պահանջէ զգարշ փոխարինին։
Անմտութիւն է նպաստել չարին,
Կամ յապերախտէն յուսալ զբարին.
Շատ է անվնաս մնալ կենկան,
Յորժամ նպաստեաց ապիրատ գայլին։

## ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ՕՁ

Բարերարին խորհիլ ըղձար,
Է՛ գտան օձի բարք չարաչար:

Ով չար կ'ուզէ բարերարին,
Վնաս կընէ իր չար անձին:

Ը· Երկրագործ մը կը գտնէ ձիւնին մէջ պաղած օձ մը իբր կիսամեռ, կը խղճայ վրան ու կառնէ կը տանի իր խուցը, կրակ վառէ կը տաքցընէ օձը, և այնչափ կը խնամէ որ քիչ քիչ օձը հոգի կառնէ, և իւր բնական ուժը կըստանայ: Բայց առջի բանն աս կըլլայ որ իր բարերարին դէմ կելլէ, և կը ցանկէ որ խայթէ: Զարմանալով ասոր ապերախտութեան վրայ, կըսէ երկրագործը· ով ապերախտ, աս է երախտիք ճանչնալդ որ քեզի ըրի· ես քու կեանքդ քեզի տուի· դուն կուզես իմս առնուլ՝ չարագործ· աս ըսաց, ու զարկաւ փայտով մեռցուց:

Որչափ աղէկութիւն ընես օձին՝ անդի որ գայ կը խայթէ իր բարերարը· ասանկ ալ ապերախտ մարդուն ինչ որ ընես, գութ մը կը մոռնայ, և չար հատուցում ընելու կը ջանայ:

Այս է դժնդակ բերմունք ժանտ օձի,
Կեայ 'ի վնասել երախտաւորի·

Զամէ զմտաւ գործս բարերարի,
Բառնալ՚ի կենաց զնա նկրտի:
Արդար հատուցումն է ապերախտին,
Զրկել՚ի կենաց փառանալ յանձին.
Որ ոք չկամի վայելել բարին,
Արդ առաջի կայ հանդիպել չարին:

## ԽՈՋ ԵՒ ԷՇ

Քաջ յաղթանակ է վեհանձին,
Մերժել խոտել զբան վատին:

Մեծամեծաց վայելուչ ու է,
Որ շատ մարդկէն վերէծ լսանէ:

Թ. Օր մը էշն արհամարհելով ծաղր կընէ զխոզը. իսկ խոզը անանկ կը բարկանայ որ մէկէն ալխոյ պատուհասէր զայն. բայց իր բարկութիւնը բռնեց, ու խոժոռ աչքով ըսաց. չարագործ՝ ինծի դժուար չէ սորվեցընել քեզի քու անխելքութիւնդ. բայց հաճոյ բան չէ որ ես մէկ ծոյլ անշահ անասունի մը հետ կռուիմ, վասն զի աշխատանքս չաժեր:

Մեծ խոհեմութիւն է պատասխան չտալ շատ մարդոց խօսքին ու պատճէել. վասն զի ազնուականութեան չէ վայլեր որ խօսի անանկին հետ: Սոկրատ փիլիսոփան լսեց որ մէկն իրեն գէշ կըսէր կանիծէր, բայց այսչափ ըսաց թէ որոշելուն օրհնել չէ սորված՝ անոր համար կանիծէ:

Չէ վեհանձնութիւն չար առնել վատին,
Եւ պատասխանել անխմաստ բանին ·
Առաքինեաց է չլսել ձայնին,
Եւ վրիժառու լինել տկարին ։
Բանին անխորհուրդ բան յաւանակին,
Թողեալ զիւր հեղգ անձն անգոսնէ խոզին ·
Ցիմար է այն որ ընդ հզօրի
Եւ ընդ վեհ քան զինքն 'ի պայքար մտանի ։

## ԸՆՏԱՆԻ ՄՈՒԿՆ ԵՒ ԴԱՇՏԱՅԻՆ ՄՈՒԿՆ

*Խորտկաճաշին կայ 'ի սեղան*
*Խառն ընդ խորտիկ երկիւղ մահուան ։*

Անշառ տափէն է լաւ համով,
Քան մեծ հարկէն ահով դողով ։

Ժ. Երբեմն քաղաքացի մուկն ու գեղացի մուկն իրարու հարկիք կընեն · գեղացին կըսկսի իր հարկիքն առանձին հեռու տեղ մը ընել · և ծակէն դուրս կը հանէ իր պատուական կերակուրները՝ քիչ մը բակլայ, կտոր մը պանիր, և քիչ մը խոզի եղ · վն զի աղքատ ըլլալով որչափ որ ձեռքէն եկաւ՝ այնչափ ըրաւ ծառայելու համար իր բարեկամին, որ աւելի գոհ եղաւ անոր լաւ մեծարանքին վրայ, քան թէ անհամ պաղ կերակուրներուն · ուստի քաղաքացի մուկը զուարճանալով միայն ակռային ծայրովը կը

դպչէր կերակուրներուն, և չէր կրնար ուտել: Ինչ և լցէ՝ կերակուրը լմընցաւ. ան ալ հրաւիրեց զգեղացի մուկն որ մէկալ օրն երթայ իրեն տունը կերակուր ուտելու. և պարծեցաւ թէ շատ փափուկ կերակուրներ անոր համար ըրեր է քաղքին մէջ. ուստի գեղացին քաղաք գնաց անոր հարկէքը. և մէկ գեղեցիկ սրահի մը մէջ տեսաւ պատրաստած՝ պաստառի վրայ լեցուն պատուական մսեղէն կերակուրներ. բայց հազիւ թէ սկսաւ ուտել, յանկարծ ծառայ մը՝ իրենք մէջը գտնուած սրահին դուռը սաստիկ բացաւ, ու տակնուվրայ ըրաւ ուրախութիւնն աս երկու բարեկամներուն, որ բոլորովին վախցած փախան մէկն ասդին մէկալն անդին: Ծառան գնաց անկէ. քաղաքացի մուկը կերակրի կանչեց իր ընկերն որ կիսամեռ կը դողար վախէն. և հարցուց անոր գեղացին, թէ շատ անգամ քեզի կը պատահի՞ սանկ վախեր: Ան ալ պատասխան տըւաւ թէ ամէն անգամ կը հանդիպի, վն զի տուանց նեղութեն ուրախութեն չըլլար: Գեղացի մուկը ետ դարձաւ ըսաւ. քուկիններդ ինչ որ ըլլան, հանգիստ վայելում չունին, և անոր համար նորէն զիս փորձութեն մէջ չեն կրնար ձգել. մնաս բարով, ես առաջ նախանձեցայ քու հարուստ կերակրիդ. բայց գիտնաս որ հիմա շատ մեծ կը համարիմ իմ աղքատութիւնս, քան թէ քու բոլոր մեծութիւնդ:



ԺԱ. Արծիւ և Ագռաւ։ ԺԲ. Աղուէս և Ագռաւ։



ԺԳ. Աղուէս և Արծիւ։ ԺԴ. Առիւծ և Մուկն։



ԺԵ. Գորտք Թգր խնդրեն։ ԺԶ. Աղաւնիք և Ուրուր։

Օրինակ է հարուստ և միջակ մարդկանց. մէկն ամէն մեծութիւն ունի հանգստութիւն չունի, մէկալը հանգստութիւն ունի մեծութիւն չունի. բայց ասոր հիմակը մէկալէն շատ լաւ է. որովհետև մարդուս ներսը թագաւորն է մարդկային, երբոր հանգիստ կըլլայ ատրանց որպագողի, անկէ աւելի մեծութիւն կըլլար:

Զինչ օգուտ գործեաց մեծութիւն ճաշին,
Երբ երկիւղ կասկած նմա լծակցին.
Եւ քանի բերկրանք աղքատ կերակրին,
Երբ անհոգ զուարթ ուտեն 'ի դաշտին:
Մի ցանկար ընչից մի խորտկաճաշին,
Եւ մի երաներ զբաղդ ընչեղին.
Զի տագնապ և վիշտ յամէն վայրկենի,
Ուտեն և մաշեն զսիրտ և հոգի:

## ԱՐԾԻՒ ԵՒ ԱԳՌԱՒ

Գլխուրահաւան միտք զաղփաղփուն
Յամէն հողմոյ կայ երերուն:

Անխելք մարդին ծածախակն,
Ամէն հովէն կերթան կուգան:

Ժա. Արծիւն իր ճանկին մէջ մէկ ատրէ (ոպըռնէպէայ) մը բռներ կըսմեր որ կեղևը կոտրէ, ու մէջի միսն ուտէ. բայց ճար չեղաւ կոտրելու. զայն տեսնելով ագռաւ մը կը մօրեր որ ձեռքէն առնէ անոր որսը. ուստի

ըսաց խորամանկութը․ Աչա շատ աշխատած կը տեսնեմ զքեզ․ Թուխը քարձրացիր երկին-քը որչափ որ կրնաս, և վերէն վար ձգէ ոսա-րէն սա քարերուն վրայ․ որչափ ամուր ըլ-լայ՝ կը կոտրի կեղևը։ Արծիւը մէկ զար-մանալի գիւտութիւն մը գտնելով հետևե-ցաւ աղուաւին խորհրդին, ու ըրաւ։ Բայց խորհուրդ տուողը միայն իր շահին համար կըսէր զայն․ վասն զի ոստրէն վար ընկա-ծին պէս կոտրեցաւ և աղուաւը մէջի միսը հանեց կերաւ, ու խնտալով անոր գիւրա-հաւանութեանը վրայ փախաւ։

Աղուէսը խորամանկ մարդոց օրինակ է՝ որ միայն իր օգուտը կը նայի․ ուրիշ ըգոյշ կենալու է անոնց խաբեբայէն, և խօսքին հաւատալու չէ․ վասն զի ուզածն ընելէն ետև ծաղր կընէ։ Դիւրգիններս մի-ւթարային հարցուցին թէ որ գտածը չար ճամա-նար է․ պատահական դասա թէ վայրենիներէն օձր, իւն ընտանիներէն՝ խաբեբայ մարդը։

Երբ խորամանկ ըզ քեզ խորհրդակցի,
Մի կարծեր թէ նա սակս քո խորհի․
Զամենայն օգուտ յինքեան վերբերեալ,
Կերակրի նովաւ ծաղրէ զկնի։
Արդ մի հեշտալուր լինիր խորդախին,
Որ մթին գունով ծածկէ զնենգ սրտին․
Որչափ շողոմէ 'ի սկզբան իրին,
Այնչափ զզջմնաս ծաղրիս զերթ արծուին։

# ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱԳՌԱՒ

Ոմնայնասէրն բանիւ ունայն,
Խաբի ծաղրի միշտ է ունայն։

Փառասէր մարդն երբոր գովուի,
Շուտով կապուայ ամէն խօսքի։

ԺԲ. Ագռաւը բերանն ունէր կտոր մը պանիր. աղուէսը հոտն որ առաւ վազեց ագռաւին առջին և ըսաց զարմանալով. Ի՞նչ բան է որ կը տեսնեմ. ես լսեր էի թէ քու փետուրներդ սև են. բէ՛ տէր Ած, աս ինչպէս ճերմակ են, որ կարապ (Բօյ) թռչունը քեզմէ ճերմակ չի կրնար ըլլալ։ Կաղաչեմ պարոն ագռաւ, ինծի ներէ որ քիչ մը վրադ նայիմ ուզածիս պէս. Ճշմարիտ կըսեմ որ դուն ինծի անանկ աղուոր կերևնաս որ չեմ գիտեր ինչպէս զմայլիմ քու վրադ։ Նորէն կըսէր աւելի անուշ խօսքերով. Ես լաւ գիտեմ որ քու յատուկ կատարելութիւնդ միայն գեղեցկութիւնը չէ. այլ բնութիւնն որ կամեցաւ զքեզ ուրիշ թռչուններէն աւելի կատարեալ ընել, տուանց կարծեաց քեզի տուաւ հրեշտակային ձայն մը. երդում կընեմ որ այնպէս գեղեցիկ երգիչ չիկայ մեր անտառներուն մէջ, ինչպէս դուն և սոխակը (պիւլպիւլը)։ Աս խօսքերովս բոլորովին զուարճացաւ ագռաւը, և ուզեց իմացընել թէ աղուէսին ըսածը սուտ չէր. բացաւ բե-

լանն որ երգէ, բանալովը ձգեց բերնէն պանիրը : Իսկ աղուէսը յափշտակեց զայն, ու շուտ մը երթալու հրաման ուզեց ագռաւէն, և ծաղր ընելով ըսաց · Շատ համ առի պանիրիդ անուշութենէն, քան թէ ձայնիդ գեղեցկութենէն :

Առակս օրինակ է ունայնամտութեան որ անանկ կը կուրացնէ մարդուս միտքն որ՝ առանց գուշակելու խաբուած կը հպարտանայ, մինչև ամէնքը վրան կը խնդան :

Ահա կուրութիւն ունայնամտի,
Ի պատիր բանից այլ յայլմէ լինի ·
Որով յիմարեալ ձգէ զոր ունի,
Մին պաճուճանօք հրճուի զոր չունի :
Միտք փառասիրաց հեշտութեամբ պատրի,
Մինչ չասել զանձնէ զինչ եմ զինչ էի ·
Կարծէ թէ բանիւ բնութիւն փոփոխի,
Անդէն յիւր գործոց փոյթ խայտառակի :

## ԱՂՈՒԵՍ ԵՒ ԱՐԾԻՒ

*Որ ով ուտէ բան անօրէն ,*
*Փոյթ գտանէ յերկնաւորէն :*

Ով անօրէն բան որ ընէ ,
Երկնաւորէն շուտ կը գտնէ :

*ԺԴ. Արծիւն իր բոյնը շիներ էր կաղնի (Մեշէ) ծառին վրայ. ծառին տակն ալ աղուէս մը իր ձագերը կը նայէր. ու երկուքն իրարու հետ սիրական կենային : Օր մը աղուէսը գնաց կերակուր գտնելու. արծիւն ինչպէս յանկարծ յափշտակեց աղուէսին ձագերն ու տարաւ բոյնը իր ձագերուն կերցուց: Երբոր աղուէսը դարձաւ բոյնը, և հասկընալով դրացիներն ըրած անօրէնութիւնը՝ սաստիկ բարկացաւ. բայց որովհետև յոյս չունէր հասնելու իր թշնամւոյն որ կարենայ վրէժխնդիր ըլլալ, ինչ որ կրցաւան ըրաւ. իբր զի իր բոլոր վրէժխնդրութեան հոգն ա̃յ թողուց. իսկ ա̃ծ շատ չանցաւ անոր չարագործութիւնը պատժեց. վասն զի քանի մը օրէն ետև արծիւը կը դիտէր որ երկրագործները զոհ (ղուրպան) կընէին մէկ այծ մը իրենց կուռքին սեղանին վրայ. վազեց և կաւ կտոր մը միս յափշտակեց , որուն վրայ մէկ քանի կրակ փակած էին , և անանկ տարաւ իր բոյնը: Ու որովհետև բոյնը շինած*

*էր յորդով (առմանով) և ուրիշ գիւրավառ բաներով, մէկէն բռնկեցաւ, և արծւին ձագերը վար թափեցան: Ան ատենն աղուէսն որ կըսպասէր ծառին տակը՝ ընկաւ ձագերուն վրայ. և ինչպէս որ արծիւն իրեն ըրաւ, ինքն ալ անոր անանկ ըրաւ, մէկիկ մէկիկ զամմէնը կերաւ:*

Աղուէսն է (*Թիլքի*), և արծիւն է (*խարգալ*) օրինակ անիրաւ մարդու, որ միտքը կը դնէ թէ օտարին չար ընելու զէն ունի. բայց Ա̄ծ արդար դատելով՝ ուրիշին ինչ որ ընէ, զայն կը գտնէ, թէ բարի և թէ չար:

*Տեսմը պատուհաս նենգամիտ արծուին,*
*Որ ոչ խնայէ իւր մերձաւորին.*
*Զածէ զմտաւ վճիռ տէրունին,*
*Թէ որով չափես չափի քեզ նովին:*
*Արդ մի ոտնակոխ լինիր տկարին,*
*Թէ և 'ի բարձունս ճախրես յեթերին.*
*Քանզի վրէժխնդիր լինի քեզ երկին,*
*Հուրբ հատուցանէ պատուհաս կրկին:*

## ԾԵՐ ԱՌԻՒԾ

Ծանր է և դառն հզօր սլեաց,
 Անկեալ խոտիլ՝ ի վատթարաց:

Ցաւ դժուար է մեծամեծաց,
 Երբ ջանարգին յանարգ մարդկանց:

ԺԴ. Առիւծը ծերութեամբ խոնջելով այրի (մաղարայի) մէջ ընկած կը տանջուէր, անանկ որ հոգին բերանն եկեր էր. իսկ անասուն-ները որովհետև ան վիճակին մէջ չէին վախ-նար անկէ, ամէն կողմէն վազեցին եկան որ սիրտը ծակելով նախատեն զինքը. ուստի էշն ալ եկաւ, և խրոխտալով կից (ըփթէ) նետեց որ զարնէ անոր: Ան ատենն ո՜հ ըրաւ առիւծն ու դարձաւ գայլին և խոզին ըսաց. Ձեր ամէն նախատինքը որչափ կծու ըլլան՝ համբերութեամբ կը քաշեմ, բայց էշն ալ կը համարձակի զիս նախատել. ա՜հ ասոր չեմ կրնար դիմանալ:

Ծեր առիւծն օրինակ է մեծութենէ ընկած և ծերացած մարդու որ իր ծառաներէն և թոռնե-րէն նախատինք կըլլէ ծերութեան պատճառաւ. բայց ան ատենը պէտք է աւելի պատիւ ընել և օրհնէնքն տանել, չէ թէ նախատելով ծաղր ընել:

Այս է տարացոյց հզօր իշխանին,
Երբ Թափի յուժոյ և'ի փառաց նախկին.
Ոչ որ ակնածէ յերեսաց վեհին,
Բնաւ կենդանիք նախատել բերին:
Ցորչափ զօրութիւն ունիս 'ի ձեռին,
Մի Թշնամանող լինիր օտարին.
Զի գայ ժամանակ տեղի տալ բաղդին,
Քեզ ամենեքեան նախատիչ լինին:

## ԻՇ ԵՒ ՓՈՔՐԻԿ ՇՈՒՆ

Իւրաքանչիւր յատուկ բնութեան,
Են պատշաճեալ իրք զանազան:

Ամէն մարդու մէյմէկ բան կայ,
Որ ուրիշին անոր չըլլայ:

ԺԸ. Պարոն մը երբեմն իր պզտի շունը սիրելով հետը կը խաղար իշուն առջին. էշն ան տեսնելով նախանձեցաւ անոր երջանկութենը վրայ, և ինքնիրեն ըսաց. Ինչ կընէ աս շունս որ մեր տիրոջն այսչափ սիրելուն արժանի եղած է. բայց քննելով երբեմն Թաթիկներն անոր կուտայ. հէ՞ Թէ որ ասով սիրելի եղած է, ես ալ կընեմ ու քան զան պզտի անպատունը շատ սիրելի կընամ ըլլալ: Աս ըսելով ելաւ ետքի երկու ոտքին վրայ կեցաւ, և տիրոջն առջին կոշտուԹի անոր պէս ըրաւ: Իսկ տէրը շատ զարմանալով մերժեց անոր կոշտ սէրը. և կան֊

չէց ծառաներն որ վաղեցին եկան աղէկ
փայտ մը քաշելով հատուցում ըրին առա-
նակին քաղաքավարութեանը :

Աստուած ամէն մարդու մէյմէկ բնութիւն ու հե-
ճակ տուեր է իրենց յարմար. Եթէ որ մէկին հեճակը
հերնար մէկալին երթար, 'ան մարդն ալէն չէր ըն-
նար. ապա ամէնքն ալ պէտք է իրենց ունեցածին
հրայ գոհ ըլլան, և իրարու ընդդիմանալէն, չէ նէ ի-
րան ջրովը նը ըստացածին :

Մի ցանկար փոխել վիճակ բնածին
Գործեալ 'ի բնէ անստեղծ մտածին.
Քանզի և բնութիւն անցնիւր կակաց
Ետ զանազան գործս ըստ իւրեանց յատկին:
Իսկ քեզ որ տէրդ ես անսանոց սեռին,
Ետ 'ի կատարել վիճակ քո նախկին.
Զի ոչ 'ի բնութիւն բնութիւն փոխարկի,
Ոչ յատկութիւն չան յէշ այլափոխի:

## ԱՌԻՒԾ ԵՒ ՄՈՒԿՆ

*Որչափ փոքրիկ առնես բարի ,*
*Գտցես յետոյ զայն պտղալի :*

Եթէ պզտի բարիք մ'ընես ,
Շահաւոր մեծցած զայն կը գտնես :

*ԺԶ. Երբեմն առիւծը պառկեր կը քնանար. մուկ մը մօտեցաւ քովը ու հարիւր անգամ բոլորէն անցաւ դարձաւ. յետոյ համարձակեցաւ մինչեւ ցատկել գլխուն վրայէն: Առիւծն արթնցաւ բռնեց մուկը. քիչ մնաց պիտի ուտէր, բայց աս բանս անարժան սեպելով իր բարկութենը՝ թողուց որ երթայ. իսկ մուկն որ անոր պարտական էր իր կեանքը, շատ չանցաւ միջոց մը գտաւ փոխարէնն ըրաւ իրեն. վասն զի քանի մը օրէն ետեւ առիւծն ընկաւ որսորդներուն ցանցը* (թակարդը) *, եւ անոր մռնչալէն ու պոռալու ձայնէն բոլոր անտառը թնդաց. մուկը լսածին պէս աս ձայնս վազեց եկաւ սկսաւ կըրծել ցանցին օղակները որով փաթթուած էր իր բարերարը. եւ այսպէս դիւրաւ ազատեց զառիւծը :*

Որչափ մեծ մարդ ըլլաս, ջանա որ ամենուն հետ անուշ վարուիս ու պզտիկին մեծին աղէկութիւն

ընէ․ Հիմա ալ որ կըսեմ որ պզտի ուղեկցութիւն մը մեծ բան կընէ։

*Չէ փոքր փոքուն առնել զբարի։*
*Երբ հարկն բերէ նպաստել այլում․*
*Թէ և թագաւոր լիցես յաշխարհի,*
*Կարօտիս երբեք նպաստից փոքուն։*
*Քան զառիւծ հզօր զի՞նչ հզօրագոյն,*
*Եւ զի՞նչ քան զմուկն անզօր փանաքի,*
*Արդ հզօրն ահա կապի պնդագոյն,*
*Ազատէ անզօրն զհզօր ամէհի։*

## ԾԻԾԱՌՆ ԵՒ ԹՌՉՈՒՆ

*Առ քեզ խրատ խորհուրդ ծիծառան,*
*Կշռեա զանցեալն և զապագայն։*

Բարեկամին խօսքը մտէ,
Երբ քեզ բարի խրատ կուտէ։

*ԺԷ․ Ծիծեռնիկը տեսաւ որ երկրագործ մը կանեփ կամ քթանի հունտ կը ցանէր, վազեց գնաց ուրիշ թռչուններուն իմացընելու։ Օր կուգայ որ, կըսէր, աս ցանած հատերը ձեր գլխուն բան կը բանան․ վասն զի կանեփը կը հասնի, և հաւորսը կերպ կերպ որոգայթներ կը շինէ ու զամէնքդ կը բռնէ։ Իմ խօսքս մտիկ ըրէք․ ամէնքդ աս արտին վրայէն թռչելով կերէք բոլոր հունտերը։ Փուճ տեղը խրատ կուտար անոնց որ ամենևին չուզեցին լսել․ և մանաւանդ մէկ ան-*

պէս ձայն մը եկաւ իրենց, ոչ թէ խոհեմ նախատեսութի: Ինչ և իցէ կանեփը բուսաւ, ծիծեռնիկը նորէն ըսաւ անոնց թէ եկէք հանեցէք սա գէշ խոտը, թէ որ թողուք զասոնք՝ շատ պիտի զղջաք: Պատասխան տուին թէ կուզես դուն հանէ, մենք ատեն չունինք հանելու: Վերջապէս կանեփը հասաւ. նորէն վազեց ծիծեռնիկն ըսաւ թռչուններուն թէ ինչ մարգարէութի որ ձեզի ըրի, շատ չանցնիր պիտի կատարուի. եթէ կուզէք ձեր ազատութիը, փախիք աս կողմէն հեռացէք: Անոնք ալ ըսին. գնա բանդ շատախօս. գլուխնիս ձանձրացուցիր, երբ պիտի ըլլայ որ ձայնդ կտրես, գնա մենք բանէ մը վախ չունինք: Աս որ լսեց ծիծեռնիկը թողուց անոնց ընկերութին ու հեռացաւ. իսկ թռչուններն անոր խօսքին չաւտալնուն համար շատ զղջացան. բայց ինչ օգուտ՝ բանը բանէն անցաւ. վասն զի քիչ մը ատենէն ետև հաւորսը հանեց իր կանեփը, և ոլորեց որոգայթ շինեց, ու լարեց՝ զամէնը բռնեց:

Օրինակ է խոհեմութե, որ ետքի գալիքները մտածելով և բարեկամի խօսքին վրան ընելով պէտք է արթուն կենալ, ապահով յետոյ ինչպէս ընել վտանգէն ազատելու. Թէ չէ՝ նոյն վտանգին մէջ կը կորսուի ան Թռչուններուն պէս՝ որ խոհեմ բարեկամին վրան ըրին ու կորան:

Նախատես լինել ապագայ չարին,
Մեծ իմաստութի յիմաստնոց դասի.

Քանզի նախատեան հանապազ չահի,
Արտաքոյ եղեալ չարեաց բնաւին:
Զի՞նչ մեծագոյն փանձ զխոտունք ատացին
Քան հաւատարիմ խորհուրդ մաերմի.
Արդ մի լքաներ զխրատ պիտանի
Նման անխմաստ Թռչնոց երամին:

## ԳՈՐՏՔ ԹԱԳԱՒՈՐ ԽՆԴՐԵՆ

Տրտնջողին ոչ պակասին
Ցաւք և վտտանգք զոր տայ երկին:

Տժգոհ մարդու ինչ որ ընէն,
Մինչ կը գանգտի ունեցածէն:

ԺԶ. Գորտերը կը ձանձրանան անանկ միալ առանց թագաւորի. օր մը միաձայն կը պօռան թէ ով Դիոս, դուն մեզի թագաւոր մը տուր, որ գիտնայ մեզ կառավարել: Իսկ Դիոս խնդաց անոնց անխոհեմութեան վրայ, և երկար ժամանակ չկատարեց իրենց խնդիրքը. բայց հուսկ յետոյ ձանձրանալով անոնց աղաղակէն, որոշեց ակամայ կամքով կամքերնին կատարելու. և ձգեց իրենց լճին մէջ գերան մը. անանկ մեծ ձայն ելաւ գերանին իյնալուն որ՝ գորտերը ահերնուն զարհուրեցան ու ջրին տակը մտան, կիսամեռ կը դողային: Բայց քիչ մը ժամանակէն ետև իրենց մէջէն մէկ աւելի սրտոտ մը գլուխը ջրէն դուրս հանեց, և առջի բերա-

նը չհամարձակելուն հեռուէն նայեցան նոր Թագաւորին. յետոյ այնչափ զօրացան որ մօտեցան գերանին, և ապա տեսնելով թէ անշարժ է՝ սկսան ցատկել վրան ելլել իջնել: Ասոր հետևեցաւ ուրիշ գորտ մը, անոր ալ ուրիշը հետևեցաւ, և այսպէս բոլոր գորտերն ելան Թագաւորին վրայ. բայց շատ տրտնջացին ասոր իրենց անշարժ իշխանին համար, մինչև բողոքեցին Դիոսին, որ ուրիշ Թագաւոր մը տայ, որ կարենայ շարժիլ. իսկ Դիոս խրկեց անոնց Թագաւոր արագիլը (լէյլէկը), որ քիչ ժամանակին մէջ կէսը հատցուց ուտելով: Իսկ գորտերը պոռացին կանչեցին աղաղին ձայնով, և խնդրեցին որ զիրենք անկէ բռնաւորէն ազատէ: Բայց Դիոս ան չուզեց լսել՝ ըսելով թէ որովհետև դուք չուզեցիք ընդունել ձեր բարի Թագաւորը, հիմա համբերեցէք չարագործին, և փախցէք որ աւելի գէշը չիգայ ձեզի:

Դիոս մեր գրոց մէջ Արամազդ կըսուի, որ կռապաշտութեան ատենը երկնից մեծ տէր կըկոչուէր. որպէս աղէկութիւն որ կըլլայ՝ բոլորը Դիոս կուտայ կըսէին. անոր համար գորտերն ալ անոր կաղաչեն որ իրենց Թագաւոր տայ. ուստի երբոր գորտերը գիշերանց կը պօռան՝ հիները կըսէին թէ իրենց Թագաւորէն գանգատ կընեն Դիոսին:

Օրինակ է գանգատ ընողներուն. որ ինչ ընես կը տրտնջան, և ոչ շնորհակալ չեն ըլլար, անոր համար գէշ կըլլայ իրենց բանը:

Երբ զիշխան և տէր տայ ումեք երկին,
Չէ պարտ տրտնջալ փոխել ըստ կամի.

Քանզի պատուհաս է տրտնջողին,
Թողուլ զբարին հանդիպել չարի,
Արդ մի՛ տրտնջար ըստ առակողին,
Երբ առաջնորդիս 'ի կամաց վերին.
Որ ինչ անհաճոյ 'ի քեն դատեսցի,
Յօգուտ է'ի խորատ այն քեզ պատրաստի:

## ԱՂԱՒՆԻՔ ԵՒ ՈՒՐՈՒՐ

Համբերողին ամենայն փուշ
Լինի անխայթ բանջար անոյշ:

Համբերող տէրտն ամեն ըեղի,
Անուշ կընէ նման մեղրի:

ԺԹ. Ուրուրը սոսկալի պատերազմ կը-նէր աղաւնիներուն հետ որ իրեն դրացի էին: Իսկ աղաւնիներն ալ թշնամութենէն ազատ ըլլալու համար կարծեցին թէ ուրիշ ճար չի կրնար ըլլալ, բայց եթէ թռչուններուն մէջէն թագաւոր մ՚ընտրել որ կարենայ ի-րենց թշնամւոյն դէմ դնել. բազէն (շահէնը) եղաւ թագաւոր որ մտաւ աղաւնոցին մէջ պատճառաւ հսկելու անոնց միաբանու-թեան ուժը. և մէկէն ցաթկեց աղաւնինե-րուն վրայ բոլորը խղդեց:

Շատ անգամ մարդ անհամբերութեն մէկ նեղու-թենէն ազատելու համար անանկ բան մը կընէ որ ա-

-ելի ձեռ նեղութեան մէջ կեցնի · նաև Ընտամայն յետագէն ազատելու համար աւելի լաւին յետոյ կը մատնուի:

*Այս է վատ բնութիւն գժնեայ ուրուրին,*
*Ցանգ թշնամանել զեւր հեզ դրացին,*
*Որչափ քաղցրակեաց լինի աղաւնին,*
*Այնչափ գառնանայ զազան թշնամին:*
*Սակայն համբերել է դարման նորին,*
*Ոչ մատնիլ'ի ձեռս հզօրագունին ·*
*Զի սակաւ վնաս ուրուրն գործէ,*
*Քան արեանարբու սատակիչ բազէ:*

---

### ԳՈՂ ԵՒ ՇՈՒՆ

*Եթէ լսես հաւատարիմ,*
*Հայ նենգողաց քեզ ոչ հաճիմ:*

Բարի ծառան հաւատարիմ
Չի խաբուիր արծաթն ոսկին:

*Ի · Գող մը կը ջանար մէկ տուն մը մտնել գիշերուան մէջ, որ բաները թալլէ · բայց պահապան շունը թող չէր տար, անդադար կը հաչէր · իսկ գողը կտոր մը հաց ցցուց շանը՝ կարծելով թէ անով կը պարտաւորէ զշունն որ լռէ: Բայց շունը մերժելով բսաց գողին · այ չարագործ, ես կը խաբուէի ու կառնէի քու տուածդ թէ որ չիգիտնայի թէ ինչ մտքով կուտաս ինծի · գնա կորիր*

տակէ․ վասն զի բան մը չի կրնար աւրել զիմ հաւատարմութիւնս ։

Օրհնեալ է հաւատարիմ ծառաներուն որ շահու համար հաւատարմութեան դէմ բան չեն ըներ իրենց տէրոջը․ Զանի որ կաշառքը կը կուրացընէ մարդոց աչքը ։

Արդ ո՛ւր են ծառայք պահապան մանկտոյն,
Խոհեմ մտերիմ շան հետևեսցին․
Տես զիմ՛րդ մերժէ զկաշառ նենգողին,
Ցանարատ պահել զիւր գանձ ընածին ։
Բանի՛ անարգանք նենգող ծառային,
Երբ քան զօրինակն վատթար գտանի․
Անբանն 'ի սէր տեառն ինքնագրաւ մրցի,
Բանականն անփոյթ խորդայ 'ի մահճի ։

## ԻԳ․ ԽՈԶ ԵՒ ԳԱՅԼ

Խորհուրդ և կամք նենգաւորին,
Ի չար առնել մերձաւորին․

Զորն երբ դնէ խորհուրդ կուտայ,
Վախճանը գլխուն բան կը բանայ ։

լա․ Գայլը կը տեսնէ քած խոզ մը ծոյւոր և ծանրած, մօտենալով քովը քաղաքավար ձայնով մը կըսէ․ Մայրիկ թէ որ կամենաս՝ ես քեզի օգնութիւն կընեմ որ զաւակ-

*ներդ ծնիս. եթէ կուզես ծագերուդ ալ հոգը ինծի յանձնէ որ պահեմ. գիտնաս որ իմ քովս շատ ապահով կը մնան : Պատասխան տուաւ խողը. կնքահայր, ես լաւ գիտեմ զայդ. բայց թէ որ դուն իմ եղած տեղէս ուզենայիր շատ հեռուն երթալ, ինծի կերենայ թէ ծագերս ալ մայրն ալ խիստ ապահով կը մնային :*

Հարկ է միշտ հեռու փախչիլ անզգամ մարդէն, որ բարութեան տեղ մարդն աղէկութեան չի կըր-նար ընել. ինչու որ ընէ՝ իր շահուն համար կընէ, և անոր ընկերոջ բարեկամին փառքը կարէ :

*Զխարդ ոճրագործն խորհի ըղբարին,*
*Ոչ մերձաւորի այլ յատուկ անձին.*
*Մանկածու լինել տենչայ ընկերին,*
*Զի մանկունքն ինքեան կերակուր լիցին :*
*Գայլակերպ նենգողք որչափ քեզ մերձին,*
*Զանա հեռանալ՚ի սոսուերէ նոցին.*
*Զի խորհուրդք նոցա ՚ի չարիս բերին,*
*Թէ և բարեկամ՝ քեզ երևեսցին :*



ԻԲ. Որսորդ և Շուն ԻԳ. Նապաստակք:



ԻԴ. Ուլ և Գայլ: ԻԵ. Ոչխար և Շուն:



ԻԶ. Աղուէս և Արագիլ: ԻԷ. Գայլ և Կիսարձան:

# ՈՐՍՈՐԴ ԵՒ ՇՈՒՆ

Ոչինչ յանցանք ծեր զինուորի ,
  Երբ բընական յուժոյ թափի :

Թէ չաշխատի հեզ ծեր ծառան ,
  Յանցանքն իր չէ , այլ ծերութեան :

*ԻԷ· Որսորդ մը վազեց եղնիկին վրայ , և կը ջանար թէ իր ձայնովը և թէ փողին (պօռուին) ձայնովը սիրտ տալ շանն որ ծերութ̃ թօշնած անկար էր։ Իսկ շունն որ աւելի ուժէ ընկած էր , քան թէ քաջութէ , ետքի ջանքն ըրաւ ու անանկ արագութ̃ վազեց որ՝ հասաւ եղնիկին ու խածեց զինքը· բայց պակասութենն ակռաներուն եղաւ որ չկրցաւ բռնել արգիլել։ Ան ատենն որսորդը տեսաւ թէ որսը ձեռքէն ելաւ փախաւ , վազեց շանը վրան ու սկսաւ զարնել նախատել թէ բանի մը պէտք չես ։ Պատասխան տուաւ շունը թէ ես որ առջինը չեմ , պատճառը ծերութիւնս է ։ Արդ ես կը խոստովանիմ որ հիմա զօրութիւն չունիմ· բայց ապերախտ , գոնէ ալ միտքդ բեր իմ քաջութիւններս որ կտրըճութեան ատենս ըրեր եմ։*

Մեծ անիրաւութիւն է ծեր աշխատաւորներն երեսէ ձգել, և չկրնալ աշխատելու համար նա-

ատքել· Հին ալ անոնք ատենով իրենց պարտքն ըրեր են. անոնցմէ միայն բան սորվելու է, և առ-ջի ըրած աշխատանքներն մոռնալու չէ :

Քանի՛ վշտաբեր փորձառու ծերոյն,
Երբ թափեալ յուժոյ նախատի յայլոց.
Կամքն 'ի նա ամբողջ և միտքն է արթուն,
Իբրև անպխտան ծաղրի 'ի յեանոց :
Արդ զի՛նչ վերպանք զի՛նչ յանցանք նորուն.
Զի տայ և բառնայ երբ կամի բնութիւն.
Ղատ է զոր արար յառոյգ հասակի.
Այժմեան զօրութիւն 'ի խելան պահի :

---

ՆԱՊԱՍՏԱԿՔ

Երկիւղ կասկած զգոյշ չնչին,
Ահեղ գործեն հանգոյն փղին :

Վախն ամէն բան ահեղ կընէ,
Լեան ու ջորերն ան կը պահէ :

իզ. Անտառ մը սաստիկ շարժելով հո-վէն սովորականէն աւելի ձայն կը հանէր. իսկ հոն եղած նապաստակները վախերնուն դող կելլեն, անանկ որ մէկն անոնցմէ կըսէ. փախչինք աղատինք, ահա կը լսեմ՝ որոտրդի ձայն և չիերու ոռնալ: Ուստի բոլորը մէ-կէն ամէն կողմէն շուտ մը սկսան փախչիլ: Անոնց առջին ելաւ ջրոտ տեղ մը որ զի-րենք արգիլեց փախչելու. մէ զի գորտերը

դլուէն ջըրին մէջ ցատկեցին · և աս ձայնով այնչափ եւեկցաւ Նապաստակներուն առաջնորդին վախը, մինչև չիկրցաւ առաջ վազել, և չիհամարձակեցաւ ալ ետ դառնալ · ուստի անանկ պաշարուեցաւ մնաց որ չէր գիտեր ինչ ընէ ։ Բայց անոնց մէջէն մէկը սկըսաւ մտմըտալ աս վախուն վրայ որ զիրենք այնպէս սաստիկ դողցուցեր էր · և մէկալնոնց ըսաւ թէ ահա կը փախչինք հովին ու գորտերուն վախէն · ամօթ մեզի ։ Աս խօսքովս Նապաստակները սիրտ առին, դարձան իրենց անտառը ։

Նապաստակն է (Թաւշան), որ ամենէն վախկոտ ըլլալով օրինակ է անպէտ մարդկանց որ ձեռքերնին մէջ բանի մը դէմ դնելով աշխարհէ ձայնը կը հանեն ։

Զինչ բանական կիրք խրրև երկիւղին,
Վրիժխառն գործէ զառարկայս չնչին ·
Զինուոր ցուցանէ զոչխարս 'ի դաշտին,
Լերինք ծով անտառ այնու պահպանին ։
Արդ մի հետևիր վատ Նապաստակին,
Որում անցնիւր գորտք որսորդք երևին ·
Մի յետս ընկրկիր 'ի տես սաւերին,
Զի միշտ երկնչել է պատիժ վատին ։

## ՈՒԼ ՆԻ ԳԱՅԼ

*Չարն 'ի բարին կերպարանի,*
*Ցորսալ զանմեղն յիւր ծուղակի։*

Չարը բարի կը ձեւանայ,
Որ զանմեղները իրեն որսայ։

*Եղ. Այծը կը փակէ իր ուլը կամ ձագը գոմին մէջ, և կերթայ դաշտն արծելու. իսկ գայլը կըմնայ, ու մայրը գացածին պէս կը վազէ կուգայ գոմին դուռը կը զարնէ. ձայնը փոխելով այծու պէս կըսէ ուլին. Զաւակս, երթալու առենս մոռցայ քեզ սիրելու. շուտ ըրէ դուռը բաց որ իմ սէրս քեզի յայտնեմ, բաց դուռը սիրական մօրդ։ Իսկ ուլը դռանը ծակէն նայելով ճանչցաւ ու պատասխան տուաւ թէ չեմ կրնար բանալ. իրաւ դուն այծու ձայն ունիս, բայց չարն ան է որ ես քու մարմինդ բոլորովին գայլ կը տեսնեմ։*

Աս առակէս թող սորվին ծնողք որ իրենց զաւակը չար ընկերի հետ չթողեն, և իրենցմէ չհեռացնեն. իսկ զաւակներն ալ թշնամւոյն ձայնէն չխաբուին ու չարաչար կորսուին։

*Տեսե՞ր զօրինակ ոճրագործ չարին,*
*Խնդրէ միայնակ ըզծնունդ այծին.*

Ցեպնեղէ զձայն իւր յուշկապարկին,
Խարդախել զանմեղն ծախել յորկորին:
Մանկիկ խոհական, մի լսեր ձայնին,
Մի քեզ քաղցրացի բան անզգամին,
Փախիր 'ի նմանէ զի դայլ է ներքին,
Քոյ քաղցր ծնողաց հանգիր 'ի բաղկին:

## ՈՉԽԱՐ ԵՒ ՇՈՒՆ

*Զբրպարտողին մերձ գտանին,*
*Կաշառակուրծ վկայք կրկին:*

Չարին շուտով չարեր կու գան,
Որ չար գործքին օգնել ըլլան:

*ԺԷ. Շունը դատաստան կը կանչէ ոչխարը մէկ քանի կենդանիներու առջին որ իրեն հաց մը տալիք է՝ տայ, և անիրաւութիւն կը հաստատէր թէ փոխ եմ տուեր: Իսկ ոչխարը դատաւորներուն ցցուց հաստատեց թէ շունն անիրաւութեամբ կը պահանջէր՝, վասն զի ինքն ամենևին անկէ բան մը չէր առած. բայց որչափ ջանաց հաստատել՝ կորսնցուց իր իրաւունքը. վասն զի շունը վըկայ բերաւ անգղը (ախպապան) և ուրուրը՝ անանկ որ անոնց վկայութեամբ ան կեանին ոչխարը պարտաւորեցաւ հատուցանելու որ ոչ երբէք անկէ բան առած էր:*

Անիրաւ մարդու հետ գտնուիլ ընկերանալու · պէտք է զգուշանալ, և հեռու փախչիլ անկէ, որ ուրիշ բան մը նորէն չինանք ։

Վ՚կայք անիրաւ անիրաւ դատին,
Մատչին 'ի հանդէս առ դատաւորին ·
Որով զպատճառ թիւրեալ արդարոյն,
Վճռեն հաստատեն բան զրպարտողին ։
Վայ որ ստութիւն փոխան ճշմարտին,
Դնեն և պնդեն լոյս ընդ խաւարին ·
Խաւարն է այս մութ նոցա բաժին,
Ծնունդ ստութեան ժառանգ գեհենին ։

## ՕՁ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾ

Տարապարտուց բարկացողն,
Զեղջ ապաշաւ կայ առաջին ։

Ով որ ծուռ փէղ կը բարկանայ,
Ըրած բանէն շուտ կամըջնայ ։

ԽԶ· Երկրագործ մը կը բարկանայ օձի մը վրայ որ իր տանը քով կը բնակէր, և այնչափ կը տաքնայ որ կացինը ձեռքը վրան կը վազէ որ սպաննէ ։ Բայց օձը կը փախչի մօտաւոր անտառին մէջ անանկ արագութբ որ մարդը չի կրնար հասնիլ ։ Ժամանակէ մը ետև երկրագործը կը տեսնէ որ կարկուտը բոլոր իր ցորենը ջարդուբուրդ ըրեր է, կը հասկընայ թէ օձին իր ըրած չարութեանը պա-

*ախժն է, որ ամ ան փոխթորիկը խորկեց երկ-րին վրայ: Ուստի աս պատիժս հանդար-տեցընելու համար սկսաւ փնտռել զձն որ հետը հաշտուի. և երբոր գտաւ՝ խօսք տը-ւաւ թէ անկէ ետև ամենևին անկեց վախ մը չունենայ, և աղաչեց որ դառնայ իր աւ-ջի բունը: Բայց փուձ տեղը կաղաչէր ու կըստիպէր զայն. վա զի օձն ամենևին մտիկ չըրաւ, և շուտ մը անկէ հեռանալով կան-չեց թէ մեծ սիրով կը դառնայի քու տունդ, թէ որ չիգիտնայի թէ դուն դեռ կացինդ պահեր ես, և թէ որ կարենայի մոռանալ թէ դուն ինչ մտքով օր մը ան ինծի դէմ վերցուցիր:*

Բարեկամութ̄ին է իբր մէկ հոգի մը որ [illegible] [illegible] [illegible] կը [illegible] [illegible] [illegible], որ [illegible] [illegible]. [illegible] [illegible] կը [illegible], և [illegible] [illegible], [illegible] [illegible]. [illegible] համար Պղատոն կը [illegible] որ [illegible] [illegible] հայելին նայի, [illegible] [illegible] [illegible] որ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]:

*Ահա ապաժոյժ կիրք գաղանային,*
*Որ ըհուր բարկութե վառէ 'ի սրտին.*
*Նեղէ զմերձաւորն այլ և զընտանին,*
*Ի տանէ 'ի տուն վարէ զգրացին:*
*Արդ մի հաւատար դու բարկասրտին,*
*Թէ և դառն անմեղ քեզ երևեսցի.*
*Նմեթէ միանգամ վշտացար անտի,*
*Փախիր 'ի նմանէ, շատ է փորձառուին:*

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՐԱԳԻԼ.

Որչափ խաբողն է խորամանկ,
Խորամանկին լինի կատակ։

Դուն որչափ որ խորդուն ըլլաս,
Քեզմէ ցածէն ծաղր կըլլաս։

ԻԷ. Մէկ օր մը աղուէսը կը հրամցընէ զարագիլը թէ իմ տունս հրամմէ կերակուր ուտելու, կը փափաքիմ որ քեզի լաւ հարկիք մը ընեմ։ Արագիլը դէմ չկեցաւ, սիրով ընդունեց անոր պատիւն, ու խօսք դրած ատենը գնաց։ Բայց պատիւը շատ քաղաքավար եղաւ և հարկիքն անքաղաքավար. մծ զի բոլոր կերակուրներն որ առաջ բերաւ՝ կաթէ շինած ջրի ապուր էին՝ տափակ ամանի մէջ լեցուցած. անանկ որ արագիլը սեղանին վրայ ուրիշ բան չկրցաւ ընել, բայց եթէ ամանը քշըցելով գրեթէ բան մը չկերաւ, հազիւ թէ կերակրին համն առաւ։ Իսկ աղուէսը բոլորը լափելով բան չթողուց. ու կը խնտար արագիլին վրայ որ իր բարկութիւնը բանելով չէր յայտներ, որովհետև աւելի՛ նեղացած էր, քան թէ անօթի։ Աղուէսին աս ուրախութիւնը շատ չքշեց. մծ զի ան օրն արագիլն ալ հրամցուց զաղուէսն որ երթայ անոր տունը կերակուր ուտելու, և իրեն հանեց մէկ աման մը երկան ու նեղ վզով, և մէջը մանրած միս

լեցուն . ինքը դիւրին կերպով երկան բարակ կտուցը ամանին մէջ երկընցուց ըսկսաւ ուտել հանգստութեամբ, և խնտալ խաբող աղուէսին վրայ անոր ըրածին դէմ, որ բոլոր հարկէքին մէջ ուրիշ բան չկրցաւ՝ ընել, միայն թէ ամանը լզեց : Այսպս թողուց հարկէքն, ու անօթի մարած դարձաւ ամըչնալով գնաց :

Աղուէսը խորամանկ ընկերոջ օրինակ է խաբեբայ մարդուն որ միշտ կը նայի ուրիշը խաբել, բայց չի գիտեր թէ ինչ որ ընէ, ան կը գտնէ :

Զխորդ անվայել քաղաքականին
Խարդախել ընկերն ըստ խորամանկին .
Որպիսի պատրանս նիւթէ օտարի ,
Նոյնն պատրանօք փոյթ խայտառակի :
Աղուեսու է բարք , ոչ բանականի ,
Խաբել և ծաղրել ընկեր բարեկամ .
Կեղծաւորելով իբրև սիրելի ,
Զրկել և լափել զօտարին սեղան :

# ԳԱՅԼ ԵՒ ԿԻՍԱՐՁԱՆ

*Գեղեցկութիւն բանականին ,*
*Ոչ մարմնականն , այլ է ներքին :*

Ի՞նչ շահ եթէ դէմքն է աղուոր ,
Գլուխն անխելք պարապ կոր :

*Ի՛Ր· Օր մը գայլը կը մտնէ արձան շինողին խանութը, և կը տեսնէ հոն մէկ կիսարձան մը շատ գեղեցիկ շինած · առջի բերանը կը զարմանայ անոր աղուորութենը վրայ · բայց երբոր կը տեսնէ ու կը հասկընայ թէ քարէ շինած անզգայ գլուխ մըն է և բան չիմանար, Ո՜հ ինչ գեղեցիկ գլուխ է, կըսէր, բայց մեղք որ խելք չունի :*

Իմաստութիւնն ընդունիլ կըլլայ · թէ որ ընդունին բարակ երանները ու ոգիները չըլլան, խելացի կըլլայ : Անոր համար միշտ պէտք է մարդուս խելքին նայել, ոչ թէ դրսի կերպարանքին :

*Զինչ գեղեցկութիւն՝ անիմաստ գլխոյն ,*
*Երբ զուրկ 'ի խելաց սանձայ գերագոյն ·*
*Իմաստունք միայն գեղով գիտութեան ,*
*Հրճուեին գեղապանծ ըստ ներքին մարդոյն :*
*Քանիք կան սարծին իբր անզգայ ատուն ,*
*Այլ զուրկ յիմաստից են զերթ անասուն ·*



ԿԲ. Կաչաղակն և Սիրամարգ: ԿԳ. Կապիկն և Աղուէս:



ԿԴ. Գորտ և Կով: ԿԵ. Աղաւնի և Բազէ:



ԿԶ. Աղուէս և Գայլ: ԿԷ. Փայտահատ և Անտառ:

Արտաքուստ միայն գեղեցիկ վառուն,
Բայց անխելք յաւէտ արժան ըստ ներքնոյն։

## ԿԱՉԱՂԱԿ ԵՒ ՍԻՐԱՄԱՐԳ

Որ ոչ գիտէ ըղձալի անձին,
Նախատանօք չափ տան նմին ։

Նայէ ըլլաս սիրուն խելօք,
Չէս զարդարնար օտար զարդով։

ԻԹ․ Սիրամարգ մը փետուր փոխելու ատենն իր փետուրները կը թափէ․ իսկ կաչաղակը (աստղաղանը) զանոնք կը ժողվէ ու վրան կանցնէ կը զարդարուի․ և զինքը գեղեցկութեամբ շատ վեր կը դնէ քան զսիրամարգը, մինչև հպարտութեամբ փքանալով կը թողու իր ընկերներն ու կուգայ սիրամարգներուն ընկեր կըլլայ։ Բայց աս հպարտութիւնը շուտ մը խայտառակ եղաւ․ վասն զի սիրամարգները ճանչցան անոր կեղծաւորութիւնն ու սուտ փետուրները վրայէն փետտեցին, և շատ քշըշելով վռնտեցին իրենց ընկերութենէն։ Իսկ կաչաղակը փետտած և ծեծը կերած՝ չիկրցաւ մէկալ կաչաղակներէն ալ ցաւակցութեան արժանի ըլլալ, որովհետև զանոնք անարգեր էր առաջուց ։

Առակս օրինակ է ճառամոլին՝ որ ուրիշին բա-
նովը կը հպարտանայ և կը պարծի. միշտ կ'ուզէ որ
դրսէն զարդարուած ըլլայ, բայց ներսէն ինչ եղածը
աղէկ կը ճանչնան ուրիշները։

Այս տեսարան պճնող հպարտին,
Պճնի զարդարի զարդու օտարին,
Որով թեկն ածէ հանդոյն չքնաղին,
Պանծալ ընկերօք անցեալ 'ի կարգին։
Արդ զինչ շահ բերէ այն փառասիրին,
Օտարին է զարդ ոչ յատուկ անձին.
Երբ իւրաքանչիւր զիւրն առնու 'ի բաց,
Մնայ խայտառակ մերժեալ յընկերաց։

---

## ՃԱՆՃ ԵՒ ԿԱՌՔ

Ցիմար ճանճիկն կարծէ զինքն ինչ,
Սակայն յինքեան է սին ոչինչ։

Պզտի մարդիկ մեծ կը խօսին,
Կարծեն լեռներն իրենք ըրին։

Է. **Կ**առավար մը երբեմն իր կառքը (արա-
պան) կը տանէր մէկ աւազոտ տեղէ մը, որ եր-
կու զօրաւոր ձիեր կը քաշէին արագութը̄.
Ճանճ մը կը տեսնէ ան, ու բզզալով կուգայ
կ'ընստի կառքին վրայ, ու միտքը կը դնէ թէ
ինքը մինակ կը քալեցնէ ան. Հօ՜ տեսէք,
կ'ըսէր, որչափ փոշի կը հանեմ ահա։

Շատ մարդիկ կան որ յետաընտան բան մը գար, ու մեծ մեծ կը խօսին, և ուրիշին բերած բանը փղին+ բերածի պէս կը պատմեն ճանճին նման. ա-ռակներուն կըսեն որ պզտի մարդիկ մեծ երազ կը տեսնեն: Այնպատակել տեսած հպարտ տղայ մը, որ մեծ կը խօսէր՝ ըսաւ. Երանի թէ մտածէր անցած բաները եւ ունենայի:

Տես զանմիտ արարս անպէտ տկարին,
Պանծայ թէ լցէ կառավար մեկին.
Ոչինչ հայելով յիւր անձն չնչին,
Հոլովել կարծէ զանխուս աշխարհին:
Ա՜ռ քեզ 'ի խրատ զառակին իմաստ,
Ծանիր զքեզ կշռեա զինչ ես և ուր կաս,
Մի՛ համեմատեր զքեզ կարողաց,
Զի մի՛ ծաղրեսցիս յաչս տեսողաց:

ՃԱՆՃ ԵՒ ՄՐՋԻՒՆ

Որ զինքըն վեհ դնէ այլոց,
Մերժի խոտի և 'ի փոքունց:

Բէւ մ՛ տնէր կարգը մեծին,
Ծաղր կըլլայ մեծին քովերին,

լա. Ճանճը կը ջանար մեծութե՜ն խրատուենք ունենալ, որ իր աստիճանը մրջիւնէն շատ վեր դնէ. ուստի հպարտութե՛մբ կըսէր մըր-ջիւնին թէ ես առանց պատճառի չեմ ու-զեր քեզմէ վեր ըլլալ: Մտածէ ինչ վիճա-

կի տէր եմ ես, որ սանձուած լինելի պէս ազնուական է։ Ոչ երբէք կաշխատիմ. ուր որ ուզեմ կը մտնեմ, պալատներու մէջ ըլլայ՝ տաճարներու մէջ ըլլայ. և թէ ինչպիսի կերակուրներով ես կը սնանիմ՝ տէրը գիտէ. ինչ պտկուղներու և գէմքերու վրայ կը հանգչիմ։ Խակ դուն, ողորմելի, զասոնք տեսնելով կրնա՞ս զքեզ ինծի նմանցընել, դուն որ ծակի մը մէջ կը բնակիս, ուրիշ ապրուստ մը չունիս, բայց հազիւ թէ փըտտած հատիկներով կապրիս. և ան ալ ուրիշ կերպ չես կրնար ունենալ, բայց եթէ մեծ աշխատանքով և հոգնելով։ Պատասխան տուաւ մրջիւնը. Ճշմարիտ է թէ դուն պալատներուն մէջ կը բնակիս, բայց ձանձրացուցիչ ես ամենուն աչքին։ Ան գեղեցկուհիները՝ որոնցմէ իբր թէ անուշութիւն կը գողնաս, քեզ կը հալածեն ու կանիծեն։ Ես կրնդունիմ թէ դուն ամառը քան զիս լաւ կեանք կը վարես. բայց ձմեռն ինչպէս կապրիս գիտես։ Երբոր ցրտէն հալածուած պատին մէջ խեղճ կը սատկիս անօթի ծարաւ, ես հողին տակն իմ կերակուրներովս կապրիմ. և ան դժուար եղանակին մէջ իմ աշխատանքիս պտուղը կը վայլեմ ու կուրախանամ։ Ուրեմն պարապանձէ ծոյլ, ալ զիս մի՛ անարգեր. թէ որ քու ապրելուդ կերպը ազնուական է, իմինս ալ առանց ծանրութե շատ ապահով է։

Անմիտ մեծատուններն իրենց հարստութենէն նայելով՝ բանուորները մարդու տեղ չեն դներ, սակայն

Մարդուն մեծութիւնը հոգւոյն վրայ ըլլալուն պէտ-
ք կայ որ մեծապատուէն պէտք վեր է մարդ-
կութեան:

*Ամբարիշտ պարծանք մնապարծ վատին,*
*Պանծայ իբր ունակ բարեաց բոլորին.*
*Ճգնի վերադաս լինել ընկերին,*
*Եւ գատարկութեամբ ուռէ զօտարին:*
*Պնա առ մրջիւնն ասի 'ի գրին,*
*Ուսիր տնտեսել զպիտոյս անձին.*
*Մի զերթ ճանճն անմիտ սովամահ լինիր.*
*Մի անմտութեամբ զծոյլն երանիր:*

## ԿԱՊԻԿ ԵՒ ԱՂՈՒԷՍ

*Թագաւորաց ոյժ զօրութիւն,*
*Արուեստ հանճար իմաստութիւն:*

Խելք և իմաստ թէ որ չունի,
Արքայ ըլլալն ու ինչ ունի:

*լը· Օր մը կենդանիները ժողվեցան որ իրենց մէջէն թագաւոր ընտրեն. կապիկը կը մարէր որ ինքն ըլլայ թագաւոր. ուստի անոնց առջին մէկ զարմանալի խաղ մը ըրաւ, և անանկ թեթևութեամբ ցաթկըռտեց խաղաց որ իր ճարտարութեամբը բոլոր ժողովքին սիր-տը շահելէն ետև վիճակն ալ իրեն ելաւ՝ թագաւոր կոչուեցաւ: Սակայն աղուէսը չկրցաւ որ խաբեբայ հնարքով արժանի ըլ-*

*լայ կապիկն աս մեծութեանը • ուզեց որո-
գայթ մը լարել կապիկին, և անոր ցցուց
մեկ փոս մը, որուն մէջ որոգայթ մը պատ-
րաստեր էր, վրան ալ տերևներով գոցեր էր։
Տէր ըսաւ՝ դուն գիտես որ անցած օրեր
աս ծակին մէջ մեկ անպատմելի գանձ մը
գտայ։ Արդ ինչպէս տէրութենդ լաւ գիտէ,
օրէնքով ամէն գանձ թագաւորին կլինայ •
դուն ես մեր թագաւորը, եթէ աս գանձին
տէր ըլլաս ամենևին բան մը չի պակսիր քու-
կին մեծնալուդ։ Ասանկ խօսքերով կապի-
կը խաբուեցաւ ցաթկեց փոսին մէջ • բայց
չէ թէ միայն չի տեսաւ ինչ որ կը խնդրէր,
այլ և աղուէսին որոգայթին մէջ բռնուե-
ցաւ։ Իսկ աղուէսը ծիծաղելով կանչեց ա-
նոր • Խեղճ կիմար, ինչ խելքով միտքդ դրիր
որ ուրիշները կառավարես, երբոր դուն ըզ-
քեզ չես գիտեր կառավարել։*

Օրինակ է անմիտ մարդկանց որ թագաւորի պէս հանգստութիւն ունին, ու գանձ գտնելու ետևէ ելլան, և ունեցածնին կորսնցնելէն ետև խեղճ խայտառակ կը մնան։

*Իմաստութիւն է տիրող աշխարհաց,
Եւ ոչ արութիւն իշխանաց զօրաց •
Ոսկի զիմաստից գըտանել զգանձ,
Եւ մի աղուեսուն թակարդիւ 'ի ցանց։
Ոչինչ շահ գործէ մեծութիւն փառաց,
Երբ ախտաւակից չէն հանճար իմաստ •
Զի իմաստնոց է նախ տիրել ինքեանց,
Ապա թագաւոր գոլ այլոց ազանց։*

## ԳՈՐՏ ԵՒ ԿՈՎ

*Որչափ հպարտն ուռնուլ ջանայ,*
*Պայթի հողմով ոչ մեծանայ:*

Մեծ ըլլալու շատ մի ջանար,
Թէ չէ պատահիս ու չես մեծնար:

ըֆ․ Գորտը երբեմն կով մը տեսաւ որ խոտ կուտէր ջրոտ տեղի մօտ, սկսաւ ուռիլ բոլոր ուժովը, և ուռելով կանչեց ձագին թէ որդեակ աս բանը չի կրնար ըլլալ և չեմ կրնար քաշել՝ որ ես կովէն պզտիկ մնամ․ լաւ նայէ ինծի կըսէր, ես ինչպէս կը կարծեմ՝ ահա անոր պէտի հաւասարիմ մեծու֊թեամբ: Պատասխանեց ձագը, թէ դուն անոր չես կրնար հասնիլ, հանգիստ կեցիր: Ուրեմն, ըսաւ, ահա տես ինչպէս կըլամ: Ան ալ ըսաւ․ Պարապ տեղը կաշխատիս: Իսկ գորտը միշտ ուռելով կըսէր․ Ոհ կամ անոր կը հասնիմ, կամ թէ … Անխելք գոր֊տը աս խօսքս չիկրցաւ ըմընցընել․ վասն զի ուռելով այնչափ մեծցաւ որ մինչև ճաթե֊ցաւ:

Ով որ իրմէ մեծին նայելով կուզէ հիմակուց թռ֊չել, և մեծերուն նմանիլ՝ գործին պէս ըլլայ․ վասն զի ամենուն իրեն յարմար հիմակ տուեր է Աստուած:

Քանի՜ տղանդակ, գիտունք ատացին,
Հոգի փքացեալ 'ի փոքրիկ մարմին՝
Որ ջանայ լինել նման վիթխարին,
Ոչինչ խորհելով թէ գործ է չնչին :
Այս դժնդակ կիրք ուրոյ հպարտին,
Խորհի հանապազ վեհ լինել յանձին.
Արքայից պետաց նմանիլ տենչայ,
Սակայն պայթուցեալ նանրանայ ինքնին :

## ՉՂՋԻԿԱՆ ԵՒ ԹՌՉՈՒՆՔ

Այր անհաւատ՝ զերթ չղջիկան,
Զուրկ 'ի լուսոյ կայ 'ի մթան :

Թէ չէս մէկին հաւատարիմ,
Անարգ կըլլաս ամէն ազգէն :

ԼԹ. Թռչուններն ու չորքոտանիներն իրարու հետ կռիւ ունենալով պատերազմ բացին, երբոր երկու դաս բաժնուեցան և սկսան ծեծկուիլ, չղջիկը կամ գիշերահաւը (կէճէ գուշըն) անոնց կողմէն ելաւ, թշնամիներուն կողմն անցաւ որ թռչունները տկար մնան, վասն զի անոնց կորուստը կուզէր : Բայց երբոր տեսաւ թէ յաղթութիւնը թռչուններն ըրին, որ զանոնք թողուցեր էր, շատ զղջացաւ : Իսկ յաղթող թռչուններն ու յաղթուած կենդանիներն իրաւամբ բարկացան անոր անշահ անհաւատարմութենը վրայ, ու հալածելով պատուիրեցին որ կե-

նայը մէջ անոնց առջին չերևնայ : Ասկէ ե-ղաւ որ չղջիկը չի համարձակիր ցորեկն ե-րևնալու, գիշերը միայն կը Թռչի :

Խրատ Թող առնեն անհաստատաբարոյ մարդիկ, ո-րոնք երկդիմի են. Վասն զի ատենները մէկտան փոխ հաստատաբարութեան կ'անեն, և ամենեն կը նախա-տուին :

Տեսե՞ր զօրինակ խաւարասիրաց,
Որ ատեան ըզլոյս գնան խարխափած.
Զի չեն արժանի անհաւատարիմք
Վայելել'ի լոյս ընդ առաքինեաց :
Արդ չքնաղ զաշխարհս զինչ ինչ տապալեաց:
Անհաւատարիմ այր ընկերատեաց.
Որ ատեայ զեւր ազգ խառնի'նդ օտարաց,
Յօտարաց մերժեալ մնայ խաւարած :

## ԱՂԱՒՆԻ ԵՒ ԲԱԶԷ

Որ արդարոյն չարիս խորհի,
Չարագունին ինքն հանդիպի :

Երբ անմեղին դաւ լար նայիս,
Քեզմէ լարին յետոյ կիյնիս :

ԼԷ. Բազէն երկար ժամանակ աղաւնիին ետևէն ընկաւ, բայց չկրցաւ բռնել. վեր-ջապէս խելքը դարձած եկաւ ընկաւ հա-ւորսին որոգայթին մէջ. իսկ հաւորսը բռ-

*նածին պէս պատրաստուեցաւ որ սպաննէ : Բաղէն կըսէր անոր · Ով անողորմ, ես քեզի ինչ գէշութիւն ըրած եմ որ զիս մեռցնել կուզես : Պատասխան տուաւ հաւուորսը Թէ ինչ գէշութիւն ըրեր էր քեզի այն աղաւնին որ այնչափ ետևէն ընկար · և տեսայ որ կը հալածէիր · մեռնելու արժանի ես դուն՝ ըսելով խղդեց :*

Երբեմն Աստուած Թոյլ կուտայ անզգամաց որ անմեղը հալածեն · Բայց յետոյ անանց դէմն ալ մէկը կը հանէ որ անզգամներն անզգամով կը կորսուին · Միայն անմեղին համբերութիւնը կը պսակուի :

*Այս տարացոյց է անզգամ չարին,*
*Պնդի հանապազ ըղձեւ անմեղին ·*
*Ի կեղեքել զայն յիւրում ձիրանին՝*
*Ինքն կեղեքի ձեռամբ որսողին :*
*Մի անխրատիր երբ Թոյլ տայ երկին,*
*Եւ մի հանդիպիլ քեզ լիցի չարին ·*
*Քանզի չարքն յաւէտ չարաւ կորնչին,*
*Եւ անօրինօք անօրէնք պատժին :*

# ԱՂՈՒԷՍ ԵՒ ԳԱՅԼ

*Որ խորխորատ փորէ այլում,*
*Ինքն անկանի չարեօք 'ի նոյն :*

Ով որ մարդիկ խաբելու ելնէ,
Իրեն գլխուն կու գայ ան օր :

*ԼԷ· Գայլ մը բունին մէջ նստած իրեն կերակուրներովը կապրէր, որ հոն ժողվեր պահեր էր : Իսկ աղուէսն իմացաւ, վազեց եկաւ անոր հետ տեսութիւն ընելու, ու միտքովը որ սատանութենով ձեռքէն կերակուրը յափշտակէ : Բայց գայլը շատ զգուշութիւն նայելուն համար, աղուէսը չկրցաւ բան մը ձեռք ձգել : Մտմտաց որ աս չեղաւ նէ, ուրիշ ճամբայ մը գտնէ : Գնաց հովուին տունը, և անոր իմացուց գայլին կեցած տեղն ու առաջն ընկաւ տարաւ հոն · խորհուրդ տուաւ որ ան չար գազանը մեռցընէ · վասն զի կըսէր, շատ անգամ քու լաւ ոչխարներդ կերեր է : Իսկ հովիւը հետևեցաւ աղուէսին խորհրդին ու գնաց հոն · նախ զարկաւ գայլը մեռցուց, յետոյ աղուէսն ալ սպաննեց՝ որ իր շահուն համար ուրիշին մատնիչ եղաւ :*

Հոգւոն արծանագէս ապրելու մարդիկը · որ ուրիշը մարդիներուն խաբելու են յետոյ բան գտնէ

ենայ։ Անանկ ալ օր մը ապտանան դիւրի ըսէ մաս-
նըներուն, որ սորինները մէկմէկ յգելով մեղօ
պատճառ կըլլան։

Այլուխաւարոյ նենգամիտ քըսուն,
Տքնի խաւարգախել զընկերին ըզատուն.
Խըռովէ ձգէ զեղբայր ընդ եղբօր,
Զի կերակրեսցէ 'ի նոցունց զխուր փոր։
Արդ մի խաւարգախին լսեր ձայն քաղցրիկ,
Թէ և զերթ թոյնս սուլեսցէ հեզիկ.
Քանզի նա միայն սակս իւր խորհի,
Մատնէ զմերձաւորն 'ի սեր դոյզն օգտի։

## ԳԱՅԼ ԵՒ ՈՉԽԱՐՔ

Թէ հաւատաս ոխակալին,
Փոյթ 'ի ժանեաց ծախիս չարին։

Մէ փոր պէտէր ըորէն յէոտը,
Քէր կըյըգէ մահէն ճանկը։

ըէ. Տներն անանկ լաւ պահպանութիւն կընէին ոչխարներուն բոլորտիքն որ, գայլերը չէին համարձակեր մօտենալ անոնց, որոնք ուրիշ բան չէին մտմըտար, բայց թէ ինչպէս կըլլայ որ ուտեն զանոնք։ Որովհետև անանց մեծ վտանգի չէին կընար գայլերը յայտնի բռնութը գլուխ տանել բանը, պէտք եղաւ որ խորամանկութը ընեն. տես թէ ինչ ստատանութի բանեցուցին։ Ոչխար-

Ներուն առջին գրին որ հաշտութիւն ընեն ի-
րարու հետ · անոնք ալ ընդունեցան · և ամ-
մենուն ապահովութենը համար կամեցան որ
երկու կողմէն ալ պատանդ (ռեհին) առն ի-
րարու: Շները պատանդ գացին գայլերուն
քին, և գայլին լակոտներն ալ ոչխարներուն
քին գացին: Ոչխարները կարծեցին թէ ա-
սանկ խիստ ապահով եղան · բայց շատ գէշ
եղաւ իրենց բանը · վա՜ զի քանի մը օրէն ե-
տև գայլերը լսեցին լակոտներուն աղաղակն
որ իրենց մօրմէն զատուելնուն համար կը
պօռային · աս բանն իրենց պատճառ ա-
ռին, ու խղդեցին շները քներնուն մէջ ·
յետոյ վազեցին եկան ոչխարներուն վրան
ընկան պատճառելով թէ ինչու համար դա-
շինքն աւրեցիք, ու մեր լակոտներուն նե-
ղութիւն տուիք: Եւ որովհետև շները չիկային
որ ազատեն ոչխարները՝ թշնամիներուն
ձեռքը մատնուեցան, որ դիւրութեամբ յա-
փըշտակեցին զամէնքը:

Օրինակ է միամիտ մարդկանց, որ թշնամւոյն
խօսքին հաւատալով բարեկամներէն հեռու կը կե-
նան, և իրենց զէնքն անոնց կուտան, որ շարա-
ր կը մատնուին անզգամներուն ձեռքը · տանի-
րէ միշտ հեռուն ծախուելու է, և ոչ թէ բա-
րեկամութիւն ընելու :

Ահա բանութիւն անգութ գազանին
Ճգնի կըլանել զերամս ոչխարին ·
Զխորդ քաղցրութե՛ դաշնակցի նոցին,
Մինչև որսասցէ ըղձիւր անմեղին :

Եւ զի՞ պիտոյ էր հաւատալ նոցին,
Կամ զի՞ ապահով հաշտիլ ընդ գայլին.
Քանզի թշնամին գայլ է մարդախանձ,
Դըժնեայ քանասար դըրժող անմեղաց:

## ՓԱՅՏԱՀԱՏ ԵՒ ԱՆՏԱՌ

*Զոր ինչ գործես կշռեա զվախճան,*
*Զունի ինչ շահ զեղջն անագան:*

Մէ՛ փառք լուրէն յաջողութեան,
Քեղին նըրնէ նախ լուրութեան:

ԼԸ. Մէկ փայտ կոտող մը աղաչեց անտառին որ իր փայտերէն անոր փայտ մը տայ կացինին կոթ շինելու համար. իսկ անտառը խիստ աղէկ ըսաց՝ գլխուս վրայ. բայց յետոյ շատ զղջացաւ երբոր հասկըցաւ թէ աս ըրած բարերարութիւնն իրեն կործանմանը պատճառ պիտի ըլլայ: Որովհետեւ փայտ կոտողը կացինին կոթն անցուցածին պէս սկսաւ անտառին ծառերը ջարդել, օր մը մէկը կորեց օր մը մէկալը, եւ այսպէս բոլոր անտառը կործանեց:

Պէտք է մեծ զգոյշ ըլլալ ճիշդ ըրած բանէն,
եւ լաւ մարդուն յետքը զէնք չըլլալ որ փոքր բարե-
լու ըրնէ է. տանը մարդուն ով որ օգնութեան



ԼԹ· Աղուէս և Խաղող։ Խ· Գայլ և Հուն։



ԽԱ· Կապիկ և Աղուէս։ ԽԲ· Ձի և Էշ։



ԽԳ· Եղն նայի՛ ի ջուր։ ԽԴ· Աքիս և Աղուէս։

ընելոյ յօժարութիւն խօսքայ՝ իր ճէոքին ու պատճա-
ռըլլայ :

*Այսպէս անխոհեմք նըման անտառին*
*Նըպաստեն չարեաց զէն տան 'ի ձեռին.*
*Որով և ինքեանք ինքեանց կործանման,*
*Օտարաց համայն պատճառող լինին :*
*Սակայն իմաստունք դիտող վախճանին,*
*Զոր ինչ գործեսցեն նախ կըշռեն խորհին.*
**Ըզգաստ գոլ ընդդէմ վընասաբերին,*
*Զըգեն զամենայն յօգուտ շահ անձին :*

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԽԱՂՈՂ

*Ցորժամ չունի վատն զբարին,*
*Անգոսնէ զայն իբրև չընչին :*

Ցած մարդն երբ որ բան սորված է,
Այլոց բարին չար կը դարձնէ :

*ճԹ. Աղուէս մը երբոր անօթի կը մաշէր, կը տեսնէ խաղողին կուզերը կախուած բարձր փայտերու վրայ, և բոլորը հասած. խորադէտը կը բաղձայ որ ձեռք ձգէ. բայց որչափ որ վեր կը ցատկէ՝ չի կրնար հասնիլ որ ուտէ: Աւստի տեսաւ թէ իր կարողութիւնը պիտի չհասնի, ետ դառնալով գլուխը վերցուց ըսաց. Աս խաղողները ես ուզէնայի հեշտ կրնայի առնել ուտել. բայց ինծի անանկ կանանչ չհասած կերեւնան որ*

*չեն ուժեր այնչափ աշխատանք ինծի տա-լով զանոնք փոխընեմ:*

Նախանձոտ մարդը երբոր բան մը կը տեսնէ, ու չի կրնար առնել, կուզէ վար զարնել ան բանը· բայց թէ որ չէտաք չգէր, ինչպէս կ'արտախանար: Այսպէս են յիմար տգէտները, որոնց խելքը կարճ ըլլալով գիտութեան չի հասնիր. անոր համար գիտութիւն ու գիտուն մարդը վար կը զարնեն:

*Իմաստ առակիս խօսէ ըզնախին,*
*Որոց այլ է միտք, այլ ինչ 'ի լեզուին·*
*Տենչան 'ի սըրտէ ունել ըզբարին,*
*Ապա զայն մերժեն երբ յուսահատին:*
*Մի՛ առեր ըզլաւն հանգոյն խարդախին,*
*Յորժամ չէ 'ի քեզ, այլ կայ յօտարին·*
*Նախանձու է բերք այս ախտ մոլեգին,*
*Երբ չունի մերժէ զամէն ցանկալին:*

## ԳԱՅԼ ԵՒ ՇՈՒՆ

*Ազատութիւնն է ձիրք բնութեան,*
*Նա և անբաւք այնու պանծան:*

Աղքատութիւնն է գանձ բնական,
Մի՛ շուտ ծախեր զայն դու ոսկան:

*Խ. Գայլը խօսակցութիւն կընէր շան մը հետ աղէկ ապրելու վրայ, և անոր երանի*

կուսուր գիրութենը համար։ Բարեկամ, կըսեր, քեզ ասանկ գէր և գեղեցիկ տեսնելով պէտք է ըսել թէ քուկին վիճակդ իմինէս շատ վեր է։ Պատասխան տուաւ շունը թէ ամենուն մէ տարակուսիր տոր վրան։ Իրաւ որ, սիրելի, երբոր մտքս կը բերեմ թէ դուն ուրիշ տեղ չես պառկիր, բայց միայն անտառի մէջ միշտ բաց տեղեր, և շատ անգամ ալ անօթի կը մեռնիս, ամէն աշխարհք քեզ կատեն կը վռնտեն ու կը հալածեն, իմ խելքս չի հասնիր թէ դուն ինչպէս կը տանիս ասանկ խեղճ կեանքը. իսկ ես ամենէն լաւ կերպով կապրիմ. աղէկ կը պառկիմ, աղէկ կուտեմ պարոնի մը տուն, որ զիս շատ անգամ կը սիրէ։ Ուրեմն դուն մըտածմա՝ իրաւունք չունիմ որ զիս ամենէն երջանիկ համարիմ։ Սակայն հաւատա՛ ինծի, և որոշէ որ հիմա իմ հետս գաս, ես ինչ որ ընեմ՝ դուն ալ ըրէ գացած տեղս. ահա առանց դժուարութե իմ երջանկութենս մասնակից կըլլաս։ Պատասխանեց գայլը թէ ի՞նչ բան պէտք է ընել։ Գրեթէ ոչինչ, ըսաց շունը. միայն թէ աւազակութիդ մէկ դի դիր, և տանն տանեն շողոքորթէ զմեր տէրը. ալ ուրիշ բան չի մնար քեզի ընելու, բայց եթէ ուտել խմել հանգիստ քնանալ։ Որկնեց գայլը բոլորովին զուարճանալով. Բարեկամ, թէ որ ուրիշ բան չիկայ, միայն աս բաներով երջանիկ կրնամ ըլլալ, բոլորը կընեմ քեզմէ լաւ։ Աս ըսաց ու գնաց շանը ետևէն։ Ճամբան երթալու ատենը գայլը տեսաւ որ շանը վզին մազերը թափած էին, հարցուց պատճառը։ Պատասխանեց

շունը թէ սա տեսածդ կը պատճառի օղա-
կէն (Ռոռմայէն), որ զիս կը կապէ։ Կը կապէ,
ըսաց գայլը, ուրեմն դուն ուր որ ուզես
չես կրնար երթալ։ Միշտ չէ՝ ըսաց, բայց
երբեմն ամմէն ուզածս ունիմ։ Շէն մնաս,
ըսաւ գայլը՝ ճամբայէն ետ դառնալով, ես
քու վիճակիդ ալ չեմ ցանկար. զի իմ ա-
խորժակս ան է որ քիչ բարիք ունենամ
ու շատ ազատութիւն։ Աս ըսելով առաւ
քալեց։

Բնական է որ ամէն կենդանի կուզէ ազատ ըլ-
լալ. բայց բուն մարդու ազատութիւնն է ինքն իր
բնութենը հրամէլ, ու անկարգ բան չընել, և միշտ
ազատ ըլլալ՝ի կրէշ։

Ոսկի յառակէս չըթողուլ հեշտին,
Ձիրս ազատութեան օժիտ բընածին·
Ազատ կալ յախտէ ազատ 'ի կըրից,
Բուն ազատութիւն է բանականին։
Մի փոխանակեր զայն ընդ ոսկեղին·
Մի ընդ հեշտութեան դընէր 'ի կշռին·
Զի զազատութիւնն 'ի կըշիռ եդին,
Համայն գանձք երկրի ոչինչ կըշռեցին։

## ԱՆԴԱՄՔ ԵՒ ՈՐՈՎԱՅՆ

*Որ անհնազանդ է իւր պետին,*
*Վաղ նուաղեալ ջնջի ինքնին :*

[illegible]
[illegible]

*խա.* Օր մը մարմնոյն անդամները բարկանալով որովայնին կամ փորուն դէմ ըսին. Մենք միշտ աշխատանքով կը տանջուինք, որո՞ւն համար, բայց եթէ մէկ որկրամոլի մը համար, որ ամենևին մեր աշխատանքին ձեռք չի զարներ, ու բոլոր պտուղը մինակ ինքը կուտէ: Անկէ ետև թող գտնէ իր ապրուստն ու ապրի՝ կըսէր ձեռքը. ես ա՛լ բան մը պիտի չիտամ անոր: Ոտքը կըսէր՝ թէ ես անծուլին համար որչափ քալեր աշխատեր եմ, և անանկ յոգնած եմ որ ա՛լ պիտի հանգչիմ: Սրունքն ալ մէկալ դին կըսէր. ինչ կուզէ ըլլայ, ես ա՛լ չեմ կրնար տեղէս շարժիլ: Եւ այսպէս որովայնը երեսէ ընկած շուտ մը սկսաւ տկարանալ. բայց երբոր որովայնը ուժը կորսնցուց, ամմէն անդամն ալ իրենց ուժը կորսնցուցին. և մէկէն հալեցան մաշեցան, ու ետքը անոր հետ ոչնչացան:

[illegible]
[illegible]

իր մտածէն՝ որ լաւ նկատողութենէ : Ով որ մեծին
հնազանդ լըլլալ ըլլայ՝ շատ կը նորայ :

Բանի գեղեցիկ խորհուրդ պիտանի,
Խորհուրդ ըզմարդ պատկառ կալ պետին.
Յորչափ է հնազանդ իւրում իշխանին,
Պայծառ 'ի լուս անդր կայ անդրրդուելի :
Զըքնաղ զարդ հոգւոյ է բանականի,
Այս ունակութիւն ըստ որում ասի.
Բանզի այր հնազանդ պատուէ զյաղթութեն,
Հնազանդեալ իւր տնյաղթէ աշխարհի :

## ԿԱՊԻԿ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Յիմարութիւն է ցանկալ յինչ,
Որ կարեւոր ինքեան չէ ինչ :

Ան բանն որ ձեռք չէ պիտոական,
Ինչո՞ւ հասցնես որ ձեռքէ թողն :

Խր. Կապիկը կաղաչէր աղուեսին որ իր պոչէն քիչ մը տայ անոր : Աղբարիկ, կըսէր, ահա տես ես ամենեւին չունիմ ու դուն շատ ունիս : Իսկ աղուէսն աս անուշ խօսակցութեանս վրայ սկսաւ բոլոր ուժովը ծիծաղիլ, և այսպէս պատասխան տուաւ . Թէ որ ունենայի հարիւր անգամ աւելի շատ պոչ, առաւել կախորժէի գետինն աւլել, քան թէ մէկ կապիկի մը եաին գցել :

Օրինակ է անոնց որ իրենց պէտք եղած բանին եփսէն կ՚իյնին . և երբեմն ասմիկները կ՚ուզեն իմանալ անանկ խորին բաներ որ ոչ խելքերնին կը հանի , և ոչ իրենց պէտք է :

Խըրատէ առակս ոչ ցանկալ այլում,
Ըստանալ այնու զոր ինչ ես բնութիւն.
Զի խուրաքանչիւր կատարելութիւն,
Իւրաքանչիւրում չէ յարմարագոյն:
Կարգիլ է այս բարք և ոչ իմաստնոյն,
Ցանկալ զոր եւեւ յօտարին բարւոյն.
Որով և լսէ զոր ինչ ոչ կարծէ,
Զանարգանաց բան ծաղրող յընկերէ:

ՁԻ ԵՒ ԻՇ

Թշնամանողն ամբարտաւան,
Դժբաղդութեանց լինի արժան:

Որչափ գոռոզն հպարտանայ,
Այնչափ անարգ ուրինւ կըլլայ:

Խղ. Ձի մը գլուխը վեր բռնած հանդէսով կերթար, և վրան ծանրագին զարդարանքներ լեցուն ըլլալով հպարտ կը շարժէր: Մէկ էշ մը անզգուշութե̃ անկէ անցնելով՝ ձիուն ճամբան կարգիլէ: Իսկ ձին գոռոզութեամբ կըսէր անոր. ով անպիտան՝ գոմէն մնացիր իմ ճամբաս արգիլող. կորսըվէ ասկէ, չէնէ վրադ կոխելով կանցնիմ: Սա-

տիկ վախնալուն էշը շուտ մը մէկ դի կը փախչի: Ան ատենը ձին ուզեց իր զօրութիւնը յայտնել թէ որչափ վեր է էշէն. սկսաւ բոլոր ուժովը վազել. բայց վազելովն անանկ չարաչար աշխատեցաւ որ մարմինը վտանգեցաւ, և անկէ ետև անշահ անպիտան եղաւ, մինչև տէրը տեսաւ որ բանի չի գար, հանեց երկրագործի մը ծախեց: Երբոր էշը դարձաւ ջաղացքը, քանի մը օրէն ետև տեսաւ ձին որ արօրը կը քաշէր գետինը փորելու համար, շատ զարմացաւ. և անոր ըրած անարգանքին դէմ կրնար ինքն ալ ընել. բայց մարդավարութեան համար ամենևին բան չըսաց, ու մեծապէս ցաւակից եղաւ անոր:

Օր մը Եզովբոսին հարցուցին թէ Աստուած ինչ կ'ընէ. ան ալ պատասխան տուաւ թէ խոնարհները կը բարձրացընէ, և հպարտները կը խոնարհեցընէ: Ահա աս կը ցուցնէ առակիս միտքը:

Խըրատ պիտանի 'ի բանէս ուսիր,
Մի՛ հպարտանար, այլ յաւէտ երկիր.
Բաղդին է այն ձիըք այնպէս զաղփաղփուն,
Որ տայ և բառնայ ըստ շարժել հողմոյն:
Զփառս նայելով ձեռքեր չքնաղ ձին,
Քանի՛ անարգանս ձգէր օտարին.
Ո՛վ աչա ձգէ զայրօր 'ի գետին,
Արժանի եղեալ թշուառ վիճակին:

## ԵՂՆ ՆԿԱՏԷ ԶԻՆՔՆ Ի ՋՐԻ

*Միշտ սխալի ինքնահաւանն,*
*Եւ ոչ գիտէ զինչ կայ յինքեան։*

Շատ մի հաւնիր ունեցածիդ,
Որ շատ ցաւ ըլլայ անձիդ։

*Խղ. Եղնիկ մը մաքուր ջրին մէջ իրեն նայելով՝ անանկ կը հաւնի եղջիւրներուն բարձրութեանը, մինչեւ կըսկսի սրունքները* (պաճախները) *անարգել, որ խիստ բարակ ըլլալով՝ իրեն անհամեմատ կերեւնային։ Երբոր սիրտը կոտրած ասանկ կը նայէր ոտքերուն վրան, ահա որսորդ մը հասաւ հոն, եւ շները ձգեց անոր ետեւէն։ Եղնիկը մէկէն սկսաւ վազել դէպ 'ի անտառը, ուր տեղ սովոր էր փախչելու. եւ երբոր թեթեւ սրունքներուն վազելովը պիտի ազատէր, եղջիւրները խառնուեցան խիտ* (սըխ) *ծառերուն մէջ, անանկ որ արգիլուեցաւ մնաց։ Ան ատենն եղնիկը տեսաւ որ շները զինքը պիտի բռնէին, միտքը փոխեց ու սկսաւ անարգած սրունքները գովել, եւ գոված եղջիւրներն անարգել։*

Ինքնահաւան հպարտ մարդը իրեն ձեռք բերելու բանին վրայ կուրախանայ, ու իր գեղեցկութեանը կը գովէ. Բայց շատ մարդու կործանման պատճառ եղեր է գեղեցկութիւնը. հոն չէ մարդուն գե-

ղեցկութիւնը խուլթն է, իսկ ինկան գեղեցկութիւն է պարկեշտութիւնը:

*Խրրատ է այս գործ անխմաստ եղլին,*
*Կանացի բնութեամբ յիմար պճնողին.*
*Որ թողեալ զիւր գործ կայ առ հայելին,*
*Պչնու՛նգ զեղ մարմնոյն ոչ ընդ զեղ բանին:*
*Սակայն մի միայն չըքնաղ զարդ ներքին*
*Է գեղեցկութիւն բանեղէն մասին.*
*Քանզի զեղ մարմնոյ առխթ կործանման*
*Բազմիցըս լինի ինքնահաւանին :*

## ՕՁ ԵՒ ԽԱՐՏՈՑ

*Որ հարկանի ընդ հզօրին ,*
*Ի հզօրէն փշրի հեշտին :*

Շատ մի դպչիր ամէն բանին ,
Կը հանդիպիս մէկ փշոտին :

*Խն. Մէկ օձ մը կը մտնէ դարբնին խանութը , և հոն կը գտնէ խարտոցն (թէօրփիւն) ու կըսկսի կրծել: Խեղճ յիմար , կըսէ խարտոցը , գիտես ի՞նչ է կրծածդ . չէ՞ս տեսներ որ ակռաներդ զիս չեն կրնար մաշել . որովհետև ես երկաթը կը մաշեմ, դուն զիս ի՞նչպէս պիտի մաշես :*

Օյին աչքային փանը թոյն ըսըլըն՝ ու ըսըլս՝ հուղէ թոռնաւորէն, որ օրէնք է ըսըլեղու բամ-

Բաաողայ · որոնք զամէնքը խածնելով վար կը զար-նէն · Բայց օր մը մէկ զօրաւորին հանդիպելով՝ անոր ձեռա փալու փեզը իրենք կը ձեռաին ։

Քանի՛ յանդըգնունք յար նման սմին,
Հարեալ ընդ վիմաց փշրեալ նկրտին ·
Եւ զայն ոչ գիտեն թէ ինքեանք մաշին,
Նոքա անվնաս կան յիւրեանց կային ։
Արդ մի՛ յիմարեալ կագեր ընդ վեհին,
Կամ 'ի վէգ մատչիր ընդ առաքինին ·
Ուսիր յառակէս գիտել չափ անձին,
Զի մի՛ հասեսցիս յերեսաց նոցին ։

## ԱՔԻՍ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Որ քան զչափն ուտէ մոլի,
Մոլալըլուկ անդէն տուժի ։

Ափահաւութեամբ թէ որ մոլէս,
Ծոմ պահելով պէտք է ըրկէս ։

խրխ. Մէկ վատուժ աղուէս մը խիստ նեղ ծակէ մը կը մտնէ ցորենին ամբարին մէջն, ու հոն մեծ ուրախութեամբ շատ օր կը նստի կու-տէ · և այնչափ կախորժէ որ քիչ ատենին մէջ շատ կը գիրնայ · անանկ որ երբոր պէտք եղաւ անկէ դուրս ելլել, անկարելի եղաւ որ ծակէն կարենայ անցնիլ՝ ուր ատեղէն որ ներս էր մտեր · մինչև մեծ տարակուսանքի մէջ ընկաւ չգիտէր թէ ինչ ընէ ։ Երբոր ա-

*սանկ մէկ դիէն մէկալ դին կը վազէր, չէր գիտեր ինչ պիտի պատահի իրեն. աքիս (կէլինճիկ) մը դիմացը կ'ելլէ, և աս խորհուրդը կուտայ. Բարեկամ, կըսէր խնտալով, մինչև որ ծոմ պահելով առաջուան պէս վատուժ չըլլաս ինչպէս հոս մտեր էիր, անկարելի է որ կարենաս ազատիլ ասկէ. չէնէ պարապ տեղը կաշխատիս:*

Ինչ մոլութիւն որ ունի մարդ, պէտք է անոր պատիժը քաշէլ որ ազատի. եթէ հպարտ է, պէտք է խոնարհութիւն ընել. եթէ որկրամոլ է, պէտք է պաս պահել ծոմ բռնել, որ մարմինն ալ ազատի, հոգին ալ:

*Տես զարդարացի պատիժ անյագին,*
*Անյագ խնձողի կերակրով արտին:*
*Ոչ գիտէ թէ այն կորուստ է անձին,*
*Եթէ ոչ պահօք հիւծեսցի մարմին:*
*Ահա իրաւունք օրինաց վերին,*
*Որով ոք գործէ նովին իսկ պատժին.*
*Եթէ կերակրօք, եթէ հեշտութեամբ,*
*Եւ եթէ բերմամբ զանազան ախտին:*



ԽԷ. Սիրամարգ և Սոխակ։ ԽԸ. Սարեակ և Հաւորս։



ԽԹ. Առիւծ և Ուլ։ Ծ. Կաքաւ և Աքաղաղ։



ԾԱ. Ճպուռն և Մրջիւն։ ԾԲ. Ագռաւ և Ոչխար։

## ՍԻՐԱՄԱՐԳ ԵՒ ՍՈԽԱԿ

*Ծիլտ նախանձոտ փառասիրին,*
*Այրի մաշի՛նդ փառս ընկերին։*

Նախանձոտին կէրէ հոգին
Երբ կը տեսնէ այլոց բարին։

*ԽԷ. Սիրամարգը կը տրտնջար Հերային թէ ինչո՞ւ համար ա՟ծներն ինծի տուեր կոշտ և անհամ ձայն մը, իսկ սոխակին տուեր անուշ ձայն։ Աս քաղցր ձայնը կըսէր՝ ան պզտի թռչունէ առաւել եւ արժանի էի ունենալ. եւ որ աւելի գեղեցիկ եմ ամէն թռչուններէն, որ օդին մէջ կը թռչին։ Պատասխան տուաւ չա՟ծուհին թէ Ճշմարիտ է ըսածդ, որ դուն ամէն թռչունէն գեղեցիկ ես և ամենէն գէշ դուն կերգես. բայց սոխակը՝ որուն ձայնին կը նախանձիս դուն անիրաւութե՟, ամենևին չի ցանկար քու փետուրներուդ. մ՟ զի գիտէ թէ ա՟ծ իր պարգեւն ամենուն ալ բաժներ է, և ինչ որ կամեցեր է տալ՝ ամէնքը պարտական են որ իրենց ունեցածին վրայ գոհ ըլլան։ Ուրեմն լռէ, ալ մի տրտնջար. վախցիր որ քու հպարտութիւնդ պատժելու համար չըլլայ թէ փետուրներդ ալ առնէ, որով այնչափ ամբարտաւան ես եղեր։*

Կռապաշտները կըսէին թէ Հերայ Դիոսին կնիկն ըլլալով բոլոր աստուածներուն մայրն էր և աշխըրքին աղէկութեան և առատութեան հովար: Այս պատճառաւ սիրամարգն ալ անոր կը տրուէր, որ օրինակ է պըրճգոհ կնկան, որ ուրիշին վրայ ինչ որ տեսնէ՝ կուզէ ունենալ:

Ահա տարացոյց տժգոհ հպարտին,
  Յանդգնի ընդդէմ կալ Ճակատագրին,
  Զամենայն ըղձիւքս զոր գիտէ յայլում,
  Տրտնջայ թէ հիմ ինքեան ոչ ետուն:
Արդ զի փառասէրք ինքնատանջ ծփին,
  Անիրաւ զրկանս ո՞ արար նոցին.
  Հաշին և մաշին ոչ զի զուրկ ինքեանք,
  Այլ թէ զի օտարք հրճուին 'ի բարին:

## ՓԱՅՏԱՀԱՏ ԵՒ ԳԱՅԼ.

Ոչինչ ազդէն խօսք ցնդական,
  Երբ ընդ գործոց ոչ միանան:

Ինչ շահ ըսելով բարի ուզել,
  Գործքով անոր ներհակն ընել:

Խռ. Որսորդները գայլի մը ետևէ կիյնեին ու քշեին. խեղճ գայլը կը փախչի փայտ կոտողի մը քով կը պահուի, և կաղաչէ որ զինքը մարդու չյայտնէ. ան ալ խօսք կուտայ անոր: Նոյնին մէկէն որսորդները հոն հասան ու հարցուցին փայտ կոտողին թէ ո՞ւր է

գայլը՝ քու խուցդ չիպահուի՞ : Մէկ նամարձակ ձայնով մը ուրացաւ փայտ կտրողը թէ հոս չէ · բայց միանգամայն մատովը ալ ցցուց գայլին պահուած տեղը : Վազեցին հոն որսորդները, բայց զինքը հոն չգտան, միայն տեղը տեսան · վ̃ զի գայլը երբ տեսաւ թէ փայտ կտրողին մատնութե̃ յայտնուեցաւ, շուտով փախաւ գնաց իր տեղը : Քանի մը օրէն ետև փայտ կտրողը հանդիպեցաւ գայլին · ու երեսը զարկաւ թէ իրեն ըրած բարերարութեանը համար ինչպէս շնորհակալութիւն մը չըրած փախեր գացեր էր խուցէն : Պատասխանեց գայլը թէ ես ամենևին չէի պակսեր աս պարտքէս, պիտի ընէի քեզի շատ շնորհակալութիւն, թէ որ չիտեսնէի թէ խօսքդ շատ լաւ էր, բայց գործքդ մեծ չար :

Օրինակ է մեր ժամանակի մարդկանց որ խօսք կուտան ու խօսքերնին չեն պահեր · և շատ խաբեբաներ ալ կան որ խօսքերնին ուրիշ է, գործքերնին ուրիշ · այսպէս մարդկութենէ հեռան մարդուս խօսքն ըլլալով շատ մեծ ամօթ է մարդուս պէս խօսք տալ, և անասունի պէս խօսքին վրայ չկենալ:

Խրատեմք մերժել մատնիչ խաբեբայն,
Յորժամ խոստանայ ոչ պահէ զիւր բան·
Զի լոկ բանք ոչինչ գիտեն վճարել,
Գործով պատկի ամենայն փոխճան :
Խոստանալ պահել մարդոյ է պատկան,
Ոչ սուտ մերժել զիւր խօսս իբր անբան·
Քանզի անասունք զեղջերաց կապին,
Լեզուաւ և բանիւ մարդ կապի միայն :

## ՍԱՐԵԱԿ ԵՒ ՀԱՒՈՐՍ

*Հետաքրքրեալն ընդ այլոց բան,*
*Զիւր կործանումն ածէ ինքեան :*

Շատ մի քններ ուրիշին բան ,
Թէ չէ կիյնիս մահին բերան :

*խթ. Սարեակ մը կը տեսնէ հաւորսն որ իր որոգայթը կը լարէր. Հարցի ի՞նչ կընես ըսաց :| Պատասխանեց հաւորսը թէ քաղաք կը շինեմ: Այս խօսքովս հետաքրքրութիւն մը ունեցաւ սարեակն ու եկաւ որոգայթին քով, և անանկ մօտեցաւ որ տեսնէ. բայց մէկէն բռնուեցաւ որոգայթին մէջ: Ան ատենը կանչեց հաւորսին. Ողորմելին, եթէ միշտ ասանկ քաղաքներ որ շինես՝ դուն ամենէն քաղաքացի պիտի չտեսնես անոնց մէջ :*

Շատերը կան որ իրենց բանը գործքը կը ձգեն՝ ուրիշին բանին ետևէ կիյնին, և մէկին ըրածը մէկալին առջին տանելով սատանային յետքը կիյնին ևնագոյն սարւակին մէջ, որ է (*խայրաթաւուխ*): Եւկլիդէսին հարցուցին թէ աստուած ինչ բանով կը զուարճանայ. ան ալ ըսաւ թէ ան միայն գիտեմ որ հետաքրքիր մարդը կատէ ու չի սիրեր :

Մի՛ հետաքններ վարպարս օտարին,
Խըրատէ առակս կալ զգոյշ յանձին.
Քանզի որոգայթ լարեալ խարդախին,
Կախարդէ ըզքեզ ձգել 'ի նմին:
Զի՛նչ օգուտ գործէ գիտել զընկերին,
Երբ ոչինչ գիտէ զինչ ունի յանձին.
Լաւ է հետամուտ ելանել ինքեան,
Քննել զիւր գնացս ուղղել զնոսին:

## ԱՌԻՒԾ ԻՐ ԵՒ ԱՔԱՂԱՂ

Որ խիզախէ ընդդէմ վեհին,
Անդէն լինի կոխան ոտին:

Մի՛ դէմ ելլեր ահեղ դէմքին,
Կոխան կըլլաս ներքեւ ոտքին:

ծ. Առիւծը կը վախնայ կըսեն աքաղաղին ձայնէն. օր մը աքաղաղը երբոր սկսաւ երգել՝ առիւծ մը կանցնէր անկէ. առիւծը ձայնը լսածին պէս՝ անանկ սաստիկ վախցաւ որ շուտ մը սկսաւ փախչիլ. ան ատենը մէկ էշ մը տեսաւ ասոր փախչիլը, որ իր համբան կերթար: Անխելք էշը տեսնելով առիւծին անանկ վազելը, կարծեց թէ իրմէ վախնալուն կը փախչի, սկսաւ ետեւէն իյնիլ: Բայց առիւծը նայեցաւ որ աքաղաղին ձայնը ա՛լ չի գար՝ մէկէն դարձաւ բռնեց էշը փառատեց: Իսկ էշը մեռնելու ատենն սկըսաւ պոռալ. վայ ինձ, կըսէր, ես ինչ ան-

խելք եմ եղեր․ ինծի պէտք էր որ քաջու-
թին ցցընելու համար յիմարութեամբ գամ
տախուծի մը հետ լինիմ։

[illegible]

Տեսէ՞ր պատուհաս յիմար ակարին,
Որ երբև հզօր 'ի Ճակատ մարտչի․
Դառնայ ընդ կրունկն հզօր ամենին,
Գիշատէ ըղնա անդ 'ի Ճակատն։
Ուսիր Ճանաչել զոյժ և չափ անձին,
Եւ մի խրոխտանար ընդդէմ առուծին․
Բազումք յիւրեանց տան խիզախեն 'ի սուր,
Անդէն կորանան 'ի տես հզօրին։

## ԻԸ. ՀԻՒԱՆԴ

Գիշակերաց խորհուրդ և կամք,
Ի պարարել այլոց մահուամբ։

[illegible]

Ծնօ․ Էշը վտանգաւոր հիւանդութեն մէջ էր․ բայց երբոր սկսաւ առողջութեան գին

դառնալ, ձայն մը տարածուեցաւ գայլերուն և շներուն մէջ Թէ էշը հաշտեւալք է : Շները մէկէն վազեցին որ մեռածին պէս կաշին յափշտակեն․ երբոր կըսպասէին անհամբերութեամբ ինչ ձայն կայ, և իշուն պառկած տեղէն դուռը ծակէն ներս կը նայէին, տեսան հոն իշուն ձագը․ կանչեցին անոր աս բարեկամներս Թէ որդեակ կաղաչենք մեզի իմացուր ինչպէս է մայրդ․ գիտնաս որ մեծ ցաւ ունինք անոր համար : Պատասխանեց ձագը խստութեամբ․ շատ լաւ է՝ ձեր չուզածէն աւելի :

Որկրամոլութեան մարդիկ կը նային որ իրենց փորը կշտանայ, ուրիշին ինչ կըլլայ ըլլայ՝ չեն հոգար ուրիշներուն : Մարդ մարդու օգնութիւն ընելու համար ծնած է, ոչ թէ ինքնութեան :

Այս դատարկակեաց բարք պորտաբուծին,
Տքնի կերակրել մարմնով տկարին․
Իբրև բարեկամ ցաւակցի նմին,
Պատուել զնա միայ առ սեմին :
Մարդ ընկերական, մի ըստ գազանին
Խոշտանգեր զընկերն առ օգտի անձին :
Կարեկից լինել ուսար 'ի բնութեան,
Բընութենակից վշտաց օտարին :

## ԿԱՏՈՒ ԵՒ ՄԿՈՒՆՔ

*Մի՛ մերձենար նենգամտին,*
*Մանրիս ծախիս 'ի ձիրանին ։*

Մի՛ հաւատար դրսէն տեսքին,
Նայէ ինչե՛ր որդէն ջանջնին ։

*Ծը. Կատու մը գրեթէ մկներուն ցեղը ջնջեր էր. կամեցաւ որ մնացածներն ալ ջարդէ հատցընէ ։ Բայց կատուին անբաղդութեը մկներն աւելի խորագէտ էին. ուստի կատուն մեծ զգուշութեամբ կը նայէր որ ձեռք ձգէ, և չէր յաջողէր որ զանոնք բռնէ ։ Ցակայն ես զանոնք պիտոր բռնեմ, ըսաց կատուն, ուզէն չուզէն ։ Աս ըսաց ու վրան ալուր ցանեց, կծկեցաւ մնաւ խմորին տաշտին մէջ ։ Մէկ մուկ մը տեսաւ ան կլոր ձերմակ բանը, կարծեց թէ մսի կտոր է, մօտեցաւ քովը. իսկ կատուն թաթիկներուն վրայ զայն գտնելով բռնեց ձանկերովը. և ուրիշ մուկ մ'ալ մօտեցաւ հոն, և ասոր ետեւէն բոլոր մկները հոն ժողվեցան. բայց անոնցմէ մէկը ետ չդարձաւ, բոլորը հոգացան ։ Ամէնէն ետև մէկ խռֆած ծեր մուկ մը գլուխը ծակէն դուրս հանեց, ու մէկէն չորս դին նայելով առանց առաջ երթալու սկսաւ ան ալըրոտ գնտին վրայ մտմտալ ։ Հուսկ յետոյ գլուխը շարժելով ըսաց. Բարեկամ,*

քուկին ասանկ ճերմկնալդ իմ առջևս բան մը չարժեր · կուզես ալուր եղիր, կուզես պարկ կամ տաշտ եղիր, ինչ որ կուզես եղիր, հազար տարի անցնի՝ մէկ անգամ մը չեմ մօտենար քեզի:

Կեղծաւոր ու խաբեբայ մարդէն միշտ պէտք է հեռու փախչիլ, ինչպէս դրսէն սուրբ երեւնայ: Փորձ ու խոհեմ մարդիկ լաւ կը ճանչնան ասանկ մարդը· պէտք է անոնց խրատին հետեւիլ:

Տեսանե՞ս հնարս հնարագիտին,
Որոգայթ լարէ ընդդէմ ոսոխին ·
Որչափ խորագէտ իցէ թշնամին,
Այնքան զառանանոյ ծախել զնուին:
Ուսիր 'ի ծերոյն չմերձիլ չարին,
Թէ և լուսազգեաց իցէ արտաքինն ·
Արտաքուստ բազումք պայծառ երևին,
Այլ ներքին նոցա չար և խաւարին:

## ԱՌԻՒԾ ԵՒ ՈՒՂ

Խրոխտալ հեռուստ դէմ առիւծին,
Է անխոհեմ գործ տկարին:

Հեռուէն դէմ խօսիլ մեծին,
Անխելք գործ է յիմար տղին:

Ծփ. Այծին ձագը բարձր պատուհանէ մը նայելով կը տեսնէ առիւծ մը որ կանց-

՚նէր վարէն : Բայց բաղդ ունեցաւ որ բարձր տեղը զինքն ազատեց անոր ձեռքէն : Ուստի սկսաւ կծու խօսքերով անարգել զաախուծը և թշնամութեամբ նախատել : Իսկ աախուծը տեսաւ որ չի կրնար համնիլ՝ խոժոռ նայելով ըսաց · Ով անզգամ չար , դուն զիս չէիր կրնար նախատել , աղօթք ըրէ կեցած տեղիդ որ զքեզ իմ ձեռքէս ազատեց · Թէ որ քեզ ձեռք ձգէի , շատ տարբեր պիտոր խօսէիր :

Տէր մարդը մեզ հեռուէն շատ մեծ կը խօսի , և մեծաբանելով ուրիշը կարհամարհէ · Բայց երբոր մօտ կուգայ , ըեզին կը պատուի վախէն : Չխածնող շունը հեռուէն կը հաչէ , կըսեն :

Այս յիմարական գործ է անփորձին ,
Որ փակեալ՚ի տան գրգռի ընդ վեհին ·
Բայց իբրև արտաքս ելանէ անտի ,
Զի՞նչ ունի առնել առաջի նորին :
Մի՛ հակառակիր ընդդէմ հզօրին ,
Մի՛ ըղբարկութիւնն ածեր քում անձին ·
Քանզի մեծարանք պատիւ ՚ի փոքուէ ,
Եւ ոչ անարգանք մեծաց պատշաճին :

## ՄԱՐԴ ԵՒ ԱՌԻՒԾ

*Անիրաւ է պարծիլ ընդ գործ ,*
*Զոր այլքն առնեն , ինքն է անգործ ։*

Ինչ շահ պարծիլ նախնեաց վրան ,
Երբ ինքն անխելք ըլլայ մէջ բան ։

*Ծն․ Մարդն ու առիւծը միատեղ ճամբորդութիւն կընէին․ եղաւ որ ճամբուն վրայ տեսան արձան մը, որ կը ձեւացընէր կորիճ ըմբիշ (փէհլիվան) մը, որ կըսպաննէր մէկ առիւծ մը ։ Աս որ կը տեսնես , ըսաւ մարդն առիւծին , քեզ կիմացընէ թէ մենք ձեզմէ շատ աւելի կորիճ և աւելի սրտոտ ենք ։ Պատասխանեց առիւծն անուշ ձայնով մը․ թէ որ մեր մէջն ալ գտնուէր քարակոփ կամ արձան շինող ինչպէս ձեր մէջ կայ , դուք ալ պիտի տեսնէիք շատ աւելի մարդիկ առիւծէ մեռած , քան թէ առիւծ մարդէ սպանուած ։*

Հին ատենը Հերքիւլէս անունով կորիճը առիւծ մը մեռցուցեր էր․ ատոր քարէ շինած արձանը շատ տեղ դրած կար , որ տեսնողները սիրտ առնեն ։ Օրինակ է ասոնց որ իրենց նախնեաց մեծութեան վրայ կը պարծին , և իրենք բանի մը շահ չունին ։

*Զինչ օգուտ պարծիլ ը̄ գործ դիւցազանց ,*
*Պանծալ՚ի վերայ նախնեաց և ազանց ․*

Յորժամ ինքն է զուրկ յառաքինութենէ ,
Աննման նոյն քաջութեանց խելաց :
Յամօթ սերնդոց անմիտ անարեաց ,
Որ նախնեաց զարարս համարին իւրեանց·
Որով և լինին վեհափառ զարմին ,
Վախճան և աւարտ ազնիւ պերճութենէ :

## ՄԱՐԴ ԵՒ ԼՈՒ

Փոքր վէսս ալիկարին
Մեծ համարի ընդդէմ մեծին :

Թէ շաշ բաշ գար ճէ·ատէն ճ·ատրէն ,
Տէ· Բէ Ֆընըէ՛ր Նըմէր Պէծէն :

ԾԷ . Լուն մարդու մը Թևը խածաւ · ցաւն որ իմացաւ մարդը՝ անանկ անհանգիստ եղաւ որ ուզեց բռնել և մէկէն ճզմել· ուստի ձեռքն երկնցուցածին պէս բռնեց, պիտի ճզմէր· լուն ըսաւ, Թէ մտմըտա որ ես քեզ միայն խածայ, դուն կուզես զիս մեռցընել, ափսոս ինծի· ան ատենը ես ալ բանիս արժանի կըլլայի, Թէ որ ուզենայի քու կեանքդ վերցընել: Պատասխան տուաւ մարդը· եԹէ ունենայիր կարողուԹիւն ընելու, անտարակոյս կընէիր: Աս ըսելով սպանեց մեռցուց :

Որչափ ծանր յանցանք մը մարդն ընէ այ դէմ, մեծ
ը պատիժն · Հասն ալ այ մեծութենէն կըլլայ մեծը,
ւէ որ կարողութիւն ունենար օտեղծողին դէմ ա-ւէ-
ն լարութիւն ընելու՝ կընէր · Թէպէտ գործողը ուրիշ
, անոր համար օրէնսդիրները կը պատժուին լա-
ւալար :

Այսա հատուցումն արար օրինին,
Որ մահու պատժէ խայթիչ փանաքին ·
Փանաքի մարմնով այլ խայթն է ուժգին,
Եթէ էր կարող գլուէր զմարմին :
Օրինակ է այս օրինազանցին,
Մարդոյն ընդդէմ կալ օրինաց վերին ·
Որչափ նա մեծ է և մարդն չնչին,
Այնչափ մեծ յանցանք՝ի գործոց չափին:

## ԿԱՔԱՒ ԵՒ ԱՔԱՂԱՂ

Թէ խիստ ինչ է անտանելի,
Համբերութեամբ է տանելի:

Որչափ դժուար խնդիր բան ըլլայ,
Համբերողէն կը կակղնայ:

ծղ. Արտի տէրը մէկ կաքաւ մը գնէ կը
նէ տանը բակին մէջ · ան որ տեսան աքա-
ղաղները, որոնք չէին քաշեր աստնկ օտարա-
կանները, վազեցին վրան ու կտուցքով ծե-
ծեցին · անկէ ետև ամէն օր աստնկ կընե-
լէին խեղճը : Ուստի կաքաւը քաշուեցաւ

հանոցին մէկ կողմը երբոր տրտմած կու֊
լար, տեսաւ որ աքաղաղներն իրենց նախան֊
ձին համար իրարու հետ կը ծեծկուէին՝ ը֊
սաց․ ահա ես ալ միտքս դրի որ ասկէ ետև
համբերեմ․ որովհետև տեսնեմ կռուարար֊
ներն երբոր իրարու միս կուտեն այնչափ
կատղելով, ինչպէս կրնան ինծի հետ ա֊
նուշութիւ վարուիլ։

Կատարն է քէքլիկ Թութունը․ Խոնարհ ըլլալով
օրէնքն է համբերողին․ որ տարիներուն նայելով
[illegible] , Գիտնալով Թէ այն մարդ
[illegible]։

Զխարդ դժնդակ բարք կռուասիրաց,
Կոփեն հարկանեն զընկեր բարեկեաց․
Երբ ոչ գտանեն զայլ ոք յօտարաց,
Անհամբոյր դահճիճ լինին իրերաց։
Իսկ յաղթող նոցին սիրտ համբերողաց,
Որ զերթ ապառաժ անբեկ կայ յալեաց․
Որչափ հարկանեն կոհակք եզերաց,
Անդէն ընկրկեալ դառնան խորտակած։

---

# ՃՊՈՒՌՆ ԵՒ ՄՐՋԻՒՆ

Որ ոչ գործէ յամարայնի,
Ի ձմեռան սովու նքթի :

Թէ ապէնէն բան չէհոգաս,
Ցեպոյ աղքատ խեղճ կը ճաս :

ԾԷ. Ճպուռը բոլոր ամառուան մէջ ուրիշ բան չէր մտածեր, միայն թէ ձայնովը միշտ կը զուարճանար. աս կենդանին ձմեռուան մօտ մեծ նեղութեան մէջ գտնուեցաւ, որ բան մը չունէր ուտելու : Ուստի մտմըտալով թէ ձմեռն ինչպէս պիտի տարի, գնաց մրջիւնին աղաչեց որ իրեն քիչ մը ցորեն փոխ տայ. թէ որ ըսաց ինծի բան չիտաս, գիտնաս որ իմ անօթի մեռնելս կուզես. վասն զի երդում կընեմ որ ամենեկին ապրուստ մը չունիմ պահած : Պատասխան տուաւ մրջիւնը, թէ շատ գէշ բան է ըրածդ. զի պէտք էր գալիքը մտածելով ինծի պէս ընել, աշխատիլ, և կերակրով համբարները լեցընել. հապա դուք ինչ կընէք ամառուան գեղեցիկ եղանակին մէջ: Ես գիշեր ցորեկ կերգէի, ըսաւ ճպուռը: Ծաղր ընելով ըսաց մրջիւնը. իրաւ է որ դուք ուրիշ բան մը չէք կրնար մտածել, բայց միայն ուրախանալ. ուրեմն ինծի մտիկ ըրէ, ինչպէս որ սկսար՝ կատարէ աս տարին. որովհետեւ

*ժամանակիդ կէսը ծախեր ես երգելու համար և մէկալ կէսն ալ քեզ կը մնայ որ պար խաղաս ։*

Ճպուռն է ճըռճըռ պէօճէյին, որ օրինակ է դատարկ ու շատախօս մարդկանց. որ ասդին անդին ժամանակնին կանցընեն քաւծ բաներով, յետոյ ներքան ուրիշներուն գլխացաւութիւն կըլլեն որ պահեն ուերենք ։ Ով որ ըսել գիտէ, շատ բան գիտէ կըսեն ։

*Վայելուչ խրատ է անգործ ծուլին,*
*Որ դատարկ ծախէ զիւր կենաց բարին.*
*Այլ գայ ժամանակ դառն եղանակին,*
*Կարօտի այլոց ծաղր եղեալ նոցին ։*
*Զի՞նչ շահ սին ձայնիւ լնուլ զվայր օդին,*
*Եւ դատարկ թողուլ զիւր տուն զիւր տեղին*
*Ջանա 'ի ժամուն գործել զպիտանին,*
*Ամբարեալ պիտոյս վասն ապագային ։*

## ԱԳՌԱՒ ԵՒ ՈՋԽԱՐ

*Զուարճութիւն անխրատին,*
*Է վտանգնել զհեղահոգին ։*

Անզգամը կուրախանայ,
Երբ խոնարհին ցաւ կուտայ ։

ԾԷ. Ագռաւ մը խաղալով կը թռչըտէր ոչխարին բոլորտիքը, և շատ անգամ կը-

*մռունցքով ալ զարնելով կը զուարճանար։ Ես քեզ զուարճացընելու համար եղեր եմ ըսաւ ոչխարը․ Ինչու համար միշտ իմ վրաս կուգաս ու աս շանը վրայ չես երթար, որ կը նայի ոչխարները։ Անոր համար ըսաց ագռաւն ասանկ կընեմ, որ քեզմէ շատ՝ անկէ կը վախնամ․ գիտնաս որ ես աւելի աղէկ կը վարուիմ չարերուն հետ, քան չարերը բարիներուն հետ։*

Օրինակ է անգամ մարդկանց, որ հեշտահոգի մարդուն վրայ կը խնդան ու ծաղր կ'ընեն․ Բայց շատ անգամ ըրածնին կը գտնեն։ Ով որ ապառուծէ կը ձախնայ, դուն անկէ մի՛ ձախնար, կըսէ Իիւոքան։

*Ահա այս է գործ չար անիրաւին,*
*Որ չարիս գործէ ընդդէմ խոնարհին․*
*Քանզի միշտ հարուած տանել անմեղաց,*
*Միակ զբօսանք է չարասիրաց։*
*Արդ մի՛ նմանիր դու անզգամաց,*
*Մի՛ ծաղրաբեր լինիր անմեղաց․*
*Ջանա հետևիլ բարուց խոնարհին,*
*Որ խոնարհութեամբ տանի իւր նեղչին։*

## ԿԱՂՆԻ ԵՒ ԵՂԷԳՆ

Մեծաւանին փոյթ հասանէ,
Ծաղր լինել յիւր վեհ բանէ։

ՄԷ շատ պարծիր ԹԷ ուժով ես,
Հով մը կուգայ խեղճ կընէ քեզ։

ծթ. Կաղնի ծառը կը խնդար եղէգին վը-
րայ. և նախատելով կըսէր, Թէ պզտիկ հո-
վէ մը կը շարժիս. ես շատ կը խղճամ քու
վրադ, երբոր կը տեսնեմ ջրին քով անկած.
ուր տեղ ուրիշ կերպ չես կրնար կենալ,
բայց եթէ գլուխդ ծռած տկար հովերուն
առջին։ Ինծի նայէ՝ տես ինչ եմ բարձրա-
ցեր, և ինչպէս հաստատ է իմ բունս և ար-
մատս, որ սաստիկ հովերու փոթորիկներու
դէմ կը դնեմ։ Երբոր ասանկ կը պարծենար,
յանկարծ փոթորիկ մը ելաւ եկաւ կաղ-
նիին և եղէգին զարկաւ։ Աս հովը որչափ
որ փչեց չկրցաւ վնասել եղէգին. որով-
հետև հովին առջին խոնարհելով՝ ուրիշ բան
չեղաւ, միայն թէ շարժեցաւ։ Իսկ բոլոր մը-
նասը կաղնիին եղաւ. վասն զի երբոր խիստ
դէմ կեցաւ հովին, ու կարծեց հաստատուն
մնալ փոթորիկին դէմ, մէկ կատղած հով մը
զարկաւ անոր, և անանկ ցնցեց, որ շրջեց
տապալեց ծառը։ Ու այսպէս ահա աս
հպարտ ծառը եղէգին առջին ընկաւ, որ այն-
չափ նախատեր էր զայն։



ԾԹ. Կաղնի և Եղեգն։ Կ. Ոզնի և Գայլ։



ԿԱ. Աղուէս և Աքաղաղ։ ԿԲ. Աքաղաղ և Հնդկահաւ։



ԿԳ. Գայլ և Շունք։ ԿԴ. Կատու և Աքաղաղ։

Խրատ է մեծամեծ հարուստներուն, որ հպարտութբ̄ չանարգեն աղքատները․ Բայց շատ անգամ ասոնք իրենց վիճակով հանգիստ կը մնան, և հարուստները աշխարհքիս հոգերովը կիյնան կը կրծուին։

Այս է պատուհաս ամբարտաւանին,
Որ խայտառակի յետ հպարտ բանին․
Այն մեծաբանող ամբարձեալն յերկին,
Տես ինը 'ի հողմոյ շրջի 'ի գետին։
Քանի մեծատունք նման են ամին,
Անարգեն զաղքատն պանծան 'ի բաղդին․
Բայց 'ի գալ հողմոց հոլովեալ անուին,
Խոնարհք կան կանգուն ինքեանք կործանին։

## ՋՈՐԻ ԵՒ ԳԱՅԼ

Որ գուբ փորել այլոց ջանայ,
Ինքն սահեալ 'ի նոյն մնայ։

Ով կը փորէ փոս ուրիշին,
Ինքը կիյնայ մէջը փոսին։

Կ․ Գայլը կը տեսնէ մէկ ջորի մը, որ խոտ կուտէր դաշտին մէջ․ մէկէն ալնոր յարձակելու կ'ուզէր վրան․ բայց երբոր տեսաւ ջորիին կտրուկութիւնը և հասակին զօրութիւնը որ կըր-նար ինք զինքը պաշտպանելու՝ միտքը դրաւ թէ ան լաւ կըլլայ խորամանկութբ̄ ձեռք ձգել, քան թէ ուժով։ Ուստի շուտ մը մօ-

տեցաւ անոր, և զինքը խիստ վարպետ բժիշկ ձևացընելով ուզեց իրեն գել ընել: Ես բաւական վարպետ եմ որ եթէ ունիս հիւանդութիւն՝ մէկէն կառողջացընեմ: Իսկ ջորին, որ վախ ունէր անկէ, պատասխանեց թէ դուն զիս մեծապէս կամըչցընէիր, թէ որ ուզէիր հանել ոտքս մտած փուշն որ խոցոտեր է զիս: Աս ըսելով վերցուց ետևի ոտքը ցցուց գայլին. իսկ գայլը որովհետև ուրիշ բան չէր ուզեր, միայն յարմար ժամանակ կը փնտըռէր որ ջորիին վրայ ցատկէ, մօտեցաւ անոր. և երբոր սկսաւ նայել, ջորին անանկ կից մը զարկաւ գայլին, որ քիթը բերանը ճզմեց փախաւ: Ան ատենը գայլը բոլորովին տրտմած ըսաւ ինքիրեն. արժանապէս աս բանն ինծի եղաւ. պէտք էր որ բժշկութիւն ընէի ես, որ ուրիշ բան չեմ, բայց միայն մսագործ:

Արթուն կեցէր որ անզգամ մարդու ձեռք չիյնաս. Ու թէ ընկար, նայէ որ խելք մը բանեցընելով անզգամին ձեռքէն ազատիս. վասն զի մարդուս զէնքն է իրեն խելքը:

Քանի՛ զխպաւոր այն անզգամին,
Կրել զայս չարիս զոր նիւթէր նմին.
Քանզի վրիպանք խորամանկ չարին,
Զարաչար լինի՝ ըստ առակողին:
Այս դաժան բնութեան է քանասարին,
Պնդիլ զհետ այլոց պատառել զմարմին.
Որչափ ոք ցանկայ զայլս կեղեքել,
Այնչափ և յայլոց կրէ զարժանին:

## ՎԻՇԱՊՔ

*Բազում գլուխք և տանուտեարք,*
*Են իրերաց խափանարարք :*

Թէ տան մը մէջ շատ գլուխ կայ,
Տանը բանը շատ գէշ կըլլայ :

*կա̃· Երկու վիշապ կուզէին ցանկէ մը կամ փշոտ տեղէ մը անցնիլ, որ աւելի խիտ ըլլալով արգիլելի էր անոնց ճամբան : Մէկ վիշապն ունէր մէկ գլուխ մը և շատ պոչ. մէկալը մէկ պոչ մը ունէր, և շատ գլուխ : Աս երկքինը բոլոր ուժովը ջանաց՝ չկրցաւ անցնելու. վասն զի շատ գլուխ ըլլալով մէկմէկու արգելք կուտային. ուստի ուրիշ բան չկրցաւ ընել, բայց եթէ մէկ ծակ մը բացաւ, որ մինակ մարմինը հազիւ կրնար անցնիլ : Իսկ մէկալ վիշապը քիչ աշխատանքով բացաւ իր ճամբան. վասն զի մինակ գլուխը բացաւ ծակ մը հանգստութբ անցաւ, ու քաշեց պոչերն ալ անկէ անցուց. և անանկ լաւ ըրաւ որ անցան անկէ գլուխը, պոչերը և բոլոր մարմինը :*

Խրատ ըլլայ ամէնուն, որ տուներնուն մէջ երկու-
քէծ և շատ գլուխ ըլլեն, որ իրարու չհնազանդե-
լով կաւրեն տունը. Թէ որ մէկ բանին գլուխը մէկ
հատ ըլլայ, ամէն բան կարգի դնելով՝ բոլորն իրեն
հնազանդ կըլլան, ու դիւրին բանն առաջ կերթայ :

Տես զիարդ բազում գլուխք մի մարմնին,
Են արգելք միմեանց 'ի գործ պիտանին.
Զի իւրաքանչիւրք են ինքնագլուխ,
Ոչինչ վճարեն՝ միան անգլուխ:
Այս օրինակ է իշխանաց պետաց,
Որ տիրել կարծեն անկախ յիրերաց.
Բայց երբ չեն կարգեալ ընդ միով գլխով,
Են բազմագլուխ անբաժ 'ի բարեաց:

## ԿՐԻԱՅ ԵՒ ՆԱՊԱՍՏԱԿ

*Աշխատութիւն միշտ շարունակ,*
*Յաղթէ տանու ըղձայղթանակ:*

Թէ անհանգիստ ջանաս յոգնիս,
Ամենէն լաւ պտուղն կը շահնիս:

ԻԷ. Օր մը նապաստակը կը խնդար կրիային վրայ, և երեսը կը զարնէր անոր խիստ ծանրաշարժութիւնը: Եկոր ըսաց կրիան դաշինք դնէ՞ բռնենք. ես քեզմէ շուտ կը հասնիմ ան ծառին, որ անկած կը տեսնես արտին ծայրը: Պատասխանեց նապաստակը թէ մէկ կրիայ մը ինչպէս պիտի նապաստակին հետ վազելու ելլէ, քու խելքդ դարձեր է եղբայր, գնա բանդ: Աս կարգէ դուրս բանին զիս հրամցընելէդ առաջ պէտք էր մտմըտալ, թէ ես չորս անգամ ցաթկեմ այնչափ ճամբայ կընեմ, որ դուն չորս շաբթուան մէջ չես կրնար ընել: Հոգ չէ, ըսաւ

կրիան. և ատեն չկորսընցընելով սկսաւ երթալ: Իսկ Նապաստակն առանց հոգալու թողուց որ կրիան առաջ անցնի. երբեմն խաղ կընէր, երբեմն ետ կը դառնար, և խոտ ուտելով կը զուարճանար. ինքիրեն կըսէր թէ ես ապահով եմ, որ կորսընցուցած ժամանակս շուտով կրնամ շահիլ. սակայն կրիան միշտ առաջ կերթար: Երբոր տեսաւ Նապաստակը թէ երկու մատ մնացեր է, որ կրիան հասնի ծառին, շուտ մը ցատկեց ու կայծակի պէս վազեց. բայց բանը բանէն անցեր էր. վասն զի կրիան հոն հասնելու վրայ էր. և ինչ որ ըրաւ Նապաստակը չկրցաւ, կրիան առաջ հասեր էր. և այսպէս կորսընցուց իր դաշինքը:

Կրիան այսինքն Թոսպայլին օրինակ է աշխատասէր մարդուն, որ միշտ աշխատելով որչափ խեղճ ըլլայ առաջ կու գայ: Իսկ Նապաստակն է օրինակ անհոգ մարդուն. որ ծոյլ ատենն անցընելով՝ ուրիշները կու գան կ'անցնին՝ ինքն անանկ կը մընայ: Ամէն բանի յաղթող է աշխատութիւնը, կ'ըսէ Քիւլիստան:

Ահա տեսարան ինքնահաւան հեզգին
Ինքնապանծ խօսէ փնացս օտարին.
Բայց նա անվաստակ գոլով յիւր ուղին,
Յաղթէ հասանէ իւր նպատակին:
Քանի պատկառանք այն դանդաղկոտին,
Նրբ ինքն է մեղկեալ, այլք յառաջ ձգին.
Զինչ օգուտ ստանուլ լեռնէ 'ի լերին,
Զի աշխատասէրն հասանէ կիտին:

## ՈԶՆԻ ԵՒ ԳԱՅԼ

*Ոչ վայրապար բաշխեց բնութիւն*
*Իւրաքանչիւր զէն զօրութիւն:*

Ինչ որ ունիս աղէկ պահէ,
Որ գործածես երբոր պէտք է:

*կգ. Մէկ գայլ մը կը հանդիպի ոզնիին, և շատ անօթի ըլլալով առաջ կը վազէ որ ուտէ: Իսկ ոզնին տեսածին պէս զայն՝ վրայի փշերը մէկէն շտկեցուց: Գայլը կատղելով չէր գիտեր ուր տեղէն բռնէ. ուստի խորամանկութեամբ ըսաւ անոր, եթէ կամենաս քեզմէ հանել բոլոր աս փշերը՝ շատ աղէկ կըլլաս. վասն զի անոնք զքեզ խիստ գէշ կերևցընեն. ինծի մօտիկ ըրէ ու ատէ ետև նետէ զանոնք: Աստուած չընէ, ըսաւ ոզնին, աւելի շտկեցընելով փշերը. բարեկամ, թէպէտ աս փշերս զիս գէշ կերևցընեն, բայց շատ լաւ կը պաշտպանեն քու ձեռքէդ:*

Ոզնին է քիվիրի. ասոր մէկ տեսակը կայ ըսնւոր, որ փշերը կը նետէ կռուին թշնամիին կը զարնէ նետի պէս: Օրինակ է խոհեմ մարդուն, որ միայն իր պաշտպանութեանը կը նայի, և ամենևին ուրիշի խօսք մտիկ չըներ, որ վնաս մը ըլլայ իրեն:

Խրատէ առակս զգոյշ կալ յանձին,
Չթափել զգէնս բանիւ խարդախին.
Զի նենգել սուտել է խորհուրդ նորին,
Ոչ թէ կարեկցել իբրև մտերիմ:
Արդ մի ապահով կար ընդ թշնամին,
Եւ մի հետևիր խորհրդոց նորին.
Զինեա համձարով ընդդէմ սոսխին,
Զի զէն մարդոյն է համձար բնածին:

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՔԱՂԱՂ

Որ ոչ ուժք բարի առնէ,
Յայլոց բարիս ոչ տեսանէ:

Մէկն որ մարդու բարիք ընէ,
Ուսկից բարիք պէտք գտնէ:

Կից․ Աղուէս մը շատ հաւեր յափշտակե-
լէն ետև վերջապէս ընկաւ որոգայթին մէջ,
որ հողագործ մը լարեր էր անոր համար
տանը բակին մէջը: Երբոր անօգուտ կաշ-
խատեր և կը ջանար որ ազատի, տեսաւ ա-
քաղաղ մը: Եղբայր ըսաւ զգոյշ կեցիր,
կերդուընցընեմ քեզ որ զիս չի յայտնես. Թէ
որ կուզես ինծի հարկաւոր և մեծ ծառայու-
թիւն ընելու, վազէ շուտով գնա խմացուր
աղուեսներուն՝ իմ գլխուս եկած փորձանքը.
և ըսէ իրենց որ կաղաչեմ գան զիս ասկէ ա-
զատեն: Իսկ աքաղաղը գոչեց իր սրտին մէ-
ջը եղած ուրախութիւնն որ կարենայ վրէժ

առնել անկէ • երդում՝ ըրաւ անոր խորհուր-
դը լաւ պահելու, և ամենայն կերպով դրած
պարտքը կատարելու • բայց շատ հեռու էր
խօսքը պահելէն • վասն զի վազեց գնաց շէ-
տակ տանտիրոջը պատմեց բոլորը • անալ
մէկէն եկաւ բռնեց սպանեց աղուէսը, որ
մեռնելու ատենը լալով կըսէր • վայ գլխուս
պէտք էր որ ես օգնութիւն խնդրէի աքա-
ղաղէն, որուն այնչափ հաւերը խղճեր եմ:

Պէտք է յաջողութեան մէջ բարեկամ ունենալ՝ ա-
մենուն բարերարութիւն ընելով, որ ձախորդութեան մէջ
ինքն ալ գտնէ : Այսոր համար Աղեքսանդր Թագա-
ւորը կըսէր թէ ամեն բանէն վեր է հաւատարիմ բարե-
կամը :

Ահա գեղեցիկ պատուհաս չարին,
  Որ գործն է լարել թակարթ ընկերին•
  Հուսկ յետոյ և ինքն 'ի նոյն թակարթի,
  Աղաչէ ըղձա գալ օգնել նմին :
Բանի՛ լըբութեամբ ժտէ խօսնակին,
  Որ ծծէր զարիւն թէ էր 'ի ձեռին•
  Ո՞րպէս յօտարէն նպաստ ըք յուսայ,
  Նրբ այլոց բարի չարար բնաւին :

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԿԱՏՈՒ

*Պատիր համձար խորագիտին*
*Ոչինչ զօրէ օգնել նմին :*

Շատգէտ մարդիկ շատ բան կընէն ,
Բայց տեղ կուգայ որ բան չգիտէն :

*կէ.* Աղուէսն ու կատուն միատեղ ճամբորդութիւն կընէին. երթալու ատենն սկսան խօսիլ զանազան բաներու վրայ. վերջապէս աղուէսն ըսաւ մէկալին թէ բարեկամ քուկին քիչ մտածելուդ համար պարտական եմ որ յայտնի խոստովանիմ թէ իմ միտքս բարակութեր որչափ գերազանց է, և խելքս քուկինէդ շատ վեր է : Պատասխանեց կատուն թէ ես կաւատամ. բայց կաղաչեմ՝ նայէ ինք ինչ օգուտ ան քեզի կրնայ ընել հիմա. կը տեսնե՞ս որսորդին երկու շներն որ շիտակ մեր վրայ կուգան , ինչպէս ինծի կերենայ : Ահա թէ որ չեմ սխալիր , քու խորամանկութիւնդ պիտի ընցընեն. ինծի որ հարցընես՝ ահա իմինս. իմ ունեցածս միմակ աս է , որ բոլոր քուկին ունեցածներէդ լաւ կը բռնեմ: Աս ըսելով ցատկեց ելաւ ծառին ծայրը : Իսկ աղուէսն որ այնչափ յաջող էր , աս բանը չիմացաւ ընելու , թէպէտ շատ անգամ իր հնարքներովը խաղցուց որդիլեց շները , և քանի անգամ առաջներինուն

*փախաւ․ բայց փուճ եղաւ․ վասն զի վերջապէս չկրցաւ ազատիլ, բռնեցին զինքը պատուեցին ։*

Միշտ ջանա որ շիտակ ճամբայէն չելլես․ վասն զի որչափ խորամանկ ըլլաս, քեզմէ խորամանկը կայ, և ատեն կըլլայ որ շատգիտութիւն քեզ շահ մը չի կրնար ընել։ Կըսեն գիտունները, թէ շատ մեծ յիմարութիւն է պարծիլ խելքին վրայ ։

*Զխարդ անխրաւ պարծանք հպարտին,*
*Որ ազատ պանծայ ընդ հանճար անձին․*
*Բայց երբ ժամանէ արկած իւր բաղդին,*
*Անդէն նանրանան այն պանծանք չնչին ։*
*Պանծալի իմաստ դոյ յառաքինին,*
*Որ իմաստութեամբ փայլէ 'ի բանին․*
*Ոչինչ յեղյեղեալ յարկածից բաղդին,*
*Ոչ նսեմացեալ 'ի մահու անուին ։*

## ԱՔԱՂԱՂ ԵՒ ՀՆԴԿԱՀԱՒ

*Սիրտ նախանձոտ տանջէ համայն,*
*Է իւր ինքեան տանջանարան ։*

Թէ չես ուզեր այլոց գործքէն,
Նայէ չընես դուն ատելին ։

*կդ․ Աքաղաղը բնութեամբ նախանձոտ է․ բայց հնդուհաւ աքաղաղին հետ բակին մէջ մեկտեղ կը վարուէին․ օր մը տեսաւ որ վեր-*

ցուց փետուրներն ուռեցաւ մեկալը հաւե֊րուն ադջին․ աս բանէն աքաղաղը կասկած գնաց ու ըսաւ անոր , ներնգաւոր՝ պարապ բան չէ , որ դուն իմ հաւերուս աղջին փե֊տուրներդ վերցուցիր․ առանց կարծեաց կուզես իրենց հաճոյ ըլլալ , և խոմէ զանոնք հանել ։ Անալ պատասխան տուաւ թէ բան մը կըսես , որ ամենեին միտքես ալ չէ ան֊ցած , և անմտութիւն տաքցեր ես ։ Ինչու հա֊մար չես կրնար քաշել , որ ես հաւերուդ աղջին փետուրներս ուռեցընեմ․ հապա ես կը համբերեմ որ դուն երբոր կուզես իմին հաւերուս աղջին միշտ կերգես ։

Նախանձն անանկ անուրջ ախտ է որ կը տրտմե֊ցընէ ուրիշին բարութենը վրայ․ ասոր նախանձոտը չի կրնար տանիլ ուրիշին գեղեցկութիւնը գիտու֊թիւնը և ամէն բանը․ ըսածներ որ իրեն հասատար ըլ֊լան , և ասով միշտ սիրտը կը կրծէ քուն ձ կարծիք֊ներով ապաղաղին ակէս ։

Անյագ է նախանձ ըստ անսուտ վճռի ,
  Որ բունեալ՝ի սիրտ սպառէ զոգի ․
  Մաշի ընդ յաջող բաղդըս ընկերին ,
  Զի պատիժ նորա է այլոց բարին ։
Ուսիր կենակցիլ քաղցր ընդ ընկերին ,
  Եւ մի նախանձիր ընդ գործս նորին ․
  Զի ամօթ մեծ է թողեալ զիւր գերան ,
  Ընդ օտարս կարել շիւղոյ ակամն ։

# ԿՈՎ ԵՒ ՇՈՒՆ

*Չարակն հիւծի ընդ բաստ մարդկան ,*
*Ցոր ինչ հայի սիրտն է դաժան :*

Ծառայութն այլոց բան չի կամիր ,
Թէպէտ իրեն բան չի պակսիր :

*կէ. Շուն մը պառկեր էր խոտի դէզին երդիքին վրայ, կովն ալ եկաւ քիչ մը խոտ ուտելու որ անօթի կը մարէր. բայց շունն արգիլեց ու ակռաները կրճտելով կովին դէմ ցատկեց: Ով նախանձոտ կենդանի, ըսաւ կովը, ինչ ես կատղեր ու չես կրնար քաշել որ քիչ մը խոտ ուտեմ, որովհետև քեզի ամենևին հարկաւոր չէ :*

Օրինակ է չարակնութեան, որ ուրիշին աղէկութիւնը չուզեր, ու գէշ աչքով կը նայի ուրիշին: Փիլիսոփայ մը տխուր տեսնելով մէկը, ըսաւ թէ ան մարդուն կամ գէշ բան մը պատահած է, կամ թէ ուրիշին աղէկութիւն մը եղած է :

*Ով զիարդ չարակն զոխ զերեկուն ,*
*Առ չար նախանձու կաղկանձէ անքուն .*
*Զի երբ տեսանէ զընկերն 'ի բարին ,*
*Իւր մաղձ դառնութեն զեղանի յարիւն :*
*Մի ուտեր զհաց, ասէ իմաստունն ,*
*Ընդ վատ չարակնին բարեաց թշնամւոյն .*

Զի հաճոյք նորա զրկել քոյդ սեղան
Թէ և ինքն յագեալ նոյն խոր 'ի քուն :

## ԲՈՒ ԵՒ ԹՌՉՈՒՆՔ

Որ զայլս ատէ յայլոց ատի ,
Իբրև զբու ընդ մութ շրջի :

Դուն ուրիշին ինչ որ ընես ,
Ուրիշներէն նոյն կը գտնես :

կը · Բու Թռչունը կը նայի որ ընդհանրապէս բոլոր Թռչունները զինքը կատեն · սաստիկ նեղութէն կը քաշուի կաղնի ծառին խոռոչին խօռոխին մէջ կը նստի , ու ալ չի համարձակիր ցորեկը դուրս ելլելու , միայն գիշերը կելլէ : Մէկ անգամ մը դիպուածը բերելով ցորեկն անկէ դուրս ելաւ , բայց բանը շատ գէշ եղաւ · վասն զի Թռչունները զինքը տեսածնուն պէս՝ ամմէն կողմէն վազեցին վրան Թափեցան , և յետոյ մեծէն մինչև պզտիկն սկսան զուարճանալով ծեծել զայն կտուցներով , և այնպէս հալածեցին :

Բուն այսինքն պայղուշը միայն մութ տեղը կը [illegible]ի , և գիշերը բան կրնայ կուտէ · ասոր խա-րաքտէր ըսելով նման է ատելոյ մարդուն , որ մէկը ուրիշը ատելով՝ ամենքն ալ զինքը կատեն :

Այս օրինակ է սաւզի անձին,
Որ զանխառն կըծէ ըզախտ ընկերին,
Որով յամենից կըէ զարժանին,
Զրկեալ 'ի լուսոյ՝ շըջի խաւարին:
Քանի՛ վայելուչ սիրիլ և սիրել,
Օտարաց համայն ցանկալի լինել.
Զի՛նչ հանգիստ չարաց ատիլ և ատել,
Հալածեալ խոյսառ 'ի մթան թաքչել:

## ԳԱՅԼ ԵՒ ՇՈՒՆՔ

Որկրամոլեալն միայն թակարդ
Է կերակուրն եդեալ 'ի կարթ:

Ով որ գործէ առաւելութեամբ,
Ինք կորսնար ամոր կենաւ:

կթ. Գայլ մը հեռուէն կը տեսնէ երկու շուն որ իրարու հետ կռիւ կընէին. կռիւն որ աւելի տաքցաւ՝ մտմտաց որ երթայ մօտենայ անոնց, և երբոր իրարու վրայ ել-լեն՝ դիւրութեամբ զանոնք յափշտակէ: Աս խորհրդով շտապ անոնց քով վազեց. բայց հակառակն եղաւ. վասն զի շներն ան կէ-տեն հաշտուեր էին. գայլն որ մօտեցած տե-սան՝ շատ ուրախացան, և յետոյ երկուքը միասին վազեցին ընկան գայլին վրայ պատ-ռեցին:

Որկրամոլին կերակուր մէջ կերակրէն կուլայ· ճաշն ալ շատ ուտելը շատ հիւանդութեանց պատճառ ըլլալէն 'ի զատ, շատ ծուլութիւն մեզ յղելով կեր- ջադեա գործոց կապէ գալէն եղածին պէս· այս- պէս կըլլան որոնց մէկու եւս ենթ եղածներն ալ:

*Ահա անհամբոյր բարք գաղանային,*
*Յայլոց գիտութենց հանէ զիւր բաժին·*
*Բանի չահաւէրք համանման ամին,*
*Կառուղաց բարիս զրաւէն հեշտին:*
*Բայց արդարութիւն չթողու նոյին,*
*Փութով հատանէ կշիռ 'ի ձեռին·*
*Տոկոսիւ արդար պահանջէ կրկին,*
*Եւ անդէն մատնէ ժանեաց ատոխին:*

## ԱՐԾՈՒՒ ԵՒ ԱԳՌԱՒ

*Որ յանգգնի գործել մեծ ինչ,*
*Նշաւակի լինի ոչինչ:*

Ձեռք մ՛ զարներ մեծ բաներու,
Կը պատահին ան օրերու:

Հ. Արծիւն իջաւ ոչխարի մը վրայ, ու առաւ վեր հանեց· ան որ տեսաւ ագռաւն ինքիրեն ըսաւ· միթէ ես ալ չե՞մ կրնար ընել ասանկ մէկ բան մը: Աս ըսելով թռաւ գնաց մէկ գէր ոչխարի մը վրայ· բայց շատ հեռու մնաց արծիւին ըրածէն· վասն զի ոտանք ոչխարին բրդերուն փաթթուեցաւ

որ չկրցաւ ազատել. մնաց անանկ ոչխա-րին վրայ: Երբոր կը շարժէր, որ ազատի՝ հովիւն իմացաւ, վազեց եկաւ բռնեց դրաւ վանդակին խոֆէոյն մէջ, տուաւ տղոցն որ խաղան:

Օրինակ է յանդուգն մարդու, որ ընկերը ըն-ծանօթացը իւր որ գտնէ՝ կարծէ թէ ինքն ալ կըր-նայ ընել. բայց երբոր վտանգի մէջ իյնայ, անատե-նը կիմանայ իւր ըլլալը:

Խրատ է այս գործ յանդուգն յիմարին,
Որ ոչ ճանաչէ զույժ և չափ անձին.
Ի գործ մեծագործ մխիլ յանդգնի,
Մինչև 'ի ներքոյ ճմլի ծանրոցին:
Պիտանի յաւէտ իմացականին,
Ճանաչել զիւր կար և ոչ հզօրին.
Քանզի հզօրաց գործն է մեծագործ,
Ընչին և թեթև է գործ տկարին:

## ԿԱՏՈՒ ԵՒ ԱՔԱՂԱՂ.

Զրկողութիւնք անզգամին,
Սուտ պատճառօք արդար գտանին:

Չարագործ մարդն ինչ որ ընէ,
Զինքը սրտովն արդար կընէ:

Հա. Կատուն բակը կը մտնէ, և հոն տեսնելով աքաղաղ մը վրան կը ցատկէ, ճանկովը կը բռնէ որ իրեն մէկ լաւ կերակուր մը ընէ: Ինչո՞ւ համար աստանկ կընես ինծի, ըսաց աքաղաղը. ամենեւին չեմ յիշեր թէ քեզի օր մը գէշութիւն ըրած եմ որ արժանի ըլլամ ասանկ սպաննուելու քու ձեռքէդ: Պատասխան տուաւ կատուն հանգիստ ձայնով մը. թէ որ օրինաւոր բան մը չիգտնեմ քեզմէ սպաննելու, և չիպատժեմ քու կլին գողութիններդ որ անսած եմ, պարտական կը մնամ ծայ առջին. ով անօրէն, դուն չե՞ս որ ամէն օր կերթաս տիրոջդ պատին մէջ կը պոռաս, որ ցանած ցորենն ուտես. մահու արժանի ես դուն ըսելով, խղդեց կերաւ:

Զրկողութիւն ընողը միշտ մէկ սուտ պատճառ մը կը գտնէ որ ըրած բանն արդար երեւնայ. և որչափ աղաչանք ընես, սիրտը չի կակղնար. վասն զի միայն կը ջանայ որ ուրիշը զրկելով իրեն շահ հանէ, չէ թէ յանցանքը քննէ:

Այսպէս և զրկողք զինքեանս համարին
Արդար դատաւոր լինել անանկէն·
Սուտ պատճառանօք խափեն ըզմարդիկ,
Սակայն չէք խաբել յանխաբ ատենին:
Ո՞ւր յայնժամ՝ երկար պատմութիւնք բանին,
Եւ նրբին պատճառ փաստաբանին·
Անդ ճշմարտութիւն անցեալ ՚ի բեմին՝
Պահանջէ համար գործոց զրկողին:

## ՀԱՒ ԵՒ ԱՐՏԱՎԱՐ

Գործ խոհական հասուն մտաց,
Ըզձագքըն ընտրէ յերկուց չարեաց:

Բարի ծնողք ջանքին սիրուն,
Գերի կըլլան օտարներուն:

ՃԸ· Հաւ մընոր հանած ձագերը կանէ կըտանի արտերուն մէջ, և իր տեղէն շատ կը հեռանայ· երբոր անհոգ կը պտըտէր, ահա բազէն հոն երևցաւ, և մէկէն պատրաստուեցաւ որ իջնի ձագերուն վրայ: Ան ատենը հաւն ինչ որ կրնար ընել ըրաւ որ ազատէ ձագերը· մինչև փախաւ ազատեցաւ մէկ ապահով գոց տեղ մը որ մօտ էր, և հոն գտաւ մէկ վանդակ (կաֆէս) մը, մտաւ ձագերովն անոր տակը պահուեցաւ: Իսկ երկրագործն ան տեսնելով՝ շուտ մը վազեց բըռնեց հաւը ձագերովն առաւ տարաւ: Բայց հաւին մխիթարութիւն ան էր որ գոնէ ձա-

դերս աղաւնեցի կըսէր անողորմ Թշնամւոյն Ճանկէն :

Ինչպէս որ հաւն առաւել ուզեց գերի ըլլալ քան թէ յագերը բազէին յետքը յգել, ասանկ ալ ծնողք պէտք է իրենց զաւկըները անանկ նային որ Թշնամւոյն ու չար ընկերներուն յետքը չիյնին ընկոր-ուին չարաչար :

Այս օրինակ է խաչեմ ծնողին
Որ պահէ զորդիս 'ի ձեռաց չարին •
Յանձն առնու գերի ըլնել օտարին,
Զի մի այն անմեղք մահու մատնեսցին :
Եղուկ ծնողաց որ անհոգ նստին,
Մանկունք մատնեալ կան առ չար ընկերին •
Զորս 'ի խոր խոցեալ զանազան ախտին,
Կերակուր առնէ անյագ գազանին :

---

# ԿԱՊԻԿ ԵՒ ԹՈՒԹԱԿ

Որչափ Ճարտիկ խաբողն լինէ,
Սուտն անդէն զինքն յայտնի առնէ :

Ճրագ ու մոմ՝ վարդապետորդւոն,
Հաւքին կէրթայ մինչ իրիկուն :

ՃԴ • Օր մը կապիկն ու Թութակը մտա-
ծեցին որ բանական ըլլան, և խելքերնին
դրին որ զիրենք մարդ ձևացընեն : Կապիկը

*կը կարծէր թէ մարդու լաթ որ հագնի՝ մարդ կըլլայ, թութակն ալ կարծէր թէ մարդու պէս որ խօսի՝ կըլլայ մարդ: Ուստի կապիկը լաթը հագաւ, իսկ թութակն ալ քանի մը խօսք սորվեց. յետոյ երկուքը միատեղ ելան իրենց բունէն գացին բազմութեան մէջ* (քաղաքը) *երևցան: Տեսնողը մէկէն կը խաբուէր. բայց որովհետև կապիկը բան չէր կրնար խօսիլ, և թութակն ալ միշտ մէկ բան մը կըսէր, շուտ մը խաբէութիւնը յայտնի եղաւ: Եւ այսպէս որոնք առաջուց իրաւ մարդ կարծեցին զանոնք, քիչ ատենէն ետև ինչ ըլլալնին հասկըցան վռնտեցին:*

Յիմար է նոյն մարդը կարծէ թէ հագուստովը մարդոց մէջ մտնելով երևելի կերևնայ, չգիտէ թէ իր շարժուածքն ու խօսքը մէկէն ինչ ըլլալը կիմացընեն:

*Խրատէ առակս զոհ լինել յոգին,*
*Մի խաբէութեամբ նմանել վեհին.*
*Զոր ինչ ես բնութեն այն է բուն անձին,*
*Որ ոչինչ ունիք փոխի բնաւին:*
*Զինչ չաւ ըղձեսցուք ծածկել զարտաքին,*
*Բարեձև կեղծիլ՝ի զարդ օտարին.*
*Երբ ներքին նորա անկիրթ իբր անբան,*
*Վաղ խայտառակէ զանխիմաստ հոգին:*

## ԳԱՅԼ, ԱՂՈՒԷՍ ԵՒ ԿԱՊԻԿ

Յաջողամիտք յանհնարինս՝
Ձեռըս խրաց հեշտ հնարին :

Գիտուն մարդը երբոր ուզէ ,
Ամէն բանին ճար կը գտնէ :

Հմ. Գայլն ու աղուէսը կապիկին առ-ջին հակառակութիւն կընէին իրարու դէմ: Գայլն ամբաստանութիւն կընէր թէ աղուէսը գողցեր է իմ կերակուրս : Ան ալ կուրանար թէ սուտ է : Իսկ կապիկն որ կը ճանչնար երկուսին ալ բնութիւնը, մեծ տարակուսան-քի մէջ ընկաւ թէ որուն հաւատայ . ուս-տի միայն սանկ ազատեցաւ . երկու կողմի ալ շատ հակառակութիւն ընելէն ետև, պարտք դրաւ իրենց որ չխօսին, և սանկ պատուիրեց անոնց . Ով գայլ՝ կը պար-տաւորեմ քեզ որ հատուցում ընես, որով-հետև դուն աղուեսէն կը պահանջես զայն որ քեզմէ բան մը չէ առած . և դուն ալ ով աղուէս, պէտք է որ հատուցում ընես, վասն զի կուրանաս պարտքդ գայլին որ գող-ցեր ես :

Անխելք են անոնք որ գիտութիւնը բանի տեղ չը-դնելով չեն աշխատիր [illegible] բան սորվելու . վասն զի գիտուն մարդը ամէն բանին ճար-

բան գտնելուն անօթն է ճար, և ամենուն առջին յարգութիւն ունի։ Իմաստութիւնն է նմանութիւն այ, ըսեր է իմաստուն մը։

Այս իմաստնոց է և ոչ անգիտին,
Գտանել հնարս յանհնար դատին.
Զի երբ խորամանկք ընդ միմեանց վիճին,
Գործ է գտանել անշուշտ ըղմիջին։
Ահա սոս յայտնի միտք հանճարեղին,
Որ շահի զոխրս վիճողաց կրկին.
Ուսիր ընդ գիտնոց նստել կենակցել,
Հանճարոյ նոցին բաժանորդ լինել։

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ՄՈՐԵՆԻ

Ի տգիտին օրէնք բնական
Պատուել ըղհեւր զօտարական։

Մարդկութեան դէմ շատ գէշ բան է,
Որ հիւր օտար չմեծարէ։

հն. Մէկ մարդ մը աղուեսին ետեւէն ընկաւ որսալու համար, ան ալ փախաւ գնաց մորմենիին մէջ մտաւ պահուեցաւ, որպէս զի կարենայ աներկիւղ ըլլալ հալածողին տեսութենէն. բայց նայեցաւ որ մորմենիին փշերը վրան գլուխը պատռեր են՝ բոլոր խիքիրեն. աս ինչ անխելքութիւն է իմին ըրածս որ աս անգղանին ապաւինեցայ.



ՀԸ· Աղուէս և Մորենի։ ՀԹ· Մարդ և Կուռք։



Ձ· Ուրուր և Աղաւնի։ ՁԱ· Հերմէս և փայտահատ։



ՁԲ· Կրիայ և Արծիւ։ Ղ· Գորտ և Աղուէս։

ոչ այնչափ արիւն Թափեցի հոս որ չէր կըր-նար որսորդն այնչափ հանել ինծմէ:

Մարդէնին օրէնքն է անզգամ մարդկանց որ օտա-րականին չէն ուզէր պատիւ ընել. ամէն ազգաց մէջ օրէնք է պատուել հիւրը (միւսաֆիրը), և յետոյէն էլած օգնութիւնն ընել:

Իմաստ առակիս խրատէ զնոսին,
Պատուել զհիւր օտար ՚ի բերման աւԹին.
Քանզի իրաւունք օրէնք ազգային
Զայս ուսուցանեն ամենայն ազին:
Զինչ չափ ընդ յարկաւ լինել ընկերին,
Եւ պատսպարիլ ՚ի ձեռաց գայլէն.
Ցորժամ տանուտէրն դառնացել յանձին,
Մերժէ հալածէ նման գազանին:

## ՄԱՐԴ ԵՒ ԿՈՒՌՔ

Զայնէս մաղԹես հիմ զանզգայն,
Զի լսելիս չունի յինքեան:

Խոստացածին խօսք ընդունէ,
Ինչ որ ըսես տար կը կորէ:

ՀՂ. Մէկ մարդ մը չէր հեռանար կուռ-քին առջևէն, և միշտ կը շողոքորԹէր կաղա-չէր ու կաղօԹէր. օր մը խունկ կը ծխէր, օր մը զոհ կընէր անոր համար որ կուռքը

իրեն ոսկի և դանձ տայ. բայց փուձ տեղը կաշխատէր, վա զի կուռքն անանկ խլացեր էր որ սաակ մը չիտուաւ խեղճին: Ուստի մարդը հարստանալու տեղը՝ աղքատցաւ: Բայց և այնպէս ետ չիկեցաւ, ալ աւելի սկսաւ աղօթք ընել և պաշտօն մատուցանել կուռքին. բայց բան մը չիհասաւ ձեռքը: Ժամանակ մը շարունակեց աս բաներն ընելու, սակայն պարապ ելաւ: Վերջապէս համբերութիւնը հատաւ, օր մը յուսահատելով առաւ կացինը զարկաւ կուռքը կտոր կտոր ըրաւ. մէյմնալ տեսաւ որ կուռքին մէջէն ոսկիի կտորուանք թափեցան. ո՛հ ո՛հ կըսէր ժողվելով ի՞նչ է աս, աս ի՞նչպէս բան է. ուրախութէն խելքը գլխէն գնաց: Ահա կըսէր, իրաւի մէկ անձոռնի ոծ մը. ես կըր-նայի՞ հաւատալ թէ աւելի պիտի վաստըկիմ եղեր զինքը ծեծելովս քան թէ աղաչելովս:

Խոստովանիր անգամ մարդն աղալանելով չէ կա-կլնար, այլ բնութիւնէ. Ինչպէս արծաթասէր մարդը ոսկին անանկ սիրելին մէջ կը դնէ որ մարդոց օգ-նութիւն մը ըլլար. բայց մահուան բնութիւնը այնպէս կընէ որ ցիրուցան կըլլան պահած ոսկիները:

Տես զխարդ ձայնէ անլուր արձանի,
Ում լսել ոչ ետ ձեռք քանդակողին,
Միայն 'ի պատիւ եդ 'ի լանջս ոսկին,
Զոր և տալ չունի թէ ոչ փշրեսցին:
Այս օրինակ է անգութ ագահին,
Որ ամուր փակէ զոսկիս 'ի սրտին.
Բանք ողոքանաց ոչ ազդէ նմին,
Արկածիւք եւեթ հանէ զայն ոսկին:

## ՄԱՐԴ ԵՒ ԵՐԿՈՒ ԿԱՆԱՅՔ

*Վայ որ մատնէ զինքըն կանանց,*
*Համեն յիւրմէ խելս ընդ հերաց։*

Թէ որ ըզքէզ կնկանց մատնէս,
Խելքէ մտքէ շուտով կ'ելլես։

ՀԷ. Էրիկ մարդ մը սկսեր էր հալեւոր-նալ, և կը նայէր որ հաճոյ ըլլայ իրեն երկու սիրելի կնկտոցը որոնց մէկը պզտիկ էր ու տարիքը քիչ, իսկ մէկալը տարիքն առած տեսքն ալ գացած էր։ Ասոնք կախորժէին որ էրիկնին իրենց յարմարցընեն. և երկուսն ալ իրենց ախորժակին հետեւելով մեծ հոգ ունէին որ փոփոխ սանտրեն անոր գլուխը։ Բայց մարդուն բանը շատ գէշ եղաւ. մէջի պզտի կնիկը երբոր անոր գլխուն վրայ կը տեսնէր ծերութեան նշան ճերմակ մազ, բարկանալով կը փետտէր որչափ որ գտնէր։ Մէկալ կնիկն ալ երբոր կը տեսնէր սեւ մազ, բոլորը կը փետտէր։ Նա այսպէս քիչ ժամանակի մէջ մարդուն գլուխն կնտակ (քաչալ) դարձաւ։

Արիստոտէլ փիլիսոփան կ'ըսէր թէ մէկ հատ կին մը կարող է խելացիներն ալ կորսընցընել, հապա երկուքն իրեքը մէկ որ ըլլան ինչ չեն կրնար ընել. անոր համար Զօրաբաբէլ վիճաբանութեան ըրաւ թէ կինկէն զօրաւոր բան չիկայ աշխարհքիս մէջ։

Ով քանի՜ տղուշ մեղկ կնամոլդի՛ն ,
Մատնեալ կայ'ի ձեռս վատկամանց կրկին.
Զգի ընդ տռուամբ ուր նոքա կամին ,
Թափեալ 'ի խելաց զերթ խելագարին :
Ուսիր արթուն կալ 'ի վերայ անձին ,
Զմատնիլ 'ի ձեռս քաղցր յուշկապարկին.
Որ այնչափ է կար չրթանց և լեզուին ,
Ցաղթէ իմաստնոց արքայից բաղկին :

## ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻՔ

Բան բերդ ամուր զի՞նչ հաստատուն .
Բայց միաբան եղբայրութիւն :

Որոնք եղբարք միաբան են ,
Ամէն բանի միշտ կըյաղթեն :

հէ. Տան մը ծերը շատ որդիք ունէր . երբոր հասաւ վերջին ծերութեան և տեսաւ թէ մօտ է վախճանին , կանչեց քովը բոլոր որդիքը . նայեցաւ որ ամէնքը քովն են ժողված , բերել տուաւ մանտր ցուպեր (չպուխներ) , և բոլորը մէկտեղ կապեց ու տուաւ մեծ որդւոյն և հրամեց որ կոտրէ : Ան ալ յանձն առաւ . բայց որչափ որ ջանաց՝ և շատ անգամ ուժ տուաւ որ կոտրէ՝ չկրցաւ կոտրել : Ետքը տուաւ զայն երկրորդին . ան ալ տուաւ երրորդին . ոչ մէկը ոչ մէկալը կրցան կոտրել ան կապոցը : Առանկ որ եղաւ՝ ծերն առաւ ան կապը քա-

կեց ու զատեց, ամմէն մէկին մէյմէկ հատ առաւ, և հրամեց որ երկրորդ անգամ փորձեն ու կոտրեն. բայց անոնք առանց դժուարութեան մէկէն բոլորը կոտրեցին: Ան ատենը զարմաւ ծերն ըսաւ. Որդեակ, երբոր ես աս աշխրքէս ելլեմ՝ առանկ պիտի ըլլայ ձեզի. որչափ որ դուք ամէնքնիդ միաբան ըլլաք՝ այնպէս զօրաւոր կըլլաք որ մէկը չի կրնար զձեզ շարժել. բայց անմիաբան եղածնուդ պէս՝ անանկ պիտի տկարանաք որ պզտիկ փորձանք մը ձեզ կրնայ կործանել:

Որչափ Թագաւորութիւններ կան աշխրքիս մէջ որ միաբանութեամբ կեցած են, և անմիաբանութեամբ կը կործանին: Հայոց Թագաւորութեանը մէջ քանի որ միաբանութիւն կար՝ այնչափ մեծցաւ որ ահագին երկիրներ տիրեց. բայց անմիաբանութեամբ քիչ ժամանակի մէջ ոչնչացաւ:

Զի՞նչ հաստատութեն գոյ երկրի երկնից
Որ քակել զօրէ զկապ միաբանից.
Զի երբ միաբան եղբարց գունդն,
Դիմագրեն ուժոյ բոլոր աշխարհին:
Յէր վերայ կանգնի գունտ ոխերին.
Բայց 'ի միաբան տարերց չորեքին.
Ի քակել սորա՝ քակի և աշխարհ,
Ի քակել եղբարց՝ քակի տուն տեղին:

## ՀՈՎՒՒ ՍՏԱԽՕՍ

*Զի՞նչ զբօսանք ստախօսին*
*Երբ հաւատայ ոչ ոք նմին:*

Այն է վարպետ սուտ խօսողին,
Որ մարդ չհաւատար իրէն խօսքին:

*ՀԺԸ. Հովիւ մը իրեն զբօսանք էր ըրած որ ամեն ատեն կը պօռար գայլին դէմ, թէպէտ բան մը չէր տեսներ: Այս ձայնը երբոր կանչէին գիւղացիները կը վազէին կուգային: Իսկ հովիւը շնորհակալ ըլլալով անոնց աշխատանքին համար՝ կը խնդար զուարճանալով, և շատ անգամ այսպէս ընելով կը խաղար: Սակայն եղաւ որ օր մը իրաւ եկաւ գայլը մտաւ ոչխարներուն մէջ. սկսաւ կանչել պօռալ հովիւը որչափ որ ձայն և ուժ ունէր. բայց որչափ իրեն օգնութիւն կանչեց պարապ ելաւ. մի՛ զի գիւղացիները կարծելով թէ սուտ կը պօռայ չուզեցին երթալ անոր օգնութիւն ընելու: Ուստի յաջողեցաւ գայլին որ բոլոր ոչխարները պատռեց:*

Ստախօս մարդուն շահն ան է որ ճշմարիտ խօսքին ալ մարդ չի հաւատար, և մէկին փոխ հաւատարմութիւն չունի. որովհետև սուտը՝ այլ ճշմարտութիւնը հաստատած է: Ուստի հին ատենը սուտ երդում ընողին լեզուն կը կտրէին:

Այա շահ պտուղ խաբող սուտ լեզուին,
Որ 'ի սուտ փոխէ զիսկութեն իրեն.
Հակառակ գոլով անխաբ Ճշմարտին,
Անհաւատարիմ լինի բոլորին:
Արդ մի հետևիր դու ստախօսին,
Որ զիսկն եղծանէ զիւր ստոյգ բանին.
Զի որ միանգամ սովոր է խաբել,
Բնաւ բանք և գործք անհաւան լինին:

## ՈՒՐՈՒՐ ԵՒ ԼՈՒՍԻՆԵԱԿ

Երգ և նուագ չեն ընդունակ
Ի կերակրել զորկոր դատարկ:

Ամջէն բանէն ափէնը կայ,
Ափէնէ դուրս մէջս գէշ կըլլայ:

Ճ. Ուրուր մը շատ անօթի ըլլալով՝ կը բանէ Ճանկին մէջ մէկ լուսինեակ (պիւլպիւլ) մը: Ով ուրուր, կըսէր լուսինեակը, իմ կեանքս ինծի բաշխէ, ես քեզի մէկ բան մը երգեմ որ զմայլիս. վա՛ զի իմ ձայնս դուն գիտես որ ամէներն ալ կըզմայլեցընէ: Պատասխանեց ուրուրը. Նս առանց կարծեաց յօժար սրտով կը լսէի քու ձայնդ, թէ որ չիմանայի ներսէն թէ հիմա աւելի կարօտութիւն ունիմ կերակրի քան թէ եղանակի: Ա՛ս ըսելով կերաւ:

Ամէն բան ժամանակ ունի, ատէնով եղած բա-նը միշտ լաւ կըլլայ. շատ մարդ կայ որ գործերն ա-տէն ձգած բաներու հետ ըլլալուն հարկաւոր բանէն ետ կը մնայ ու ետեւ կըլլայ:

Ուսիր չլինել թոյլ 'ի պիտանին,
Գնալ 'ի զբօսնուլ յերգս ընդ նուագին,
Այլ է ժամանակ վաստակել շահիլ,
Եւ այլ ժամանակ խօսել և հրճուիլ:
Քանզի հեղգ 'ի գործս գնան զմայլին
Ի լուր քաղցր երգոց ձայնի հաւէտորին.
Թողուն լիք դատարկ զիւրեանց որովայն,
Լընուն զականջս բաղխմամբ լոկ օդին:

## ԱՌԻՒԾ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Բնութիւն շողմոգ նման ձիթոյ
Ցանգ ելանէ յերեսըս ջրոյ:

Կեղծաւորներն եղի նման՝
Կըշէն կըլլան երես կելլան:

ճա. Երբոր առիւծ մը թագաւոր պիտի պսակուէր՝ ծանուցում ըրաւ ամմէն կենդա-նիներուն թէ պէտք է որ գան իրեն հպա-տակութե և ծառայութե ցըցնեն. ուստի ամ-մէնքն ալ վազեցին եկան ու խոստացան որ հնազանդ մնան միշտ: Մինակ աղուէսն ուշա-ցաւ և ամմէնէն ետքն եկեցաւ առիւծին: Իսկ առիւծը երբոր բարկութե կը մըն-

չէր՝ աղուէսը խոնարհ ձայնով մը ըսաց · Տէր իմ, ժամանակ չունեցայ երեւնալու տէրութեանդ առջին · վա՛ զի սէրն որ ունիմ քու վրադ՝ մի միայն պատճառ եղաւ իմին ուշանալուս · որովհետեւ լսածիս պէս թագաւորելդ՝ վազեցի գնացի կուռքին հարցընելու թէ որչափ պիտի թագաւորես ։ Իսկ կուռքը՝ որուն ամմէն օր քեզի համար կաղաչէի ով թագաւոր՝ ինծի վկայեց ուրախութիւն որ սրտիս մէջ ունէի · վա՛ զի հաստատեց թէ առիւծներուն մէջ մէկ թագաւոր մը չէ եղած և պիտի չըլլայ անանկ երջանիկ և երկան ժամանակ թագաւորութիւն ընող ինչպէս դուն ։ Եւ ահա աս լուրս ժամ մը առաջ տէրութեէդ ուզեցի հասցընել · բայց կուռքին քով ուշանալս թող չտուաւ ընելու ։ Աս անմեղադիր խօսքս անանկ հաճելի եղաւ առիւծին, որ չէ թէ միայն չբարկացաւ, այլ և շնորհակալ ևս եղաւ անոր աշխատանացը վրայ, և ամենէն աւելի սիրով ընդունեց զինքը ։

Առակացն օրինակ է անանկ իշխաններուն որ երեսպաշտող կեղծաւոր մարդոց խօսքին աւելի կը հաւտան ու կը պատուեն՝ քան թէ հաւատարիմ բարեկամին որ անոնց շահուն համար կաշխատի · Վասն զի անանկներն ամէն բան կընեն, ու ջրէն երեսն ալ կեղծեն ։

Զխարդ հեշտալուր ձայն փաղաքշողին
Ի լուր լսելեաց արքայից վեհից ·
Զի յաւէտ նոցա պատիւ յարգութիւն՝
Եւ ոչ իմաստնոց տան աւագանին ։

Այս է գեղեցիկ փոխարէնք նոցին,
Որ շոգմոգ բանիւ խաբէին և հաճին.
Եւ զայն ոչ գիտեն թէ բանիւ միայն,
Ի միտս ծանօթ լինին շոգմոգին :

## ՄՐՋԻՒՆ ԵՒ ԱՂԱՒՆԻ

Բարերարողն զգուշնագոյն
Գտցէ բարիս ըստ իւր չափուն :

Բարէն ըրէ ծուղը նէփէ ,
Ըոոփոշ ֆոոգոյ փէգ նըգփնէ :

հէ. Մեկ մրջիւն մը անզգուշութեամբ կիյնայ պզտիկ գետի մը մէջ. երբոր կը խեղդուէր հոն՝ աղաւնի մը կը տեսնէ զայն, և ծառի ճիւղիկ մը կը ձգէ ջրին մէջ որուն վրայ կայնած էր ինքը. և ան կըլլայ մրջիւնին իբր նաւ մը որ ցամաքը հանելով կազատէ զայն : Ցամաքն ելլելու ատենն որսորդ մը կը լարէր աղեղն ու աղաւնիին կը նայէր. երբոր պիտի նետէր զարնէր, մրջիւնը հասկըցաւ իր բարերարին վնասը, շուտ մը վազեց եկաւ որսորդին ոտքը խածաւ : Իսկ որսորդը շարժելով ձայն ելաւ, աղաւնին իմացաւ թռաւ : Եւ այսպէս մրջիւնն որ պարտական էր իր կեանքն աղաւնիին՝ փրկեց զայն փոխադարձ. և աս միջոցով հատուցում ըրաւ անոր բարերարութեանն որ տեսեր էր անկէ :

Օրէնակ է փոխադարձ արդարութեան, որ մէկն ինչ ուզելութ ըրած մէկալին, ան ալ անոր ան ըրա-իրէն մեծութենը ըստ կարդան նայելով. Հը դէ ամէն գործք՝ ընդունին ապաշխարելն կը ըստ կարդան։ Ուստի ամէն մարդ պէտք է ըստ իւր կարդան երախտիք հատուցանել ընել։

Աստ է տեսանել պատգամ տէրունեայն,
Որ կըշռէ բարիս ըստ արդար չափուն.
Թէ արար՝ յորմէ չունէր ակն առնուլ,
Յանխիտ գանձէն կըշռի չափ նորուն։
Եթէ բաժակաւ ջուր չափես փոքուն,
Անդրէն քեզ ջամբին թաթաղուն զեղուն.
Եթէ նպաստ ինչ առնես կարօտին,
Անկարօտ մնաս 'ի վիճակ կըրկին։

## ՄԱՅՐ ԵՒ ԴՈՂ ՈՐԴԻՆ

Որ ոչ զորդւոյն չար գործ պատժէ,
Գարշ ոճրագործ ըղնա առնէ։

Ով իր զաւկին աղէկ կուզէ,
Ամէն պակաս մէջը կը ջնջէ։

ձգ. Մայր մը իր որդին չէր պատժեր բնաւ պզտի գողութեան համար որ մանկութեէն սկսաւ ընել, և իրեն սովորութի եղաւ։ Ուստի որչափ որ հասակն աճեցաւ, աս չարութին ալ հետն աճեցաւ։ Տղայութէ առնելը խնձոր մը առաւ, և մէկը չիմացածեց զինքը

պատժելու ։ Երբոր գնաց դպրատունէն՝ ընկերներուն գրքերը կը գողնար ու կը տանէր մօրը ցոյց կուտար․ իսկ մայրը խնտալէն 'ի զատ ուրիշ բան չէր ըներ ։ Աւելի որ մեծցաւ՝ սկսաւ դրացիներուն տունը թալլել և ճամբորդին բաները գողնալ․ սակայն խրատ մը կամ նախատինք մը չլսեց մէկէն ։ Շատ չանցաւ գէշէն գէշ եղաւ, և անանկ չարացաւ որ սկսաւ քաղաքներուն մէջ և մեծ ճամբաներուն վրայ աւազակութիւն ընել․ մինչև դատաւորը բռնեց զինքն ու արդարութեամբ դատապարտեց որ կախուելով մեռնի ։ Երբոր վեր պիտի հանէին կախաղանէն, աղաչեց քովի եղողներուն որ մայրը բերել տան, ուր է նէ շնորհք ընեն գտնեն իրեն համար որ ետքի անգամն ալ տեսնէ ։ Մայրն որ տեսաւ՝ խնդրեց որ իրեն մօտենայ, և ձևացուց թէ կուզէ գրկելով բարևել ։ Բայց ակռաներովը բռնեց անոր անկաճն ու քաշեց փրցուց․ յետոյ դարձաւ ժողովրդեան ըսաց․ Պարոններ, թէ որ աս թշուառականը զիս պատժէր խրատէր մանկութեանս առենը որչափ անգամ՛ որ աս չարութիւնը կընէի, հիմա ես սանկ գարշելի մահուամբ չէի մեռներ․ ուրեմն դադարեցէք, ալ մի զարմանաք ըրած բանիս․ վ̃ զի ես մայր չեմ ճանչնար ինծի ասիկայ, այլ մեծ թշնամի ։

Խրատ ըլլայ ծնողաց, որ փաղաքնին մանկութեան ատէնը լաւ նային ու պատժեն երբոր գէշ բան մը ըրանին կը տեսնեն. Չէ որ մոմի կընմանին անոնք, քանի որ կակուղ են՝ ինչ որ սորվեցնես ան կընեն. Երբոր մեծնան անանկ կըմնան։ Ով որ զարնել խրատել ըսուեր՝ կապէ իր զաւակը. ով որ կը սիրէ՝ կը խրատէ, կըսէ Սողոմոն։

Ահա դառնացէր տեսիլ ահագին,
Մայրն է դժընդակ դահճին զաւակին.
Պատժի և պատժէ զինք ծընող որդին,
Հատուցումն անէ մահաբեր կաթին։
Ով քանի պարտք են խոհեմ ծընողին
Ուղղել խըրատել զինք անսաստ մանկանին.
Եթէ միանգամ խընայէ նըմին,
Ողբայ զայն ապա առ կախաղանին։

## ՃԱՆՃ

Շատակերին կատաղ է խուր յագ,
Ուտէ պայթի մընայ անյագ։

Ծակողք մարդիկ են ծակ կարաս.
Որքան լեցնես միշտ է պակաս։

ձը. Մէկ առաւել շատակեր ճանճ մը կը մտնէ կերակուր եփելու տեղն ու հոն չափէ դուրս ուտելու համար պտուկին մէջ կը խըխմուի, և այնչափ շատ կուտէ կը խմէ չափազանց որ մինչև ճաթի հոն կը մնայ։

Օրինակ է գինեմոլ և ապաշէր մարդկանց, որ ուտելով խմելով կենսականին կորուսեն, և հոգւով մարմնով կը կորսուին. Մանաւանդ երբոր ոսկերնին բանը գտնեն ուտելու չեն կշտանար. չեն գիտեր թէ մարդկային ախորժակը կրակի նման է, որչափ շատ տաս՝ այնչափ աւելի կը բորբոքի մինչև որ հատնի:

Ապաժոյժ անյագ կիրք շատակերին,
Ցանկայ զծով լընուլ յորովայն ձանձին.
Որչափ շատ է կերն այնչափ խիղճք աճին,
Մինչ անյագութեամբ պայթիլ զխողվլին:
Ուսիր չափ դնել անյագ որկորին,
Մի պայթուցանէր զայն 'ի յուտելին.
Զի բաղումք ասոր բարձան 'ի միջոյ,
Կերակուր եղեալ որդանց զաղրագին:

## ՀԵՐՄԷՍ ԵՒ ՓԱՅՏԱՀԱՏ

Ճշմարտախօսն առ դիւցազանց,
Եւ առ մարդկան միշտ գերազանց:

Շիտակ մարդը միշտ կը շահի,
Եւ ամենուն է սիրելի,

ձէ. Փայտ կտրող մը կը կորսնցընէ կացինը, և որովհետև անով իր հացը կը վաստըկէր՝ աղքատ մարդն սկսաւ յուսահատելով աղաչել Հերմէս չաստծին: Իսկ Հերմէս խղճալով անոր աղաղակին վրայ՝ կերևնայ իրեն ու մէկ արծըթէ կացին մը ցցընելով

կըսէ․ Աս չըլլա՞յ կորսնցուցած կացինդ ։ Պատասխանեց մարդն առանց տարակուսի՝ թէ չէ ։ Դարձեալ՝ ածը ցցուց իրեն մէկ ոսկիէ կացին մը թէ արդեօք ա՞ս է ։ Աս ալ չէ, ըսաց մարդը ։ Յետոյ ցոյց տուաւ իրեն երկըթէ կացին մը ։ Աղաղակեց փայտ կտրօղը, թէ Ահա աս է որ կը փնտըռեմ, և ասոր համար միայն քեզի կաղաչէի ։ Առ, ըսաց ածը, և քու բարի հաւատքիդ համար առ մէկալ երկուսն ալ ։ Եւ այսպէս ստիպեց որ իրեքն ալ առնէ երթայ ։

Կապադովկացիները կըսէին թէ Հերմէս էր որդի Դիոսին, և զանազան արուեստներու ա̄ծ կըսուէր․ աս պատճառաւ ծայր կտրողն անոր կաղաւէր, որ օրինակ է շինքով և արդար խօսողի․ անով մարդը միշտ բարի կըգտնէ ։

Տեսէ՞ր զպերճութիւն ճշմարտախօսին
Զիմ՞րդ իսկաբան գտաւ 'ի բանին,
Ոչ եղծանելով զխակն առ ցանկութեան,
Պանծայ և շահի զարծաթն և զոսկին ։
Վայ որ 'ի շահել զանցաւոր ոսկին,
Երդնուն և խառնեն սուտն ընդ ճշմարտին․
Որով և խաւար է նոցա բաժին
Որդի ստութեան խաւարասիրին ։

## ՄԱՅՐ ԵՒ ՏՂԱՅ ԼԱՑՈՂ

*Ի վայելուչ ազնիւ ծնողաց*
*Քուժալ ձայնի անմեղ մանկանց :*

Մի գէշ խօսքեր լեզուդ բերեր ·
Որ չար հետանք ըլլայ գլխուն :

*Ճզ · Տղայ մը օրօցքին մէջ պառկած ա-նանկ կուլար որ՝ մօրը համբերութիւնը հա-տաւ, և սպառնալով ըսաւ տղուն, թէ որ ձայնդ չկտրես հիմա զքեզ գայլին կուտամ որ ուտէ : Աս խօսքս որ կըսէր՝ գայլն ալ տանը պատուհանին տակէն կանցնէր ու կը լսէր սպառնալիքը · ուստի մէկէն վազեց ու-րախութ͞ք դուռն ելաւ որ յափշտակէ տղան որուն կը փափաքէր : Բայց չարաչար խա-բուեցաւ · վ͞ն զի մայրը գայն տեսածին պէս՝ շուտ մը կանչեց դրացիները որոնք զէնքով եկան օգնութեան, և գաւազանով երկաթնե-րով ծեծելով հալածեցին զգայլը :*

Պէտք չէ որ մէկ մայր մը դժգոհալով տղուն ա-նէծք տայ, կամ բարկութիւն գէշ խօսք բերնէն հա-նէ, որ ըլլայ թէ չար պատահմունք մը հանդիպի · վասն զի օրհնէնքն ալ լոյս կը հասնի անէծքն ալ, հոգւոր և մարմնաւոր ծնողաց : Արիստոտէլ կըսէ թէ տղին աղէկութիւնն ու գէշութիւնը՝ մօրմէն կը ժառանգուի · որովհետև որդւոյն կէսը մայրն է :

Զխորդ վաղ լուեալ կըրից մօրն ըղձայն ,
Վազէ մերձ առ գուրս խըլէլ ըզտղայն ·
Այս գործ է չարաց որ գըտան շըրջին
Դաւել խարդախել ծընունդս ընկերին :
Սակայն ազնիւ գութ ծնողականին ,
Չըժուժայ մերձիլ առ նա թշնամին ·
Մերժէ հալածէ անդէն առ նմին ,
Զի գան և հարուած են չարաց բաժին :

## ԿՐԻԱՅ ԵՒ ԱՐԾՈՒԻ

Որչափ հրապարան 'ի վեր ձախրի ,
Այնչափ սաստիկ գահավիժի :

Թէ վեր ելլես հըպարտանաս ,
Վերէն կիյնիս ուժին կըլլաս :

ձէ · Կրիան օր·մը աւազին վրայ քաշղալով կերթար կաղաչէր արծիւին որ զինքը վեր հանէ օդին մէջ · և որչափ կարելի է շատ վեր բարձրացընէ իրեն հետ : Իսկ արծիւն անոր խօսքը չիկոտրելու համար առաւ զայն իր ճանկերուն մէջ , հանեց բարձրացուց ամպերէն վեր · Սիրելի , կըսէր անհանգարտ կրիան , ես վարն եղած ատենս ամէն կենդանիները զիս կանարգէին , բայց հիմա առանց կարծեաց նախանձելով ինծի կընային որ անոնցմէ շատ վեր ելած եմ : Երբոր ասանկ կը պարծենար , արծիւը հոգնեցաւ զայն բռնելու , և ճանկերը բացաւ ձգեց վար :

Ան տանը հպարտ կրխան ընկաւ շուտ մը քարերուն վրայ ցրիւ ցրիւ եղաւ :

Փիլիսօֆայի մը հարցուցին թէ ա՞ծ ինչո՞ւ համար Թոյլ կուտայ չար հպարտ մարդիկներուն որ ձեծնան ու Եարչրանան : Ան ալ պատասխան տուաւ թէ անոր համար որ Եարչրէն ինչելու ատ մը կոր կոր ըլլան, ինչպէս եղաւ կրիան :

Ահա գաղափար ամպարհաւաճին
Որ պանծայ ընդ ճախր յածիլ յեթերին .
Ոչ գիտէ թէ այն բարձրագոյն վիճակ
Գուշակէ նըմա կործանումն ուժգին :
Զի՞ բերկրի հպարտն ՚ի թռիչ բազցին ,
Երբ քան զայլս ՚ի վեր բարձրանայ յերկին .
Երկիւղ ոչ բերկրանք նմա պատշաճին ,
Զի չար է անկումն գերամբարձ կային :

## ԽԱՉԱՓԱՌ ԵՒ ՁԱԳ ԻՒՐ

Բարի ծնողաց տաւքինի ,
Լինին որդիք տաւքինի :

Զատին ինչ որ ծնողէն փէտնէ ,
Չար թէ բարի ատրճի ներնէ :

ձը. Խաչափառը կըսէր իր ձագին թէ պէտք է որ դուն զքեզ չխտկես ատ մեծ պակսութենէդ որ շատ ժամանակէն ՚ի վեր քու

վրայ կը տեսնեմ: Աչքան ալ կը նայիմ որ միշտ ծուռ ծուռ կը քալես ետևորանց. Ինչու համար ուրիշ կենդանիներուն պէս դէպ 'ի առաջ չես երթար: Պատասխան տուաւ ձագը. Մայրիկ, ես ուրիշ բան չեմ ըներ, բայց ինչ որ կընես դուն՝ կը տեսնեմ, ես ալ անանկ կընեմ: Թէ որ կուզես զիս շիտկեմ, նախ դուն սկսէ զքեզ շիտկել:

Խալըֆաթն է (չաղանօղ) որ բնապէս խոփոր-ակ փալէլոծ օրինակ է անանկ ծնողաց որ իրենք զփակ չէն երթար առաքինութեամբ, և կուզէն որ առաջնին չփակ երթան. բայց անհնար է թէ փղան ծնողաց լար օրինակը փէանէլոճաղէկ ըլլայ. նա ղի ծնողաց պէս լաւ ճարճապէփ չի կրնար ըլլալ. թէ որ ծնողք մը կուզէ փղան առաքինի ըլլալ, նախ ինքը թող ընէ առաքինութեան որ ան ալ սորվի:

Նայելս օրինակ ծնողաց կրկին,
 Ի գիրգ սիրտ մանկանց խոր տպաւորին.
 Քանզի օրինակ յաւէտ քան խրատ
 Լինի ուսանել 'ի զգլրոց ծնողին:
Քանի նախատինք ախտաւոր ծնողաց,
 Երբ կամին զորդիս տանել բարեկեաց.
 Ինքեանք զերկ գոլով յառաքինութեանց,
 Ուղղել նկրտին ըզնոցին ընթացս:

## ԿԸ. ՇԻ ՏԷՐ ԻՒՐ

*Զգեստ և զարդ զարմուղն անզօր*
*Չառնեն արի առիւծ հզօր ։*

Ի՞նչ շահ հագնիլ մորթն առիւծին
Երբոր վախկոտ էլ է ներքին ։

*ձը.* Մէկ *էշ մը առիւծին մորթը (փօս_տը) կը հագնի ու ջաղացքէն դուրս կ'ելլէ, և անտառէ անտառ կերթայ անանկ այլակերպ որ ամմէն կենդանիները կը վախցընէ․ որոնց որ կերևնար՝ կը մտմըտային թէ ի՞նչ բանի կըլլանի․ ուստի սոսկալի բան մը երևնա_լով իրենց՝ շուտ մը կը փախչէին դողալով ։ Վախը հասարակ էր անոնց մէջ, մինչև ա_ռիւծներն ալ կը հալածէր ։ Երբոր ջաղաց_պանը (*դէյիրմէնճին*) կը փնտռէր էշը, կը հանդիպի անոր՝ ու մէկէնիմէկ հեռուէն կարծէ թէ իրաւ առիւծ է՝ շատ կը վախնայ․ բայց մօտէն որ նայեցաւ՝ տեսաւ իշուն ան_կաճներուն ծայրը դուրս ելած, հասկըցաւ անոր խաբէութիւնը ։ Ան ատենը շիտակ վրան վազեց, և առանց խնայելու լաւ փայտ մը քաշելով խօթեց ջաղացքին մէջ ։*

Մարդս պէտք է որ առաքինութիւնն իրէն բնու_թեան ընէ ամբողջութեամբ․ որպէս առիւծին վրայ լաւ բան մը դնենք, թէ որ չընայ՝ ինքն ալ կրնայ ընել․ չէ թէ անձնէլք իշուն պէս հագուածով մ-

այն տալ երեւնալ ու տգէտին ըմնենալ: Փոխանա-
կաներն ըսին թէ ամէն բան բարակութեամբ կը ծռի·
մարդը միայն հաստ ըլլալով կը կոտրի:

Տես յիմարութեն վատ ապիկարին,
  Կարծէ ըզգեստուք վեհ լինել յանձին·
  Այն արտաքին է ոչ յատուկ ներքին,
  Մերկանայ լինի որպէս առաջին:
Արդ ջանա ունել զարութեն վեհին
  Գրեալ քանդակեալ ՚ի սիրտ և յոգին·
  Զի թէ զլանայ բնութիւն զբարին,
  Դու ունակութեբ լցո զթերին:

## ԳՈՐՏ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Եթէ խցես բժիշկ ճարտար,
  Արդ արա նախ անձին քո ճար:

Թէ դուն ըմպէս քեզ լաւ ընել,
  Ի՞նչպէս կրնաս ուրիշն ընել:

Ղ. Գորտ մը ճանչնալ սկսաւ մէկ քանի բժշկական խոտեր որ բուսած էին իր լճին քովերը: Յետոյ միտքը դրաւ որ կենդանիներուն հասկըցընէ թէ սորված է ինքը բոլոր բժշկութե արուեստը: Երբոր ամմէն դի ծանուցում կընէր թէ գիտէ բժշկել անսըխալ ամմէն կերպ հիւանդութիւնը որչափ անբժշկելի ըլլայ, մէկ աղուէս մը՝ որ գէշ հիւանդութիւն մը ունէր, ուզեց անկէ դեղ առ-

նել: Ան որ տեսաւ գորտն սկսաւ պատմել թէ զարմանալի բժշկութիւններ ըրեր է, որը ընդունցուցեր է, որը ազատեր է, քիչ մնացեր է որ յարութիւն ալ տայ: Երբոր պատմութիւնը լմնցաւ, յորդորեց հիւանդն որ բոլորովին անոր դեղերուն յանձնէ զինքը. Պէտք է որ, կըսէր, քիչ ժամանակին մէջ ըռընտնիաս: Իսկ աղուէսը մեծ ուշադրութմամբ կընէր մինչև խօսքը լմնցաւ. յետոյ աս պատասխանը տուաւ ծաղր ընելու կերպով մը. Դուն շատ աղէկ բացատրեցիր. իրաւ որ ըսածներուդ շատին կաւատայի թէ որ չիմտածէի քեզ տեսած ատենս. վասն զի կը տեսնեմ պռկունքներդ դեղնած և կապուտ որ ստոյգ նշան է թէ դուն գէշ տրամադրութեան մէջ հիւանդ ես: Հապա ինչպէս կրնաս զիս բժշկել երբոր չես կըրնար դուն զքեզ բժշկել: Ասանկ զուրցելով թողուց գնաց:

Օրինակ է անոնց որ իրենց պակասութիւնը կը թողուն, ուրիշինը քննելու կը նային, բայց ծաղր կըլլան ամենուն, որ կուզեն իրենց ըլ բժիշկ բժշկելու ուրիշին ալ:

Այս տարացոյց է ախտաւոր անձին,
Որ զայլոց ըզվէրս բուժել վաստակին.
Եթէ ունիս դեղ դարմանիչ ախտին,
Դիր զայն 'ի վերայ քոյդ անբուժ վիրին:
Քանի՞ շաղակրատք նմանեալ սմին
Բանիւ իմաստուն երևել ջանին.
Սակայն գիտնոց է սակաւ բարբառիլ,
Զի միշտ լսի ձայն դատարկ անօթին:

# ՇՈՒՆ ԵՒ ԳԱՒԱԶԱՆ

Թուք անարգանք յերես չարաց
Վարդ համարին և զարդ գլխոց։

Որուն թուք որ թքնես երեսայ,
Չի ամչնար ինչ որ ըլլայ։

ղա։ Կատղած շուն մը կը խածնէր բոլոր անցնողները. տէրն որ աս ըրած անկարգութեան իմացաւ՝ ուրիշներուն հասկըցընելու համար մէկ գաւազան մը կախեց վիզն որ ամմէն տեսնող զգուշանայ անկէ։ Իսկ շունը կարծելով թէ ան մէկ պատուի մը նշան է որ վզին վրայ կը տանէր, սկսաւ հպարտանալով երթալ ճամբաներէն գլուխը վերցուցած, և նախատինքով կը նայէր ուրիշ շներուն։ Անոնց մէջէն մէկ շուն մը չիկրցաւ քաշել սոր անմիտ հպարտութիւնը, բաց իրեն. խեղճ յիմար, ինչ է ըրած անխելքութիւնդ. անանկ բանի մը վրայ կը պարծենաս որ քեզ պէտք է ցածցընել. վիզդ անցած գաւազանը չէ նշան քաջութեան, այլ նշան քու չարութեանդ։

Ամօթ չունեցող մարդուն ինչ որ ընես՝ իրեն մեծութիւն կը սեպէ, և ամենևին գէշ չըլլայ։ Անոր համար գիտունները ամէն չարէն վեր կը դընէին անամօթը, և աղօթք կընէին թէ մի՛ տանիր ամօթն երեսէն։

Այնպէս փառասէրք որչափ նախատին,
Զայն շուք և պարծանք վերագրեն անձին.
Թէ առ չարութեան 'ի ճակատ խարին,
Իբրև քաջութեան նշանակ պարծին։
Զի՞նչ անհամբոյր բանք, զի՞նչ գաղանային,
Իբրև անպատկառ խածատող ժանտին.
Քանզի յերեսաց երբ ամօթ մերժի,
Ազատ զամենայն առնէ ըստ կամի։

## ՈՒՂՏ ԵՒ ԴԻՈՍ

Այր գանգատող հաշէ մաշի.
Որչափ խնդրէ միշտ վնասի։

Տժգոհ մարդը որչափ որ լայ,
Այնչափ վնաս իրեն կու գայ։

ՂԲ. Օր մը ուղտը (դէվէն) կը տրտնջար Դիոսին թէ ինչո՞ւ համար չածները ցուլին կամ եզին եղջիւր տուելին, ու ինծի մինակ ան֊կաճ տուելին. կերևնայ թէ, կըսէր տրտնջողը, եղջիւրներն ինծի ան կենդանիէն շատ աւելի կը վայլէին, և եթէ անանք գլխուս վրայ բու֊սած ըլլային՝ շատ աղուոր պիտի երևնային որ ինծի կընային ծառայելու թէ զարդա֊րանքի և թէ պաշտպանութեան համար։ Տրտունջքն որ լմնցաւ, կարծեց թէ Դիոս պիտի նայի իրեն խօսքին, բայց հակառակն եղաւ. վասն զի բարկանալով անոր անխելք



ղը. Ուղտ և Դիոս։ ղթ. Սիրամարգ և Կռունկն։



ճ. Եղևլին և Մորենի։ ճա. Ձկնորս և Ձուկն փոքր։



ճբ. Արծիւ և Բզէզ։ ճգ. Ագռաւ ծարաւի։

պանդատանացը վրայ՝ չէ թէ միայն եղջիւր չխտուաւ որ խնդրեց, այլ և անկաճներն ալ մանտրըցուց :

Տժգոհ մարդը որչափ [illegible] ունենայ՝ բան մը կը գտնէ տրտնջալու. բայց պէտք է ամէն մարդ իրեն ունեցածէն վրայ գոհ ըլլալ, և ոչ [illegible] որ չըլլայ թէ ոչ բարկութեամբը ունեցածն ալ կորսընցընէ :

Հասք ըղտու նման տուանջան թէ հէմ
Ոչ ունէ ած ղայս ինչ զոր կամիմ·
Չգիտեն ըղկարգ ամենիմաստին,
Որ չափով կշռէ զչափ բոլորին :
Զի՞ քեզ, ով յիմար, զի՞ ձայնես ուժգին,
Կամի՞ս փոփոխել զկանոն անբաւին·
Դու կաս ես անարգ և որդն չնչին,
Իսկ Նա անսահման զեղելոց բարին :

## ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՔ

Որ ոչ կշռէ զխախճան իւրն ,
Իւր վնասուք փորձի յանձին ։

Ամէն բանի մէջ մի մտներ ,
Առաջ նայէ կրնա՞ս ըներ ։

ղճ. Մէկ մուշտակ կարող մը կը փնտըռ-ռէր արջու մորթ (փէրէ)։ Մի աշխատիր, ը-սին իրեն երկու դրացիները, մենք հիմա կեր-թանք հօս մօտ անտառը կը զարնենք մեծ արջ մը կը բերենք։ Ասանկ խօսելով ծախե-ցին արջուն մորթն ու պարտական եղան որ անոր ձեռքը տան։ Ուստի ելան գնացին ան-տառը. բայց ներս մտածնուն պէս՝ մէկ մեծ արջ մը ելաւ իր բունէն վազեց շիտակ ա-սոնց վրայ. աս երկու կարիճները մոռցան իրենց ըրած առուտուրը, և ուրիշ բան չի-մտածեցին՝ միայն թէ ազատին. մէկը փախ-տուեցաւ ծառն ելաւ, մէկալն որ գիտէր թէ արջը մեռած մարմինին չի մօտիր՝ ընկաւ գե-տինն ու շունչը բռնեց մեռելի պէս եղաւ։ Արջն որ եկաւ տեսաւ զայն գետինը փը-ռուած, հոտուըտալով աղեն անդին դար-ձուց, և մեռածի տեղ դնելով ձգեց գնաց։ Երբոր հեռացաւ, մէկալ ընկերը ծառէն իջ-ջաւ եկաւ ընկերոջը հարցուց թէ արջն ինչ ըսաւ ականջդ 'ի վար երբոր քովդ էր մօ-տեցեր։ Ան ալ կիսամեռ պատասխան տը-

ւու, թէ Ըսաց որ ամենևին չիծախէք ար-
քուն մորթը մինչև որ գետնին վրայ ձգած
ըլլայ :

Պէտք է ամէն բանին վերջը մտածել և անանկ ընել. շատ մեծ պակասութիւն է ետքը մտածելով ետքին ըսելն ընել թեթևութիւն, որ շատ մարդիկ ունեցեր են :

Այս գործ անխոհեմ վաճառականաց,
Որ գին հատանեն անծանօթ իրաց ․
Եւ զի նկրտին զրկել օտարաց ,
Բայց ինքեանք զրկին արտաքոյ մտաց ։
Զխորդ վայելուչ ընկերականաց ,
Հաւատարիմ գոլ խոհեմ 'ի գնացս ․
Զամենայն արարս արդար կշռելով ,
Հահին միշտ գովին յազանց և յազգաց ։

## ԱՄԱՆ ԵՐԿԱԹԻ ԵՒ ԱՄԱՆ ԽԵՑԵՂԷՆ

Որ ոչ է գոհ ընդ իւր վիճակ ,
  Զինքն արկանէ 'ի մեծ վտանգ :

Ով որ գոհ չէ իր վիճակէն ,
  Շուտ կըբերէ վայ իր գլխին :

ղէ · Օր մը երկըթէ ամանը հողէ ամա-
նին ըսաց թէ եղբայր, մենք խոհարանին
(մութֆագին) մէկ կողմէն 'ի զատ ուրիշ բան մը-
տի չիտեսնէ՞նք · ով որ բան չէ տեսած՝ բան
չիյտէ պատմել, նաև կըսուի թէ ճամբոր-
դութիւնը միտք կը բանայ : Ես կը փափաքիմ
որ քաղաք տեսնեմ, թէ որ դուն ալ ունիս
աս հետաքրքրութիւն՝ միատեղ ճամբորդու-
թի ընենք : Կը տեսնե՞ս ան ջուրն որ վարէն
կանցնի, պէտք է որ մէջը մտնենք, յետոյ
թող կուտանք զմեզ ջրին որ վազելով տա-
նի · և աս կերպով խիստ քիչ ժամանակին
մէջ շատ ճամբայ կրնանք ընել, ան ալ ա-
ռանց աշխատանքի ինչպէս կը տեսնես : Հո-
ղէ ամանը շատ հաւնելով աս հնարքիս ե-
լաւ անկէ երկըթէ ամանին հետ մտաւ ջրին
մէջ, անոր ետեւէն կերթար, բայց չիկրցաւ
շատ հեռուն երթալ, վասն զի երսուն ոտք
անդին չիփացած կտոր կտոր եղաւ : Իսկ
երկըթէ ամանն ալ երբեմն աջ դին, երբեմն
ձախ դին ալէկոծելով միշտ քարէ 'ի քար կը
զարնուէր :

Փոփոխամիտ մարդը մէկ բանը կըթողու մէկալը կընէ, մէկ տեղէն մէկալ տեղ կերթայ, բայց ինչ որ ընէ՝ ուզածն է։ Մէկը հարցուց փիլիսոփայի մը թէ Շատ տեղ տաւեցի՝ ինչո՞ւ համար բան մը սորվեցայ։ Ան ալ պատասխան տուաւ թէ Դուն քեզի հետդ պտըտցնելուդ համար տարին ճամբէր։

Դժնդակ բերմունք փոփոխամըտին,
Որ աստանդական ցանգ տարուբերին․
Ի գիտել բազում՝ մոլորեալ շրջին,
Յօտարութեան անդ մաշին կորնչին։
Քանզի արարիչն էից բնաւին
Ետ զանազան գործս ըստ անցնիւր յատկին․
Որ աժգոհ լինի ընդ իւր վիճակին,
Անվիճակ եղեալ քանդի իւրովին։

ՄԿՈՒՆՔ ԽՈՐՀՐԴԱԿՑԻՆ

Ժողով վատաց որչափ խորհի,
Ոչինչ բարի վճռել ունի։

Վախկոտ մարդիկ խոր կըտնեն,
Բայց լաւ բան մը ընել չեն գիտեր։

ղէ․ Մկները խորհուրդ կընէին, պիտի որոշէին թէ ինչպէս կրնան ազատիլ կատուին ճանկէն որ գրեթէ իրենց ազգին իրեք մասին երկուսը ջարդեր էր․ երբոր ամմէն մէկը կը մտմըտար իր կողմանէ, մէկ աւելի

ծեր մը իրենց մէջէն վեր ելաւ, ծանր ձայնով մը խօսեցաւ. Ես կարծեմ թէ, կըսէր, պէտք է աս անզգամ գազանին վիզը բոժոժ (ճնկըռակ) կախել, որ քովերնիս չիմօտեցած բոժոժը կիմացընէ մեզի շատ հեռուէն անոր գալը, և աս միջոցով ամմէն տեղէն կըրնանք փախչիլ. դուք ալ կը հասկընաք լաւ որ մեզի շատ դիւրին կըլլայ աս ճամբով զմեզ պաշտպանելու անոր ամմէն խաբէութենէն: Աստի բոլոր ժողովքը շատ գովեցին աս խորհրդին օգուտը, բայց դժուարութիւնը մնաց մէկ մուկ մը գտնելու որ կարենայ համարձակիլ և բոժոժը կախել կատուին վզէն, վ̃ զի ամէնքն ալ հրաժարեցան. մէկը կըսէր՝ թաթս վիրաւորած է, մէկալը՝ աչքս հեռուէն չի զօրեր. մէկն ալ ըսաց թէ ես շատ սրտոտ չեմ. մէկ ուրիշն ալ ըսաց, թէ չգիտեմ ինչպէս ընելու է: Աստի ամէնքն ալ զանազան պատճառներ առաջբերին. անանկ որ առանց բան մը որոշելու բաժնուեցան գացին:

Տկար և անշահ մարդիկ որոնք շատ ըլլան և շատ մտածեն՝ մէկ լաւ բան մը չեն կրնար առաջանել. վասն զի ինչ որ մտածեն՝ չեն կրնար գլուխ տանել, անկատար կը թողուն:

Նմանս է ախպար ժողովոց վատաց,
Որք նստին վճռել շահ հասարակաց.
Բայց զիա՞րդ հնար այնց ժողովականց,
Խորհել կատարել զօգտակարն ինքեանց:

Զի՛նչ օգուտ խորհել բազմատանջ մտաց ,
Եւ թողուլ անգործ զպիտանին խորհած .
Որ ոչ աշխատի յօգուտ ընկերաց ,
Ոչինչ վճարէ զերկ յօգտակարաց ։

## ՑՈՒԼ ԵՒ ՆՈԽԱԶ

Որ փակէ զգութն ընդդէմ եղբօր ,
Ոչ գտանէ զբարիս բոլոր ։

Թէ չէս գիտար նարօք եղբօր ,
Ո՛չ տէր գիտայ խեղճութեանց օր ։

ղգ. Աղուեսը մէկ ցուլի մը ետեւէն կերթի. իսկ ցուլն անկէ ազատելու համար ուզեց փախչիլ նոխազին գոմը կամ ախոռը . բայց նոխազը դուռը գոցեց , ու յանդգնութեամբ եղջիւրներն ալ ցցուց անոր ։ Ցուլը ետ քաշուելով ըսաց . Անզգամ թէ որ դուն չիտեսնէիր զիս հալածողը՝ շատ պիտի զգուշանայիր զիս այսպէս վռնտելու . գիտնաս որ եթէ չիկրնամ հիմա քու կամօքդ տունդ մտնել , բռնութեամբ ալ կը մտնեմ . թէ որ առեն ունենայի , քեզի կը սորվեցընէի ։

Ցուլն է (պուղայ), և նոխազն է արու այծ , որ օրինակ է խափանիչ անօգուտ մարդու , որ մէկին լաւ մը ընելէն 'ի զատ՝ ձեռ ալ փակ կուզէ , թէ-պէտ յետոյն ալ բան չիտայ ։

Տխուր է այս առակ անողորմ անձին
Որ փակէ գթութեան ընդդէմ ընկերին .
Փոխան նպաստել փախստականին ,
Եղջիւր դառնութեան ամբառնայ նմին :
Ուսիր օգնական լինել տընանկին ,
Մի՛ դառնար ընդդէմ վշտատես սրտին .
Զի որ ողորմի՝ ողորմին նմին ,
Պարտաւոր առնէ զվարձողն երկնային :

## ԴԻՈՍ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՔ

*Ջանամք զայլոց թերին ուղղել ,*
*Ի սեպհականն ոչ նշմարել :*

Այլոց գործքը ուղղել կուզենք ,
Մերինները դուրս կընետենք :

ղէ . Օր մը Դիոս ըսաց թէ բոլոր կենդանիները թող ժողվըվին առջեւս , վո՛ զի կուզեմ հասկընալ իրենց տրտունջն ու պակասութիւնը , և ինչ պակասութիւն որ ունենան՝ կը լեցընեմ : Անոնք ալ հնազանդելով եկան առջին . բայց Դիոս կարծեց թէ շատ գանգըտող պիտի գտնէ անոնց մէջէն . փիղը պիտի գանգատի պոչին համար , ուղտը անկաճին համար , մանաւանդ արջը՝ իր անշնորհք կազմուածքին համար : Բայց մեծ զարմանքն առ եղաւ , երբոր տեսաւ թէ ամէնքն ալ այնչափ հաճոյ էին իրենց վրայ՝ մինչև որտերնին ալ սըխմուեցաւ , թէ ինչո՞ւ Դիոս

*իրենց վրայ տանել կարծիք գացեր է։ Սա-կայն լաւ կրցան իրարու պակասութիւնը գտնել, թէ անոր պէտք է բան աւելցընել, մէկալէն պէտք է բան պակսեցընել։ Իսկ ամէն մէկը մասնաւորապէս իրենց կողմանէ անանկ գոհ կեցան, որ չխակելու բան մը չէ-գտաւ Դիոս։ Կապիկն ալ հպարտութեամբ ծնորհակալ եղաւ Դիոսին․ և զինքն այնպէս գեղեցիկի տեղ դրաւ, որ չի կրնար ըլլալ։*

Մինչ ուրիշի պակասութիւնը կը գտնենք, և զմեզ կատարեալ դրեր ենք․ ինչու մեր կը տեսնենք ուրի-շին ըրածը, թէպէտ նոյն են մերինը չենք տեսներ․ բայց երանի թէ նոյնին մերինը ուղղէինք քան թէ ու-րիշինը։

*Այս գանգատանաց տեսիլ է ամկին,*
*Որ աժգոհութեամբ վշտանան յանձին.*
*Բայց իբրև խնդրես թէ յի՞նչ պակասին,*
*Բերեն զընկերաց ոչ զիւրեանց թերին։*
*Զի՞ քեզ անխիմաստ, զի՞ գոչես ուժգին,*
*Զի՞նչ պակաս 'ի քեզ և զի՞նչ յընկերին․*
*Մեկին նշմարեալ զայլոց ըզթերին,*
*Ուղղես ոչ զքոյս, միայն ըզնոցին։*

# ՍԻՐԱՄԱՐԳ ԵՒ ԿՌՈՒՆԿՆ

Թող գովեսցեն օտարք համայն
Զքոյդ պերճութիւն՝ մի՛ քո բերան ։

Քու բերանըդ քեզ չգովէ ,
Թող ուրիշը քեզ վերցնէ ։

ղը · Սիրամարգը մէկ օր մը առատապէս կը պատուէ զկռունկը · երբոր պատուական կերակուրները կը տաքնային , ինքն սկսաւ խօսիլ թէ ինչ բանով կը զանազանի ուրիշ թռչուններէն ։ Յետոյ ուզեց հասկըցընել աս բարեկամին իր գերազանցութիւնը թէ որչափ անկէ վեր է · բացաւ պոչը և ցցուց անոր բոլոր վրայի գեղեցիկ գոյները ։ Իսկ կռունկը խոժոռելով անոր ունայնութեանը վրայ ըսաց · Բարեկամ, ես կը հաւանիմ քե֊զի թէ իմ փետուրներս քուկիններդ շատ վար են գեղեցկութեամբ · բայց երբոր կը մտածեմ թէ դուն դժուարութեամբ կը թռչիս հա֊զիւ տան մը երդիքին վրայ , և ես ամպերէն վեր կը բարձրանամ, երդում ըլլայ քեզի որ շատ ուրախութեամբ կը մխիթարուիմ ։

Սիրամարգը այսինքն (թաւուզ գուշին) օրի֊նակ է հպարտ ճարտասանին որ կարծէ թէ իրմէ վեր մարդ չկայ · բայց չի գիտեր թէ ուրիշին քով ինչ բաներ կան որ ինքը չունի ։

Այսպէս մոլեգնեալ ինքնապանծ ոգին,
Գեր 'ի վեր կարծէ զինքն բոլորին.
Մինչ զերանութիւն գնել խնդագին
Ցաւերեւոյթ գոյն ցոլման արեգին:
Զխորդ վաղանցուկ պերճութիւն նորին,
Ընդ շարժիլ լուսոյ այն տեսիլք փոխին.
Ջանա պերճանալ երանգօք ներքին,
Առաքինանալ 'ի թև թեթևին:

## ՎԱԳՐ ԵՒ ԳԱՅԼ

Որչափ յանդուգն իցէ հըզօր,
Ընդդէմ բազմաց մընայ անզօր:

Մի՛ վստահիր դուն քու ուժին,
Վախցիր թէ այլք ինչէր ունին:

ՁԹ. Վագր գազանը ժողվեց իր մօտաւոր կենդանիները և անոնց գլուխ եղաւ, ու գնաց որսորդներուն դէմ աս մտքով որ նախատանաց վրէժն անոնցմէ հանէ որ ամէն օր կընէին իրեն: Երբոր իր զօրքովը երեցաւ անոնց առջին, ըսաց կենդանիներուն. Ով բարեկամներ, ես կուզեմ հոս ձեզմէ բաժնուիլ ու մինակ թշնամիներուս վըրայ յարձակիլ, որովհետև ես այնչափ զօրութիւն ունիմ որ առանց ձեր օգնականութեան կրնամ հալածել թշնամիներս. դուք ալ զգոյշ կենաք, հոս կեցէք կաղաչեմ, ետևէս

*չիգայք ։ Իսկ գայլը հասկըցուց անոր թէ կերթամ՝ բայց կը վախամ չարաչար, զի մինակ ըլլալովդ որսորդներէն զօրաւոր չես կրնար ըլլալ․ ուստի թէ որ այսպէս միաբան երթանք վրանին յարձակինք՝ դիւրաւ կրնանք անոնցյաղթել։ Աս խորհուրդս բանի տեղ չիդրաւ վագրը․ և ինքիրեն վստահելով վազեց չիտակ որսորդներուն վրայ։ Բայց որսորդներն ան տեսածնուն պէս՝ կարկըտի նման վրան մաղեցին նետերը․ որոնց մէկը դպաւ իրեն և խոր վիրաւորեց։ Ան ատենը ստիպեցաւ ետ դառնալ, և ամըչնալով եկաւ գայլին քով որ շատ երեսը զարկաւ ըրած յանդգնութիւնը․ բայց վագրը ասանց զղջալու չիցաւեցաւ իր թշուառութեանը վրայ ։*

Վագր՝ այսինքն (*փէլէնկ*) գազանն է խիստ կատաղի և յանդուգն որ ամէն կենդանիներու հետ կը կռուի, մինչև առիւծի հետ ալ կը համարձակի կռուիլ։ Օրինակ է երբ ըմբռնող յանդուգն մարդու որ խելքին էկածը կընէ, և ամենևին ուրիշի մտիկ չըներ․ բայց շատ անգամ ալ խայտառակ կըլլայ։ Այսպէս են հիմակուան մարդիկ որ բարեկամի խօսքին մտիկ ընելով խելքերնին դրած կընեն ։

*Զի՞նչ շահ խիզախել խառնել ըզթշնամին ,*
*Մերժել չըլսել ըզձայն խրատատուին ․*
*Յորժամ ելանէ յասպարէզ մարտին ,*
*Կարեւէր խոցեալ ծառլի 'ի գլխին ։*

Արդ մի՛ վստահիր 'ի զէն յոյժ բազկին ,
Եւ մի՛ անխորհուրդ կարգեր ընդ բազմին ·
Զի զէն զօրութեան յոլովագունին
Խորտակէ միոյն զօրութիւն ուժգին :

## ԵՂԵՒԻՆ ԵՒ ՄՈՐԵՆԻ

Խոնարհ ոգին յամէն վայրկեան
Կայ 'ի չարեաց աներկեան :

Խոնարհ մարդիկ ուր որ ըլլան ,
Ամէն չարէ միշտ ազատ կան :

Ժ. Եղեւին ծառը կանարգէր զմորմենին ու կըսէր · Անպիտան ցուցանք բնութեան , տես իմ գլուխս մինչև ուր հասուցեր եմ , մտմըտա՝ ես ճիւղերովս որչափ տեղ գետնին վրայ գոցեր եմ : Չէ թէ միայն նաւերուն կայմեր (փէրէկներ) կը պատրաստեմ, այլ և տներու տաճարներու գերաններն ալ ես կը շինեմ · Ի՞նչ գործք կայ որ ես յարմար չըլլամ : Բայց դուն ողորմելի ծառիկ , չորս ոտքէն աւելի չես կրնար բարձրանալ գետնին մէջ՝ ուր որ քեզ կը տեսնեմ չորցած · հապա ի՞նչ օգուտ քեզմէ կրնայ ըլլալ : Պատասխան տուաւ մորմենին թէ ինծմէ բան մը չըլլար , բայց իմ միխթարութիւնս ան է որ քեզմէ քիչ կը վախնամ ան փայտ կտրողէն որ չիտակ մեր վրայ կուգայ : Ահա մեկէնիմէկ եղևինին բերանը գոցուեցաւ · վասն

*զի փայտ կտրողը շուտ մը կացինը վեր-ցուց անոր դէմ, և քիչ ժամանակին մէջ ջարդուփշուր ըրաւ վար ձգեց, ու դարձաւ գնաց առանց գպչելու մորմենիին. զի հար-կաւոր բան մը չունէր որ առնէր :*

Եղեւին (չամ) ծառը օրինակ է պարծենկոտ մարդուն որ գլուխը վերցնելու համար ոտքերը վար կը դարձնէ պարծենալով. Բայց օր կու գայ որ ինկած մարդուն ոտքը կըլլայ: Որ տեղ որ խոնարհութիւն կայ՝ հոն իմաստութիւն կը գտնուի, կըսէ Սողոմոն:

*Ահա սուտ պարծանք ունայնասէրին,*
*Պանծայ պարսաւէ զվիճակ խոնարհին.*
*Բայց նա միշտ է նոյն յանսասան կային,*
*Ինքն անդէն սահեալ ձըգի 'ի գետին:*
*Առ ինչ ձոխանալ յամպոց սահմանին,*
*Անտի 'ի խոնարհ սասանիլ հեշտին.*
*Բարի է աղքատ կալ անդրդուելի,*
*Քան ձոխ 'ի բարձուէ խորտակիլ յերկրի:*

## ՁԿՆՈՐՍ ԵՒ ՁՈՒԿՆ ՓՈՔՐԻԿ

*Դուզնաքեայ որս աւուր սերկեան*
*Շատ է քան մեծ որս ինչ վաղուեան։*

Առօրուան հաւը ֆոֆր ալ ըլլայ,
Վաղուան գառէն մեծ որս կըլլայ։

*Ծն․ Մէկ ձկնորս մը կը ձգէ իր կարթը (օլթան) գետին մէջ, կը բռնէ պզտի ձուկ մը, որ իր պզտիկութիւնն անոր առջին դնելով կաղաչէր որ զինքը թող տայ։ Խօսք կուտար որ եթէ թողու զինքն աւելի մեծնալու, քանի մը շաբաթէն ետև նորէն պիտի գար խածնէր անոր կարթը։ Աս անանկ բան է որ կըսէր, քեզի օգուտ է․ վասն զի յետոյ աւելի լաւ կերակուր կըլլամ քեզի։ Պատասխան տուաւ ձկնորսը․ թէ Ես չեմ կարծեր թէ դուն այնչափ յիմար ըլլաս որ խօսքիդ վըրայ կենաս․ բայց լաւ գիտեմ թէ ես ալ այնչափ անխելք չեմ որ քեզի հաւտամ ու թողում ունեցածս ունենալիքիս համար։*

Շատ մարդիկ կան որ բանի չեն հաւնիր, և ատերնին մեծ բանի կերայ է․ ու պատճառաւ պըզտիկէն ալ կը զրկուին ու խեղճ կը մնան։ Անոր համար ու օրուան հաւը վաղուան ոսկէն լաւ աղէկ է կըսուի։

Իմաստասիրել յառակէս մասին
Շատացեալ և գոհ լեր ընդ շահեալ իր ·
Զի մեծ է սերկեան շահ դուզնագունին,
Քան զանըստոյգ շահ վաղուեան մեծ իրին։
Շատք անգոհութեամբ թողուն զոր ունին,
Կարօտեալ մնան հանդիպիլ մեծին ·
Որ չէ հաճ ընդ փոքր պարգև իւր բաղդին,
Արտաքոյ լինի մեծին և փոքրին։

## ԱՐԾԻՒ ԵՒ ԲԶԷԶ

Զրկանք չարեաց անիրաւին
Նա և յորդւոցն հատուցանին։

Ով կը զրկէ զաւրըկըն փառն,
Իր զաւկըներն կըլլան անփառն։

ճը· Արծիւն երբեմն մէկ ճագար մը վեր կը վերցնէր առանց նայելու բզէզին աղաչանքին որ միջնորդութիւն կընէր բարեկամին համար, կաղաչէր արծիւին որ անոր կեանքը բաշխէ։ Իսկ արծիւն առանց լսելու անոր ձայնին՝ յափշտակեց տարաւ· բայց շատ չանցաւ խիստ զղջացաւ· վասն զի քանի մը օրէն ետև բզէզը տեսաւ որ արծիւը հեռացեր էր իր բունէն՝ թռաւ հոն, բոլոր անոր հաւկիթներն ապականեց, մըը ծակեց մըը կոտրեց, և իր բունը բոլորովին կործանելով բարեկամին մահուանը վրէժն առաւ։

Ճագարն է (*ատա դաւշանի*), նոյն բզէզն է (*պէօճէկ*) . ու արծիւն օրինակ է անոնց որ զր-կողութեամբ հարստութիւն կը ժողվեն զաւակներնուն . և որովհետև անոնց համար եղած այն անօրէնութեանը՝ արդարութիւնը կը պատժէ զանոնք ալ . ինչպէս կըսէ ան առակը, թէ հարք ագոխ կերան և որդւոց ատա-մունք առան :

*Տես զարգար պատիժ անլուր զրկողին ,*
*Պատրաստէ ձագուց ըղձիս ճագարին .*
*Սակայն իրաւունք ոչ թողուն նմին*
*Դարմանել զածածն , աճիլ զաւակին :*
*Այս հատուցումն է զրկողաց բաժին՝*
*Որ գանձեն որդւոց յանիրաւ շահին .*
*Սովին անժառանգ անորդի լինին ,*
*Որդիք փոխան հարց դառնաղէտ պատժին :*

## ՊԱՏԱՆԻ ԵՒ ԳՈՂ

*Ճարտար մտաց չէք ինչ դժուար ,*
*Ամէն չարեաց դտանէ ճար :*

Վնաս չի գար խելքով մարդուն ,
Ջանա դուն ալ ըլլաս գիտուն :

Ճգ . **Պ**ատանի մը ջրհորին քովն քարին վրայ երբոր պառկեր էր , մէկ գող մը շիտակ վրան կուգայ որ զինքը հանուեցընէ . իսկ պատանին հասկընալով անոր չար միտքը՝ սկսաւ լալ : Ան ատենը հարցուց գողը թէ

ինչ պատճառի համար կուլաս: Նա ալ պատասխան տուաւ. վայ ինծի, ահա աս հորին մէջ ոսկիէ աման մը ձգեցի: Շուտ մը գողը հանեց լաթերն ու հորն ինջաւ զայն հանելու համար, որ մէկալը կըսէր՝ թէ ձգեցի կորսնցուցի: Բայց երբոր կը փնտըռէր, ժողվեց պատանին գողին լաթերն առաւ փախաւ:

Խէլացի ճարպիկ մարդն ամէն բանին հնարքը կը գտնէ, իսկ յիմարը կը պաշարուի կը մնայ. անոր համար իմաստուն մարդն ամէնուն ցանկալի է, և ամէնուն աչքի մէջ մեծ յարգութիւն պէտք է ունենալ, ինչպէս կըսուի թէ իմաստունն աշխարհին կը տիրէ:

Արդ գողն 'ի գողէն յորժամ գողանայ,
Միտք հողածնայ ափշի զարմանայ.
Բայց սակայն գողոց գողունի իրաց,
Գողք են ժառանգող ըստ Ճիշդ օրինաց:
Եղուկ որ զխուր գործ թողու և գընայ
Կողոպտել զընկերն կեղեքել ջանայ.
Ո՞չ գիտէ թէ զանձ անիրաւ վաստակ
Ի չիք փոխարկեն և զոր 'ի տան կայ:

## ԱՌԻՒԾ ԵՒ ԱՅԾ

Մի հաւատար ձայնի բազմաց ,
Զի բանք այլոց են վասն ինքեանց ։

Ամէն խօսքի մի հաւատար ,
Շատին խաբրան է իր համար ։

Ճզ · Առիւծը կը տեսնէ մէկ այծ մը որ ամ_մէն գլէն ապառաժ բարձր քարի մը վրայ խոտ կուտէր · համկըցաւ առիւծն որ հոն ելլել չի կրնար , շուտ մը կանչեց անոր խո_նարհ ձայնով · Բարեկամ , ինչո՞ւ ատ բարձր ապառաժներուն վրայ կը ճանկես , ուր տեղ անհամ մամուռէն (եօսունէն) 'ի զատ բան մը չես կրնար արծել · շատ լաւ կընէիր՝ ինչպէս ինծի կերեւնայ՝ վար իջնէիր աս դաշտին մէջ ուր ես կարծիմ , զի խոտերը մատղաշ և զար_մանալի համով են , իջիր վար՝ նորէն կըսեմ քեզի ։ Պատասխան տուաւ այծը ծաղր ընե_լով · Բարեկամ , ահա շատ յօժարութեամբ կուզեմ ընել ըսածդ , բայց ան ատենը կը_նեմ երբոր քեզ չեմ տեսներ հոս բնաւ ։

Պէտք չէ Թշնամոյն անուշ խօսքերուն հաւատա_լով խաբուիլ · Ան որ անոր չար ըլլալովը հարկա_ւոր է իրարմէ , և ըսած բարեկամ ցուցնայ՝

տալ է, միայն իր շահը կը մտածէ ։ Շատ դժուար է հաւատարիմ մարդ գտնել, կըսէ իմաստունը ։

Վա՜յ որպէս առիւծ ցաւալից այծին
Թողուլ զապառաժ խայտալ՚ի դաշտին.
Բայց նա ծանուցեալ զխորհուրդ նենգողին,
Զարժանին առնէ պատասխան նըմին ։
Ո՛վ, քանիք խաբեալ առ սէր որկորին
Իջանեն ՚ի վայր ճարակել յախտին.
Եւ անդէն ինքեանք լինին կերակուր
Գազան թշնամւոյ ժանտ կլանողին ։

## ԱԳՌԱՒ ԾԱՐԱՒԻ

Հարկն է գլուխ նոր արուեստից ,
Ելս հընարէ անելք ելից ։

Երբոր հարկը մարդ կըստիպէ ,
Ամէն բաներն ճար կը գտնէ ։

ՃԷ. Ագռաւ մը խիստ ծարուած ջուր կը գտնէ ամանին տակը, որուն վիզն երկայն ու նեղ ըլլալով կտուցքը չէր կրնար ջրին հասցընել որ խմէ ։ Աս դժուարութենս ճարը գտնել անհնարին կերևնար. բայց որովհետև ծարաւէն կը մարէր, ծարաւն անցընելու հարկն իրեն ճար մը գտնել սորվեցուց ։ Ուստի ժողվեց շատ մանտրտիկ քարեր, ու մէկիկ մէկիկ կտուցքով բերաւ ամանին մէջ ձգեց. ասով կամաց կամաց ջուրը վեր ե֊

*լաւ, այնչափ որ վերջապէս ագռաւը ջուրը խմեց գիւրութեամբ :*

Հարկաւորութիւնը մարդուս միտքը որեւէ՝ շատ բան կը գտնէ, և շատ արուեստ հնարել կուտայ. Ինչպէս Թուբէլ Ադամայ թոռը փնտռան թէ դարբնութիւնը պէտք է մարդուն՝ երկնէն երկու գործ հնարեց. առաջ գործը փնտռան որ մամուլները բան կը գործեն, և գիտցաւ որ կաւը շատ հարկաւոր է, կաւ գործելը հնարեց, ևն :

*Այսպէս հարկն եղև ըստ բերման առթին*
*Գտող արուեստից դեղոց դարմանին.*
*Որով հանճարեղք յիւրաքանչիւր դար,*
*Պիտանի մարդկան գիւտ հնարեցին :*
*Արդ մի անարգեր ըստ հեղգամբոյն*
*Ըզգիւտըս նախնեաց ղառակըս նոցին.*
*Այլ ընտրեա զլաւն հետևեաց նմին,*
*Հանճարեա զգիւտս ըստ բնագիտին :*

## ՑՈՒԼ ԵՒ ՄՈՒԿՆ

Որչափ անարգ է փանաքին.
Գործել կարէ վնաս մեծին:

Մէ՛ պարծիր թէ ուժըդ շատ է,
Մէկ պզտիկ մը քեզ կը յաղթէ:

Ճզ. Ցուլ մը խոտին վրայ պառկած կը մտածէր իր ուժին վրայ: Թող փիղն ու առիւծը չըլլան, կըսէր ինքիրեն, իրաւ որ ամէն կենդանիներէն զօրաւոր և աՀագին ես եմ. աս երկուքէն 'ի զատ ամենևին մէկէն ալ չեմ վախնար: Երբոր ասանկ կը Հպարտանար, մէկ մուկ մը ախոռին ծակերէն դուրս ելաւ, և կատղած եկաւ խածաւ ցուլին ոտքն ու յետոյ վազեց մտաւ ելած ծակը: Ան ատենը ցուլն անանկ սաստիկ ցաւ իմացաւ, որ չիկրցաւ ղինքը բռնել և չիպօռալ: Ուստի մէկէն բերանը փոխեց յուսահատեցաւ տեսնելով թէ մուկն ալ կըրցաւ ղինքը նախատել, և այսպէս ինք ղինքը դրաւ վախցող կենդանիներուն կարգը:

Ո՞վ կը հաւատայ թէ մէկ մուկ մը կրնայ այսպիսի ուժով կենդանիին ասանկ բան ընել. Բայց գիտնան ինքնահաւան մարդիկ որ պզտիկ թշնամին կրնայ մեծ չար ընել. Ու ամող պէտք է խոնարհիլ:



ճդ. Ցուլ և Մուկն: ճժ. Սագ և տէրն:



ճժզ. Գայլ և Շուն վտիտ: ճժէ. Կապիկ և ձագ իւր:



ճիէ. Ուղևորք և Սօսի: ճիզ. Ձկնորս և Ձկունք:

Պարծանք սընոտի վէս մեծամըտին
 Զխարդ 'ի փոքուէ նանրացաւ դիւրին.
 Զի որ վեհ գնէ զինքն ամենեցուն,
 Նաև 'ի փոքունց ընկճի հեշտագոյն։
Քանի՛ք ինքնապանծ զանձինըս եդին
 Ի կշիռ վեհից դիւցազանց կարգին,
 Բայց 'ի գոյզն առթէ սահեալ 'ի խոնարհ,
 Ծանեան թէ զինչ են և զինչ կար անձին։

## ՄՈՒԿՆ ՓՈՔՐԻԿ ԵՒ ՄԱՅՐՆ

Եթէ տխօք խցես անփորձ,
 Խըրատ ծնողաց լըսէ՛ն քեզ փորձ։

Թէ մանուկ ես սորվէ մեծէն,
 Մէ՛ պարծենար թէ բան գիտեմ։

Ճէ. Մկան ձագ մը մօրը կը պատմէ ինչ որ իրեն հանդիպեր էր ճամբորդութեանը մէջ որ գացեր եկեր էր։ Կըսէր թէ օր մը հետաքրքրութիւս բերաւ որ մտնեմ բակի մը մէջ, և հոն գտայ մէկ կենդանի մը որ չէի ճանչնար, բայց խիստ գեղեցիկ ըլլալով շատ հաճեցայ անոր վրայ. վ̃ո զի կերպարանքն էր անուշ և համեստ, նայուածքը շնորհալի, վրան գունաւոր և պոչն երկան՝ գրեթէ մերինին նման։ Ահա ասանկ շատ գեղեցիկ տեսք ունէր. իսկ ես անանկ սիրեցի որ մէկէն պիտի մօտենայի անոր հետը ճանչուորութիւն ընելու համար. Նայիս մէկ անդգամ

*Թռչուն մը որ գլխուն վրայ կատր մը ճրխ-քըրտած միս ունէր՝ խռովեց, և սուր ձայ-նովը անանկ վախցուց զինք որ դողալով փախաւ: Ո՛րդեակ, ըսաց մայրը, այդ փառք տուր որ քեզ պահեր է աս չար պատահ-մունքէն որ չի կրնար ըլլալ. վասն զի ան կենդանին որ քեզի անուշ երևցեր է՝ կա-տուն է, իսկ Թռչունն է աքաղաղը որ մե-զի վնաս մը չի տար. բայց կատուն մեր կո-րուստէն՝ ի զատ ուրիշ բան չի մտածեր: Ուրեմն ճանչցիր թէ ինչ անխոհեմութեան մէջ ես որ անգութ թշնամւոյդ ձեռքն զքեզ ալ իտի մատնէիր:*

Ուրիշին գեղեցկութեանը մի նայիր, և մի ու-րուն փէսքովը և անուշ լեզուովը խաբուիր. պէտք է իմաստութեամբ ճանչնալ բարեկամը և թշնամին, որ չըլլայ թէ [illegible] մը յետոյ իյնաս. շատ բան պէտք է որ սա խելքը ուրիշէն քորցով:

*Օրինակ է այս խակամիտ մանկանց,*
*Որ կարծեն լինել հմուտ աշխարհաց.*
*Բայց անփորձ գոլով յոլով գիտելեաց,*
*Փորձ հասուն լինել կարօտին բազմաց:*
*Խըրատ է այս քեզ մանուկ ինքնապանծ,*
*Մի խաբիր տեսլեամբ գեղափայլ դիմաց.*
*Զի զգայութեք խաբիս և փորձիս,*
*Մխայն փորձ լինիս խորհրդով ծնողաց:*

## ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ԵԶՆ

*Թէ և զեղջիւր հատցես ժանտին,*
*Կռուի ոտիւք զնաստ կրկին:*

Եթէ կտրես յեղջիւր չարին,
Ոտքով զարնէ կոպայ կրկին:

ձը· **Ե**րկրագործ մը ուզեց եզին եղջիւրները կտրել որ միշտ իրեն դէմ կը վերցընէր · բայց կտրելէն ետև աւելի չարացաւ եզը, վասն զի տեսաւ թէ եղջիւրները կորսընցուց որով կը վնասէր անոր՝ սկսաւ ոտքերովը գետինը փորել անանկ կատղելով որ հանած փոշին ու հողը երկրագործին աչքը կը լեցունէր : Ուստի ըսաց խեղճ մարդը · Ո՛հ ինչ օգուտ եղաւ ինծի ըրած զգուշութիւնս · վասն զի աս չար կենդանին հիմա աւելի վնաս տուաւ ինծի ոտքերովը որ անցած օրերը այնչափ վնաս չէր տուած գլխովը :

Բարեկամներս մարդուն հետ պէտք է զգուշութեամբ վարուիլ ու չկատղեցնել, չէ նէ ըրածը չի մընար · Գլուխը կապես՝ ոտքովը կը կոտրէ, ոտքը կապես՝ եղջիւրովը : Ինչպէս որ գառնուկին ճանկը բերնէն գէշ կը պատռէ, այսպէս ալ բարեկամներուն լեզուն աւելի կը ծակէ, կամ գիտուն մը :

Ուսիր չկպչել ընդ բարկացողին,
Հեզ կենակցութ՟ շահիլ զսիրտ ժանտին,
Զի ոչ վէրք հարուածք վիրօք բժշկին,
Ոչ հուր բարկութ՟ հրդեհք շիջանին:
Ջեղջիր ամբառնալ ընկեր ընկերին՝
Ոչ մարդոյ է գործ, այլ գազանային.
Ոլք խայթեն խեթկեն յօտար տեսակին,
Մարդ միայն ըմպէ զարիւն իւր սեռին:

## ԱՐԾԻՒ ԵՒ ՆԱՊԱՍՏԱԿ

Չարագործաց չարն է բաժին,
Զոր ինչ գործեն 'ի նոյն պատժին:

Չար ճուղը ւար նը գտնէ,
Իրէն գործքը ւէնք նը պատժէ:

ՃԺԹ. Արծիւն իր բունին մէջ կեցած տեսաւ հեռուէն որ նապաստակին ձագերը խոտ կուտեն, մէկէն վրանին հասաւ յափըշտակեց տարաւ իր ձագերուն: Իսկ անոնց մայրը կաղաչէր արծիւին որ խնայէ և իրեն տայ ձագերը: Բայց արծիւն առանց անոր աղաչանքին նայելու մէկիկ մէկիկ մեռցուց ձագերը աչքին առջև: Մայրն ալ կսկըծուն կատղեցաւ, և ուրիշ ճար չգտաւ վրէժխնդիր ըլլալու, սկսաւ ծառին տակի հողը փորել. այնչափ փորեց որ մինչև հողը զոր-

կածլին պէս ծառն ընկաւ, և արծիւին ձա-
գերը վար ընկան մեռան ։

Խրատ է անոնց որ իրենց մեծութենը ապաւինե-
լով անիրաւութիւն կընեն աղքատին. չեն գիտեր թէ
աղքատին ձայնը շատ վեր կելլէ, ու մէկէն փառ-
աւորողին փառքը ծուխեր կը դարձնէ ։

Զաւի է գեղեցիկ յանձնապաստանին
 Ի փոքունս անտի կըրել զարժանին.
 Որ քանդել ջանայ ըզտուն տընանկին,
 Քանդի նանրանայ զըրկանօք նովին ։
Մի՛ քեզ վստահիր թէ կաս 'ի գահին,
 Վերանցեալ 'ի կայս իշխանականին.
 Երկիր 'ի շընչմանց աչքերր հողմին,
 Որ կործան առնէ զալթու հըպարտին ։

## ՍԱԳ ԵՒ ՏԷՐՆ

*Սիրտ ագահին ոչ գիտէ յագ ,*
*Թէ և լցէ յոսկի համակ ։*

Ագահ սիրտը յոսկին թաղուի ,
Չի կշտանար , աւ շատ կամի ։

ՃԾ. **Մ**էկ սագ (խաղ) մը ամէն օր մէյ. մէկ ոսկիէ հաւկիթ կածէր տիրոջը. իսկ անե. րը միտքը դրաւ թէ սագին ներսը լեցուն ոս. կի է ։ Աս մտքով բռնեց խողխեց զսագը. բայց ինչպէս յուսահատեցաւ երբոր բացաւ փորն ու բան մը չգտաւ ինչ որ կը խնդրէր ։

Ագահութիւնը երբեմն ագահին որպէս մէջ թագա. ւորէ, կը կուրացնէ զայն. և որչափ շատնայ ոսկին՝ այնչափ աս մոլութիւն ալ կը սաստկանայ. Վերջապէս հոգին ալ կերէ մարմինն ալ։ Դիոգինէս փիլիսո. փային հարցուցին թէ ոսկին ինչու դեղին է. պա. տասխանեց թէ շատ խնդրող ունենալուն համար՝ վախէն դեղներ է ։

*Ո՛վ քանի անյագ սիրտ ոսկեսիրին ,*
*Ոչինչ շատանայ ընդ ձիրս բաղդին.*
*Ի մի ումպ ըմպէր թէ էր 'ի ձեռին*
*Զոսկի և զարծաթ գանձ ափեզերին ։*

Է զի 'ի ցանկալ հանդիպիլ շաւին ,
Թողու զբաւականն որ կայ 'ի ձեռին ·
Եւ է զի յոսկի համակիլ սըրտին՝
Ճնշի և մաշի նոյն սիրտ նոյն հոգին :

## ԸՆՁԱՌԻՒՆ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Մեծ և չքնաղ է գեղ հոգւոյ ,
Քան վայելչուկ տեսիլ մարմնոյ :

Մի՛ պարծիր սոսկ մարմնոյդ վրայ ,
Նայէ հոգիդ պայծառ ըլլայ :

Ճժա · Ընձառիւծը կը պնդէր թէ աղուէսէն շատ վեր է ինքը · Լաւ նայէ , կըսէր , իմ վրայիս աղուորութենը · կը տեսնես ինչպէս փայլուն գունաւոր խատուտիկ է մորթս · բարեկամ, առանց կեղծաւորութե՛ մտածէ , քուկինդ իմինիս առջին կրնա՞յ շուք ըլլալ բաղդատութեա՞ն : Պատասխանեց աղուէսը · Թէ ես անանկ տեղ կը տեսնեմ զիս որ կրնայի աղատ խոստովանիլ թէ քեզմէ շատ վար եմ, թէ որ չգիտնայի թէ խելացիները քիչ մը աւելի մեծ կը համարին հոգին քան թէ մորթը :

Ընձառիւծը խառնակ կենդանի ըլլալով՝ ձեւը [illegible] առիւծի նման է , իսկ մորթը ընձա-

(խափլանի) · որ հպարտ բնութիւնը օրինակ է պարծենկոտ կանանց որ միայն իրենց պարտաւորանքներուն վրայ կը պարծենան, և առաքինութեանն ու պարկեշտութիւնը մէկդի են ձգեր, որ է բուն մարդուն գեղեցկութիւնը ։

*Անիմաստ դատմունք մըտաց յիմարին,*
*Որ 'ի գեղ մարմնոյ դնէ զիւր բարին ·*
*Պանծայ վեհ լինել այն բազմագիտին,*
*Զի պերճ երևի տեսիլն արտաքին ։*
*Բաղումք 'ի մեր դար յայս խորհուրդ բերին,*
*Յարգեն զգեղ մարմնոյ և ոչ ըզհոգին ·*
*Թողեալ ըզներքին պըճնեն զարտաքին,*
*Զերկ գոլով բարեաց իմացականին ։*

## ԵՐԿՈՒ ԲԺԻՇԿՔ ԵՒ ՀԻՒԱՆԴ

*Արդ մի այլոց ըղձեղ մատներ,*
*Բերեն 'ի գլուխ քո սև օրեր ։*

Մէ հափներ թէզ ուրիշներուն,
Ճոտփոն կէրթաս ծոցը հողուն ։

*ՃԺԷ · Հիւանդ մը իր հիւանդութեն զանազան ցաւերը կը պատմէ երկու բժշկի որ զինքը նայելու եկեր էին ։ Ամմէն մէկ պատճառ բանին մէկ բժիշկը միշտ կըսէր Շատ լաւ · մէկալն ալ կըսէր Շատ գէշ ։ Հիւանդը լաւ հասկըցաւ թէ աս բժիշկներուն ինչ կարծիք ունեցան իր հիւանդութեը վրայ որ*

Մէկին կարծիքը մէկալին հակառակ էր ։ Ուստի կապուեցաւ մնաց որն ընտրէ, վասն զի դժուար էր ընտրութիւը. երկու կողմի կարծիքն ալ հաստատելով պինդ ունէին, և պակաս չէր իրենց պատճառները՝ թէպէտ անհաստատ բայց մեծցուցած և երկան պատճառներ էին ։ Այս ընդդիմութեց մէջ հիւանդը քրտընելով չէր գիտեր որ կողմը բռնէ ։ Վերջապէս յանկարծ գէշ ըսողին հետևեցաւ, և ամէն զգուշութը անոր կարգադրութեը յանձնուելով՝ դեղ առաւ անկէ մեռաւ. Իսկ բժիշկներն ասոր մահուանը վրայ երկու պատճառ տուին. գէշ ըսողը կըսէր. Տեսա՞ք ես ինչպէս ճանչցայ. լաւ ըսողն ալ կըսէր որ Անսխալ կազատէր հիւանդը, թէ որ ինք իր գլխովը բան չընէր ։

Շատ զգուշանալու է որ օտար մարդու խօսքին հաստատելով դեղեր չխմացնես ուրիշին ձեռքը. Ինչպէս շատ մարդու բան հարցուր, խրատ առ, բայց քիչ մարդու հետևէ, և նայէ որ մարդու ձեռք չիյնաս ։

Այսպէս որ տենչայ այլոց դարմանին
Մատնեալ զանձն 'ի ձեռս տգէտ բժշկին.
Փութով կորընչի ըստ առակողին,
Գընայ և նըստի 'ի մահու բանտին ։
Իսկ դու որ իշխան և տէր ես անձին,
Մի մատներ ըզքեզ օտարաց հեշտին.
Որ ոչ 'ի լաւ անդր փոխարկել ունին,
Եւ ոչ անպատճառ մատնեն գեհենին ։

## ԱԾԽԱԳՈՐԾ ԵՒ ՆԵՐԿԱՐԱՐ

*Սևատեսիլ ածխագործին ,*
*Ոչ երբեք իւր սեաւ փոշին :*

Թէպէտ մըրոտ անոյծ ըլլայ ,
Բերէ ճերմակ լաւ ներկանայ :

ՃԺԶ. Մէկ ածխագործ մը կըսէր ներկարարին , թէ Բարեկամ , իմ տունս քեզի շատ յարմար է , հրամմէ հոն նստէ , հաւատացիր որ շատ զարմանալի հանգիստ կըլլաս : Պատասխանեց մէկալը շնորհակալ ըլլալով անոր բարերարութեանը վրայ , թէ Ես կը հաւատամ որ քու տունդ ինծի շատ աղէկ կըլլայ , բայց ինչպէս կերեւնայ՝ ես աւելի լաւ կըլլամ առանձին մէկ տեղ մը նստիլ , ուր որ քու ածուխդ չի կրնար սեւցնել իմ կտաւներս :

Պաշտօնատար մարդն իր պաշտօնութիւնը չի փոխեր , կընայ որ ուրիշն ալ իրեն նման ընէ , կարծելով թէ իրեն պէս չար որ ըլլան՝ իր պաշտօնութիւնը կը գործէ : Անանկ չար ընկերէն պէտք է հեռու փախչիլ որ չըլլայ թէ ինքն ալ անոր պէս ըլլայ :

*Այս օրինակ է պարկեշտութեան ,*
*Որ ոչ առանձնէ զիւր ինքեան ձեւին ·*

Կոչէ զմերձաւոր նըստիլ առ նըմին,
Համակել ըզնա 'ի մուր սևագին:
Որպէս ախտաւորք շաղեալ 'ի տըղմին՝
Մաքուր ձևացեալ արդարոց մերձին.
Փախչել 'ի ճահ է, մերժել զայնպիսին,
Քանզի աղտեղեն զանմեղաց հոգին:

## ՄՈՐԵՆԻ, ՀՈՂԱՄԱՂ, ԵՒ ՉՂՋԻԿԱՆ

Ամէն խրաց գոյ լինչ պատճառ,
Քննեա զծերոց բան նախաճառ:

Ամէն բանի մէջ պատճառ կայ,
Կուզէ՞ս սորվիլ, գործէր կարդա:

ՃԺԳ. Մորմենին, հողամաղը, և չըղջիկն ընկերացան որ վաճառականութիւն ընեն. մորմենին ապրանք առաւ նաւը դրաւ որ հնդկաստան խրկէ. հողամաղը դրաւ իր կողմանէ գունտ մը ոսկի. չըղջիկն ալ իրեն համար արծաթ ժողվեց դրաւ նաւը: Ժամանակին որ եկաւ ճամբայ ելաւ նաւը. բայց շատ չհեռացած մէկ ալէկոծութեան մը հանդիպեցաւ, անանկ որ բոլոր մէջի ապրանքովը գնաց նաւը ծովուն տակը: Անկէ եղաւ որ հողամաղը միշտ ծովին քովերը կը պտըտի. յուսալով թէ ոսկին տեղէ մը գանէ: Չըղջիկն ալ կը վախնայ ցորեկին երևնալու՝ չըլլայ թէ փոխ առածին արծաթն ուզէ: Իսկ

մորմենին որ միշտ կը մտածէ իր ապրանքը գտնելու, ամէն անցնողներուն փէշը կը փակչի։

Հողամաղն է (խարապաթախ) Թռչունը որ Երկակենցաղ ըսածը՝ Միշտ գրեթէ ծովուն եզերքն է։ Աս տեսակս օրինակ է հասկցնելու մարդիկներուն որ միշտ մտքերնին՝ ափսոսալով կուլան կորսնցուցած բաներնուն վրայ։ Նաև ասկէ մնած է առածներ-րուն մէջ, թէ որ մորմենին փուշը մէկին վրայ կպ-չի՝ կըսեն թէ պարտք ունի։

Ահա գաղափար ընչաքաղց անձանց,
Որք մինչև ցմահ շահել նկրտին.
Եթէ միանգամ կորուսին ինչ գանձ,
Հեծեն և ողբան մինչ 'ի կէտ վերջին:
Են որք մահանան ընդ կորուստ իրաց,
Եւ են որ մոլեալ մտաթափ շրջին.
Բայց աւաղ ոչ մարդ սակս մեռեալաց,
Ի վան մարդոյն այն գանձ այն ոսկին:

# ԵՐԿՈՒ ՄԱՐԴԻԿ ԵՒ ԷՇԸ

*Հակառակողք յայնժամ հաշտին,*
*Երբ վնասիւք լսէք տուժին:*

Կռուասէր մարդ չի հաշտուի,
Մինչեւ վնաս չըպատահի:

*ՃԺԷ. Էշ մը մոլորած կերթար, երկու մարդ կը գտնեն զինքը ու կըսկսին վիճաբանութեն ընել թէ որուն կըլնի. երբոր կը ջանային մէկզմէկէ յափշտակելու՝ ըսին թէ ով որ աւելի զօրաւոր է՝ ան թող առնէ. ուստի սկսան ծեծկուիլ իրարու հետ. բայց շատ անխելքութեն ըրին. վ̃ն զի երբոր մէկզմէկ գետինը կը զարնէին՝ էշն ելաւ ձեռքերնուն փախաւ. և աստով հաշտուեցան սիրով սա երկու կռուողները:*

Կռուարար մարդիկ այնչափ մէկ բանին վրայ հակառակութիւն կ'ընեն որ վերջապէս ունեցածնին կը կորսընցընեն ու հապա կը մնանեն:

*Այս արդար պատիժ է կռուասիրաց,*
*Որք տքնին կորզել զշահ յիրերաց.*
*Բայց երբ ելանէ այն ինչ 'ի ձեռաց,*
*Ճուարեալ հաշտին ամաչէն յինքեանց:*

Ա՛ռ քեզ 'ի խրատ այս գործ աւելեաց,
Մի՛ ատեր զմնկերն առ սէր օգտութեանց.
Գաղանաց է բարք, որք թողուն զորսանս,
Անխնայ կուլն խածատեն զմնքեանս:

## ԳԱՅԼ ԵՒ ՇՈՒՆ ՎՏԻՏ

Անյագ որկոր ցանկայ շատին,
Բայց միշտ կարօտ կայ սակաւին:

Որոնք գոհ չեն ունեցածին,
Ունեցածէն կը զրկուին:

ՃԺԶ. Օր մը մէկ գայլ մը կը պատահի խիստ աղուոր շան մը, բայց անանկ վատուժ էր որ ոսկորն ու կաշին էր մնացեր. երբոր պիտի պատռէր զայն՝ ըսաց շունը. Ով պարոն գայլ, ի՞նչ կընես, չե՞ս տեսներ թէ հիմա ես անանկ վիճակի մէջ եմ որ մէկ ակռայիդ կերակուր չեմ ըլլար: Սակայն հաւատա ինծի՝ համբերէ տեղս դառնամ, երդում ըլլայ քեզի որ կը ջանամ զիս լաւ կերակրելու. թէ որ քիչ մը ժամանակէն ետև ախորժելիս հոն գաս, զիս այնպէս գիրցած պիտի գտնես մինչև չխպխալի զզջաս որ անշահ կերակուր մը թողուցիր՝ աւելի լաւ կերակուր ուտելու համար: Իսկ գայլը հաւատաց և թողուց զայն: Քանի մը օրէն ետև գնաց գայլը շանը տեղը, և դռանը ծակէն տեսաւ կանչեց որ դուրս ելլէ տուած

խօսքը կատարէ։ Պատասխանեց շունը թէ կուզես վաղն եկուր, զի այսօր չեմ յուսար թէ ան աստիճանը գիրցած ըլլամ որ քեզի յարմար կերակուր ըլլամ. և չեմ կարծեր թէ դուն ալ ինծմով գոհ ըլլաս։ Իսկ գայլն աս խօսքը լսեց չլսեց՝ կախեց ականջներն ու ետ դարձաւ, և երդում ըրաւ որ մէյմը նալ բան մը բռնէ՝ բնաւ չխղխմի թողու։

Պզտի բանին չհաւանողը մեծէն ալ կը զրկուի պզտիկէն ալ. Ձուն ըլ պզտիկը յետոյէն կը յգէ, մեծն ալ չի գտներ, կը մնայ դատարկ։ Գիտունի մը հարցուցին թէ աշխարքիս վրայ ո՞վ է խելացի. ան ալ ըսաւ թէ բանի չհաւանող ծոյլ մարդը։

Ապաժոյժ բերմունք որկորամէտին
Թողու զբաւականն, վազէ անչափին.
Որով և նքթեալ հիւծի առ վշտին,
Արժանի պատիժ անյագ որկորին։
Արդ մի՛ նմանիր գիշախանձ չարին,
Որ մարմնով այլոց սնանի յանձին.
Ի սնունդ մարմնոյ շատ են ձեռք կրկին,
Քրտամբք երեսաց սնանել ինքնին։

## ԿԱՊԻԿ ԵՒ ՁԱԳ ԻՒՐ

*Որ քան զչափ սիրէ զորդին ,*
*Կորկին վնաս տանէ նմին :*

Թէ չափէ դուրս զաւակ սիրէ ,
Անշահ կոպիտ որդի կընէ :

*ՃԺԷ . Մէկ կապիկ մը խելքը տուեր էր իր մէկ ձագին , անանկ որ գիշեր ցորեկ կը պագնէր ու գրկելով կը սխմէր . բայց աս անխելք սէրը շատ գէշ ըրաւ ձագին , վասն զի օր մը սաստիկ սիրելով գիրկն առաւ անանկ ուժով սխմեց գրկին մէջ որ շունչը բռնուեցաւ մեռաւ խեղճ ձագը :*

Կապիկը կըսեն թէ այնչափ սաստիկ կը սիրէ ձագն որ երբեմն սխմելով կը մեռցնէ : Օրինակ է անանկ ծնողաց որ սաստիկ սիրելով զաւակնին անխելք կընեն , որոնք առանց կրթութեան մեծնալով՝ անպատկառ կըլլան և բանի մը շահ չունին , մինչև մարդկութեան մէջ մեռած կը սեպուին :

*Տեսանե՞ս զոխալ յիմար ծնողին ,*
*Որ գգուէ այնչափ փայփայէ զորդին*
*Մինչ շիջուցանել զեռանդուն ոգին ,*
*Առնէ զայն անմիտ իբրև լոկ մարմին :*
*Զինչ օգտեն գգուանք յիմար զաւակին ,*
*Երբ անկիրթ աճէ նման անբանին .*
*Քանզի անխրատք ոչ մարդ համարին ,*
*Թէ և կերպարան մարդոյ ունիցին :*

# ԱՒԱԶԱԿ ՀԵՂՁԵԱԼ

*Թէ և պատիժք անագանին ,*
*Բայց ոճրագործք ոչ ազատին :*

Չարերն որչափ պատժէն փախչին ,
Հարկաւ կուգայ կորուստն անձին :

*ճժը. Դատաւորը մէկ աւազակի մը ե-տեւէն կիյնի որ բռնէ , իսկ աւազակն անանկ արագութեամբ կը փախչի որ չեն կրնար բռնել . ուստի կազատի և միտքը կը դնէ չա-րագործը՝ թէ ա՛լ տեղէ մը վախնալու բան չունի , կարծէ թէ իր գործած չարութիւն-ները առանց պատժի պիտի մնան : Բայց Երկնաւորը լաւ գիտէ հատուցում ընելու , վասն զի երբոր աս թշուառականը մէկ գե-տի մը մէջ մտեր անդին կուզեր անցնիլ , չի-գիտնալով անոր խորութիւնը՝ ոտքը սողաց գնաց տակը խղդուեցաւ :*

Թող խրատուին ասկէ չարագործները որոնց կո-րուստը կը սպասէր . Հարկաւ պիտի ըլլայ , վասն զի ա̄ծ է իրենց Թշնամին , ա̄յ յետեւէն ո՞ւր պիտի փախ-չին . ա̄ծ կը խաբուի՞ր , կամ ո̄վ գիտէր :

*Այս է հատուցումն օրինաց Տէրին ,*
*Որ կշռէ էից ըստ գործոց նոցին .*
*Թէ իցէ բարի՝ այն մնայ նմին ,*
*Իսկ եթէ չար է՝ հանդիպի չարին :*

Ո՛վ, զնմրդ պատրաստ կայ դատող վերին
Դատել և պատժել գործ չարագործին.
Թէ հալին արդարք յերեսաց նորին,
Թշուառ մեղաւորք զի՞նչ առնել ունին:

## ԵԶԻՆՔ ԵՒ ԼՈՒԾ

Որչափ բեռն է անտանելի,
Համբերատար սիրտն տանի:

Անհամբերին թեթեւ մը ծանր գայ,
Տրտունջներուն խօսք կը պոռայ:

ՃԺԹ. Երկու եզներ լծած էին մէկ խիստ բեռցուած սայլի մը վրայ և շատ աշխատանքով կը քաշէին. իսկ լուծն անանկ սաստիկ ձայն կը հանէր որ եզները ձայնէն վախցան ու կեցան: Յետոյ դարձան լուծին ըսին, Թէ ով անհանգարտ, ինչ ունիս որ սանկ կը պոռաս, գրեթէ դուն աշխատանք մը չունիս, մենք որ բոլոր այսչափ բեռը քաշելու կաշխատինք՝ մէկ ձայն մը չենք հաներ:

Համբերող մարդը որչափ ծանր բեռան տակ ըլլայ՝ ձայնը չելլեր. իսկ անհամբերին ձայնը թեթեւ բանէ մը տաղտուկ կելլէ: Արանք անոր որ համբերութեամբ իր բեռը կը թեթեւցընէ, և առանց տրտնջելու կը տանի:

Ահա տարացոյց համբերատարին ,
Որ ընկճեալ բեռամբ վատակի լծին .
Իսկ եթէ ոմանք մատամբ չինչ մերձին ,
Ձայն գանգատանաց արձակեն ուժգին :
Ջանա անլեզու տանիլ քոյդ բեռին ,
Ընթարկեալ ձեռաց ամենակալին .
Լռողք տրտնջողք միապէս տանին ,
Մին արդիւնաւորի միւսն է անբաժին :

## ԱՔԱՂԱՂ ԵՒ ԱՂՈՒԵՍ

Խարդախն որչափ նենգել ջանայ ,
Ծանակ լինի անհետանայ :

Որչափ որ շատ բան կը խորհի ,
Զարմանալի կը կորսուի :

ՃՂ. Աքաղաղ մը նստեր էր բարձր կաղնի ծառին վրայ. մէկ աղուէս մը հոն գալով տեսաւ որ չի կրնար անոր հասնիլ, վազեց ծառին տակն ու կանչեց անոր. Բարեկամ, աւետիս աւետիս, խաղաղութիւնը հաստատուեցաւ երէկ ձեր մէջն ու մեր մէջը, ուրեմն կաղաչեմ քեզի աւկեց եու առանց ոխ պահելու պարտական ենք մէկզմէկ սիրել եղբօր պէս, և մենք ալ սկսինք հաշտուիլ. ուստի եկոր սիրելի ինջիր որ պագտուինք : Պատասխան տուաւ աքաղաղը. Բարեկամ, չեյտես թէ որչափ զիս ուրախացուց աւետիսդ. կարծեմ թէ իրաւ է, ինչպէս ինծի

կերևնայ, վասն զի կը տեսնեմ որ վարէն եր- կու սուրհանդակ (Թաթար) կուգան մեզի սա աւետիսը տալու համար · ուստի քիչ մը կե- ցիր կաղաչեմ, անոնք հոս հասածնուն պէս ես ալ վար կիջնիմ, չորսս մէկ տեղ կու- րախանանք : Եւ սա սուրհանդակներն են երկու որսող շներ : Աս որ լսեց աղուէսը դող ելաւ, ու ձորով փախաւ անկէ · իսկ աքաղաղը վերը վերցուց, սկսաւ երգելով խնտալ անոր վրան :

Անզգամն իր ըրածը կը գտնէ · որչափ ուրիշին կեղծաւորութիւն ընելով խաբէր զմարդոյ, այնչափ ինքը կրկին տուաւ :

Տես ըզխաբուսհաս խարդախող չարին,
Ի նենգել զընկերն հալածի ինքնին ·
Քանզի լոյս Հրագ նենգաւոր անձին,
Ի մասս արևու անդէն շիջանին :
Արդ այժմեան մարդիկ նման են սմին,
Միայն առ երես շուք տան ընկերին ·
Այսու քաղցրութեմբ երբ զսիրտ շահին,
Լարեն անխնայ զորոգայթ նմին :

## ՎԱՐԴ ԵՒ ԾԱՂԻԿՔ

*Զի՞նչ փառք փթթիլ չքնաղ վարդի,*
*Երբ յերեկուն ընդ փոյթ խամրի։*

Ի՞նչ շահ բուրումիւ վարդի նման,
Երբ փառքն ու կեանքն է մէկ օրուան։

*Ձիա· Ծաղկըները մօտեցին վարդին վրայ, և անոր գուներուն մէջ անանկ կենդանի պայծառութիւն մը գտան որ գրեթէ աստանց նախանձելու խոնարհեցան ու գեղեցկութեան պսակն իրեն տալ ուզեցին։ Ամմէնքը միաբերան կըսէին թէ մեր գոյները անոր պէս մէկ հատիկ գեղեցիկ չեն, մենք անոր անուշ հոտը չենք կրնար հանելու. ուստի քեզի կը վայլէ պսակն, ազնիւ վարդ, քեզի կը վայլէ միմիակ անուշ հովին սիրուն գգուանքը։ Վարդն ալ ըսաց հառաչելով. Ով ծաղկըներ, որովհետև ես մէկ աւուր մէջ կը ծնիմ ու կը թոռմիմ, ինչո՞ւս պէտք է իմին այսչափ գեղեցկութիւնս. ո՛չ աւելի կուզէի ձեզմէ վար ըլլալ և ձեզի չափ դիմանալ։*

Օրինակ առնենք անոնք որ իրենց աղուորութեանը՝ խելքին ու արդարութեան ապաւինելով կը հպարտանան. որովհետև մէկ րոպէին մէջ ամենքը կորնչին կերթան, երբ աղեկութիւն մը ունին՝ միայն ան կը մնայ։

Ահա քեզ տխրալի փառաց աշխարհին,
Որ փախչի գընայ նման ստուերի·
Մինչև է փթթեալ խամրի շիջանի,
Ի քթթել ական ընդ չեղեալս խառնի։
Թէ պանծանք ծաղկանց ոչինչ համարի,
Զի՞նչ ասա մարդոյն դիւրեղծանելն·
Որ այսօր ՚ի կառս՝ վաղիւն ՚ի դագաղս
Լքեալ զամենայն յաւիտեան հանգչի։

## ԿԱՐԱՊ ԵՒ ԿՌՈՒՆԿՆ

Թէ կեանք մարդոյ է բարելի,
Լինի օրհասն ուրախալի։

Թէ որ վարքդ է առանց մեղքի,
Մահըդ կըլլայ ուրախութեամբ լի։

ճժբ. Կարապ Թռչունը մեռնելու ատենը կերգեր ինչպէս իր սովորութի՛ն է։ Կռուն-կը զայն տեսնելով ըսաց իրեն· Զեմ գիտեր ի՞նչ կը մտմըտաս որ ասանկ վիճակի մէջ ալ կուրախանաս։ Պատասխանեց կարապը թէ կը հասկընամ որ պիտի մեռնիմ կուրախա-նամ· միթէ ճամբէ դուրս անկարգ բա՞ն է յայտնել ուրախութի՛ն, երբոր զիս կը տես-նեմ աս եղքի կէանս մէջ որ բոլոր իմ թը-շուառութենէս պիտոր ազատիմ։

Օրինակ է առակս երջանիկ մարդուն որ մեռնե-լու ատեն ըրած բարեգործութիւնները մտքը բե-

բերել հոգաբարձանայ, որ աշխարհքին թշուառութիւն հալածէ. Ինչպէս հին ատենն ալ մը կար որուն փառք որ կը ծնանէին՝ հոգւոյն, և երբոր մէկը կը մեռնէր՝ հոգաբարձանայէն ։

Լաւ է օր մահու քան զօր ծննդեան,
  Արդար օրէնք գիտունք վճռեցին.
  Քանզի յօր ծննդեան միշտ չարիք ծագին,
  Իսկ յաւուր մահու է չարեաց վախճան ։
Երանի մարդոյ որ յաւուր մահուան
  Ընդ գործըս բարեաց հրճուի խնդագին.
  Սիրտ առաքինեաց ցնծայ 'ի բարին,
  Վայ անօրինաց մահու անվախճան ։

## ՋՐՇՈՒՆ ԵՒ ՇՈՒՆ

Պսակ գործոց է կէտն յետին,
  Եզր և վախճան իրաց բնաւին ։

Ամէն բանին վերջը նայէ,
  Որ գործերը կը պսակէ ։

Առկ. Մէկ շուն մը կիյնի ջրշանն ետևէն. և ջրշունն անոր ձեռքէն ազատելու համար զինքը ջուրը կը նետէ. շունն ալ անոր ետեւէն ջուրը նետուեցաւ լողալով գնաց անոր հասաւ, և այնչափ մօտեցաւ որ բերանը բացաւ պիտի բռնէր. իսկ ջրշունը մէկէն մտաւ ջրին տակն ու աներևոյթ եղաւ ։ Նւ

այսպէս շունը կորսնցուց որսը ան կէտին
որ ձեռքովը գրեր էր թէ բռնեցի ։

Կրէսոս Թագաւորը հարցուց օր մը Սողոն փիլի-սոփային, թէ ինծի պէս երջանիկ կը գտնուի՞ աշ-խարհքիս մէջ. ան ալ պատասխան տուաւ, թէ մին-չեւ ետքի կէտը պէտք չէ որ երանի տայ մարդս իր մեծութենը. Վասն զի ամէն գործք վախճանով կը պատուի ։

Աստ է տեսանել վճիռ Սողոնին ,
Թէ վախճանն է եզր պսակին իրին .
Մինչչև է հասեալ գործ ինչ այն կէտին՝
Մի՛ վստահանար , տեղի տալ հեշտին ։
Ո՜վ զմարդ ոմանք ՚ի մօտ եղին
Ցնծալ հանապազ ՚ի գահոյս բաղդին .
Բայց ՚ի Թարթ ական ընդհատեալ անուին ,
Վ՚եր ՚ի վայր արար զխորհուրդ հողածնին։

## ԱՅՐ ԱՆՀԵՐ

Թէ չէ ինչ քո յատուկ անձին ,
Ո՛չինչ օգտէն իրք օտարին ։

Թէ քու ջանքդ քեզ շահ չընէ ,
Օտարին ինչ պիտի ընէ ։

Ճիգ. Մէկ անհեր մարդ մը հարկադրե-ցաւ որ գլուխն օտար մազ դնէ. երբոր օր մը պար կը խաղար ընկերներուն հետ՝ անանկ

ուժով ցանթկեց որ մարմինը ցնցուեցաւ և սուտ մազերը գլխէն վար ընկան: Աս որ տեսան ամէնքն սկսան խնդալ, իսկ պար խաղցողն ուզեց անուշ խօսքով մը աս ծիծաղը դադրեցընել անոնց ըսելով. Պարոններ, պէտք չէ այսչափ զարմանալ թէ աս մազերն ուրիշ մարդու գլխուն վրայ չեն կենար կեյնան, որովհետև բուն տիրոջը գլխուն վրայ չեն կրցած կենալ. մանաւանդ թէ իմ յատուկ մազերս գլխուս վրայ չեն մնացած, ուրիշի՞նը պիտի մնայ:

Ուրեմն բանը մեծութեանը խելքը մարդու օգուտ չունի. ջանա որ դուն ունենաս ան խելքն ան մեծութենն արդարութե՛ որ միշտ հետդ ըլլայ, և ղարիբներուդ ալ շահ ընէ:

Այսպէս որ ցանկայ ընչից օտարին,
Խաբի և մնայ աղքատ և մերկին.
Զի այն որ չօգտէ իւր վաստակողին,
Զի՞նչ օգտեսցէ օտարաց անձին:
Ջանա ամբարել քեզ բարիս ներքին,
Եւ մի մուրանար առ դուրս ընկերին.
Դիր զիմաստութիւն պսակ 'ի գլխին,
Զառաքինութիւն զարդ ինչ գագաթին:

## ՈՒՂԵՒՈՐՔ ԵՒ ՍՕՍԻ

*Զոր ինչ առնես ապերախտին,*
*Միշտ ապերախտ է յիւր բանին:*

Ապէրախտին ինչ բան ընէս,
Բոլոր ըրածդ ծով կընէտէս:

*ՃԻԷ. Շնիկ աստղին մէջ մէկ խիստ տաք օր մը երկու ճամբորդ զովանալու համար սօսի* (չինար) *ծառին շուքը նստան և արեգակին տաքութենէն ազատելով հոն քաշուեցան կեցան: Երբոր ծառին ճիւղերուն վրայ կը նայէին որ պտուղ չկար վրանին, սկսան իրարու ըսել. Ահա անպիտան ծառ մը որ բանի մը շահ չունի. Թէ որ մեզի իյնիր, հիմա կը կտրէինք կրակը կը ձգէինք: Պատասխան տուաւ ծառը. Ով ապերախտներ՝ հապա աս շուքն որ իմ տերևներս ըրեր են բան մը չէ՞, որ ձեզ ասանկ ատեն արեգակին տաքութենէն ազատեց որ երելով հազիւ փախաք հոս հանգչեցաք:*

Ապէրախտ մարդուն ինչ որ ընէս՝ աղէկին չէրէնար, և իրէն աղէկութեան ընողին գէշ կը համբնայ. վասն զի ինքը մարդ չէ, աղէկութեան լաւին որ մարդկութեան ճանչնայ, անոր համար միշտ ապէրախտ է այս և մարդու: Երբոր արեգակը յաւելում 17ին ընին ատողին փակը կը մտնէ՝ խիստ տաք կըլլայ:

Տես ո՛րպէս խօսի բարերար սօսին
Յապերախտ անձանց՝ յոր պատսպարին.
Քանզի որ առնէ բարիս ընկերին,
Չարիս ընդունի դարձ փոխարինին:
Արդ մի՛ մոռանար ըստ անըզգամին
Շնորհս երախտեաց քոյ բարերարին.
Մի՛ հետաքններ զյատկութիւն անձին,
Այլ թէ զի՛նչ բարիք անտի քեզ քաղին:

## ՁԿՆՈՐՍ ԵՒ ՁԿՈՒՆՔ

Ո՛րք քաղցրութեամբ ոչ ամոքին,
Բռնի ուժով անդէն կակղին:

Չի կակըղնար անուշ խօսքով,
Մոմ կը դառնայ բռնութենով:

Ձի՛կ. Մէկ ձկնորս մը նստեր էր ջրի մօտ սրինգ (կէրէֆ) կը չալէր, կարծելով թէ ձըկները առոր ձայնէն կըզմայլին, ու անանկ կը մօտենան իրեն որ ձեռքով կը բռնէ զանոնք. բայց որչափ որ չալեց, մէկ ձուկ մը չեկաւ: Ան ատենը ձկնորսն առաւ իր ուռկանն ու նետեց ձկներուն վրայ. ահա բոլոր ձկները բռնուեցան ուռկանին մէջ ցաթկելով: Զանոնք դուրս քաշելով կըսէր ձկնորսը. խեղճ ձկներ, ես կարծէի թէ դուք երաժշտութիւն կը սիրէք, բայց հիմա աղէկ հասկըցայ թէ աւելի լաւ կը խաղաք եղեր ուռկանով՝ քան թէ սրինգով:

Անուշութիւն ամէն տեղ շահ չըներ, շատ անգամ պէտք է բռնութիւն բան տեսնել. վասն զի կան մարդիկ որ մինչև բռնութիւն չտեսնեն, չեն կակղնար:

*Քաղցրութիւն բանից ոչ յամենայնի*
*Յօգտակարաց լինել վճարել ունի.*
*Այլ 'ի ձայն յուէտ իշխանաւորին՝*
*Որոտալ երբէք 'ի սաստել ռամկին:*
*Այսու ապստամբք ճնշին առ ահին,*
*Ըստահակ զաւակք ուղղին խըրատին.*
*Զի որ ոչ բանիւ գայ յուղիղ կարգին*
*Գանիւ բռնութեամբ ուղղի խստագին:*

## ԿՈԿՈՐԴԻԼՈՍ ԵՒ ԱՂՈՒԷՍ

*Վայ որ զընկեր քո անարգես,*
*Ամենեցուն դու անարգ ես:*

Վայ անոր որ զինք չի ճանչնայ,
Սուտ պարծանքով ծաղըր կըլլայ:

*ճլէ.* Կ*ոկորդիլոսը զաղուէսն անարգելով միայն իր ազնուական ցեղին վրայ կը խօսէր և հպարտ ձայնով մը կըսէր անոր. Ա՛յ ողորմելի, ես զքեզ անանկ լիրբ կը տեսնեմ որ մինչև կը համարձակիս ինծի հետ բարեկամութիւն ընելու. դուն գիտե՞ս ես ով եմ. գիտե՞ս որ իմ ազնուականութիւնս գրեթէ աշխարհքիս պէս հին է: Պատասխան տուաւ*

աղուէսը զարմանալով․ Աս բանն ինչպէս կրնաս ցցնել ինծի։ Շատ դիւրին կրնամ, ըսաւ կոկորդիլոսը․ վասն զի գիտնաս որ Հսկաներուն կռուին ատենը ոմանք ած-ներէն փախան եկան կոկորդիլոս եղան ու-նեղոս գետին մէջ պահուեցան, ահա ես ալ շիտակ անոնց ցեղէն եկած եմ․ բայց դուն թշուառական, ուստի՞ կուգաս։ Պատասխա-նեց աղուէսը․ Իրաւ որ աս բանն ամենեւին չէի գիտեր և չէի լսած․ բայց հաւատա պա-րոն կոկորդիլոս, որ ես շատ աշխատանք կը քաշեմ գիտնալ թէ ուր կերթամ քան թէ ուստի՞ կուգամ։

Ի՞նչ շահ պարծենալ ծնողաց մեծութեը վրայ, երբոր ինքը մարդ չէ։ Հարստութի մը անշահ պա-հել ուղեց մէկ ելլան մը վար դարնել․ պարծենա-լու երեւը պարկեշտ անոր վար մարդուն պահել ըլլալը․ ան ալ պարապութեան պատճառ թէ եւ իմ չեղեւ առջի պարտականն եմ, իմ ազգս ինծի կըսէ, եւ բա-ազգը ՚ի բեղ պէտք վերջանայ։ Հօգաներուն պա-մութիւր բեւ ձեմ․ 621 համարը։

Տես զունայնութիւն զըրաւան վառին,
Նախատէ զընկերն իբրև գիւղացին․
Երկրաքարշ գողով տղայ ընդ գետին,
Պանծայ թէ իցէ յաստուածոց կարգին։
Նզովք այնոցիկ որ նման ամին
Ի վերայ լանջաց Ճարակեն յախտին․
Գործին ը նախնեաց գործս ամենայն զարմին,
Ոչ գիտեն այն է նախատինք նոցին։

## ՈՒԽՏ ՀԻՒԱՆԴԻՆ

*Ոչ է հաճոյ երկնաւորին*
*Ուխտել 'ի վեր քան զոյժ անձին:*

Թէ չափէդ դուրս ուխտեր ըրեր,
Աստուծոյ զուր բան մը չըրեր:

*Ջրբ․ Մէկ երկրագործ մը վտանգաւոր կը հիւընդնայ, և հարիւր կով ուխտ կընէ Ասկղէպիոսին աս դաշինքով, եթէ առողջանայ՝ բոլորը զոհ ընէ անոր: Հարիւր կովը ուստի պիտի գտնես՝ ըսաց կնիկը, դուն չես մտածեր ամենևին․ տէր ա͞ծ, ես մէկ հատ մը չեմ տեսներ գոմին մէջ: Պատասխանեց հիւանդը թէ կարէ ձայնդ․ թող իմ խընդիրքս կատարուի, հարկաւորապէս անանկ բարի է ա͞ծ որ եթէ հաճի՝ մեր հորթուկն ալ զոհ կըլլայ:*

Հին ատենն Ասկղէպիոս էր բժշկութե͞ն ա͞ծ․ որ Ապողոն ա͞ծին որդին ըլլալով ինչ կերպ հիւանդութի͞ն որ ըլլար կրնար բժշկել կըսէին: Աս պատճառաւ երկրագործն ալ անոր ուխտ ըրեր է իր կարողութե͞ն վեր որ հաճոյ բան չէ․ ինչպէս կան մարդիկներ որ անկարելի ուխտեր կընեն պարապ տեղը:

*Ահա քեզ բերմունք մտաց յիմարին,*
*Կըշռէ մարդկօրէն ըղբան անբաւին․*
*Ոչ գիտէ թէ նա յամենայն վայրի*
*Ներկայ և զննիչ է շարժման սըրտի:*

*Ուսիր երկիւղիւ պատկառ կալ նըմին ,*
*Ուխտիւք զարարիչ պաշտել ջերմագին .*
*Որում զոհ ընտիր է եռանդն հոգւոյն ,*
*Եւ ոչ բազմամթիւ երամ անբանին :*

## ՁԿՆՈՐՍՔ

*Որ լոկ յուսով ուրախանայ ,*
*Յամբոկ գործոյն անյոյս մնայ :*

Մինակ յուսով էթէ էրթաս ,
Ամէն բանէն պարապ կէլլաս :

*Մկն. Ձկնորսներն իրենց ուռկանը ջրէն դուրս կը քաշէին, բայց սովորականէն ծանր ըլլալով մեծ յոյս ունեցան, և մէկմէկու կըսէին թէ առանց կարծեաց լաւ որս ունինք. ով գիտէ հիմա ինչ ձկներ պիտի տեսնենք մեր ուռկանին մէջ: Անոնց ուրախութիւնը շատ չեքշեց. վասն զի երբոր շատ աշխատանքէն ետև նայեցան ուռկանին մէջ՝ ուրիշ բան չգտան, բայց մէկ մեծ քար մը որ ջրին ընթացքը բերեր էր հոն:*

Օրինակ է անոնց որ իրենց հարկաւոր բանին ետևէ չեն ըլլար, ու կընային որ հօրերնուն ապրանքը յափշտակեն: Բայց հայրերնին մեռնելէն ետև պարապ Թղթերէն 'ի զատ ուրիշ բան չի մնար ձեռքերնին :

Քանի՛ք յուսալից զլնան խնդալին,
Գլխովին յեցեալ դիւրասահ բաղցին․
Զամենայն ըզգործս յաջող ենթադրեալ,
Ցետոյ չարաչար յուսոյ վըրիպին։
Յուշ լիցի վըճռու խմաստասիրին,
Խրրև բարեկամ քեզ ազդ արարին,
Սիրտ ըզգուշաւոր, տաէ, կասկածի,
Հակառակ կողման իւր յաջող բաղցի։

---

## ԳՈՐՏՔ

Մինչ խոհական խորհի զվերջն,
Համեմատէ զելս ընդ մտին։

Խնէլացի մարդ շատ բան չընէ,
Եփքն ու ասպէ լու Բոզ-քընէ։

ԾԷ. Գորտերն ամառուան մէջ տեսան որ իրենց ջրոտ տեղը կը ցամքի՝ սկսան պօռալ թէ ո՞ւր պիտի երթանք բնակինք: Իրենց մէջէն մէկ ձայն մը պատասխանեց, թէ աս մօտ եղած հորն երթանք, որուն մէջ լեցուն ջուր ըլլալով մինչև բերանը շատ դիւրին հոն կրնանք մտնել: Խիստ լաւ, ըսաւ մէկ ծեր մը իրենցմէ․ բայց երբոր ջուրը ցածնայ մենք հորին տակն որ մնանք՝ որուն խորութիլը քան ոտքէն աւելի է, ինչպէս կրնանք անանկ դիւրին դուրս ելլել որ ատանկ դիւրին պիտի մտնենք։

Խելացի փորձ մարդը մեղք ամէն բանին ետքը կը մտմըտայ. իսկ անփորձ պատանին խելքին էկածը կընէ, և մեղք կը ոխալի : Ուստի պէտք է ծերոց բան հարցընել և անոնց խրատովը բան քննել որ ընտրենք :

Տես հասուն մըտաց խորհուրդ գերազանց,
Խորհի դժուարինս 'ի վախճան իրաց.
Քանզի փորձ գոլով խնթայ յապառնեաց,
Զի մի անխորհուրդ գիպեսցի չարեաց :
Այլ մի հեռանիար դու 'ի ծերունեաց,
Ունկն մատուսցես բանից փորձառուաց.
Որք ոչ վայրապար խորհին և խօսին,
Թէ և չեն յարգոյ առ անմիտ մանկանց :

## ԵՐԿՈՒ ԹՇՆԱՄԻՔ

Որ ոխս ունի ընդ ընկերին,
Դաշնակից է սատանային :

Ով պահելով ոխ լար կուզէ,
Զարէն բերան ըլլուք կը ձգէ :

Ձլն. Երկու մարդ մէկզմէկ մահուչափ կատէին. եղաւ որ աս երկուքը մէկ նաւով ճամբորդութիւն ըրին : Երբոր լեցուն հովով կերթային, աղէկոծութիւն մը ելաւ անանկ սաստիկ որ նաւը հովին բռնութենէն ծովին զարնելով ջարդուեցաւ, տակը բացուե- ցաւ : Աս վերջին խեղճութեանը երբոր եր-

կու ճամբորդները ջրին մէջն էին ընկեր, և իրաւ կը տեսնէին որ պիտի խղդուէին՝ սկսան մխիթարուիլ. զի կըսէին մաքերնուն մէջ. թէ որ ես կորսուիմ, ահա թշնամիս ալ ինծի հետ կը կորսուի :

Սոփեստաբանն անանկ կը կարծէր մարդ որ մինչև մահին դուռը կը հասնի, և ոխը սրտէն չի հանելով սատանային կերակուր կըլլայ : Փիլիսոփայ մը կըսէր. թէ որ կարելի թշնամիէդ վրէժ առնել, անկէ աղէկ եղեր :

Զխմո՞րդ ապաժոյժ կիրք դժոխային
 Անհամբոյր սրտի առելեաց կրկին.
 Մինչ հասեալ ժանեաց սեաւ մահարերին,
 Լինին վրիժառու յայն կէտ խաւարին :
Բաքէ կուրութեան խորհրդոց նոցին,
 Ոչ հային ո՞ւր կան յո՞ր սահման հասին.
 Այս գործ է ահա ըսկըզընաչարին,
 Որ այսպէս ըզմարդ տանէ իւր բաժին :

## ԱՌԻՒԾ, ԱՐՋ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Խըռովարարք միշտ վընասին ,
 Այլ ոք շահի՝ ինքեանք ծաղրին :

Կըռուող մարդիկ վընաս կընեն ,
 Անոնք այլոց շահ կըբերեն :

Ձկն․ Առիւծն ու արջն իրենց մէջ խռովեցան մեղրի փեթակին համար որ գտեր էին կաղնի ծառին խոռոչին մէջ․ երկուքն ալ կը ջանային որ յափշտակեն առանց իրար մէջ բաժնելու : Շատ լաւ կըլլար թէ որ երկու բաժին ընէին․ վասն զի երբոր իրարու հետ կը կռուէին՝ մէկ աղուէս մը կամացուկ մը եկաւ մօտեցաւ մեղրին՝ ու բոլորը լափելով կերաւ փախաւ :

Շատ անգամ երկու եղբայր և երկու բարեկամ իրարու հետ չեն հաշտուիր՝ մինչև որ միջերնուն մէկը չմեռնի, կամ մէջ ձեռք մը չխառնեն․ վասն զի ան ատենն իրենք իրենց կու գան և շուտ մը կը հաշտուին :

Ահա հատուցումն անմիաբանից ,
Զրկեն ըզմիմեանս 'ի սիրոյ ընչից ·
Այլոց առնեն շահ, ինքեանք մերկ թափուր ,
Երբ օտարք շահին՝ վերջ լինի վիճից :

Քանի՜ շահաւէտ է միաբանից
Մասնակցել սիրով միմեանց ըղձարկս·
Զի զի՜նչ քաղցրութիւն և զի՜նչ բերկրալից,
Քան սիրել սիրել՝ գոյ հարազատից:

## ԱՍՏՂԱԲԱՇԽ

Զի՜նչ շահ գնել զաստեղս վերին,
Ոտիւք սահիլ՚ի գուբ խորին:

Ինչ շահ մեծ մեծ բաներ խօսիլ,
Պըղտոր բանով ջուր խմիլ:

Առակ. Մէկ աստղաբաշխ մը քալելով կը դիտէր աստղերը, բայց շատ լաւ կըլլար եթէ իր ոտքին վրայ նայէր: Վասն զի երբոր աչքը վերցուցեր միակերպ երկինքը կը դիտէր, ահա մէկ հոր մը փորած էր ճամբուն վրայ՝ որ առանց նայելու անիկ մօտեցաւ՝ մինչև ընկաւ մէջն ու խեղդուեցաւ:

Թալէս փիլիսոփան օր մը գործէ դուրս ելած երկինքը աստղերը կը դիտէր, ընկաւ ջուր մը մէջ. ծառան կնիկ մը որ դիտէր անոր հանդէ, ըսաւ՝ Երկընքին բաները դիտելու պէտք ոտքիդ տակը չես տեսներ: Խրատ է անոնց որ իրենց բանը կը թողուն ու իրենցմէ վեր բաներու ետևէ կըլլան, և երբեմն հաստատէ ձրայ ալ հասկացողութիւն կընեն որ մէկէն ջուր կը գտնին:




ճլգ. Աստղաբաշխ: ճլը. Առիւծ և Գորտ:




ճխա. Աքաղաղ և Բազէ: ճխդ. Ագահ և Անցաւոր:




ճխե. Եղն և ձագ իւր: ճխզ. Աղուէս և Կինճ:

Օրինակ է այս ընդվզայր շըջողին ,
Թողեալ զօգտակարն քննէ ըղձերին .
Ոչ գիտէ թէ ո՞ւր իւր վիճակք յանգին ,
Շրջի խմանալ ըղբան օտարին :
Մի հետաքններ զոր քեզ ոչ օգտին ,
Պնդեա զկնի վայելչականին
Եւ օգտակարին և փառաւորին ,
Որով պերճ մնաս 'ի քոյդ վիճակին :

## ԴՂԲԻՆ ԵՒ ԴՈՆ

Մի պահանջեր վրէժս յայլմէ ,
Զի մի և քեզ նոյն չար հասցէ :

Վրէճինտէր աշըռ մ'ըլլար ,
Չէ նէ կուռգայ գըլխուտ Դէծ լար :

Ճղջ. Դղբին ձուկն ետևէն էր ընկեր մէկ դոն ձկան մը վրէժխնդիր ըլլալով նախատանացն որ անկէ տեսեր էր : Դոն ձուկը փախաւ ծովին եզերքը (+էնարը) , դղբինն ալ ետևէն վազեց : Իսկ դոնը անոր ձեռքէն ազատելու համար ցաթկեց աւազին վրայ , դղբինն ալ անոր ետևէն ցաթկեց . բայց ինչպէս պատժեցաւ իրենց յանցանքը՝ երբոր երկուքն ալ անանկ ձգած մնացին հոն : Որովհետև իրենք ջրէն դուրս ըլլալով օդին մէջ մնացին , և անանկ տկարանալով մեռան , և շատ զղջացան որ իրարմէ վրէժ առնելէն 'ի զատ ուրիշ բան չխմամրտացին :

Դուքինն է (*եծնուղ*), և դունն է (*փալա-մուտ*) յունկը, որ օրէնակ էն ապէլէ մարդկանց․ բայց շատ անգամ երկու թշնամի այնչափ իրարու հետ կեղ-նէն որ մինչև իրարու գլուխ կուտէն :

*Տեսէ՞ր զպատուհաս ոխակալ չարին,*
*Զխարդ յայն պատիժ կորեաւ ընդ Նմին․*
*Զի որ ոչ ներէ չարեաց ընկերին,*
*Ոչ թողցին յանցանք իւր յատուկ անձին :*
*Այս քեզ է խրատ մարդ ընկերական,*
*Մի՛ ատեր զընկերն ըստ ձկանց բերման․*
*Սիրել և սիրիլ քեզ է սեպհական,*
*Կեալ որպէս ըզմարդ և ոչ զերթ գազան :*

## ՄԵՌԵԼԱԹԱՂ ԵՒ ԲԺԻՇԿ

*Որ անխրատ ջատագովլի,*
*Զերթ շաղակրատ յայլոց ծաղրի :*

Մէ պարծէնար թէ բան գիտէս,
Հապա տէս թէ բան մը չգիտէս :

*Ճլն : Մէկ մեռել թաղող մը կը թաղէր իր գրացին․ երբոր գերեզմանը կը լմընցը-նէր լեցընելու, տեսաւ բժիշկն որ դեղ ըրեր էր մեռելին երբոր հիւանդ էր, ուստի ըսաց անոր․ Ես զքեզ անանկ վարպետ կը տեսնեմ որ կարծեմ թէ կրնայիր հիւանդն ըռընացընել : Պատասխանեց բժիշկը․ թէ որչափ որ կրցայ նէ ըրի․ բայց աս մարդը*

էջ հնազանդութեան մէջ էր : Կրկնեց մե-ռել թաղօղը գլուխը շարժելով · Թէ որ ա-նանկ չըլլար , քու ձեռքդ կիյնէիր :

Լեզուանի մարդը կարծէ թէ խօսքով գործած յանցանքը կը գոցէ · բայց շատ անգամ ալ ծածուկ կըլ-լայ և իր խօսքովը կ'իյնի : Ասանկ մէկ լեզուանիին համար Չինաց թէ Անկըղներ լեզու են տուեր :

Այսպէս և զրկողք արդար երևին ,
Պատճառ տան գործոց ոչ զիրաւացին ·
Որով'ի բազմաց իբրև շողակրատ
Արդար օրինօք մերժին հալածին :
Արդ մի հետևիր ունայնախօսին ,
Որ բազում' բանիւք խաբէ հնարին ·
Քանզի բանք ոչինչ վճարել ունին՝
Թէ ոչ ընդ գործոց արդեամբք լծակցին :

## ԹՌՉՆՈՐՍ ԵՒ ՕՁ

Որ ընկերին չար ինչ խորհի ,
Նովին չարեօք պատուհասի :

Ով որ ընկերոջ չար կը խօսի ,
Ինքն ալ չարով կը խորտակի :

Չլք · Մէկ թռչուն որսող մը կաշխատէր որ թռչուն բռնէ · երբոր վար ծռեցաւ որս-այլթը լարելու , օձ մը խածաւ ոտքը · Ո՛հ անչեց մարդը ես արժանի եմ աս բանիս ,

*որ ինծի եղաւ. Ինչպէս կրնամ տրտնջալ Թէ կուզէ օձն իմ կեանքս վերցընել, որովհետև ես ուրիշ բան չեմ մտածեր, միայն այլոց կեանքը վերցընելու կը նայիմ։*

Անփոխադ օրէնք է, Թէ որ կուզես քեզի աղէկ ըլլայ, դուն ալ ուրիշին աղէկ ըրէ. Թէ որ կուզես քեզի մէկը գէշութիւն չընէ, դուն ալ ուրիշին մ'ըներ. վասն զի ինչ որ ընես, ան կը գտնես։ Ասանկ է Թէ Սուր առնողը սրով կերթայ։

*Այս արդար պատիժ է չարակամին*
*Մխայն ըղձարիս այլոց խնդրողին.*
*Զի որ չար կամի՝ չարն է իւր բաժին,*
*Զոր ինչ և կշռէ՝ կշռի չափ նոյնին։*
*Թէ խնդրես բարիս՝ բարիք քեզ պահին.*
*Գործք քո և քո սիրտ զքեզ ուղիղ դատին.*
*Մի ցանկար այլոց չարիս այլ բարին,*
*Զի արկանծք չարեաց 'ի քէն հեռասցին։*

---

## ՅԱԽՆԱԿ ԵՒ ԴԻՈՍ

Որ ոչ է գոհ յիւր վիճակի ,
Ուր և գընայ յաւէտ ծանրի :

Թէ մէկ հինգէն ձախողէր ոտքէս ,
Ա՛լ մեծին մէջ տեղ կըյգէս :

Ճլէ. Պարտիզպանին էշը կը ձանձրանայ ամմէն առտու գիշերանց ելլել խոտ տանել վաճառանոցը : Օր մը աղաչեց Դիոսին որ զինքն անանկ մէկ մարդու մը տայ որ կարենայ գէթ քնանալ : Ըսաց Դիոս թէ անանկ թող ըլլայ · Նայիս որ բասծին պէս էշը գործելի ծախողի մը տուն գնուեցաւ : Երկու օր չիկրցաւ կենալ հոն՝ ակսաւ զըղջալով փնտըռել զպարտիզպանը · Եւ անոր տունը կըսէր երբեմն կաղամբի (լահանայի) տերևներ գաղտուկ կառնէի կուտէի , բայց հոս ի՞նչ կը վաստըկիմ գործելի տանելովս , ծեծ ուտելէն 'ի զատ ուրիշ բան չիկայ : Ուրեմն պէտք եղաւ անոր ուրիշ վիճակ խնդրել : Դիոս դրաւ զայն մէկ խաղախորդի մը (տապախի) տուն · իսկ էշը չէր դիմանար կաշիներուն դէշ հոտին որ կը կրէր : Ուստի անանկ ուժով պօռաց որ չի կրնար ըլլալ , և խնդրեց երրորդ անգամ մէկ ուրիշ տէր մը : Ան ատենը Դիոս ըսաց անոր · Թէ դուն խելք ունենայիր , առջի տիրոջդ տունը կը

կենայիր ։ Թէ որ քեզի ուրիշ նոր տեր մ'ալ տամ գուն գոհ պիտի չըլլաս ինչպէս մէկալնոնց ըրիր ։ Ապա կեցիր ուր ես նէ․ չըլլայ թէ ուրիշ տեղ անանկ առիթ մը գտնես որ աւելի տրտնջաս ։

Անդադար գանգատող մարդը կարծէ թէ [illegible] ի- խելօք կը համարուի, բայց պէտք է իր սիրտը և գէշ բնաւորութիւնը ճանչէ որ հանգչի · [illegible] ամէն մարդուն գլխէն ճարպկութիւնը չի պակսիր ։ Հարցու- ցին [illegible] թէ աշխարհս ինչ ծառ բա- ունի · ան ալ ըսաւ՝ թէ ծոյլ և ... մարդը ։

Այս գործ է տժգոհ ծոյլ հեղգասիրին,
  Ջանայ անվաստակ կալ՝ի քուն խորին․
  Ի փոխել զվիճակ՝ կարծէ թէ փոխի,
  Իւր անառանական յատկութիւն ներքին ։
Արդ մի գանգատիր ըստ տրտնջողին,
  Զի մի գիպեսցի քեզ չարիք կրկին․
  Ուր և լինիցիս դու ընդ քեզ տանիս,
  Ցոր վիճակ մնցես ընդ քեզ կամք քոյին ։

## ԱՌԻԻԾ ԵՒ ԳՈՐՏ

Ի զի երբեք զաւիւծ հզօր
Ահաբեկէ գորտ ինչ անզօր :

Ըստ հեզ անանկ բան կըսպեննա,
Չինտըծածէտ որ կանարգէն :

Ճլը· Մէկ առիւծ մը ջրոտ տեղի մը քով՝ պառկած ըլլալով քունը հոն կը տանի : Երբոր խորունկ քունի մէջ էր՝ մէկ գորտ մը սկսաւ պոռալ· աս ձայնէն առիւծն արթըննցաւ, կարծեց թէ զօրաւոր կենդանի մը եկեր է հետը կռուելու, մէկէն ելաւ չորս դին կը նայէր· բայց ի՛նչպէս զարմացաւ երբոր տեսաւ թէ մէկ գորտ մը զինքը անանկ սաստիկ վախցուցեր էր :

Որչափ մեծութիւն ունենաս՝ պէտք չէ որ պզտի պան աննես ադքատը· վասն զի շատ անգամ կար մարդիկ Իւգաւորները կըդողացընեն : Եւ երբեմն երեւելգած մարդիկ անանկ բաներ կընեն որ մարդը կամըզըընեն :

Տես զխարդ հզօր առիւծ ամեհին,
Դողայ ՚ի ձայնէ կենդանւոյ չնչին·
Որ օրինակ է փարթամ հզօրին,
Զաղքատս ըզփոքունս յաւէտ ծաղրողին :

Արդ մի տանջար լինիր աղքատին ,
Թէ և յարքայից բազմիս 'ի գահին ·
Զի փոքունք երբեք արտաքոյ կարգին ,
Ահաբեկ առնեն ըղախտա աղքային :

## ՀՆԴԻԿ

Օձաւ և ջուր որչափ լիցեն ,
Մաքրել զհնդիկ ոչինչ զօրեն :

Ի՞նչ շահ նըռնէ հինները բոյն ,
Սևին տալոն խորապ խոսին :

Ճլթ. Մէկ մարդ մը մաքըր դըրաւ որ ձեր- մըկցընէ սև հնդիկ մը · ուստի ջուրը խօթէր կը լուանար և կածըրեր , բայց փուճ տեղն աշխատեցաւ · վասն զի շատ աձալելուն ան- կէ ետև տառաջուանքէն աւելի սև երևցաւ :

Հնդիկ կամ սև մարդիկ օրինակ են այնպիսի մարդոց որ ինչ ընես չես կրնար խօսք հասկըցընել՝ ինչպէս որ սևն ալ չի ճերմըկնար · վասն զի կըսեն թէ անոնց կաշիին տակը բարակ մաշկ մը կայ որ մեն- ջանին՝ անկէց է սևութիւն որ իրենց տեղէն և ա- րեգակին տաքէն կըլլայ :

Զի՞նչ շահ լուանալ զսևաւ ափրիկեցի ,
Որ ըզսևութիւն ընդ մորթով ունի ·
Զի՞նչ շահ խրատել՝ զյիմար կամակոր ,
Որք ուղիղ գնեն զոր ինչ և խորհին :

Արդ մի վայրապար ուղղէր զայնպիսին,
Որ անուղղութիւնն է կանոն անձին.
Քեզ լիցին կանոն վերխպանք նոցին,
Առաքինանալ ըստ ուղիղ բանին :

## ՎԱՃԱՌԱԿԱՆ ԵՒ ԾՈՎ.

Փորձել զփորձեալն է յիմարին,
Որ կըրկնակի փորձի յանձին :

Փորձած բանը փորձել ուզողն,
Որ նոր փորձանք գէղ ընթերէն :

Ճխ. Վաճառական մը կըբեռցընէ նաւն ապրանքով, դէպ 'ի հնդկաստան կերթայ : Երբոր առագաստը բացին հովն յաջող էր և ծովը հանդարտ, բայց հազիւ թէ նաւա-հանգստէն հեռացան, մէկէնիմէկ հովը փո-խուեցաւ և ծովն ելաւ, անանկ որ նաւը մլեց բերաւ մէկ աւազոտ տեղ մը զարկաւ՝ հոն նստեցուց : Իսկ վաճառականը բոլոր ապրանքը կորսընցընելէն ետև՝ նաւուն մէկ տախտակովը հազիւ ազատեցաւ : Քանի մը օրէն ետև երբոր ժուռ կուգար ծովուն քով ուր տեղէն որ նաւ մտեր էր, տեսաւ ծովը հանդարտ, իրեն կերևնար թէ կըսէ որ նորէն նաւով տեղ մը երթայ՝ ուստի սկսաւ պոռալ. Անզգամ ծով, փուճ տեղը կաշխա-տիս զիս խաբելու սուտ հանդարտ ըլլա-լովդ. ով որ կուզէ թող հաւատայ, իմ

*կողմանէս ես ամենևին չեմ մնացած անցած օրեր խնծի ըրածներդ. ես այնչափ փոփո_ խամիտ չեմ որ հաւատամ քեզի երկրորդ անգամ որուն անհաւատարմութիւնը փոր_ ձով տեսեր եմ:*

Ծանօթ է օրինակ աշխարհքիս, որ անուշ հանդարտ երևնալով շատ մարդիկ [illegible] մէջ ձգեր [illegible] է. բայց անոնք որ ամէն անգամ [illegible] մէջ [illegible] և [illegible] [illegible] որ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] մէջ:

*Ահա խմաստուն քան խոհականին,*
*Որ ըզգուշանայ փորձ գըտնել անձին.*
*Զի որ ոչ փախչի յառ[թ]էց փորձողին,*
*Անդէն անկանի 'ի վըտանգ կըրկին:*
*Ծով է այս աշխարհ ըստ տարացուցին,*
*Հեղձեկ ծածանմամբ քաղցր է անփորձին.*
*Արդ մի հաւատար տեսլեան արտաքին,*
*Զի մի ընկլուզցէ ըզքեզ յիւր կոհակին:*

## ԱՔԱՂԱՂ ԵՒ ԲԱԶԷ

*Ի վաղանցուկ պարծանք չարին,*
*Անդ 'ի հրճուիլ փութով պատժին:*

Մի գոռոզանար այլոց վրան,
Զի պարծանքդ չերթար երկան:

*Առակ.* Երկու աքաղաղ չարաչար կը կըռուէին մէկ վառեկի մը համար որ մէկզմէկու կը նախանձէին: Ինչ և իցէ մէկ աքաղաղը յաղթեց մէկալին, յաղթուողը փախաւ բակին մէկ կողմը քաշուեցաւ կեցաւ: Իսկ յաղթող աքաղաղը թռաւ ելաւ հաւնոցին վրայ որ երգելով իր յաղթութիւնն իմացընէ. բայց աս ուրախութիւնս երկար չիկրցաւ վայելել, վասն զի երբոր թևերը կը զարնէր և ուրիշ բան չէր մտածեր՝ բայց եթէ իր ուրախութիւնը յայտնել ամէնուն, ահա բազէն՝ որ զայն յայտնի տեսեր էր հաւնոցին վրայ՝ յանկարծ վրան հասաւ յափշտակեց:

Ամբարտաւան մարդը յաջողութիւն որ գտնէ, աշխարհք չնայելով զամէնքը ճնշել կուզէ. բայց այն յաջողութիւնը վերջապէս իր գլուխը կուտէ: Հապա ամբարտաւան մարդիկ իրենց գործքին վրայ պարծելու տեղը չարաչար պատուհասեցան:

Արժանի պատիժ է անըզգամին ,
Անդ հըրճուիլ 'ի չարն հանդիպի չարին ·
Խոնարհք յանկեան ինչ ապահով նըստին,
Հըպարտք 'ի բարձունս չարաչար ծախին :
Զի՞նչ օգուտ գործեաց այն յաղթականին ,
Երբ նոյն յաղթութի՛ ածեաց մահ նըմին ·
Զի՞նչ շահ ճոխանալ 'ի վերայ այլոց ,
Ուր այլք 'ի կեանս են խակ ինքն յօրհասին:

## ԲԻՇԿ ՄՇԿՈՅ ԵՒ ՈՐՍՈՐԴՔ

Լաւ է տալ մասն ընդ բոլորին ,
Զոհել զփոքրն առ սէր մեծին :

Շատ աղէկ է մաս մը ձըգել՝
Բոլոր մարմինն ամբողջ պահել :

Ճխք · Որսորդները մէկ ջըշան մը ետեւէ կըլլային որ որսան , և իր անդամէն դեղեր չինեն · որովհետև սովորութի է որ ասոր ամորձիք մարմինը կը գործածեն օգտակար դեղի համար շատ հիւանդութեանց դէմ: Իսկ ջըշունը զիմանալով անոնց միտքը՝ հասկըցածին պէս թէ պլխի չիկրնայ ազատիլ անոնց ձեռքէն՝ բռնեց իր անդամն ակռաներովը փրցուց վար ձգեց: Ան որ տեսան որսորդները , առին իրենց ուզածը և անով շատացան ու այլ ետևէն չիգացին ետ դարձան : Եւ ասանկ իր խոհեմութե՟ը ջըշունն ազատեցաւ , որ շատ իմաստութե՟ մտածեց մէկ

*անդամը պակսեցընել՝ երբ չէր կրնար պա-
հել և բոլոր մարմինն ազատել,*

Ջրշունը կըսուի [illegible] [illegible] (*գունտուզ*) որ է
երկակէնցաղ և շան նման կէնդանի · Բայց [illegible] ձկան
նմանի · [illegible] (*միակ*)
[illegible] Ա[illegible]
[illegible] է :

*Գործ է խոհական 'ի լինել առթին*
*Փոքր չարին ընտրել խափան տալ մեծին ·*
*Ի ճահ է զոհել զանդամս ըստորին,*
*Պահել ըզգըլուխ մասն էականին :*
*Գըլուխ և բոլոր ըստ տիրականին*
*Կըրօն և հաւատք են որպէս ասին ·*
*Արդ 'ի պահել զայն յաւէտ պատշաճի*
*Զոհել զամենայն ըզկեանս աշխարհի :*

## ՀՈՎԻՒ ԵՒ ՇՈՒՆ

*Շահասիրին սըրտի բերկրանք,*
*Են օտարայ չարիք վըրկանք,*

[illegible]
[illegible] :

*Ճիշդ ·* **Մ***էկ հովիւ մը շատ անգամ իր շա-
նը կուտար՝ որչափ որ ոչխարներէն կը մեռ-*

նէին հիւանդութիւն ։ Օր մը խիստ գէր ոչխար մը կը հիւընդնայ, ան տանը շունը սովո֊րականէն աւելի տրտում երեւցաւ ։ Հովիւը երբոր հարցուց անոր պատճառը, պատաս֊խան տուաւ թէ աս է պատճառն որ չեմ կընար տանիլ տրտմութենէ տեսնել ասանկ մէկ հատիկ պատուական ոչխար մը որ մեռնելու վտանգի մէջ է ։ Պատասխանեց հովիւը, թէ ինչ պիտի ըլլայ աս երեսպաշ֊տութիւնն որ կընես ինծի, որովհետեւ դուն քու շահդ խմնես շատ աւելի կը նայիս, փոխան տեղը կեղծաւորութիւն կընես. գնա սըկէ, ես լաւ գիտեմ որ դուն չես ցաւիր իմ ոչխարիս համար, հապա կը վախնաս որ չըլ֊լայ թէ ըողնանայ ու ձեռքէդ ելլէ ։

Շահասէր կամ ինքնասէր մարդը կը նայի որ իրեն շահ ըլլայ, ուրիշին ինչ կըլլայ ըլլայ. եւ շատ կեր ամէնքին ուրիշի ձախորդութենէ վրայ, որ է շատ բը֊նութիւն ։

Շահասէր ժըլատք համանման սըմին
 Կեղծեալ վըշտանան ընդ մահ ընկերին.
 Բայց յորժամ անտի ելանէ բաժին,
 Հըճուին 'ի հոգի ընդ օգուտ անձին ։
Զինչ քան զայս զազիր գործ որկրամոլին,
 Ուր չարիք այլոց են խըրեան բարին.
 Դառն է այնպիսւոյն զիտել յազգակցին
 Բարիս որ միակ է պատիժ սըրտին ։

## ԱԳԱՀ ԵՒ ԱՆՑԱՒՈՐ

Վայ որ Թաղէ զսկրտն ընդ գանձին ,
Անդ 'ի գեհեանն աստ 'ի գետին :

Թէ որ դնես սիրտդ 'ի յոսկին ,
Հոգւոյդ խըլլաս դնեաց բաժին :

Ճխդ · Ագահ մարդ մը կը թաղէ իր գանձը մէկ արտի մը մէջ , բայց չկրցաւ անանկ ծածուկ ընել որ իր դրացին չտեսնէ : Ուստի երբոր ագահը գնաց անկէ՝ դրացին հասաւ հոն՝ հանեց ոսկին առաւ տարաւ : Մէկալ օրն ագահն եկաւ որ նայի իր գանձը , բայց ինչ կսկիծ եղաւ երբոր բացաւ ու բան չգտաւ հոն · աշխարհք չի կրնար պատմել անոր ըրածը · ինչպէս կը կանչէր ինչպէս կուլար և մազերը կը փետտէր մինչև յուսահատեցաւ : Աս ձայնն որ առաւ մէկ ճամբորդ մը՝ հոն վազեց՝ ինչ կորսնցուցիր , ըսաւ անոր , որ ասանկ կեանքէ կելլես : Պատասխանեց թէ գանձ կորսնցուցի , որ ինծի հազար հեղ աւելի սիրելի էր քան իմ կեանքս , և աս քարին քով թաղեր էի : Կրկնեց մէկալը , թէ առանց դքեզ աշխատցնելու բերելով այսչափ հեռու տեղ ինչու համար տունդ չպահեցիր որ ամէն անգամ երբոր պէտք ըլլար կարենայիր դիւրութ̃ հանել ոսկիդ : Հանել իմ ոսկիս , պո-

ուաց ագահը, բէհ, ես այնչափ խենթ եմ որ հանեմ, ամենևին չիգտչեմ ոսկի անոր։ Ան ալ ըսաց թէ երբոր ոսկին չիգտչեմ՝ ինչու համար այսչափ կը ցաւիս, ով բարեկամ. քար մը դիր գանձիդ տեղը, ան ալ անոր բանը կընէ քեզի։

Բիաս փիլիսոփային հարցուցին թէ ո՞վ է աւ-ելի ողորմելի. ան ալ ըսաց թէ ագահն է, որ մարմին ու հոգին մաշեցնելէն ետև՝ դիզած ապրանքը չի կրնար ամենևին վայելել, և կեանքն ալ հոգին ալ անոր համար կը կորսնցընէ։

Աւաղ կուրութիւն մըտաց ագահին,
Ամփոփէ 'ի հող ըղձիւք և հոգին.
Այն որ է կարգեալ 'ի դիւր մարդկութեան
Տես զիարդ քաղէ զհոգի անմըտին։
Գանձի այն ոսկի առ սնունդ անձին,
Նա մաշէ զայն անձն առ սէր սնուցչին.
Արդ մի մասներ զայն թաղեալ 'ի հողին
Առ անբան սիրոյ առ անբան ոսկին։

## ԵՂՆ ԵՒ ՁԱԳ ԻՒՐ

*Որ ոչ է փորձ ոչ գիտէ չափ,*
*Զանձին իւր կար դատի անչափ:*

Ով որ իրեն ուժը չգիտէ,
Զինքն ամենէն վեր կը դնէ:

*Ձագ․ Եղնիկին ձագը կըսէր իր մօրը թէ բնութիւն ինծի անանկ մեծութիւններ տուեր է շնէն աւելի որ անկէ ամենևին վախ մը չունիմ․ թէ որ պատահի, կըսէր, շանը հետ կռուելու՝ գրեթէ առանց աշխատանքի պիտի յաղթեմ անոր․ վասն զի ես շատ բարձր և անկէ զօրաւոր ըլլալէս 'ի զատ, իմ գլուխս եղջիւրէ զէնք մը ունի և շունը բան մը չունի: Պատասխանեց մայրը․ Որդեակ զգոյշ կեցիր անոր հետ լինելու, դուն անոր չես հասնիր, թէպէտ ա͠ծ զգուշացաւ իրեն եղջիւր տալու և քեզի տուաւ, բայց անոր անանկ սիրտ մը տուած է որ դուն չունիս ամենևին:*

Վախկոտ մարդը շատ բան կը խօսի տանը մէջ, բայց թշնամին որ տեսնէ լեզուն կը պապակի: Անխելքն է որ իր ուժը ընտանիքին ու ծառաներուն վրայ կը դնէ:

*Այս թերակատար բերմունք են մանկանց,*
*Որք դնեն զանձինս 'ի չափ վեհագանց․*

Այժմ դժուարին հեշտ թուի ինքեանց ,
Զի խակ և անփորձ են բազում իրաց ։
Մի՛ դներ ըզքեզ ՚ի կշիռ քաջաց ,
Եւ մի՛ անխորհուրդ լինիր ինքնապանծ ,
Կշռեա խորհրդով զայլոց զօրութիւն ,
Գտանես յոլով գործս սքանչելեաց ։

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԿԻՆՃ

Խոհեմ բնութիւն հնարէ ճարտար
Նախ քան զարկած նպաստ և ճար ։

Խելք ամուղին ընկնայ ինչ ուր ,
Վրնաս ընկած կը գտնէ ճար ։

Ճխող· Մէկ լեռան խոզ մը կը սրէր ակռաները ծառի մը կոճղի վրայ· զայն տեսնելով աղուէսն ըսաց իրեն , թէ որո՞ւն հետ կը պատրաստուիս ծեծկուելու , որովհետև հիմա ոչ շուն կը տեսնես և ոչ որսորդ ։ Պատասխանեց խոզը· հէ՛ , պէ՛տք է սպասել որ անոնք ետևէս հասնին՝ ես հազիւ իմ զէնքս սրեմ , երբոր ան ատենը մտածելու ժամանակ ալ չեմ ունենար ։

Ամէն մարդ պէտք է տքնող իր բանը հոգալ իրեն պիտանալին բանը գիտնալ, և ոռնայած խելքովը դիւքը կատաղերել խոհեմութիւ որ յանկարծ փորձանքի մը հրան գալով խելք ըռլայ ։

Գեղեցիկ խորհի նախատես բնութիւն
Պահել յարկածից վայրագ զանասուն.
Զի յամենեսին գոյ զէն զօրութիւն,
Թէ 'ի դէպ գործէ յաղթէ թշնամւոյն:
Մինչ և լոյս բանին է քաջ զէն մարդոյն,
Միակ հաւասար բանական զատուածն.
Որեա փայլեցո զայն ոյժ զայն ցոլմունս,
Լիցի քեզ պաշտպան 'ի գլխող ժամուն:

## ԿԱՐԿԱՏԻՉ ԲԺԻՇԿ

Բանն է շնորհեալ ամէն լեզուի,
Բայց սակաւուց իմաստ բանի:

Ամէն մարդու խօսք է փառած,
Բայց քիչ մարդու խելք իմացուած:

Զրոյց. Մէկ կարկատիչ (կօշկակար) մը խիստ աղէտ մարդ ըլլալով իր արուեստին մէջ՝ անանկ քիչ շահ ունէր իրեն եկած վաստակէն՝ մինչև մտմտաց որ արհեստը փոխէ: Օր մը խելքը դրաւ թէ բժիշկ ըլլայ, և քանի մը բժշկական բառեր սորվելով բժիշկ եղաւ և ճանչցուեցաւ. իր լրբութիւնը շատախօսութիւնը և անծանօթ ըլլալը շուտ մը զինքն ըրին մէկ շատ անյարմար բժիշկ մը, բայց խիստ յարմար շատախօս մը: Ամէն դի ծանուցած ըրաւ թէ իր դեղերուն զօրութիւնը չի կրնար սխալիլ, և ամէնքն ասոր խօսքին հաւատային: Իր դրացիներէն մէկ

վարպետորդի մը ուզէց ծաղր ընել զինքն ու կերպով : Սուտիկ գլխացաւութիւն ունիմ ըսելով բերել տուաւ ու բժիշկը · ան ալ եկաւ սկսաւ երկան երկան խօսիլ անոր սուտ հիւանդութեանը վրայ պատճառներով, յետոյ հաստատեց հիւանդին թէ զինքը կազատէ ու ցաւէն քիչ ժամանակի մէջ՝ միայն թէ կամենայ յանձնել զինքն անոր հոգաբարձութենը : Վարպետորդին ալ խնդալով ըսաց · խեղճ անխելք, ես ինչպէս կրնամ քեզի յանձնել իմ գլուխս, որովհետև միայն ոտքս ալ քեզի չեմ հաւատար :

Օրհնեալ է անանց որ չեն ջանար իրենց գործքին մէջ երևելի ըլլալ, այլ մեծ բանի յետոյ վարնելով կը ճանաչին : Ո՛ր Բողոսնք զանանք որ վաստակ ընծենաչնան համար նշերէջաւան կըլլան · Իրենք ինչ գիտեն որ ծողովրդեան ինչ պէտք աւելորդներ · կայր կարի աստծչներդ՝ երկաան ալ կարկարաք կիյնին :

Ահա արժանի բան անխմատին
Զանձին բրտութի ոչ նկատողին ·
Հեզել ոչ գիտէ տաուս ալփաբետին,
Բաղմի սխալով յիմաստնոց դասին :
Արդ քանի անզօրք յայս մասբերին,
Մոտանան ըզկար զօրութիւն անձին ·
Միայն բան դատարկ 'ի բերան նոցին,
Հեռի 'ի խելաց հանճար լըս բանին :

# ՓՈՂԱՀԱՐ

Որ ոք գրգռէ զընկերն 'ի չար,
Նովին պատժի չարեօք խայտառ :

Ով բըր պաքմա այըպ էյլեյէ ,
Շաք մէծ ճէզա շաքին խուտայ :

Ձիւէ · Մէկ փողահար (պօռուզան) մը պատերազմին բանակը չալելէն ետև բռնուեցաւ : Երբոր մէկն անոնց մէջէն թևը վերցուց որ սուրը խօթէ անոր՝ պոռաց գերի բռնուողը, թէ ով զօրական, մամըսա որ ես ուրիշ բան չըրի, բայց եթէ փողս չալեցի · ուստի ոչ մարդ եմ մեռցուցեր, և ոչ ձեզմէ մէկին զարկեր եմ: Պատասխանեց մէկալը, թէ դուն աւելիշ արժանի ես մահու, և թուրը փորը խօթելով կըսէր · անօրէն, իրաւ մարդ չիմեռցուցիր, բայց ով ժողվեց զանոնք որ մեռցընեն :

Աւելի պէտք պատուհասին անոնց որ ուրիշին գէշութիւնը պատճառ կըլլան և կըգրգռեն չարութեան ընելու · ասանկներուն մեղքը իրենցմէ առաջ դատաստան կերթայ :

Այս են հատուցմունք խեռ պատանեկաց,
Որ գրգռեն 'ի չար զընկեր բարեկեաց ·
Ոչ գիտեն զերկնից պատիժ պատուհաս
Գանձելով կան նոցա 'ի մահու արկած :

*Զինչ ունիս առ լան յայն սահման չարեաց,*
*Զինչ վասն անձին քո և զինչ զընկերաց.*
*Մի սուլեր զփող չարին գրգանաց,*
*Զի մի կորիցես 'ի սուր Թշնամեաց :*

## ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ԹՈՄԱՍ ԻՒՐ

*Զայլոց չարիս երբ տեսանես,*
*Այնու և դու ուղղեա զքեզ :*

Թէ որ պակասն այլոց տեսնաս,
Ուղղէ ըզքեզ, դուն ալ չիյնաս :

*Խրթ.* Երկրագործ մը կարձըկէ ըծէն իր կովերը, սովի առեն կը մորթէ զանոնք որ անով ապրի ինքը և իր ընտանիքը : Երբոր ան տեսան իրեն շները, շուտ մը ցաթկեցին իրենց տեղէն քաղաք փախան. փախչինք ա-զատինք, կըսէին իրարու, թէ որ աս մարդը չխնայեց մորթեց կովերն որ իր գործքին շատ հարկաւոր էին, մեզի ինչ չընէր որ գրեթէ անանկ շատ պիտուական մը չենք անոր :

Թէ որ ուրիշին վրայ գէշ բան մը տեսնես, մի՛ գայթակղելով դատեր, այլ նայէ որ դուն չընես, և անոնց ինկնելովը դուն չիյնաս : Այլոց թը-շուառութեանը նայելով՝ ես աղէկ եղայ, կ'ըսէ իմ-աստունն :

Այս չքնաղ վճիռ իմաստասիրին,
Հրահանգիլ ասէ սահմանք օտարին.
Զի որ հանդիպի երբէք տեսակին,
Հանդիպիլ գիտէ նաև անհատին:
Բանական դատիս մասնակցեալ բանին,
Մի՛ օտար դատիր գործ բանականին.
Արթուն կաց դիտեա գործածս աշխարհին,
Փախիր 'ի յառթից վնասաբերին:

ԱՌԻՒԾ, ԱՂՈՒԷՍ ԵՒ ԷՇ

Զի՞նչ զօրաւոր քան միտք խոհեմ,
Որ աշխարհի յաղթել գիտէն:

Խոհեմութեան մէջը յաղթող է,
Ամէն բանէն վրան կելլէ:

ճծ. Օր մը առիւծը աղուէսն ու էշը որսորդութեան ելան միատեղ և բանեցին մէկ եղնիկ մը, որ գետինն ընկածին պէս մէկէն էշը կտրտեց զայն. բաժինն որ եղաւ, նախ էշը յափշտակեց առաւ քան զամէնն աւելի մեծ բաժինը: Աս անկարգութիւնս անանկ կատղեցուց զառիւծն որ նոյն կէտին ցաթկեց իշուն վրայ պատռեց: Ան ատենը հասկըցաւ աղուէսը գլխուն գալիքը, անոր համար զգուշացաւ իրեն բաժինն առնելու, նաև տարաւ զան ալ խառնեց առիւծին և իշուն բաժիններին հետ, և բոլորն ընծայ ըրաւ առիւծին: Այս քաղաքավար վարմունքս որ տե-

սաւ առիւծը խաղաղեցաւ, որ քիչ մը առաջ իշուն ըրածն աղուէսին ալ պիտի ընէր։ Մանաւանդ երբոր գոհ եղաւ բոլոր եղնիկն յափշտակելուն համար, սկսաւ շնորհակալութի ալ ընել անոր մարդավարութեանը։ Եւ այսպէս ազատեցաւ աղուէսն իր ճարտարութե՜ն անանկ վտանգէ մը, և էշը կորաւ իր անխելքութեամբը։

[illegible]

Ահա զօրութիւն հզօր առիւծին
Անսաղապ խիզախ ձիրանաց նորին.
Տես ՚ի հանճարոյ զխարդ նուաճին,
Զի միտք ոչ ձիրանք են պաշտպան անձին։
Իսկ դու որ տէր ես աշխարհաց ծրին,
Մի ընկճիր փութով ՚ի տես հզօրին.
Շողացո յաւէտ զայն սուր հանճարին,
Որ յաղթել գիտէ ուժոյ աշխարհին։

## ՊԱՌԱՒ ԵՒ ԱՂԱԽԻՆ

*Որչափ փախչիս յաշխատանաց,*
*Վաստակք լինին քեզ զուգընթաց :*

Թէ գըրրուած է որ Նէրս թալէս,
Ո՛ր որ փախչիս թաղըլու էս :

*Ճծա. Մէկ պառաւ մը իրեն աքաղաղին ձայնը առածին պէս՝ ամէն առտու կերթար կարթընցընէր իր աղախինը* (հալայըխը) *առաւօտէն ժամ մը առաջ կանուխ : Ան ալ կը հարկադրէր որ մէկէն ելլէ րոքն* (ճաքէն) *առնէ մանէ, և թող չէր տար ձեռքէն ձգել՝ մինչև որ արևը մտնելէն ետև ժամ մը չանցնէր մութ չըլլար : Իսկ աղախինը հալեցաւ մաշեցաւ քուն չըլլալով և աշխատանքով. ուստի օր մը բռնեց աքաղաղը խեղդեց, աս մտքով որ երբոր պառաւը կը կորսնցընէ արթընցնողը՝ կրնայ անկէ ետև հանգիստ քնանալ. բայց հակառակն եղաւ, վասն զի աքաղաղն որ մեռաւ՝ պառաւը ա՛լ չիլսելով ձայնը՝ կարգը կորսնցուց, ուստի բոլոր գիշերն ոտքի վրայ էր, կը վազէր կարթնցընէր աղախինը, անանկ որ հազիւ կտոր մը ժամանակ կրնար պառկիլ :*

Պէտք է միշտ հնազանդ ըլլան ծառաներն որչափ խիստ ըլլայ, չէ թէ աշխատանքէ փախչելու համար խելքին էկածն ընէն. ան ատենը գէշ կըլ-

լայ, վասն զի երբոր մէկը թաղեւնէ որ ստանենայ. ինչ ընէ չահ չանի :

Խնդրել ըզհանգիստ ըստ մարմնականին
Խորշել՝ի կրել է գործ տկարին.
Քանզի ՝ի սկզբան ՝ի գրել մարմնին,
Նոյն սահման երկանց գրեցաւ նմին :
Պատրաստ կայ ձայնի հրամանաց վեհին,
Միայն զխրութիւն երկոց ծառային.
Արդ մի՛ ըծընկէց լինիր հեղգութեամբ,
Զի մի՛ զլոկեցիս զժուարագունին :

## ՁԻ ԵՒ ԷՇ

Զայլոց վիճակ մի՛ զարտաքինն՝
Ուշիմ մտօք կշռեա զներքինն :

Մեծ լեռանը ձիւնն ալ մեծ է,
Հարուստին ալ հոգը շատ է :

ՃԾԶ. Փառաւոր ծածկոցով զարդարուած ձի մը կերթար տէրը գտնելու համար պատերազմին մէջ. ասոր անցնելն որ տեսաւ էշ մը՝ սկսաւ հառաչանքով նախանձիլ ձիուն երջանկութեանը վրայ : Ձին որ լսեց և հասկցաւ զայն. ետեւէս եկուր, ըսաց, որ իմ փառքիս մասնակից ըլլաս ինչպէս ես արժանի եղեր եմ աս զարդարանքիս : Իսկ էշը լամծին պէս՝ վաղեց ետեւէն գնաց և հասան պատերազմին բանակը. նախ տեսաւ

զօրքերը զէնքերը վրանները (չադրները) փողերուն թմբուկներուն ձայնը, շատ հաճեցաւ, ամենուն վրայ կուրախանար զուարճանալով: Բայց քանի մը օրէն ետև տեսաւ որ ձին պարտաւորեցաւ տէրը տանելու պատերազմին կրակոտ տեղը և վտանգաւոր ծեծին մէջ. սկսաւ տարակուսելով զուարճութիւնը ձգել, և միտքը բերել իրեն առջի թողուցած տեղը. քիչ մըն ալ անցաւ կախեց անկըճները ու ետ դարձաւ. ինչ որ ըսաց ձին իրեն որ չերթայ՝ հոն մնայ, ամենևին մտիկ չըրաւ, և յետոյ սաստիկ վազելով ձեռք առաւ ջաղացքին ճամբան գնաց :

Օրինակ է Լեծապան հարուստին որ դրուէն անանք ճոխաւոր կերպով մինչև ամէնքը երանի տալով կընախանձին․ Բայց ներսը նայէ՝ հազար հոգղութիւն ունի անանք անհանգիստ որ միշտ երանի տայ միջակ մարդկանց :

Այսպէս և ռամիկք ընդ տես արտաքին
Պշնուն զմայլին իշխանաւորին ·
· Երբ քննեն զկեայս ներքին վիճակին,
Այլ ազգ գտանեն տխուր վշտագին :
Մի ցանկար փառաց վեհմարդուանին,
Եւ մի փայլութեանց աչախիլ բաղդին ·
Զի այն շողշողանք են սոսկ արտաքին,
Այլ ներքին նոցա թախիծ խաւարին :

# ՀՈՂԱԳՈՐԾ ԵՒ ԱՐԱԳԻԼ.

*Կենակցութիւն անզգամին ,*
*Վնաս բերէ մերձաւորին :*

Անզգամին ըլլաս ընկեր ,
Գըլխուդ կուգան չարեաց տարէր :

*Ճծդ . Երկրագործ մը լարեց իր որոգայթը և մէկ արագիլ մը քանի մը որսող թռչուններով եկաւ մէջն ընկաւ : Ան ատենը բռնեց երկրագործը մեռցուց թռչունները . երբոր պատրաստուեցաւ արագիլն ալ մեռցնելու՝ աղաչելով կըսէր արագիլը , թէ ես ոչ չարագործ եմ՝ և ոչ մեղսակից աւազակներուն , վասն զի որոնց մէջ որ գտնուելով բռնուեցայ՝ անոնք սորվեցնելով ակամայ զիս հոս բերին , ուստի մեծ անիրաւութիւն կըլլայ թէ որ անոնց ըրածը՝ ինծի ալ ընես և անոնց հետ զիս կորսնցընես : Պատասխանեց երկրագործը . դուն մեռնելու արժանի ես , ինչպէս կրնամ՝ ես քեզի բարի ըսել , երբ չար ընկերներու հետ գտայ զքեզ : Աս ըսելով վիզը փրցուց :*

Խրատ է անոնց որ կըսեն թէ ես աղէկ ըլլալէս ետքը գէշ ընկերն ինծի ինչ պիտի ընէ : Ասոնք մարդիկ ինչ կուզեն թող ըսեն . գէշին հետ կեցողը գէշ կըլլայ , աղէկին հետ կեցողն աղէկ կըլլայ :

Այս ահա պատգամ է գուշակողին,
Ի վերուստ անուն մեզ ազդ ասողին.
Թէ որք ընդ չարաց կենակցիլ կրթին,
Չարեօք 'ի կենաց զըրաւիլ ունին :
Հեռի 'ի վատաց մերձիր 'ի բարին,
Կցորդեալ յաւէտ ընդ առաքինին.
Որով և արդար լինիս ընդ նմին,
Ազատ յարկածից վընասաբերին :

## ՍԻՐԱՄԱՐԳ ԵՒ ԿԱՉԱՂԱԿ

Յիմարք պանծան ընդ զարդ մարմնոյ :
Իսկ իմաստունք ընդ գեղ հոգւոյ :

Խելլացի մարդ ճեծնաւ լալէ,
Իր բարէր ճեծ ցնծէր նըւէ :

ՃԾԴ. Օր մը թռչուններ ժողվուեցան իրենց մէջէն թագաւոր ընտրելու համար որ յարմար ըլլայ զիրենք կառավարելու : Իւրաքանչիւր թռչուն ժողովքին ընտրութեան իրեն քաշելու համար ըսին թէ ան ըլլայ թագաւոր որ բնապէս աւելի կարողութիւն ունի. ուստի արծիւը խօսեցաւ իր ուժին վրայ, աքաղաղը՝ քաջասրտութեանը վրայ, թութակը յիշողութեանը վրայ և կաչաղակը մօրքին վրայ : Բայց պարապ տեղը կը պարծէին ժողովքին մէջ ամէն մէկը իրենց կատարելութեանը վրայ. մէկին խօսքը բանի տեղ չիդնելէն 'ի զատ՝ գլխացաւութիւն եղան

զուրցուած խօսքերը ։ Ամէնէն եւս եկաւ սիրամարգը բանալով գեղեցիկ պոչը , երկնալուն պէս թաշուններին զմայլելով գոյնզգոյն փետուրներուն վրայ՝ իրեն տուրին մեծութին առանց նայելու կաչաղակին ցուցմունքներուն որ կը պնդէր թէ սիրամարգը պոչէն 'ի զատ ուրիշ կատարելութիւն մը չունի ․ բայց անոնք գովասանքը սիրամարգին տուին և մէկէն թագաւոր կոչեցին ։

Խելք ունեցողը պէտք է ուզէ հոգւոյ գեղեցկութիւնը և բնական ազնուութիւնը նախ քան թէ մարմնոյն. վասն զի մարմնական գեղեցկութիւնը ծաղկի պէս շուտով կանցնի , միայն հոգւոյնը կը մնայ ։

Անբան ընտրութիւն աշխարհասիրին ,
Ընդ տեսիլ մարմնոյ յաւէտ պշնողին ․
Որ զուրկ 'ի լուսոյ տիրական մասին՝
Ոչինչ նշմարէ զգեղ հոգեկանին ։
Նուրբ հանճար մտաց միակ գանձ անգին ,
Մի փոխեր զարդուց ըստ մարմնականին ․
Թէ վառ է հոգւոյ նշոյլ բնածին ,
Ոչինչ գեղ և զարդ նմա զուգադրին ։

## ԴԵԼՖԻՆ ԵՒ ԿԱՊԻԿ

*Մի խուզեր զայն որ չէ քեզ անկ,*
*Զի մի անկցիս յանել վտանգ:*

Անպէտ բանին քննող ըլլալու,
Օր մը մահուան փոսը կիյնաս:

ՃԾԷ. *Մէկ դելֆին մը ցամաքին խիստ մօտ լողալով կերթար. ան տեսնելով կապիկ մը՝ շատ լաւ միջոց է, ըսաւ, որ դիւրութեամբ երթամ բոլոր ծովը քալեմ, վասն զի ընաւ չեմ տեսած, պէտք է որ սիրտս հանգչի: Աս ըսելով ծովուն մօտեցաւ, յետոյ ցատկեց ձկանը կռնակն հեծաւ. իսկ դելֆինը որովհետև մարդս կը սիրէ՝ կարծեց թէ մարդ է վրան՝ առաւ շատ հեռուն տարաւ զկապիկը որ առաւելապէս կուրախանար ժուռ գալով Ովկիանոսին մէջ մինչև խնդալու ձայն մը հանեց: Աս ձայնէս դելֆինը գլուխն որ վերցուց նայեցաւ կապիկին՝ Ճանչցաւ և զարկաւ պոչովը վեր նետեց վրայի բեռը՝ մէկէն մտաւ ծովուն տակը:*

Ով որ իր բանը և փառքը կըլքէ ուրիշին փառք բանին ետևէն կիյնայ իմանալու համար և պէտք չեղած բանը փնտռելու համար, անխելք կապիկին պէ-

ուրիշին պատճառածը իր կորուստն է ։ Շատերը գի-տենք որ ան ճամբան բռնելով գլխերնին աւրեցին մոռցուցան եղան ։

Բարք անասնական ընդվայր շրջողին
 Մոռանայ զիւր գործ քննէ զօտարին·
 Թողու լքանէ ըզտուն և տեղին,
 Զի գիտակ լիցի թէ այլք յի՛նչ բերին ։
Զի՞ կաս ով յիմար 'ի վայր անտեղի,
 Առ ի՞նչ յօտարաց շրջիս վիճակի·
 Դարձ 'ի սեպհական արարս և տեղի,
 Զի մի՛ ծովակուր լիցիս անտեղի ։

## ՀՈՎԻՒ ԵՒ ԳԱՅԼ ՓՈՔՐ

Մի՛ նպաստեր չարամտին,
 Զի մի՛ չարիք 'ի քեզ դարձցին ։

 Թէ գայլնին փունըր տէր տաս,
 Զաւկըներուդ կորուստ կուտաս ։

Առակ. Հովիւ մը կը գտնէ գայլի ձագ մը որ մայրը ձգեր էր, կտանէ կը տանի իր խուցը և հոն կը մեծցընէ. ետքը կը դնէ զայն շնե-րուն մէջ որ կը նայէին ոչխարները, բայց շատ լաւ կընէր թէ որ սորվեցընէր· վասն զի առաջ քանի որ պզտիկ տկար էր՝ բան չէր ընէր, կատարեալ գայլ եղածին պէս մէկէնիմէկ շները խղդեց, և երբոր հովիւը



ՃԺԷ. Օձ և տուտն: ՃԺԸ. Երիտասարդ և Բաղդ:



ՃԺԹ. Հաւ պարարտ: ՃԻ. Երկրագործ և Աղուէս:



ՃԻԱ. Ձիադարմն և Ձի: ՃԻԲ. Արտավար և Կարապ:

քուն էր՝ վազեց ընկաւ ոչխարներուն վրայ բոլորը ջարդեց:

Խրատ ըսաւ վարդապետը որ աշկերտներուն ետքը ըլլան փորձելի աղանդաւորներուն գը-րուածքը, որ ընդդէմ աչքի Բերանն անճառ ներե-նայ՝ Բայց կամաց կամաց կապակցանէ մանկանց միտքեր-Բարքը: Նմանապէս ծնողքն ու իրենց տունը գէշ մարդ ընկերակցութենէն որ անոնց ընկերոջն ու Բարի երկնաւորն ըմբռնառութէ Բոլոր տունը:

Զօրավիգ լինել գրժնեայ գաղանին
 Գործ է գրժընդակ սըրտի անմտին.
 Զի խընամ և գութ անեզրականին
 Ըստ անցոյն առնել է խոհականին:
Իսկ դու հոգածու մանկանց երամին,
 Մի խառներ ընդ այն ըզծընունդ չարին.
 Թէ և աղխկար լիցէ չարածինն,
 Սակայն է անգութ սերմըն գազանին:

## ՕՁ ԵՒ ՏՈՒՆ

Երբ օձքն իշխէ իշխող գլխոյն,
 Եզուկ և վայ բոլոր մարմնոյն:

Որ տեղ կինը կին ու ծառայ,
 Շուտով կըլլէն տակնուվրայ:

Ճծէ. Օր մը կը նայի օձն որ պոչն իր գլխուն դէմ կելլէ: Ի՞նչ ամբարտաւանու-

*թն է, կըսէր պոչը գլխուն, որ միտքդ դրեր ես թէ ես քեզ անմնկլաւ չեմ կրնար կառավարելով տանել՝ ինչպէս դուն զիս կը տանիս, ոչ թէ իմ խելքս քուկինէն շատ վար է · յայտնի է որ շատ ժամանակէ 'ի վեր ես քեզ կը հետևէի, հիմա ալ դուն ինծի հետևէ կարգով, և տեսնես որ ասանկ լաւ բան չի կրնար ըլլալ : Աս ըսաց պոչը և քաշեց գլուխն սկսաւ Ճամբայէն ետ տանել որ Ճամբուն վրայի բաներուն զարնելով տարաւ քարի մը զարկաւ պատռեց մարմինը · քիչ մ'ալ առաջ գնաց ձգեց զինքը ծակի մը մէջ : Նու այսպէս քան ոտք առաջ չեկած՝ վայն 'ի վրան եկաւ բոլոր օձին : Ան ատէնը ետ կեցաւ պոչը կառավարելու, և խոնարհելով հետևեցաւ գլխուն ինչպէս կարգն էր · ուստի բոլոր մարմինը շատ լաւ կառավարուեցաւ գլխուն առաջնորդութեամբը քան թէ պոչին :*

Եթէ մէկ քաղաքի կամ տան մը մէջ պզտիկն ուզէ հրամայել մեծին՝ հարկաւ ան պիտի կործանի · ասանկ ալ մարդուս զգայութիւնը բանականութեան որ տիրէ՝ ան մարդը կը կորսուի, որովհետև զգայութիւնը ծառայ է և բանականութիւնը կամ հոգին տէր է · բայց չէ՞ որ շատ անգամ հոգւոյն ուզածը ըլլալու տեղ մարմինինը կըլլայ :

*Անօրէն օրէնք ըստորնագունին*
*Որ իշխէ լինել կառավար գլխին ·*
*Բայց ո՞ւր տուն քաղաք կայցէ 'ի կային,*
*Երբ կին և ծառայք տիրեն տիրոջին :*

Տէր իշխան կարգի բան մըտաւորին,
Ի քաղաք մարմնոյ կառավար մէկին․
Թէ թող տաս մասանց ըղձալականին,
Տիրեն կործանեն զքաղաքն ընդ պետին։

## ԴԻՈՍ, ԱՊՈՂՈՆ ԵՒ ՄՈՄՈՍ

Որ ձեռնարկէ 'ի գործս այլոց,
Ցեմնեալ ծաղրի 'ի նոյն գործոց։

Մի՛ յետոյ ձեռներ այլոց գործոյն,
Ծաղր լինելոյ անոնց առջին։

ՃԾԸ․ Մէկ օր մը Դիոս ըսաց Ապողոնին թէ կտոր մը ժամանակ՝ տուր ինծի քու աղեղդ, զի կուզեմ քեզի հասկըցընել թէ ես քեզմէ շատ շիտակ կրնամ նետել։ Կը տեսնե՞ս աս կաղնի ծառը տնկած Ողիմպոս լեռան գլուխը, կուզեմ որ նետս (օգը) երթայ շիտակ ծառին կոճին մէջ տեղը զարնէ․ աս որ ըլլայ՝ դուն ալ ջանա անանկ շիտակ նետել որ յետոյ Մոմոս դատաստան թող ընէ թէ որերնիս աւելի յաջող ենք։ Աս ըսելով առաւ Ապողոնին աղեղը նետեց․ նետն ելաւ, բայց շիտակ երթալու տեղը խոտորեցաւ և Մոմոս դատաւորին երեսին քսուելով անցաւ գնաց զարկաւ քարերուն՝ հարիւր ոտք հեռու նշանէն։ Իսկ Մոմոս բոլորովին շփոթած վախուն որ վտանգ էր իրեն՝ ոտքի վրայ ելլելով ըսաց Դիոսին․ Ով

ածներուն գլուխը, չկրցայ հասկընալ թէ Ապողոնին նետերն աւելի՞ շիտակ է, բայց ևս սոյդ գիտեմ որ անոր նետածներն ին-ծի վախ մը չէին տուած ինչպէս քու կինդ պատճառեց․ ուրեմն ինծի մօրիկ ըրէ, առ ձեռքդ դուն քու կայծակդ, և մեծդ Ապողոն՝ դուն ալ առ քու աղեղդ, ահա սաանկ շատ լաւ կըլլայ։ Աս ըսաց ու առանց աւելի բա-ցատրելու և մէկալին նետուածքը մեծցընե-լու՝ գնաց Մամոս։ Եւ աս կերպովս դատաս-տանն անորոշ թողուց Դիոսին վախուն։

Դիոս կայծակ առնի յետոյ որ կընետէ կրակէն․ իսկ Ապողոն արեգակին լոյսն՝ աղեղ առնի յետոյ․ Մոմոս խեղկատակութեան լոյս ըլլալուն՝ երբեմն լոյ-սերուն մէջ դատաւոր կըլլար։ Օրինակ է անոնց որ իրենց արուեստը կը յղեն ու ընտրուած բանի կը խառնուին, և անով շարաշար կը խաբուին և ծի-ծաղելի կըլլան։

Այս շահ վաստակոց փոփոխամըտին
Յայլոց'ի վաստակ վաղ ձեռնարկողին․
Այս և կատարած ինքնահաւանին,
Որ զայլս եպերէ պանծացեալ յանձին։
Բայց յիւրաքանչիւր ըստ իւր վիճակին
Գոյ զօրութիւն ինչ յատուկ բընածին․
Վասնա ընդհոյլ քոյդ արհեստականին,
Եւ մի նախանձու մըխիր յօտարին։

## ԵԶՆ ԵՒ ԿՈՎ

Զի՞նչ շահ անգործ նստիլ 'ի տան,
Եւ պարարակ լինել զենման:

Շատ աղէկ է հոգնիլ ջանալ,
Քան ծուլութեամբ կորստեան երթալ:

ՃԾԹ. Եզ մը կը ջանար քաշել սայլը (արապան) մէկ խիստ քարոտ տեղէ մը. մէկ կով մը տեսնելով անոր ջանքը՝ կը խնտար վրան ու կըսէր. խեղճ ողորմելի, ես չեմ տարակուսիր թէ դուն օրը հարիւր անգամ կը ցանկաս իմ վիճակիս. լաւ գիտեմ որ շատ կուզես ինծի պէս սիրելի ըլլալ և առանց աշխատանքի ուտել: Երբոր ասանկ կը խօսէր՝ մէկ զոհ ընող մարդ մը հասաւ հոն և սկսաւ տաճարին ճամբան տանել զկովն որ սեղանին վրայ իր կուռքին զոհ ընէ: Այն ատենը եզն ըսաց անոր. ով ամբարտաւան, նայինք հիմա քու վիճակդ ցանկալի կերեւնայ քեզի. ճշմարիտ է թէ ես կը բաղձամ քու վիճակիդ, բայց դուն ալ խոստովան եղիր որ հիմա շատ կը փափաքէիր զքեզ իմ վիճակիս մէջ տեսնել:

Հեշտասէր հարուստ մարդիկ ուրիշը չար չարնելով կը պարծենան իրենց հանգստութեան վրայ, բայց չգիտեն թէ որչափ հանգիստ ապրին՝ այնչափ

ըսաւ իրենց կը ծօփէնայ հիւանդութեանը և ճահը, անոր համար աշխատաւոր մարդիկ ըսաւ կարգին և ծափահարեցին ըսաւ կը ժանին :

Այսպէս թուլամորթք ընդ հեշտասիրին
Մերժեն ըղձատակ, 'ի խնջոյս հրճուելին.
Որով մերձենան 'ի սայր մահագալին,
Խաւարին աւուրց կերակուր պահին :
Իսկ դու որ գործել ծնար յաշխարհին,
Առաքինանալ 'ի սէր արարչին,
Մի անգործ նստիր ըստ հեղգասիրին,
Մի պարարտանար 'ի գարշ հեշտալին :

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ՁԵՏ ԻՒՐ

Իւրաքանչիւր խուրն է սիրուն,
Զոր ինչ ունի՝ հրճուի 'ի նոյն :

Պաշտաատուրն միշտ կը նայէ,
Զաւրին իրեն նման ընէ :

ՃԿ. Աղուէս մը կիյնի թակարթին մէջ, մինչև որ պոչը չինձգեց՝ չկրցաւ անկէ ազատիլ: Աս պատճառաւ շատ յուսահատեցաւ, վասն զի ասանկ անպոչ մէկուն չէր կրնար երևնալ, ամէնքը վրան կը խնդային: Աս բանէն ազատելու համար տես ինչ ըրաւ: Միտքը դրաւ որ իրեն պէս ընկերներ ունենայ, ժողվեց աղուէսներն ու բարեկամաբար խորհուրդ տուաւ անոնց որ պոչերնին

ձգեն. զի աւելի արգելք կուտայ, կըսէր, քան թէ զարգարանք, որովհետեւ աւելորդ բեռ մի է. վերջապէս ցցուց թէ այս պոչը ճամբաներն աւելէն 'ի զատ ուրիշ բանի չի ծառայեր: Փուճ տեղն այս ցուցմունքներն ըրաւ, վասն զի բոլոր ժողովքը վրան կը խնտար: Ցետոյ մէկ ծեր աղուէս մը դարձաւ իրեն ըսաց. բարեկամ, չգիտեմ թէ ինչ կըլլայ մէկ պոչէն անցնելով, բայց ան գիտեմ ստոյգ որ եթէ դուն ունենայիր քու պոչդ՝ չէիր ըսեր թէ անօգուտ բան է պոչը:

Օրինակ է անոնց որ իրենց պաշտաւնէութիւնն ու աշխատութիւնը գործելու համար՝ կուզեն որ ամենքն ալ իրենց պէս ըլլան, բայց իրենք անանկ ճամբէն ե-փն իրնլ օգուտ:

Արդ մի ցանկանար զարդու օտարին,
Եթէ ոչ ունիս սեպհական յանձին.
Գիտութիւն համՃար հոգեկան մասին
Են բուն վայելչանք իմացականին:
Զինչ շահ բեռնակրի՝ գանձուց աշխարհին,
Զինչ իմաստութիւն գըրավաճառին.
Արտաքին է այն, ոչ 'ի նա յանկին,
Զի գայ և գընայ ըստ բերման աւթին:

## ԱՅԳԵԳՈՐԾ ԵՒ ՈՐԴԻՔ ԻՒՐ

*Անխոնջ վաստակ հողագործին*
*Են հանք հողոյ և գանձ անգին ։*

Աշխատողէն բան չէ պակսի,
Շատ կը դնէ գանձ և ոսկի ։

*Ճկա․ Այգեգործ մը տեսաւ որ մեռնելը մօտ է, կանչեց որդիքներն ըսաց․ Որդեակք, առանց ձեզի իմացընելու իմ խորհուրդս չեմ ուզեր մեռնիլ որ պատճառի մը համար մինչև հիմա ձեզմէ պահեր էի ։ Գիտնաք որ այգիիս մէջ գանձ թաղեր եմ, չիմոռնաք երբոր ես մեռնիմ, դուք ալ եաքի պարտքերնիդ ընելէն ետև փորեցէք որ գտնէք զան ։ Մեռաւ բարի ծերը․ որդիքը վազեցին այգին և բոլոր հողը մէկ ծայրէն մէկալ ծայրը դարձուցին տակնուվրայ ըրին․ բայց փուճ տեղը հոգնեցան և փորեցին հողերը, բան մը չիգտան ինչ որ ըսեր էր իրենց հայրը ։ Ան ատենը մաքերնին գլխէն թէ ծերը խաբեց․ բայց մէկէն խելք ըրին որ ճշմարիտ էր անոր ըսածը․ վասն զի հողն այսպէս շըրջելով անանկ պտղաբեր եղաւ որ շատ տարի այգին սովորականէն եռապատիկ աւելի բարիք կուտար ։*

Ոսկեղէն դար կըսուեր հին ատենը երբոր ատըմէներ և հարկաւորութեան չկար, ամեն մարդ երկրա-

գործածութեամբ կազմէր · երբոր պէտք ըլլար՝ երար-ձե կը ճոխեն և անանկ հանգիստ կազմէին · ահա-ւա է գանձը կամ (ամֆիոնէն) որ անձը մարդէկ հողին փակ կը ճնշումէն :

Զի՞նչ այն գանձ հողոյ թաղեալ՚ի ծոցին,
Զի՞նչ արծաթ ոսկի քիմիականին ·
Աշխատանք և քիրտն ժիր հողագործին,
Այն գանձ՝ այն ոսկւոյ ծընող են ինքնին:
Թէ վաստակք ձեռացդ ընդ քեզ կենակցին,
Մըթերին քեզ գանձք մօր ոսկեբերին ·
Եւ եթէ անգործ ձեռք քո կաշկանդին,
Անչափ գանձ մըթերք փուժով ըսպառին:

## ԵՐԿՈՒ ՇՈՒՆՔ

՚Որք ընդ ոըլմուտ վայր թարթափին,
Այտեղանան ՚ի բոց մերժին :

Անհայեւնու տեղեր լեռան ,
Որ գարեւել այսպ ըլլայ ,

Ճկք · Երկու շուն տուն մը կը պահէին · որ մը մեկը բոլորովին ուրախանալով ըսաց մեկալին · եղբայր , խմացայ թէ մեր տէրը գե-ղին տունը պիտի կարգուի , դուն գիտես որ տանից հարկիքի հարմնիք չըլլար , ուստի թէ որ ինծի մտիկ կընես՝ երկուքնիս մեկ-տեղ երթանք մեր բաժինն առնենք · ով գի-տէ թէ ինչ կերակուրներ պիտի ուտենք

հոն ։ Աս ըսելով սկսան երթալ մէկ գէշ ճամբայէ մը՝ անանկ որ հարկաւորեցան աղտոտ և գարշելի ջրերէ անցնիլ, մինչև բոլոր տիղմ (չամուռ) եղան և սաստիկ հարսնիք գացին ։ Իրենք զիրենք դրին պատուաւոր հարսնևորի տեղ, բայց չարաչար խաբուեցան . վասն զի երբոր երեցան հոն՝ ամմէնքը սոսկացին անոնց աղտոտութեանը վրայ և հարսնիքին տեղը չմօտեցած՝ որը փայտով որը ոտքով զարկին վռնտեցին ։ Աս կերպով ետ դարձան աս երկու աղտոտ շները հոգնած քաղցած և ծեծ կերած ։

Օրինակ է որկրամոլներուն և գէշ ճաշերու գացողներուն որ ամենուն գարշելի կըլլան, մինչև մարդ երեսնին չի նայիր . այս երեսէն ալ ընկած են՝ մարդու երեսէն ալ՝ իրենց ըսր վարքովը ։

Գեղեցիկ խըրատ մանկանց անփորձին
Որ ընդ տիղմ գըտան յանվայել տեղին .
Անդէն մոլորեալ՛ի նոյն շաղախին ,
Ի մաքուր հոգւոց մերժին հալածին ։
Արդ մի տենչանօք վազեր յուտելին ,
Եւ մի ուղեկցիր ընդ հեշտասէրին .
Որք գընան ընդ տիղմ՝ տըղմով աղտեղին ,
Եւ ընդ Թիւրս Թիւրեալ սահին կործանին ։

## ՋՈՐԻ

Ոմանց պարծանք ոչ ինչ զօրէ,
Բնութիւն անգէն զխակն յայտ առնէ:

Սուտ պարծանքով մարդ չի փոխուիր,
Բնութիւնն ինչ է՝ կը յայտնուի:

Առկ. Մէկ գէր և մսոտ ջորի մը միշտ կը պարծենար մանկութեան ատենն իր մօրը վրայ թէ ձի է ու ես ձիու զաւակ եմ. բայց ծերութեան ատենը երբոր ալուր կը տանէր ջաղացքը, լեզուն փոխեց, և միտքը բերելով շիտակ խոստովանեցաւ թէ իմ հայրս էշ է:

Հպարտ մարդն իր մեծութեանը նայելով զինքը բան մը կը կարծէ և իր ազգին վրայ կը պարծի, ինչպէս հին ատենի կապադովկ թագաւորները յաջողութեան մէջն որ էին՝ կըսէին թէ ածներուն ցեղէն էինք, բայց ձախորդութեան մէջ՝ ինչ եղածնին կը խոստովանէին: Աւելի գեղեցիկ է աղքատական ըլլալը քան աղքատական ծնանիլը, կըսէր Սոլոն:

Այսպէս ինքնապանծք 'ի յաջող ելին
Իբրև գիւցազունն 'ի հանդէս բազմին.
Բայց երբ ժամանեն 'ի ձախողակին,
Զինչութիւն ինքեանց խոստովան լինին:
Մի թեթեւութեամբ խաբիր զերթ ջորին,
Կարծելով լինել 'ի վեհից սակին.
Թէ բարք քո և գործք չիցեն պանծալի,
Անիրաւ պարծիլն է գործ յիմարի:

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՒ ԲԱՂԴ

Լեր նախատես յընթացս առթին ,
Եւ մի արատ գըներ բաղդին :

Ջգայլ կեցէր գալու լարէն ,
Եւ մի աւէր թէ բաղդ լանիս :

Առակ. Մէկ կտրիճ մը պատկեր հորին բե-
րանը կը քնանար. երբոր բաղդն անկէ ան-
ցաւ՝ տեսաւ զայն և հասկըցաւ անոր գալու-
փոսը , մէկէն վազեց եկաւ թևէն քաշեց ու
ձայն տալով կըսէր. Որդեակ, թէ որ հորին
մէջ իյնայիր՝ յանցանքն իմ վրաս պիտի
ձգէին. ուրեմն քեզ կը թողում մտածել՝
յանցանքն իմինս էր թէ քուկինդ :

Բաղդին առիթները՝ աւէտ բանաս գոցէս կանց-
նին՝ թէ յանկարծ ըլլան թէ յաջող. դոր օրինակ թէ
որ առիթ կայ և դուն գալու ճամբին նախատես
ըլլաս՝ հարկաւ հասնելի մէջ կեցնաս , և թէ յաջո-
ղութէ առիթին նախատես ըլլաս , կանցնի առիթը.
ալ չես կրնար գտնելան յաջողութիւնը: Հին ատենը
Բաղդը կը յիշատակէին կայր պատանի մը մէկ ոտ-
քով կլորակի վրայ կեցած՝ որ առջին անդին դառ-
նալով կարապ դիպուածով մեծութիւն , փառք
և այլն :

Այս է նշանակ անխորհուրդ անձին ,
Որ ոչ նախատես լինի վտանգին.
Անարգէ զառիթս ալեկեր բաղդին ,
Ի վտանգիլ անդ մեղ դընէ նըմին :

Դու խմացական վճճակեալ բանին ,
  Կշռեա ըղվախճան ելից և մըտին .
  Արա ըստ տեղւոյն ըստ ժամանակին ,
  Զի մի զղջասցիս 'ի փախչել սուԹին :

## ԾԻԾԱՌՆ ԵՒ ՊԱՏԱՆԻ

Մի՛ հաւատար պատիր բանից ,
  Զի մի՛ ծանակ նըկուն լիցիս :

Երբէ հաւպաս ամՃէն ըէրուի ,
  Եղուն խօրգոյ ըուպոնչ ժէնէ :

ՃԿէ. Մէկ ծիծեռնիկ մը փուԹալով անցաւ ծովերէն, և գարնան օրերէն առաջ եկաւ ան քաղաքը հասաւ ուր տեղէն որ ձմեռուան մօտ գայեր էր . մէկ պատանի մը աղուոր օր մը տեսաւ որ ծիծեռնիկն եկեր է՝ շատ լաւ, ըսաց ինքիրեն, ահա գեղեցիկ եղանակին կարապետը (Մոֆոքէճին) եկաւ . ուստի կրնամ լաԹերս ծգել, զի ասկէ ետև ծանրուԹի կուտան ինծի : Աս ըսելով գնաց ծախեց լաԹերը և ստակն ալ շռայլուԹը կերաւ մախեց . բայց շատ չանցաւ խիստ զղջացաւ , վասն զի քանի մը օրէն ետև ցուրտը ետ դարձաւ անանկ սաստիկ որ՝ պատանին չփոԹեցաւ և մերկ աղքատ ըլլալով ծիծեռնիկէն առաջ մեռաւ , որ աս դէշ գուշակուԹիւնն անոր ըրեր էր :

Օրինակ է ծածկամիտ մարդկանց որ ամէն բանի մէջ հասարակ աւելորդապաշտութիւն ու չարաչար կըխաբուին : Աս առակէն մտած է որ կըսուի , թէ Մէկ ծիծեռնը գարուն չի բերեր :

Աւա՜ղ խորհրդոց յետսամիտ ռամկին ,
Որ դատի մեծ ինչ բան գուշակողին .
Նա խաբէ ըղձա յերկդիմի բանին ,
Սա կարծէ լինել վըճիռ երկնային :
Զինչ քան զայս անբան բան մտացածին ,
Զխորդ 'ի սոյն խելք հետևեցին .
Գուշակք և քաղդէայք արբանեակք չարին
Կորուստ են ինքեանց և բարեպաշտին :

## ԱՍՏՂԱԲԱՇԽ ՄՈԳ

Մի՛ հետևիր Հայնի մոգին ,
Զի մի՛ անկցիս 'ի ցանց չարին :

Մի՛ հաւատար կախարդներուն ,
Որոնց խօսքն է սըփող լեզուն :

Ճկղ. Գող մը կը մտնէ աստղաբաշխ կախարդի մը տուն . և երբոր կախարդը բազմութեան մէջ կեցած իբր 'նըրբամիտ մարգարէի պէս գուշակութիւն կընէր գալիքներուն վրայ , և կը պարծենար թէ աստղերուն 'նայելով անանկ գիտութիւն ստացեր եմ՝ որ ամէն բան կիմանամ՝ որոնք հարիւրաւոր տարիէն ետև պիտի ըլլան , հոն կեցողներուն մէկն

որ տեսեր էր տունը մնաող գողը, կորեց անոր խօսքն ու լաց․ Ի՞նչ պատճառաւ հաւատամ թէ դուն գիտես գալիքները․ իմ-ծի անտարակոյս կերեւնայ թէ դուն և ոչ ներկան կրնաս գիտնալ․ բարեկամ, թէ որ դուն բան մը գիտնայիր՝ շուտով տուն կը վազէիր գողը փախցընելու համար որ տեսայ տունդ կը մտնէր ։

Մոգութիւնը հին Արաբներէն ծագած է, որ կըսէին թէ որչափ աշխարհքիս մէջ բան կըլլայ, աստղերուն դասաւորութիւնը և անոնց ազդեցութիւնը կը պատճառէ․ անոր համար աստղերուն դիրքը նայելով կարծէին թէ գալիքները կիմանան, և խաբէութիւններ ընելով կը կողոպտէին ժողովուրդը ։

Տես խաբէութիւն բազմադէմ մոգին,
Կախարդէ ըզմիտս անհանճար ռամկին․
Ոչինչ տեսանէ որ կան առ ոտին,
Պանծայ գուշակել զապառնիս խորին ։
Քանիք կուրացեալ հաւատան նոցին,
Ի կուրաց անտի լոյս առնուլ կըրթին․
Իմաստ ապառնեաց թէ գոյր 'ի նոսին,
Ոչ մերկ և աղքատ մոլեալ շրջէին ։

## ԴԻՈՍ ԵՒ ՄԱՐԴԻԿ

*Այլոց թերին կայ առաջի,*
*Իսկ սեպհականն յետուստ բերի :*

Այլոց պակասն ունինք առաջ,
Մերինն ունինք մեր ետեւանց :

*ՃԿԷ. Մարդիկ ստեղծուելէն ետեւ Դիոս տեսաւ թէ անանկ մեծ մեծ պակասութիւններ ունէին որ չիպիտի կրնային համբերել մինչեւ որ անոնց ճանաչողութիւնը չիմերցըներ իրենցմէ. աս պատճառաւ կը մտմըտար Դիոս որ զանոնք աս կարծիքէն հեռացընէ. ուստի ժողվեց բոլոր մարդկային պակասութիւնները՝ լեցուց երկու բերնէն շատ պարկերու (հէյպէներու) մէջ, յետոյ բաժնեց՝ ամէն մէկին իրեն տալով վրան բեռցուց անանկ կերպով՝ որ ուրիշներուն պակասութիւնները կախուած էին տանողներուն առջին, իսկ իրենց պակասութիւնները պարկին մէկալ դին ըլլալով ետեւնին կախուած մնացին :*

Մարդուս բնութիւն եղեր է որ իր պակասութիւնը չի տեսներ ու ուրիշինը միայն կը տեսնէ. անոր համար առակը կը ցուցընէ թէ Դիոս անանկ ըրաւ, օրինակ ըսելու թէ աս չար սովորութիւնը բնութիւն եղեր է :

*Այս անկարգ դատմունք պակասամբոլին ,*
*Որ դընէ հանդէպ ղայլոց ըղձերին ,*
*Սուր խուղէ ըղշխուղ ակամ ընկերին ,*
*Կոյր է և անտես խըրոււմ գերանին :*
*Քանի գեղեցիկ լինէր ըստ կարգին ,*
*Եթէ ըղննէաք վըրխպանս անձին ·*
*Փութայէս արդեօք ղերծ դատնէաք*
*Ի վըրխպանաց բարոյականին :*

## ՀԱՒ ՊԱՐԱՐՏ

*Որ քան ըղչափն ունել կրթի ,*
*Կորուսանէ և ղոր ունի :*

Եղած բարւոյն ով գոհ չըլլայ ,
Ունեցածն ալ ձեռքէն կ'երթայ :

*Ճկը · Մէկ հաւ մը ամմէն օր մէյմէկ հաւկիթ կածէր տիրոջը · իսկ տէրը կըսէր որ եթէ երկու չափ գարի տամ, ինծի երկու հաւկիթ կածէ : Եւ ահա ժամէ 'ի ժամ շատ գարի լեցընելով առջին՝ անանկ սատտիկ գիրցաւ հաւը շատ ուտելուն պատճառաւ որ՝ շուտ մը սկսաւ քիչ ածել, և յետոյ բոլորովին հաւկթէն կտրուեցաւ :*

Շատ մարդ իրեն բաւական բարիքն աւելցընելու համար՝ ուրիշ մաղելով ունեցածն ալ կորսընցուցեր է , և յետոյ աղքատանալ ընելով գացեր է աշխարհէն : Անոր համար կըսէ մէկ իմաստուն մը՝ Թէ ինչպէս որ

Ծովը գետերով կը լեցուի ու չի յագենար, ասանկ ալ շահասէր ագահին սիրտը չի կշտանար :

Այսպէս ոչ յագի բաղձանք անյագին,
Չըկայ հանապազ յանչափից մասին.
Անսահման գոլով խիղճ և տենչ սրտին՝
Մինչև սպառէ ըղձիւրն ընդ գոյին :
Մի տենչար շատին մի չափազանցին,
Մի զքեզ մաշեսցէ ցեց տրտմականին.
Ի ձըկտիլ յանչափն արկածք քեզ չափին,
Նախկանեան բընաւք և դու ընդ նոսին :

## ԴԻՈՍ ԵՒ ԿՐԻԱՅ

Մի կար ընդդէմ կամաց վերին,
Մի կըրեսցես պատիժս յանձին :

Ինչ բանով որ կը մեղանչէս,
Անոր պատիժն պէտք է քաշես :

Ձկթ. Օր մը Դիոս կանչեց առջին բոլոր կենդանիներն որ ամէնը միատեղ տեսնելով և իրենց տարբերութիւնը վրայ նայելով զուարճանայ. որոնք մէկէն հնազանդելով վազեցին եկան արագութբ, միայն կրիան ուշացաւ այնչափ որ կարծեցին թէ չիգայ պիտի. բայց ինչ և իցէ եկաւ յետոյ հասաւ, և ինչ բանի վրայ որ տրտունջ կար՝ պատճառ բերաւ թէ գալու ատենը հարկ եղաւ իր տունը ապահով տեղ մը պահել, ահա

տոր համար կըսէր շատ ժամանակ կորսըն-
ցուցի և այսչափ ուշացայ : Բայց աս անմե-
ղադրութիւնս անանկ պաղ ընկաւ որ միջոց
չունեցաւ զօրութիւն մը ունենալու · վասն
զի հազիւ թէ սկսաւ խօսիլ տանը վրայ ,
Դիոս վերցուց տունը կանակը դրաւ որ կու-
զէր թէ առանց ուշանալու հնազանդ ըլլայ
իրեն : Անկէ եղաւ որ պակասութիւը պատ-
ժելու համար մինչև հիմա իր տունը վրան
առեր կը տանի :

Ինչ մեղք որ գործէ մէկը՝ անոր պատիժը կը քա-
շէ, ինչպէս Կրխան իր փառքը պատճառ եղաւ ան-
հնազանդութեանը, անոր համար կոնակն տուաւ պայն.
այնպէս ուրիշներուն պատճառ կ'եղեն թէ պա-կի
ռեր էնք՝ պէտք է շահինք. թէ ալ պատանիքն յէտ-
երնէն կոտնէ ու երբէք խեղճ ազգաց կընէ. տառնկ
է ամէն բան :

Այս կչիռ արդար արդարադատին
Ոչինչ վըրէպ կայ 'ի կըշռոյ նորին ·
Յոր ինչ ոքյանցեաւ՝ զծանրութիւն բեռին
Դընէ 'ի թիկունս այն յանցաւորին :
Ուսիր յառակէս անլուր անբանին
Կոչողին ձայնի ոչ հետևողին ·
Պատկառ կալ կամաց վերին կոչողին,
Դընալ ըղկնի ձայնի անբաւին :

# ԵՂՋԵՐՈՒ ԵՒ ԱՅԳԻ

*Որկոր անյագ կորուստ բազմաց*
*Կարապետակ 'ի չար արկած :*

Անճարգ ահըրը շատ ուտելուն ,
Ան օր բերաւ չափին գլխուն :

ձջ . Մէկ եղնիկ մը որսորդներուն ձեռ-քէն փախչելով այգին կը մտնէ և հոն տերև-ներուն մէջ կը պահուի անանկ որ որսորդ-ները զայն կորսընցուցին եւ դարձան : Իսկ եղնիկը տեսաւ թէ վտանգէն ազատեցաւ՝ սկսաւ որթը (ասման) կրծել և տերևներն ու-տել որ զինքը պահեր էին . և աս եղաւ իր թշուառութեը պատճառ : Վա՜ զի այնչափ տերևները կերաւ որ բացն եղաւ երևցաւ , մինչև որսորդները եւ դառնալու ատենը տեսան զայն , հասան վրան մէկէն բռնեցին մեռցուցին :

Օրինակ է անանց որ ուտելէն 'ի զատ ուրիշ բան չեն ճանչեր , և կարծեն թէ որչափ ուտելի ուտեն ուրախանան՝ այնչափ շատ կապրին , բայց չգիտեն թէ անանկ ուտելի գինուրին կը կորսուին : Կուզէր մէկ ի-մաստուն մը թէ մարդասս կեր ուտելով խմելով կը մեռնի , կէսն ալ շատ հով ընելով :

Գործ է յետասամիտ որկորաժետին
Ուտել և ըմպել ըստ տենչման սրտին ·
Որով վաղվաղէ ըղկորուստ անձին,
Փութայ ժամանէ ժանեաց օրհասին :
Սակայն ողջութիւն գոհար է անգին,
Թէ ոչ խամրեսցի յանկարծ հեշտալին ·
Գընացք բարեխառն ըզգաստ յուտելին
Մի միայն անգիւտ գիւտ է կեցողին :

## ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Որ չար խնդրէ մերձաւորին,
Նոյն չար գտանի 'ի ծոց նորին :

Ո-րէծէրոօն ով չըր հողէ,
Չորը հողգայ չէնօ հը գտնէ :

Ճհա · Մէկ երկրագործ մը ցանեց իր արտերը և բոլորը զարմանալի լաւ բուսաւ · երբոր կը նայէր որ հնձէ ցորենը, դրացինե-րէն մէկն որ զինքը կատէր՝ բաց մտքովը · Ես անանկ արգիլեմ ցորենիդ ժողվելն որ դուն ալ տեսնես · ուստի առաւ վառած կերոն մը կապեց աղուէսին պոչն որ բռնելն մէջ բռներ էր իր արտին քովերէն : Յետոյ տարաւ զայն հետը մէկալին արտին մօտ և հրելով հասած ցորեններուն մէջ ձգեց · կուզէր որ աս կերպով բոլոր ցորենները մոխիր դարձընէ · բայց տես ինչ պատահեցաւ : Աղուէսն առաջ երթալու տեղը՝ Ճամբայէն

եա դարձաւ որ իր բունն երթայ. և որովհետև չէր կրնար երթալ առանց անցնելու իր տիրոջն առջէն որ չարութի կուզէր ընել, ահա վազեց մտաւ անոր արտերուն մէջ ու կրակը առաւ. և այսպէս բոլոր չարութիւնը չարութիւն ուզողին գլխուն եկաւ, որ տեսաւ իրեն բոլոր ցորենը մոխիր դարձած իր խորամանկ չարութենէն։

Նախանձոտ չար մարդիկ իրենց դէմ մէկը կը գըտնեն ու կը նային որ անոր ուրիշին չար տան. Բայց ամէն մարդ ըրածը կը գտնէ։

Չարական խորհուրդ դաւաճանողին
Գուն գործէ կործանել զօտարաց բարին.
Բառնայր զարեգակն թէ էր 'ի ձեռին,
Զի մի ծագեսցի 'ի տուն ընկերին։
Մի չարակնութեամբ ատեր ըզբայրին,
Եւ մի նախանձու վրնասեր նմին.
Զոր ինչ սերմանես ըզնոյն հնձեսցես,
Թէ չար թէ բարի գըտանես ըզմին։

## ՁԻԱՊԱՐՄԱՆ ԵՒ ՁԻ

*Վայ որ ղայլոց փոքրըն դատէ,*
*Ձիւր մեծ չարիս անտես անէ:*

Քու պաշտօնութիւդ [illegible] տէր,
Մէ՛ ուրիշին [illegible] տարեր:

Ձիւ. Պարոնի մը պէտք եղաւ իրեն ձին որ քաղաքը թողուցեր էր, և հրամեց ձին նայող սպասաւորին որ իր եղած տեղը բերէ: Այս հրամանին որ լսեց՝ գնաց անոր ձին առաւ մէկնեցաւ անկէ. երբոր երկուքը միատեղ կանցնէին տիրոջը դաշտին մէջէն՝ ծառան տեսաւ որ ձին գլուխը կախեր գաղտուկ խոտ կուտէր. Գող աւազակ, ըսաց զարնելով անոր, չգիտե՞ս որ աս խոտը մեր տիրոջն է, ասկէ խոտ ուտելը իրեն դէմ է: Պատասխան տուաւ ձին. Դուն որ ինծի կէս չափէն աւելի գարի չես տար որ ինծի համար գներ է, չգիտե՞ս որ աս գարիին կէսն անոր կլնի, և մէկալ կէսը գողնալովդ՝ ինչպէս սովորութիւն ես ըրեր, կը վատուժնամ տեսքով, դուն մեղքի պատճառ կըլլաս: Եւ ահա աս շատ մեծ վնաս է մեր տիրոջը քան թէ ան որ երեսս կը զարնես: Ուրեմն դադրէ ինծի նեղութիւն տալու. եթէ կուզես հաւատարիմ ըլլամ անոր՝ նախ դուն սկսէ ինծի բարի օրինակ տալ:

Օրհնեալ է անզգամ ծառաներուն որ մէկմէկ ուր-
կեւ մէջ անիրաւութիւններ կընեն փոխադարձ․ ի-
րենց մէջ ըսելը չեն փնտներ — պզտի բանի համար
կը գայթակղին ։

Ղաւպառէր ծառայն անհաւատարիմ
Այսպէս կենակցի ընդ ծառայակցին․
Կարծէ հատանէ զապրուստ ընկերին
Եւ ցուցանել զայն յլւր անյագ փորին ։
Սոցա դատաստան ոչ շատ յերկարին,
Որ զրկողութեան շահն նկրտին․
Երբ համար խնդրի 'ի գալ դատողին,
Պապանձին յայնժամ տալ պատասխանին ։

## ԱԳՌԱՒ ԵՒ ԹՌՉՈՒՆՔ

Պըծնեա բարեօք զէքնալ հոգին՝
Մի զվաղանցուկ պատիր մարմին ։

Մի զարդարէր մարմնոյ տանոյն ,
Այլ գեղեցիկ հոգւոյ մտայն ։

Ճհղ․ Ագռաւն օր մը զարդարուեցաւ փե-
տուրներով որ ժողվեր էր զանազան թռչ-
չուններուն բուներէն, և եկաւ անոնց մէջ
որ փառաւորուի․ խել թռչուններն առջի
բերանը զուարճացան զանազան գունով փե-
տուրներուն վրայ, բայց երբոր մօտանց նայե-
ցան և ճանչցան անոր խորամանկութիւնը՝
ամմէնքը բարկացած մէկէնիմէկ վրան վազե-

ցին, և շատ քցրցելով ոչ միայն խլենց փե-տուրներն՝ այլ և խրեններն ալ փեթտեցին, խակ ագռաւն տասնկ փեթտած ամօթով մնաց, անանկ որ վազեց պահուեցաւ, ալ չի համարձակեցաւ անկէ ետև՝ երևնալու նաև ագռաւներուն առջին :

Օրինակ է անոնց որ ուրիշի բանով կը զարդա-րուին և ձեւացութեան կը ծախեն. կամ թէ հոգին կը ձգեն, միայն մարմինը կը զարդարեն, երբոր մահը գայ ամէնը կանցնի կերթայ : Պղտորն զարդարանք ներոցն մը բաւայ. ներսին համար կը հոգնին բանդ զարդարելու :

Զարդ գեղանըկար զարդ բանականին
Ներքին բարութիւնք են հոգւոյ մասին.
Կրթողականօք չափակցեալ բանին
Գերապանծ փայլի խբրև լուսածին :
Նա որ Ճոխացար գանձու իմաստին
Մի ցանկար զարդու մի մարմնականին.
Պատկեր քո անգիւտ մնայց անբաւին
Մի նսեմացի 'ի զարդ օտարին :

## ԱՐՏԱՎԱՐ ԵՒ ԿԱՐԱՊ

Մինչ ճանաչես ընդյարգ բարւոյն ,
Մի լքաներ զայն հեշտագոյն :

Երբ լաւ բանին յարգը գիտես ,
Նայէ յետեւէդ լաւ չինանես :

Ճհգ. Արտավարը կը բռնէ մէկ կարապ մը, կարծէ թէ սագ է. երբոր վիզը սիտի կտրէր՝ սկսաւ կարապն երգել. իսկ մարդը ձայնէն հասկըցաւ և շուտով դանակը տեղը դրաւ. Սիրուն կարապ, կըսէր սիրելով, ա՜յ հաճոյ չէ որ ես քեզ մեռցընեմ, որովհետև այսպէս գեղեցիկ կերգես :

Կարապը այսինքն (թռչ) Թռչունը սագի նման է թէ գունով և թէ մեծութե, բայց ձայնը ախորժելի է, մանաւանդ երբոր մեռնիլը կը մօտենայ՝ խիստ անուշ կերգէ. որ օրինակ է առաքինի մարդկանց իրենցը վերջն օրին :

Կարապ նշանակ է մաքրասիրին ,
Որ յոգւոց հանէ 'ի գալ օրհասին .
Անձկայ լքանել զվիճակ մահածին ,
Գնալ մտանել յանմահ վիճակին :
Ջանա մաքրափայլ լինել ըստ նմին ,
Լծակցիլ սրբոց գրկել զբարին ,
Մերժել զճոխութի ըզշնորհս բաղցին ,
Թեթև թևանալ առ քաղցր անձկալին :

## ՀԱՒ ԵՒ ԿԱՏՈՒ

*Մի՛ լսեր ձայնի չարախօսին,*
*Զի մի՛ չարիք քեզ նիւթեսցին ։*

Շատ մի՛ մօտէր նենգաւորին,
Որ տէր ըլնէ իրեն բաժին ։

*ՃՀԵ. Մէկ հաւ մը անզգուշութեամբ ուտելով թունաւոր կենդանի մը կը հիւընդնայ. երբոր թևերը վար ձգած կերթար՝ կատուն մօտեցաւ իրեն և քաղցրաւոր ձայնով մը ըսաւ. որդեակ, չիգտա՞ր քեզի ճար մը ըողջնալու ։ Հրամմերես, ըսաւ հաւը, մէկ խիստ ապահով դեղ մը գտայ որ դուն միայն կրնաս ընել ։ Դեղը ի՞նչ է, ըսաւ կատուն ։ Պատասխանեց հաւը թէ աս դեղն է քու մէկդի քաշուիլդ այնչափ հեռու՝ որչափ կարելի է ։*

Շատ կեղծաւոր մարդիկ կան որ անուշ լեզուով կը մօտենան, և խորհուրդ կու տան որ կերպով մը գործերնին յաջողցնեն. բայց անանկներէն հեռու փախչելու է ։

*Այս կարեկցութին դաւաճանողին*
*Չէ վասն ընկերին, այլ յօգուտ անձին.*
*Զի խորհուրդ և կամք նենգամիտ չարաց՝*
*Ծանօթից անգամ չար տանել յածին ։*

Քեզ խորհրդակցիլ մի՛ թողուլ տար վատին,
Զի մի՛ խարդախել մուտ լեցի նմին .
Որչափ հեռի կայ 'ի քէն թշնամին,
Այնչափ ապահով մնաս 'ի կային :

## ՈՐՍՈՐԴ ԵՒ ՀՈՎԻՒ

Չէ արութիւն 'ի տան պանծալ,
Ի ժամ մարտի վատթարանալ:

Ի՞նչ շահ պան մէջ մէծ մէծ խօսիլ,
Բանի ատէն ձախող դէմնիլ:

ճհզ . Որսորդ մը տաքցած վեր վար կերթար կուգար, երբեմն անտառը, երբեմն դաշտը կը վազէր : Ի՞նչ կը փնտռես, ըսաց իրեն հովիւ մը, որ սաստիկ խռոված կը տեսնեմ զքեզ : Պատասխանեց՝ թէ մէկ առիւծ մը անցած օրեր իմ խիստ լաւ շունս կերաւ, կը փնտռեմ որ գտնեմ սորվեցընեմ իրեն թէ որուն հետ կը խաղայ : Իմ հետս եկո, ըսաց հովիւը, ես քեզի կը ցցընեմ անոր բունը ուր տեղ որ կը գտնուի : Որսորդը գոյնը փոխելով ըսաց . բարեկամ, ժամանակն ուշ է, ես ալ հիմա խիստ հոգնած եմ չեմ կըրնար հոն երթալ, բայց վաղը կանուխ կուգամ կաղաչեմ որ տանիս զիս հոն : Հովիւը մէկալ օրը շատ սպասեց, բայց մէյմալ չերեւցաւ որսորդը :

Օրինակ է փոքր մարդկանց որ ամէն բանի վրայ մեծ մեծ կըխօսին, բայց տեղը որ գայ՝ ըներնին կը կապուի. անոր համար կըսուի թէ մեծ խօսողին յետքէն բան չի գար. և մեծ քար նետելը՝ չզարնելու նշան է :

Այսպէս վատ մարդիկ յորժամ են 'ի տան,
Առաջի իւրոց լինին բազմաբան.
Բայց երբ 'ի հանդէս գործոց մերձենան,
Ջերթ կնամարդի վատթարեալ գողան :
Քեզ լիցի խրատ այս իմաստ և բան,
Մի առ օտարաց լինիր բազմաբան.
Զի բանք ընդ գործոց երբ ոչ միանան,
Ծանակ ամենից մնաս զրաբան :

ԿՀ. ԲԵՌՆԱԲԱՐՁ

Միտք յիմարաց որչափ խորհին,
Միշտ վնասու ծանրաբեռնին :

Յիմար մարդուն գործքին վրայ
Յիմարութեան նշան կըլլայ :

ՃՀԷ. Մէկ էշ մը աղ բեռցուած ջուրը մտաւ և շուտով վրայի աղը հալեցաւ. քանի մը օրէն ետև սպունգ (սիւնկեր) բեռցուած էշերը կանցնէր նոյն ջրին քովէն՝ վազեց ջուրը մտաւ որ բեռան ծանրութիւը թեթև. նայ ինչպէս առջի անգամին եղեր էր, բայց հակառակն եղաւ. վասն զի սպունգը ջուրը

ծծեց և բոլորն ուռեցաւ. ուստի իշուն բեռն անանկ ծանրըցաւ որ չկրցաւ դիմանալ, ջուրն ընկաւ ու խեղդուեցաւ։

Անխելք մարդը որչափ աւելի ջանայ խելք բանեցընել՝ այնչափ անշնորհք բան կընէ. շատ աղէկ է որ ձեռէն ընկածն ընէ, աւելի բան չըմտածէ։ Անոր համար կըսուի թէ շատ լաւ է խելացի մարդուն հետ քար կրել, քան թէ անխելքին հետ սեղան նստիլ։

Այս բերմունք մտաց անիմաստ ռամկին,
Որ կարծէ խորհիլ զօգտակարն անձին.
Իմաստնոց է այն խորհիլ ըղբարւոյն,
Առնել ըստ տեղւոյն և 'ի դէպ ժամուն։
Ջանա վառ պահել զիմաստ բընածին,
Եւ մի՛ մԹագնեք ըստ յաւանակին,
Որ ոչինչ ունի կշռել զառնելին՝
Առնել կամ Թողուլ ըստ բերման առԹին։



ճձե · Արծիւ նետահար ։ ճձզ · Առիւծ, կինճ և Անգղ ։



ճձէ · Կին և Ոչխար ։ ճձը · Հովիւ և Այծ ։



ճղա · Հովիւ և Ոչխար ։ ճղբ · Արծիւ և Կաչաղակ ։

## ԱՐԾԻՒ ՆԵՏԱՀԱՐ

Ոչ ոք յանկարծ գլխի չարեաց,
Երբ նախատես է ապառնեաց։

Թէ մտմըտաս այնպէս գործէս,
Շատ ճշտուէ տեղ խղտտէս։

Ճնճ. Արծիւը մէկ քանի փետուր կը փետթէ իր վրայէն վար կը ձգէ. որսորդ մը կը ժողվէ զանոնք, յետոյ նետին ծայրը կանցնէ և անով նոյն արծիւը կը զարնէ։ Մեռնելու ատենը կը կանչէր արծիւը. վայ ինծի, ես ասանկ խեղճ ողորմելի կը մեռնէի թէ որ անխոհեմութեամբ իմ մեռնելուս պատճառ չըլլայի։

Անխոհեմութիւն պակասն է որ ըրած բանին վերջը չմտածելուն՝ մարդ յետոյ կը խայթէ։ Շատ անգամ մէկ անխոհեմ գործք մը անանկ բան կընէ որ աշխարհք մէկտեղ գար չէր կրնար ընել։ Ուրեմն պէտք է նախ ամէն բանին վերջը մտածել որ պատահելէն ետև անխելքութեանը չզղջայ պատած տեղը։

Ահա տեսարան անխորհուրդ մտաց
Ըզվախճան գործոց ոչ մտառողաց.
Որով և ինքնին ըղձեցեալս կենաց
Կորէ հատանէ 'ի սայր մանգաղաց։

Քանի՜ անխոհեմք դնին յայս արկած,
Վաղվաղեն ընդմահ հանդիպիլ անձանց ·
Որ ոչ նախատես լինին սպառնեաց,
Մաշեալ զըրաւի 'ի նոյն սպառնեաց :

## ՈՒՐՈՒՐ

Որ զիւրն ատէ, այլոց ցանկայ,
Եւ յերկոցունց վրէպ մնայ :

Այլոց բանին դուն մի՛ ցանկար,
Նայէ փոխնիդ ըլլայ յարմար :

ՃՀԹ. Կըսուի թէ ուրուրն առաջ հիմակուան ձայնէն շատ լաւ ձայն ունէր, բայց թէ ինչ գիտուածով անանկ անուշութենէն ատանկ խիստ անհամ ձայն եղեր է՝ ահա պատճառն աս թռչունին անխոհեմութիւն է կըսեն : Օր մը կը տեսնէ որ ձին խրխնջալով ձայն կը հանէ, միտքը կը դնէ ուրուրն որ ինքն ալ անոր պէս ընէ · բայց որչափ աշխատեցաւ անոր ձայնը հանելու չկրցաւ : Գէշն ան եղաւ որ ուժ տալով նմանցընելու համար ձիուն ձայնին՝ իրեն ձայնն ալ աւրեց, և անանկ խառնուեցաւ որ մինակ մէկ զարհուրելի աղաղակ մը կը լսուի :

Օրինակ է անոնց որ իրենց ունեցածին չեն հաւնիր՝ կուզեն ուրիշին նմանել, և անով ունե-

ցածնին առ հեհորոճոցնեն և անդիման հելլան ։
Շատ լաւ է իր ունեցածը հաստատելագործել քան
Թէ ուրիշին երևեն ինկիլ ։

Այս անմտութեն բերքն են ակարին
Որ այլոց ցանկայ նմանել յատկին.
Թողու գլատկութին պատշաճեալ անձին,
Ունել նկրտի որ 'ի չար բերին ։
Ջանա կատարել գքոյդ յատուկ ներքին
Ջանազան ձիրք իշխանականին.
Մի ցանկար այլոց, այլք քեզ ցանկասցին
Նմանել բարուց վսեմագունին ։

ԱՌԻԻԾ ԵՒ ՈՐՍՈՐԴՔ

Իմաստ հանճար մտաւորին
Յաղթէ ուժոյ վեհ առիւծին ։

Մարդոյ պէնքը իրեն խելքն է,
Անով երկայ աշխարհք յաղթէ ։

ՃԺ. Առիւծը մէկ քանի կենդանիներու գլուխ եղաւ և անոնց հետ միատեղ որսորդներու դէմ ելաւ որ ծեծկուի ։ Երբոր մօտ գնաց, որսորդները նետեցին իրենց նետերն առիւծին վրայ վիրաւորեցին ։ Առիւծը հասկցաւ որ վէրքը խորունկ է, բարեկամներ՝ ըսաւ, ես դառնանք. եթէ մեր թշնամիները հեռուէն ասանկ կը զարնեն, հապա աւելի որ մօտենանք ի՞նչ չեն ըներ մեզի ։

Ով որ իր գործոցն ապաւինելով ուրիշը բանի տեղ չի դներ, առիւծին պէս խոյացող կըլլայ. անոր համար կըսեն՝ Թշնամիդ մրջիւն ալ ըլլայ, դուն զինքը խէթ գործողի տեղ դիր :

*Տես զիարդ ընկճի հզօր ամենին*
*Յանդգն համարձակոյ իմաստականին.*
*Զի միտք և ոչ զէնք տիրեն աշխարհի,*
*Թէ իմաստութիւն զինեալ է բանին:*
*Մի վստահանար 'ի քո ոյժ բազկին,*
*Մի 'ի վէգ բերիր ընդ գիտնականին.*
*Քանզի իմաստունք թէ և փոքրոգի*
*Փշրեն համարձակով զեղջիւր գոռոզին:*

---

## ԱՌԻՒԾ, ԿԻՆՃ ԵՒ ԱՆԳՂ.

*Կինճ և առիւծ երբ մաքառին,*
*Անգեղք խնդան յուտել զնոսին:*

Երկու հոգի որ կռուին,
Շահ կը բերեն մէկ ուրիշին:

*Ճճա. Առիւծն ու խոզն անանկ իրարու վրայ կատղած էին որ կռուելով մէկզմէկ կը պատառէին. իսկ անգղ թռչուններն ուշադրութիւն կը դիտէին անոնց կռիւը, և իրենց մէջ կըսէին. Թէ որ շիտակը նայինք՝ աս յաղթութիւնը մեզի համար պիտի ըլլայ. մե՛ զի ասոնք իրար չիպիտի թողուն մինչև որ մէկը գետինը չիյնի, ուստի կամ առիւծը և*

կամ խոզը հարկաւ մեզի կերակուր կըլլան : Այս խօսքը պարապ չելաւ, վասն զի յիրաւի սատացան աւելի մեծ որս մը որչափ որ չէին կարծեր, որովհետև առիւծը մէկէն պատռեց զխոզը, խոզն ալ զինքը պաշտպանելու համար վիրաւորեր էր զայն · ուստի խոզը մեռնելէն մէկ քանի օրէն ետև առիւծն ալ մեռաւ իր խոցէն · և այսպէս անգղները յափշտակեցին երկուսն ալ կերան :

Օրինակ է ողբական և հրապարակէր ճարտասանաց որ երբեր խառնելով հռետէն գրականին, և առանց հոր-ծանելու խաղաղաբերները հը ունին՝ անգղին (ախպարապային) դէր :

Ահա անհամբոյր կիրք գաղանային
Ածէ զատելիս ժանեաց օրհասին ·
Որով և անգեղք ընտակք յեւթերին,
Հանել կեր ինքեանց կան՚ի տես մարտին :
Այս է ատելեաց գեղեցիկ բաժին,
Խածատեն զիրեարս, յինքեանց կոտորին ·
Մերժեն հալածեն ըզսէր ընկերին,
Մերժին տեսանել ըզսէր արեգին :

## ԻԸ. ԿՌԱԲԱՐՁ

*Զի՛նչ շահ տանել գանձ և բազկին ,*
*Մընալ վատթար թափուր մերկին :*

Մի պարծենար թէ ունիս գանձ ,
Ան շուտ կերթայ կը մնաս բաց :

*ՃՃԸ. Մէկ էշ մը վրան կուռք մը բեռցած կանցնէր բազմութեան մէջէն , և ժողովուրդն երեսի վրայ ընկած մեծ յարգութիւն երկրպագութիւն կընէին կուռքին : Իսկ էշն աս պատիւն իրեն սեպելով սկսաւ հպարտ քալել ծանր ծանր և գլուխը բարձրացընելով անկըջները վեր տնկել : Ասոր ըրածը մէկը տեսաւ կանչեց իրեն . պարոն աւանակ , դուն կը կարծես թէ մեր յարգութեանը արժանի ես եղեր . քիչ մը սպասէ մինչև որ տարած կուռքդ վրայէդ վար իջնի , գաւազանն ան ատենը քեզի կը հասկըցընէ թէ յարգութիւնն որ մենք կընենք՝ քուկինն է թէ անորն է :*

Օրինակ է փառասէր հպարտ մարդոց որ ուրիշէն պատիւ փնտռելով՝ զինքը բան մը կը կարծէ . բայց ապրանքը վրայէն վերցուցածին պէս՝ կը մնայ ինչ որ է : Փիլիսոփաները հարստութեան՝ արտաքին բարիք ըսին որ կուգայ կերթայ . վայ անոր որ ունայնութեամբ կը հպարտանայ :

Անբան ցանկութեն կոյր փառասիրին
Կարծիս տայ լինել 'ի վեհից սակին.
Այլ չէ մեծութիւն այն բեռն արտաքին,
Բուն ներքին օժիտք են յոգւոյ մասին։
Մի ցանկար փառաց այն անցաւորին,
Որ գայ և գնայ իբրև բեռնակրին.
Այնպէս զարդարեա ըղձիւ բանին՝
Զի վեհ մնասցես 'ի գընալ բաղդին։

## ԳԱՅԼՔ ԵՒ ՈՉԽԱՐՔ

Չէ պարտ անսալ խրատատուին,
Երբ խրատտու է թշնամին։

Չար խըրատուն անըղգամին
Ոսոխ ըլնայիս բարեկամին։

Ճձգ. Օր մը գայլերն ըսին ոչխարներուն. Բարեկամք, իրաւ որ չենք կրնար հասկընալ թէ ինչպէս դուք կրնաք համբերել անարգանացն որ ձեր շներն ամմէն անգամ ձեզի կընեն. չխօսակն որ նայինք՝ ինչ ծառայութիւն կընեն ձեզի աս անզգամները ձեր խումբին ետեւէն գալով, բայց եթէ վշտացընել միշտ և խածնել հազար նեղութիւն տալով։ Մեր խօսքը մտիկ ըրէք և շուտով զանոնք վռնտեցէք. ինչ կը վախնաք միթէ դուք բաւական քաջութիւն չունիք որ ձեզ մինակ պաշտպանէք և ձեզի վնաս տուողը հալածէք։ Աս խօսքիս վրայ ոչխարները ի-

*րենք զիրենք խիստ զօրաւոր կարծեցին ու շուտ մը վազեցին շներուն ճամբայ տալին, բայց շուտով զղջացան, վասն զի գայլերը տեսան որ շները հեռացան՝ մէկէն վազեցին ոչխարներուն վրայ բոլորը պատռեցին:*

Ով որ Թշնամւոյն խօսքին կը հաւտայ և բարե-կամին կը հեռանայ՝ ան ոչխարներուն պէս կըլլայ · վասն զի մէկն որ բնութեամբ չար է, ուրիշին ոչ բա-րի կրնայ ընել և ոչ բարի խրատ կրնայ տալ:

*Այնպէս չարք պատրեն ըզմիտս անմեղաց,*
*Իբրև բարեկամ ձայնեն լսելեաց ·*
*Կարեկից լինին խրատու բարեաց ·*
*Մինչև ձգեսցեն 'ի թակարդ իւրեանց:*
*Մի՛ լսեր ձայնի մարդելոյզ չարին,*
*Մի՛ քեզ մերձեսցի գազան թշնամին ·*
*Քանզի չարակամք միշտ չարիս կամին,*
*Մի՛ ակնկալցիս 'ի նոցունց բարին:*

## ԳԵՏ ԵՒ ԱՂԲԻՒՐ

*Մի՛ ապերախտ լինիր բարեաց ,*
*Զի մի՛ հատցեն քեզ տուժք չարեաց ։*

Ապերախտութիւն բարերարին՝
Գրած պահէ մէջը սրտին ։

*Ճնճ. Գետը դէմ ելաւ իր գլխուն կամ աղբիւրին և անարգելով կըսէր՝ Թէ երբոր կը մտածեմ իմ լայնութեան ու խորութեան և կը տեսնեմ թէ իմ ջուրս աղբիւրներուն ջրէն որչափ մեծ և որչափ շատ է՝ փառք կուտամ որ ես գետ եմ. բայց դուն ողորմելի աղբիւր ինչ ես՝ միայն թէ մէկ բարակ ջրէ թել մը որ արեգակին մէկ ճառագայթը կրնար ցամքեցընել Թէ որ ապառաժներն ուր տեղաց որ կը վազես՝ քեզ չխպաշէին արևէն ։ Պատասխանեց աղբիւրը. լիրբ, իբաւի քեզ շատ կը վայլէ զիս անարգել. դուն որ առանց ինծի ոչինչ կըլլայիր. ես թող չըլլամ՝ նայինք քու մեծութիւնդ և ձկներդ ինչ կըլլան ։*

Ապերախտին ինչ բարիք որ ընես, չուզեր ճանչնալ՝ կարծելով թէ իրմէն է. անոր համար նաև բարիքին ալ շահը չի տեսներ, և պատճառ կըլլայ որ մարդ մարդու բարերարութիւն չընէ ։

Դժնդակ դատմունք աղերսախառ վասին
Անդամնել բերի իւր բարերարին,
Որով և ըղձան լսէ զարժանին,
Թէ ես եմ պատճառ քեզ աղխրատին:
Արդ մի մոռանար ըստ օրինակին
Ձերախատիս այլոց որ քեզ արարին.
Գրեա քանդակեա յարձան քո սրտին,
Ձի աշխարհ համայն զայն միշտ ընթերցցին:

## ԿԻՆ ԵՒ ՈՉԽԱՐ

Մի տանակոխ լինիր հեզին,
Որ հպատակ կայ քոյդ ձեռին:

Եթէ խղճան ես ոչխարին,
Վերջ նեղութի լինիս խեղճին:

ՃՃԾ. Մէկ կին մը կը խուզէր իր ոչխարին բուրդը, և անանկ գէշ կը կտրէր որ կաշին ալ միասեղ կը քերթէր: Իսկ ոչխարը կաղաղակէր թէ կաղաչեմ, եթէ իմ կաշիս կուզես՝ զիս մսածախին ղրկէ, և թէ բուրդս կուզես՝ խուզողը բերել տուր որ կտրէ:

Օրինակ է անողորմ մարդկանց որ անանկ փանջելով կաշխարհէն ծառաներն ու հոգինին կը հանեն. Բայց թէ և պահանջողութեան ծառան, պէտք է մարմնեալ թէ ձեռք ալ քեր տանին, արդեօք նայելու պէտք է կը ծառայէնք մեր տէրոջը:

Այսպէս են վարմունք դաժան տիրուհեաց ,
Կուփեն կեղեքեն զաղախնիս իւրեանց ·
Մոռանան թէ գոյ և տիրող ինքեանց ,
Մորթեզերծ առնեն այսպէս չարատանջ :
Արդ մի խոշտանգիչ լինիր անմեղաց ,
Մի՛ 'ի .քեզ տեսցի գործ դաւըն դաժանաց ·
Ոչ մարդոյ է այն , այլ բոլք գազանաց
Ընկճել և մաշել զենթարկեալս անձանց :

## ՀՈՎՒՒ ԵՒ ԱՅԾ

Մի՛ բարկութեամբ հարկանիր զոք ,
Զի ոչ հարուած բառնի վիրօք :

Լեզւի խօսքով մարդ չի կշտանար ,
Եւ վէրք վէրքով չի բժշկուիր :

Ճծզ. Հովիւ մը բարկանալով զարկաւ այծին գլխուն անանկ սաստիկ որ՝ մէկ եղջիւրը կոտրեցաւ · բայց շուտով զղջացաւ ըրածին վրայ ու կաղաչէր այծին որ տիրոջը բան չըսէ : Պատասխանեց այծը · ով թշուառական յիմար , ես թող անանկ բարի ըլլամ որ մեր տիրոջը բան չըսեմ , իսկ ան աչք չունի՞ չի՞ տեսներ թէ մէկ եղջիւրս պակաս է :

Բարեկամներս մարդուն ինչու որ ըսէ՝ վերջը չի մտածեր ·
աներ համար շուտով կը զղջայ ըրածին վրայ · մար-

դոս կըձայնէ որ բարկութեան մէջ անանկ բան ընէ որ ետքը զղջայ : Չար խղճմտանքն է որ իրեն կրայ ու կըր-նար խղճմտանութեան ընել, կըսէ Սողոն :

Տարապարտ ցասումն բարկասիրտ անձին
Իբրև բոց հրոյ վառի 'ի սրտին.
Զղջումն ապաշաւ հետևակ նըմին
Խայթեն խըռովեն փութով զայն հոգին :
Արդ մի բարկութեամբ գործեր զանբարին,
Յորժամ մաղձ արեան եռայ 'ի լերդին.
Բարեխառն եղեալ 'ի բարկանալին,
Զի մի զղջասցիս 'ի սպրդիլ բանին :

## ՆԱՒԱՊԵՏ

Այր նաւապետս ոչինչ զղջայ
Երբ յելս յաջող զչարէն խիթայ :

Արթուն մարդէն միշտ պատրաստ կան,
Վտանգն որ գայ աղէտ կըլլան :

ՃՃԷ. Երբոր հովը յաջող և ծովը հանդարտ էր, նաւապետ մը գնաց իր նաւը նայելու. խարիսխը (ճենկէլը) տեղը հաստատեց, չուանները պատրաստեց և վեր վար կերթար կուգար առագաստներուն քովերն ու ամէն բանին զգուշութիւն ընելով կընայէր։ Ճամբորդներէն մէկը զարմանալով ըսաց. տէր, ինչ պատճառաւ անանկ շատ կը հոգաս, աս ըրած հոգդ ով որ տես-

Նէ կարծէ թէ մօտ ենք վտանգին · ահա ծովն ու հովը մեր վրայ կը ծիծաղին , դուն ինչու համար կը վախնաս : Հիմա բանէ մը չեմ վախնար , ըսաց խելացի նաւապետը , բայց գալէքներուն վրայ միշտ կը վախնամ · վասն զի բան չխմտածած ատեննիս կրնայ մէկ ա- ւէկոծութիւն մը ելլել : Կաղաչեմ ըսէ , ե- թէ յանկարծ փոթորիկ մը հասնի վրանիս՝ մենք անանկ անպատրաստ ո՞ւր կերթանք :

Խոհեմ նաւորդը պէտք է որ յաջողութեան մէջ խա- ղաղ տիրապետութիւններէն վախնալով զգոյշ կենայ , և յախորդութէ մէջ առանց յուսահատելու յաջողութէ սպասէ · ինչպէս նարդ կամ (թաւլու) խաղցողները կ'ընեն , երբ յաջողութեան մէջ շատ բարձրանան , կամ յախորդութեան մէջ խոնարհին՝ միշտ խաղը կը կորսնցընեն :

Տես զիարդ խիթայ միտք խոհականին
Ըզձախողակէն 'ի յաջող ելին ·
Քանզի յանկայուն շրջի 'ի ծովին
Ի կիտէ 'ի կէտ փոփոխականին :
Ծով է այս աշխարհ ծըփեալ երերին ,
Ալեբեր հողմունք 'ի նոյն փոթորկին ·
Արթուն կաց ըզգաստ ըստ քաջ նաւուղղին :
Զի մի սուզեսցի նաւ տիրականին :

## ԽԱՂԱԽՈՐԴ ԵՒ ՈՍՏԻԿԱՆ

*Այլոց անգէտ գործոց համբեր*
*Թէ և լինին քեզ վշտամբեր:*

Ով որ այլոց կը համբերէ,
Լեղին իրեն քաղցր համ բերէ:

Ճձը· Մէկ *խաղախորդ մը դրացի եղաւ ոստիկանի մը որ տէրութեն մարդ ըլլալով չհամբերեց անոր կաշիներուն գարշահոտութեն՝ մինչև դատաստանի կանչեց և կու զէր որ պարտաւորի դրացութենէն հեռանալու․ իսկ դրացին շատ պատճառներով անանկ լաւ պաշտպանեց զինքն որ դատաստանը հեռու ձգել տուաւ: Սակայն ոստիկանը սովրեցաւ քէշ հոտին, անանկ որ շատ ցաւեցաւ մոռնած ատկին վրայ որ փուճ տեղը դատաստանի կանչեց: Ուստի անկէ ետև համբերեց դրացին, ամենևին տրտունջ մը չըրաւ:*

Ով որ դրացիէն կամ ընկերէն մէկ նեղութիւն մը կը քաշէ՝ պէտք է միտքը դնէ թէ ինքն ալ շատ պակասութիւն ունի որ ուրիշը կը նեղէ․ և այսպէս իրարու պակասութիւնը գոցելով, կը վայելէ սիրով ապրիլ․ Վասն"զի ամէն բան կամցածի՝ բայց նեղութիւն խօսք չհասցնիր կըսեն:

Այսպէս կարճամիտք փութով զայրագնին
Ի վերայ թեթև բանից ընկերին.
Բայց յետոյ խըրև 'ի միտըս լինին,
Տեղի տան կըրից սիրով կենակցին։
Արդ մի՛ զայրանար ընդ գործ օտարին,
Մի՛ յարուցանէր կագ ընդ դրացին.
Զի ամէն լեզի սիրով համեմին,
Եւ սովորութեամբ անսովորք դիւրին։

ՇՈՒՆ ՊԱՅՏԱՌԻ

Ննջօղն հանգիստ և քուն յերկար,
Անխտից լինին անընդարար։

Գործքի ատեն ծոյլն է թմրած,
Հացն որ տեսնէ կ'ելլէ ոտքի։

Ճծթ. Պայտառին (նալպանտին) շունը սովորութիւն էր ըրեր որ միշտ պառկէր կը քնանալը սալին (եօրանին) քով. Թէպէտ պայտաւը շատ անգամ երկաթ կը ծեծէր սալին վրայ, բայց շունն ամենևին չէր արթըննալը. և ընդհակառակն երբոր պայտառը գործքը կը ձգէր կերակուր ուտելու կերթար՝ շուտ մը շունը սեղանին ձայնէն կարթըննար ու վեր կը ցաթկէր մէկէն սեղանին կը վազէր։

Օրինակ է ծուլութեան. շատ մարդ կայ որ գործատեն թմրած կը մնայ, բայց կերակուրի ատեն ա-

Նանկ արթուն է որ ուրիշի բան չի թողուր · ոսկի էթէ հանգիստն ու քունը շատ արթուն բնաւորութիւնը կը ճոխեն անպիտան կընեն , հապա մարդուն ինչ չէն ընէր որ հանգիստ կը սիրէ ։

Այսպէս փառթարեալ յիստամիտ ծուլին,
Եղծեալ զարթնութեան ննջէ քուն խորին·
Որով կարգն ուղիղ խամրեալ բընածին,
Արթուն կայ ըզգաստ միայն յուտելին։
Մի՛ քնափութեամբ շիջցի լոյս բանին ,
Եւ մի ուտելեօք թըմրանալ յանձին·
Քանզի հեղգ գընացք ըզբազում արկին
Ի լայն որովայն կորըստականին ։

## ԲԱԶԿՔ

Կապ և կըռիւ կըռուասիրաց
Յօգուտ կարգին բարեսիրաց ։

Անգործներն երբ կը կըռուին ,
Բարի մարդիկ հանգիստ ունին ։

ձղ · Երբեմն բազկներն իրենց մէջ խռովութիւն ունէին որ անդադար կը կռուէին իրարու հետ , և սաստիկ ուրիշ թաշունները հանգիստ էին անոնց ձեռքէն ։ Իսկ միամիտ աղաւնիները տեսնելով անոնց թշնամութիւնը՝ բարեգործութիւն ընելու համար մէջերնին մտան հաշտեցուցին , բայց շուտով զղջացան · վասն զի անզգամները հաշտուածնուն

*պէս՝ մէկէն սկսան հալածել ուրիշ Թռչուն-ներն և աղաւնիները՝ անանկ որ ամենևին անոնց հանգիստ չէին տար. ուստի աղաւ-նիները ցաւելով կըսէին Թէ շատ աղէկ է ատոնց մէջ միշտ պատերազմ ըլլալ քան Թէ խաղաղութիւն :*

Ամէն տեղ հաշտութիւն ընել աղէկ չէ, եր-բեմն կըլլայ որ հաշտութիւն ընելով՝ աւելի մեծ վնաս կը ծագի, որովհետև գէշ մարդիկ իրենց մէջ եր-բոր կռուին՝ բարեպաշտները քիչ մը հանգիստ կը գտան :

*Անհանգարտ գըրգռիչք միշտ 'ի վէգ բերին,*
*Եթէ ընդ երկարս Թէ ընդ օտարին.*
*Յորժամ խածատեն զիւրեանց ըզմարմին,*
*Բարեսէրք անվէր և հանգիստ նըստին :*
*Արդ մի կըցորդիր ընդ գործոց նոցին,*
*Զի մի այն հարուածք քեզ փոխաբերցին.*
*Դըժնեայ անզգամք երբ միաբանին,*
*Խըռովեն զարդար զընկեր դըրացին :*

## ՀՈՎԻՒ ԵՒ ՈՉԽԱՐ

*Թէ երախտիք ճանաչէին ,*
*Արջառք ոչխարք ոչ զոհէին :*

Անիրաւն որ գէշ բան ընէ ,
Մէջ բարութիւն պայն կը ուզէ :

*Ճղո. Հովիւ մը գաւազանով սաստիկ կը զարնէր ոչխարին : Ես քեզ, բսաց ոչխարը, բուրդ և կաթ կուտամ, բարութէ՛ն զատ ուրիշ բան չեմ ըրած քեզի. ապերախտ, դուն ինչո՞ւ ասանկ միշտ գէշութին կընես ինծի : Պատասխանեց հովիւը, թէ ապերախտ դուն ես որ զիս չես սեպեր, վասն զի իմ աղէկութիւնս քու կեանքդ քեզի բաշխեր է, որովհետև ամէն վայրկեան կեանքդ իմ ձեռքս է, երբոր ուզեմ կրնամ վերցընել :*

Անիրաւ մարդիկ իրենց աղէկութիւն որ ուրիշէն փնտռեն՝ մեծ շնորհքի արժանի կը համարեն, և եթէ իրենք ուրիշին գէշութիւն մը ընեն՝ մեծ երախտիք կը սեպեն. բայց այս պատասխանն որ բայցա-յայտ իրենց :

*Այս գործ է և բարք ժանտ ապիրատին ,*
*Կուփէ հարկանէ երախտաւորին :*

Երբև դատաւոր դառնանայ նըմին ,
Թէ քո կեանք և մահ ունիմ 'ի ձեռին :
Բայց գայ ժամանակ քըննել զերկոսին ,
Պըսակ պարծանաց պահի անմեղին .
Արդարք աստ տանջին և անդէն հըրճուին ,
Չըրկողք աստ հըրճուին և անդէն տանջին :

## ԱՐԾՈՒԻ ԵՒ ԿԱՉԱՂԱԿ

Բանք և զըրոյցք ըղվարս մարդկան
Ծածկեն յայտնեն միանգամայն :

Մարդուն ծուլը իրեն խօսքն է ,
Ինչ ըլլալը ան կը յայտնէ :

Ծնդէ . Թռչուններն պարտաւորեցին արծուին որ զիրենք կառավարելով թագաւորէ . ան ալ անոնց հասկըցուց թէ իրենցմէ մէկը պէտք է օգնական ըլլայ որ իրեն աշխատանքին մէկ մասն ալ ան ընէ որ ինքը թեթեւնայ : Ան բանին համար կաչաղակն եկաւ անոնց մէջէն եկաւ արծուին ծառայութիւն ընելու , որուն առջին դրաւ չէ թէ միայն իր մարմնին որ թեթև և յարմար է շուտով կատարելու ինչ որ իրեն հրամէ , այլ և ունի մէկ ըմբռնալի յիշողութիւն մը և բարակ սուր միտք մը . դարձեալ թէ յաջող է՝ արթուն և աշխատաւոր : Երբոր անհամար ուրիշ շատ կատարելութիւնները սկսի մանրամասն պատմէր , արծիւը մէկէն կտրեց անոր

*խօսքն ու ըսաց · այնչափ կատարեալ ըն- լալովդ դուն ինծի շատ յարմար ես , բայց գէշն աս է որ խիստ շատախօս կերեւնաս · վս զի կասկած եկաւ որ չըլլայ թէ երթաս ամենուն իմացընես իմ պալատիս մէջի եղած ծածուկ բաները ։ Ուստի շնորհակալ ըլլա- լով անոր՝ շուտ մը ճամբեց ։*

Շատախօս մարդը որչափ ատելի ընկեր գոլէ , այնչափ անհաճոյ կըլլայ մանաւանդ մեծամեծաց առ- ջին · ասոր լաւ հնարն է որ ուրիշները գոհէն իր լսածներէն քան թէ ինքը ։ Խելացի մարդը քիչ խօ- սելու կը սիրէ , կըսէ իմաստունը ։

*Այսպէս շատաբանք 'ի գովեստ անձին*
*Յերեւան ածեն զիւրեանց ըզթերին ·*
*Կարծեն թէ բանիւ ցանկալի լինին ,*
*Այնու տաղտկալի յաւէտ բոլորին ։*
*Արդ մի ինքնահաճ պանծար առ վեհին ,*
*Մի զքեզ առարկեր յատենին վերին ,*
*Զի որք վերանան հայկիւ վայրբերին ,*
*Եւ ինքնահաւանք նանրանան խոտին ։*

## ԿԻՆ ԵՒ ՄԱՀ

*Մի հաւատար կանանց ձայնին ,*
*Որ փոյթ կոչէն ըղմահ-անձին :*

Կանանց ձայնը տեղ չըշարժէ ,
Որ տեղ բանով մահ կըկանչէ :

*Ճզզ. Մէկ հիւանդ մը երբոր ալխոր մեռ-նէր , կնիկը յուսահատելով կը պոռար և լա-լով կըսէր . Ով մահ , հասիր ինծի ու կակինծս վերջացուր . մի ուշանար եկո արևս կարճե-ցուր , երանի էր թէ իմ կեանքս վերցնէիր ընկերոջս տայիր : Դարձեալ կըսէր . Ով մահ , ինչու՞ կուշանաս , ես քեզի կըսպասեմ , ես քեզ կը փափաքիմ կուզեմ : Այսա ես՝ ըսաց մահն երևնալով անոր , ինչ կը խնդրես ինծ-մէ : Կնիկը տեսաւ որ մահն իրեն կը մօտե-նայ , պատասխանեց դողալով . Ո՛հ կաղաչեմ , առանց երկընցընելու ընկերոջս ցաւերը՝ շուտով հոգին առ որ վերջանայ հիւանդու-թիւնը :*

Որչափ որ մահը մահկանացու բնութեան ատելի է , այնչափ ալ մօտ է ամենուն որ ամէն դիպուածով [illegible]ռագայ կըհանի . առերէս ու պէտք է մահը կանչել և ոչ ալ մահէն փախչիլ :

Զինչ հզօրագոյն քան զմահ ասացին ,
Որ նկուն առնէ զանյաղթ կորովլին .
Լուծանէ ըզսէր անքակ լծակցին ,
Մինչ յղէ ըզմահ յիւր քաղցր անձկալին :
Բուռն է սէր հզօր իւր աստարիզին ,
Բայց 'ի մահուանէ լուծանի հեշտին .
Առեալ արկած ըզգայականին ,
Վեր 'ի վայր առնէ զարուեստ աշխարհին :

## ԳՈՂ ԵՒ ԱՂՔԱՏ

Որ գրնէ զաչս յինչս օտարին ,
Տոյժ և չարիք ինքեան գլխոյն :

Ով որ չարը ընելու կուզէ ,
Իրէն գըլխուն վրայ կը բերէ :

Առակ. Գիշեր մը գող կը մտնէ աղքատի մը խուց. դուռը բացուելու ձայնէն կարթննայ աղքատն ու անանկ սոսկալի ձայն կը հանէ որ բոլոր տունը թունդ կելլէ : Իսկ գողը չի կրնար հոն մնալու , անանկ կը վախնայ որ՝ առանց բանի նայելու կը ձգէ վրայի լաթն ու կը փախչի անկէց շուտով : Եւ այսպէս վնաս եղաւ անոր որ բան առնել կուզէր , և շահն եղաւ անոր որ կարծեր թէ բան պիտի կորսընցընէ :

Անիրաւութեան և գողութեան եկէք եղածնե-րը մէջ արդար վաստակնին կորսընցընեն ետև մ-

Իր դարձեր էն. Հան չի անիրաւութիւն կրանի պէս
հերէ ուր որ ծանէ :

Այս է շահ գողոց աւազակողին,
Զըրկել 'ի շահուց իւր սեպհականին.
Քանզի անիրաւք աստ և անդ զըրկեն,
Ի կրկին վնաս աղքատ և մերկին:
Առ քեզ 'ի խըրատ բան զառակօղին
Մի՛ ցանկար ընչից փոքու և մեծին.
Զի գողօնք գողոց ոչինչ շահ բերին,
Եւ զարդար վաստակս յաճխուն դարձուցին:

## ՄԱՐԴ ԵՒ ԳԱՆՁ

Արդ մի մերժեր զաւիթ բաղդին,
Որ ոչ դառնայ յիւր շըրջանին:

Բարին ծուլէ բաղդը որ բացուի,
Զի էտ չի գար երբոր կանչնի :

Ճղէ. Միստ հարուստ մարդ մը ճամբուն վրայ գանձ կը գտնէ, բայց անանկ մեծութեան մէջ էր որ ամէնևին չէր երևակայեր թէ օր կուգայ որ կարօտ կըլլայ ան գանձին որ գտեր էր. աս պատճառաւ և ոչ զինքն արժանի սեպեց որ ծռի գետնէն գանձը վերցընէ, ուստի ձգեց գնաց։ Ժամանակ մը անցաւ, տար մէկ նաւուն ընկղմեցաւ բոլոր բաները որ շատ ծանրագին ապրանքով բեռցուցեր էր. և մէկ վաճառական մը բացն եղաւ ու աս հարուստին

շատ ապրանքը փճացուց։ Ցեասդ կրակ ըն֊կաւ տունը, բոլոր բանովը մոխիր դարձուց։ Դատաստանի մը մէջ ալ իրաւունքը կոր֊սընցընելով շատ բանէ ելաւ, մինչև ասբա֊ներով աղքըտցաւ մարդը։ Ան ատենը միտ֊քը բերաւ ձգած գանձն ու վազեց հոն որ առնէ, բայց բանը բանէն անցեր էր. վասն զի երբոր առաջ ան տեղէն քանի մը քայլ հեռացեր էր, մէկ ալ ուրիշ կարօտ մարդ մը անկէ անցնելով տեսեր էր գանձն ու առեր շուտով փախեր էր։

[illegible]

Այսպէս է խորհուրդ անմիտ փարթամին,
Կարծէ միշտ ինքեան դաշնակցիլ բաղդին.
Այլ սուտ փառաց դիւրափոփոխին,
Որ փախչի զընայ նըման ստուերին։
Մի՛ վստահանար յանցաւոր ոսկին,
Ըզգանձս իմաստից ժողովեա յանձին.
Զի ՚ի հոլովիլ ձախողակ անւոյն,
Գանձք իմաստութեան ՚ի քեզ ճոխասցին։



ճղզ· Նապաստակ և Կաքաւ։ մէ· Գայլ և Ոչխար։



մժ· Առիւծ և Ճանճ։ մթ· Աղուէս և Նոխազ։



մժբ· Աղուէս և Գայլ։ մժգ· Ոզնի և Օձ։

## ՆԱՊԱՍՏԱԿ ԵՒ ԿԱՔԱՒ

Որ ընդ այլոց արկած խնդայ,
Նովին չարեօք պատժի և նա:

Երբ ուրիշի կը հասնի չար,
Քեզ ալ կուգայ չար մ՛ խընդար:

Առ̃կ. Մէկ նապաստակ մը կը բռնուէր որսորդին որոգայթին մէջ. երբոր անօգուտ տեղը ասդին անդին կը զարնուէր որ ազատի՝ կաքաւը տեսաւ զինքն ու ծաղր ընելով կանչեց. Բարեկամ, ուր են ոտքերդ որոնց վրայ կը պարծենայիր թէ շուտ կը վազեմ. ահա գեղեցիկ առիթ զանոնք գործածելու, զգուշ կեցիր որ չիկորսընցընես. վազէ, քաջ եղիր, ջանա որ զիս անցնիս աս դաշտիս մէջ չորս անգամ ցատկելով: Երբոր աստանկ կը խընդար նապաստակին վրայ՝ շուտով իրեն ալ անոր նմանն եղաւ. վասն զի աստանկ անհոգ ծիծաղելու ատենը մէկալին թշուառութենը վրայ, մէկ բազէ մը տեսաւ զինքն ու վրան հասաւ յափշտակեց:

Մարդկային բնութիւնը կարեկից ըլլալով պէտք է իրարու օգնեն և մխիթարութիւն ակնկալեն դատաստանէ. ով որ թշնամութէ ուրիշի չարեաց վրայ կը խնդայ՝ կաքաւին նման կը կորսուի:

Այս չարախընդրաց գործ վըխճանուին
Ըզնոյն պատուհաս պատճառեաց անձին.
Զոր ինչ ոք ցանկայ լինել օտարին,
Թէ բարի թէ չար հանդիպի նըմին:
Կարեկցիլ այլոց է բանականին,
Մեղմել զդառնութիւն վշտաց ընկերին.
Դու մի ոտնակոխ լինիր թշուառին,
Զի մի այն աղէտք քեզ փոխաբերցին:

## ԾԵՐ ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼ.

*Յորժամ ծեր ոք զառամանայ,*
*Մտօք տղայոց 'ի նոյն դառնայ:*

Ծերը դառնայ մանուկ կըլլայ,
Երբ ընկղմած բան կը հոգայ:

մըզէ. Մէկ մարդ մը չափահաս եղաւ ու ամենեւին մաքէն չէր անցներ կարգուիլ: Երբոր տունը հասաւ, մէկն չէր հաներ որ առնէ՝ մինչեւ տարիքն առաւ: Իսկ ծերութեն ատենը տեսաւ որ տարիքին շատութենէն կնիկներուն ծանրութին կըլլայ՝ կամեցաւ անոնցմէ մէկ կին մը առնել: Վերջապէս գրեթէ ալ խաֆեր էր, մէկ մանկահասակ (կէնճ) կնկան մը հաւնեցաւ եւ զինքն անանկ զօրեղ հարուստ եւ մեծատուն ցցուց մինչեւ կինն ալ հաւանութիւն տուաւ առնելու. բայց շատ չանցաւ զղջացաւ մարդը, վասն զի սրտակին ատենը ձեռնդրէքն որ

նըլաւ՝ (պէտք էմ) ըսածինպէս՝ հասկըցաւ ծերին ըրած սխալմունքը, սկսաւ լոռալ. Վայ գլխուս՝ կըսէր զարմանալով, ի՞նչ պէտք էր ինծի կապուելը անանկ բանով մը որ հիմա ամենեւին հարկաւոր չէ ինծի. երբոր կը վայլէր աս բեռը տանել՝ ան ատենը չուզեցի, հիմա ի՞նչ խելքով կուզեմ։

Խրատ է անոնց որ ապէնով աշխարհք չեն մտնէր, ու երբոր պարէտնին կառնէն կերպ կերպ ճարտարութեան մէջ ծնունդ՝ իրենց հասակին ընծայածը կընէն։ Հասուն մարդոց ըրած անկարգութիւնը խենթ գէն կըլլայ կըսէն։

Այսպէս 'ի մանուկ փոխի ծերունին,
Գործէ զանպատշաճս իւրում հասակին.
Զի թէ միտք արթուն չկցէ 'ի նըմին,
Աւելք ծերութեան ոչ 'ի շահ բերին։
Աւելք ծերութեան սաի 'ի գըրին
Լի իմաստութեամբ հասակ բարեծին.
Ջանա ծերանալ 'ի տիս իմաստին,
Զի մի գործեսցես անվայելս անձին։

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ՈՐՍՈՐԴ

*Մի՛ հետևիր անկարգ բերման ,*
*Զի մի՛ նկուն լիցիս խոտան :*

Անկարգ բաղձին հետևող կենաւ ,
Որ չար մահին յետոյ ընկնաւ :

*Ճղճ․ Աղուէս մը կուզէր որսորդին աղջիկն առնել, ուստի վազեց հօրը տունը խնդրեց որ տայ իրեն․ իսկ որսորդը տեսաւ թէ աս սոսկալի գազանին հետ գլուխ չելլուիր, և որովհետև կը վախնար անկէ՝ չէ ալ չիկրցաւ ըսելու, ուզեց խորամանկութ՟բ բան տեսնել: Աղուէսին ըսաց թէ դուն իմ աղջիկս կուզես, խիստ լաւ․ մնաց որ քու բաղձանքիդ չես կրնար հասնիլ, վասն զի աղջիկս կը վախնայ թէ կամ ակռաներդ և կամ եղունգներդ զինքը կը պատռեն․ ուստի պարոն աղուէս, քեզի լաւ կըլլայ՝ եթէ կամենաս ակռաներդ հանելէն ետև եղունգներդ ալ փրցընենք, ան ատենն ամմէն ուզածդ շատ լաւ կերպով կը կատարուի: Իսկ աղուէսին միտքը ցանկութ՟բ կուրացած ըլլալով չիհասկըցաւ գլխուն գալիքն որ թըշնամւոյն ձեռքը պիտի մատնուի, թողուց որ զէնքերն իրմէն հանեցին․ ասանկ եղածինպէս վրան թափեցան շները, որսորդը և աղջիկը՝ զարկին մեռուցին:*

Խրատ է երիտասարդաց որ անկարգ ցանկութեան հետևելով չկորսուին և իրենք զիրենք կորսընցու-նեն։ Անանկ եղաւ անյաղթելի Սամսոնը որ փառ-տարի աշխարհ դողացող ամենուն յաղթեց, բայց յետոյ կնկան ձեռքը մատնուեցաւ ու այնպէս կոյր՝ երկաթներով կապած բանտերուն մէջ մաշեցաւ։

*Այս անկարգ բերմունք մոլեկան ախտին*
*Զինաթափ ըրկուն արար զանհաղթին.*
*Այն դողացուցիչ ծովու ցամաքին՝*
*Տես զխարդ ընկճի բանիւ ննգոյլին։*
*Ով քանի հզօրք այսպէս մոլեգին*
*Ի ձեռըն կանանց յերկաթ կաշկանդին.*
*Որոց կեանք արև փայլէր 'ի գահին*
*Ապա մաշեցան 'ի լծախիծ բանտին։*

## ԳԻՏՈՒՆ ԵՒ ՌԱՄԻԿ

*Յայնժամ գիտուն միայնակ կայ՝*
*Յորժամ ռամիկք գընան առ նա։*

Գիտուն մարդը մինակ կըլլայ՝
Երբ անխելք մը քովը կերթայ։

*Ճղթ. Փիլիսոփայ մը մինակ նստած խուցին մէջ միշտ կը մտմըտար. օր մը գեղացի ռամիկ մարդ մը տեսաւ զայն մինակ՝ շատ զարմանալով ըսաց իրեն. Իմ խելքս չի հասնիր թէ ինչ պատճառով մինակութիւնը կը սիրես այսչափ. երդում ըլլայ քեզի որ ես*

Հազար տարի ատ բանը չէի ընդունէր : Երեսն անգին դարձընելով պատասխան տուաւ փիլիսոփան · դուն խիստ դիւրին կընդունէիր թէ որ գիտնայիր թէ քուկին հոս ըլլալդ և քեզի պէս մարդկանց իմ քովս գալը որչափ ինծի նեղութիւն կուտան, զի ան ատենը մինակ կը մնամ :

Օրինակ և նորա է գիտնականաց և քահանայից որոնց պէտք է միշտ քաշուած ըլլալով գրոց հետ խօսակցիլ · Թէ որ աշխարհական ատեններնին դարմա-նալով բան ըլլան, հոգ ընելու չէ :

Արդ իմաստասէրք երբ կան առանձին,
 Ընթերցմամբ գըրոց քաղցըր կենակցին ·
 Զի միայն իմաստն է ճարտակ մտաց,
 Ընկեր կենակից բարեկամ անգին :
Փախէր յամբոխէ խառնաղանձ ռամկին,
 Յառանձնակ վայրի խօսիլ ընդ գըրին ·
 Քանզի ազգակից Աստուծոյ ասին,
 Որ լոյս 'ի բանս իմաստնոց յառին :

# ՆԱԽԱՆՁՈՂ ԵՒ ԱԳԱՀ

*Փառք ցանկալի նախանձառուին*
*Պատիժ վնասն է ընկերին:*

Նախանձոտին մնայ խնդում
Է ուրիշին վիշտն ու ղըրխում:

*Մ. Նախանձոտն ու ագահը միատեղ Դիոսին ոտքն ընկան աղաչեցին որ իր բարերարութիւնը յայտնելով անոնց շնորհք մը ընէ. իսկ Դիոս կը նայէր որ աւելի զանոնք պատժէ քան թէ բարիք տայ իրենց. աս կերպով զիրենք պատուհասեց: Ըսաց նախանձոտին. նախ դուն բան մը խնդրէ և ապահով եղիր որ ըրած խնդիրքդ պիտի առնես, բայց աս ալ գիտնաս որ ես քեզի ինչ որ տամ՝ մէկալն անոր կրկնապատիկը պիտի առնէ, ուրեմն որոշէ միտքդ ինչ կուզես: Նախանձոտը չկրցաւ որոշել և անանկ բանի մը ցանկալ որ կրկնապատիկն ըլլայ ընկերին. ուստի ըսաց որ իր մէկ աչքը հանէ: Դիոսն ալ ուղիղ դատաստան տեսնելով՝ զարկածին պէս մէկը միաչքնի ըրաւ մէկալը կոյր, մէկը մէկալով պատուհասեց: Սակայն նախանձոտը կը մխիթարուէր ուրախանալով թէ ես մէկ աչքս կորսնցընելով՝ ագահին երկու աչքը փորել տուի:*

Նախանձոտ մարդն անանկ կը կուրնայ որ՝ միայն կը նայի ընկերոջը չարս մը գայ․ որչափ մեծ չարս իրեն ըլլայ հոգը չէ, միայն թէ ուրիշին թշուառութեամբը կը մխիթարուի ։

Ահա կոյր բերմունք կոյր նախանձոտին
 Նախանձու վնաս բերէ նախ անձին․
 Ցանձն առնու հանել զակն իւր անգին,
 Զի բարձցէ զարև յաչաց ընկերին ։
Զի՞նչ գժնդակ կիրք քան զայս մահածին,
 Որ մահ և չարիս ծնանի յաշխարհին․
 Մի՛ քեզ մերձեսցի այս կիրք մոլեգին,
 Զի մի՛ պատժեսցիս ՚ի շանթէ վերին ։

## ՄԱՐԴ ՈՐ ՇՆՉԷ ԶՑՈՒՐՏ ԵՒ ԶՋԵՐՄ

Զի՞նչ զառնաշունչ քան զայն բերան
 Որ ցուրտ և ջերմ շնչէ համայն ։

Անիծած է անանկ բերան,
 Որ կը խօսի խաբեբայ բան ։

Մի․ Խիստ ձմեռուան մէջ մէկ ճամբորդ մը ցրտէն սպառելով կը մանէ գեղացիի մը տունն և կաղաչէ որ իրեն տեղ տայ ընդունի ։ Գեղացին սիրով ընդունեց զինքն ու տարաւ իր խուցը հանգչեցուց․ մէկէն շատ կրակ վառեց, յետոյ սեղան դրաւ և տաք տաք ապուր մը հանեց իրեն ։ Բայց կրակ վառելու ատե-

Նը երբոր կերթար կուգար՝ տեսաւ որ Ճամ-բորդը մատուըներուն վրան շունչ կուտար, հարցուց իրեն. ինչ կը նշանակէ ըրածդ: Պատասխանեց. մատուըներս ցրտէն պաղեր են, տաքնալու համար վրայէն կը շնչեմ ինչպէս որ կը տեսնես: Քիչ մը անցնելէն ետև տեսաւ որ ապուրին վրան ալ անանկ կը փչէր, ըսաց թէ ապուրը տաքցընելու համար կը փչես: Չէ ըսաց, հապա պաղեցընելու համար: Կրկնեց գեղացին զարմանալով. Այ դէմ կըլլայ՝ թէ որ երկար ժամանակ իմ տունս պահեմ ասանկ մէկ մարդ մը որուն բերնէն թէ տաք կելլէ թէ պաղ: Աս ըսելով դուրս ըրաւ խցէն ու շուտ մը դուռը գոցեց:

Օրհնեալ է խաբեբայ մարդկանց որոնց բերնէն միշտ ներհակ բան ելլէ՝ սուտ երդում խոստանայ. Երբեմն մէկ բանին լաւ կողմն երբեմն գէշ, երբեմն հա եւ երբեմն չէ, որ նշան է անհաստատութեան և անհաստատութեան:

Այս յաւէտ պատկան հակասաբանին
Որ սուտ Ճշմարիտ կըրէ 'ի լեզուին.
Է զի ջերմ և ցուրտ, և է քաղցր լեզւին
Ընչէ միապէս յոր և գէպ բերին:
Ո՛վ քանի՜ անդէպ քեզ բանականին
Տիրական պատկեր գըրելոյդ Նշին.
Արդ մի ներհականն՝ այլ բարի բարին
Ընդէս ընդ բերան քաղցըր սէր ջերմին։

## ՆԱՒՈՐԴՔ ԵՒ ՆԱՒԱՊԵՏ

*Ջանա յաղթել ալեաց բաղդին,*
*Զի քեզ հասցէ աջ հզօրին:*

Փորձանօք մէջ դուռն աշխարհէ,
Որ Աստուած ալ տէրն օգնէ:

*մէ. Մէկնաւ մը կը բռնադատուի ալէկոծութէ և մինչև կուգայ ցամաքը կը զարնէ. հոն տակը բացուելով երբոր ծովուն ալիքներէն ալիտի ընկղմէր, մէջի եղած համբորդներն սկսան պոռալով յուսահատիլ. թէպէտ կրնային իրենց ազատութեան համբան մտածել, սակայն վախը զիրենք անանկ շփոթեց որ ամէն բան թողուցին ու միայն թևերնին բացած երկինքէն օգնութիւն կը խնդրէին: Իսկ նաւապետը լաթերը հանելով կը պոռար անոնց. ով բարեկամք, գէշ բան չէ թևերնիդ Դիոսին վերցնել՝ բայց աս վտանգիս մէջ աւելի աղէկ կըլլար որ ծովուն վրայ շարժէիք թևերնիդ: Աս ըսելով ծովը նետուեցաւ ու լողալով ցամաքն ելաւ, և ան ատենը նայեցաւ որ ծովուն մէջ ընկղմեցան համբորդները նաւուն հետ միատեղ, որոնք ուխտ ըներէն 'ի զատ՝ ուրիշ ճար չուզեցին փնտըռել:*

Խրատ է անոնց որ հարկաւոր գործերնին կը

յփէն — աղօթքի ետևէ կըլլան որ էրէնց բանն ա̅ծ յաջողէ առանց աշխատանքի· առնայն մինչև որ մարդն ու չաշխատի, ա̅ծ չի յաջողէր:

Անգուլ պալատանք անգործ պղերգաց
Ոչինչ ժամանեն Նլին լսելեաց·
Զի թէ ոչ շարժին ձեռք վաստակողաց,
Մի ակնկալցին Նպաստ 'ի բարձանց:
Ահա հատուցումն հեղգասիրտ վատաց
Որ անշարժ գնան 'ի մահու արկած·
Զանա յարաժամ մինչ 'ի շունչ կենաց
Ընդդէմ կալ ուժոյ բաղդին կոհակաց:

## ՉԱՐ ԴԻՐԱՑԻ

Իժ չարաթոյն կին անըզգամ,
Խայթէ բնաւից որպէս գազան:

Չար կնիկը՝ խայթող օձ է,
Ամէն մարդու դէշ կըբերէ:

մգ. Անգամ կնիկ մը միշտ բան կը փնտըռէր որ փուշ՛ տեղը դրացիներուն հետ կռիւընէ: Անոնք ալ գացին էրկանը գանգատընելով ըսին թէ աս ի՛նչպէս ամբարիշտ կնիկ ունիս որ միշտ կը կռուի կը պոռայ և առտուանց մինչև իրիկուն խռովութեան մէջ է, երանի թէ մեզի մէկ ճար մը գտնէիր որ կարենայինք աս չար կնկանը հետ վարուիլ: Ո՛հ, ըսաց էրիկը, ինծմէ՞ ճար կուզէք վարուե֊

*լու. ես անանկ չարաչար կապուեր եմ որ չէ թէ միայն ցորեկը՝ այլ և գիշեր ցորեկ ու-զեմ չուզեմ պխտի քաշեմ:*

Խրատ է անոնց որ եթէ անգամ կնկան ու լար դրացիի հանդիպին, կամ պէտք է համբերել ու կամ հետոո խախուիլ: Փիլիսոփայ մը տեսաւ բարկանիրք կնիկ մը որ կրակ կը տանէր՝ ըսաւ. Ահա կը տեսնեմ կրակ որ յէտքը կրակ տանի, բայց աւելի կերէ տանող կրակը քան թէ յէտքի կրակը:

*Զի՞նչ այլ դըժընդակ քան զանըզգամ կին*
*Ընտանի գազան իւրոց և՛ օտարին.*
*Մերժէ հալածէ զընկեր զըրայցին*
*Ի տանէ՛ ի տուն լեռնէ՛ ի լերին:*
*Փախիր յերեսաց այն չարալեզուին,*
*Մի՛ պատասխաներ կռուարար բանին.*
*Սա միակ պատկեր է բելիարին,*
*Որ հեղու ըզթոյն՛ ի սիրտ բոլորին:*

## ԶԿՆՈՐՍՔ ԵՒ ԶԿՈՒՆՔ

*Խոնարհք հալբից վաղ ծողոպրին,*
*Եղուկ մեծաց եթէ անկցին:*

Փոքրին բանը խիստ դիւրին է,
Մեծին որ իյնի բանը գէշ է:

*Մդ. Զկնորս մը իր թօռը ծովըն նետածին պէս շատ ձկներ մէկէն բռնուեցան մեծ ու*

պզտիկ միատեղ, և ամէն մէկը կը ջանային որ թօռին ծակերէն ելլեն փախչին. բայց ամէնքը չկրցան ազատիլ, միայն մանր ձըկները դիւրին կերպով մը ծակերէն անցան փախան, որովհետև թօռին ծակերը մանրերուն համար լայն էին, իսկ մեծերուն համար նեղ, որ ամէն դի տանկ նեղ ծակ ըլլալով չկրցան անցնիլ. ուստի մնացին թօռին մէջ բոլորը և ձկնորսին ձեռքն ընկան :

Առաջին կը սորվեցընէ թէ խոնարհ և աղքատ մարդը աշխարհիս փոթորկին մէջ որ իյնայ՝ շատ անգամ կրնայ ազատիլ, իսկ հպարտ և մեծ մարդիկներուն կործանումը չարաչար կըլլայ. Նա առաւել հպարտ ուսումնականներուն և վարդապետներուն :

Տես զիարդ խոնարհք անցանեն հեշտին
Ընդ անցըս խոնարհ մահաբեր ցանցին.
Փարթամք մեծամեծք ոչ փոյթ ձողոպրին,
Որսող թշնամւոյն կերակուր պահին :
Մի ցանկար վեհից և մեծագունին,
Որոց կեանք արև մերձ կայ օրհասին.
Թէ ոչինչ անձկաս կենաց փարթամին,
Փութով տեղի տան արկածք աշխարհին :

## ԳԱՅԼ ԵՒ ՈՉԽԱՐ

Ի չար արկած թող զանզգամն ,
Ի բաց փախիր զի է գազան :

Անզգամին օգնել չըլլար ,
Կընէ ըզքեզ իրեն պաշար :

ՃԸ. Մէկ գայլ մը երկար ժամանակ շըներէն հալածուելով կը հոգնի և կը թուլնայ մինչև կիյնի մէկ տեղ մը հոգնութիւն առնելու համար որ հեռու էր գետէն ուր տեղէն մէկ ոչխար մը ջուր կը խմէր : Որովհետև գայլը ծարաւ և անօթի կը մարէր , ուժն ալ հատեր էր որ կարենայ առաջ երթալ և ուզածը գտնել , ուստի կանչեց ոչխարին ու աղաչեց որ իրեն քիչ մը խմելու ջուր բերէ : Միտքը դրեր էր որ ջուրը խմածին պէս ոչխարն ալ ուտէ , և ասով երկու ուզածն ալ դիւրաւ գտնէր · բայց ոչխարն անկէ կասկած ունենալուն համար խիստ զգուշանալով տեղէն ալ չշարժեցաւ , ու կանչեց գայլին հեռուէն · Ով բարեկամ՛, ես յօժար կամքով քեզի օգնութիւն կընէի , բայց որովհետև դուն գայլ ես՝ կը նայիմ որ աւելի մեծ կարօտութիւն ունիս քան թէ ջրի , ուրեմն քեզի աղէկութիւն ընելու համար կը մտածեմ՛ զիս քեզմէ հեռացընել քան թէ մօտ գալ : Աս ըսելով շուտ մը փախաւ և թողուց անանկ գայլն որ ուզածին չափ ոռնայ :

Անզգամ մարդիկ նէզն որ իյնին անուշ լեզու-թափելով հաղաղաներն որ ոգեւորութեան · բայց խե-լօքին պէտք է հետոո ծախուի, ձայն մի որոտմնին գտնելէն ետև՝ ձայն 'ի Հռոմ նըբերեն ։

Արժանի պատիժ այն նենգաւորին
Հիւծիլ և մաշիլ առ ցաւոց սըրտին ·
Զի որ չար առնել փութայ անմեղին,
Չարեաց հանդիպի այսպէս վըտագին ։
Արդ մի մերձենար 'ի չար թշնամին,
Եւ մի նպաստեր այն չարասիրին ·
Որ 'ի չար արկած գոչէ լալագին,
Տես զինչ արասցէ երբ լինի յուժին ։

## ԱՌԻՒԾ ԵՒ ՃԱՆՃ

Թէ և յաղթես վեհ առիւծին,
Երկիր յուժոյ փոքրագունին ։

Շատ մի տէսնէր մեծ մեծ երազ,
Պզտի բանէ ամօթ կըլլաս ։

*մը· Ճանճն առիւծին հետ պատերազմ բացաւ ու խելքովը յաղթեց անոր, վասն զի երբեմն կռնակը խածաւ, երբեմն կուշտը, մինչև համարձակեցաւ ամէն դին խածնել · յետոյ մտաւ ականձն ու քիթը և այնչափ նեղութիւն տուաւ առիւծին որ կատաղու-թէն ինք զինք պատռեց թէ ինչո՞ւ համար մէկ պզտի կենդանի մը զիս սանկ կը չար-*

չարէ որ ես անոր բան մը չեմ կրնար ընել։ Իսկ Ճանճն աս յաղթութիւնն որ ըրաւ սկը-սաւ բզզալով վեր ելլել և դէպ 'ի սարդի ոս-տայնին Թռչելով ըրած յաղթութիւնն ի-մացընել․ բայց խառորելով գնաց անխելքը սարդին վրայ ընկաւ փակաւ․ տեսաւ որ վրան կը վազէ Թշնամին, վայ ինծի կը կան-չէր, կը վայլէ՞ որ սարդին ոտքերը Ճզմեն զիս որ առիւծին Ճանկերէն ազատեցայ։

Ամբարտաւան մարդը վերջ կանի, ինչ որ ընէ վերջապէս կը կործանի մէկ պզտի պատճառով մը՝ որ ինչ ըսելու հարկ չկայ․ որպէս մեծամեծ մարդիկ որ աշխարհքին տիրելու համարձակեր են, մէկ խօսք բա-նէ մը կործաներ են։

Արդ մերձ յաղթութիւն ունայն պարծողին
 Զխարդ 'ի փոքուէ ջըրեցաւ հեշտին․
 Զի որ զինքըն վեհ գընէ հզօրին՝
 Կոր 'ի գլուխ պարտի յանզօրէ չնչին։
Քանի՜ մեզք յեցեալ 'ի սահուն բաղդին,
 Մինչ յաղթող լինել համուրց կարծէին․
 Բայց 'ի սկզբան անդ երբ մերձանային,
 Ի փոքրիկ առԹէ 'ի չիք սուզանին։

## ՄՈՒԿՆ ԵՒ ՁԱԳ ԻՒՐ

Թէ փորձ սրակն ոչ տեսանէ,
Զխրատ անփորձ ակըն տեսցէ:

Փորձ մեծերուն դուն հետեւէ,
Չի գար ձեռ քու ետեւէ:

մէ. Մէկ մշակ մը մուկը կը տեսնէ ու խանէն կելնի որ սպաննէ. իսկ մուկը աչքին պզտիկութէ չէր կրնար ծակը գտնել փախչելու, թէպէտ որչափ որ կարելի էր կը վազէր դէպ 'ի ծակը: Ուստի ձագը կանչեց իրեն, Մարիկ, անկարելի է որ դուն ազատիս մինչեւ որ մէկը քեզի առաջնորդ չըլլայ, ուրեմն իմ խանէս ելո, ես քեզ կը տանիմ հոն ուսկից որ ելար: Ը՞հ հայրուկս, ըսաց մայրը, ինչպէս կրնամ քեզ առաջնորդ ընել ինծի երբոր գիտեմ թէ դուն ինծմէ աղէկ չես կըրնար տեսնել:

Պէտք է որ առաջնորդին միտքն ալ բաց ըլլայ աչքն ալ որ կարենայ նախ ինքը շիտակ երթալ և ուրիշներուն ալ շիտակ ճամբայ սորվեցնել, թէ չէ՝ իր աչքերն իրեն առաջնորդութեան ընելու բան կը սորվեցնէ որ խիստ մեծ ամօթ բան է:

Այս են թերակիրթ դատմունք անփորձին,
Իշխէ առաջնորդ լինել փորձառուին:

Ուզած ըղձնոյս իւր առաջնորդին,
Այլ ոչ գիտէ ինքն ուր յանգի ուղին:
Արդ մի խոտորիր յաջ և յահեկին,
Ուղիղ ընթացիր ըստ ուղիղ կարգին.
Զի առօթ մեծ է գիտուն ուսուցչին,
Երբ յայլոց ուղղի յանսայթաք ուղին:

## ԵՐԿՈՒ ՇՈՒՆՔ ՊԱՅԹԻՆ

Վայ որ անյագ աենչայ ուտել,
Մահու պատժի անդ 'ի խնդրել:

Որչափ որ շատ ուտել ջանաս,
Այնչափ շուտով ուժին նուաղաս :

Մ՟Ը. Երկու շուն գետի մը քովէն կերթային ու տեսան որ ջրին երեսը կտոր մը միս կայ իրենցմէ հեռու. մեկը մեկալին ըսաց թէ բարեկամ, ջանք ընենք որ աս որսը չփախցընենք, ես շատ լաւ հնարք մը մտածեցի անի ձեռք ձգելու համար. մեր կեցած տեղէն մինչև հոն եղած ջուրին որ կը տեսնես կրնանք խմել, և աս ջուրը խմածնուս պէս լաւ գիտես որ կը ցամքի մսին եղած տեղը, և այսպէս մեզի շատ դիւրին կըլլայ երթալ պատառակին միսն ուտել. գիտնաս սիրելի որ աստնիկ մեր ձեռքէն չելլեր միսը: Աս խօսքով սկսան երկուքն ալ խմել գետին ջուրը, և սաստիկ ուռելով շուտ մը շունչերնին կտրեցաւ ու հոն մեկէն ճաթեցան:

Մոլութիւնն անանկ կըկուրացընէ մարդուս միտքն որ խենթի բաներ կընէ ու չիմանար · հին ատենը թագաւոր մը այնչափ որկրամոլութեան տրված էր որ մինչև կերակրին մէջ ձիթը բերանը չիխօթէր չէր կըշտանար ։

Յայս յանգի վախճան ծառայից ախտին,
Նովին կորնչիլ յոր անյագ բերին·
Այնչափ կուրացեալք յանկարգ բերկրալին,
Մինչ պայթիլ 'ի ջուր յանկար առնելին ։
Արդ մի հետևիք բերմանց մոլեգին,
Որ անչափ տենչմամբ յանլուրըս ձգին·
Սանձեա զապստամբն եգեալ 'ի կարգին՝
Զի մի կորուսցէ ըղձեղ յանտեղին ։

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ՆՈԽԱԶ

Մի ընկերեր խորամանկին,
Զգէ զքեզ յանել գըլին ։

Խաբեբային ըլլալ ընկեր,
Քեզ կըձգէ ըղած տաներ ։

ԺԹ. Աղուէսն ու այծը միատեղ ճամբոր-դութիւն կընէին · օր մը սաստիկ ծարաւելով պապակեր էին, գտան մէկ հոր մը, մէկէն մտան մէջը ջուր խմեցին · բայց դժուարու-թիւն եղաւ անկէ դուրս ելլելը, որովհետև հորը խորունկ էր, այծը չէր գիտեր թէ ինչ-պէս պիտի վեր ելլէ ։ Աղուէսն ըսաւ իրեն

թէ եղբայր, մի՛ վախնար, շատ դիւրին է եր-կուքիս ալ անկէ ելլել. քեզի ուրիշ բան պէտք չէ ընել՝ միայն երկու ոտքի վրայ ել շիտակ պատին կռթընէ՝ որչափ որ կրնաս վեր բարձրացուր գլուխդ, ես ալ թաթիկնե-րուս կռնակէդ վեր կելլեմ եղջիւրներուդ վրայ, յետոյ դիւրին մը կը ցատկեմ հորին բերանը, անկէ ետեւ քեզի օգնութիւն ընելով մէկէն վեր կելլես։ Այծը հաւնեցաւ աս հը-նարքիս և անանկ լաւ կեցաւ որ աղուէսը ցատկեց ելաւ հորէն, ու փախչելէն 'ի զատ ուրիշ բանի չնայեցաւ։ Ուստի թողուց ա-նանկ ընկերն ու ծիծաղելով կըսէր. Մօ-րուքդ երկընցընելու տեղը խելքդ երկընցուր որ գլխուդ ճարը գտնես ու միտք բանեցը-նելով անկէ ազատիս։

Խարդախ մարդը մինչեւ որ բանը լմննայ բարե-կամութիւն կընէ, անկէ ետեւ ծաղր ընելով իր ճամ-բան կերթայ։

Այսչափ է նպաստ խարդախ մտերմին,
Այս և հատուցումն չարաց ընկերին.
Նա ընկերանայ ձգել 'ի գբին,
Սա յուշի լինի երբ կայ 'ի նմին։
Այս քեզ է խրատ, ո կանանցածին,
Մի խաբիր փութով բանիւ նենգողին.
Մինչ յամեակ գործոյն քեզ է մտերիմ,
Ապա ծաղր առնէ զնայ խնդագին։

## ՈՒՐՈՒՐ ԵՒ ԹՌՉՈՒՆՔ

Մի՛ ուտեր հաց ընդ թշնամին,
　Զի կերակուր լինիս նմին:

Թշնամիէդ պատիւն ու հաց,
　Քեզ իր ձեռնէ պատառ մը հաց:

մԺ · Օր մը ուրուրը կը հրամցընէ պզտի թռչուններին որ հարկիքը գան, իբր թէ մեծ պատրաստութիւն ունէր իր տօնախմբութիւնը կատարելու համար: Իսկ անխելք թռչունները բան մը չիմտածելով վազեցին եկան որ հարկիք տեսնեն: Սակայն յիմարութիւն ուրուրին ճանկն ընկան որ զանոնք ժողված տեսածին պէս յանկարծակի վրանին ընկաւ մէկիկ մէկիկ ջարդեց կերաւ:

Նենգաւոր մարդիկ միշտ երեսանց պատուելով ուրիշին փառքը կաւրեն. ուրեմն պէտք չէ ամէն մարդու հաւատալ, ու մանաւանդ թշնամույն: Շատ մարդիկ պատիւ գտնելու համար և հարկիք տեսնելու համար կորան գացին:

Տես յիմարութիւն թռչնոց երամին,
　Որ վստահ գնան առ բուն թշնամին.
Քանզի ոչ փախեան հաղբից փորձողին,
Անկան ծախեցան 'ի ժանտ որկորին:

Արդ մի՛ վստահիր յանհաշտ ոխերիմ,
Մի՛ քեզ քաղցրասցի հաց նենգաւորին ·
Բազումք ցանկութեամբ պատուոյ կերակրին,
Ի չար թշնամւոյն որովայն մտին :

## ՄԱՐԴ ԵՒ ՁԻ

Վայ որ դիմէ 'ի գիրկ մարդկան,
Ընկճէն անձն ախից կոխան :

Վայ տեղ մարդու ըէ յետոյն իշխան,
Ըոտ մը անոր գերի կըլլայ :

ՄԺԹ․ Երբեմն ձին բարկանալով եղնիկին վրայ՝ որ անոր ջուրը պղտորեր էր, սկսաւ ծեծկուիլ, բայց յաղթուեցաւ․ երբոր յոյսը հատաւ՝ գնաց մարդուն ընկաւ աղաչեց որ իրեն օգնութիւն ընէ : Իսկ մարդը խոստացաւ վրէժխնդիր ըլլալու թշնամւոյն դէմ, միայն թէ թող տայ որ սանձ (կէմ) դնէ բերանը՝ որով կարենայ առաջ տանել և կայնեցընել զինքն ինչպէս պէտք ըլլայ : Ձին սիրով յանձն առաւ սանձ դնել, ուստի մարդը սանձ դրաւ ու հեծաւ վրան և եղնիկին ետեւէն ընկաւ բռնեց մեռցուց : Յետոյ ձին շնորհակալ ըլլալով մարդուն ուզեց երթալ, բայց մարդը տեսնելով անոր շահը՝ ամենևին մտիկ չըրաւ ըսելով՝ տե՛ս չըներ որ ես թող տամ սանկ մէկ կենդանի մը որ այսպէս լաւ ծառայութիւն կընէ․ ու ըսաց ու լաւ մը քաշեց սան-

ձը և սախպէց որ կամայ ակամայ երթայ քաղքին Ճամբան. և այսպէս ձին կամքը կոտրելով բռնադատեցաւ հնազանդիլ մարդուն ուսկից յիմարութեամբ օգնութիւն խնդրեր էր :

Խրատ է անոնց որ կամակորութեամբ ուրիշին վրէժխնդիր ըլլալու համար իրենք զիրենք գէշ կ'ընեն, ապտակ և ծաղրանքի կ'ըլլան :

Այս օրինակ է ըմբոստ յիմարին,
Ի տիրել այլոց նուաճի ինքնին.
Առ 'ի լուծանել վրէժս ընկերին,
Սանձի կաշկանդի ձեռամբ մարդկային :
Դու ազատ ծնեալդ ըստ տիրականին,
Մի ընկճիր դիւրաւ յախտից տիրողին.
Սանձեա զապստամբն անսալ իշխանին,
Հրահանգ և կրթեալ հպատակ բանին :

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԳԱՅԼ

Ուսիր կշռել ըզժամանակ,
Քննեա զպխտոյսն որ քեզ է անկ :

Ամէն բանի ժամանակ կայ,
Հարցուր տեսնէ խօսքն որ կուգայ :

մժբ. Աղուէս մը գիշերանց կ'ելլէ իր բունէն կը մտնէ արտին մէջ բան ուտելու հա-

մար․ երբոր ասդին անդին կը պտըտէր՝ ընկաւ հորին մէջ որ չորս դին փորած էր։ Աս բանն եղած ատենը անկէ գայլ մը կանցնէր․ աղուէսը կանչեց իրեն, Բարեկամ, ո՛հ օգնութիւն ըրէ ինծի, կաղաչեմ շուտով ասկէ հանէ։ Գայլն ալ հանգիստ ձայնով մը ըսաց․ համբերութի, բայց կուզեմ իմանալ թէ ինչ պատճառով հորին մէջ ինկնելու պարտաւորեցար, կաղաչեմ որչափ կարելի է՝ ինծի տեղն 'ի տեղը պատմէ ինչպէս ըլլալը։ Ով բարեկամ, ըսաց աղուէսը, երբոր զիս ասկէ հանես քեզ կը պատմեմ որ հետաքրքրութիւնդ կատարուի․ հիմա ատե՞նն է ինծմէ պատմութիւն խնդրելու երբ կը տեսնես որ ահա կը խղդուիմ։

Օրինակ է անոնց որ ուրիշին խեղճութեանը ցաւակից ըլլալու տեղը հետաքրքրութիւն կուզեն պատճառն իմանալու մեղադրելու համար ընել։

Ո՜վ ապարասան մնաց գազանին,
  Որ ոչ կարեկից լինի ընկերին․
  Տենչայ իմանալ զպատճառ արկածին,
  Զի ծիծաղեսցի ընդ վիշտս անբաղդին։
Արդ մի հետևիր դու օրինակին,
  Եւ մի քեզ տխպար առցես գործ չարին․
  Թէ կամիս գիտել ըղձգործս օտարին,
  Քննեա և ուսիր ըստ ժամանակին։

# ԱՌԻՒԾ ՀԻՒԱՆԴ ԵՒ ԱՂՈՒԷՍ

*Արդ հետք այլոց գնացք և վարք՝*
*Լինին զգօնոց դաստիարակք։*

Ուրիշներուն ընկած փէղէն
Խելացիները խրատ կառնեն ։

*Մժղ. Առիւծը հիւընդցաւ և ամէն կենդանիներուն դեսպան խրկեց կանչեց որ գան մխիթարեն զինքն իր վշտէն որ հիւանդուէ առաջ եկած էր։ Ուստի ամէնքը շուտով վազեցին եկան առիւծին քովն որ զանոնք մէկիկ մէկիկ կը խղճէր հոն հասածնուն պէս։ Մինակ աղուէսն աղէկ չէր սեպեր առիւծին երթալ՝ թէպէտ կապիկը շատ անգամ եկեր էր առիւծին կողմանէ աղաչել որ մէյմը երթայ իր պարտքն ընէ ինչպէս ուրիշներն ըրին. որուն աս պատճառը տուաւ. Շատ անգամ դիտեցի կենդանիներուն ոտքի տեղն որ այցելութեն գացին առիւծին. տեսայ որ ամէնուն ոտքին նշանը կը ցցընէ թէ ներս մտեր են, բայց չերևնար թէ մէկն անկէ դուրս ելեր է։*

Պէտք է ուրիշուն կենալ փորձանքներէն ու չխելառուիլ, չեան ըն շաւ անգամ բարեկամ երևնալով մարդը լարալար կը ձգեն որոգայթի մէջ։

Զխարդ քաջ դիտէ մտաց նրբաղնին ,
Յայլոց ծածուց խորշոտի ինքնին ·
Զի նշանք և հետք գործոց աշխարհին՝
Մնան խրատել չեղեալ ապառնին :
Զգաստ և արթուն լեր յապագային ,
Այլոց վրիպանք քեզ խրատ լիցին ·
Թէ թմրեալ շրջիս առ թակարդ ախտին ,
Ի նոյն թակարդեալ կորնչիս հեշտին :

## ԿԱՊԻԿ ԵՒ ԿԱՏՈՒ

Ձեռք յիմարաց գործեն շահին
Զապրուստ և շահ խորամանկին :

Անխելք մարդիկ շատ կը խաբուին ,
Այլոց համար միշտ կաշխատին :

մժդ · Կապիկն ու կատուն կրակին մօտ կը մռմռային թէ ինչպէս կրնան առնել կրակին վրայէն բոհրած շագանակը (քէսթանէն) : Եղբայր , ըսաց կապիկը կատուին , աս շագանակներն որ կը տեսնես՝ անանկ յաջողութեամբ կրնանք առնել որ չէ եղած · աս բանիս համար իմինէս աւելի յարմար կը տեսնեմ քու թաթիկներդ , դուն միայն մոխիրէն դուրս քաշէ՝ ես ասդին կանեմ: Աս հնարքիս հաւնեցաւ կատուն · և նախ կրակները ետ առաւ ապա մոխիրը , յետոյ թաթիկը տանելով բերելով մէկ քանի հատ կրակին մէջէն հանեց · կատուին թաթիկը

տաքութենէն կերէր՝ կապիկը հանգիստ կուտէր: Մէկ ծառայ մը աս բանիս վրան եկաւ՝ խառնեց անոր հարկիքը, բայց կապիկը մէկէն փախաւ. ուստի բոլոր պատիժը կատուն քաշեց, և բոլոր օգուտը կապիկին եղաւ :

Շահասէր մարդը միշտ իր շահը կը նայի, ուրիշին ինչ որ ըլլայ հոգ չըներ, անոր համար պէտք է հեռու կենալ անանկներէն :

Անիմաստ ռամիկք դիւրասահ պատրին ,
Գործեն վասն այլոց ոչ 'ի շահ անձին .
Տքնին 'ի հաճել սիրտ շահասիրին ,
Անկեալ 'ի վտանգ չարաչար պատժին :
Զգոյշ լեր ով մարդ մերձիլ յայնպիսին,
Որ քեզ չար խորհի և շահ իւր անձին .
Զի կենակցութիւն ընդ խորագիտին
Վնաս պատուհաս բերէ ընկերին :

## ԱՌԻՒԾ ԵՒ ՑՈՒԼՔ

*Ուր միութիւն կայ անքակ,*
*Յաղթէ ուժոյ զերթ ամբարտակ:*

Երբոր տեղ մը միութիւն կայ,
Ամէն բանի յաղթող կըլլայ:

*ՄԺԵ. Զորս ցուլ սովորութիւն էին ըրեր որ միատեղ արծէին, և իրենց վտանգը ճանչնալով միշտ զգուշութեն կընէին առիւծի մը դէմ որ կը պտըտէր մօտ անտառին մէջ ու կըսպասէր որ զանոնք պարապ գտնէ յափշտակէ: Բայց առիւծը տեսնելով անոնց զգուշութիւնն որ միշտ գլուխնին դէպ իրեն տնկած կը կենային՝ հարկաւորեցաւ սատանութիւն բանեցընելու: Ուստի նախ և առաջ ձևացուց թէ միտքը փոխած է՝ անկէ ետև ալ պիտի չիդպչի անոնց, յետոյ ետ դարձաւ եղած տեղէն շատ հեռուն գնաց: Ցուլերն ատանկ տեսածնուն պէս կարծեցին թէ անոր այսչափ հեռանալովն ապահովեցան և հոգ չընելով իրարմէ զատուեցան դաշտին մէջ մէկն ասդին մէկալն անդին հեռացան: Ան ատենը առիւծը նորէն դարձաւ յանկարծակի ընկաւ անոնց վրայ, և որովհետև զատուած էին՝ շատ դիւրին եղաւ մէկիկ մէկիկ չորսն ալ յափշտակել:*

Որ տեղ որ միաբանութիւն կայ, ամենուն կը յաղ-թէ. ուր որ միաբանութիւն չկայ, հարկաւ կը կոր-ծանի։

Քանի՛ զօրաւոր անքակ միութիւն
Յաղթող ճիրանաց անյաղթ առիւծուն.
Բայց երբ քայքայի այն ույժ բունագոյն՝
Յաղթի 'ի փոքունց այսպէս հեշտագոյն։
Հզօր պետութիւնք պանծացեալ՝ 'ի սոյն
Առանց միութեան եղեն անանուն.
Այն որ աշխարհի տիրէր վեհագոյն,
Արդ անկանգնելի կայ յիւր կործանումն։

# ՈԶՆԻ ԵՒ ՕՁ

Անզգամին թէ տաս տեղի,
Մերժեալ տանէ զքեզ անտեղի։

Աներեւոյթն թէ երեւ փառ,
Մեծ ճառաղ շուտ կը ւղջառ։

մժղ. Մէկ ոզնի մը որսորդէն փախչելով ժայռի (խայայէ) մը տակ կը մտնէ ուր որ օձ մը կը բնակէր. աղաչեց օձին որ իրեն տեղ տայ պահուելու համար. օձը սիրով ընդունեց, բայց յետոյ նայեցաւ որ անոր փշերէն անհանգիստ կըլլայ՝ հասկըցուց ոզ-նիին թէ որսորդը գնաց, հիմա վտանգ մը չկայ, կրնաս տեղդ երթալ, կաղաչէր որ

ելլէ երթայ իր ծակէն ։ Ե՛ս երթամ, ըսաց ոզնին, քաւ լիցի․ գիտնաս ով անխելք որ ես հոս աւելի իրաւունք ունիմ բնակելու քան թէ դուն ։ Եւ այսպէս ոզնին օձէն զօրաւոր ըլլալով դժուարութիւն չունեցաւ համարձակ անոր դէմ դնելու և վռնտելու անկէ ։

Օրինակ է անոնց որ անիրաւութեամբ ուրիշին բանը յափշտակելով կ'ուզեն և իրենց զօրութեանը վրայ կը դարձնենան, բայց ետքէն ան առակն որ ըսէ․ Զրկուողը աղէկ է, վայ զրկողին ։

Այս է անխրատ գործ բռնաւորին,
 Զօգուտ օտարաց յիւրեան ձգողին․
 Որով և խնդայ յանիրաւ շահին,
 Յաւէրժանալ միշտ կարծէ եղկելին ։
Զինչ օգուտ երբէք գործեաց զրկողին,
 Անիրաւ վաստակ անիրաւ տեղին․
 Լքին զամենայն յայլ վիճակ մնին,
 Սուզեցան 'ի փոր մահու անմահին ։

## ԼԵԱՌՆ ՑԵՐԿՈՒՆՍ

*Զի՞նչ շատ երկնել գործս ահագին,*
*Եւ ծնանել վիժած չնչին :*

Մեծ խոստմունքը բան մը չարժեր,
Երբոր գործքը չի հասներ :

*ՄԺԷ. Երբեմն լեռանը ցաւը կը բռնէ, և երբոր սոսկալի ձայնովը կը պոռար աշխարհքը կը դողացընէր մինչև ամէնքը չորս դիէն եկան հոն թափեցան, կարծելէն թէ մէկ զարհուրելի հրէշ մը պիտի ծնի կամ նշանաւոր ցուցանք մը պիտի հանէ որ չէ եղած : Բայց քանի մեծ զարմանք եղաւ՝ երբոր պոռալով ետքի ճիգն ըրաւ՝ տեսան որ ծնաւ լեռը. Ի՞նչ ըլլայ աղէկ է, ահա մէկ մուկ մը փորէն դուրս ելաւ :*

Օրինակ է մեծ խոստումներուն որ խօսքով մեծ բաներ կը խոստանան ու գործքով մկան չափ բան կը ծնանին. անոր համար կըսուի թէ խօսքին ու գործքին մէջը շատ բան կայ :

*Տես պատկառելի ձայն մեծաբանին,*
*Ահեղ որոտայ յամպոց սահմանին.*
*Այլ երբ ժամանէ 'ի գլուխ գործոյն,*
*Ցեանեալ արտադրէ զխուր մուկն չնչին :*

*Թէ Ճախարանես կարող դող մեծի՛ն ,*
*Յամօթ համակիս 'ի մեծաց զնի՛ն .*
*Զի՛ չէք ինչ արգել դիւրաշարժ լեզուի՛ն ,*
*Բայց արգեամբք առնել գործ է դժուարի՛ն ։*

## ՈՒՐՈՒՐ ԵՒ ՄԱՅՐՆ

*Մի՛ անարգեր սեղանս Էլի՛ն ,*
*Մի՛ քեզ շնորհաց դրունք փակեսցի՛ն ։*

Վայ որ ելնէ Աստուծոյ դէմ,
Դատուն ողորմած գոյ է իր դէմ ։

*մժը.* Ուրուրը *սատանիկ կը հիւընդնայ , երբոր վերջին շունչը հասաւ՝ կըսէր մօրը . Վայ ինծի մարիկ , աղօթք ըրէ կուռքերուն որ ինծի առողջութիւն տան ։ Որդեակ , ըսաց մայրը , շատ ըրի շատ աղաչեցի , բայց փուճը գնաց . վասն զի չեն ուզեր քեզի առողջութիւն տալ , որովհետև շատ անգամ առեր են որ դուն անոնց սեղանին անարգելով յափըշտակեր ես զոհերուն միսն որ իրենց ընծայ եղած էին ։*

Օրինակ է անհաստատ Ղրկողներուն որոնց աչքը Եկեղեցականներուն վրայ է , և միշտ ծառը ընե-րով ծային օրէնքը կանարգէին . Բայց երբոր կըհն-ընդան և ժողովուրդեան մէջ կեցնին՝ քահանաները կը

ընտրուէն որ իրենց համար աղօթք ընեն · Վայ անոնց որ ան ատենը ողորմութիւն դիւրին գտնեն :

Ահեղ պատուհաս օրինազանցին՝
Մերժիլ յերեսաց արարչապետին ·
Զի որ մեղանչէ յաթոռ անբաւին ,
Ուստի՞ դեղ և ճար հայթայթէ անձին :
Ո՜ նախրախորհուրդ ժառանգ գեհենին ,
Զի՞ գոչես ձայնես երբ կաս 'ի մահճին ·
Խնդրեա զօգնութիւն մարմնոյ աշխարհին ,
Որ յանձ մեղար հաճիլ զնոսին :

## ԷՇ ԵՒ ՁԻ·

Որ ոչ բառնայ զբեռն ընկերին ,
Ծանրի յաւէտ բեռամբ ուժգին :

Թէ ընկերիդ օգնող չըլլաս ,
Անօգնական խեղճ կը մնաս :

մժլթ · Օր մը էշն ու ձին միատեղ ճամբայ կերթային · իշուն բեռը շատ ըլլալով աղաչեց ձիուն որ իրեն օգնութիւն ընէ ու բեռանը մէկ մասն ալ ինքն առնէ՝ եթէ ուզենայ խնայել անոր կենացը · իսկ ձին ամենևին չուզեց աս աղէկութիւնն անոր ընել · ուստի էշն ընկաւ բեռանը տակ մեռաւ : Տէրն որ տեսաւ՝ իշուն կաշին քերթեց բոլոր բեռանը հետ մէկտեղ դրաւ ձիուն վրայ : Ան ատենը ձին սկսաւ պոռալ · Ո՜վ թշուառ

ուլթեանս, եւ չուզեցի բեռանը մէկ մասը տանելու , հիմա հարկաւորեցայ չէ միայն բոլորը՝ այլ և կաշին ալ միատեղ տանել :

Օրինակ է անօգուտ մարդուն որ ինչպէս ինքն ուրիշին օգուտմը՝ ընել ալ անանկ օգտակարութիւնը կը հեռանայ․ անոր համար անօգուտ մարդը գողանի կը նմանցընէն որ ուրիշին վրայ գործ կուտի :

Ահա խրատունք արժանի նմին՝
Որ ոչ կարեկցի վշտաց ընկերին․
Այր ընկերատեաց իբրև անկանի ,
Ոչ ուստեք նպաստ տեսցէ բնաւին :
Երանի կարդամ ողորմած անձին ,
Զի ողորմութիւնք յիւրմէ ոչ բառնին․
Թէ չափով օգնէ կարեաց կենակցին ,
Անչափ օգնութիւնք 'ի վերուստ թափին :

## ԵՂՋԵՐՈՒ ԵՒ ԵԶԻՆՔ

Վայ որ այլոց ապաւինի ,
Զանձին փրկանս ոչինչ հնարի :

Թէ որ յոյսդ այլոց դնէս ,
Հարկաւ գլխուդ վայ կը բերես :

մն․ Եղնիկ մը որսորդներէն հալածուելով փախաւ եզներուն գոմը , որոնցմէ մէկն ըսաց իրեն․ Ի՞նչ կընես ողորմելի , հոս կենա֊

լով մարդու ձեռք կը մատնուիս և վտանգի մէջ քեզ կը ձգես։ Ներեցէք ինծի, բայց եղնիկը, թէ որ դուք մարդու բան չըսէք՝ ես զիս կրնամ՝ ազատել։ Գիտէք որ եղաւ, եղնապանը խոտ բերաւ եղներուն, բայց եղնիկը չտեսաւ հօն։ Տանը ծառաները և վերակացուն միայն եղան բան չտեսան։ Իսկ եղնիկը կարծելով թէ վտանգէ ազատեցաւ՝ եղաւ եղներուն շնորհակալ եղաւ որ կամեցան պահել զինքն իրենց մէջ։ Անոնք ալ պատասխանեցին, թէ մենք կուզենք որ դուն բոլորովին ազատիս, բայց զգոյշ կեցիր որ մեր տիրոջը ձեռքը չիյնիս, վասն զի մեծ վտանգ է կենացդ։ Շատ չանցաւ տէրը տուն դարձաւ բարեկամին հարսնիքէն, տեսաւ որ քիչ օրուան մէջ եղները վատուժցեր են, գնաց գոմն որ նայի. երբոր մօտեցաւ մսուրին, պոռաց ծառաներուն, թէ ինչ է պատճառն որ խեղճ եղներս քիչ կուտեն, և քիչ յարդ ըլլալով աղբը փուս կուտայ իրենց։ Վերջապէս երբոր աստին անդին կընայէր ուշադրութբ՝ տեսաւ եղնիկին մեծ եղջիւրները և մէկէն կանչեց ծառաներն որ բռնեն մորթեն։

Ով որ հանգիստ կը փնտռէ՝ իր կենացը մէջ կը ծերէ։ Հին ատենը մէկ երեւելի զօրավար մը երբոր պատերազմ կերթար՝ աշխարհք կը դողացնէր իր քաջութեբը, և երբոր պառաւ կը դառնար ուտելու խմելու ետևէ ըլլալով, անանկ անպիտան մարդ կըլլար որ ամենքը կը զարմանային։

Եղուկ խորհրդոց վատասիրտ անձին
Որ ապաւինի օտարաց ձեռին •
Ոչ ջանայ փախչիլ յապահով տեղին,
Անգործ սպասէ կենաց բարձողին:
Քանի՛ քաջ արանց 'ի յասպարիզին
Առաւթուր կոխեալ հանուրց ոտքէին •
Բայց երբ փափկութե՛ ը յարկաւ նաւին՝
Մատնեալ կործչին զերթ կնամարդին:

## ԱՐՋ ԵՒ ՄԵՂՈՒՔ

Այր անհամբեր միշտ վնասի,
Թէ և լսէ զօրեղ արի:

Որըստ պատճառ ընհամբերէս,
Մինչ ճռաւռ ծեղի նըհէս:

մին • Մէկ արջ մը քաղցած անօթի եղաւ անտառէն որ կերակուր գտնէ • Ճամբուն վրայ մեղրի փեթակ տեսաւ սկսաւ լափել • փեթակէն մեղու մը դուրս ելաւ արջուն անկաճը չարաչար խայթելով ցաւցուց, արջն ալ կատաղութենէն կործանեց փեթակը: Ան ատենը բոլոր մեղուները բարկանալով դուրս թափեցան մէկէն արջուն վրայ մաղուեցան, և անանկ խայթեցին զինքն որ արունըւայ եղաւ վրէժխնդիր ըլլալով իրենց թշնամւոյն որ փեթակը կործանեց: Նէ այսպէս արջը ամօթով և կաղալով սոխալեցաւ ետ դառնալ մեղադրելով իր գազանական ան-

համբերութիւնը՝ որ այնչափ թշնամի իրեն վրայ հանելու պատճառ եղաւ :

Խրատ է անոնց որ իրենց ազգութիւն համար ուրիշին դրկանք ընեն. Նոյն առաւել որդիական համբերէ մարդկանց որոնք շատ անգամ ատելու պատճառ են եղած :

Այսպէս անհամբեր կրէ զարժանին
Ըստ իւր ապաժոյժ բերմանց որկորին.
Զի որ կեղեքէ ըղձուածն օտարին,
Զրկանք և յայլոց պատրաստի նմին :
Մի՛ զաղանութեամբ բերիր յուտելին,
Եւ մի՛ գողանար զապրուստ ընկերին.
Որ թէ և լցէ փանաքի չնչին,
Ի նախանձ բրդեալ՝ վնասէ ուժգին :

## ԽՈՀԱՐԱՐ ԵՒ ՇՈՒՆ

Քաջ զօրանայ սիրտ խոհական,
Երբ հանդիպի նմին վշտեան :

Խոհեմ մարդը խելք կըստանայ,
Երբոր իրեն ցաւ կուգայ :

մէջ. Երբեմն շուն մը մտաւ խոհարանը կամ կերակուր եփելու տեղը, և հոն սպասելով տեսաւ թէ խոհարարն անզգուշութե̄ կեցեր չէր նայեր՝ խլեց անկէ կոլլին սիրտն

ու փախաւ : Իսկ խոհարարը տեսաւ որ շու_նը աս չարութիւն ըրաւ կը փախչի՝ կանչեց ետևէն ատանկ · Դուն այսօր գլուխին կրցար զիս խաբել, բայց լաւ գիտնաս ես ալ ասկէ ե_տև անանկ պիտի նայիմ որ ամէնևին բան մը չկրնալ կրնաս ինծմէ գողնալ, վասն զի դուն չէ թէ իմ սիրտս տարիր, այլ մանա_ւանդ ինծի սիրտ տուիր, որովհետև կորուս_տը և ձախորդութիւնը կը բանան մարդուս միտքը և կը սորվեցընեն որ լաւ զգուշութե ընելով ազատ ըլլայ 'ի դժբաղդութեանց որ կը պատահին :

Աշխարհիս հարստութիւնը չի պահեր, բայց պէտք է որ մէկ անգամ իյնողը մէյմալ չելնէ · հապա չէ տխրութիւնն ու ցաւը լաւ կը սորվեցընեն մար_դու խոհեմութիւն :

Գեղեցիկ առած բան խոհականին,
Որ սիրտ տալ ասէ վնասն առաջին ·
Այս մարդոյ պատկան այս բանականին
Մի կրկին անգամ վնասիլ յանձին :
Թէ չես փորձ զգաստ 'ի մի նաւագին,
Անկանիլ քեզ կայ 'ի նոյն վերստին ·
Եւ թէ անընդոստ կացցես 'ի կային,
Սահեալ կործանիս կրկին չորեքկին :

## ԱՐԾԻՒ, ԲԱԶԷ ԵՒ ՑԻՆ

*Զքնաղ գործեն գործք և գնացք,*
*Եւ ոչ պատիր տեսիլ դիմաց:*

Գործքը կ՚ընէ մարդը պիտանի,
Եւ ոչ փետուրին աղուորութիւնը:

*Միք. Բազէն ու ցինը վիճաբանութիւն կը-նէին արծուին առջին թէ որն աւելի ազնուական է. ցինը կը գովէր իր գերազանց ուժը և սաստիկ թռչիլը, իսկ բազէն իր ազնիւ բարքը, և կը նայէին թէ ինչ վճիռ կուտայ արծիւը: Պատասխան տուաւ արծիւը, թէ գնացէք մէյմէկ որս բերէք, ով որ ձեզմէ լաւ որս բերէ՝ ան է աւելի ազնուական: Եւ ահա ցինը գնաց մուկ մը բերաւ և բազէն աղաւնի մը: Ան ատենը արծիւն ըսաւ թէ այնչափ աւելի ազնուական է բազէն քան զցինը, որչափ աղաւնին գերազանց է քան զմուկը, որովհետև ուժը չէ՝ հապա գործքն է ազնուական ընողը:*

Ազնուականութիւնը գործքով կը յայտնի և ոչ փետրով. Թէ որ ցեղը ազնուական չէ՝ գործքը ազնիւ է՝ ազնուական կ՚ըլլայ. Թէ որ անունը ազնուական է, գործքը չէ՝ ողորմելի է. Ինչպէս որ յայտնի ցեղոցին բազէն (*շահին*) ու ցինը (*չայլախը*):

Նայելն գնացք գործք առաքինի
Չքնաղ յօրինեն զսիրտ և հոգի.
Թէ սոքա չիցեն ընտանեցեալ ընդ գեղ՝
Չէ ազնիւ չքնաղ այն սիրտ այն հոգի։
Մի պանծար ընդ գեղ և յանուն զարմի,
Ջանա զքեզ գործով գործել պանծալի.
Բան լոկ և անուն չեն ազնիւ յարգի,
Գործն է պսակիչ ամենայն բանի։

## ՆԱՊԱՍՏԱԿ ԵՒ ԳՈՐՏՔ

Քոյդ վախկանք թեթև թուլին՝
Եթէ հայիս յայլոց թերին։

Քու պակասդ թեթև կըլլայ,
Թէ որ նայիս այլոց վրայ։

մէջ. Երբեմն նապաստակները մէկտեղ եկան կուլային իրենց խեղճութենը վրայ որ վախկոտ ըլլալով շատ վտանգի մէջ էին, վասն զի մարդէ կը վախնանք, կըսէին, շնէ, արծուէ, գրեթէ ամէն բանէ վախ ունինք. ուրեմն մենք ասանկ հատնինք պիտի. ուստի աւելի լաւ է մէկ անգամ մը մեռնիլ, քան թէ բոլոր կեանքերնուս մէջ զարհուրանքով մեռնիլ. աս ըսելով վազեցին միաբան որ լիճն իյնին խղդուելու. բայց անոնց ոտքին ձայնէն լճին քովի գորտերը վախնալով մէկէն ջուրը ցատկեցին։ Ան ատենը մէկ ծեր նապաստակ մը իրենցմէ կանչեց. Ով

ընկերք, կեցէք մի վախնաք․ ահա ինչպէս տեսանք՝ մեզմէ շատ աւելի վախկոտ կեն-դանիներ ալ կը գտնուին եղեր, հապա մենք տեղերնիս դառնանք ։

Ինչ նեղութեան մէջ որ ըլլայ մարդ՝ պէտքը չէ յու-սահատելով պէտքը կորսնցնելու, այլ իրեն վերինին նայելու և մխիթարուելու․ վասն զի յուսահատութիւնն է թեթեւամտութիւն և մարդկութեան դէմ բան ։ Փի-լիսոփաները կ'ըսեն թէ բարի մարդը չարչարանքի մէջ ալ ըլլայ միշտ միտքերը կըմնայ ազատ այլա-ւելու ։

Թէ քեզ դժկամակ լիցի ձեռք բաղդին
Զըլացեալ զձիրս օժիտ բնածին՝
Մի կարճամըտիր, հայեաց 'ի սորինս ,
Այլոց թերութիւնք քեզ յորդոր լիցին ։
Չիք ինչ անթերի յեղելոց կարգին ,
Գործ է կատարել զայն թերատներքին ․
Արդ ուշիմ մտօք քննեա զօտարին ,
Գտանես զքեզ 'ի գոհ վիճակին ։

## ԵՂՋԵՐՈՒ

*Թէ և լիցես յանքոյթ տեղի ,*
*Մի՛ դներ զքեզ յապահովլի :*

Ուր որ ըլլաս ապահով չես ,
Մահէն հեռու քեզ չինկարծես :

*մին· Մէկ եղնիկ մը ծովուն քով ժու-
ղալով բան կուտէր , որ մէկ աչքը չիտես-
նելուն համար ծովուն դին էր ըրեր , տես-
նող աչքը ցամաքին դին , և ասանկ զինքը
ապահով կարծելով վախ մը չունէր : Սակայն
նաւով անցնողները տեսան զայն ու նետով
զարկին ձգեցին · ողորմելի եղնիկը մեռնելու
ատենը լալով կը կանչէր , թէ ուսկից որ կը
վախնայի ան կողմանէ բան չեղաւ , և ուսկից
որ վախ չունէի անկէ մեծ քաշեցի ու զար-
նուեցայ · ուրեմն վախ չեղած տեղէն աւելի
վախնալու է եղեր :*

Ամէն անգամ և ամէն տեղ պէտք է արթուն կենալ , թէ չէ՝ չինկարծած տեղէն նեղ կուգայ , որովհետև կասկածելի բանէն այնչափ մեծ վնաս չի գար՝ որչափ ապահով բանէն : Քաջ նաւապետը նաւահանգիստին մէջ աւելի պէտք է վախնայ՝ քան թէ ծովուն մէջ , ուր է թշնամին մը :

Այսպէս համանէն որկածք աշխարհի
Անփոյթ շըջըղաց յապահով վայրի.
Զի աներկեան չէք ուստէք տեղի,
Ցոր ոչ ժամանեն վիշտք աղետալի:
Արթուն կաց, ով մարդ, յանքոյթ վիճակի,
Ի գործս 'ի գնացս ժիր յամենայնի.
Շատք իբրև զինքեանս անվտանգ եղին,
Ի վըտանգ մահու կորեան ցաւագին:

---

## ՕՁ ԵՒ ԽԵՑԳԵՏԻՆ

Թէ ոչ գըտնաս յուղիղ կարգին,
Զ.քեզ չարաչար գործք քո դատին:

Թէ այլոց հէտ ըփառք ըէրբեաս,
Մասին դուռդ ըփառք ներբեաս:

միջ. Խեցգետինը (պապախօղը) օձին հետ ընկեր կըլլայ, և միատեղ երթալու սանը կը՚նայի որ օձը մէկին մէկալին չարութիւն կուզէ ընել և խայթել. ան բանէն կասկած երթալով խեցգետինը միշտ կը խրատէր օձն որ խորամանկութիւնը թողու և իրեն պէս պարզամիտ ըլլայ. բայց օձն ամենևին մտիկ չէր ըներ: Ուստի խեցգետինն օր մը տեսաւ թէ օձը կը քնանայ, բռնեց ճանկերովն ա-նանկ սխմեց որ մեռցուց, և յետոյ երկնցը-նելով շիտկեցուց ու սկսաւ մեռած օձին հետ խօսիլ. Թէ որ առաջ, կըսէր, այսպէս շիտակ և պարզ ըլլայիր, հիմա սանկ պատժով

չէիր չխաբուեր․ որովհետեւ ես ընկերը չխաբել կուզեմ՝ հարկ եղաւ որ քեզ ալ չխաբեմ։

Խրատ է անոնց որ թողուն չարութիւնը՝ բարութեան ետեւէ ըլլան․ Վասն զի բարի ընողը բարի կը գտնէ, չար ընողը՝ չար, երբեմն շուտ երբեմն ուշ։

Այս են խրատունք արդարադատին,
Զափէ 'ի գործոց չափ չարասիրին․
Զի որ ոչ դառնայ 'ի գործոց չարին,
Զարատանջ ուղղի գանիւք արկածին։
Արդ մի դառնանար ընդդէմ խըրատին,
Գանձեա 'ի սըրտի խըրատ մըտերմին․
Փախիր 'ի գործոց վընասաբերին,
Թէ ոչ կորընչել կամիս յօրհասին։

## ԱՌԻՒԾ ԵՒ ԳԱՅԼ

Մի՛ զուր գըրգռեր ընդդէմ եղբօր,
Զի մի՛ հասցէ քեզ խաւար օր։

Չար մի խօսիր եղբօրդ վրայ,
Չար խորհուրդդ քեզ կը դառնայ։

մին․ Ծեր առիւծ մը երբոր հիւանդ պառկեր էր այրին մէջ՝ ամէն կենդանիները գնացին զինքը տեսնելու բաց 'ի աղուէսէն․ իսկ գայլը մատնութիւն կընէր առիւծին թէ ա-

ղուէսը քեզ բանի տեղ չխնայելուն չեկաւ ։ Աս միջոցիս մէջ աղուէսն ալ հոն հասաւ և տեսաւ որ առիւծը մոմռալով կը բարկանայ իրեն, բանը հասկըցաւ ու մէկէն առջին գնաց ու ըսաց ․ Տէր իմ, ո՞ր կենդանին քու շահդ մտածեց ինչպէս ես որ աշխարհք պտըտե-լով քեզի համար դեղ գտայ բժիշկներէն ։ Ի՞նչ դեղ է, ըսաց առիւծը ։ Քեզի դեղ ան է որ գայլը ողջ քերթես ու կաշին տաք տաք հագնիս ։ Առիւծը հաւտալով մէկէն ղար-կաւ գայլը սպաննեց, ու երբոր կաշին կը հա-նէր՝ աղուէսը ծիծաղելով ըսաց ․ Ասանկ հասկըցիր՝ որ պէտքը չէ տէրը բարկութեան շարժել, այլ բարեկամութեան յորդորել ։

Որոնք որ իշխաննին հաճոյ ըլլալու համար ուրէ-ւը իր մտքէն և ձեռատորին սիրտը իր շարժէն բար-կութեամբ՝ այսպէս իր պաշտօնն ։

Երրորդ, ինչ նենգաւորք չարաչար պատժին,
Այլոց գուբ փորեն 'ի նոյն գըլորին ․
Որ չար խորհեցաւ ընդդէմ ընկերին,
Ե՞րբ ոչ դառնալէս կորեաւ 'ի նըմին ։
Քեզ է այս խըրատ ծառայդ վեհագին,
Մի մատներ զընկերն առ օգտի անձին ․
Որչափ քաղցրակեաց լինիս ընդ այլոց,
Այնչափ բարութիւք յայլոց քեզ բերին ։

# ԳԻՆԵՄՈԼ ԵՒ ԿԻՆ ԻՒՐ

*Ոյր կրթութիւնք իցեն յոռի ,*
*Զինչ և առնես միշտ է յոռի ։*

Երբոր մէկը գէշ սորված է ,
Ինչ որ ընէ օգուտ չընէ ։

*մէջ• Մէկ կին մը իր գինով էրկանը դէմ կը փնտռուէր• օր մը տեսաւ որ խիստ գինով է, տարաւ քարէ շինած գերեզմանին մէջ պառկեցուց և գերեզմանին դուռը գոցեց գնաց• կարծէր թէ ատով պիտի զգաստանայ մարդը ։ Բայց իրկուան գնաց գերեզմանին դուռը զարկաւ, գինովը ներսէն ձայն հանեց թէ ով ես ։ Կնիկն ալ պատասխանեց թէ ես մեռելի հաց բերող եմ ։ Գինովը կանչեց անոր• ինծի ուտելու բան մի բերեր՝ հապա խմելու , վասն զի ես շատ կը տրտմիմ երբոր կերակրի անուն կառնեմ ու գինիի անուն չեմ առներ ։ Ան ատենը կնիկը գլխուն զարնելով կըսէր• Վայ անբաղդիս որ ճար մը չիգտայ դքեզ շահելու • ահա• չար սովորութիւնը քեզ անանկ կորսընցուցեր է որ ճար չիկայ ։*

Խրատ ըլլայ մարդուն որ շատ գործերի մէջ չուշանայ • վասն զի շատ անգամ սովորութիւնը

[illegible] Որո՞ւն է վայ, որո՞ւն է խռովութիւն, որո՞ւն է դատաստան, բայց միայն գինեմոլ մարդուն, կըսէ Սողոմոն :

Որ 'ի գործ վատթար այսպէս սովորի,
 Ի նոյն վատթարեալ մոլեալ յիմարի.
 Զի սովորութեամբ բնութի փոփոխի,
 Նըմանէ ըստ չափ թէ չար թէ բարի :
Թէ անկար երբէք 'ի գործ ինչ յոռի,
 Արա զներհական բարին յանկալի.
 Թէ 'ի նոյն գտանաս 'ի գործ առաջին,
 Մոլեալ կործանիս յայն անկանգնելի :

## ԲՈՒ ԵՒ ՉՂՋԻԿ

Թէ ըստ տեղւոյն չես նախատես,
 Ոչինչ օգտիս զոր և գործես :

Որ [illegible],
 Եթէ [illegible] :

Միթ. Մէկը բռնեց բու թռչունը և վանդակով պատուհանին մէջ կախեց որ բոլոր գիշերը ձայն կը հանէր կերգէր. իսկ գիշերահաւը չիդիմանալով ասոր ձայնին եկաւ քովը մօտեցաւ և հարցուց թէ ինչու ցորեկը ձայն չես հաներ ու գիշերը կը կանչես : Ան ալ պատասխանեց թէ առանց

*մտածմունքի չէ ըրածս , վասն զի ցորեկն երգելուս համար բռնուեցայ ։ Կրկնեց գի-շերահաւը ծիծաղելով թէ ասկէ ետև քեզի ոչ զգուշանալ պէտք է և ոչ պահուիլ․ ան-խելք , սա զգուշութիւնը բռնուելէդ առաջ ընելու էիր ։*

Բուն (*բայղուշ*) օրինակ է անխոհեմ մարդ-կանց որ պէտք եղած տեղը զգուշութիւն չեն ըներ ու պէտք չեղած տեղը կ'ընեն ։ Մարդուս որոգայ-թը իրեն բերանն է որ իր խօսքովը կը բռնուի , կ'ը-սէ իմաստունը ։

*Ի զուր է ջանալ յանցանել ատթին ,*
*Որոնել ըղձար փըրկութեան անձին․*
*Խորհիլ և առնել ըստ ժամանակին՝*
*Գործ խոհեմութեան է խոհականին ։*
*Արթուն նախատես լեր ապագային ,*
*Մինչև է եղեալ դեղ խորհեաց ախտին․*
*Զի գայ ժամանակ երբ 'ի սոյն սահծս ,*
*Ոչինչ դեղ և ճար գըտանել մարթիս ։*

## ԿԱՏՈՒՆ ԵՒ ԽԱՐՏՈՑ

*Վայ որ լեզուն զերկրաւ ածէ ,*
*Բոլոր վնաս ինքեան ածէ ։*

ՈՎ որ այլոց չար կը փորձէ ·
Իրեն հոգին կը տանջէ ։

*Մը․ Կատուն կը մտնէ ոսկերչին խանութը, և հոն գտնելով խարտոց մը՝ կըսկսի լզել· բայց լեզուն խարտոցին ակռաներէն քերթուելուն համար՝ արիւնոտեցաւ խարտոցը· իսկ կատուն կուրախանար՝ կարծելով թէ երկաթէն ուտելու բան կը հանէ , մինչև բոլոր լեզուն մաշեցաւ ։*

Լեզուին պահող և բամբասանք սիրող մարդը մէջ կը ճգնի ու կարծէ թէ ուրիշին ճառ կընէ · անոր համար իր լեզուն իր գլուխը կուտէ , մանաւանդ եթէ իրմէ զօրաւորին և գիտնական մարդկանց հետն իյնի ։ Թէ որ մարդ բամբասողը կրակի արժանի կըլլայ , հապա քահանան բամբասողն ինչ կըլլայ , կըսէ իմաստունը ։

*Ո՛վ զխարդ դժնեայ գործ լեզուագարին ,*
*Լսէ և խարտէ զանուն օտարին ·*
*Կարծէ խանգարել զայլոց ըղբարին ,*
*Բայց ինքըն մաշեալ կոտորի յանձին ։*

Նախանձու է բերք այս գործ խաւարին
Դառնացեալ ընդդէմ բարեաց ընկերին.
Մի որպէս լեզու այլոց 'ի վնաս,
Զի մի՛ անըղձայ մաշեսցիս կրկին :

## ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ԲԱԽՏ

Եթէ բարիք քեզ գիտեսցին,
Տուր փառս երկնից և ոչ բաղդին :

Թէ որ յաջողիս աղէկ բաներ,
Ճանչցիր փառք տուր Երկնաւորին :

մլա. Երկրագործ մը գետինը փորելու ատենը գանձ գտաւ, և աս պատճառաւ գի-շեր ցորեկ գետնին պատիւ կընէր որ իրեն ան բարերարութիւնն ըրաւ : Օր մը բաղդը բարկանալով երեցաւ իրեն ըսաց. Ով մար-դ, ինչո՞ւ համար ինծի ընելու պատիւդ գետնին կընես. ան ոսկին ես քեզի տուի որ փարթամ ըլլաս. բայց գիտեմ՝ եթէ ժամանակը փոխուի և աս ոսկին ուրիշին ձեռքն անցնի՝ ան ատենը զիս պիտի պարսաւես զիս թէ բաղդ չունիմ :

Այն մարդ ապերախտ է որ իր փառաց բա-րիքը ճանչնայ ու պաշտէ արարիչը. չէ՛ թէ դի-պուածի անպէտքի ուրիշի պատիւ ընէ. ինչու որ ամէն բան իր կամքովը կըլլայ : Բայց պարմանուն

ան է որ շահն իրենց խելքին նայած և յախորդու֊
թեանն ալ փառքն կը տրտնջան, ընդդէմ թէ ան ալ
իրենց հոգւոյն փրկութեան համար նային՝ որ յա֊
խորդութէ մէջ համբերութեան ընեն, յաջողութեան
մէջ ալ խոնարհութիւն :

Այսչափ է խորհուրդ անխմաստ ռամկին,
Որ ոչ ճանաչէ ուսումն գայ բարին.
Երբ գիտի բարեաց գանձուց աշխարհին,
Զայն երկրի գլրէ զայն պարգև բաղդին:
Աղբիւր է բարեաց անսահման բարին,
Հանուրց բարերար ըստ էից հարկին.
Պատկառ կաց ձեռաց ամենակալին,
Որ տայ և բառնայ երբ կամք են նըմին:

## ԵՐԿՈՒ ՈՒՂԵՒՈՐՔ

Բազում խնդրանք յաջողակին,
Չեն բարեկամ ձախողակին:

Յաջող բանին խնդրող շատ կայ,
Ձախորդին մարդ չի մօտենայ:

մէֆ. Երկու հոգի ճամբայ կերթային, մէկը կացին մը գտաւ և ուրախանալով ամենուն կըսէր թէ կացին գտայ. իսկ ընկերը կը խրատէր որ գտայ չըսէ, հապա գտանք ըսէ. բայց մէկալը միշտ նոյնը կըսէր: Քիչ մը առաջ գացին նայիս որ կացինին տէրը վազելով եւեւնուն կուգար. ան

*ամենը գտնողը խօսքը փոխեց ու սկսաւ մէկալին ըսել թէ կորանք, եղբայր : Ան ալ պատասխանեց թէ ինչո՞ւ կորանք կըսես, հապա կորայ ըսէ . վասն զի երբոր կացինը գտար՝ գտանք չէիր ըսեր՝ գտայ կըսէիր . ուրեմն ինչպէս յաջողութեանդ զիս մասնակից չըրեցիր ընել՝ պէտքը չէ որ ձախորդութեանդ ալ ընես :*

ՈՎ ՈՐ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՈՒՐԻՇԻՆ ԲԱՐԻ ՉԸՆԷ, ՁԱԽՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԴԷՄԸ ԿՈՒԳԱՅ . ՎԱՅ ԱՆ ՄԱՐԴՈՒՆ ՈՐ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՀՊԱՐՏԱՆԱԼՈՎ՝ ՄԱՐԴՈՒ ԵՐԵՍ ՉԷ ՆԱՅԷՐ :

*Բարեբաղդք պանծան յելս յաջողակին,*
*Ոչ զոք մասնակցեն ընդ բարեաց մասին .*
*Բայց թէ ժամանեն 'ի ձախողակին,*
*Բաշխեն և սփռեն զայն ընդ բոլորին :*
*Մի մեծամըտիր երբ կաս 'ի բաղդին,*
*Մասնակցեա զայն բաղդ կարօտ ընկերին,*
*Զի յետս յընթացրին դիւրասահ անուին՝*
*Քեզ նշխարեսցի և բաղդ օտարին :*

## ԵՐԿՈՒ ԳՈՐՏՔ

Որ գոհ վարէ կեանս աղքատին,
Անքոյթ զուարթ կայ յիւր կային:

Ով որ գոհ չէ իր վիճակէն,
Մահին կըլլայ շուտափոյթ բաժին:

Մէջ. Երկու գորտ խորարու դրացի ըլլալով՝ մէկը լճին մէջ կապրէր ապահով և աղքատ, միւսը ճամբուն վրայ քիչ ջրի մէջ կապրէր հարուստ: Լճին մէջինը շատ անգամ կը խրատէր ընկերին որ իրեն քով գայ ապահով ապրի և դուրսը վտանգի մը չիգայ. բայց միւսն ամէնևին անոր մտիկ չէր ըներ ըսելով թէ ես հոս շատ կերակուր կը գտնեմ: Սակայն շատ զղջացաւ երբոր սայլ մը վրայէն անցնելով տրորեց, որ մեռնելու ատենը կը կանչէր թէ ինչ անխելքութիւն է որ շատ ուտելու համար կեանքս կարճեցուցի. թէ որ ընկերոջս խօսքը մտիկ ընէի, հիմա ողջ կըլլայի:

Որչափ մարդիկ որ շատին փափաքելով քիչ բանէ չեն հասնալ՝ վտանգի մէջ ընկեր կորսուեր են: Լաւ է կտոր մը հաց հանգիստ խաղաղութեամբ՝ քան թէ մէկ տուն մը լեցուն բարիք՝ խռովութեամբ, կըսէ Սողոմոն:

Աղքատք և փարթամք ըղձի օդ շնչեն,
Ընդ կենաց շաւիղ այլ ոչ զոյգ գնեն.
Նա զոհ յիւր փոքուն ապահով շրջի,
Սա անզոհ բազմաց 'ի վըտանգ մաշի։
Այս կըրկին վիճակք քեզ տուալ են կըրկին՝
Շատանալ փոքու 'ի կեանս աղքատին.
Թէ չես զոհ փոքուն՝ փափաքիս շատին,
Անաթուր փշրիս 'ի մահու անուին։

## ՄԵՂՐԱԳՈՐԾ ԵՒ ՄԵՂՈՒ

*Մերժեա 'ի բաց զայր անըզգամ,*
*Մի՛ զընտանի և բարեկամ։*

Հեռու կեցիր անըզգամէն,
Չէ թէ օգնիլ բարեկամէն։

*մդ.* **Ե**րբեմն մեղուանոցին մէջ մէկ մարդ մը մտաւ մեղր գողցաւ. երբոր տէրն եկաւ տեսաւ թէ փեթակն աւրած է՝ զարմանալով կայներ կընայէր թէ ով ըրեր է. ան ատենը մեղուներն ալ դարձան եկան, տեսան որ մեղրագործը փեթակին քովն է՝ սկսան խայթել։ Ով անզգամներ, կըսէր մեղրագործը, ձեր մեղրը գողցողին բան չըրիք ու ձեզի նայողը կը խայթէք։

Կան մարդիկ որ անմտութեամբ թշնամիէն չեն զգուշանար՝ բարեկամութեամբ կը վարուին, իսկ բարեկամէն

Երես կը դարձընեն · բայց ետքը կը հասկընան թէ լա-ւէն վէրք բարեկամին քան զհամբոյր թշնամւոյն :

Կշռել զինքն և զայլս է մըտաւորին,
Ընտրել զբարեկամ մերժել զթշնամին ·
Իսկ սիրել ըզվատն ատել ըզբարին՝
Գործ է յիմարաց խորհուրդ անբանին:
Են որ գուլթ խըրատ մերժեն մտերմին,
Կենակցին անհոգ ընդ գող թըշնամին ·
Բայց գայ ժամանակ յոր խաբեալ ծաղրին,
Յայնժամ ճանաչեն զյարգ բարեկամին:

## ԵՐԿՈՒ ՇՈՒՆՔ ԿՐԹԵԱԼՔ

Ցոր լինչ՚ի բնէ ոք սովորի,
Այնպէս մնայ չար թէ բարի:

Ինչ բանի որ սորվիս ըլլայ,
Գէշ թէ աղէկ անանկ կերթայ:

մյն · Մէկ պարոն մը երկու շուն ունէր · մէկլին որս ընել սորվեցուց, մէկալին տունը պահել · որսորդ շունը միշտ որսի երթալով կաշխատէր և ինչ որ բռնէր՝ պահապան շու- նը մէկտեղ կուտէր հետը: Ուստի օր մը որ- սորդ շունը բարկացաւ և նախատելով կըսէր անոր · Դուն ամմէն օր առանց աշխատանաց հանգիստ նստեր ես, իսկ ես միշտ կաշխա- տիմ՝ դուն կուտես: Պատասխան տուաւ պա- հապան շունը՝ թէ զիս մի պարսաւեր, հա-

այս մեր ատէրը պարտաւէ որ ինծի աշխատիլ չխորվեցուց, քեզի սորվեցուց :

Խրատ է ամէն հարցում, համառօտ ծնողաց որ զաւակնին պզտիկուն ատենը բարի բաներով կրթեն. վասն զի ան ատենն ինչպէս առնեն՝ անանկ կը մնան :

Ծնողք վարդապետք յայս պարտաւորին
Քաջիկ հրահանգել զայս բարուց մանկըն,
Զի մանկունք ցվերջ զայն առնել կըրթին,
Գովեստ և պարգեւ նոցա վերբերին :
Զանա սովորիլ ՚ի բարեաց մասին,
Առաքինանալ իբրև դիւցազին.
Ի քեզ նկարեալ բարեաց բոլորին՝
Տենչալի տիպար գոցես անփորձին :

## ՁԿՆԿՈՒԼ ԵՒ ԾՈՎ

Մի՛ հաւատար այլոց ըղքեզ,
Եւս առաւել զանձն քո քեզ :

Չհաւատաս քեզ ուրիշին,
Եւ համառօտ քեզ քու անձին :

ՄԷՋ. Ձկնկուլ թռչունն անապատասէր ըլլալով միշտ ծովուն քովերը կը կենդանավարի և ծովուն քովի ժայռերուն մէջ ձագ կը հանէ, ինչպէս կըսեն : Եղաւ որ ձագ հանած ատենը՝ կերակուր գտնելու գնաց. աս

միջոցիս մէջ ծովն ալէկոծելով, ալիքները քարին զարկեր՝ բունը ծովուն մէջ ձգեր էր։ Երբոր Թռչունը դարձաւ տեսաւ որ ձագերը ջրին մէջ կորսուեր են, վայ ինծի, կըսէր, ես ցամաքը Թշնամի կարծելով ծովուն ապաւինեցայ, սակայն ծովն է եղեր իմ բուն Թշնամիս որ ես չիյտէի։

Խրատ է անոնց որ Թշնամիէն փախչելու համար անանկ տեղ բարեկամի յետոյ կը ճամփանուին որ Թշնամիէն աւելի չար կը բերէ իրենց։

Զինչ շահ արթուն կալ՚ի մի վրանգին,
Յայլ վտանգ հաշիլ Թըմրեալ գլխովին․
Զի որ ոչ գիտէ զեզըր սահմանին,
Անգարծ մոլորեալ դանդաչէ յուղին։
Ծով է այս աշխարհ որ ցանգ երերին,
Ալէբեր հողմունք խաղան ՚ի նըմին․
Արդ մի վստահիր փոփոխականին,
Զի մի ծախեսցիս յանկատակ ծոցին։

## ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

Չխմրդ գժնեայ կին անըզգամ
Խայթէ զընկերն և զայլս համայն:

Չար կանայք են օձի նման,
Որուն ծոցին հինգս զէն կապան:

մէջ. Մէկ չար կնիկ մը ամենուն հետ անհաւութեամբ վարուելով կռիւ կընէր. օր մը իրեն ընկերն ուզեց հասկընալ թէ արդեօք հօրը տունն ալ անանկ կը վարուէր. ուստի մէկ պատճառով մը կինը խրկեց հօրը տունը. բայց քիչ օր անցաւ նոյնս դարձաւ եկաւ. ընկերը հարցուց իրեն թէ անոնց հետ ինչպէս կը վարուէիր հոն: Ան ալ պատասխան տուաւ թէ ինչպէս պիտի վարուիմ, հովիւներն ալ ինծի հետ աղէկ չէին երթար: Ով անզգամ կին, պոռաց էրիկը, եթէ անոնց հետ ալ կռիւ ըրիր որ առտուանց կերթան ոչխարներուն հետ մթուն կը դառնան, հապա ինչ չես ըներ անոնց որ գիշեր ցորեկ մէկտեղ ես:

Կռուարար մարդն ուր որ երթայ՝ կռիւը հետը կը տանի, և ամէնուն հետ կռիւ կը բանայ. ուստի ատոր է թէ մէկ գէշը հազարուն աղէկին հետ չի կրնար հանդուրժել. իսկ մէկ աղէկը հազարուն գէշին հետ կը հանդուրժէ:

Այս բոյսք են բարուց կընոջ ժանտածին
Որ միշտ աղմկէ զընկեր դրացին.
Ապականիչ Թոյն կըրէ 'ի լեզուին,
Աղցել զայն այլոց բերկրանք են սըրտին:
Բա՛րէք դառնութեան այն անըզգամին,
Յորմէ մերձաւորք հեռանան փախչին.
Փոխան գգուանաց որ պարտ էր նմին
Նաեւ հալածեն դժընդակ զայն կին:

## ՈՒԼ ԵՒ ԳԱՅԼ

Եթէ ունիս բան և հանճար,
Յաղթես բնաւից չէք քեզ դժուար:

Թէ խոհուս գործէդ այլ բան ընես,
Շատ ջանաներ տեղ կըբերես:

մը. Մէկ այծի ձագ մը իր ընկերներէն մոլորած երբոր կերթար՝ գայլ մը ասոր ե-տեւէն ընկաւ. այծը հասկըցաւ որ ազատում չունի՝ դարձաւ ըսաւ. Ով գայլ, լաւ գիտեմ որ քեզի կերակուր պիտի ըլլամ. ուրեմն կը խնդրեմ որ խեղճութբ չմեռնիմ, եկո քիչ մը խաղ կանչէ՝ ես ալ պար խաղամ՝ անկէ ետև ինչ որ կուզես ըրէ: Իսկ գայլը հաւանեցաւ անոր ու երբոր ոռնալու ձայն կը հանէր որ այծը խաղայ՝ շները գայլին ձայնին առին հեռուէն և մէկէն հոն հասան հալածեցին զգայլը: Բայց գայլը փախչե-լով կըսէր այծին. արժանաւէս ինծի աս

*բանն եղաւ, ինծի պէտք էր երաժշտութիւն ընել որ բնական խոհարարը (աղճի) եմ։*

Ո՛վ որ իր սորված բանը կը ձգէ ու անոնցմէ բա-նի յետոյ կը պարնէ՝ գործադրութեան մէջ կիյնի։ Վայ անոնց որ շիտակ ճամբան կը թողուն ու խա-ւարը կերթան, կըսէ առակը։

*Այսպէս որ ձրգէն զեւրեանց անհելին*
*Մխտ զընեն այլոց գործոց և բանին,*
*Բայց անդէն ծաղրին առ մըտաւորին,*
*Ոյր հանճար յաղթէ ըրնութեան նոցին։*
*Զի՞նչ հըղօրագոյն քան զէն իմաստին,*
*Երբ հաստ սըրեալ է յիւր յեաանին․*
*Հատանէ ըղջիւղ արքայից բազկին,*
*Ծաղրեալ զխորագէտն ածէ յարկածին։*

## ԳՈՂՔ ԵՒ ԱՔԱՂԱՂ

*Պատճառ լինել գործոյ բարեաց*
*Ատելի է չարասիրաց։*

Թէ լաւ բանի ըլլաս պատճառ,
Կը բամբասեն քեզ լաւալաւ։

*մէթ․ Գողերը տուն մը մտան թալլելու համար․ բայց տանը մէջ ուրիշ բան չգտան՝ մինակ աքաղաղ մը գտան բռնեցին տարին․ երբոր սխսի մորթէին, կաղաչէր որ թող*

տան զինքը։ Վասն զի, կըսէր, ես շատ պիտանի եմ մարդու որ գիշերը կարթընցընեմ զանոնք կելլեն կաշխատին։ Ահա ասոր համար, ըսին գողերը, դուն մահապարտ ես, որ զանոնք արթընցընելով չես թողուր մեզի գողութիւն ընելու։ Աս ըսելով գլուխը կտրեցին Թէ ինչու համար ատանկ բանի պատճառ կըլլայ։

Բարի բանէրու պատճառ էղողն ատէլի է անզգամնէրուն որ իրէնց յէտոյէն բարի ընէլ չի գար ու բարէգործութիւն ընողը կամ ուսման էտևէն էղողը կը բամբասէն։ Ով որ ուսումն ու հոգևորը կը ատէ՝ իրէն տունը մահին մօտ կը շինէ և ճամբան դժոխքին քով, կըսէ իմաստունը։

Այսպէս թըշնամիք բարեաց բոլորին
Ըզպատճառ բարեաց ատեն խըստագին.
Զի ուր ակն է չար նըմա չար թուին
Բարեգործ արդարք պատճառ բարեծին։
Դու մի հետևիր եղծողաց բարին,
Նըպաստ յարգութեան տուր բարեսիրին.
Որ պատճառ լինի բարեաց աշխարհին,
Ձըքնաղ պանծալի լինի նազելին։

## ԳԻՇԵՐԱՀԱՒ ԵՒ ԿՈՒԶ

Որ ըստ տեղւոյն զէն իւր փոխէ ,
Անյաղթ մնայ զերծ 'ի չարէ :

Թէ ըստ տեղւոյն բանըդ փոխես ,
Ամէն բանի վրան կելլես :

մի. Երբեմն գիշերահաւը (կէձէ գուշուն) թաչելու տեղը յանկարծ վար կիյնի. կուզն ալ (սամսար) հոն գտնուելով կըբռնէ զինքն որ սպաննէ. իսկ գիշերահաւը կաղաչէր որ չմեռցընէ: Պատասխանեց կուզը. չեմ կըրնար քեզ թող տալ, որովհետեւ բնութեամբ ամէն թռչունի հետ հակառակութիւն ունիմ: Եա՛ ըսաց գիշերահաւը, թռչուն չեմ՝ հապա մուկ եմ: Աս որ լսեց կուզը թող տուաւ: Ուրիշ անգամ երբոր ընկաւ գիշերահաւը՝ կատուն զինքը բռնեց. կաղաչէր թէ զիս մի ուտեր: Կատուն ալ ըսաց. բնութեամբ ամէն մկներու թշնամի եմ: Ան ալ կըսէր. ես մուկ չեմ, թռչուն եմ: Եւ այսպէս երկու անգամ անունը փոխելով ազատեցաւ գիշերահաւը :

Պէտք է ժամանակին յարմարելով վտանգէ ազատիլ ու ամէն մարդու հետ խելքով վարուելով անդր ըսէն, ու թէ ազգի ազնուութեան քակելով տուրիւ բանի չինայել:

Յարմարիլ առթից գործ է հանճարին
Մի յամառութեամբ պինդ կալ՚ի նըմին․
Զի փոփոխ ընչմունք հողմոց աշխարհին
Հարկաւ փոփոխեն պարագայս անձին ։
 Մի կաշկանդեսցեն զքեզ բերմունք ազգին,
Մի սովորութիւնք ՚ի քեզ ալընդասցին․
Փոխեա զայն երբեմն ըստ ժամանակին,
Որով՚ի լաւ անդր գործք նախնեաց փոխին ։

## ՑԻՌ ԵՒ ԷՇ

*Մի երանէր զբաղդ մեծատան,*
*Զի տառապանք նմին մերձ կան ։*

Երնէկ մի՛ տար մեծամեծին․
Նայէ ներսէն ինչ վիշտ ունին ։

*Մխա․ Լեռան էշը կը տեսնէ ընտանի էշն ու քովը մօտենալով կընայի անոր փափկութեանը՝ երանի կուտայ որ քաղքի մէջ գըտնուելով լաւ կուտէ և հանգիստ կեանք կը վայելէ ։ Ուրիշ անգամ տեսաւ որ բեռնաւորեալ կերթար՝ տէրն ալ ետևէն գաւազանը զարնելով կը քշէր՝ ըսաւ․ Ես ասկէ ետև քեզի երանի պիտի չտամ, վասն զի կը տեսնեմ որ առանց չարչարանքի դուն երջանկութիւնդ չես կրնար վայելել ։ Ուրեմն իմ աղքատութիւս քու մեծութէդ շատ վեր է որ ազատութեամբ ուզած տեղս կերթամ ։*

Պէտք է որ աղէտքներն իրենց վրայ գործ ըն-ցան փոխնելով մեծապատուններուն քաղած նեղութիւնները որ մեզ սփոփութով կը պանծուին : Շատ աղէկ է քիչ ունենալ հանգիստ, քան թէ մեծ գանձ ունենալ խռովութեամբ, կըսեն իմաստունները :

Մեծատանց աղքատք երանեն բաղդին ,
Նոյնպէս մեծատունք կենաց աղքատին .
Թէ կըշռես նոցուն ըղձական ներքին ,
Փարթամք են թշուառք աղքատք երանին :
Մի ցանկար փառաց փարթամացունին ,
Որոց տագնապք են ըղձակից սըրտին .
Լաւ են կեանք անինչ որ անվիշտ վարին,
Քան զայն ցեցակեր կեանք տըրտմականին :

## ԿՂ. ԷՇ ԵՒ ԳՈՐՏՔ

Ծոյլ հեղգամիտք փոյթ գանգատին ,
Ոչ ինչ յօգուտ վաստակս հային :

Ծոյլն որ նեղի գանգատ կընէ ,
Այլոց ջանքին նայել չուզէ :

Միտք. Էշը փայտ բեռցուած երբոր ջրէ մը կանցնէր՝ ընկաւ ջրին մէջ մնաց և չէր կրնար ելլել. ուստի փոխանակ աշխատելու սկսաւ հառաչանքով լալ: Իսկ ջրին մէջի գորտերը լսելով անոր հառաչանքը՝ ծաղր կընէին ու կըսէին. Թէ որ դուն մեր տեղն

ըլլայիր և այնչափ ժամանակ ջրին մէջ մը-նայիր ի՞նչ պիտի ընէիր որ կարճ մը ժամա-նակ հոս մնալուդ համար ասանկ կուլաս:

Խրատ է ծոյլ մարդկանց որ գէշ մը բանով կը դրդնչան ու չեն նայիր գիշեր ցորեկ աշխատողնե-րուն վրայ: Գիտուններ ծոյլ մարդը կը նմանցը-նեն այն որ միայն ծանրութիւն մը ունի, ամենևին բա-նի չի գար:

Այս բընական բերք վատ տըրտնջողին
Թեթև նեղութիւնք նըման մեծք թուին.
Յայլոց մեծագոյնս եթէ հայէին,
Թեթևագունից յօժար տանէին:
Արդ փոքրագունից մատիր ՚ի զընին
Տես զխարդ ՚ի վիշտս տանջեալ վաստակին.
Յամօթ լեր ով վատ ընդ գործ քո չընչին,
Ուսիր զօրանալ ՚ի մեծագունին:

## ՀԱՒ ԵՒ ԾԻԾԱՌՆ

Զօտար սերմանս հար ըզքարի,
Եւ մի խառներ չարն ընդ բարի:

Գէշն աղէկին հետ չխառնես,
Չարը գէշին հետոռ ընես:

Մխթ. Օր մը հաւը կը գտնէ օձի հաւկիթ մը և հոգաբարձութիւն ընելով կը տաքցընէ որ ձագ հանէ: Աս տեսնելով ծիծեռնիկը զար-

մնացաւ անոր անխելքութեանը վրայ ։ Ով յիմար, կըսէր, ինչո՞ւ աս բանը կընես, չէյտե՞ս որ ձագերն ելածին պէս նախ քեզի պիտի սկսին մնաս տալ ։ Ան ատենը հաւը մտմտալով ըսաց ․ Աս ինչ յիմարութիւն է իմ ըրածս որ ատանկ օձ թշնամիս կը մնուցանեմ որ նախ ինծի մնաս տալով ձագերս պիտի կորսնցընէ ։

Մէջ պզտաւորութեան պէտք է նախ ծնողաց որ լաւ և անարատ վարք ընծայեցնեն իրենց անմեղ մանկանց ․ երկրորդ պէտք է վարժապետներուն որ թող չտան աշակերտաց որ սկսին անհաւատ աղանդաւորներուն բաները կարդալու ։

Զխարդ քաջ խորհի խոհեմ կենդանին,
Մի՛ լինիր առէ դարմանիչ չարին ․
Որոյ թոյն դըժնեայ 'ի ներքըս պահի,
Խայթէ և ժայթքէ երբ 'ի չափ աճի ։
Խըրատ է ծնողաց և քաջ վարժողին,
Անարատ պահել ըղձիւքս անմեղին ․
Որ խառնէ ըղթոյն քաղցր սընընդին՝
Կորուստ պատրաստէ իւր անմեղ դառին ։

## ԱՂԱՒՆԻ ԵՒ ԱՆՕԹ

*Արդ մի՛ անյագ բերկրիլ յուտել,*
*Զի մի՛ անկցիս 'ի վիշտս անել:*

Ուտել խմել շատ մի ցանկար,
Շատին մահուան ալ է պատճառ:

*միջ. Մէկ աղաւնի մը խիստ ծարաւցած ջուր կը՛նտռէր այնչափ բաղձանքով որ երբ տեսաւ պատին վրայ ջրի աման մը դըրած՝ շփոթութենէն կարծեց թէ իրաւ ջուր է. վեր ելաւ ուժով մը զարկաւ պատին վըրայի ամանին որ էյնի, բայց շատ զըջացաւ, վասն զի անանկ սաստիկ պատին զարկաւ թևերն ու ճխասուելով վար ընկաւ. և երբոր բռնուեցաւ կուլար թէ ափսոս իմ անխելքութեան որ կաթ մը ջուր խմելու համար՝ անմտութեամբ աս խեղճութեան մէջ զիս ձգեցի:*

Խրատ է անոնց որ առանց մտածելու իրենց ցանկութեան ետևէն անանկ կիյնին որ վտանգով կը կործանին: Ինչպէս որ դժոխքն ու կորուստը չեն կըշտանար, անանկ ալ ագահին աչքը, կուշտ չըլլար:

*Այսպէս որ անյագ տենչայ յըմպելին,*
*Անդէն կորնչի 'ի նոյն հեշտալին.*
*Զի բռնական կիրք կորստականին*
*Վաղ կարապետէ 'ի դուրս օրհասին:*

Արդ երբ տեսանես սրտիդ բերկրալին,
Մի փաղաքշեր անսանձ 'ի նմին.
Զափակցեալ զնիւս ըստ բանականին՝
Զքնաղ վայելես զերկնաձիր բարին:

# ԱՂՋԻԿ ԵՒ ԼԱԼԱԿԱՆՔ

*Բազումք առ սէր ոսկւոյն անբան*
*Անձին ըզգործս եղերական:*

Շատ մարդ ոսկւոյն համար կընէ
Լալու բաներ որ արժան չէ:

*Միտք. Մեծատուն մը երկու աղջիկ ունէր. ասոնց մէկը երբոր մեռաւ, լալկան կնիկներ բերին որ չարաչար ողբ կընէին. մէկալ աղջիկը տեսնելով անոնց չափազանց լացը՝ կը զարմանար թէ աս ինչ խեղճութիւն է. ոհ մեզի պէտք է, կըսէր, ասանկ լալ հարկաւ՝ որ կսկիծը մերն է, չէ թէ ասոնց որ ասանկ սաստիկ կուլան: Պատասխանեց մայրը թէ մի զարմանար, որդեակ, ասոնց խեղճ լացին վրայ՝ որովհետև ստըկի համար կընեն, ստըկին ուժն է որ կը լացընէ՝ չէ թէ կսկիծը:*

Շատ մարդիկ կան որ արծաթասիրութենէ և ագահութենէ համար լալու բաներ կընեն ու չեն իմանար, վասն զի ցանկութիւնը մտքերնին կը խաւարէ:

Այս գործս է այժմեան դարու տխմածին
Յոր 'ի սէր օգտի գործեն զեղծելին.
Աչք ամենեցուն են յանբան ոսկին,
Մխոք ամենեցուն ձգել զայն յանձին:
Զի՞նչ ինչ կործանէ գիրս հողագնտին՝
Ի սուսեր մաշէ մարդիկ երկրածին,
Բայց աշխարհակուլ այս հրահալելին
Որ զաշխարհս ողջոյն գործէ լալագին:

## ՀՈՎԻՒ ԵՒ ՈՉԽԱՐՔ

Զարիս խորհել բարերարին
Գործ է տխմար ապերախտին:

Բարերարին չար մի՛ ուզեր,
Որ քեզ հասնին բարի օրեր:

Մաղ. Մէկ հովիւ մը ոչխարներն անտառը տարաւ, և կաղնի ծառին տակը հանեց իր լաթը փռեց. ելաւ ծառին վրայ որ պտուղը վար թափէ, բայց ոչխարները պտուղն ուտելու առնելն անոր լաթն ալ միատեղ կերան: Իսկ հովիւը երբոր վար իջաւ տեսաւ որ լաթերը չկան, ով անզգամ կենդանիներ, ըսաց, դուք ուրիշներուն բուրդ կուտաք որ լաթ շինեն՝ իմ լաթերս կուտէք որ ձեզ այսչափ կը խնամեմ:

Կան անանկ մարդիկ որ հարկաւոր մարդուն և իրենց ընտանեացը սէր և բարիք մը չեն ուզեր ընել՝ օտար անարժաններուն կընեն որ փուճ կերթայ ։ Ո՜վ որ բարերարին չար հատուցում կընէ՝ չարն իր տնէն չի պակսիր, կըսէ իմաստունը ։

*Անօգուտ տխմարք յայս միտս բերին ,*
*Թողեալ զընտանիս օգնեն օտարին ․*
*Ի զի դառնացեալ բանիւ նենգողին*
*Ընդդէմ ելանեն խընամակալին ։*
*Խակամիտ մանկանց խըրատ է անգին*
*Զընկեր և զօտար ոչ ճանաչողին ․*
*Որ մերժեն խոտեն գութ խնամարկուին ,*
*Անկանին 'ի ձեռս ոխերիմ չարին ։*

## ՀԱՒ ԵՒ ՁԱԳՔ ԻՒՐ

*Չիք ապահով պատսպարան*
*Իբրև ամուր հնազանդութեան ։*

Մտիր բերդը հնազանդութեան ,
Քեզ չի մօտիր վտանգ բան ։

*Միթ ․ Երբեմն հաւը ձագերն առած հեռուն գնաց ուտելու բան գտնելու համար ․ տեսաւ որ ուրուրը կը պտըտի օդին մէջ անոր մանտր ձագերն յափշտակելու համար՝ մէկէն կանչեց քովը զանոնք ու թևերուն տակը պահելով ազատեց թշնամւոյն ձեռքէն ։ Իսկ ձագերը տեսան որ ուրուրը հե-*

ուացաւ , Եղան ինքնագլուխ կը պտըտէին · քիչ մը ատենէն եւս նորէն եկաւ ուրուրը , հաւը նորէն կանչեց ձագերն որ գան Թեւին տակը պահուէին · որոնք որ հնազանդեցան եկան մօրը Թեւին տակը մտան՝ ազատեցան , իսկ անոնք որ չուզեցին մօրերնուն հնազան_ դիլ և քովը գալ՝ ընկան Թշնամւոյն ճանկը կորան :

Խրատ է մանկանց որոնք որչափ հնազանդ են ծնո_ ղաց և իրենց մեծին՝ միշտ աղէկ կըլլան · իսկ ան_ հնազանդ եղածներն այնչափ կը կորսուին :

Որդին հնազանդ ծնողաց ձայնին՝
Քաջ պատսպարի ընդ Թեւօք նորին ·
Ճիրանք և մագիլք դժնեայ ոսոխին
Ոչինչ վէրս ածեն 'ի վերայ նմին :
Իսկ որ անհաւան գտանի նմին ,
Ինքնակամ՝ շրջի ուր կամք իւր բերին ,
Երագէ ինքեան ճիրան գազանին ,
Մանրեալ կործանի 'ի նոյն դառնագին :

## ՊԱՐՏԻԶՊԱՆ ԵՒ ՄՈՒԿՆ

*Գործ վնասաբեր զօշաքաղին*
*Է միշտ քաղել զօգուտն անձին։*

Շահասէր մարդն ամէն բանէ
Միայն իրեն շահ կը քաղէ։

*Մուկ. Պարտիզպանը էգիին մէջ մէկ մուկ մը կը բռնէ. երբոր պիտի մեռցընէր, սկսաւ մուկն աղաչել թէ մի սպաններ զիս՝ մեղք կը գործես. վասն զի ես քու ծառադ եմ, միշտ քեզի համար կաշխատիմ ու գիշեր ցորեկ գետինը կը փորեմ առանց վարձքի և հօղն ալ ուրիշ տեղ մը չեմ տանիր։ Պատասխանեց պարտիզպանը թէ ինչ որ ընես՝ միայն քու շահիդ համար կաշխատիս, և քեզի օգուտ ըլլալու համար աշխըրքի վնաս կուտաս. աս պատճառաւ պէտք է որ դուն անպատճառ մեռնիս։*

Ամէն գործքի մէջ պէտք է դիտաւորութիւնը նայել գործողին. շատ բան կայ որ ինքը չար չէ, բայց չար վախճանով ըլլալուն համար չար կըլլայ։

*Դժնեայ զօշաքաղք զանձանց շահ խորհին,*
*Ի վնաս այլոց բերին խնդագին.*
*Բայց երբ գործ իւրեանց յերեան ածին՝*
*Անօգուտ լինել ջանան յաւէնին։*

Ո՞ւր յայնժամ լսող ձայնի զըկողին ,
Ինքեան դատախազ նոյն իսկ գործ անձին ·
Զի գործք թէ չլցեն կարգեալ 'ի վախճան,
Հարկաւ կործանիլ կայ 'ի վախճանին :

# ԱՂՈՒԷՍ ԵՒ ՇՈՒՆ

Որ վասն այլոց չարիս խորհի ,
Չարագունին ինքն հանդիպի :

Թէ որ այլոց չար ուզենաս ,
Մէծ չարերու կը տիրանաս :

Միթ. Մէկ աղուէս մը խորամանկութե̄ մեռել ձեւացաւ , և դաշտին մէջ ընկած մնաց որ թռչունները մօտենալով իրեն առանց աշխատանաց բռնէ զանոնք ուտէ : Բայց ըրած խաբէութիւնը գլուխը կերաւ · վասն զի շուն մը դիպուածով անցաւ անկէ , տեսաւ որ աղուէսը փռուեր պառկեր է՝ մէկէն վրան վազեց սպաննեց · երբոր կը մեռնէր , կըսէր ողորմելին · ուրիշները խաբել ուզելուս համար ահա ես խաբուեցայ և ըրածս գտայ · Ճշմարիտ է եղեր թէ ինչ որ ընես՝ ան կը գտնես :

Որչափ խորամանկ ըլլաս ու խորագէտ՝ այնչափ քեզմէ խորամանկին կը պատահիս · դառն ինչ չարութիւն որ կը մտածէիր ուրիշին՝ քուկդ ալ գլխուդ գայ , զի անզգամին խորհուրդը չար է :

Զոր ինչ ոք խորհի առնել ընկերին ,
՚Նոյն վերադառնայ յիւր ներգործողին .
Զի գործ 'ի պատճառ բերին հոլովին ,
Թէ վատ թէ ընտիր յայն կեդրոն յանկին :
Իսկ քեզ մտախոհ վիճակեալ բանին ,
Ի ճահ է աննենգ վարիլ ընդ մանկտին .
Որչափ խորամանկ գտցիս ընդ այլոց ,
Ի նոյն ըմբռնեալ մանրիս դառնագին :

## ՇՈՒՆ ԵՒ ՏԷՐՆ

Պահել ղքոյս թէ չես արթուն ,
Զիմ՞րդ յայլոց խնդրես զնոյն :

Թէ չէս հոգար դուռն քու բարէն ,
Ինչ շահ կընէ հոգն ուրիշին :

ՃԾ . Մէկ մարդ մը շատ հաւ կը պահէր հաւնոցին մէջ. գիշեր մը մոռցաւ հաւնոցին դուռը փակելու, ուստի աղուէսը գիշերն եկաւ բոլոր հաւերը խղդեց : Առաւօտուն երբոր տեսաւ տէրն աս եղած վնասը՝ սաստիկ բարկանալով սկսաւ շունը ծեծել թէ ինչո՞ւ համար անհոգ կեցար նայելու որ աղուէսը զանոնք խղդեց : Պատասխան տըւաւ շունը, թէ տէր իմ, դուն առանց պատճառի զիս կը ծեծես, որովհետև և թէ դուն անհոգ եղար քու հաւերդ նայելու, և չիմտածելով դուռը բաց թողուցիր՝ որոնցմէ այդչափ շահ ունէիր, ինչ կուզէիր որ ես

ընեմ. դուն քու պխտուական բանդ չինայե-
լէն ետև ես ինչպէս պխտի նայիմ։

Օրհնեալ է ծոյլ մարդը որ իր բանին հոգ ընդու-
նելով աշխարհին յետոյ կը մնայ, և կուզէ որ աշխարհ
ըստ իրեն գործէ իրեն բանը, ըսելու թէ աշխարհն ըստ
ըլլայ։

Անիրաւ դատմունք զանցառու հեղցին
Որ յայլոց վերայ ձըգէ մեղս անձին.
Զոր ինքեան անկ էր առնել ըստ կարգին,
Թողու հեղգութեամբ առնել օտարին։
Թէ դու չես, ով վատ, հոգածու անձին,
Հիմ յայլոց խընդրես հոգ տանիլ նըմին.
Եւ եթէ դու քեզ չես հաւատարիմ,
Ո՞վ ոք քեզ լիցի բարեկամ ներքին։

ՀՈՒՆ ԵՒ ԻՐ

Չէ վեհապանծ տեսն արտաքին՝
Թէ համարուն չիցէ ներքին։

Դուրսէն փայլը բան մը չարժէ,
Թէ որ ներսէն միտքն անարժ է։

մծա. Տունը գայլին հետ պատերազմ
ունէր. տեսաւ որ գլուխ պխտի չիկրնայ ել-
նել. ուզեց ընկեր մը գտնել որ անով թըշ-
նամւոյն յաղթէ։ Ասա օր մը հանդիպեցաւ
ձիուն որ կը զըռար, և վրայի համետը (սէմ-

ըը) զէնք կարծեց. Նայեցաւ որ ձայնն ալ շատ զօրաւոր է՝ միտքը դրաւ թէ խշուն պէս ուժով և քաջ կենդանի չիկայ. ուստի իրեն ընկեր ըրաւ ու միատեղ գնաց գայլին հետ պատերազմելու : Բայց էշը երբոր տեսաւ հեռուէն գայլը՝ սիրտը փրթելով մէկէն փախաւ թողուց շունը մինակ : Իսկ շունը զարմանալով կըսէր եանէն, թէ մեղք ատ ձայնիդ ու տեսքիդ որ սիրտ չունիս. ուրեմն դրսի տեսքին նայելու չէ եղեր, հապա ներսի սրտին :

Խրատ է անոնց որ մեծախօս և մեծագլուխ մարդը մեծ կը համարին. վասն զի մարդուս մեծութիւնը որպէս և հոգւոյն վերայ է՝ ոչ թէ մարմնոյն :

Ռամկական մըտաց այս ծնունդ յետին՝
Որ միայն դատի տեսլեամբ արտաքին .
Յորժամ տեսանէ զպայլթանդամ մարմին ,
Կարծէ զերկնածին ոգիս 'ի սըրտին :
Իսկ իմաստնոց է կշռել զներքին ,
Վասն 'ի վառ ճրագ փայլի 'ի նմին .
Զի այնու մարդն է անյաղթ 'ի մարտին ,
Եւ ոչ անարի դիմօքն ահագին :

## ՍԱՐԵԱԿ ԵՒ ՏԱՏՐԱԿ

*Մի՛ լինչ գըրեր ըձայն ձոռումին ,*
*Երկի՛ր յաւէտ որ կայ լռին :*

Շատ խօսողէն դուն մի՛ հաւնար ,
Անկէ հաւնէ՛ր որ լաւ խորհի :

*մծէ.* **Ս***արեակը տատրակին հետ ընկեր ըլլալով՝ տեսաւ ուրուրն որ օդին մէջ կերթար զարհուրելի ձայն հանելով լինչպէս որ սովորութին է իրեն. տար ձայնէն այնչափ ստսկաց որ գողալով կըսէր տատրակին, թէ նայէ լինչպէս սաստիկ սպառնալով կերթայ ուրուրը, ես խիստ կը վախնամ՝ աս ձայնէն : Պատասխան տուաւ տատրակը, թէ մի՛ վախնար անանկ ձայներէն, վասն զի աս սպառնալիքս մեզի համար չէ, հապա մինելուն և հաւի ձագերուն համար է. մենք պէտք է աւելի վախնանք սուսիկ բազէին ճանկերէն՝ որ ձայնէն առաջ մեզի կը հասնին:*

Աւելի պէտք է չխօսողէն վախնալ՝ քան թէ մեծախօսէն. վասն զի մէկին գործքը խօսքէն առաջ կը կատարուի, իսկ մէկալին ձայնը առանց գործքի կը սպառնայ :

*Գեղեցիկ խրատ խոհեմ տատրակին ,*
*Զգոյշ կաց , ասէ , որ լռիկ նըստին .*

Զի փոխան գործոց բանքն են ճռուամին,
Իսկ փոխան բանից գործքն են անխօսին:
Արդ մի երկնչիր 'ի ձայնէ ուժգին,
Մի 'ի սպառնալեաց անգործ զրախօսին.
Պատճառ կայ յաւէտ անձայն գործողին,
Որ նախ քան ըզձայն արդիւնք վըճարին:

## ՓԱՐԹԱՄ ԵՒ ԱԶԳԱԿԱՆ

Որ յոյժ տենչայ յանուլ զբոլոր,
Կորուսանէ զըարին բոլոր:

Ով որ բոլորն առնել կուզէ,
Քիչն ու շատը ձեռքէն կելլէ:

մծզ. Հարուստ մարդ մը իր գանձը տարաւ ծածուկ անտառին մէջ թաղեց մարդ չիմացաւ. մինակ իր մէկ ազգականը գիտէր՝ որ գիշերանց գնաց ոսկիները հանեց գողցաւ: Ատեն անցաւ երբոր եկաւ տէրն իր գանձը նայելու՝ տեսաւ որ չիկայ, հասկըցաւ թէ իր ազգականն է գողցեր, մտածեց անանկ խելք մը բանեցընել որ ոսկին տեղն երթայ: Ուստի կանչեց ազգականն ըսաց, թէ կաղաչեմ վաղը մէկտեղ երթանք անտառը փորենք գանձս եղած տեղն ու հազար ոսկի ալ նորէն թաղենք: Նոյնս գիշերանց ազգականն առաւ գողցած ոսկիները տարաւ տեղը դրաւ որ ան հազար ոսկին ալ տէրը թաղէ հոն՝ անկէ ետև բոլորը յափշտակէ:

Իսկ հարուստը երբոր գնաց գտաւ գանձը՝ վերցուց տարաւ տուն :

Ով որ ցանկանալով [illegible] կը ձգէ [illegible] բոլորին ե-տեւէն կէսին՝ բոլորէն կը զրկուի ու ունեցածն ալ կը կորսընցնէ :

Այսպէս որ անյագ ցանկայ բոլորին ,
Վաղ կորուսանէ որ կայ 'ի ձեռին․
Զի երբ ոչ գիտէ բերկրիլ 'ի մասին ,
Վրիպի բերկրել 'ի բոլոր բարին :
Մի ցանկար շատին մի չափազանցին ,
Զի մի զրկեսցիս 'ի չափաւորին․
Հրճուեա ընդ բարիս նշխարեալ անձին ,
Նորանոր բարիք քեզ վերադրեսցին :

## ՈՉԽԱՐ ԵՒ ՇՈՒՆ

Ծանր է կրել վիշտս յընկերէն
Քան յոխերիմ դիմամարտէն :

Շատ կը ցաւի վէրքն ընկերին
Քան խորամանկ խոց թշնամին :

ՄԾԷ․ Գայլը երբեմն ոչխար մը բռնեց․ իսկ ոչխարն ամենեւին ձայն չէհաներ կեցաւ․ գայլը ապահով ըլլալով ոչխարին վրայ երբոր ասդին անդին ժուռ կուգար , կերպով մը ոչխարը փախաւ ազատեցաւ գայլին ձեռքէն ու ընկաւ շան մը ձեռք․ բայց շունն որ

զինքը բռնեց՝ անանկ սաստիկ պոռաց որ հովիւը ձայնն առաւ հոն հասաւ ազատեց շանը բերնէն : Ինչո՞ւ համար, ըսաց հովիւը, երբոր գայլը քեզ բռնեց ձայն չհանեցիր, ու շունն որ բռնեց բոլոր ուժովդ պոռացիր : Պատասխան տուաւ ոչխարը թէ աւելի դժուարեցայ երբոր շնէն միաս տեսայ՝ քան թէ գայլէն, վասն զի գայլը 'ի բնէ մեր թշնամին է, իսկ շունը պահապան ըլլալով տեսայ թէ պահապանը թշնամութիւն կընէ՝ շատ դժուարելով պոռացի :

Շատ դիւրին է մեզ և ներողութի՛ ընել բարեկամին և աղքատին քան թէ օտարին, վասն զի բարեկամին կը վայլէ բարութիւն գտանել՝ չէ թէ չարութիւն :

Այս դժընդակ են վէրք մըտերմին
Որ յանկարծ խոցեն զսիրտ բարեկամին ․
Եթէ թըշնամին լինէր ոխերիմ՝
Ոչ յոյժ մորմոքեալ ցաւ գործէր խորին :
Խըրատ վայելուչ ընկերականին,
Մխամիտ սիրել զընկեր գըրացին ․
Բարք է անհամբոյր գաղանականին,
Որ զսիրան խոցէ որպէս թշնամին :

## ՀԱՒՈՐՍ ԵՒ ԵՂՋԵՐՈՒԿ

*Արդ մի խորշիր տանիլ փոքուն ,*
*Զի մի անկցիս 'ի մեծագոյնն :*

Եթէ փոքրը փախչիս դուն ,
Մեծ նեղութեան մէջ կեր կը իյնես :

*ճծե · Հաւորսը բռնեց եղջերուկ թըռչունը , և ոտքը չուան կապեց տանը մէջ կը պահէր · իսկ թռչունը գժուարելով մարդու քով կենալու՝ չուանն ոտքը թաւ գընաց իր բունը նստաւ · բայց չուանը ծառին փաթթուելով արգիլուեցաւ , ու չկրցաւ անկէ թռչիլ : Ուստի կերակուր չէր գտներ ուտելու · երբոր անօթի կը մեռնէր՝ սկսաւ ինքը զինքը մեղադրելով ըսել · աւաղ ողորմելույս , ես չհամբերեցի մարդու ծառայութիւն ընելու՝ ահա անմտութեամբ կը մեռնիմ · որչափ որ կամեցայ ազատ ըլլալ՝ չարաչար կապուեցայ , վասն զի կապով փախչիլն աւելի վնասակար է եղեր քան թէ գերի ըլլալը :*

Խրատ է անոնց որ պզտիկ նեղութենէն փախչելու համար շատ անգամ մեծին մէջ կիյնին , ինչպէս առանց նեղութեան կեանք ըլլայ : Նաեւ աս առակէս կրնան խրատ առնել եկեղեցականները և վարդապետներն որ աշխարհին կապէն կը փախչին · Երբ ալ-

Խորթին հետ որդերնին կապած ըլլայ, Հայ է ի-րենց :

*Կրրել յաշխարհի վիշտ տըրտմաբերին,*
*Հարկ 'ի սկըզբանէ եղաւ մահացուին.*
*Որ 'ի բաց փախչի տանիլ թեթեւին,*
*Նըմին հասանէ ծանր անտանելին :*
*Մարդ ժառանգաւոր տըրտմական մասին,*
*Մի՛ օտար գըրեր զոր քեզ պատշաճին.*
*Եթէ գոհ տանիս՝ ծանունք թեթեւին,*
*Թէ փոքունց անգոհ քեզ ծանրաբեռնին :*

## ԿՐԻԱՑ ԵՒ ԳՈՐՏՔ

*Մի՛ մեղադրեր զխուլթիւնն արդար,*
*Թէ հիմ հանուրց բարիս չարար :*

Մէ՛ տրտմէր ըէ մեծ բան չունիս ,
Թէ չու կընէիս չապ բան ունիս :

*Ճծզ.* **Կ***րիան տեսաւ որ գորտերն արագ արագ կը ցատկէին՝ տրտնջալով ըսաց թէ ինչո՞ւ համար բնութիւնը տուեր է անոնց ա-նանկ արագութիւն և իրեն անանկ ծանրութիւն որ բեռան տակ ըլլալով կամաց կամաց քարշ կուգայ: Բայց օր մը տեսաւ որ արագիլը մտեր է լճին մէջն ու մէկիկ մէկիկ զանոնք ջարդէ կուտէ՝ սկսաւ զինքը մխիթարելով ըսել թէ ես խենթ եմ որ կը մեղադրեմ արդար բնութեանը որ ինծի տանիկ մէկ լաւ*

շէնք մը տուեր է, որով աս վտանգներէս ա-զատ եմ և բանէ մը վախ չունիմ:

Օրինակ է անմիտ ռամիկներուն որ մէկին վրայ բարի բան մը տեսածնուն պէս կը տրտնջան թէ մենք չունինք, չգիտեն թէ Ա՟ծ ամենուն արդար բաշխեր է. ով որ շատ բարիք ունի, շատ ալ նեղութիւն ունի:

Այս բերք են մտաց անխորհուրդ ռամկին ,
Որ պշնու ցանկայ ընդ այլոց բարին.
Երբ գեղեցիկ ինչ գիտէ յօտարին ,
Կարծէ զինքըն զիրկ յիրաց բնաւին :
Մի՛ լինիր չարակն յընկեր դրացին ,
Քոյդ չեն փոքր օժիտք նկատեալ յանձին.
Եթէ մի՛ ակամբ դիտես ձիրս այլոց ,
Միւսով տես չարիս բնակցեալ նմին :

ԱՌՆԷՏՔ ԵՒ ԿԱՂՆԻ

Որ ոչ խորհի զգործոց վախճան ,
Զղջայ կրէ ցաւս անվախճան :

Բան մը ըրած վերջը քննէ ,
Ետքի ցաւը օգուտ ընէ :

մծէ. Առնէտներն աշխատանքէ փախչելու համար խորհուրդ ըրին իրենց մէջ որ կաղնի ծառին արմատները կրծելով վար ձգեն , որ ելլելու իջնելու նեղութենէն չի-

քաշելով վարէն ուտէն պտուղները ։ Բայց տանից մէջէն մէկ ծեր մը պատասխան տըւաւ , թէ մենք հիմա մեզի կերակուր տըւողն որ կտրենք՝ հապա եկած տարի ով մեզի կերակուր պիտի տայ ․ քիչ մը ներողութիւն չքաշելու համար ինչ խելքով զմեզ սնուցանողը պիտի վար ձգէք ․ գնացէք բաներնիդ , աս միտքը մէկ բանին եղքը չիմացողներէն կուգայ ։

Անմիտն է կարդալ նման ճպուռին որ ծառին դալար կանչէ ամառը, իսկ ձմեռը կրնէն թէ ինչ ամէն թմրած կը ծայ բան ըսածէր ։ Օրինակ բերած է անմիտ մարդկանց որ եփէր ընմատծելով բան կրնէն ։

Այսպէս որ կշռէ զսկիզբն և զվախճան՝
  Կանխաւ գուշակէ զանգոյ ապագայն ․
  Որով միշտ առնէ գործ աներկևան ,
  Ոչինչ վրիպի անձն խոհական ։
Արդ մի անխորհուրդ առներ գործս համայն ,
  Այլ որիչ մտօք քննեա զապագայն ․
  Զի նախկին պատճառն է վախճանական ,
  Ոյր սակս եղանին բնաւք եղական ։

## ՁԻՆՈՒՈՐ ԵՒ ՁԻ

*Նորասիրաց նորն է սիրուն,*
*Ընտրեն զնորն հինըն թողուն:*

Փորձած բաներէն ետ մի կենար,
Մ՚ապէր հինը նորին համար:

*Առակ. Մէկ զինուոր մը սրավար ձի մը ունէր որ երկան ժամանակ իրեն լաւ ծառայութիւն ըրեր էր ամէն բանի մէջ. իսկ զինուորը նորէն ուրիշ ձի մը գնեց որ անշահ ըլլալով մէկալ ձիէն շատ վար էր: Սակայն տէրը նոր գնած ձին առջինէն շատ փափուկ կը պահէր և մեծ գութ ունէր վրան: Օր մը անշահ ձին ըսաց լաւ ձիուն, Թէ դուն ինծմէ շատ զօրաւոր ես և լաւ ծառայութիւն կընես, բայց մեր տէրը զիս քեզմէ շատ կը սիրէ ու խնամ լաւ կընայի: Ան ալ պատասխան տուաւ թէ զարմանք բան չէ, որովհետև սովորութիւն է մարդկանց հինը ձգել նորը սիրել:*

Օրինակ է մարդկային մտաց անհաստատութեան որ սովոր են նորը սիրել և հինէն ձեռ քաշել՝ Թէպէտ գէշ ըլլայ. սակայն նորասիրութիւն մեծ մեծ վնասներ բերեր է շատ մարդոց:

Ահա նշանակ անհաստատ սրտին ,
Որ ընտրէ զնորն առէ զընտրելին ․
Ոչինչ համարի հընութիւնն անգին
Անհաստուն մտաց այն նորասիրին ։
Նորասիրութեամբ թէ մերժես զհինն ,
Յեղաշարժ ոգիս ցուցանես յանձին ․
Հնագիտութեամբ թէ զննես զնորն ,
Հնոց և նորոց գոս հետաքննին ։

## ԳԱՅԼ ԳԱՌՆԱԶԳԵՍՏ

Բազում գառինք ըստ արտաքնոյն ,
Այլ քանաւոր գայլ ըստ ներքնոյն ։

Շատ դուրսէն գառն է անմեղ,
Սակայն ներսն է գայլն ահեղ։

մծթ․ Երբեմն գայլը վրան առաւ ոսկարին մորթը (փէրէն) գնաց ոսկարներուն մէջ խառնուեցաւ , և ամէն օր մէյմէկ ոսկար կուտեր ։ Տէրն որ իմացաւ սպաննեց զգայլն ու անանկ մորթը վրան կախեց ծառէն ։ Երբոր հովիւները կը հարցնէին , թէ ինչու համար ոսկարը կախեր ես ծառէն , պատասխան կուտար թէ մորթն որ կը տեսնէք իրաւ ոսկարի է , բայց ինքը գայլ է ․ երեւցածը անմեղ գառն է , ներսը պատառող գայլ է ։ Ուստի գրքինը մի նայիք՝ ներսինը նայեցէք որ աս անմեղ կերպարանքով այնչափ ոսկարներս կերաւ ։

Օրինակ է կեղծաւոր և խաբեբայ մարդկանց որ սուրբ երևնալով ուրիշին փառքը կուրեն. բայց օր մը խայտառակ կըլլայ իրենց կեղծաւորութիւնը:

Այսպէս կեղծաւորք զերթ փարիսեցին
Արդար ձևանան ձևովն արտաքին.
Քաղցրաթոյն բանիւ մաքուր երևին,
Այլ 'ի ներքոյ են գաղան գառնագին:
Արդ մի հաւատար կեղծութեանց նոցին՝
Որոց այլ է սիրտ այլ ինչ 'ի լեզուին,
Մի քեզ բարեձև գաղանք մերձեսցին,
Զի մի ծախեսցիս յանդուլթ որկորին:

## ՁԻԹԵՆԻ ԵՒ ԴԴՄԵՆԻ

Որ փոյթ ցոլայ վաղ շիջանի,
Կանխաբողբոջն անդէն խամրի:

Շուտ բուսածը շուտ կը չորնայ,
Ուշ հասածը կը դիմանայ:

Մէկ. Ձիթենին կը զարմանար դդմին վրայ որ քովը բուսած էր, թէ ինչպէս քիչ ժամանակին մէջ այնչափ աճեցաւ մինչև զինքն անցաւ երկայնութեամբ որ քսան տարի առաջ էր տնկած: Բայց շատ չանցաւ՝ տեսաւ որ ձմեռուան մօտ չորցաւ դդումը. անատենը ձիթենին միտքը փոխեց ու ըսաց. Իրաւի յիմարութեն է նախանձիլ սանկ շուտ

*աճողներուն վրայ, վն զի մեկէն մեծցողը՝ շուտ ալ կը կորսուի եղեր: Ուրեմն շատ աղեկ է կամաց կամաց աճիլ ու շատ մնալ, քան թէ շուտ աճիլ ու շուտ չորնալ:*

Շողոմողեղած բանը շատ չի տևեր կանուխ, ատա-
տի պէտքը չէ ծածկուել ամէն բանի մէջ որ ըրելայ ըէ
ՙՆերքը ընտանեացուել ճարտար մէկէն, Հիմա ալ խորհըր-
դողեղած բանը՝ ծածկող ընտրեր շատ կը դժուարայ:

*Զինչ օգուտ պանծալ Ճոխանալ հեշտին,*
*Ընդ փոյթ նուաղեալ խամրիլ գլխովըն ·*
*Լաւ է անազան աճիլ ՚ի չափին,*
*Յերկարել մնալ ՚ի նոյն վիճակին:*
*Մի՛ ցանկար փառաց փոխատականին*
*Որ փոյթ ցոլացեալ անդրէն խաւարին,*
*Փառք են տիրապէս փառք հոգեկանին,*
*Որ փայլին ընդ ձիգս յանծայր շրջանին:*

## ՇՈՒՆ ԵՒ ԾԱՌԱՅ

*Երբ ոք տըրէ ջրով ջերմին,*
*Խիթայ մերձիլ ՚ի ջուր ցրտին:*

Եռած ջրեան վախկոտ կըլլայ,
Պաղ ջրէն ալ չի մօտենայ:

*Մկն.* Պ*արտէզի մը տան մէկ շուն մը կար որ ամէն անգամ երբոր անձրև կուգար՝ դըր-*

նէն դուրս չէր ելլէր ծակերը կը մննէր. որ մը տանը ծառան ուզեց շունը դուրս ընել անձրևի առեն. կաղաչէր շունն որ քիչ մը առեն ատայ իրեն մինչև որ անձրևն անցնի. վան զի առանց պատճառի չէ կըսէր սա ըրածս : Ան ալ հարցուց թէ ինչ է պատճառն որ անձրևի առեն դուրս չես ելլեր : Պատասխանեց թէ մեկ անգամ մը գինուածով տաք ջրին մօտեցայ կռնակիս կաշին խաշեց, անոր համար պաղ ջրէն ալ կը վախնամ:

Ընտիր օրինակ է զգուշաւոր մարդու որ եթէ մէկ բանէ մը վնաս քաշէ՝ ամէն բանէն զգուշութինէ որ նորէն վնաս մը չքաշէ :

Գեղեցիկ համճար մտաց փորձառութին,
Լուրջ կայ չփորձիլ 'ի նոյն վերատին.
Եթէ ոք փորձի 'ի միում առթի՝
Պարտի արթուն կալ յամենայն առթին :
Պատշաճ յորդորակ ժիր պատանեկին
Առ 'ի հեռանալ յառթից վտանգին .
Թէ առարկային ինչ փորձեաց զքեզ դիւրին՝
Մի անփորձ մերձիր յիր ինչ բնաւին :

## ՀԱՒՈՐՍ ԵՒ ՄԱՆՈՒԿ

*Մի՛տք տղայոց չե՛ն խոհական,*
*Զոր ինչ լսեն այնպէս գիտեն ։*

Խաբէբայ բան ըսէք փոքուն,
Անմեղ խօսքն է անմեղաց թոյն ։

*Մկն․ Հաւորը զարկաւ տասը թռչուն, ու շամբուրին անցուց տուաւ տղուն որ խորվէ մինչև ինքը գայ․ բայց երթալու ատենն ապսպրեց որ զգոյշ կենայ չըլլայ թէ մոխրին մէջ ձգէ, թէ չէ՝ բոլորը քէզի կը կերցընեմ կըսէր ։ Թռչունները դրեթէ խորված էին՝ դիպուածով տղուն ձեռքէն ընկան մոխրին մէջ ։ Տղան ալ տիրոջը խօսքին նայելով սկսաւ ուտել․ ինը հատը կերաւ կշտացաւ, մէկ հատը չկրցաւ ուտել ։ Երբոր տէրն եկաւ՝ սկսաւ տղան լալ․ ան ալ հարցուց թէ ինչու համար կուլաս․ պատասխանեց թէ յանկարծակի թռչունները ձեռքէս ընկան, ես ալ ինը հատը կերայ մէկը չկրցայ ուտել․ կաղաչեմ մի բարկանար, վասն զի խիստ կշտացայ ։ Ան ատենը հաւորը ծիծաղելով ըսաւ՝ թէ շատ զգուշութեան պէտք է եղեր տղոց բան հասկըցընելու ։*

Տղոց բնութիւնը պարզամիտ ըլլալուն շատ զգուշու-

Թէ պէտք է վարուիլ հետերնին ու գէշ օրինակ չի_տալ իրենց խաբէական խօսերով։ Նաև կըսէ թէ խելացիներուն հետ ելլողը խելացի կըլլայ, ան_զգամին հետ ելլողն անզգամ։

Է խոհեմ մտաց վարիլ ընդ մանկանն
Կըշռել և խօսիլ առաջի նոցին.
Զի Թերակատար միտք մանկականին
Զոր ինչ և լսէ գըրէ 'ի սրտին։
Մի խօսիր խարդախ և կամ զանտեղին,
Զի մի չարուսոյց լիցիս անմեղին.
Խօսեաց պարզ արդար ըստ հոգեկանին,
Օրինակ բարեաց եղիր համբակին։

## ԴԻՈՍ ԵՒ ԿԱՊԻԿ

Իւրաքանչիւրն իւրով բերկրի,
Զի ամենից իւրն է բարի։

Ամէն մարդու իրն է աղւոր,
Թէ ու ըլլայ պախարակաւոր։

Մկզ. Դիոս ուզեց իմանալ թէ, ամէն կենդանիներուն մէջ որուն ձագն աւելի գեղեցիկ է. հրաման հանեց որ ամէն կեն_դանի իր ձագն առնէ գայ. ուստի ամէնքն իրենց ձագերովը եկան ժողվեցան. կապիկն ալ իր ձագը հօն բերաւ։ Իսկ Դիոս անոնց վրայ նայելով սկսաւ ծիծաղիլ. երբոր կա_պիկը տեսաւ Դիոսին ծիծաղ երեսը՝ ուրա_

խանալով կըսէր թէ իմ ձագս ամենէն գե-
ղեցիկ տեսաւ Դիոս, անոր համար կը
խնամայ։

Խելացի մարդն իրեն ունեցածը բանի տեղ չը-
դնելով՝ ուրիշին կը նայի որ իրենն ու կատարելա-
գործէ. Հապա ոչ անխելք մարդիկ միայն իրենց
բանին կը հաւնին։ Սոկրատ փիլիսոփային հարցու-
ցին թէ ո՞ր կենդանին գեղեցիկ է. ան ալ պատաս-
խան տուաւ թէ խրատուած [illegible] մարդը։

Անմիտ ինքնասէրք նըմանեալ կապկի,
Զոր ինչ և ունին համարին յարգի.
Ոչ հային յայլոց բարին ցանկալի
Զիւրեանցն 'ի կատար բերել անթերի։
Տես քանի՛ չքնաղ յօտարս երևի
Զանազան օժիտ ձիրք առաքինի.
Կրթեա զքոյդ ծնունդ գործով պանծալի,
Պայծառ փայլեցո այլոց առաջի։

## ՍԱՐԴ ԵՒ ԾԻԾԱՌՆ ․

Մի զքեզ գներ վեհ յաղթական ,
Զի մի վեհից լիցիս կոխան ։

[illegible]
[illegible]

Մկզ ․ Մամուկը տեսաւ թէ ծիծեռնիկը վեր վար օդին մէջ թռչելով ճանճերը կուտէ իրեն բան չի մնար՝ ուզեց որ բռնէ ․ ուստի իրեն թելերէն որոգայթ մը լարեց ծիծեռնիկին ճամբուն վրան որ ճանճի պէս բռնուի ․ բայց երբոր ծիծեռնիկն անկէ անցաւ , ոչ միայն պատռեց աւրեց անոր որոգայթը , այլ և մամուկն ալ հետը տարաւ զարկաւ պատին ճզմեց , որ երբոր կը մեռնէր՝ կուլար թէ իմ մահս ես ձեռքովս պատճառեցի , ճանճին յաղթելովս կարծէի թէ մեծ կենդանիներուն ալ պիտի յաղթեմ ։ Ահա իմ տկարութիւնս չիճանչնալուս համար արժանի եղայ աս պատուհասիս ։

[illegible]

Այսպէս ամբարիշտք կըրեն զարժանին
Ուչինչ չափելով զօրութեն անձին․
Երբ իշխեն փոքունց ընդ վեհից կռուին
Ցորոց և անդէն կոխին ստակին ։
Արդ մի մաքառիր ընդ վեհագունին,
Զի մի կործցես նըման յիմարին․
Պատկառ կալ պետաց և գիտականին,
Պանծալի լիցիս 'ի շընորհս նոցին ։

## ՊԱՌԱՒ ԵՒ ԲԺԻՇԿ

Ջանա պահել ըղձերդ քո վառ
Մի տիրեսցէ անձինդ խաւար ։

Նայէ քու սիրտդ որ չար ծայ,
Ասոր սիրտը քէզ մութ կըլլայ ։

մկն․ Մէկ պառաւ մը աչքի տկարութեն ունենալուն համար կանչեց բժիշկն որ ըողջացընէ՝ այսպիսի պայմանով։ Թէ որ առողջանայ՝ անոր ուզածը տայ․ իսկ թէ չառողջանայ՝ բան մը չտայ։ Բժիշկն սկսաւ դեղ ընելով ամէն օր աչքը եղով օծել․ բայց տեսաւ թէ չառողջանար, ամէն գալուն մէյմէկ բան անկէն գողնալով կը տանէր՝ անանկ որ տանը մէջ բան չմնաց մինչև պառաւն ալ կրցաւ տեսնել թէ տանը բաները պակսեր են։ Ուստի երբոր բժիշկը պահանջելով իր վարձքը կը հաստատէր վկայութեամբ թէ ըողջացաւ աչքը՝ լաւ կը տեսնէ, պա-

*տախտակեց պատառը թէ սուտ է ամէնուն, վասն զի երբոր աչքս կըցուէր, շատ բան կը տեսնէի տանս մէջ․ հիմա որ կըսես ը֊ ընտացար՝ ամէնուն տանս մէջ բան չեմ տես֊ ներ․ ինչպէս պէտք է անանկ տեսնելն որ ինծի պէտք եղած բաները չեմ տեսներ։*

Օրինակ է անհաստատաբեր մարդկանց որ ԷՐԷ ա֊ ղէկութեան մ'ալ ընելու ըլլան կրկին ձեռք կորսան։ Ասանկ տեսակ բարերարներէն զգուշանալու է, որոնք բարի ընելու տեղն ունենալով բարիքը կը հերքեն։

*Այսպէս ինքնամատն 'ի ձեռս օտարին*
*Զըրկի 'ի բարեաց զոր ունէր յանձին.*
*Զի այլք վասն ինքեանց տքնին վաստակին*
*Ոչ վասն ընկերին ոչ բարեկամին։*
*Թէ ձըրագ մարմնոյդ իցէ խաւարին,*
*Ուստի՞ քեզ ձըրագ լուսատու անձին.*
*Այլոց լոյս ձըրագ վասն ինքեանց վառին*
*Ի քեզ մըթագնեալ փուլթով խաւարին։*

# ՈՒՂԵՒՈՐ ԵՒ ՀԵՐՄԷՍ

Արդ մի սուտ զուխտ և զերդումն,
Զի ոչ խաբի բարձրեալն անքուն ։

Հոգեւորէդ սուտ մ՛ խառնէր ,
Զի չէր կրնար զած խաբէր ։

մէկ․ Ճամբորդ մը երկան Ճամբորդութեան մէջ անանկ կանօթենայ որ ուխտ կընէ թէ ինչ ուտելու բան որ գտնէ՝ կէսը Հերմէսին ընծայ ընէ ։ Նոյնիս որ Ճամբուն վրայ պարկ մը կը գտնէ մէջը լեցուն նուշ և արմաւ (պտուղ, խուրմա)․ շուտով կը մոռնայ ուխ-տը և կընստի բոլոր կուտէ ։ Բայց խելքովը սատանութեն մտածելով, ժողվեց արմաւին կուտերը և նշին կեղևները դրաւ կուռքին սեղանին վրայ և հառաչելով ըսաց․ Ով մեծ Հերմէս , ընդունէ իմ ուխտս որ կատարեցի․ վասն զի ահա գտած բանիս դրսինն ու ներ-սինը հաւասար բաժնեցի ։

Առակս խրատ է ագահ և նենգ մարդկանց որ հո-գևոր բանի մէջ ալ խաբեութեան կը բանեցնեն ։ Կռապաշտները շատ անգամ Հերմէս ըսծին սոխ կընէին ։

Տեսնր զվատ խորհուրդ մոլի խարդախին ,
Զխարդ արատէ զուխտն ընդ արարչին ․

Նենգութեամբ վարի 'ի հոգևորին,
Մարդկօրէն չափէ զիրաւունս էին:
Բարէ կայր մնաց նենգող ագահին
Զերկել նկրտի զորրող բոլորին·
Որ ըղձերաս էից ունի 'ի ձեռին,
Դիտէ զամենայն, պատժէ ցաւագին:

## ԻՇԱՄԵՂՈՒՔ ԵՒ ԿԱՔԱՒՔ

*Չար է խորհուրդ չարասիրաց·*
*Զոր ինչ առնեն, բերեն ի վնաս:*

Երբոր մէկին սիրտը ծուռ է,
Ինչ ալ ընէ չէն կըբերէ:

*Մէկ· Իշամեղուներն ու կաքաւներն օր մը սաստիկ ծարուըցած կուգան երկրագործին կալաչէն որ ջուր տայ իրենց· խոստացան կաքաւներն որ ջրին տեղը փորեն անոր էգին· իշամեղուներն ալ չորս դին սպասելով գողերը խայթեն: Իսկ երկրագործը պատասխան տուաւ թէ ես երկու եզ ունիմ որոնք առանց բան խոստանալու իմ ամէն բանս կընեն· ուրեմն աւելի աղէկ է անոնց տամ քան թէ ձեզի որ ձեր օգտին համար ինծի սուտ խոստմունքներ կընէք:*

Օրինակ է ճշմարտասէր մարդկանց որոնց խոստմունքն է աղէկութիւն ընել, իսկ գործքն է ճշմա

Բերել ուրիշին։ Հասարակին մարդուն ամէն աշ-խարհք ընդուն է. իսկ անհասարակին ամէն բան դա-տարկ է, կըսէ իմաստունը։

*Ժամա վստահելք խոստմանն բարին*
*Նուիթել ըղձարիս բերին նըկըրոլին ·*
*Զի որ կամքն է չար միշտ 'ի չար հակին ,*
*Ոչինչ ցուցանեն 'ի բարեաց մասին ։*
*Արդ մի թևարկու լինիր զըրկողին ,*
*Թէ և փաղաքշէ զերթ յուշկապարկին ·*
*Խաղապատելով յածի կաթոգին ,*
*Մինչև լցուցէ ըղձարիս անձին ։*

## ԱՐՏՈՒՏ ԵՒ ՀԱՒՈՐՍ

*Մի կերակուր և գոյզըն շահ*
*Քեզ նուիթեսցեն վտանգ և մահ ։*

Քիչ մը հանգիստ կտոր մը հաց
Քեզի կը յղեն մահին առաջ ։

*Մեկն.* Ա*րտուտ թռչունը որ է հաւեղա-նագը՝ ամէն օր կերթար ցորեն ուտելու. օր մը զինքը տեսաւ հաւորսը՝ որոգայթ լարեց բռնեց ։ Իսկ թռչունը հասկըցաւ որ ազա-տում չունի՝ սկսաւ լալ. Վայ անբաղդիս, կըսէր, ես ոչ արծաթ եմ գողցեր, ոչ ոսկի և ոչ մեծ չարութիւն մը մարդու ըրած եմ. հապա միայն ցորենին մէկ հատիկին համար պիտի կորսուիմ. շատ աղէկ էր որ լեանն.*

րուն խատերն ուտէի՝ քան թէ մէկ քանի հատ ցորենն որ մահուանս պատճառ եղան։

Խրատ է անոնց որ թէեւ շահի համար մեծ վտան_ գի մէջ իրենք կը ձգեն, և ուրիշին թէեւ մը բան յաջողցնելու համար չարաչար կը չարչարուին. Ինչպէս եղաւ արտոյտը (չայըրգուշու)։

Որ անյագ տենչմամբ ձկան յուտելըն,
Սակաւ կերակուրն աւթէ մահ նըմին.
Զի անխրատողք յայլոց 'ի բարին
Դառըն վնասին 'ի մեծի պատժին։
Մի բերիր զըրկել զինչըս օտարին,
Եւ մի գիմազրաւ լինիր վտանգին.
Զի փոքրիկ արկած դուզնաքեայ օգտին
Հատանէ ըզկեանս վերջ տայ բոլորին։

# ԲԺԻՇԿ ԵՒ ՀԻՒԱՆԴ

Թէ դու չես քեզ բժիշկ ճարտար,
Ոչինչ օգտէ բժըշկաց ճար։

Երեսպաշտին երես մ' տար,
Քեզի կ'ընէ իրեն պաշար։

Մկթ. Բժիշկը գնաց հիւանդ մը տեսնե_ լու և հարցուց թէ ինչպէս է. հիւանդն ալ ըսաց թէ չափէն աւելի կը քրտնիմ։ Բա_ րի նշան է ըսաց բժիշկը։ Երկրորդ անգամ

գնաց հոն բժիշկը երբոր հարցուց հիւան-դին, պատասխան տուաւ Թէ սաստիկ մաղ-ձէն դող մը կուգայ ինծի։ Բարի է ըսաց։ Դարձեալ երրորդ անգամ գնաց երբոր հարցուց, անալ ըսաց՝ ջրգող (ուռէնա) եղայ։ Բարի նշան է ըսաց բժիշկը։ Յետոյ իր ըն-տանիքէն մէկը հարցուց հիւանդին Թէ ինչ-պէս ես։ Ինչպէս պիտի ըլլամ, կըսէր. ահա բարի նշաններու մէջ կը մեռնիմ։

Պէտք է երես դարձնել երեսպաշտէն, չէ Թէ կեղծաւորութեանը հաւանելով հաւատալ խօսքին. Զատն ալ անանկ մարդէն ամէն դի նեղդանան :

Տխուր է այս տխմար մարդահաճոյին,
Որ ըղներհականն կըրէ 'ի լեզուին.
Խառնէ անպատկառ սուտն ընդ ճշմարտին,
Ի միում կխոի ընտրէ զերկոսին :
Քանի անարգանք այն մարդելուղին
Ջխուր ուղիղ դատման զխսկն եղծանողին .
Որ 'ի սէր օգտի խօսի զանտեղին ,
Մինչև մի կարծել զայոն ընդ ոչին :

# ԱԳԱՀ ԵՒ ՈՐԴԻ ԻՒՐ

Այլք վայելեն յինչս ագահին,
 Ինքն է միայն պահնակ գանձին :

Ագահն իրեն բանին տէր չէ,
 Այլոց համար զայն կը պահէ :

ՃՀ. Ագահ մարդ մը իր պարտէզին մէջ ունէր պատուական խնձորի ծառեր, բայց մինչև որ խնձորները չփթտէին՝ մէկ հատ մը չէր ուտեր: Իսկ որդին առատասիրտ ըլլալով՝ օր մը առաւ ընկերները պարտէզը տարաւ և ստիպելով կըսէր անոնց թէ մի վախնաք կերէք լաւ խնձորները որչափ կուզէք. միայն փթտածները մի ուտէք, վասն զի հայրս պիտի ուտէ զանոնք :

Օրինակ է ագահին որ ուրիշին համար կաշխատի՝ չէ թէ իրեն համար, ինչպէս պատասխանն ինքը գի-տի փայ ու չոր ախտին համար :

Ստարք՝ ընտանիք ժառանգ ագահին
 Քաղցրը վայելեն 'ի վաստակ նորին.
 Մահուչափ ոգնի պահել զփտեալն,
 Մինչև ակամայ տայցէ ստարին :
Ով յիմարութեան ապառում սրտին,
 Առ ինչ չարատանջ յաւելու զբարին.

*Երբ ոչ վայելէ զայն գանձ զայն ոսկին ,*
*Հի՞մ վասն օտարաց տանջի գաղտագին :*

## ՄԱՆՈՒԿ ԵՒ ԿԱՐԻՃ

*Մի մերձենար յամէն կենդան ,*
*Բազումք ունին թոյն 'ի տըտան :*

Մի՛ մօտենար ամէն բանի ,
Շատերուն ճամ կուգայ թեղի :

*մջձ .* Անմեղ տղայ մը պարտէզը կը մտնէ և կը տեսնէ որ գեղեցիկ կը թռչէին թիթեռնիկները ( փէրվանէլէրը՝) սկսաւ բռնել հետերնին խաղալ : Յետոյ կարիճ մը տեսաւ , չհասկնալով զինք քամին որ բռնէ : Իսկ կարիճն տարածելով պոչը ցցուց ու ըսաց . Համարձակ կեցիր , ով անմեղ , ինծի մի դպչիր , հիմա անանկ կը խայթեմ քեզ որ կը մեռնիս . եթէ ամէն բանի առանց անխտիր դպչելու ըլլաս՝ վայ է քեզի :

Խրատ է անոնց որ ամէն մարդու հետ և ամէն տեղ մտներդ կը խառնուին . վասն զի շատ բան կայ որ կը թունաւորէ զմարդն ինչպէս կարիճը (ագրէ-պը .) ասոր շատ անմեղ մարդիկ ատանկ կորսուած են :

*Անմիտ պատանիք ընդ չարին ընդ բարին*
*Բերեալ անխորհուրդ մի աչօք հային .*

Բայց երբ 'ի կարճէն մահաթոյն խայթին,
Յայնժամ իմանան վրիպանս անձին:
Մի' պատրիր տեսլեամբ ըղձալականին,
Եւ մի' անտարբեր հուպ լինիր վատին.
Որչափ արտաքուստ անմեղ երևին,
Այնչափ մահաշունչ թունալից ներքին:

## ԱՌԻՒԾ ԵՒ ՑՈՒԼ

Արդ մի' ճաշեր ընդ թշնամին,
Զի մահաբեր է ճաշ նորին:

Չար թշնամոյն սեղան չերթաս,
Որ կերակուր իրեն չըլլաս:

ՄՀՔ. Առիւծը միտքը դրաւ որ վարպետութեամբ ուտէ ցուլ մը. ուստի հրամցուց իրեն հարկիքը: Բարեկամ, կըսէր, մէկ ոչխար մը մորթեցի և ամէն պատրաստութիւն տեսայ, կը խնդրեմ որ իրիկուան դուն ալ իմ հարկիքիս մէջ գտնուիս: Ցուլը գնաց հեռուէն նայեցաւ որ ամէն պատրաստութիւն կայ՝ բայց ոչխար չիկայ, հասկըցաւ բանն ու սկսաւ փախչիլ: Ինչո՞ւ համար կերթաս, ըսաց առիւծը. ցուլն ալ պատասխան տուաւ, Թէ տեսայ որ հարկիքիդ ամէն բանը պատրաստ է ցուլն ուտելու համար՝ չէ թէ ոչխարը:

Խաբեբայ մարդին ըսա անգամ պատիւ ընելով ու ընծայ տալով իր խաբէն ազատեցաւ · ասոր պէտք է հեռու փախչելու անանկ խորամանկներէն ։

Դրժող դաւաճանք 'ի տխալ առնուծին,
Յարգելով պատրէն ըղձիրտ բարեզարդ ·
Զի ճաշ և կաշառք ըղբաղումն արկլին,
Յանդունթ դրժողաց կորուսիչ թակարդ ։
Մի քեզ քաղցրացի ճաշ դաւաճանին,
Մի կախարդեսցէ պատիւ նենգողաց ·
Ըզգուշ լեր արթուն ըստ խորագիտին,
Թափել հնարիւք չարին 'ի ձեռաց ։

## ՇԻՆԱԿԱՆ ԵՒ ՀԵՐՔԻՒԼԷՍ

Արդ մի անջան կարդար զերկին,
Զի չեք նպաստ անգործ վատին ։

Ջանք ընելով աղաղակէ,
Որ երկնաւորն յօգնորդ ըլլէ ։

Մհֆ · Մեկ գեղացի մը իր սայլն առեր տեղ կերթար · յանկարծ ընկաւ սայլը ջրոտ փոսին մէջ ու չէր կրնար առաջ երթալ՝ միայն անանկ · իսկ գեղացին թողուց զայն ու սկսաւ Հերքիւլէս չածին աղաչել որ գայ սայլը հանէ տղմին մէջէն ։ Իսկ Հերքիւլէս ծիծաղեցաւ անոր վրան · Ով անխելք ըսաց,

*զարկ ձիերուդ, հրէ սայլը և այպա կանչէ*
*Հերքիւլէան որ գայ օգնէ քեզի ։*

Հերքիւլէս կամ Հերակլէս հին ատենը քաջ ու զօրաւոր էր որ անպատմելի քաջագործութեանը համար հին կռապաշտները կը պաշտէին զինքն ու նեղութեան մէջ օգնութի̅ կը կանչէին որ օրինակ է ա̅յ նախախնամութեանը, որ հարկաւոր տեղը կը հասնի ջանք ընողին. Բայց ուր տեղ որ մարդու ճարը ու հնարքը կը հատնի, ան ատենը կը հասնի վերէն նախախնամութի̅ը, զի ծոյլ մարդէն միշտ հեռու է ։

*Թէ խնդրես նպաստ արարող մատին ,*
*Վաստակեա զմտաւոնս 'ի գործ պիտանին.*
*Թէ անջան կարգաս զօգնութիւն վերին ,*
*Մի ակնկալցիս սատար երկնային ։*
*Ջանա դու ով վատ ըստ կարի անձին ,*
*Հասցէ քեզ յօգնել ձեռք նախախնամին.*
*Զի նա քեզ թողու առնել զկարելին ,*
*Եւ զանկարն ինքեան պահէ հրաշալին ։*

## ԳԵՂՋՈՒԿ ԵՒ ԽՈԶ

*Թէ և հատցես զականջ անլուր ,*
*Ոչ իմանայ խրատ և լուր ։*

Ան ականջն որ լսել չուզէ ,
Ինչ որ ընես խօսք չի լսէ ։

*Մհք. Գեղացի մը տեսաւ որ գլուխին խոզը մտեր է արտը կալականէ ցանած գարին, շատ վարնտեց մտիկ չըրաւ. ան ալ բարկութեն զարկաւ մէկ անկանձը կտրեց. բայց խոզը նորէն սկսաւ հոն մտնել մինչև զարկաւ գեղացին մէկալ անկանձն ալ կտրեց ։ Բայց խոզն ամէնևին աս բանէն ետ չիկեցաւ. բանեց ախրոջը տարաւ որ մորթէ ։ Իսկ տէրը երբոր գլուխը կտրեց ու ճղքեց, տեսաւ որ խոզն ըղեղ չունի՝ շատ զարմացաւ ։ Մի զարմանար աստր վրայ, ըսաց գեղացին. վասն զի թէ որ խելք և զգայութի ունենար , երկու անկանձն որ կտրեցի՝ կը հասկընար ու չէր գար նորէն իմ գարիս ապականէր ։*

Օրինակ է պնդգլուխ խօսք մարդկանց որ ամենևին խրատ չեն ընդունիր, և իրենց հաւնելով անանց բան կընեն որ պէտք է ըսել թէ ոչ խելք ունին ոչ միտք ։

Ահա ապառում՝ գործ անխըրատին ,
Որ ոչինչ աղդումն ընդունի յանձին ·
Գոյ յոյս բուսանիլ սերմն յապառաժին ,
Քան յանլուր ականջ վայրագ տարտամին :
Տես զխարդ անգործ մընայ սերմն անդին ,
Ցանհըրահանգ սիրտ 'ի միտս անսաստին ·
Ընկալ ըղխըրատ 'ի հերկեալ սըրտին ,
Ընձիւղել բարիս զերթ պարարտ երկրին :

## ԱԳԱՀ ՀԻՒԱՆԴ

Մի՛ դանձեր քեզ զկորըստականն ,
Զի մի՛ տացէ զքեզ կորըստեան :

Ջանա հոգալոյ ունջին շահնալ ,
Որ երբ Քեանխս ծերչն տեւմ գայ :

մէջ · Մեկ ագահ մը անիրաւութե՜ շատ հարստութիւն ունէր · երբոր հիւընդցաւ և տեսաւ որ պիտի մեռնի , ուզեց որ իր բոլոր դանձն աչքը բերեն : Ուստի առաւ աչքին ոսկիներն ու սկսաւ հառաչելով անոնց հետ խօսիլ · Ո՛վ սիրական ոսկիներս , կըսէր , ես ձեզ չարաչար աշխատանքներով վաստըկեցայ ու դուք ինծի ամենևին հանգիստ և զուարձութիւն մը չտուիք , հապա միշտ արամութե և նեղութե : Պատասխան տուին ոսկիները թէ մենք զուարձութիւն կըրնանք տալ միայն քու ժառանգներուդ երբոր ուտելով խմելով բոլորը կը մսխեն · բայց

չկյանենք թէ հոգուդ բանն ինչպէս պիտի ըլլայ որ հոս ալ տանջուեցաւ ու հոն ալ պիտի տանջուի :

Ով որ ագահութեամբ հաւ կըգանչէ՝ հոգւով մարմնով կըկորսուի․ վասն զի հաւ չէ մեր հայրենի-քը, այլ երկինքն է որ պէտք թագաւորենք յաւի-տեան, ինչպէս կըսէին հին քրիստոնեաները ալ։ Փի-լիսոփայի մը հարցմանը թէ հայրենիքդ ուր կը գտնե՞ս․ ան ալ երկինքը նայելով ըսաց, ահա ուր կը գտնեմ իմ բուն հայրենիքս :

Նանրախոհ ագահք վըտանկան յանձին
Ժողովել ընդունայն գործի կորուսչին․
Կարծեն թէ իշխեն ոսկւոյ արծաթին,
Բայց ինքեանք յոսկւոյ գերեալ կաշկանդին։
Քանի՛ք 'ի ստանալ կորըստականին,
Կորուսին ըզկեանս և սիրտս ընդ նըմին․
Գանձել քեզ լիցի 'ի բուն հայրենին,
Ուր յաւերժ բերկրի վերնաձեմ հոգին։

# ԹՈՒԹԱԿ

*Չէ մարգարէ ընդունելի*
*Եւ ոչ գիտուն յիւր քաղաքի ։*

Գիտուն մարդիկ պատիւ չունին ,
Իրենց տան մէջ ու տեղերին ։

*Մհղ· Թութակը (պապագա գուշուն) երբոր արեւելքէն եկաւ արեւմուտքը՝ ամէնքը մեծ պատիւ կընէին իրեն , որովհետեւ արեւմուտք չըլլար աս թռչունը ։ Օր մը հարցուցին թէ ինչո՞ւ համար քու աշխարքիդ մէջ քեզի պատիւ չեն ըներ ու հոս այսչափ պատիւներ կընեն , արծըթէ և փղոսկրէ վանդակի մէջ կը դնեն , ու զանազան փափուկ կերակուրներով կը պահեն ։ Պատասխանեց թէ մի զարմանաք · վասն զի ամէն տեղ վայլած պատիւը չընելնուն համար , ես հոս պատուաւոր եղայ · և աս պատճառաւ գիտուններն ալ իրենց քաղաքը կը ձգեն՝ ուրիշ տեղ կերթան որ ընդունելի ըլլան ու պատիւ ունենան ։*

Իմաստուն մարդիկ իրենց տեղերին և աշխարհքը մէջ ընդունելի չեն · օտար տեղ աւելի յարգութիւն ունին ։ Գիտունի մը հարցուցին թէ ո՞ր աշխարհներդ տեղ աւելի կը մեծցընեն · ան ալ պատասխան տուաւ թէ միայն գրերու ։

Բանիբուն խոհեմք գիտունք յանկալի
Ձեռ յարգի և մեծ յիւրայնոց միջի.
Զի յաճախութիւն ընդ մերձաւորին,
Գործէ զմեծարուս անարգ խոտելի:
Լաւ է յարգանօք կալ յանապատի,
Քան անարգ մնալ 'ի մեծ քաղաքի.
Փախիր ուր գիտունք չիցեն յարգելի,
Ընտրեալ աւտրինին յառանձին տեղի:

## ԱՐԾՒԻ ԵՒ ՍԻՐԱՄԱՐԳ

Ոյժ և մագիլ զարծիւ ագեղ
Անմեն սիրուն և աչագեղ:

Հարուստն որչափ հոգս երկնայ,
Քան իմաստուն աղքատ հեշտայ:

Մհէ. Երբեմն արծիւն եկաւ ուրիշ թռչուններուն մէջ նստեցաւ ու սկսաւ պարծենալ. Չեմ կարծեր թէ, կըսէր, ինծմէ գեղեցիկ գտնուի աշխարքիս վրայ. ահա իմ վրաս յայտնի կերևնան շատ գեղեցիկ նշաններ: Երբոր իր վրայի ամէն բանը կը գովէր, բոլոր թռչունները վախերնուն կը հաստատէին թէ ճշմարիտ է, մինակ սիրամարգը քթին տակէն ըսաւ կամաց մը թէ կտուցդ ու ճանկերդ քեզ գեղեցիկ են ըրեր. թէ որ անոնք չըլլային՝ կը գտնուէր հոս մէկն որ քեզի ցոյց տար թէ ոչ միայն գեղեցիկ չես, այլ և խիստ ագեղ ես:

Մեծութիւն ունող մարդը գեղեցիկ ու կըլլայ գիտուն ու. որոշեալ ամէնքը ձախերնուն կըգովէն · Ինչ որ ըսէ գէշ ծանէշ անանկ է կըսէն , Թէպէտ ոչ մար ըլլայ · անոր համար հին ժողովուրդները փգէփ մեծապատուներուն անունը դրեր են՝ Անտառուն ոսկեղէն :

*Անիմաստ փարթամք ինքեանց վեհ թուին ,*
*Յանձին պարծեցեալ ունող բոլորին ·*
*Ոչ ոք գիմագիր խորհրդոց նոցին ,*
*Բընաւք ծընրադիր յոխորտող ձայնին :*
*Այս թիւր ընկղրունք թիւրեալ աշխարհին ,*
*Որ ըզմեծութիւն դընէ 'ի գանձին ·*
*Գեղեցիկ գիտուն փարթամք համարին ,*
*Թէ և խեռ տըգեղ ըստ բընականին :*

## ԷՇ ԵՒ ՇՈՒՆ

*Որ ոչ լսէ զձայն կարօտի ,*
*Զօգուտ ուստեք երբ կարօտի :*

Թէ չէս հաներ դուն ուրիշին ,
Մարդ չի հաներ քու խեղճ ձայնին :

*մնջը · Էշն ու շունն ընկեր ըլլալով միատեղ կերթային , բայց իշուն վրայ հաց կար բեռցուած որ աղքատներուն կը տանէր : Ասոնք ճամբան կանօթենան , էշը կերթայ խոտ ուտելու , և շունը կաղաչէ իշուն որ իրեն քիչ մը հաց տայ · իսկ էշը ծաղր ընելով կըսէր*

շանը թէ խոռ կեր ինծի հետ ։ Աս խօսքիս վրայ նոյնիս գայլը հոն հասաւ․ էշն սկսաւ աղաչել շանը թէ շուն եղբայր, կաղաչեմ օգնէ ինծի և հալածէ գայլն որ զիս չիպատռէ ; գիտեմ՝ որ կրնաս ան շնորհքն ընել ։ Պատասխան տուաւ շունը թէ քիչ մը առաջ կտոր մը հաց չտուիր ինծի, հիմա զիս քեզի օգնութիւն կը կանչես, գնա կորսուէ՝ ինծի անանկ ընկեր պէտքը չէ որ կարօտութեանս ատենն օգուտ մը չունի ։ Նա այսպէս թողուց որ գայլը պատռեց էշը ։

Խրատ է անոնց որ ուրիշը կարհամարհեն՝ օգնութիւն մը չեն ըներ, և իրենք ալ խեղճ կըլլան․ ան դի չինկայ անանկ անպիտան որ պէտք եղած ատենն օգնութիւն մը չինկարենայ ընել փոխարէն ։ Շատ անգամ ուրիշի աղէկութիւն մը ընելով մեծ արդիւնքներ ծագեր են ։

Յոյսք են բընական իմացականին
Կարեկցիլ այլոց նըպաստել նոցին ․
Իսկ թողուլ զընկեր կարօտ ցաւագին
Բերմունք են սըրտի անասնականին ։
Թէ մատամբ մերձիս յօգուտ կարօտին ,
Բազումք թեկն ածեն և քոյդ կարօտին ․
Թէ մերժես ըղձայն առ քեզ կարօտին ,
Կաս մընաս 'ի վիշտս միշտ կարօտագին ։

## ԷՇ ԵՒ ԽՈԶ

*Ջանա ՚ի գործ կըրթել զմարմին,*
*Մի՛ պարարեր նըման խոզին ։*

Կըրթէ ըզքէզ աշխատանքով,
Թէ չէ մահին կերթաս շուտով ։

*մհթ. Էշը սաստիկ կը նախանձէր խոզին. վասն զի կը տեսնէր որ առանց աշխատանաց բոլոր օրը կուտէր կը գիրնար. իսկ ինքն առտուընէ մինչև իրիկուն բեռ կրելով հոգին կելլէր ։ Օր մը տէրն ուզեց մորթել խոզն որ շատ գիրցած էր. երբոր պառկեցուցին մորթեցին, էշը զարմանալով մը կը նայէր ։ Ահա պատճառը հասկըցայ, կըսէր, թէ ինչու համար մեր տէրը գգուելով գիրցուց խոզը, որ մորթէ և իրեն կերակուր ընէ. ուրեմն շատ աղէկ է էշ ըլլալ քան թէ խոզ ։ Եւ այսպէս գոհ եղաւ իր վիճակին վրայ ։*

Խրատ է անոնց որ ուրիշին հանգստութեանը վրայ կընախանձին. վասն զի որչափ դրացին երջանիկ երեւան, այնչափ շատ նեղութեանց տակ են. անոր համար իմաստուններն աշխատասիրաց կեանքը քարթամբներուն կեանքէն վեր կը դնեն ։

*Ահա այս վախճան է պորտաբուծին,*
*Որ միայն լինու ըղձակ կարասին.*

Բայց որչափ պարապ լինի փըլանելըն ,
Փութով 'ի լապանդ վարի կըտրըչըն :
Արդ մի՛ նախանձիր կենաց անգործին ,
Զանա միշտ կըրթիլ 'ի գործ պիտանին .
Քանզի կեանքն է կեալ յօգուտ աշխարհին ,
Այլ ոչ 'ի կորուստ բուծանել զմարմին :

ԱՔԱՂԱՂ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Եթէ անկար յարկած չարին ,
Փախիր 'ի բաց հեռոց նորին :

Թէ չես կարար անըզգամէն ,
Հեռու փախիր նեխած տեղէն :

ԺՁ. Մէկ աքաղաղ մը աղուէսին ձեռքն ընկաւ, բայց շատ աշխատելով և ջանքով փրցուց զինքն անոր ձեռքէն ու փախաւ: Օր մը մէկ քանի աքաղաղներու հետ երբոր ժողով կուգար՝ տեսաւ աղուէսի մը մորթ և մէկէն սկսաւ փախչիլ: Ան որ տեսան ընկերները՝ ամէնքը միատեղ վրան խնդացին. այնչափ որ աքաղաղը չըդիմացաւ եա դարձաւ ըսաց իրենց. Հը՛, թէ որ դուք ալ աղուէսին ճանկը մտնէիք, չէ թէ միայն մորթէն՝ այլ և կախած տեղէն ալ կը փախչէիք դողալով:

Օրինակ է պզտաշատար մարդու որ ամէն պարա-

գանէրը տէրէըն անանէ խըղգոուլանայ որ նորէն ծոըյոութեան մէջ ըէյնար և ամէն բանէ մէջ ծորյ խըլլայ :

Խոհական մտաց այս գործ փորձառուին,
Փախչի 'ի հեռուց դաժան փորձողին.
Զի կրեալ արկածք տպանան խորին,
Առ 'ի ոչ փորձիլ 'ի նոյն վերստին:
Լեր շրջահայեաց յամենայն առթին,
Զի ցանկ լարեալ կան դարանք ոսոխին.
Թէ արթուն գտնաս և հսկող յանձին,
Անգործ մնան հաղբք դարանակալին:

## ԻՇ ԵՒ ԳԱՅԼ

Որ յանօտոր գործ խնչ մխի,
Գանիւք վշտօք ծանր տուժի:

Չիւորչած բան ընել ոողէս,
Ծաղըր խըլլաս մէջ ըէն խըժէս:

*Մձ՛ա.* Երբեմն իշուն ոտքը փուշ մանե֊լով շատ կը տանջուէր փշին ցաւէն, ուս֊տի տեսաւ որ գայլը վրան կուգայ՝ սկսաւ ողորմուկ ձայնով աղաչել. ով գայլ, կը֊սէր, ահա աս ցաւս զիս պիտի մեռցընէ և ագռաւներուն կերակուր պիտի ըլլամ, քեզ֊մէ օգնութիւն մը կը խնդրեմ՝ ինծի շնորհք ընելով հանէ ոտքէս փուշը, գոնէ առանց ցաւի մեռնիմ: Իսկ գայլը ուրախանալով մօ֊

*տեցաւ իրեն և աջնի ակռաներուն բանեց փուշը կամաց մը հանեց ոտքէն ։ Սակայն է֊շը մոռնալով քաշած ցաւը՝ կից մը զարկաւ երեսին որ ակռաները Թափելով պառռեց գայլին Ճակատն ու փախաւ ։ Երբոր գայլին խելքը գլուխն եկաւ՝ սկսաւ ինքիրեն ըսել Թէ աղէկ եղաւ ինծի, որովհետև ես անա֊սուններուն մսագործութիւնը սորված էի՝ հիմա ուզեցի ըլլալ անոնց վիրաբոյժ (ճէ֊ռահ) ։*

Որոնք որ իրենց սովորական արուեստը կը ձգեն ու չփորձուած բանի ետք կը վազեն՝ ծաղր կըլ֊լան ու մեծ վտանգի մէջ կիյնեն ։

*Որ ձգէ ըզգործս սովորականին*
*Մխի յանսովորն 'ի Ճահ օտարին՝*
*Անդ խայտառակեալ տուժի և ծաղրի,*
*Անազան ուրեմն մեղադրի ինքնին ։*
*Արդ մի գահավէժ լինիր յանհեղլին,*
*Եւ մի սատասեր 'ի միոյ առ մին .*
*Անսասան կացեալ 'ի քոյդ վիճակին՝*
*Յաւերժանաս միշտ 'ի գերագունին ։*

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՌԻՒԾ

*Երբ յաճախէ պետն ընդ ռամկին,*
*Կորուսանէ զպատիւ անձին։*

Մեծն որ ռամկին շատ երեւնայ,
Անարգ ու չար մարդ մը կըլլայ։

*մճծ.* **Ա**ղուէսը բնաւ առիւծ չէր տեսած. եղաւ որ օր մը դիմացն ելաւ, անանկ սաստիկ վախցաւ որ քիչ մնաց կը մեռնէր։ Երկրորդ անգամ երբոր տեսաւ՝ վախցաւ, բայց առջինին պէս չեղաւ։ Իսկ երրորդ անգամ որ տեսաւ առիւծը՝ ամենեւին վախ մը չունեցաւ, համարձակ սկսաւ հետը խօսիլ և ինքիրեն ըսել թէ վախն ու ակնածութիւնն է եղեր մեծութիւն տուողը՝ չէ թէ մեծ մարմինն ու մեծ անունը։

Որչափ մեծ ու ազնուական բան ըլլայ՝ երբոր շատ անգամ կը տեսնուի՝ պատիւը կերթայ ու հասարակ բան մը կըլլայ։ Աս պատճառաւ հին ատենն երեւելի իշխանները ու թագաւորները քիչ անգամ մարդու կերեւնային. ու երբ ժողովուրդը զանոնք կը տեսնէր՝ կարծէր թէ երկինքէն իջած են։

*Գլխաւորք իշխանք 'ի վեհ վիճակին՝*
*Ցանցառ երևիլ ռամկաց հարկադրին.*

Զի յաճախութիւն կարճէ զյարգ անձին,
Թէ և մեծայարգ լիցեն ահագին:
Իսկ դու վերանցեալ 'ի պատիւ կարգին՝
Մի՛ յաճախ նստիր 'ի ժողով ռամկին.
Կշռելով զանձինս, ըզխօսս, ըզտեղին՝
Վեհապանծ բազմեաց առաջի նոցին:

## ԳԱՅԼ ԾԵՐԱՑԵԱԼ.

Բազում ընկերք ճոխ մեծատան,
Ոչ ոք մերձի յաղքատ սեղան:

Մեծ սեղանին շատ ընկեր կայ,
Աղքատին քով մարդ մը չերթայ:

ՄՃԶ. Գայլ մը անանկ ծերացած էր որ ոչ կերակուր կրնար գտնել և ոչ մէկն իրեն բան կուտար, անանկ որ ամէնքը զինքը կը հալածէին: Օր մը ելաւ անտառը գնաց և հոն գտաւ մէկ մեռած եզ մը՝ վազեց ուտելու: Բայց ուրիշ գայլերը մէկէն հոտն որ առին հոն թափեցան, որպէս զի ուտելով օգնեն իրեն. վասն զի ընկեր ենք, կըսէին: Իսկ ծերը բարկանալով կըսէր. հիմա որ կերակուր ունիմ ամէնքնիդ ինծի ընկեր եղաք, և երբոր բան չունէի՝ մէկերնիդ զիս ընկեր չէք ճանչնար և միաբան զիս կը հալածէիք, ուրեմն ունեցածիս ընկեր էք՝ չէ թէ ինծի:

Մեծատունն աւելի բարեկամ կըստանայ՝ քան թէ խեղճը․ և այս շատ բարեկամները որոնք օգնականներն՝ կը մօտենան, և երբոր ձախորդութիւն հանդիպի Մեծատունը՝ դռնէն ալ չեն անցնիր՝ որ գիշեր ցորեկ դռնէն չէին պակսեր ։

*Ահա տարացոյց այժմեան վիճակին,*
*Որ տայ զյարգութիւն փառաց և պատուին․*
*Ոչ ըզ բարեկամ բուն բանականին,*
*Այլ ամենեքեան մեծութեան նորին ։*
*Չէք քեզ մերձաւոր թէ ես աղքատին*
*Թէ և վեհապանծ և ճոխ յիմաստին․*
*Թէ աղքատ մըտօք և ճոխ ՚ի գանձին՝*
*Ի ծունր իջանեն քեզ բոլորեքին ։*

## ԳԱՌՆ ԵՒ ԳԱՅԼ

*Որ կայ հնազանդ ձայնի վեհին,*
*Անփորձ աանէ զնետըս չարին ։*

Ով որ հնազանդ է իր Տէրին,
Վնաս և չար չի գար անցէն ։

*մկն․ Գայլը տեսաւ որ գառնուկ մը կերթար այծին հետ, սկսաւ անուշ խօսքերով ըսել թէ ինչո՞ւ համար թողուցիր մայրդ ու աս գարշահոտ այծին ետևէն կերթաս․ դարձիր մօրդ քով որուն ստինքը կաթով լեցուն են ։ Աս խօսքերով կը ջանար այծէն զատել որ դիւրաւ յափշտակէ զգառը ։*

*Ան ալ պատասխան տուաւ, թէ մայրս զիս ասոր յանձնեց, ուստի աւելի կուզեմ հնազանդ ըլլալ մօրս՝ քան .քեզի որ կեղծաւոր խօսքերովդ կուզես զիս անկէ հանել ու պատռել:*

Ով որ Թշնամւոյն խօսքին նայելով անհնազանդ կըլլայ՝ հարկաւ կը կորսուի․ խրատ ըլլայ մանկանց որ չար ընկերներուն հաւատալով՝ իրենց մեծէն չը-հեռանան :

*Այսպէս փաղաքշէ նենգող Թշնամին*
*Խորամանկ բանիւ ըզսիրտ անմեղին․*
*Տքնի ձողոպրել 'ի ձեռաց վեհին,*
*Զի ծախեսցէ զայն 'ի ժանիս հեշտին:*
*Մի լսեր ըզձայն կորուսիչ Թովչին*
*'Նազելի բանիւ զքեզ խորդախօսին․*
*Հնազանդ և հլու կաց մեծաւորին,*
*Հարեալ ըզբերան զազան բանսարկուին:*

## ԵԶՆԱՎԱՐ ԵՒ ԵԶԻՆՔ

*Որում իմիք ոք կարօտի,*
*Զայն երազէ 'ի գիշերի:*

Ինչ բանի որ մարդ կարօտէ,
Երազին մէջ ան կը տեսնէ:

*ՄՃԷ. Օր մը եզնավարը կը մտնէ եզնե-րուն գոմը, կը տեսնէ որ բոլորն ուրախու-թեան մէջ են. կը հարցընէ թէ ինչ պատճա-ռաւ սասանկ կուրախանաք: Անոնք ալ պա-տասխան տուին, թէ աս գիշեր երազ տե-սանք որ զմեզ մէկ խիստ զուարճալի դաշտի մը մէջ տարեր խոտ կը կերցընէիր՝ անոր համար կուրախանանք: Պատասխան տուաւ եզնավարը թէ ես ալ տեսայ որ բոլոր օրը ձեզ կաշխատցընէի երկիր փորելու, ուստի պէտք է որ իմ երազս իրաւ ելլէ՝ ձերինը սուտ: Աս ընելով վերցուց տարաւ զերենք արտը հերկելու:*

Օրհնեալ է անոնց որ անմտաբանեամբ երազի կա-պան, որոնցմէն երազը ալ ոտքերը կը դադարեն՝ երբոր միտքը բան մը կայ որ գիշերն ալ տեսնէ՝ ե-րազ կըլլայ. Ինչպէս ծարաւ մարդը ջուր կը տեսնէ. Բայց երբոր ուղեղը կը լորնայ ու արիւնը կը տաքնայ, աշխարհքին երազ կը տեսնէ: Նայէ մեր ձեռագրա-նին 979 համարը:

*Զխարդ պաշարեալ միջոց նախադատին*
*Երազէ զայն ինչ որում կարօտին.*
*Բերկրի հանդիպիլ բարեաց բոլորին,*
*Զոր եռեւ ընդ կարծ յանգոյ կարելին:*
*Մի զքեզ շարժեսցէ տեսիլ անդոյին,*
*Որ չէ ինչ պատճառ բարւոյ և չարին.*
*Այլ այն գաղափար նման ստուերին*
*Անցանէ ընդ միտս ըղձայականին:*

## ԱԳԱՀ ԴԵՍՊԱՆ

*Ագահն 'ի սէր դոյզն ինչ օգտի*
*Ծանակ լինել լաւ համարի:*

Ագահը քիչ շահի համար.
Զինքը կընէ անարգ ու չար:

*Մէջ.* **Ե***րբեմն ագահ մարդ մը դեսպան գնաց ուրիշ քաղաք մը. երբոր քաղքին մօտեցաւ՝ ամէնքը դէմը գացին նուագարաններով. զի սովորութիւն էր որ երաժիշտները քաղքին դուռը կերթային հանդէսով նուագարաններ կը չալէին որ անկէ պարգև առնեն. բայց ագահը մարդ խրկեց որ չիգան բան չալեն. վասն զի սուգ ունիմ, կըսէր, մօրս մահուանը համար: Այս պատճառաւ քաղաքցիք գացին զինքը մխիթարելու. երբոր իրարու կը հարցընէին թէ արդեօք որչափ ատեն է որ ատոր մայրը մեռեր է, պատասխան տուաւ ագահը թէ քառասուն տարի մը կայ.*

Այս որ լսեցին, սկսան ամէնքը ծաղրելով զար-մանալ անոր ագահութեանը վրայ :

Օրինակ է շատ ագահին որ մէկ ոսկին և ձեռն մը շահու համար ամենուն ծաղր կըլլայ · Բայց մարդուս չայլածն ան է որ ոսկին անարգէ՝ և ինքը շահար-գուի : Որ տեղ որ ոսկին կը խօսի՝ ամենքը կը լռեն, կռուէ գինուն մը :

Այս ակիզբն յոյժ մըտաց ժըլատին
Որ նըպատակն է յաւելուլ յոսկին ·
Մինչ գանկ մի ծախել դըժուար է նմին ,
Քան ծանակ լինել բոլոր աշխարհին :
Եւ հիմ ժողովէ այն գանձ այն ոսկին ,
Երբ ոչինչ ծաղի յօգուտ գանձողին ·
Կաշկանդէ կապէ ըղսիրտ և հոգին ,
Ի նախատ բերի կծծի ագահին :

---

## ՀԻՆԱԿԱՆ ԵՒ ՄՈԽԿՆ

Ընկեր ծառայ են մտերիմ
Բաղդին միայն և ոչ անձին :

Շատ բարեկամ կուտայ ու պատիւն ,
Մարդ մը չըլլայ նեղ ատենին :

Առակ. Մէկ գեղացիի մը տուն յանկարծ բռնկեցաւ կ'երէր չարաչար , և ինքը հեռուն կեցած երբոր կը նայէր՝ տեսաւ որ մուկ մը տունէն դուրս ցատկեց կը փախչէր · մէկէն

*գեղացին վրան վազեց ու բռնեց մուկը կը-րակին մէջ նետեց · Թշուառական, կըսէր, քանի որ տունս չէն էր կը վայլէիր, հիմա որ Թշուառութենէ հասաւ դուրս կը փախչիս, ահա է քու ընտանութիւնդ · ուրեմն ինչպէս որ աղէկութիւնը վայլեցիր՝ գնա խեղճութենէն ալ քաշէ · քեզի պէս բարեկամին սատնկ պէտք է ընել ։*

Օրհնեալ է ամենակարողին Աստուածութեանն որ երբ մէկը յախորդութեան մէջ կիյնայ՝ ամենքն երես կը դարձնեն, մէկը չի նայիր երեսը · բայց ճշմարիտ բարեկամը յախորդութեան մէջ աւելի բարեկամու-թեան կընէ ։

*Ո՛ւր այն բարեկամ ընկեր մտերիմ*
*Յաջող վիճակին նոյն և ձախողին ·*
*Արդի բարեկամք միայն յաջողին,*
*Ոչ ոք մերձաւոր ձախողակ բաղդին ։*
*Ո՛վ գլխրափոփոխ մըտաց մարդկային,*
*Որ այսպէս փոխի ընդ փոխիլ բաղդին ·*
*Ջայն որ յանմահից դընէին սակին՝*
*Յետոյ անարժան խուրեանց ողջունին ։*

## ՎԱՐԱԶ ԵՒ ԷՇ

*Յես ըղձաս քո վաղազոյն՝*
*Մինչ չև զործեալ է թշնամւոյն :*

Գուլըս չէան ատէնով տէս ,
Չինարծածէտ ղէն նը տալէս :

*ԺՃԸ.* Լեռան խոզն իր ակռաներուն զօրութենն ապաւինելով՝ որ խիստ երկայն զօրեղ էին, ուղեց իշուն հետ կռիւ ընել: Իսկ էշը վարպետութենով մը մօտեցաւ խոզին և անանկ կից մը զարկաւ ճակտին որ կիսամահ գետինն ընկաւ խոզը: Յետոյ խոզին մէջքը վրան գալով սկսաւ ըսել ինքիրեն, թէ ոտքով կռուիլը մաքես չէր անցած՝ աս ալ սորվեցայ, բայց հանդերձ վնասով:

Մինչ ղէտտ է մտմտառ, Բէ ստտտէ՞ նըդայ չէաա տառ, ըէ Բէ ղէնտըըբանի մը տէղ տնէըով ղառըինըը նախատէլ. վեան ղի ըինարծած մարտինի Յէծ չէաա ըդան տառ :

Այս պատիժ պահի յանձնապաստանին,
Որ զինքն յաղթական զընէ բոլորին.
Իսկ այն ապիկար որ չըջի լոին՝
Ըզգեանի հարեալ յաղթէ դոռոզին :

Մի՛ զոք արհամարհ դըներ և չընչին ,
Ջանալ անխորհուրդ կոխել առ ոտին .
Գոյ զէն զօրութիւն 'ի սիրտ խոնարհին ,
Հանէ և ծաղրէ զհպարտ թըշնամին :

## ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՒ ԻՐ

Մի՛ դըներ ինչ յաւերժական ,
Զի մահն հանուրց դընէ վախճան :

Մնայական բան մը չիկայ ,
Ամէն բանի մահը մօտ կայ :

ՃՀԹ . Մէկ բանաստեղծ մը կը պարծենար թէ ես անանկ վարպետ եմ և անանկ լաւ կերպով բան կը սորվեցընեմ որ չէ թէ միայն մարդիկ՝ այլ և էշն ալ կրնայ սորվիլ իմ բանաստեղծութիւնս : Աս երբոր լսեց մէկ իշխան մը՝ կանչեց զինքն ըսաց , թէ իմ իշուս ալ բանաստեղծութիւն սորվեցուր , ահա քեզի տասը տարի ժամանակ , և ինչ որ կուզես կուտամ : Բանաստեղծն ալ խոստացաւ թէ խիստ լաւ , այսչափ տարուան մէջ կրնամ սորվեցընել՝ բան մը չէ . թէ որ չիսորվի՝ բոլոր կեանքիս մէջի ըրած վաստակս քեզի կուտամ : Աս դաշինքիս համար շատ մարդիկ զինքը մեղադրեցին թէ անանկ բան մը վրան առաւ որ անկարելի է : Պատասխանեց բանաստեղծը . ով յիմարներ , տասը տարուան մէջ կամ իշխանը կամ էշը և կամ ես կը մեռնիմ :

Խրատ է անոնց որ աշխարհքիս անցաւոր բանե-րուն վրայ հոգ կը տանին. զի մահը շուտ մը կը հասնի ամէն բան կը մոռցընէ: Հոգ տանող մարդուն անհոգները կը ծաղրեն, կըսէ իմաստունը:

Արթուն խորագէտ գիտող վախճանին
Ծաղրէ ըզխորհուրդ յիմար իշխանին.
Զի գիտունք միայն ըզներկայն ունին,
Իսկ յիմարք ըզդարս խոստանան անձին:
Ունայն վաղանցուկ զի՞նչ քան ըզմարմին
Ում կից են արկածք մանգաղ օրհասին.
Ի թարթել ական հասանէ նմին,
Վերջ տայ խորհրդոց նանրախոհ ռամկին:

## ԽՈՅ ԵՒ ՑՈՒԼ

Հպարտ յիմարն վստահ յանձին
Գայ 'ի պայքար ընդ հզօրին:

Յիմար մարդիկ ուժերնին միայն
Մեծ կը կարծեն, ծիծաղ կըլլան:

ճղ. Մէկ արու ոչխար մը խիստ զօրաւոր և մեծ ըլլալով ոչխարներուն մէջ՝ միշտ կը կռուէր անոնց հետ և ամէնուն յաղթող էր, որ այնչափ ամբարտաւան եղաւ՝ մինչև յան-դըգնեցաւ ցուլին հետ ալ կռուիլ. բայց եր-բոր իրարու դէմ՝ ելան՝ ցուլն անանկ սաս-տիկ զարկաւ ոչխարին որ գլուխը ճզմելով ուղեղները թափեց գետինը ձգեց: Ուստի

մեռնելու ատենը կըսէր ոչխարը հառաչելով. Ո՛վ Թշուառականիս, աս ինչ անխելք հպարտութիւն էր ըրածս որ համարձակեցայ կռուիլ ցուլին հետ, որովհետև բնութիւնն անանկ քաջ է ըրեր զայն՝ որ մէկը չի հասնիր իրեն :

Ով որ իրմէ մեծին հետ կռուիլ կուզէ, մեծապէ[illegible] և անձնուն ծաղր կըլլայ : Գիտնալու է [illegible]

Զրախտն յիմարք վատահեալ յանձին՝
 Եղջիւր ամբառնան ընդդէմ հզօրին,
 Անդէն զինաթափ ձգեալ 'ի գետին՝
 Փորձէն 'ի մնաս զոյժ ախոյանին :
Մի՛ բերիր կագել ընդ վեհագունին,
 Մի՛ ընդ իշխանաց և գլխաւորին .
 Զի նոցին հարուածք մնասեն ուժգին,
 Ձգեն յայն փորեալ խորխորատ խորին :

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ՇՈՒՆ

*Գովեստ ոմանց վնասէ ուժգին*
*Քան ըզպարսաւ չարախօսին ։*

Գովեստ կայ որ մեծ ըլէն կոտրայ ,
Կայ պարսաւ որ ճաւա չէ փայ ։

*մղա· Շուն մը աղուէսին ետևէն ընկեր կը հալածէր որ բռնէ· աղուէսը տեսաւ թէ ազատումն չունի՝ կանչեց շանը· ով շուն ինչ ես ընկեր ետևէս, իմ մարմինս միս չունի որ ուտես· ահա անդին գէր նապաստակ մը կայ, վազէ ետևէն՝ որուն մարմինը իմինէս շատ լաւ է։ Շունը տեսաւ նապաստակն ու վազեց ետևէն, բայց չկրցաւ հասնիլ մինչև փախաւ ազատեցաւ ձեռքէն։ Քանի մը օրէն ետև նապաստակը երբոր տեսաւ աղուէսը, սկսաւ մեղադրել թէ ինչո՞ւ համար զինքը գովեց շանը։ Պատասխանեց աղուէսը· թէ որ արհամարհէի զքեզ ինչ պիտի ըսէիր որ աղէկ ըսելուս համար կը տրտնջաս։ Ան ալ ըսաց· ա՛լ աղէկ էր զիս վար զարնէիր՝ քան թէ սանկ չարութեամբ գովէիր ։*

Խորամանկ մարդը սուտ գովասանքով և անուշ խօսքով կը մօտնէ մարդը. սուտին չափ անգամ գո-վեստը նախատինքէն աւելի ճաւա կը բերէ ։

Այս գործ է մատնիչ սուտ բարեկամին,
Որ առէ զընկերն յիւր վատ ներբողին.
Քաղցր գեղգեղեալ ըձայն մահաբերին,
Մատնէ զայն հնարիւք ժանեաց օրհասին:
Են և անձնասէրք որ 'ի շահ անձին
Ոչ խղճեն զըրկել զբարիս օտարին.
Ցոր ինչ վաստակին զոր ինչ և խօսին՝
Զամենայն յիւրեանց շրջեն 'ի բարին:

## ՇԻՆԱԿԱՆ ԵՒ ԳԱՌՆ

Զի՞նչ զօրաւոր քան ըզկաշառ՝
Որ շատ գործոց լինի պատճառ:

Կաշառքն այնչափ զօրաւոր է
Որ աշխարհքին բանը կարգէ:

Մղք. Գեղացի մը կերթար միշտ իշխանին որ իր խնդիրքը կատարէ. բայց իշխանն ամէն անգամ որ կը տեսնէր ան՝ չտեսնելու զարնելով ուրիշ բանի հետ կըլլար, ոչ դիմացը հանել կուտար, և ոչ խօսքը մտիկ կընէր, անանկ որ յուսահատեցաւ խեղճը: Օր մը խելք ըրաւ, առաւ հետը մէկ գէր և փափուկ գառ մը կանուխ գնաց իշխանին. երբոր դուռը մտեցաւ՝ ձայն հանել տուաւ գառին. ծառաները ալ ձայնս լսածնուն պէս մէկէն տարին գեղացին իշխանին քով, որ խօսեցաւ հետը ինչ որ պէտք էր խօսիլ և խնդիրքը կատարեց: Ան ատենը գեղացին

գարձաւ գաւխն ըսաց. Շատ մեծապէս
շնորհակալ եմ քեզի, սիրելի գաւնուկս, որ
զիս արժանի ըրիր ասս բաղձալի խօսակցու-
թեան:

Խրատ է անոնց որ կաշառակեր են կարծեաց և ան-
իրաւ բան կ'ընեն, Հօսն ու կաշառքին փէսած բանը
մէկ ըլ կ'ընար փէսնել. բայց արդար դատաւորը մէջ
պէտք է ճշմարտութեան հետեւիլ:

Տես զխարգ բաղխէ ըղկուրծս խչխանին
Աշխկար մըրմռնջ ձայնի կաչառին.
Որով անխրաւ դատաւորք լինին
Եւ ոչ զօրութեամբ ճշմարիտ փաստին:
Այս ձայն խանգարէ զկարգ օրէնսդրին,
Փոխարկէ ըղսուտն 'ի տեղ ճշմարտին.
Փոխէ ըղլեզու և զխիղճ դատողին,
Բայց հանգիստանայ յայն հանդէս դատին:

## ԾԵՐ ԵՒ ՄԱՆՈՒԿ

Թէ ոչ յորդորն ազդէ խեալին,
Ուղղեսցէ զայն հարուած գանին:

Թէ խրատը օգուտ չընէ,
Դատաւորը լաւ կը ընէ:

Մըթ. Երբեմն ծեր մը տեսաւ մէկ մանուկ
ղայ մը որ պարտէզը մտեր պտուղ կը գող-

նար · սկսաւ անուշ խօսքերով խրատ տալ որ ան չարութիւը չընէ՝ երթայ անկէ · իսկ մա-նուկը ծաղր ընելով մտիկ չէր ըներ խօսքին։ Ուստի տեսաւ ծերն որ խօսքը փուճ եղաւ՝ սկսաւ խնքիրեն ըսել · ես կարծէի որ մար-դուս զօրութիւնը խօսքին և ուժին վրայ կը կայանայ, ահա խօսքս զօրութիւն մը չունե-ցաւ, նայինք ուժն ունի՞ զօրութի։ Այս ըսե-լով քարեր ժողվեց ու կը նետէր մանկանը վրայ · նայիս մանուկը շուտ մը ծառէն խնջաւ փախաւ։ Եւ այսպէս խօսքին չլսեսած բա-նը ուժը տեսաւ, մինչև զարմանալով կըսէր ծերը թէ ինչո՞ւ պէտք եղաւ իմ փորձ խրատս՝ երբոր տկար ձեռքիս ուժն անկէ աւելի բան տեսաւ։

Խրատ է մանկանց որ ծերոց խօսքը լաւ պահեն · որոնք փորձ ըլլալով փորձ բան կեն խօսեր, լաւ հարկաւոր խրատ և խորհուրդ կուտան։ Հարցու-ցին թէ աշխարհքիս որ բանը ծանրագին է · Վճիռ ե-ղաւ թէ խելացի և փորձ ծերուն խրատները։

Ահա բոյս բարուց խեւ պատանեկին
 Զոր ոչինչ շարժէ ձայն խոհականին ·
 Միակ բռնութիւնն ուղղէ զայնպիսին
 Զընկենուլ զեղեռն առնել ըղբարին։
Արդ մի՛ հեռանիր դու ըստահակին
 Անլըսող ելով ձայնի աղդողին ·
 Ամբարեա 'ի սիրտ իբր ակունս անգին
 Ըզխրատ ծերունեաց և զառակ նոցին։

## ՄԵՂՈՒ ԵՒ ՄԺԵՂ.

*Հետևեաց դու այն արուեստին*
*Որ քեզ 'ւայլոց յօգուտ կարգին,*

Անանկ բան մը սորվէ ու ալէ,
Քեզի ու այլոց շահ մը բերէ:

*մըջ․ Զմեռուան մէջ մժեղը* (սիվրիսինէկը) *գնաց մեղուներուն աղաչեց որ իրեն տեղ և կերակուր տան, խոստանալով անոնց թէ ձեր ձագերուն երաժշտութիւն կը սորվեցընեմ: Պատասխան տուին մեղուները թէ չենք ուզեր որ ձագերնիս այսպիսի արուեստ սորվին, այլ կուզենք անանկ բան սորվին որ կարենան ուրիշին կերակուր տալ և աղքատուէ ազատել, չէ թէ երաժշտութիւն գիտնալ որ բանի մը պիտանական չէ:*

Օրհնեալ է անոնց որ միշտ օգտակար բանի ետևէ ըլլալով իրենց պահերնուն անօգուտ բան չեն սորվեցնէր, որ յետոյ խեղճ չեն ըլլար ու ուրիշին ալ օգուտ կրնան ընել:

*Քաջ նաղաբանէ իմաստ առակիս*
*Յունկըն նազելի մանկանց անմեղին․*
*Ուսիր վայելուչ, սակ, պիտանիս,*
*Լեք զանօգտակարն քեզ և բոլորին:*

Թէ կըրմեիս գիտել զանպիտանս անձին,
Ոչ լինիս գիտուն՝ այլ վարիչ հողմին.
Թէ ջանաս գիտել գիտոս օգտակարին,
Ցայնժամ քեզ իմաստք բարեաց հանճարին:

## ՄԱՐԴ ԵՒ ՕՁ

Թող զապերախտն յարկած իւր չար,
Ձի ոչ գիտէ զիւր բարերար:

Ապերախտին օգնել մ՚ելլար
Երբ երախտիք բան չի ճանչնար:

մըն․ Օձ մը երբեմն քարին տակը մնացեր երբոր կը ճզմուէր՝ տեսաւ թէ անկէ մարդ մը կանցնի՝ աղաչեց որ քարը վրայէն վերցընելով զինքն ազատէ և իրեն շատ մեծ պարգևներ խոստացաւ: Մարդն ալ վերցուց վրայէն քարն, ազատեց օձը: Խակ օձը խօսքէն դարձաւ, ու բան մը չէր ուզեր անոր տալ, մինչև սկսան բարկանալով հակաճառութիւն ընել. ան ատենը գիպուածով անկէ կապիկը կանցնէր, կանչեցին զինքն իրենց մէջ դատաւոր գլին որ աս վէճը կտրէ: Պատասխան տուաւ կապիկը. Ես լաւ դատաստան չեմ կրնար կտրել մինչև որ չիտեսնեմ թէ ինչպէս քարին տակը սխմուած էր օձը: Աս խօսքովս պարտաւորեց օձն որ կենայ, և մարդը դրաւ քարը վրան: Դարձաւ կապիկն ըսաց, թէ ահա աս է ուղիղ դատաստան

որ գուն քարին տակը այսպէս ծածկուած սատ-
կիս ։

Ապերախտութիւնը շատ անգամ մարդը փառա-
ւանքէ մէջ կըձգէ և անօգնական կը կորսնցընէ ։
Շատ մեծամեծ մարդիկ ապերախտ մարդկանց համ-
բերելով օգտակար բան մը ըրած ատենքէ է-
րած են որ շատ բան կրնային ընել ։

Այսպէս ապերախտք գործով խաւարին
Դիմագրեն կամաց բարերար անձին ․
Մերժեն ըզնպաստ որ պարտ էր նոցին ,
Պատրաստեն անձանց կորուստ ցաւագին ։
Ուսիր ճանաչել զգործ բարերարին ,
Որ քեզ ՚ի նըպաստ բերի խնդագին ․
Զի գործ դժընդակ է դժնեայ օձին ,
Մերժել զբարերար մաշիլ առ վըշտին ։

ԻՐ.

Աղքատք մինան յաջող ելից ,
Այլ կեանք նոցա միշտ ցաւալից ։

Աղքատն որչափ հանգչելու ջանայ ,
Հանգիստն իրմէն հեռու կերթայ ։

մղչ․ Էշը ձմեռուան մէջ սաստիկ կը վըշ-
տանար ցրտէն և մինակ յարդ (սաման) կու-
տէր , ուրիշ բան չէր գտնէր ուտելու ․ և աս
պատճառաւ կը ցանկար գարնան որ ցրտէն

ազատի և խոտ գտնէ ուտելու: Գարունն որ եկաւ պարտաւորեցաւ բրուտին կաւը տանել փուռը՝ որ կաւէ ամաններ շինեն. Ո՛հ, կըսէր, երանի թէ ամառ գար որ քիչ մը հանգչէի: Ամառն ալ եկաւ՝ պարտաւորեցաւ ցորեն և պտուղ կրելու: Ան ատենն ինքիրեն ըսաց թէ ինծի շատ լաւ է ձմեռն որ տէրս ցրտէն չի կրնար աշխատիլ, ես ալ քիչ մը կը հանգչիմ:

Աղքատն ու բանւորը պէտք է որ բոլոր սրտէն աշխատին ու իրենց բեռը համբերութեամբ տանին. վասն զի համբերողին բեռը կը թեթեւնայ ու անհամբերին բեռը կը ծանրանայ:

Աղքատք գործաւորք միշտ գործել հարկին,
Ոչ անգործ մնալ յաջողակ բաղդին.
Քանզի վաստակիլ կընքեալ է նոցին,
Ճըրտանալ քաջիկ 'ի բոլոր տարին:
Եթէ փափաքիս անգործ վիճակին,
Ջանք քո և վաստակ քեզ ծանրաբեռնին.
Զի ժիրք նաև հեղգ տանիլ հարկադրին,
Նա թեթև տանի և սա ծանրագին:

## ԴԻՈՍ ԵՒ ԿՐԻԱՅ

Լաւ է փոխել զատմն յայլ տեղի,
Քան մերձ ունել չար դրացի:

Լաւ է տասն տեղ ձգել երթալ,
Քան գէշին հետ մէկտեղ կենալ:

մղէ. Երբեմն Դիոս կամեցաւ ամէն կենդանիներուն խնդիրքը կատարել. ուստի ամէնքն եկան իրենց խնդիրքը յայտնեցին. կրիան ալ եկաւ կաղաչէր որ տունը իր վրան դնէ, որպէս զի ուր որ երթայ՝ հետը տանի: Ինչո՞ւ համար, ըսաց Դիոս, կուզես աս բեռը հետդ տանել: Ան ալ ըսաց թէ շատ լաւ է իմ հետս տանիլ աս բեռը, քան թէ չար դրացին որ ունենամ չիկրնամ տեղէս շարժիլ և ամէն օր անոր նեղութիւնը քաշելով կծու խօսքը լսել:

Չար դրացիէն և չար ընկերէն պէտք է հեռու փախչիլ, վասն զի որչափ բարեկամութիւն ընես կամ ընէ պատուական բան՝ այնչափ կը չարանայ անըզգամը:

Անըզգամ ընկեր և չար դըրացին
Լըքանեն ըզսիրտ թողուլ զտուն տեղին,
Մինչ բառնալ ըզտուն թեթև դատեցին՝
Քան կալ կենակցիլ ընդ անըզգամին:

փախիր յայնպիսեաց թէ քեզ մերձեցին,
Մի պատասխաներ բանից բանսարկուին.
Կադ և թշնամանք են բերկրանք նոցին,
Զըրկել զմերձաւորն հանճար համարին:

## ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ ԻՒՐ

Մխտ գիր ծերոց ուսիր զիմաստ,
Եւ մի լինիր անմիտ գըրաստ:

Թէ որ ծերոց լուռ ըլլաս,
Խելօք գիտուն մարդ մը կըլլաս:

մղը. Մեկ խելացի ծեր մը միշտ կը խրատեր որդին որ ժամանակը փուճ չիծախէ, ուսման միտք դնէ ու բան սորվի և ախտաւոր չար սովորութիւնները վար դնէ: Բարի ծերը գիշեր ցորեկ կը ջանար միտքը խօթել, թէ ինչպէս աղնիւ և գեղեցիկ է առաքինութիւնը, և քանի զզուելի և գէշ բան է մոլութիւնը: Պատասխան տուաւ որդին լրբութբ. Կաղաչեմ, հայրիկ, շատ երկան մըներ, մտածէ թէ ես որ այնչափ քարոզիչներէ յորդորանք լըսեր եմ առաքինի ըլլալու համար և մինչ չեմ ըրած, դուն որ քարոզիչ չես ինչպէս պիտի մինչ ընեմ խօսքիդ:

Տգէտ և ապիկար մարդիկ խելացիներուն խրատը բանի տեղ չեն դներ, որովհետև իրենց

ըսր մուրաթէնը դէմ է, բայց որ կուգայ որ ըսէ կը ղղջայ, և կը ճնշուին ան խորհուրդներն ու չեն կրնար գտնել։ Ով որ իր ծնողաց կամքը՝ ըստր կը մերժէ և ետքը կը խոստովանի, կըսէ տոտոկը։

Այս վայրենամիտ բարք ըստահակին՝
Որ զխնամս ծերոց կոխէ առ ոտին.
Գիտութիւնք խրատք բարոյականին՝
Ներհակ են ախտից ներհակ և վատին։
Թէ անուս են միտք դատմունք խաւարին,
Չեն մարդոյ դատմունք, այլ բան անբանին.
Զի այր անխրատ 'ի պատկեր շրջի,
Մարդ անբանական անբան 'ի բանին։

## ՀՈՎՒԻՒ ԵՒ ՇՈՒՆ

*Ծանր են զրկանք բարեկամին՝*
*Քան մեծ չարիք դառն ոսոխին։*

Շատ գործէնք աղէրախտ է
Բարերարին որ չար կընէ։

*Մղթ. Հովիւն ոչխարներն իր շանը յանձնեց որ հոգ տանելով նայի զանոնք, և շատ առատ կը կերակրէր շունն որ լաւ հոգայ. իսկ շունն ամէն օր մէյմէկ ոչխար կը սպանէր կուտէր։ Երբոր իմացաւ տէրը բռնեց շունը կապեց որ մեռցընէ, շունն ոտքն ընկաւ կաղաչէր. Տէր իմ, կըսէր, զիս մի սպաններ, որովհետև քեզի ընտանի ծառայ եմ։*

*Պատասխան տուաւ ծերը, թէ եւս առա-ւել մահապարտ ես դուն որ ինծի ընտանի ըլլալով՝ հաւատացի քեզի ու ատանկ անի-րաւութիւն ըրիր ինծի. ատ ըսելով զարկաւ մեռցուց:*

Աւելի արժանի են պատուհասի անոնք որ ի-րենց բարեկամին չարութիւն կընեն, հաւատարիմ կը ձեւանան՝ և անհաւատարիմին չափ գէշութիւն կը-նեն:

*Քանի՛ անիրաւ գործ դաւաճանին*
*Ընկեր բարեկամ թշնամանողին.*
*Որով և կրէ զարժանիս անձին՝*
*Դառըն տանջանաց պատուհաս կրկին։*
*Զի՛նչ դժընդակ կիրք սրտի նենգողին*
*Աւել և առիլ նըման գազանին.*
*Ընկերսիրութիւն մերժեալ է ինքնին,*
*Որ միակ զարդ է բուն բանականին։*

## ԱՌԻՒԾ ԵՒ ԿԱՊԻԿ

*Չէք ինչ խոտան յէից կարգին*
*Որ 'ի պիտոյս ինչ ոչ կարգին:*

Ամէն բանէն օգուտ կելլէ,
Բանը խելքով գործածելն է:

*J. Առիւծը չորքոտանիներուն թագաւոր ըլլալով՝ բոլորը գլխուն ժողվեց պատերազմի ելաւ թռչուններուն դէմ. ուստի բանակ* (օրտու) *կազմելով՝ բոլոր կենդանիները կարգի դրաւ թշնամիներուն դէմ որ պատերազմի: Բայց կապիկը նայեցաւ որ էշն ու նապաստակն ան կարգին մէջն են, հարցուց առիւծին թէ ասոնք հոս ինչո՞ւ են կեցեր, ասանկ վախկոտները կրնա՞ն պատերազմ ընել: Ան ալ պատասխան տուաւ, թէ էշը զուռնալով փողահար* (Բօռազանճը) *կըլլայ որ մեկալնոնք ծեծկուին. իսկ նապաստակն ալ արագ փախչելովը սուրհանդակ* (Թաթար) *կըլլայ՝ խօսք տանի կը բերէ:*

Աշխարհքիս մէջն անպէտ բան մը չէ ստեղծուած, ամէն բան պիտոյական է երբոր տեղն իրեն՝ ու խելքով գործածուի:

*Չըքնաղ են ծնունդ մօր նախատեսին,*
*Չքնաղ՝ի գործ ինչ կարգեալք ըստ յատկին.*

Ամենայն էակք 'ի գործ պիտանին
Բաց հանգիստանան երբ 'ի հորկ բերին։
Մի ինչ արհամարհ դատիր և չնչին,
Զի չէք ինչ անպէտ 'ի գործս արարչին.
Թէ ուշիմ մտօք կշռես ըզնեւըքին՝
Ըզմասին ընդ գործ անցնիւր էակին։

---

### ԲԱՐԵԿԱՄՔ

Բեղ բարեկամ լիցի անգին,
Որ յանդ կցորդ կայ քոյդ անձին։

Ան բարեկամ զեղչի ընտրէ,
Որ թէ խնդիր զեղ կը բանէ։

Յառ. Մէկ մեծատուն մը առատասիրտ ըլլալով՝ միշտ իր բարեկամներուն հարկեր կընէր, որոնք գիշեր ցորեկ քովէն չէին պակսեր և մեծ պատուով կը բարեւէին զինքը։ Օր մը կամեցաւ փորձել աս բարեկամները թէ արդեօք պէտք եղած ատենը կը հասնի՞ն օգնութեն իրեն հարկաւորութեանը. ուստի ձեւացուց թէ հակառակութեն ունի թշնամիներուն հետ որ զինքը պիտի սպաննեն, աղաչեց բարեկամներուն որ աս նեղութեան մէջ իրեն օգնեն։ Տեսաւ որ երկու բարեկամէն 'ի զատ մէկը չեկաւ. ան ալ մինակ աս երկուքը բարեկամ պահեց իրեն, մէկալները բոլոր փոխեց։

Ճշմարիտ բարեկամն ու սուտ բարեկամը ձախոր-դութեան մէջ կը յայտնուին. Խիստ դժուար կը գտնուի ճշմարիտ բարեկամը, անոր համար միշտ ցան-կալի է։ Աղէքսանդր Մակեդոնացին հարցուցին թէ ո՞ւր է գանձդ. ան ալ բարեկամներս ըսաւ։

Ընտրեալ 'ի բնոյ անգիւտ մտերիմ
Ի կեանս և 'ի մահ կայ ընդ մտերմին.
Զոր ընդ գանձս երկրի 'ի կշիռ եդին,
Ծանրեաց 'ի կշիռ յարգ բարեկամին։
Թէ տիրես գանձուց և հանքաց երկրին,
Զունիս բարեկամ քեզ հաւատարիմ.
Զարժէն և ոչինչ այն հանք այն ոսկին,
Որ գան և գընան ըստ բերման բաղդին։

## ԱՐՏԱՎԱՐ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՔ

*Զոր ինչ կարես անձամբ գործել՝*
*Բարեկամաց զայն մի յանձներ։*

Գործէ որչափ ձեռքէդ կուգայ,
Զի ուրիշէն քեզ շահ չիկայ։

ՃԶ. Հարեղաձագը կամ արտուտ թռչու-նը բուն շիներ էր արտի մը մէջ. օր մը կե-րակուր բերելու գնաց ձագերուն, պատուի-րեց անոնց որ ինչ լսեն՝ իրեն պատմեն։ Քիչ մը անցաւ արտին տէրն եկաւ ու նայեցաւ որ ցո-րենը հասած է, ըսաց իր զաւկին՝ թէ առա-ւօտուն կանուխ երթայ բարեկամները կան-

չէ որ զան միատեղ հնձեն: Երբոր դարձաւ Թռչունը՝ վրան Թափեցան ձագերն աղաչելին որ զիրենք անկէ հանէ՝ վասն զի բարեկամները վաղը պիտի գան հնձեն ցորենը: Իսկ մայրը սիրտ կուտար ձագերուն Թէ մի վախնաք. եԹէ արտատէրը բարեկամներուն յանձնեց՝ վաղը չի հնձուիր ցորենը՝ հանգիստ կեցէք: Արտատէրը մէկալ օրը նորէն գնաց կերակուր բերելու. ձագերը նայեցան որ արտին տէրն եկաւ շատ սպասեց եկող մը չեղաւ, ուստի ըսաց որդւոյն Թէ երԹայ ազգականներուն և դրացիներուն ըսէ որ վաղը գան կտրեն: Աս երբ լսեցին ձագերը, վախնալով մօրերնուն պատմեցին. ան ալ՝ մի վախնաք ըսաց բան չիկայ: Ան օրն ալ տէրն եկաւ սպասեց՝ մարդ մը չեկաւ. ապա ըսաց որդւոյն Թէ ահա ամէնքը մեզ խաբեցին չեկան, ուրեմն վաղը կանուխ մէյմէկ մանգաղ առնենք մենք գանք հնձենք ցորենը: Ան որ լսեց Թռչունը առաւ ձագերը փախաւ՝ ըսելով Թէ հիմա կաւտամ որ կը հընձուի ցորենը, վասն զի գործքն իրենց մնաց:

Աստակս կը խրատէ Թէ ան բանն որ մեր ձեռքէն կուգայ՝ պէտք չէ ուրիշին յանձնել, վս զի օտարին ցաւ չընկայ, ամէն մարդ իր շահը կը նայի:

Այսչափ են խընամք սէրտ բարեկամաց
Որ անգործ Թողուն ըզգործ մտերմաց.
Այժմեան բարեկամք խնդրեն շահ անձանց,
Ոչ զք մտադրեն յօգուտ ընկերաց:

Վայ որ ապաստան լինի մաներմաց ,
Զոր անձամբ կարէ՝ Թողու օտարաց ·
Օտարք վաստակին միայն վասն ինքեանց ,
Մի ակնկալցի շահ յայլոց ձեռաց ։

## ԱՊՈՂՈՆ ԵՒ ՊԱՏԱՆԻ

Արդ մի փորձեր զայր գիտնական ,
Մի ծաղրեսցիս լրբև անբան ։

[illegible] ,
[illegible] ։

ՃԴ. Մէկ չարամիտ պատանի մը գնաց Դեղոս կղզին Ապողոն չաստուծին կռատունը , և փորձելու համար Թռչուն մը ձեռքն առաւ լաթին տակը պահեց , ու արձանին մօտեցաւ հարցուց Թէ ձեռքս որ ունիմ գիտցիր շնչաւո՞ր է Թէ անշունչ ։ Միտքը դրաւ որ եթէ անշունչ ըսէ՝ Թռչունը ողջ պիտի դուրս հանէ , և Թէ շնչաւոր ըսէ՝ մէկէն խեղդէ անանկ պիտի ցոյց տայ ։ Ապողոնին քուրմին կնիկը բանը հասկընալով պատասխան տըւաւ կուռքին բերնէն Թէ ինչպէս կամիս անանկ ըրէ , կուզես ողջ հանէ՝ կուզես մեռած , որովհետև անոր կեանքը քու ձեռքդ է ։

Օրինակ է [illegible]

— փորձել ու երբեմն իմաստուններն արհամարհել,
Բայց միշտ խայտառակ ըլլալ:

Ահա վատ խորհուրդ թերահաւատին
Որ փորձել ժըպրհի զոյժ նախախնամին·
Անդէն խայտառակ լինի 'ի բանին,
Մերժի յիմաստնոց զերթ իմաստակին:
Մի լինիր քննիչ օրինականին,
Եւ մի անգոսներ զծեալս արարչին·
Զի դու չես կարգեալ դատաւոր նոցին,
Նա քեզ դատաւոր օրինօք վերին:

## ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՍԿԻ

Գանձ և ոսկի գործի չարին՝
Դիմեն 'ի ձեռս զրկող ժանտին:

Գանձն ու ոսկին չարին կերթան,
Որ չարութեան գործի ըլլան:

Յղ. Առաքինութիւն երբեմն զարմանալով կըսէր ոսկիներուն թէ ինչո՞ւ համար առաւել կուզէք չար մարդկանց ձեռքն երթալ քան թէ բարիներուն: Անոնք ալ պատասխան տուին թէ մեր աշկերտները վաշխ առնելով զրկանք կընեն, սուտ տեղը կերդւըննան և ալ շատ անօրէն բաներ ընելով կը շահին մեզ, իսկ քու աշկերտներդ ասոնց հակառակը կընեն, անոր համար կը հարկադրինք առաքինի բարեպաշտներէն փախ-

*չիլ և զըկող չարերուն ձեռքն երթալ : Ա-ռաքինութենն ալ ըսաց · Որովհետև տեսանկ է՝ ես ալ աւելի կուզեմ որ իմ աշկերտներս աղքատ ըլլան քան թէ փարթամ :*

Խրատ է անոնց որ դրկողութեամբ կուզեն հարըս-տանալ · շատ աղէկ է աղքատ ըլլալ քան թէ դրկող մեծատուն , վասն զի աղքատութիւնը կանցնի , բայց դրկողութիւնը կը մնայ յաւիտեանս յաւիտենից : Շատ աղէկ է արդար աղքատը քան սուտ մեծա-տունը , կըսէ Սողոմոն :

*Ընտրելի վիճակ գըտնայ.ք աղքատին*
*Անհոգ և անխինչ ըղմայլող յանձին ·*
*Ձի ոչ մաշէ կեանս 'ի գիւտ գըրամին ,*
*Մաշէ զամենայն 'ի ստանալ բարին :*
*Նա կեանք անդըրաւ գոհար է անգին ,*
*Մի վատներ գիւրաւ 'ի գիւտ կորուսչին ·*
*Առ ինչ մթերել զայն գանձ փըտելին ,*
*Երբ մաշեալ վատնէ ըղխիրտ և հոգին :*

## ԳԻՏՈՒՆ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾ

Եթէ խնդրես, խիղճ, զուղղութիւն,
Արդ նախ յանձին խնդրեա ըզնոյն։

Թէ կուզես մէկն արդար ըլլայ,
Առաջ նայէ քու քովդ կա՞յ։

յէ. Երկրագործ մը մէկ հարուստի մը քով տարիներով կաշխատէր. երբոր ատենն եկաւ որ քովէն ելլէ, ուզեց իր վարձքը։ Ան ալ պատասխան տուաւ թէ խիստ լաւ, բայց դուն ալ կերածիդ ստակը տուր, վասն զի ինչ որ կաշխատէիր՝ ես քեզի կրկինը կը կերցնէի որ լաւ գտնիս։ Շատ վիճաբանութիւն ընելէն ետև դատաւորին առջին ելան. երկրագործը կըսէր թէ իրաւունք է որ մշակն եղած տեղն ուտէ, և իր վարձքէն ալ չիզրկուի. իսկ հարուստը կաշառքին ուժով դատաւորն իր կողմն ըրաւ որ այսպէս վճիռ կտրեց. թէ որ կերածն աշխատանքէն քիչ է՝ թող պարտաւորի հարուստը հատուցանելու, իսկ թէ շատ է՝ ինչպէս կը վկայէր հարուստը, թող երկրագործն աշխատելով հատուցանէ։ Աս որ լսեց խեղճը գլխուն զարնելով կը պոռար թէ արդարութիւն չիկայ, խղճմտանքը մեռաւ։ Անոր ատանկ լացը տեսաւ գիտուն մարդ մը մխիթարելով ըսաց. Ինչո՞ւ կը կանչես լալով

խղճմտանքը չէ մեռած մի լար, հապա բոլո-րովին համբարձեր է, վասն զի թէ որ մեռած ըլլար՝ գէթ մէկ ոսկորը կը մնար:

Արդարութեանն ու խղճին միջև դժուարագիւտ է՝ ճանապարհ հիմա, թերևս ամէնքը կը փնտրեն զինքն ուրիշին քով, և իրենց քով ամէնքն չեն փնտրեր:

Քանի՛ պանծալի բան գիտնականին
Համարի զուղիղն յանուրեք վայրին,
Թէ գոյր ուղղութիւն լինէր 'ի նմին
Որ յայլս որոնէ յօտարաց անձին:
Զի՛ վայես յիմար զուղիղն ընդ խղճին՝
Որք 'ի վաղ դարուց անուեղի շրջին.
Նա զի չեն հեռի թէ կոչես յանձին,
Անխիղճք միայն զայն յինքեանց մերժեցին:

## ԾԵՐ ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Վայ որ չար ինչ խորհի ծնողին.
Որդիքն ըզնոյն առնեն նմին:

Ինչ որ ընես ծնողիդ դէմ,
Քու զաւակդ կընէ քեզ դէմ:

յղ. Մէկ անզգամ որդի մը իր ծեր հայրը տնէն դուրս կընէ. անաւ կերթայ հիւանդա-նոցը կը պառկի, երեսի վրայ կը մնայ խեղ-

*Ջուխթ*: Օր մը որդին անկէ կանչնէր, կանչեց ըսաց հայրը Թէ կաղաչեմ, որդի, ինծի ջուխտ մը կապերտ (+ϟԼϟՏ.) խրկէ իմ բանտերէս որ վաստակովս գներ եմ: Որդին ալ մեզքընալով տուաւ իր որդւոյն երկու կապերտ խրկեց հօրը: Իսկ ծերը մէկն առաւ, մէկալն որդւոյն խրկեց, և ըսաց Թոռանը Թէ կուզեմ որ հայրդ լաւ պահէ աս մէկ կապերտն իրեն համար, վս զի երբոր ինքն ալ հիւանդանոցը գայ իյնի՝ ինչպէս ես եմ եղեր, պէտք կըլլայ իրեն:

Զաւակ մը ինչ որ ընէ իր ծնողացը՝ ան կը գտնէ, Թէ բարի ըլլայ և Թէ չար · Վայ ան զաւկին որ չար ընելով ծնողաց սիրտը կը ցաւցընէ ու չարաչար կը պատուհասուի: Սոկրատ փիլիսոփան կըսէր Թէ պատուեցէք ծնողքնիդ որ քեզ կեանքին պատճառ են, իսկ վարժապետը՝ որ բարի կենաց պատճառ է:

Ո՜վ զխարդ անգութ սիրտ ժանտ զաւակին
 Դառնանայ ընդդէմ իւրոյ ծընողին ·
 Անտուն անտեղի առնէ ծերունին,
 Որ ինքեան զգող բաշխեաց զտուն տեղին:
Սակայն անյեղլի օրէնք երկնային
 Անձին վերբերեն զոր գործեաց նմին ·
 Թէ պատուասիրեաց՝ հանգիստ պատուին·
 Եւ Թէ անարգեաց՝ կրկնի չարեքին:

## ԾԵՐ ԵՒ ՄԱՀ

*Զի՞նչ սոսկալի կիրք բռնական*
*Քան զապաժոյժ երկիւղ մահուան :*

Մահին գալն է դառն ահագին ,
Մինչ ծեր փղան կը սահմանին :

*յէ · Օր մը մէկ ծեր մը փայտ կտրելու համար լեռը կերթայ, և կտրած փայտերը կապէ բեռ կը շինէ, և երբ բեռցուած կը բերէր քաղաքը, Ճամբան երկան ըլլալով խիստ կը հոգնի՝ մինչև ալ չի դիմանար բեռը վար կը ձգէ ու կըսկսի մահը կանչել որ իրեն հասնի: Նայիս յանկարծ մահն երեւցաւ իրեն և հարցուց թէ զիս ինչո՞ւ համար կանչեցիր: Պատասխանեց ծերը դողալով· Անոր համար կանչեցի որ գաս բեռս վրաս բեռցընես :*

Որչափ մեծ նեղութեան մէջ ըլլայ մարդ և որչափ ծերութեամբ չարչարուի՝ մահէն կը փախչի և ապրիլ կուզէ, վասն զի բնութիւնը չուզեր փախչիլ և հոգին մարմինէն զատուիլ՝ որ սոսկալի վիճակ մըն է և ամենաճշմարիտ · բայց դժգայութիւնը կը խաբէ մարդը հեռու դնելով մահը որ միշտ մահկանացուաց քով կը շրջի :

*Ո՜հ դըժոխերես տեսիլ օրհասին՝*
*Բռնոյն բռնաւոր ըղձայականին ,*

Թըշնամի կենաց հատանող թելին,
Ատելի ծերոց մինչ 'ի շունչ վերջին։
Մի կոչեր ըզմահ 'ի չար արկածին,
Մի 'ի քէն ելցէ յիշատակ նորին.
Զի մահ գիտացեալ չէ մահ՝ այլ բաժին,
Մահ ոչ գիտացեալ մահ է չարածին։

## ՄԱՀ ԵՒ ԾԵՐ

Բուռն և ազդու է ձայն մահուան
Որ ցանդ հնչէ 'ի լուր մարդկան։

Մահն անդադար մեզ ձայն կուտայ,
Չենք ականջնար թէ ի՞նչ ձայն կայ։

ՅԸ. Երբեմն մահն եկաւ յանկարծ ծերու մը վրայ հոգին առնելու. ծերը կաղաղակեր ու կաղաչէր որ քիչ մը ժամանակ տայերեն կտակ ընելու համար։ Պատասխանեց մահը թէ չեմ կրնար քեզի ժամանակ տալ, որովհետեւ շատ անգամ քեզի իմացուցի, դուն ամենեւին կտակդ միտքդ չբերեիր։ Ե՞րբ ինծի իմացուցիր, ըսաց ծերը։ Մահն ալ ըսաց թէ երբոր ընկերներուդ հոգին առի ինչո՞ւ միտքդ չբերեիր թէ օր մը ինծի ալ կուգայ. շատ անգամ մանուկներուն և կըտրիճներուն հոգին առի՝ տեսար. շատ հեղ ըսեցիր որ դըրացիներդ վերուցի տարի. կը տեսնէիր որ ուժդ պակսեր է, մարմինդ մաշեր գացեր է և աշխարհք քեզի համար հին-

ցեր է՝ դուն աշխըրքիս փակեր էիր. եւ աստանկ բաներով գիշեր ցորեկ քեզի խմացում կուտայի, դուն ամենևին չէիր պատրաստուեր: Քեզի պէտքը չէր որ ան ատենը մահդ մտածելով կարգաւորէիր բանդ ու աս կէտիս չհասնէիր, ուրեմն եւ եկո պատասխան տուր գործքերուդ:

Պէտք է միշտ արթուն և պատրաստ կենալ մահին գալստեանն որ ամէն րոպէ մօտ է մահկանացուաց. որովհետև գալը ստոյգ ճշմարիտ է՝ այնպէս ալ անգիտելի է գալուն օրերը: Երանի մարդուն որ պատրաստ գտնուելով՝ իւր մահուան արժանի կըլլայ որ մի միայն հոգածանն է մարդուն, որովհետև յաւիտենական կենացին մէջ կը մտնէ որ ծայր ճաշ չունի: Ահա այս յաւիտենական կենացը կատարելութիւններն աւետարանէն որ կրօնքներով և օրհնութիւններով յանացին մարդիկ ատելութին ընել և անմահ. ինչպէս մեզի աւանդեց Եղնիկեան էր, որոն կրօնքներն էր իւրենակաց՝ Թէսակէս ինքը կատարեալ: Ան ահա և մեր հոգածանն որ կամեցաւ քրիստոնեաներուն պէտք ատելութին վէճէն մեր մանկութեամբ և իմաստութեր, որպէս մի իւրն հաւատացեալներն ալ անդամոր կենացն և երջանիկ ըլլան:

Զարթիր 'ի քընոյ մարդ եղծանելի,
  Ահա աղգարան 'ի դուռըն մերձի.
  Զայնէ հանապազ հրաժարիլ աստի,
  Գնալ յանվախճան և յանդարձ ուղի:
Արթուն կաց ընդ ձայն ըզգեղ կոչողի,
  Զի մի անպատրաստ հասցէ փեսերի.
  Թէ լսես զձայնն յընկեր դըրացի,
  Մերձ ծանիր զնա 'ի քեն ոչ հեռի:

# ՑԱՆԿ

## ՎԱՐՈՒՑ ԵԶՈՎԲՈՍԻ


| | | |
|---|---|---|
| Գլ. Ա. | Հանգամանք Եզովբոսի. | 3 |
| Գլ. Բ. | Զրպարտութեն Եզովբոսի. | 7 |
| Գլ. Գ. | Հիւրասիրութեն Եզովբոսի. | 11 |
| Գլ. Դ. | Վաճառումն Եզովբոսի. | 13 |
| Գլ. Ե. | Ճարտարմտութիւն Եզովբոսի. | 17 |
| Գլ. Զ. | Երկրորդ վաճառումն Եզովբոսի. | 19 |
| Գլ. Է. | Եզովբոս երթայ 'ի տուն. | 25 |
| Գլ. Ը. | Պատասխանատուութեն Եզովբոսի. | 28 |
| Գլ. Թ. | Խորամանկութիւն Եզովբոսի. | 31 |
| Գլ. Ժ. | Վրէժխնդրութիւն Եզովբոսի. | 34 |
| Գլ. ԺԱ. | Եզովբոս դարձուցանէ ըզտիկինն 'ի տուն. | 38 |
| Գլ. ԺԲ. | Սպաս Եզովբոսի. | 39 |
| Գլ. ԺԳ. | Երկրորդ սպաս Եզովբոսի. | 41 |
| Գլ. ԺԴ. | Հնարագիտութիւն Եզովբոսի. | 42 |

Գլ. ԺԵ. Խօսք Եզովբոսի ընդ դատաւորին. 46
Գլ. ԺԶ. Համձար Եզովբոսի. 47
Գլ. ԺԷ. Ապերախտութիւն Քսանդոսի ընդդէմ Եզովբոսի. 51
Գլ. ԺԸ. Փորձէ Եզովբոս զփխանականս. 52
Գլ. ԺԹ. Հնագիտութի Եզովբոսի. 54
Գլ. Ի. Ազատութիւն Եզովբոսի. 57
Գլ. ԻԱ. Եզովբոս հաշտեցուցանէ զթագաւորն. 63
Գլ. ԻԲ. Եզովբոս դրէ զառակս իւր. 65
Գլ. ԻԳ. Եզովբոս որդեգրէ ինքեան զԵննոս. 67
Գլ. ԻԴ. Անյիշաչարութի և խրատք Եզովբոսի. 70
Գլ. ԻԵ. Եզովբոս կրթէ զձագս արծուոյ. 72
Գլ. ԻԶ. Իմաստութիւն Եզովբոսի. 76
Գլ. ԻԷ. Եզովբոս գնայ 'ի Յոյնս և 'ի Դելփոս. 80
Գլ. ԻԸ. Մահ Եզովբոսի. 83

# ՑԱՆԿ ԱՌԱԿԱՑ

## ԸՍՏ ԿԱՐԳԻ ԱՅԲՈՒԲԵՆԻՑ

Երես.


| | |
|---|---|
| Ագահ և Անյաւոր · | 295 |
| Ագահ և Նախանձող · | 373 |
| Ագահ և Որդի իւր · | 467 |
| Ագահ հիւանդ · | 473 |
| Ագահ դեսպան (էլչի) · | 488 |
| Ագռաւ (գարղա) և Արծիւ · | 105 |
| Ագռաւ և Աղուէս · | 107 |
| Ագռաւ և Ոչխար · | 174 |
| Ագռաւ և Արծիւ · | 191 |
| Ագռաւ ծարաւի · | 242 |
| Ագռաւ և Թռչունք · | 536 |
| Ազգական և Փարթամ · | 444 |
| Ածխագործ (քէօմիւրճի) և Ներկարար · | 254 |
| Ալախին (հալայըճը) և Պառաւ · | 305 |
| Ալաւնի (կիւվերճին) և Ուրուր · | 119 |
| Ալաւնի և Բազէ · | 141 |
| Ալաւնի և Մրջիւն · | 208 |
| Ալաւնի և Անօթ · | 433 |
| Աղբիւր և Գետ · | 351 |
| Աղուէս (թիլքի) և Ագռաւ · | 107 |
| Աղուէս և Արծիւ · | 109 |
| Աղուէս և Արագիլ · | 130 |
| Աղուէս և Կապիկ · | 137 |

Աղուէս և Գայլ․ 143
Աղուէս և Խաղող․ 147
Աղուէս և Կապիկ․ 152
Աղուէս և Աքիս․ 157
Աղուէս և Աքաղաղ․ 183
Աղուէս և Կատու․ 185
Աղուէս, Գայլ և Կապիկ․ 197
Աղուէս և Մորենի․ 198
Աղուէս և Առիւծ․ 206
Աղուէս և Գորտ․ 219
Աղուէս և Ընձառիւծ․ 251
Աղուէս և Աքաղաղ․ 263
Աղուէս և Կոկորդիլոս․ 272
Աղուէս, Առիւծ և Արջ․ 279
Աղուէս և Կինճ․ 298
Աղուէս, Առիւծ և Էշ․ 303
Աղուէս և Ձեա խուր․ 318
Աղուէս և Երկրագործ․ 333
Աղուէս և Նոխազ․ 385
Աղուէս և Գայլ․ 389
Աղուէս և Առիւծ հիւանդ․ 391
Աղուէս և Շուն․ 439
Աղուէս և Աքաղաղ․ 480
Աղուէս և Առիւծ․ 483
Աղուէս և Շուն․ 495
Աղքատ և Գող․ 364
Այգեգործ (պաղչըվան) և Որդիք իւր․ 320
Այգի և Եղջերու․ 332
Այծ (քէչի) և Առիւծ․ 241
Այծ և Հովիւ․ 353
Այր անհեր․ 268
Այր և Կին․ 424
Անգղ (ակպապա), Առիւծ և Կինճ․ 336

| | |
|---|---|
| Անդամք և Որովայն · | 151 |
| Անտառ (ծառն) և Փայտահատ · | 146 |
| Անցաւոր և Ագահ · | 295 |
| Անօթ երկաթի և Անօթ խեցեղէն , (գաղ · պարբերագ) · | 226 |
| Անօթ և Աղաւնի · | 433 |
| Ապողոն , Դիոս և Մոմոս · | 315 |
| Ապողոն և Պատանի · | 541 |
| Առաքինութիւն և Ոսկի · | 512 |
| Առիւծ (ասլան) և Կենդանիք · | 98 |
| Առիւծ ծեր · | 111 |
| Առիւծ և Մուկն · | 114 |
| Առիւծ , Էշ և Աքաղաղ · | 163 |
| Առիւծ և Ուլ · | 167 |
| Առիւծ և Մարդ · | 169 |
| Առիւծ և Աղուէս · | 206 |
| Առիւծ և Այծ · | 241 |
| Առիւծ , Արջ և Աղուէս · | 279 |
| Առիւծ և Գորտ · | 287 |
| Առիւծ , Աղուէս և Էշ · | 303 |
| Առիւծ և Որսորդք · | 345 |
| Առիւծ , Կինճ և Անգղ · | 346 |
| Առիւծ և Որսորդ · | 370 |
| Առիւծ և Ճանճ · | 381 |
| Առիւծ հիւանդ և Աղուէս · | 391 |
| Առիւծ և Ցուլք · | 394 |
| Առիւծ և Գայլ · | 410 |
| Առիւծ և Ցուլ · | 469 |
| Առիւծ և Աղուէս · | 483 |
| Առիւծ և Կապիկ · | 507 |
| Առնէտք և Կաղնի · | 449 |
| Աստղաբաշխ · | 280 |
| Աստղաբաշխ մոդ (փոքր) · | 326 |

Արագիլ (ԼԷՅԼԷԿ) և Աղուէս . 150
Արագիլ և Հողագործ . 308
Արծիւ (ԳԱՐԴԱԼ) և Ագռաւ . 105
Արծիւ և Աղուէս . 109
Արծիւ և Ագռաւ . 191
Արծիւ և Կրիայ . 215
Արծիւ և Բզէզ . 238
Արծիւ և Նապաստակ . 248
Արծիւ Նետահար . 343
Արծիւ և Կաչաղակ . 364
Արծիւ , Բազէ և Ցին . 405
Արծիւ և Սիրամարգ . 476
Արջ (ԱՅԸ) , Առիւծ և Աղուէս . 279
Արջ և Մեղուք . 402
Արտավար (ՉԻՖՉԻ) և Հաւ . 193
Արտավար և Կարապ . 358
Արտավար և Բարեկամք . 509
Արտուտ (ՉԱՅԸՐ ԳՈՒՇՈՒ) և Հաւորս . 464
Աւազակ հեղձեալ . 261
Աւազակ և Դիոս . 285
Աքաղաղ (ԽՕՐՕԶ) և Մարգարիտ . 81
Աքաղաղ , Առիւծ և Էշ . 165
Աքաղաղ և Կաքաւ . 174
Աքաղաղ և Աղուէս . 185
Աքաղաղ և Հնդկահաւ . 186
Աքաղաղ և Կատու . 195
Աքաղաղ և Աղուէս . 265
Աքաղաղ և Բազէ . 294
Աքաղաղ և Գողք . 426
Աքաղաղ և Աղուէս . 480
Աքիս (ԿԷԼԻՆՃԻԿ) և Աղուէս . 157

Բազէ (ՇԱՀԻՆ) և Աղաւնի . 141

Բազէ և Աքաղաղ · 291
Բազէք · 358
Բազէ , Արծիւ և Ցին · 405
Բաղդ և Երիտասարդ · 324
Բաղդ և Երկրագործ · 416
Բանաստեղծ և Էշ · 492
Բարեկամք · 508
Բարեկամք և Արտա[illegible] · 509
Բզէզ (պէօճէկ) և Արծիւ · 238
Բէշկ մշկոյ (գոնդպուղ) և Որսորդք · 292
Բժիշկ երկու և Հիւանդ · 252
Բժիշկ և Մեռելաթաղ · 282
Բժիշկ կարկատիչ (էսկիճի) · 299
Բժիշկ և Պառաւ · 460
Բժիշկ և Հիւանդ · 465
Բու (պայղուշ) և Թռչունք · 489
Բու և Չղջիկ · 415

Գայլ (գուրթ) և Գառն · 92
Գայլ և Կռունկն · 99
Գայլ և էգ Խոզ · 121
Գայլ և Ուլ · 126
Գայլ և Կխարձան · 132
Գայլ և Աղուէս · 143
Գայլք և Ոչխարք · 144
Գայլ և Շուն · 148
Գայլ և Փայտահատ · 160
Գայլ և Ջորի · 177
Գայլ և Ոզնի · 182
Գայլ և Շունք · 190
Գայլ, Աղուէս և Կապիկ · 197
Գայլ և Վագր · 253
Գայլ և Շուն վախտ (չաթիգ) · 258

Գայլ փոքր և Հովիւ · 312
Գայլք և Ոչխարք · 349
Գայլ և Ոչխար · 380
Գայլ և Աղուէս · 389
Գայլ և Առիւծ · 410
Գայլ և Ուլ · 425
Գայլ զառնազգեստ · 452
Գայլ և Էշ · 481
Գայլ ծերացեալ · 484
Գայլ և Գառն · 485
Գանձ (հազինէ) և Մարդ · 365
Գառն (կուզու) և Գայլ · 92
Գառն և Գայլ · 485
Գառն և Շինական · 496
Գաւազան (տէյնէկ) և Շուն · 221
Գեղջուկ և Խոզ · 472
Գետ և Աղբիւր · 351
Գինեմոլ (սարհօշ) և Կին իւր · 412
Գիշերահաւ և Կուզ · 428
Գիտուն և Ռամիկ · 371
Գիտուն և Երկրագործ · 514
Գող և Շուն · 420
Գող որդի և Մայրն · 209
Գող և Պատանի · 239
Գող և Աղքատ · 364
Գողք և Աքաղաղք · 426
Գորտ (կուրպաղա) և Մուկն · 94
Գորտք Թագաւոր խնդրեն · 117
Գորտ և Կով · 159
Գորտ և Աղուէս · 219
Գորտք · 276
Գորտ և Առիւծ · 287
Գորտք և Նապաստակք · 406

Գորտք երկու · 419
Գորտք և Էշ · 430
Գորտք և Կրիայ · 448

Դդմենի (գապագ) և Ձիթենի · 453
Դիոս և Ուղտ · 222
Դիոս և Կենդանիք · 230
Դիոս և Յաւանակ · 285
Դիոս, Ապողոն և Մոմոս · 315
Դիոս և Մարդիկ · 328
Դիոս և Կրիայ · 330
Դիոս և Կապիկ · 457
Դիոս և Կրիայ · 503
Դըլֆին (եօնուս) և Դոն · 284
Դըլֆին և Կապիկ · 314
Դոն (փալամուտ) և Դըլֆին · 284

Եզն (էօքիւզ) և Երկրագործ · 247
Եզինք և Լուծ · 264
Եզն և Կով · 347
Եզինք և Եղջերու · 400
Եզնավար և Եզինք · 487
Եղևին (չամ) և Մորենի · 255
Եղէգն (գամիշ) և Կաղնի · 476
Եղն (կէյիկ) որ նկատէ զինքն ՚ի ջրի · 455
Եղն և Ձագ իւր · 297
Եղջերու (կէյիկ) և Ոչխար · 95
Եղջերու և Այգի · 332
Եղջերու և Եզինք · 400
Եղջերու · 408
Եղջերուկ (պողղպայ գուզու) և Հաւորս · 447
Երիտասարդ և Բաղդ · 324
Երկրագործ (չիֆճի) և Օձ · 101

| | |
|---|---|
| Երկրագործ և Օձ | 128 |
| Երկրագործ և Եղն· | 247 |
| Երկրագործ և Շունք իւր· | 302 |
| Երկրագործ և Աղուէս· | 335 |
| Երկրագործ և Բաղդ· | 416 |
| Երկրագործ և Գիտուն· | 514 |
| | |
| Զինուոր և Ձի· | 451 |
| | |
| Էշ և Խոզ· | 102 |
| Էշ և փոքրիկ Շուն· | 112 |
| Էշ և Ձի· | 153 |
| Էշ, Առիւծ և Աքաղաղ· | 163 |
| Էշ հիւանդ· | 164 |
| Էշ և Տէր իւր· | 218 |
| Էշ և Երկու մարդիկ· | 257 |
| Էշ, Առիւծ և Աղուէս· | 303 |
| Էշ և Ձի· | 306 |
| Էշ բեռնաբարձ· | 341 |
| Էշ կռաբարձ· | 348 |
| Էշ և Ձի· | 399 |
| Էշ և Ցիռ· | 429 |
| Էշ և Գորտք· | 430 |
| Էշ և Շուն· | 477 |
| Էշ և Խոզ· | 479 |
| Էշ և Գայլ· | 481 |
| Էշ և Վարազ· | 491 |
| Էշ և Բանաստեղծ· | 492 |
| Էշ· | 501 |
| | |
| Ընձառիւծ (գաֆլան) և Աղուէս· | 251 |
| Ընկերք երկու· | 524 |

Թշնամիք երկու․ 277
Թութակ (տուտու գուշու) և Կապիկ․ 195
Թութակ․ 475
Թռչնորս (գուշպազ) և Օձ․ 283
Թռչունք և Ծխծառն․ 115
Թռչունք և Ջղջիկան․ 140
Թռչունք և Բու․ 189
Թռչունք և Ագռաւ․ 356
Թռչունք և Ուրուր․ 387

Իշամեղուք (էշէք արըսը) և Կաքաւք․ 465

Լալականք․ 434
Լեառն յերկունս․ 397
Լու (փիրէ) և Մարդ․ 170
Լուծ (պօյունտուրուգ) և Եզինք․ 262
Լուսինեակ (պէօճէքէւ) և Ուրուր․ 205

Խաղախորդ (Բապագ) և Ոստիկան․ 356
Խաղող և Աղուէս․ 147
Խաչափառ (չաղանօզ) և Ջագ խեր․ 216
Խարտոց (թէօրփիւ) և Օձ․ 156
Խարտոց և Կատու․ 415
Խեցգետին (ըստագօզ) և Օձ․ 409
Խոզ և Էշ․ 102
Խոզ էգ և Գայլ․ 121
Խոզ և Գեղջուկ․ 472
Խոզ և Էշ․ 479
Խոհարար (աշճը) և Շուն․ 403
Խոյ (գօչ) և Ցուլ․ 493

Ծաղիկք և Վարդ․ 265

Ծառայ և Ճուն · 454
Ծեր ամուսնացեալ · 368
Ծեր և Մանուկ · 497
Ծեր հայր և Որդի · 515
Ծեր և Մահ · 517
Ծեր և Մահ · 518
Ծիծառն (գրաբարէն) և Թռչունք · 115
Ծիծառն և Պատանի · 525
Ծիծառն և Հաւ · 431
Ծիծառն և Սարդ · 459
Ծով և Վաճառական · 289
Ծով և Ձկնկուլ · 422

Կաղնի (մէշէ) և Եղէգն · 176
Կաղնի և Առնէտք · 449
Կաչաղակ (սագըզղան) և Սիրամարգ · 159
Կաչաղակ և Սիրամարգ · 503
Կաչաղակ և Արծիւ · 361
Կապիկ (մայմուն) և Աղուէս · 137
Կապիկ և Աղուէս · 152
Կապիկ և Թութակ · 195
Կապիկ, Գայլ և Աղուէս · 197
Կապիկ և Ձագ իւր · 260
Կապիկ և Դլֆին · 341
Կապիկ և Կատու · 392
Կապիկ և Դիոս · 457
Կապիկ և Առիւծ · 507
Կառք (արաբա) և Ճանճ · 134
Կատու և Մկունք · 166
Կատու և Աղուէս · 185
Կատու և Աքաղաղ · 193
Կատու և Հաւ · 336
Կատու և Կապիկ · 392

Կատու և Խարտոց · 415
Կարապ (Բօյ գուշու) և Կռունկն · 266
Կարապ և Արտավար · 338
Կարիճ (աքրէպ) և Մանուկ · 468
Կաքաւ (քէքլիկ) և Աքաղաղ · 174
Կաքաւ և Նապաստակ · 367
Կաքաւք և Իշամեղուք · 465
Կենդանիք և Առիւծ · 98
Կենդանիք և Դիոս · 250
Կին և Ոչխար · 332
Կին և Մահ · 365
Կանայք երկու և Մարդ · 201
Կին և Այր · 424
Կինճ (եապան դօմուզու) և Աղուէս · 298
Կինճ, Առիւծ և Անգղ · 346
Կիսարձան (Բաշ գաֆա) և Գայլ · 132
Կոկորդիլոս և Աղուէս · 272
Կով և Գորտ · 139
Կով և Շուն · 188
Կով և Եղն · 317
Կուղ (ռամպար) և Գիշերահաւ · 428
Կուռք (փուտ) և Մարդ · 199
Կռունկն (Թուռնա) և Գայլ · 99
Կռունկն և Սիրամարգ · 232
Կռունկն և Կարապ · 266
Կրիայ (Թօսպաղա) և Նապաստակ · 180
Կրիայ և Արծիւ · 215
Կրիայ և Դիոս · 330
Կրիայ և Գորտք · 448
Կրիայ և Դիոս · 503

Հայր և Որդիք · 202
Հայր և Որդի Իւր · 504

Հաւ և Արտաւոր · 194
Հաւ պարարտ · 529
Հաւ և Կատու · 359
Հաւ և Ծիծառն · 431
Հաւ և Ձագ իւր · 436
Հաւորս և Սարեակ · 162
Հաւորս և Նղջերուկ · 447
Հաւորս և Մանուկ · 456
Հաւորս և Արտուտ · 464
Հերմէս և Փայտահատ · 212
Հերմէս և Ուղևոր · 462
Հերքիւլէս և Շինական · 470
Հիւանդ և երկու Բժիշկ · 252
Հիւանդ և Բժիշկ · 465
Հնդիկ (առակ) · 288
Հնդկահաւ (Հինդ Թռչուն) և Աքաղաղ · 186
Հողագործ և Արագիլ · 508
Հողամաղ (գարապաթակ) Մորենի և Չըղ-
ջիկան · 255
Հովիւ սատախօս · 204
Հովիւ և Շուն · 293
Հովիւ և Գայլ փոքր · 312
Հովիւ և Որսորդ · 340
Հովիւ և Այծ · 355
Հովիւ և Ոչխար · 360
Հովիւ և Ոչխարք · 435
Հովիւ և Շուն · 505

Ձի և Էշ · 133
Ձի և Էշ · 306
Ձի և Ձիադարման · 335
Ձի և Մարդ · 388
Ձի և Էշ · 399

Ձի և Զինուոր · 454
Ձիթենի (զէյթին աղաճը) և Դդմենի · 455
Ձկնկուլ (գարապաթագ) և Ծով · 422
Ձկնորս (պալըգճը) և Ձուկն փոքրիկ · 257
Ձկնորս և Ձկունք · 274
Ձկնորսք · 275
Ձկնորս և Ձկունք · 378
Ձուկն փոքրիկ և Ձկնորս · 257
Ձկունք և Ձկնորս · 274
Ձկունք և Ձկնորս · 478

Ճանճ և Կառք · 154
Ճանճք և Մրջիւն · 155
Ճանճ · 214
Ճանճ և Առիւծ · 384
Ճպուռն (ճըրճըր պէօճէյի) և Մրջիւն · 175

Մահ և Կին · 565
Մահ և Ծեր · 517
Մահ և Ծեր · 518
Մայր և Գող որդին · 209
Մայր և Տղայ լացող · 214
Մանուկ և Հաւորս · 456
Մանուկ և Կարիճ · 468
Մանուկ և Ծեր · 597
Մարգարիտ (ինճի) և Աքաղաղ · 90
Մարդ և Առիւծ · 169
Մարդ և Լու · 170
Մարդ և Կուռք · 199
Մարդ և Երկու կանայք · 204
Մարդ երկու և Էշ · 257
Մարդիկ և Դիոս · 328
Մարդ և Գանձ · 565

Մարդ որ չնչէ զցուրտ և զջերմ · 374
Մարդ և Ձի · 388
Մարդ և Օձ · 500
Մեղուք (արը) և Արջ · 402
Մեղու և Մժեղ · 499
Մեղրագործ (պալճը) և Մեղու · 420
Մեռելաթաղ և Բժիշկ · 282
Մժեղ (սիվրիսինէկ) և Մեղու · 499
Մոմոս, Դիոս և Ապողոն · 515
Մորենի (չալը) և Աղուէս · 198
Մորենի և Եղևին · 255
Մորենի, Հողամաղ և Չղջիկան · 255
Մուկն և Գորտ · 94
Մուկն ընտանի և Մուկն դաշտային · 103
Մուկն և Առիւծ · 114
Մկունք և Կատու · 166
Մկունք խորհրդակցին · 227
Մուկն և Ցուլ · 244
Մուկն փոքրիկ և Մայրն · 245
Մուկն և Ձագ իւր · 383
Մուկն և Պարտիզպան · 438
Մուկն և Շինական · 489
Մրջիւն (գարընճա) և Ճանճ · 135
Մրջիւն և Ճպուռն · 175
Մրջիւն և Աղաւնի · 208

Նախանձող և Ագահ · 373
Նապաստակք (թավշան) · 124
Նապաստակ և Կրիայ · 180
Նապաստակ և Արծիւ · 248
Նապաստակ և Կաքաւ · 367
Նապաստակք և Գորտ · 406
Նաւապետ (ռէիզ) ։ 354

Նաւորդք (կէմճէ) և Նաւապետ · 576
Ներկարար (պօյաճի) և Ածխագործ · 254
Նոխազ (էրքէք քէչի) և Ցուլ · 229
Նոխազ և Աղուէս · 385

Շինական (քէօյլէ) և Հերքիւլէս · 470
Շինական և Մուկն · 489
Շինական և Գառն · 496
Շուն և Ստուեր · 96
Շուն փոքրիկ և Էշ · 112
Շուն և Գող · 120
Շուն և Որսորդ · 123
Շուն և Ոչխար · 127
Շուն և Գայլ · 148
Շուն և Կով · 188
Շունք և Գայլ · 190
Շուն և Գաւազան · 221
Շուն վտիտ և Գայլ · 258
Շուն և Ջրշուն · 267
Շուն և Հովիւ · 293
Շունք և Երկրագործ · 302
Շունք երկու · 324
Շուն պայտառի · 337
Շունք երկու պայթին · 384
Շուն և Խոհարար · 403
Շունք երկու կրթեալք · 424
Շուն և Աղուէս · 439
Շուն և Տէրն · 440
Շուն և Էշ · 441
Շուն և Ոչխար · 445
Շուն և Ծառայ · 454
Շուն և Էշ · 477
Շուն և Աղուէս · 495

Շուն և Հովիւ · 505

Ոզնի (ՓԻՃԵՐԻ) և Գայլ · 182
Ոզնի և Օձ · 395
Ոչխար և Եղջերու · 95
Ոչխար և Շուն · 127
Ոչխարք և Գայլք · 144
Ոչխար և Ագռաւ · 174
Ոչխարք և Գայլք · 349
Ոչխար և Կին · 352
Ոչխար և Հովիւ · 360
Ոչխար և Գայլ · 380
Ոչխարք և Հովիւ · 435
Ոչխար և Շուն · 445
Ոսկի և Առաքինութիւն · 512
Ոստիկան (ՊԱՊԻՏ) և Խաղախորդ · 356
Որդիք և Հայր · 202
Որդի և Հայր իւր · 504
Որդի և Ծեր հայր · 515
Որովայն (ԳԱՌԸՆ) և Անդամք · 151
Որսորդ (ԱՂՃԻ) և Շուն · 125
Որսորդք և Բէշէկ մէկոյ · 292
Որսորդ և Հովիւ · 340
Որսորդք և Առիւծ · 355
Որսորդ և Առիւծ · 370
Ուլ (ՓԷՂԻ ԷԱՂԲ[illegible] և Գայլ · 126
Ուլ և Առիւծ · 167
Ուլ և Գայլ · 425
Ուխտ հիւանդին · 274
Ուղևորք (ԷՕՂՃԱ) և Սօսի · 270
Ուղևորք երկու · 417
Ուղևոր և Հերմէս · 462
Ուղտ (ՓԷՂԷ) և Դիոս · 222

Օձ (Էըլա՞) և Երկրագործ · 101
Օձ և Երկրագործ · 128
Օձ և Խարտոց · 156
Օձ և Թռչնորս · 283
Օձ և Տուտն · 315
Օձ և Ոզնի · 395
Օձ և Խեցգետին · 409
Օձ և Մարդ · 500

2967

3оо

0020972

Գիրքը ենթարկվել է ախտահանման
19/II-42 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0020972

2013